ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 1
MARDI
1er AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris

Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70

Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար· 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ

Արտասահման : Տար· 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)

270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ

C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·928

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21·928

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱՄՆ ԶԷԻՆ ՓՈՐՁԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՈՒՆԱՒՈՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՄՆ–ու Երեւանի առժամեայ գործավարը Ճ· Փէնինկթըն մամուլի ասուլիսի մը անդրադարձած է Հայաստանի յետընտրական զարգացումներուն, չեշտելով իր երկրին վարչակազմին մօտ յայտնըւած կասկածը թէ Հայաստան կը շարունակէ՞ ընթանալ ժողովրդավարացման ճամբէն: Աւելցուցած է թէ Ս· Սարգըսեանի յայտարարութիւնները լաւատես ըլլալու պատճառներ տուած են եւ Ուաշինթըն մեծ յոյսեր կը սնուցանէ այդ ուղղութեամբ:

Նոյն ատեն յիշեցուցած է թէ ապօրինի ընթացք ունեցողները պէտք է պատժուին, բայց պարզ ցուցարարներու, իրենց կարծիքը յայտնողներու հանդէպ իշխանութիւնները իրաւունք չունին նոյն մեթոտներուն դիմելու…

Ամերիկացի դիւանագէտը նոյն ասուլիսին հերքած է այն լուրերը թէ իր երկիրը եւ ուրիշներ փորձած են «գունաւոր յեղափոխութիւն» կազմակերպել Երեւանի մէջ: Ընդգծած է որ իրենք ու միւսները չեն միջամտեր կացութեան կարգաւորման հոլովոյթին:

Ի՞նչ անհեթեթ միտք որ ԱՄՆ–ու նման ժողովրդավար, մարդկային իրաւունքներու, երկիրներու գերիշխանութեան յարգանքի այնքա՛ն բծախնդիր երկրին ներկայացուցիչը կը դնէ հերքելու պարտաւորութեան տակ: Ո՞ր երազատեսը կրցած էր երեւակայել թէ ԱՄՆ կրնային խորհած ըլլալ Հայաստանեան յեղափոխութիւն մըն ալ, ան ալ գունաւոր, երբ Ազատութեան հրապարակէն արար աշխարհին յայտարարուեցաւ թէ յեղափոխութեան այս տեսակը գոյնով չէր դասաւորուեր, ան «երգ ու պար»ի յեղափոխութիւն էր· ինչ կը վերաբերի Ղարաբաղի հարցին մէջ զիջումներու պատրաստակամութեան, արդիւնք էր զուտ բարիդրացիական աշխուժդոյն ճգտումներու, ինչպէս՝ ԱՄՆ–ու հայկական դիմումները, ցոյցերը բխած էին Հայաստանի մէջ ժողովրդավարութեան արատաւորումին նման հեռանկարի մը սարսափէն…:

* * *

« ԵՐԵՒԱՆ ՈՐԵՒԷ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԲԱՔՈՒԻՆ ԴԻՄԱՑ ՉԷ »

Նախագահի մամուլի քարտուղար Վիկտոր Սողոմոնեան հարցազրոյցի մը ընթացքին անդրադարձած է Ազրպէյճանի նախագահի աշխատակազմի արտաքին կապերու վարչութեան պետ Ն· Մամէդովի յայտարարութիւններուն եւ ճշդումներ կատարած: Մամէդով ըսած է թէ Հայաստան պարտի երկու երկիրներու նախագահներուն հանդիպումին հիմնաւորումները ներկայացնել, թէ նման հանդիպում նախ եւ առաջ Հայաստանի նախագահին ներքին դիրքը ամրապնդելու նպատակը կը հետապնդէ:

Վ· Սողոմոնեան յայտարարած է թէ Մամէդովի արտայայտութիւնը այն տպաւորութիւնը կը գործէ որ կարծես Երեւան պաշտօնական խնդրանքով դիմած է իրենց: «Մենք հանդիպում կազմակերպելու նախաձեռնութեամբ հանդէս չենք եկած, թէեւ պատրաստ ենք երկխօսութիւնը շարունակելու» ըսած է մամուլի քարտուղարը, աւելցնելով որ Պուքրէշի ՕԹԱՆ–ի վեհաժողովը առիթ էր եւ Ս· Սարգսեանի ու Ի· Ալիեւի հանդիպումի առաջարկը կը պատկանէր Մինսկի խումբի նախագահներուն: «Եթէ Բաքու չցանկանայ, ապա ատիկա իր խնդիրն է: Հարկ չկայ ապակառուցողական մօտեցումները Մամէդովի դարակազմիկ մօքերով քօղարկուած» ըսած է Վ· Սողոմոնեան:

Նոյն հարցազրոյցին ան անդրադարձած է Լ· Տէր Պետրոսեանի թեկնածութեան զօրակցած շարք մը քաղաքական ուժերու յայտարարութեան, թէ իրենք զըրկուած են հանրահաւաքներ ու ցոյցեր կազմակերպելու կարելիութենէն. այդ մասին ըսած է. «պահանջելով նոր հանրահաւաքներու եւ ցոյցերու կայացման թոյլտուութիւն, Լ· Տէր Պետրոսեանի սատարող ուժերը ըստ էութեան կը պահանջեն կարելիութիւն ընձեռել իրենց նոր բախումներու եւ նոր արիւնահեղութեան»:

* * *

ԼՂՀ

ՔԱՇԱԹԱՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Մարտ 28ին, Քաշաթաղի (Լաչին) կեդրոն Բերձորի մէջ բացուած էր միջազգային եռօրեայ համաժողով մը, շրջանի զարգացման թեմայով· կազմակերպուած էր ԼՂՀ կառավարութեան եւ Թիւֆէնկեան հիմնադրամին կողմէ: Նախապատրաստական լուրջ եւ ծաւալուն աշխատանք կատարուած է, սեղան բերելու համար բոլոր կարիքները: Կառավարութիւնը որոշած է մեծ գումարներ յատկացնել շրջանի զարգացման, սակայն ընելիքները այնքան շատ են որ անհրաժեշտ կը նկատուի ամբողջ հայութեան ջանքերը կեդրոնացնել ռազմավարական այդ գօտիին վրայ:

Բացման նիստին ելոյթ ունեցած է ԼՂՀ նախագահը Բ· Սահակեան: Հայաստանն ու Արցախը միացնող Քաշաթաղը 1992ին ազատագրուած նեղ հատուածով արցախցիներուն համար վերածուեցաւ «կեանքի ճանապարհ»ի եւ մինչեւ այսօր Շահումեանի շրջանին հետ Արցախը Հայաստանի կապող հիմնական օղակն է: Այդ առումով ներկայի պայմաններ կը պարտադրեն հոն կայուն ու մրցունակ տնտեսութիւն ստեղծել, բնակչութեան կենսամակարդակը բարձրացնել: Առաջնային այս անհրաժեշտութիւնները շեշտելէ ետք նախագահը բացատրած է թէ ամէնէն ցաւալի խնդիրը ժողովրդագրական կացութիւնն է· ուստի ատոր յարակից խնդիրները լուծելու որպէս նախաքայլ, ԼՂՀ իշխանութիւնը նպատակ դրած է հզօրացնելու շրջանը, վարելով վերաբնակեցման հետեւողական քաղաքական եւ տնտեսական տարրեր ծրագրեր:

Շրջանի հեռանկարային բնագաւառներն են գիւղատնտեսութիւնը, ուժանիւթի ոլորտը: Կան նաեւ վարելի ընդարձակ հողեր· ուստի կարեւոր է ոռոգման համակարգը: Առաջնային են բնակարաններու, դպրոցներու շինութիւնը, կապի ցանցը, առողջապահութեան, խմելու ջուրի խնդիրներուն լուծումը:

Թիւֆէնկեան հիմնադրամը արդէն բազմամեայ գործունէութիւն կը տանի առողջապահութեան, բնակարանի շինութեան, գիւղատնտեսութեան, կրթութեան ոլորտներուն մէջ: Կը գործեն նաեւ «Ազգակ» կազմակերպութիւնը, «Գուրգէն Մելիքեան» եւ «Մոնթէ Մելքոնեան» հիմնադրամները, «Հայ կրթական» «Հայրենիք» միութիւնները, «Արփեն» եւ «Մենք» կեդրոնները, «Ղարաբաղ–Թելեքոմ»ը, եւլն·:

«Հաւատացած եմ որ համատեղ ուժերով մենք կը շէնցնենք Արցախի այս գողտրիկ հատուածը, որն ունի համահայկական նշանակութիւն: Առանց Քաշաթաղի շրջանի հնարաւոր չէ Լեռնային Ղարաբաղի՝ որպէս անկախ պետութեան, լիարժէք զարգացումը եւ անվտանգ գոյատեւումը» ըսած է նախագահ Բ· Սահակեան, շնորհակալութիւն յայտնելով ներկաներուն մասնակցութեան:

Համաժողովին տիրական միտքը այն եղած է որ հայկական կողմը այլեւս վերջ պէտք է տայ տարածքներ յանձնելու հեռանկարներու մասին խօսելուն եւ վերաբնակեցնէ այդ հողերը: Տարածք վերադարձնելու հաւանականութեան մասին խօսիլ բացասական ազդեցութիւն կը գործէ հայութեան բարոյահոգեբանական վիճակին վրայ: Ինչպէս Քաշաթաղը, Ղարաբաղի ազատագրուած միւս շրջաններն ալ, պէտք է գիտակցիլ որ վերամիաւորուած են ընդմիշտ: «Հայաստանի ու Արցախի բնակիչները, նաեւ ամբողջ հայութիւնը պէտք է հասկնայ որ փոխադարձ զիջումը տեղի ունեցած է, մեր հողերուն տասնը մէկ զանգուածը այսօր կը գտնուի Ազրպէյճանի հսկողութեան տակ: Մենք արդէն ենք այն փոքրագոյնը ինչ կարելի էր անել այդքան մեծաթիւ զոհերով» շեշտած է «Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ, երեսփոխան Լարիսա Ցովհաննիսեան:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՐԳԻԼՄԱՆ ԲԱՆԱՁԵՒ

ՄԱԿ–ի Մարդկային իրաւունքներու խորհուրդը Մարտ 28ին Հայաստանի նախաձեռնութեամբ ընդունած է ցեղասպանութեան կանխարգիլման բանաձեւ մը: Ան խորհրդանշական կը նկատուի, քանի որ այս տարի կը լրանայ ցեղասպանութեան յանցանքին կանխարգիլման եւ պատժական միջազգային հռչակագրին 60ամեակը: Բանաձեւին ներկայացման ընթացքին ելոյթ ունեցած է Հայաստանի մշտական ներկայացուցիչ Զօհրապ Մնացականեան. ան շեշտած է թէ ցեղասպանութեան կանխարգիլումը եւ նոյն բանաձեւին քուէարկութիւնը անգամ մը եւս կ'ընդգծեն միջազգային հանրութեան բարոյական պատասխանատուութիւնը, հանդէպ ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Բանաձեւին շարադրութեան մասնակցած են 58 պետութիւններ, որոնց կարգին են Եւրոպական Միութեան բոլոր անդամները, Զուիցերիան, Արժանթինը, Գանատան, Նորվեկիան, Աւստրալիան, Պրազիլը, Մեքսիքան:

ԱՄՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ուաշինկթընի պատմական յուշարձաններու պահպանութեան դէտերու խորհուրդը միաձայնութեամբ հաւանութիւն տուած է Ուաշինկթընի մէջ Հայոց Ցեղասպանութեան Թանգարանի կառուցումին:

Նոյն Թանգարանին ծրագրին մասին 2007 Օգոստոսին պայմանագիր կնքըւած էր ճարտարապետական ծանօթ ընկերութիւններու հետ որոնք ԱՄՆ–ու մէջ նման բազմաթիւ շէնքեր կառուցած են:

Ապագայ Թանգարանը կը գտնուի Ուաշինթընի կեդրոնական շրջանին մէջ, Սպիտակ տունէն քանի մը քայլ անդին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԴԱՄԱՍԿՈՍԻ արաբական վեհաժողովը ձախողութեամբ փակուած է եւ գըլխաւոր պատճառը լիբանանեան տագնապն է հակառակ անոր որ Սուրիա կը պնդէ որ որեւէ գործ չունի հոն եւ զօրավիգ է անոր ինքնիշխանութեան եւ անկախութեան: Արաբական 22 ղեկավարներէն հազիւ կէսը Դամասկոսի ճամբան բռնած է, մինչ Լիբանան բնաւ չէր մասնակցեր: ԱՄՆ–ու գլխաւոր բարեկամներն ալ յանձինս Սաուտի Արաբիոյ եւ Եգիպտոսի, փոքր պատուիրակութիւն մը ղրկած էին: Ժողովի աւարտին եղած յայտարարութիւնը կը զօհանար կոչ մը ընելով լիբանանեան բոլոր կողմերուն, որ ժամ առաջ զիրար հասկնան թոյլ տալու համար նախագահին ընտրութիւնը: 17 անգամ է որ ընտրութիւնը (համաձայնական թեկնածուն էր զոր· Սլէյման) կը յետաձգուէր: Հակառակ Նախագահ Պաշար ալ–Ասատի հաստատումներուն, ըստ որոնց Սուրիա զօրավիգ է Լիբանանի կայունութեան, Վալիտ Ճումպլաթ, Ընկերվարական յառաջդիմական կուսակցութեան ղեկավարը, հարցազրոյցով մը «Ժունալ տիւ Տիմանշ»ի (Մարտ 30) կը բացատրէ Լիբանանի բացակայութիւնը շեշտելով թէ մասնակցութիւն մը պիտի նշանակէր «արդարացնել մարդասպաններու այդ վարչակարգը եւ մաս կազմել արաբական վեհաժողովի ֆոլքլորին»:

ՊԱՂՏԱՏԻ ԵՒ ՊԱՍՐԱՅԻ մէջ համեմատական հանդարտութիւն մը կը տիրէր Մարտ 31ին, երբեւ հետեւանք Մոգթատա ալ–Սատրի կոչին իր քաղաքազօրքերուն, որ հրադադար հաստատեն: Մինչ այդ սակայն բախումներու պատճառաւ աւելի քան 300 հոգի մեռած էր: Ալ–Սատր յայտարարած էր որ ով որ զէնք կը կրէ այլեւս մաս չի կազմեր շարքերուն: Զընդունիր սակայն Իրաքի կառավարութեան օրինաւորութիւնը, զայն նկատելով Ամերիկայի ծախուած:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻ բոցը պաշտօնապէս յանձնուեցաւ չինացի ներկայացուցչին Աթէնքի մէջ որ զայն Փեքին տարաւ, ուրկէ ճամբայ պիտի ելլէ Ապրիլ 2ին եւ 137 հազար քմ· կտրէ կրկին Փեքին վերադառնալու համար:

ԹՈՒՐՔԻՈՅ իշխանութեան գլուխ գտնուող ԱԳ կուսակցութիւնը փակելու պահանջով Սահմանադրական ատեանին առջեւ բացուած դատը կրնայ ժխտական ազդեցութիւն ունենալ երկրին Եւրոպայի անդամակցութեան բանակցութիւններուն վրայ· այդ մասին յայտարարած է Միութեան ընդլայնումի յանձնակատար Օ· Ռեն: Ան ըսած է· «Թուրքիոյ մէջ քաղաքական եւ Մարդու իրաւունքներու չափանիշերուն լրջօրէն եւ յամառօրէն տնտնակոխումի պարագային վերաքննութեան առարկայ կ'ըլլայ բանակցութեան հոլովոյթը»: Այս խօսքերը թէ՛ փակումի սպառնալիքին ենթակայ կուսակցութեան, թէ՛ դիմումի տէր միւսներուն կողմէ խիստ քննադատութեան առարկայ եղած են:

ՖՈՒԹՊՈԼԻ Լիկայի Բաժակի մրցումը որ տեղի ունեցաւ Փարի–Սէն–Ժերմէնի եւ Լանսի միջեւ Մարտ 29, Շաբաթ գիշեր, մեծ գայթակղութեան մը պատճառ դարձաւ առաջինին (որ ի դէպ յաղթած է 2 – 1 արդիւնքով) համակիրներուն մարզադաշտը (Սթատ տը Ֆրանս) պարզած մէկ պաստառին պատճառաւ: Անոնք յաջողած էին մարզադաշտ բերել եւ պատին երկայնքին զետեղել պաստառ մը ուր նախատական որակումներ կային

(Շար·ը Դ· էջ)

ՆՈՐԱՏԻՊ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Ա) «ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ»
(հեղինակ՝ Զուլալ Գազանճեան)

2008ին Հալէպի մէջ լոյսին բերուած առջինեկ մատեաններէն մին է այս ծաւալուն քերթողագիրքը, որ հրապարակ հանուեցաւ հեղինակին՝ բանաստեղծ Զուլալ Գազանճեանի այս քաղաքը տուած այցելութեան օրերուն:

Գիրքը կը բաղկանայ 288 էջերէ ու կողքի մը տակ ի մի կը բերէ բանաստեղծին գրական վաստակին՝ 1964–1992 հրատարակուած չորս քերթողագիրքերուն, ամբողջական պարունակութիւնը:

Զուլալ Գազանճեան, դժբախտաբար, լայն խաւերու համար մնացած է գրեթէ անծանօթ անուն մը: Իսկապէս «ճգնաւոր-բանաստեղծ»ի կերպար մը, որ սակաւագիր է ու միշտ նախընտրած է հեռու մնալ բեմերէ, լուսարձակներէ ու աղմուկէ: Ծնած է Մուսա Լեռ, 1936ին: Մանկութիւնն ու պատանեկութիւնը ապրած է Հալէպ, յետոյ բախտն ունեցած է ուսանելու Վենետիկի երբեմնի Մուրատ Ռափայէլեան վարժարանին մէջ, այդ շրջանի Մխիթարեան երեւելի վարդապետներու շունչին տակ: 50ական թուականներուն, դեռ նորափթիթ երիտասարդ, ուսուցչագործած է Հալէպ, այնուհետեւ վերջնապէս կայք հաստատած է Փարիզ: Ներկայիս կ՚ապրի Երեւան:

Այս նորատիպ «Քերթուածներ» հատորին համար գրի առած 5 էջանի իր յառաջաբանին մէջ հալէպաբնակ բանաստեղծուհի Մարուշ Երամեան Զուլալը բնութագրած է իբրեւ «լոյսի անվհատ երգիչը»: Թռուցիկ ակնարկով մը ան մի առ մի ընթերցողին ծանօթացուցեր է Զուլալ Գազանճեանի չորս քերթողագիրքերը («Կեանքը-քոյրս», «Արեւծաղկի մը նման», «Նարունակելի» եւ «Նորատունգ»), վերադծելով անոնց ներքին մթնոլորտը ու վեր առնելով այն եզակի քնարաշունչ յատկանիշները, որոնցմով պարուրուած կը մնայ բանաստեղծին գրչի արտադրանքը: Ըստ Երամեանի՝ «Գազանճեան իր խառնուածքով մեր քերթողութեան համար կը թուի վերջին վիպապաշտը ըլլալ»:

Անոնք որոնք պիտի փորձեն մերձենալ Զուլալ Գազանճեանի բանաստեղծական արուեստին, անմիջապէս պիտի նշմարեն որ ան կանգնած է «դասական» ու «նորարար» քերթողութեանց հակադիր բեւեռներուն բարեխառն սահմանագծին վրայ, տեւաբար ատակ՝ վերանորոգ թռիչքներու: Պահելով հանդերձ դասականի որոշ տարրեր՝ Զուլալին էջերը մեղմօրէն կը մատնեն մտածելակերպի արտասովոր եղանակ մը, քիչ մը «միսթիք» հոգեվիճակի արդիւնք, որ տեղ-տեղ կ՚առաջնորդէ իմաստասիրական բարդ խոկումներու, տեղ-տեղ ալ կը թուի անորոշութեան հովերուն անձնատուր դարձնել ընթերցողը: Երբեմն կ՚ունենանք այն համոզումը, թէ ան հետեւորդ մըն է Յարութ Կոստանդեանին, զոր կը դաւանի արդէն իբրեւ «Հայոց ամէնէն մեծ բանաստեղծը» (էջ 108): «Որքան բարդ է իր ներաշխարհը, այնքան պարզ է լեզուն», ըսուած է յառաջաբանին մէջ: Եւ սակայն այդ լեզուն, անվարան, հիացում պիտի պատճառէ խստապահանջ ընթերցողին, թէ՛ իբրեւ բառամթերք, թէ՛ ալ իբրեւ «գործիք» մը՝ որ օգտագործուած է ծայրայեղ բծախնդրութեամբ ու գուրգուրանքով, հետեւողականօրէն անսալով քերականական, շարահիւսական եւ իմաստային ոճի գրաւոր ու անգիր օրէնքներուն: Այս վերջին կէտը, կը խորհինք, նորատիպ հատորին ամէնէն էական ու թելադրիչ պատգամը կրնայ ըլլալ՝ հայագիր նորատարազ քերթողութեան նորընծայ կոչեցեալներուն...:

Ստորեւ, քանի մը տող՝ խորապէս մարդկայնական գեր-ազնիւ զգացումներու իր արձանագրութիւններէն.

Քանդել պատերը
եւ լոյսին բերել ծածուկ ցաւերը:

Բոլոր վշտացած աչքերուն համար
անուշութիւն մը ստեղծել պայծառ:

Համոզել կեանքը որ իրար կանչէ
մինակ մնացած սրտերը բոլոր,
զանոնք հասկնայ եւ անոնց նէրէ:

Տիրել Երկնքին.

Լոյսի անհատնում խաղաղութիւն
մը
բերել աստղերէն, ողողել խորը
գերեզմաններուն:

Բոլոր իրերուն շունչ տալ,
տաքութիւն.
հողին, քարերուն իսկ
երջանկութիւն:

Հոգիներուն հետ հաշտուիլ կրկին:
Բոլոր շունչերուն ըլլալ մտերիմ:

(«Հաշտութիւն», էջ 81)

Զուլալ Գազանճեանի սոյն ժողովածուն հրատարակուած է Բերիոյ Հայոց Թեմի «Այգ» մատենաշարով, մեկենասութեամբ Չէմպէրճեան հիմնադրամին:

* * *

«ՆԱՒԻՂ»,
հրատարակութիւն՝ Քարէն Եփփէ ազգ. ճեմարանի Շրջ. միութեան
(է. թիւ, 2007)

Քարէն Եփփէ ազգ. ճեմարանը տէրն է երկու կարեւոր հրատարակութիւններու: Մին աշակերտական «Ծիլեր» պարբերաթերթն է, միւսը՝ Շրջանաւարտից միութեան «Նաւիղ» հանդէսը: «Ծիլեր»ը անխափան կը հրատարակուի 1972էն ի վեր, ի մի բերելով միջնակարգի ու երկրորդականի աշակերտներուն յաջող շարադրութիւններէն նմոյշներ, գրական սկսնակ ու տարտամ փորձեր, այդպիսով թռիչք ու խանդ տալով արուեստի շնորհներ ունեցողներուն, առաջնորդելով զիրենք դէպի մամուլի, գիրի ու գիրքի աշխարհը: Իսկ «Նաւիղ» ամպիոնն է արդէն... նախկին «Ծիլեր»ականներուն: Շրջանաւարտից միութեան բանբերն է ան, գլխաւոր առաքելութիւն ունենալով ճեմարանի շուրջ համախմբուած պահել իր նախկին շրջանաւարտները, ապահովել անոնց բարոյական զօրակցութիւնը դպրոցին, կամուրջի դեր կատարել ընդմէջ վարժարանին եւ մօտ ու հեռու անոր նախկին հազարաւոր սաներուն:

«Նաւիղ», յարաբերաբար, նոր հրատարակութիւն մըն է: Գունատիպ ու պճնալիտ այս հանդէսին առաջին երկու թիւերը լոյս տեսած էին 1999ին եւ գտած լայն ընդունելութիւն: Յաջորդական համարները հրատարակուեցան որոշ կաղացումներով եւ խմբագրական յարափոփոխ կազմերու հոգածութեամբ: Այնուհանդերձ, «Նաւիղ» մնաց փնտռուած հրատարակութիւն մը, ճեմարանի ու անոր համակիր լայն շրջանակի մը մօտ:

Նորերս հրապարա՛կ հանուեցաւ «Նաւիղ»ի է. թիւը, բաղկացած 128 գունատիպ էջերէ: Նախորդին նման, ներկայ համարին ալ խմբագրումը յանձնուած է ճեմարանի հայերէնաւանդ երկարամեայ ուսուցչուհիներէն տիկ. Լալա Մինասեանի:

Շուրջ 30 անուններ, ջախջախիչ տոկոսով՝ ճեմարանաւարտ, տարաբնոյթ յօդուածներով իրենց աշխատակցութիւնը բերած են այս թիւին:

Բերիոյ Հայոց Թեմի առաջնորդ Շահան եպսկ. Սարգիսեան «Նաւիղ»ին յանձնուած իր «Օրհնութեան գիր»ին մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ շատ կարեւոր հարցի մը վրայ: Ան կ՚ըսէ որ սուրիահայ գաղութին գլխաւոր առաւելութիւններն են իր հայախօս գանգուածները, ապա նաեւ՝ հայկական վարժարաններու լայն ցանցը, «ուր ունինք պատեհութիւնը լաւապէս սորվելու, սորվեցնելու եւ նոյնիսկ զարգացնելու մեր լեզուն»: Այդուհանդերձ, լեզուական ստեղծանական նահանջ մը առկայ է գաղութին մէջ: Որպէս դարման, Շահան եպսկ. կը ցանկայ որ Ե. դարու Թարգմանչաց շարժումը յիշեցնող «Հայոց լեզուի մաքրութեան, զարգացման ու տարածման շարժում» մը ստեղծուի, որ ձգնի բարելաւել մտահոգիչ վիճակը:

Լեզուական հարցին կը հպի նաեւ Լենա Նազարեան-Քէյվանեանի (շրջ., այժմ՝ հայերէնաւանդ ուսուցչուհի) գրութիւնը: Ան, իրաւացիօրէն, կը մեղադրէ «մերօրեայ խօսակցական թիւր ու թերի հայերէնով էջեր մրոտողներ»ը ու կ՚ուզէ որ հաշուետուութեան կանչուին «լեզուական խառնիճաղանճ»ի պատասխանատուները:

Ներկայ թիւին մէջ գրական արձակ էջերու տակ ստորագրութիւն ունին Պերճուհի Աւետեան, Մարուշ Երամեան, Գէորգ Պետիկեան, Գէորգ Յակոբճեան, չափածոյ էջերու տակ՝ Լալա Մինասեան, Տիգրան Գարոյեան, Մովսէս Պչաքճեան, Սեւան Հանէշեան, Վազգէն Մարտիրոսեան, գրավերլուծական յօդուածներու տակ՝ Յակոբ Զօյաքեան, տոքթ. Գէորգ Մարգարեան եւ ուրիշներ:

Ուշադրութիւն կը գրաւէ այն «Թղթածրար»ը, որ պատրաստուած է Հալէպի հայկական երաժշտանոցներուն մասին: Կը պարզուի, որ գոյութիւն ունին նմանօրինակ չորս անջատ դպրոցներ, կեանքի կոչուած՝ 1984էն ասդին: Անոնք կը հովանաւորուին Կրթասիրաց մշակ. միութեան, Համազգայինի, ՀԵԸ-ի եւ Հայ Աւետ. համայնքին կողմէ, իրենց երդիքին տակ մէկտեղելով ընդհանուր 560 աշակերտ: Հոն կը դասաւանդուին ձայնամարզութիւն, դաշնամուր, ջութակ, թաւջութակ, կիթառ, սրինգ, երգեհոն, ձեռնադաշնակ զալարափող, քանոն եւ այլն:

Հետաքրքրական հարցազրոյցներ կան աշուղական երգերու հայրենի մեկնաբան Թովմաս Պօղոսեանի եւ յեղափոխական երգերու ծանօթ երգիչ Գառնիկ Սարգիսեանի հետ: Ուսումնասիրութիւններ կան Սայաթ Նովայի (Ժիրայր Ռէիսեան), Երիմեան Հայրիկի (Մարիա Գաբրիէլեան), Արցախի ճարտարապետական կոթողներուն (Անի Մանսուրեան), հայկական զարդարուեստի (Գէորգ Տատոյեան) եւ ֆութպոլի (Ալեքսան Հէքիմեան) մասին: Համապարփակ տեղեկատուութիւն կայ Շրջ. միութեան տարեկան գործունէութեան մասին:

«Նաւիղ» մի՛շտ ալ ողջունելի հրատարակութիւն մը պիտի մնայ մեզի համար: Ունինք սակայն երկու նկատողութիւններ.

– Նախ, հարկ է խուսափիլ հանդէսին էջերուն գունազարդումը չափազանցութեան տանելէ: Ակնախտիղ էջերը, առաջին ակնարկով թերեւս հմայիչ թուին, բայց ընթերցումի պահուն անոնք կը յոգնեցնեն աչքերը ու կը մոլորեցնեն զայն:

– Ապա նաեւ՝ զգուշութեան ու պատասխանատուութեան հրաւիրել այն քանի մը աշխատակիցները, որոնց գործին տակ յստակ պատկերացումը կ՚ունենանք վերեւ ակնարկուած «լեզուական խառնիճաղանճ»ին...:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

Հալէպ

ՏԷՍԸՐ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՇՈՒՐՋ ԵՒ ՄԱՍԻՆ

Յ. ՊԱԼԵԱՆ

Ցեղասպանութեան ճանաչման կոչերն ու կարգախօսները, անոնց մասին ու շուրջ տեւող աղմկարարութիւնը, ծէս եւ ինքնագոհութիւն, կապ ունի՞ն ՀԱՅ ԴԱՏԻ հետ: Սփիւռքը, որ «Արեւմտահայաստանի հայրենահանուած ժողովուրդն է», իրապէս ի՞նչ կ՚ակնկալէ Ցեղասպանութեան ճանաչումէն, տարին քանի մը անգամ աղմկելով, քանի մը յայտարարութիւններ կորզելով աջէն եւ ձախէն: Չէ՞ք կարծեր որ արհամարհելի կը դառնանք, երբ հռչակաւոր եւ տիտղոսաւոր, նաեւ նորելուկ տիտղոսաւորներ, կը յայտարարեն որ Հայերը յստակ պահանջներ չունին, կամ ինչո՞ւ պահանջել այդ հողերը, քանի որ եթէ անոնք տրուին անգամ հոն գացողներ չեն ըլլար, այս վերջին միտքն ալ կը համարեն քաղաքական հասունութիւն կամ իրապաշտութիւն: Ինչո՞ւ չենք յիշեր եւ չենք յիշեցներ որ հայրենահանուած է Արեւմտահայաստանի ժողովուրդը, որ այդ աշխարհը եղած է հայ ազգի օրրանը՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր: Ի վերջոյ, հայրենիքը, հողը չի տրուիր անհատներու, այլ՝ ազգին:

Սովորութիւն է, իսկական ծէս, ժողովներ գումարել, որոշելու համար թէ այս տարուան Ապրիլ 24ը ինչպէ՞ս պիտի նշուի, կարծէք մէկ տարիէն միւսը մշակուէր տարբեր սենարիօ մը: Աւանդական կողմերու միջեւ դերեր կը բաժնուին, ճառախօսներ կը ճշդուին, որոնք նոյն բաները պիտի ըսեն, որոնք հետապնդուելիք դատին նպաստելէ աւելի անձերու լուսապսակ պիտի ըլլան: Պիտի պոռան, ներկաներն ալ պիտի հետեւին, կրկին ըսելու համար՝ ճանչցէ՛ք Ցեղասպանութիւնը: Օրինակելի հետեւողականութիւն՝ մենք մեզի հաճոյք պատճառելու եւ պահել-պահպանելու համար յարգելիութեան եւ ընդունելիութեան դ. մակ:

Կը խօսինք Ցեղասպանութեան մասին, մեր բարեկամներն ալ կը խօսին, բայց կը խօսի՞նք ԲԱՑԱՐՁԱԿ ՈՃԻՐԻ մասին, որ ԱԶԳ ՄԸ ՍԵՓԱԿԱՆԱԶՐԿԱԾ Է ԻՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀՈՂԵՐԷՆ: Առանց որձեւէգ խուսանաւումի, ղեկավարութիւն եւ ժողովուրդ, պիտի ըսեն որ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿՐՆԱ՞Յ ԳՈՀԱՆԱԼ ԿԱՄ ՊԻՏԻ ԳՈՀԱՆԱ՞Յ ՄԽԻԹԱՐԱԿԱՆ ՊԱՐԳԵՒԻ ՆՄԱՆՈՂ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՈՎ: Ազգ մը ուզած են սպաննել, զայն հայրե-

նահան ըրած, եւ այս չարիքը դիպուածի կամ շրջագայութեան արկածի հետ չի շփոթուիր, որպէսզի կարելի ըլլայ հարցը փակել գինով կամ անճարակ վարորդ մը դատապարտելով առկախուած պատիժի: Ազրողներ կան որոնք զոհեր են, եթէ նոյնիսկ անոնք մոռցած կամ հաշտուած են իրենց կացութեան հետ, սերունդներ՝ որոնք զրկուած են իրենց նախահայրերու հողին վրայ ապրելու եւ մեռնելու իրաւունքէն:

Իսկական Հայ Դատը իրաւունքի պահանջ է, իրաւունք՝ զոր կ'ոտնակոխեն զօրաւորներու յատուկ արտօնութեամբ եւ անպատժելիութեամբ: Ոչ միայն չեն ընդունիր մարդկութեան դէմ գործուած ոճիրը որպէս այդպիսին, նոյնիսկ երբ մեծեր եւ փոքրեր գիտեն թէ ան գոյութիւն ունեցած է: Անոր հետեւանքները կը շարունակուին, հակառակ անոր որ ուղղակի կամ անուղղակի կերպով մենք կ'ընդունինք որ դարձած ենք ծագումով Հայեր: Ոմանք, ականաւոր քաղաքագէտի եւ ճարպիկ դիւանագէտի պատրանք ստեղծող պարեգօտ հագած կը յայտարարեն որ այդ է ուղին մօտենալու համար պետական շրջանակներուն: Եթէ այդպէս է, հաշուեկշիռ ընենք: Իրաւունքը վերականգնելու տեսանկիւնէ ի՞նչ եղած է արդիւնքը այդ նուրբ դիւանագիտութեան: Մեր խօսակիցները աւելի ճիշդ պիտի չհասկնայի՞ն մեզ, եթէ պարզապէս ըսէինք որ հարկ է սրբագրել անարդարութիւնը որ գործուած է այդ ոճիրին հետեւանքով, մանաւանդ որ միջազգային համայնքը ընդունած է նման ոճիրներու անժամանցելիութիւնը:

Այս պայմաններուն մէջ պէտք չէ զարմանալ որ ծէսերը զանգուած չեն շարժեր, հաւատաւորներ եւ սովորութեան հետեւողներ ներկայ կ'ըլլան զանազան ձեռնարկներու, քանի որ ժողովրդային ողջախոհութիւնը ընդհանրապէս չի հետեւիր ամբոխավարութեան եւ պոռոտախօսութեան: Ցեղասպանութեան ճանաչման կարգախօսը ազգային լինելութեան տեսանկիւնէ ոչ մէկ ձեւով ապագայակերտ է, ան իր մէջ ոչ մէկ ռազմավարութիւն ունի, ազգային հունի մէջ պահելու եւ յանձնառութեան բերելու նոր սերունդները՝ որոնք կը տեսնեն իրենց շուրջ թաւալող պատմութիւնը եւ անոր ցնցումներուն հետ վերականգնող իրաւունքները. Պաղեստինցիները, Քիւրտերը, Թիպէթցիները...:

Ցեղասպանութեան ճանաչման կարգախօսը արտակարգ ճիգ, յանձնառութիւն եւ զոհողութիւն չի պահանջեր: Ուստի, մանուկի մը տարեդարձը տօնելու ձեւով կը սպասենք որ Թուականը հասնի, անկէ առաջ եւ անկէ վերջ վնասազերծուած մեծ դէպքի յիշատակը ձմեռնային քուն կը մտնէ... Լսած ենք խօսքեր, շուտով մոռցած, չենք կրկնած, որպէսզի սովորութիւնները չխախտին: Պետական դէմք մը յայտարարեց որ «Հայաստան նման պահանջներ չի ներկայացներ, ինչո՞ւ դուք կը պահանջէք»: Արեւմտահայաստանը փակագիծի մէջ դրուած է, եւ հոս ու հոն, կը դառնանք ճանաչման, ժխտումի, Ցեղասպանութեան փաստերու շուրջ, կարծէք իրապէս կարիք ըլլար Ցեղասպանութեան իրողութիւնը փաստելու: Քաղաքականօրէն անվնաս եւ ընդունելի դարձած Ցեղասպանութեան ոգեկոչումը կը նմանի դպրոցի մը ամավերջի հանդէսին, եւ հարց պէտք է տալ թէ ան մի՞թէ կ'առնչուի Հայ Դատին: Երբ տարիով երկու ոգեկոչման հանդիսութիւններու միջեւ ոչինչ կը պատահի, ոչ ոք կը դժգոհի, ոչ ոք կը զարմանայ: Ոչ ոք հարցում կ'ուղղէ գիտնալու եւ հասկնալու համար լռութիւնները եւ բացակայութիւնները: Եթէ Թաղապետ, քաղաքապետ, երեսփոխան կամ նախագահ մը ընտրելու չափ ժամանակ յատկացնէինք Հայ Դատին, թերեւս նոր կացութիւններ կը ստեղծուէին:

Մտածա՞ծ ենք ամբողջական եւ Հայոց մշակութային կորուստներու փաստացի տուեալներով կազմուած թղթածրար մը ներկայացնել ԻՒՆԵՍՔՕյի, նոյնիսկ երբ Թուրքիա կը դիմէր նոյն միջազգային կազմակերպութեան որպէսզի տօնուի Օսմանեան կայսրութեան վեցհարիւրամեակը: Ի՞նչ կ'ընենք պաշտպանելու համար Արեւմտահայաստանի մշակութային ժառանգութիւնը, ի՞նչ ըրինք եւ ի՞նչ կ'ընենք երբ եկեղեցին կը վերածուի մզկիթի, Ախթամարի գմբէթէն կը վերցուի խաչը եւ հոն կը ծածանի բռնագրաւողի դրօշը... Հայկական պատուիրակութեան ներկայութեան: Պատմութիւնը հարցումներ պիտի ուղղէ մեր սերունդին, նոյնիսկ երբ չըլլանք այլեւս այդ հարցումը լսելու համար:

Ապրիլ 24ին, հաւաք կամ ցոյց, պիտի խմբուինք, հոն ուր Հայեր կան: Միջազգային լրատուամիջոցները պիտի անդրադառնան: Ուրիշ ոչինչ պիտի պատահի, քանի որ ՃԱՆԱՉՄԱՆ կարգախօսը բանտարկած է ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏի հետապնդումը, ապա թէ ոչ կը դառնինք ահաբեկիչներու ցանկին վրայ... Հետեւաբար, ոգեկոչում, ճառ, բանաստեղծներու հոգեպարար հնչեղ խօսք, յաջորդ օր ոչ իսկ յիշատակ պիտի ըլլան: Ցաջողութիւն մը. ոչ խանգարել եւ ոչ ալ խանգարուիլ:

Ց. Պ.

ԴՈՂԱԻԹԷ ԴՈՂԱԻԹ

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հայ Կեդրոնի սրահին մէջ, Մարտ 8էն 19, 12 օրերու ընթացքին տեղի ունեցած են երաժրշտական ներկայացումներ որոնց նիւթն էր «Քրիստոսի վերջին օրերը»: Կազմակերպիչն էր Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութիւնը հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդին: Հանդիսութիւնը նուիրուած էր Խաժակ արքեպիսկոպոսի 40ամեայ հոգեւոր ծառայութեան, եկեղեցւոյ հիմնադրութեան 25ամեակին եւ կարգախօսը արտակարգ ճիգ, յանձ- Թեմի հիմնադրութեան 50ամեակին: Ներկայացումը ունեցած է իւրայատուկ բեմայարդարում մը: Կը ներկայացնէր Երուսաղէմ քաղաքը և դերակատարներ հագած էին նոյն ժամանակաշրջանի պատշաճող բզգեստներ ու տարազներ: Անոնք երգած են աւելի քան 33 հոգեւոր երգեր, շարականներ եւ աղօթքներ տարբեր լեզուներով ու կենդանի պատկերներով: Ներկայացուցած են Յիսուսի մուտքը Երուսաղէմ, Ղազարոսի յարութիւնը, հրաշքներու յաջորդական գործադրումը, ապա, Վերջին ընթրիքը, Գեթսեմանի պարտէզն ու ձերբակալութիւնը: Յիսուսի չարչարանքներուն յաջորդած է խաչելութիւնը: Հուսկ՝ յարութիւնը:

ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ 20ԱՄԵԱԿԻՆ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԵՒ ԿՈՉ

ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միութիւնը Մարտ 24ին խորհրդաժողով մը գումարած է Արցախեան շարժումին քսանամեակին առթիւ: Մասնակցած են Սփիւռքէն, Ղարաբաղէն, Ջաւախքէն ու Հայաստանի համալսարաններէն ուսանողական խորհուրդներու, հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ելոյթներ ունեցած են ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական միութենէն Զ. Մեղրեան, ԼՂՀ արտաքին գործերու նախկին նախարար Լ. Մելիք-Շահնազարեան, Գիտութեան ակադեմիայի պատմութեան հիմնարկի տնօրէն Ա. Մելքոնեան, ՀՅԴ բիւրոյի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Կ. Մանոյեան:

Քննարկումներէն ետք Հայաստանի, Սփիւռքի, Լ.Ղ. Հանրապետութեան եւ Ջաւախքի աւելի քան երկու տասնեակ երիտասարդական կազմակերպութեան կողմէ ընդունուած է հայ երիտասարդներուն ուղղուած կոչ մը:

Հոն որպէս պարտք կը ստանձնուի Արցախի միացման համազգային եւ համահայկական նպատակներու արդիւնք նուաճումները պահպանելու գործը, նաեւ շարունակելու Արցախի անկախութիւնը իրաւականօրէն ամրագրելու, աշխարհի կողմէ անոր ճանաչում ապահովելու, ներկայի սահմանները անխոցելի դարձնելու, հայութեամբ վերաբնակեցնելու եւ դայն մայր հայրենիքին վերամիացնելու առաքելութիւնը:

Երիտասարդները կ'ըսեն.

«Մենք, որպէս հայ երիտասարդներ, գիտակցում ենք, որ պատմութիւնը մեզ իրաւունք չի տուել զիջել մեր հայրենիքից ոչ մի թիզ, այլեւ պարտականութիւն ունենք պահպանել այն, եւ մայր հողին վերամիաւորել պատմական անարդարութեան հետեւանքով թշնամուն անցած մեր բոլոր հողերը»:

Կոչը կ'աւարտի յանուն հայրենիքի, յանուն միասնական յաղթանակի անոր միանալու հրաւէրով:

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Շարքի զննումն արդէն աւարտւում էր, եւ յանկարծ երիտասարդ նորակոչիկներից մի կողմ կանգնած՝ Կարիպալտին նկատեց մեզ՝ Վէքիլեաններիս: Նա մի կարճ պահ նայեց մեզ եւ բարձր գոչեց.

– Իսկական Նոյ նահապետ՝ իր որդիների հետ: Վէքի, իմացիր ովքե՞ր են դրանք:

– Գեներալ, դա իմ քեռին է՝ Արա Վէքիլեանը, «Երիտասարդ Իտալիա»յի աչքի ընկնող անդամներից:

– Վէքիլեա՞ն ասում ես, սպասի՛ր, սպասի՛ր: Նա, ով մասնակցեց Պոլոնիայի ապստամբութեա՞նը:

– Այո, նա, գեներալ իմ...

Կարիպալտին վայր ցատքեց ձիուց եւ մօտեցաւ մեզ.

– Ողջո՛յն քեզ, հին մարտիկ եւ բարեկամ: Ես տեսնում եմ, որ նոր կռիւների համար դու ներկայացել ես արժանաւոր մի լրացումով. շնորհակալութիւն քեզ, բարեկամ:

...Այվազովսկին այնքան խորն էր ընկղմել յիշողութիւնների մէջ, որ ցնցուեց, կողքին լսելով Ռեպինի ձայնը: Ձեռքով պահելով աչքերը արեւի կուրացուցիչ ճառագայթներից, Իլիա Եֆիմովիչը նայում էր բաց երկնագոյն թափանցիկ օդին, որ թեւածում էր Թէոդոսիայից այն կողմ տարածուող բլուրների վրայ:

– Հիմա ես հասկանում եմ, թէ ինչու է ձեր նկարներից այդպիսի տօնական խնդութիւն ճառագում, – ասաց նա:

– Այստեղ, ամռան օրերին, լոյսի նման առատութիւնը սովորական բան է: Պուշկինը Թէոդոսիան այցելեց Օգոստոս ամսին եւ հէնց այսպիսին էլ տեսաւ: Նա իջեւանել էր Բրոնեւսկու մօտ. ա՛յ, այս տանը: – Եւ Այվազովսկին մատով ցոյց տուեց դիմացի այդու խորքում գտնուող ճերմակ առանձնատունը: Պուշկինի մասին նա խօսում էր այնպէս, ասես բանաստեղծը կենդանի լինէր: Ռեպինն անմիջապէս դա զգաց:

– Ես նախանձում եմ ձեզ, Իվան Կոնստանտինովիչ, դուք բախտ էք ունեցել տեսնելու Պուշկինին: Եւ սկսում եմ հաւատալ, որ մեզ՝ ձեզ հետ միասին, կը յաջողուի նկարել ծովին հրաժեշտ տուող բանաստեղծի իրական կերպարը:

– Դէհ, ուրեմն, հիանալի է: Կը նշանակի ես ձեզ զուր չբերեցի այստեղ: Այստեղ Պուշկինի բանաստեղծութիւնները նոյնիսկ այլ կերպ են հնչում: Ահա լսեցէք.

Քո արշալոյսն իմ յիշում,
Ով լուսատու իմ ծանօթ,
Երկրի վրայ այն խաղաղ,
ուր շատ բան կայ սրտումդ,
Ուր ելել են հովտի մէջ
բարդիները սլացիկ,
Ուր ննջում է մուգ ռեհին
ու մրտենին փեղեցիկ,
Եւ աղմկում են առոյգ ալիքները
կէսօրին:

Այվազովսկին մտքերի մէջ ընկաւ: Նա կարդում էր խորաթափանց ու ոգեւորուած, ըմբոշխնելով իւրաքանչիւր տողի հմայքը:

– Եւ... – դանդաղօրէն կրկնեց Ռեպինը: – Այո, Իվան Կոնստանտինովիչ, ոչ մի գեղանկարիչ Պուշկինի աշխարհը չի զգացել այնպէս, ինչպէս դուք: Ի միջի այլոց, դուք խոստացաք ցոյց տալ «Պուշկինը Այու-դաղի ժայռերի մօտ» նկարը:

– Ես հէնց հիմա էլ կը կատարեմ իմ խոստումը, Իլիա Եֆիմովիչ: Նախաճաշից յետոյ կը գնանք իմ ամառային արուեստանոցը, եւ ես այնտեղ ձեզ ցոյց կը տամ իմ վերջին աշխատանքները:

...Դրսում տօթ էր, օդը կանգնած էր անշարժ, նոյնիսկ ստուերում շնչել չէր լինում: Այվազովսկին եւ Ռեպինը մօտեցան կանաչների մէջ կորած փոքրիկ սպիտակ տնակին: Դարպասի առաջ պառկած շնիկը, տեսնելով Այվազովսկուն, ուրախ վնգստալով նետուեց դէպի նա: Ռեպինը դիտելով այդ տեսարանը ծիծաղեց: Այդ րոպէին շունը վազ տըւեց դէպի ծառուղիներով իրենց ընդառաջ եկող երկար, մօրուսաւոր հսկայ ծերունին: Դա Արա Վէքիլեանն էր: Այվազովսկին նոյնպէս շտապեց ծերունուն ընդառաջ, իսկ Ռեպինը մնաց տեղում՝ հմայուած ծերունու փառահեղ, վեհ կերպարանքով:

Նկարչի ձեռքից բռնած, ծերունին մօտեցաւ Ռեպինին եւ յարգալից խոնարհուեց: Նրա շարժումները հանդիստ էին, զուսպ:

Մաքուր, ընդարձակ սենեակում զով էր: Ծերունի Արան տեղաւորեց հիւրերին եւ թարմ մեղր առաջարկեց նրանց, հէնց նոր քաղած վարունգի հետ:

– Ասես իմ հարազատ Ուկրանիայում լինեմ,– հիացմունքով բացագանչեց Ռեպինը, – միայն այնտեղ է, որ մեղրի հետ թարմ վարունգ են մատուցում:

– Ես սա սովորել եմ հարեւան գիւղում, որտեղ ինձ նոր հայրենակիցներ են յայտնուել,– բացատրեց Արան:

– Ո՞ր գիւղում, – աշխոյժ հետաքրքրուեց Այվազովսկին:

– Ծումա-էլիում, Յովհաննէս: Բարեկամներս խնդրել են յայտնել իրենց, երբ որ գաս: Նոր փորձանք է եկել խեղճերի գլխին՝ հողի վարձակալման հետ կապուած: Հիմա նրանց ամբողջ յոյսն այն է, որ դու կը միջամտես, եւ գուցէ...

Այվազովսկին անմիջապէս կարգադրեց, որպէսզի մարդ ուղարկեն Ծումա-Էլիի գիւղացիների յետեւից: Երբ Արան դուրս եկաւ, Ռեպինը վեր կացաւ եւ մօտեցաւ այն պատին, որտեղից կախ էր տուած գեղանի մի հայ դեղջկուհու դիմանկար:

(Շար. 193)

ՕԶԱՆԵԱՆ եւ ԹՈՐՈՍԵԱՆ ընտանիքները
ցաւով կը ծանուցանեն

Պ. ԺԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕԶԱՆԵԱՆ-Ի

մահը, որ պատահեցաւ 2008, Մարտ 27ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Չորեքշաբթի, Ապրիլ 2, 2008, ժամը 11ին, Սրբոց Թարգմանչաց Մայր եկեղեցին, 339 avenue du Prado — 13008 Marseille

Թաղումը տեղի կ՚ունենայ ընտանեկան մտերիմ շրջանակի մէջ Իէռի գերեզմանատունը։

Պիտի աղօթենք նաեւ Օզանեան գերդաստանի բոլոր մեռելներու հոգիներուն համար։ Բոլոր անոնք որոնք կը յարգեն անոնց յիշատակը, թող աղօթակից ըլլան մեզի։

«ՅԱՌԱՋ».— Մեր ցաւակցութիւնները Օզանեան եւ Թորոսեան ընտանիքներուն։

Les familles OZANIAN et TOROSSIAN

ont la tristesse de vous faire part du décès de

Monsieur Jean Hovanès OZANIAN

survenu le jeudi 27 mars 2008.

Ses obsèques seront célébrées le **mercredi 2 avril 2008 à 11 heures**, en la Cathédrale des Saints Traducteurs; 339 avenue du Prado — 13008 Marseille.

L'inhumation aura lieu dans l'intimité familiale au cimetière d'Hyères.

Nous prierons également pour tous les Ozanian disparus.

Que tous ceux qui gardent leur souvenir nous rejoignent dans la prière à leur intention.

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ–շրջանային Ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90–ամեակին։

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջանները ու զանազան մարզական միութիւններ։

Մրցաշարքը տեղի կ՚ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին։

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–

06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— RECITAL DE PIANO

Mickaël EKMEKTCHIAN

Samedi 5 avril à 18 heures

Au Centre Culturel Sahak-Mesrop

339 avenue du Prado — 13008 Marseille

Au programme : Bach — Beethoven — Rachmaninoff...

—— Entrée libre ——

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP

Direction : Khatchig YILMAZIAN

Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN

de l'Opéra d'Erevan

Au piano : Juliette YILMAZIAN

Dimanche 27 avril à 16h30

en l'église de Saint-Loup

(Շար. Ա. էջէն)

Լանսի (հիւսիսային Ֆրանսա) դէմ ինչպէս՝ «գործազուրկ, մանկամոլ», եւլն., եւլն., ինչ որ անմիջական զայրոյթ պատճառած է եւ հարց ծագած թէ ի՞նչպէս կարելի եղած է ներս մտցնել նման պաստառ մը որ մօտ 40 մեթր երկարութիւն ունի։ Կը կարծուի թէ կտոր–կտոր կարելի եղած է։ Զայրոյթը այնքան մեծ է որ Լանս կ՚ուզէ նոյնիսկ որ խաղը կրկին տեղի ունենայ։ Արդէն իսկ դատարան դիմած են ցեղապաշտ նկատուած այդ որակումներուն դէմ։ Մրցումին ներկայ եղած էր նաեւ Հանրապետութեան նախագահը, որու լռութիւնն ալ կը դատապարտուի։

ՅՈՅՑԵՐԸ իրարու յաջորդեցին Մարտ 29ին, Փարիզի մէջ։ Գլխաւորը կը վերաբերէր հաշմանդամներուն, որոնց թիւը 16.500 էր ըստ ոստիկանութեան, եւ 35.000 ըստ կազմակերպիչներուն։ 13 կառախումբով, 5 օդանաւով եւ 700 հանրակառքերով եկած էին Ֆրանսայի բոլոր շրջաններէն։ Բողոք կը ներկայացնէին որ ամսական հազիւ 600 եւրոյով կարելի չէ ապրուստ ճարել։ Ցոյց մըն ալ կազմակերպուած էր հանգստեան թոշակներու հարցին կապակցութեամբ, գլխաւորութեամբ Սէ« Ժէ. Թէ.ին, անընդունելի գտնելով որ մինչեւ 2012 հարկ ըլլայ 41 տարի աշխատիլ, փոխանակ 40ի։

ՎԱՏԻԿԱՆՆ ալ հաստատած է պաշտօնապէս, որ աշխարհի մէջ մահմետականներու թիւը աւելի մեծ է քան քրիստոնեաներու թիւը, այս վերջինը մարդկութեան միայն 33%ը կը ներկայացնէ։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
կեդրոնական դահլիճին մէջ (26, ուէ Թրուայոն, Սեւր)։

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ,
1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ուէ Սիպիէ, 13001)։

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։
դասախօս՝ Հ. Յ. ՊՉՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.

Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

Recherche Directeur(trice) de maison de retraite

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur(trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne.

Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arméniennes.

Possibilité de logement de fonction.

Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante :

Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77 rue la Fayette — 75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

CITE INTERNATIONALE UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens - Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն – Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

"Les mercredis de la MEA"

Un état de la recherche historiographique sur le génocide arménien
Haroutioun KEVORKIAN
Historien, professeur à l'Institut français de géopolitique (Université Paris-VIII-Saint-Denis) conservateur de la Bibliothèque Nubar à Paris
— Mercredi 2 avril/21h

Les réfugiés arméniens et le droit international pendant l'entre-deux-guerres
Dzovinar KEVONIAN
Maître de Conférences à l'Université Paris X
Directrice-Adjointe du dépt. d'histoire
— Mercredi 9 avril/21h

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches au CNRS
— Mercredi 28 mai/21h

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

Date à retenir

SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à A. Aharonian
le **vendredi 18 avril à 20h30**
à la Maison de la Culture Arménienne de Marseille

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ՚ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը։

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ՚ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ։

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01.43.59.67.03 թիւէն։

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 2
MERCREDI
2 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.929
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
83e ANNEE — N° 21.929

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՐՍԷՅԼԻ ընտրական 7րդ շրջանին (13րդ եւ 14րդ Թաղամասեր), Մարտ 31–ին քաղաքապետ վերընտրուեցաւ «Յառաջ»ի աշխատակիցը Կարօ Յովսէփեան։

ՉԱՏԻ նախագահը՝ Իտրիս Տէպի, Մարտ 31ին ներում շնորհեց «Զոէի Տապան»ին վեց անդամներուն, որոնք Ֆրանսա փոխադրուած էին, ուր կը կրէին ութ տարուան այն բանտարկութիւնը, որ կը փոխարինէր Չատի դատարանին ութ տարուան տաժանակիր աշխատանքի վճիռը։ Ենթակաները ուրախ են եւ ազատ, բայց բազմաթիւ հարցականներ կը մնան։ Ծանօթ է որ դատապարտուած էին որովհետեւ 103 երախաներ կը փորձէին Ֆրանսա փոխադրել, որպէսզի որդեգրուին։ Չատի համար պարզ առեւանգում մըն էր եւ հաստատուած էր նաեւ որ երախաները որբ ալ չէին։ Մինչեւ այսօր ճշմարտութիւնը երեւան չէ ելած եւ այսօր ալ նոր հարցականներ կ՚աւելնան։ Ֆրանսա ի՞նչ դեր խաղացած է այս ներումը ձեռք ձգելու համար եւ ի վերջոյ ո՞վ պիտի վճարէ այն 6 միլիոն 300 հազար եւրոյի հատուցումը, որու նաեւ դատապարտուած էին «Զոէ»ի անդամները։

ԹՈՒՐՔԻՈՅ Սահմանադրական ատեանը Մարտ 31ին չորս ժամուան նիստէ մը ետք յայտարարած է թէ ընդունուած է ԱԶ կուսակցութիւնը փակելու դատը։ Ամբաստանագիրը պէտք է ղրկուի նոյն կուսակցութեան որ ամիս մը ժամանակ պիտի ունենայ իր պաշտպանութիւնը պատրաստելու։ Սահմանադրական ատեանի 11 անդամներէն եօթին հաւանութիւնը անհրաժեշտ է փակումի վճիռին համար։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ որոշած է չափաւոր դիրք բռնել Չինացիներուն նըկատմամբ Թիպէթի դէպքերուն առթիւ։ 27երը կը հրաւիրեն Չինաստանը որ երկխօսութեան դիմէ Տալայ–Լամայի հետ «պահպանելով լեզուն, մշակոյթը եւ Թիպէթեան աւանդութիւնները», բայց առայժմ կը մերժեն Ողիմպիականի պոյքոթ մը։

ՎՐԱՍՏԱՆԻ նախագահը, Մարտ 28ին, նոր առաջարկներ ներկայացուցած է Աբխազիոյ հարցը կարգադրելու համար։ Նոր առաջարկը չի տարբերիր 2006ի ծըրագրէն, ըստ որուն «անսահման ինքնավարութիւն» կը շնորհուի Աբխազիոյ։ Ազատ գօտի մը կը ստեղծուի Օչամբչիր եւ Գալի շրջանները, Վրաստանի փոխ նախագահութիւն մը կը տրուի Աբխազի մը եւ սահմանադրական վէթոյի իրաւունք ինչ կը վերաբերի Աբխազիոյ։ Անկախապաշտ Աբխազ Սերգէյ Բակապշիի համար այդ առաջարկները զուտ «քարոզչութիւն» են։

ԻՐԱՔԻ մէջ, հինգ օրերու բախումները շիի քաղաքազօրքերու եւ բանակին միջեւ, 460 մեռեալներ պատճառած են ըստ պաշտօնական աղբիւրներու։ Ամերիկեան բանակն ալ յայտնած է որ Մարտ 30ին, Պաղտատի մէջ 41 «ոճրագործ» սպաննած է, որոնց 25ը յատուկ վայրի մը ռմբակոծութեամբ։ Պաղտատի լուսարգելը վերջ գտած է եւ Ապրիլ 1ին կը թուէր որ Մոքթատա ալ–Սատրի հրադադարի կոչն ալ յարգուած է։

ՄԱԿ–ի ընդհանուր քարտուղարին կըցորդը՝ Լին Փասքօ, որ եռօրեայ այցելութիւն մը կատարած է Կիպրոս եւ տեսնուած յոյն եւ Թուրք ղեկավարներուն հետ, յայտարարած է թէ լաւատես է Կիպրոսի վերամիացման կարելիութեան մասին։

ՄԱՂՐԷԲԻ ալ–Քաիտան, որ Փետր. 22–ին երկու Աւստրիացիներ առեւանգած էր Մալի, նոր պահանջներ դրած է Աւստրիոյ իշխանութիւններուն, անոնց ազատ արձակման համար։ Այժմ, կ՚ուզեն որ Աֆղանիստանի ՕԹԱՆ–ի ուժերէն քաշուին աւստրիացի զինուորները եւ ազատ արձակուի իսլամապաշտ այն զոյգը որ դատապարտուած է Վիէննա։

ԺԱՆ ՍԱՐՔՈԶԻ, նախագահին կրտսեր զաւակը (առաջին ամուսնութենէն) գլուխը անցած է Նէօյիի ԻՒ. ԷՄ. ՓԷ.ին։ Ֆրանսայի ամէնէն կարեւոր մասնաճիւղերէն մէկն է իր 4.000 անդամներով, բընակչութեան (60.000) համեմատութեամբ։ Ժան Սարքոզի 21 տարեկան է։

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ իշխանութեան նախագահը՝ Մ. Ապպաս Մոսկուա կ՚երթայ Ապրիլ 17էն 19։ Հանդիպումներ պիտի ունենայ Փութինի հետ եւ ընտրուած նախագահ՝ Մեդվեդեւի հետ։ Խօսակցութեան նիւթն է պաղեստինեան – իսրայէլեան հակամարտութիւնը։ Արտաքին նախարարը՝ Ս. Լավրով Մարտ 21ին ժողովի մը գաղափարը հրապարակ հանած էր այդ մասին, Մոսկուայի մէջ։

ՊՈՒՇ ամոլը երկօրեայ այցելութիւն մը կատարած է Կիեւ, նախքան Պուքրէշի ՕԹԱՆ–ի վեհաժողովը, որ կը բացուի Ապրիլ 2ին։ Ծանօթ է որ ԱՄՆ կ՚ուզեն ընդլայնել իրենց ազդեցութիւնը Արեւելեան Եւրոպայի վրայ եւ այս այցելու–

(Շար.ը Դ. էջ)

ԲԱԹՈՒՄԻԻ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Մարտ 28ին Աճարիոյ մայրաքաղաք Բաթումիի մէջ բացուած է Հայաստանի գլխաւոր հիւպատոսութիւն։ Գործունէութեան շրջանը կ՚ընդգրկէ Աճարիան, Գուրիայի, Իմերեթիայի շրջանները, Փոթին։ Հիւպատոս նշանակուած է Յակոբ Հաճի Յակոբեան։

Յաջորդ օրը հիւպատոսն ու հայկական պատուիրակութիւնը հանդիպում ունեցած են Բաթումիի հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ եւ մասնակցած քաղաքին Ս. Փրկիչ հայկական եկեղեցիին բակին մէկ խաչքարի օրհնութեան։

Բաթումիի մէջ հայկական հիւպատոսութիւն գործած է 1918–20 տարիներուն ալ։

ՆՈՐ ՕՐԷՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՌԱՋԻՆ ՍՓԻՒՌՔԱՀԱՅԸ

Լինսի հիմնարկի փոխ նախագահ եւ «Գալիֆորնիա զուրրիըր» թերթին խմբագիր Յարութ Սասունեան 2007 Փետրուարի օրէնքով Հայաստանի քաղաքացիութիւն ստացած առաջին Սփիւռքահայը եղած է։ Իր վերջին այցին ընթացքին ան լրած է հարկաւոր դիմումները եւ մեկնումէն առաջ իրեն տրուած է քաղաքացիութիւնը։

Ինչպէս յայտարարուած էր, նոր օրէնքը կը թոյլատրէ երկքաղաքացիութիւնը եւ Հայաստանի հիւպատոսարանները անհրաժեշտ պատրաստութիւնը ըրած են այդ ուղղութեամբ դիմումներ ստանալու համար։

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Նախագահ Ռ. Քոչարեան Մարտ 31ին աշխատանքի այցով մը Ստեփանակերտ գացած, հանդիպում ունեցած է նախագահ Բ. Սահակեանի ու ԼՂՀ օրէնսդիր ու գործադիր իշխանութիւններու ներկայացուցիչներու հետ։ Այցը կատարուած է Արցախի ղեկավարութեան հրաւէրին ընդառաջելով։

Բակօ Սահակեան շնորհակալութիւն յայտնելով պաշտօնավարման տարիներուն ցոյց տուած գործակցութեան ոգիին ու Արցախեան շարժումին ունեցած մասնակցութեան, իր հիւրը պարգեւատրած է «Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով։ Յետոյ վարչապետ Ա. Յարութիւնեան ներկայացուցած է կառավարութեան աշխատանքներն ու ծրագիրները։

Նախագահ Ռ. Քոչարեանի ու ԼՂՀ արտաքին գործերու նախարար Գ. Պետրոսեանի տեսակցութեան քննուած են բանակցութեան հարցեր եւ հիւր նախագահը յայտնած է թէ նոյն բնոյթի քննարկումներ մօտ ատենէն տեղի կ՚ունենան Հայաստանի մէջ ալ։ Կը նախատեսուի նաեւ Հայաստանէն խորհրդարանականներու խումբ մը ղրկել Ղարաբաղ, նոր առաջարկներով։

Ռ. Քոչարեան ըսած է թէ վերջին շըրջանի որոշ զարգացումներ ղարաբաղեան հակամարտութեան շուրջ եւ ընդհանրապէս շրջանին մէջ, կը պարտադրեն կարգ մը փոփոխութիւններ ընել Հայաստանի եւ Ղարաբաղի, թէ՛ Ղարաբաղի ապահովութեան, թէ կարգաւիճակին առումով։ Պատասխանելով ԼՂՀ անկախութիւնը ճանչնալու խնդրին մասին հարցումներու, Ռ. Քոչարեան ըսած է. «Երկու տարբերակ կայ. կամ անմիջապէս ճանաչել, կամ մի գուցէ վերջնական ճանաչումը այս պահին փոխարինել պայմանագրի ստորագրութեամբ՝ Հայաստանի ու ԼՂՀ միջեւ պաշտպանութեան, ժողովրդին վերաբերող փոխադարձ աջակցութեան եւ ծաւալապաշտական յարձակումների պարագայում հրատապ կերպով մասնակցութեան առումով։ Նման պայմանագիրը, կարծում եմ, կանխարգելիչ դեր կ՚ունենայ ռազմատենչ յայտարարութիւնները կանխելու համար»։

Հայաստանի նախագահը արժեւորելով իր պաշտօնավարութեան տարիներուն ղարաբաղեան բանակցային հոլովոյթը, նշած է թէ «վատ վիճակում չի յանձնում» իր յաջորդին։ «Երբ ընտրուել եմ, բանակցային գործընթացում Ղարաբաղը դիտւում էր Ադրբեջանի կազմում, այս տարիների ընթացքում երբեւէ Ղարաբաղը Ադրբեջանի կազմում չեմ քննարկել» ըսած է ան։

* * *

ԱԿՈՅԻ ԽՈՒՄԲՆ ԱԼ ԵՐԵՒԱՆ ԳԱՑԱԾ

Եւրոպայի Խորհուրդի նախարարներու կոմիտէի Ակոյի խումբը դեսպան Փ. Սէօրկէնի գլխաւորութեամբ Հայաստան գացած է. խումբին մաս կազմած են բնը երկիրներու ներկայացուցիչներ։

Խումբը Հայաստան տարած է 6 կէտէ բաղկացած առաջարկներու ծրար մը։ Առաջին կէտով ըսուած է որ մարտեան խռովութեան հետեւանքով ձերբակալուածներու մեկուսացումին վերջ տրուի. ապա՝ ազատ արձակուին քաղաքական գործունէութեան պատճառով ձերբակալուածները, արդարութեան նախարարը պարբերաբար տեղեկութիւն հրապարակէ արգելափակուածներուն մասին, Մարտ 1ի դէպքերուն մասին անկախ, բազմակողմանի հետաքննութիւն կատարուի եւ վերջապէս, հաւաքներու, ցոյցերու օրէնքին մէջ պէտք չէ սահմանափակումներ աւելցուին։

Փ. Սէօրկէնի գլխաւորած խումբը իր խնդրանքով եւ իր տան մէջ տեսակցած է Լ. Տէր Պետրոսեանի հետ ալ, բայց այդ մասին մանրամասնութիւն չէ հաղորդըւած։ Միայն ըսուած է թէ այդ տեսակցութեան նպատակն էր ունենալ կացութեան ամբողջական պատկերը։

Փ. Սէօրկէնի եւ Վ. Օսկանեանի միասին տուած մամուլի ասուլիսին Հայաստանի արտաքին գործերու նախարարը շեշտած է թէ միջազգային հանրութիւնը պարտի յստակ ուղերձ յղել Պաքուի, որպէսզի վերջ տայ ժխտողական կեցուածքին ու Հայաստանի, Ղարաբաղի հետ բանակցութեան ձեռնարկէ, ընդունելի տարբերակներով լուծել ջանալու համար հակամարտութիւնը։

Վ. Օսկանեան շեշտած է թէ Ադրբեջան շատ աղտոտ խաղ կը խաղայ, փորձելով ցրուել Մինսկի խումբը, հրաժարիլ կողմերու երկու տարուան աշխատանքին արդիւնք փաստաթուղթէ մը որուն բոլոր կէտերուն, սկզբունքներուն յստակ համաձայնութիւն տուած է։ Բացասական նկատած է ադրբեջանական կողմին կատարած հրադադարի բռնաբարումները, ռազմաշունչ հռետորութիւնը եւ հարցը ՄԱԿ փոխադրելու ջանքերը։ Ըսած է թէ խնդիրը լուծելու միակ ճամբան բանակցութիւնն է, իսկ բանակցութիւններու մեկնակէտը Ղարաբաղի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը կը կազմէ։

Ինչ կը վերաբերի Հայաստանի ներքին կացութեան մասին ադրբեջանցի ղեկավարներու յայտարարութիւններուն, Վ. Օսկանեան ըսած է թէ լաւ կ՚ըլլայ որ իրենք իրենց հարցերով զբաղին, թէ Ադրբեջան երկրագունտին վրայ վերջին երկիրն է որ կրնայ Հայաստանի ներքին զարգացումներուն, ժողովրդավարութեան մասին բան մը ըսել։

Ըստ Փ. Սէօրկէնի, Ղարաբաղի տագնապին լուծումը միայն երկխօսութեամբ կարելի կ՚ըլլայ եւ անհրաժեշտ է որ այդ երկխօսութիւնը շարունակուի Մինսկի խմբակին շրջանակին մէջ։

* * *

«Թ. ԱԼԹՈՒՆԵԱՆ» ԵՐԳԻ ՊԱՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ 70–ԱՄԵԱԿԸ

Այս տարի կը լրանայ «Թ. Ալթունեան» երգի ու պարի պետական խումբին հիմնադրութեան 70ամեակը։ Տնօրէն Աշոտ Տիգրանեան յայտնած է թէ յոբելենական համերգները կը սկսին Մայիս 17ին, Մոսկուայի մէջ։ Խումբը առաջիններէն եղած է որ հայկական երգն ու պարը ներկայացուցած է արտասահմանի մէջ։

Խումբը ունի 90 հոգինոց անձնակազմ եւ միայն Երեւանի մէջ տարեկան մօտ 20 համերգ կու տայ։ Գեղարուեստական ղեկավարն է Ժիրայր Ալթունեան։ Ան ըսած է թէ յոբելենական համերգներով ծրագրած են խումբին ութ նախորդ ղեկավարներուն ստեղծածներն ու մօտեցումները ժողովրդական երգ ու պարին, ներկայացնել հանրութեան։

ՀԻՒՍԻՍԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ՝ ՀԱՍԱՐԱԿԱՑ ԱՆՑԵԱԼԷՆ ԵԶԱԿԻ-ՆԵՐԿԱՅ

ՅԱԿՈԲ ԿԻՒԼԼԻՒՃԵԱՆ
U.C.L.A.

Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանի կողմէ պատմական հայ բնակավայրերու մասին կազմակերպուած գիտաժողովներու շարքին 18րդը կայացաւ անցած Փետրուար 29ին եւ Մարտ 1ին, այս անգամ նուիրուած հիւսիսարեւելեան Միջերկրականի հայկական համայնքներուն՝ գլխաւորաբար Մուսա Լերան, Քեսապի եւ Զորք-Մարզպանի (Տէօրթ Եօլ): Գիտաժողովը եզակի էր այն իմաստով, որ կ'անդրադառնար Հայերու պատմական հայրենիքին մաս կազմող հողամասի մը ուր տակաւին Հայեր կ'ապրին միախումբ իբրեւ համայնք, ըլլայ Թուրքիոյ սահմաններուն մէջ գտնուող մուսատաղեան Վագըֆ կիւղի, ըլլայ Սուրիոյ պատկանած Քեսապի մէջ, առանց մոռնալու Մուսա լերան չարունակութիւնը հանդիսացող Լիբանանեան Այնճար հայկական գիւղը: Առանձնայատկութեան մաս կը կազմէ նաեւ լեզուական՝ բարբառային աւանդութեան վերապրումը, կենցաղային այլ երեւոյթներու կարգին:

Գիտաժողովը առիթ հանդիսացաւ քով-քովի բերելու յիշեալ շրջանի մասին գիտական ուսումնասիրութիւններու ամբողջ հոյլ մը, տարբեր բնագաւառներէ: Տեղամասի մասին ցարդ գոյութիւն ունէին պատմական որոշ ուսումնասիրութիւններ, յուշագրութիւններ եւ առատագոյնը՝ ծամծմուած քլիշէներ: Այսպիսի հանդիպում մը, իր բազմակողմանի մօտեցումներով, աւելի հաստատուն շրջարկի մէջ կը զետեղէ եղած տուեալները, պիտանին կը զատէ աղմկայինէն, եւ նոր ու անհրաժեշտ տեղեկութիւններ կը գումարէ ցարդ եղածին վրայ, թէ՛ իբրեւ հում նիւթ, եւ թէ՛ իբրեւ վերլուծական փորձ: Ամենակարեւորը, սակայն, գիտաժողովի նիւթերու արագ ընթերցում մը անխուսափելի տպաւորութիւնը կը թողու ո՛չ թէ մեր գիտցածին էականութեան, այլ չգիտցածին ահագնութեանը: Գիտակցում մը չկատարուածին եւ սպասող անչափ աշխատանքին:

Գիտաժողովի զեկուցումներու մասին ներկայ հաղորդումը սեղմօրէն ծաւալուն է, բայց եւ այնպէս կը տրուի այն համոզումով, որ այսպիսի նիւթեր՝ որքան ալ քանի մը տարի ետք հրատարակուին գրքի ձեւով, թերեւս բնաւ չհասնին հայալեզու ընթերցողներու մէկ կարեւոր մասին, ու կորսնցուցած ըլլան նոյնատիպ մտահոգութիւններու եւ հետազօտութիւններու խթանումի կարելիութիւնը:

Ինչպէս արդէն աւանդութիւն դարձած է, առաջին օրուան նիստը տեղի ունեցաւ հայերէնով, այս անգամ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան թեմի առաջնորդարանի սրահին մէջ, Պըրպէնք: ԵՈՒ.ՍԻ.ԷԼ.ԷՅ. համալսարանի Պատմութեան բաժնի հայկական ամպիոնի վարիչ փրոֆ. Ռ. Յովհաննէսեանի ներածականէն ետք, առաջին զեկուցումը կատարեց Հալէպէն Յակոբ Չոլաքեան, որ անդրադարձաւ Անտիոք-Լաւոդիկէ-Աղեքսանդրէթ եռանկիւնին մէջ Ժ.-ԺԱ. դարերուն կազմուած հայկական բնակավայրերու իրավիճակին՝ ԺԹ. դարու կէսերէն սկսեալ, յատկապէս կեդրոնանալով Պէյլանի, Սուէտիոյ, Քեսապի, Լաթաքիոյ եւ շրջակայքի, ինչպէս նաեւ Ռուճի հովտի արաբախօս գիւղերու մասին պատմական եւ աշխարհագրական նիւթերու վրայ. Զեկուցաբերը հանգամանօրէն նկարագրեց օտար քարոզչութիւններու յառաջացուցած համայնքային արմատական փոփոխութիւնները, որոնք տուեալ շրջաններու հայութիւնը բաժնած են չորս յարանուանութիւններու: Պատմականը ըրաւ նաեւ նախորդ դարավերջին եւ Աղէտի շրջանին Իսրաքանչիւր շրջանի կրած ճակատագրին, յիշելով թէ ինչպէս Ազգերու Լիկայի ջանքերով քսանականներուն գաղթականներու համար նոր գիւղեր կառուցուեցան Ամուգի դաշտին մէջ: Չոլաքեան մատնանշեց թէ հայագիտութեան համար նուազ ուսումնասիրուած շրջաններ կը մնան Լաթաքիոյ մօտիկ Արամօ եւ Ղնեմիէ հայկական գիւղերն ու Պէյլանի շրջանը, ինչպէս նաեւ Ռուճի հովտի Եագուպիէ եւ լատինադաւան Գնիէ գիւղերը:

Երկրորդ խօսողն էր Փարիզէն Իզապէլ-Սեդա Մավեան, որ խօսեցաւ Քեսապի ուսումնասիրութեան պատմական աղբիւրներուն զուգահեռ բանաւոր վկայութեան եւ «մանրապատմութեան» արդիւնաւէտ օգտագործման կարելիութիւններուն մասին, ըմբռնելու համար աւելի ընդհանուր իրադարձութիւններ՝ 1909ի ջարդերը, ցեղասպանութիւնը, ներգաղթը, եւն.: Հայաստանի Հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի գիտաշխատող Վերժինէ Սվազլեան իր կարգին ներկայացուց մուսալեռցիներու ժողովրդական բանահիւսութեան կապակցութեամբ զեկուցում մը, սկսելով այն համոզումէն, որ տուեալ շրջանի հայ բնակչութեան արմատները կ'երկարին մինչեւ Մեծն Տիգրանի ժամանակները: Սվազլեան տեղեկութիւն տուաւ տասնամեակներու ընթացքին իր կատարած բանահաւաքին մասին՝ Հայաստան ներգաղթած մուսալեռցիներու բանաւոր վկայութիւններու միջոցաւ կորուստէ փրկելու համար բանահիւսութեան վիպական (հէքեաթ, առակ, տեղանուանական աւանդութիւն, կենցաղային եւ զաւեշտական զրոյցներ), ինչպէս նաեւ քնարական (օրօրոցային, խաղիկներ, մանկախաղաց, պանդուխտի, հերոսամարտի) եւ բանաձեւային (հանելուկ, շուտասելուկ, անէծք, օրհնանք, աղօթք, եւն.) նմոյշներ, ինչպէս նաև ծիսական սովորութիւններ: Նիստի աւարտի հարց-պատասխանի ընթացքին խօսուած նիւթերու մասին հետաքրքրական մինճարկում կայացաւ ներկաներու եւ զեկուցաբերներու միջեւ:

Յաջորդ օրուան նիստերը տեղի ունեցան ԵՈՒ.ՍԻ.ԷԼ.ԷՅ.-ի Պրոտ սրահին մէջ, մեծ մասամբ անգլերէնով: Առաջին նիստին «Սէյվ» ծրագրէն Ռութ Թոմասեան (Պոստըն) պատմական լուսանկարներ ներկայացուց Մուսատաղէն, Քեսապէն եւ Տէօրթ Եօլէն: Հետաքրքրական էին Մուսա լեռէն ազատած ապաստանեալներու նկարները Փոր Սայիտի մէջ (Եգիպտոս), ինչպէս նաեւ Պիթիասի քսանական - երեսունականներու նկարները: Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տեմիրճեան երկրորդական վարժարանէն Մինաս Գոճայեան անդրադարձաւ Զորք Մարզպանի երեք ինքնապաշտպանութիւններուն՝ 1895ի Համիտեան ջարդերու ատեն, Մարտ-Ապրիլ 1909ին եւ 1919էն 1921, մատնանշելով թէ այդ նիւթը առաջին անգամն էր որ կ'արժանանար գիտական հանդիպումի մը պաշտօնական ուշադրութեան: Արարատ պարբերականի խմբագիր Արամ Արքունի բացակայութեան, Ռիչըրտ Յովհաննէսեան կարդաց անոր ուղարկած աշխատութիւնը, որ կը վերաբերէր գլխաւորաբար Տէօրթ-Եօլի մէջ ջարդի մանրամասնութիւններու ուսումնասիրութեան, այսպիսով լոյս սփռելու համար Ցեղասպանութեան վրայ ընդհանրապէս, տրուած ըլլալով այն տիրող կարծիքը թէ գործընթացը սկսած էր Զէյթունի եւ Տէօրթ-Եօլի մէջ: Արքունի զեկուցումը ապա անդրադարձաւ Ճեմալ փաշայի կողմէ Հայոց դէմ կատարուած ամբաստանութիւններուն եւ ատոնց ճշմարտացիութեան դէմ փաստարկումներու, ի վերջոյ յիշելու համար Ֆրանսական աղբիւրներու այն վկայութիւնները, որոնց համաձայն պատերազմի աւարտին վերադարձողներ փորձ կատարած էին իսլամ ընտանիքներու քով պահուած հայ կիներն ու մանուկները ետ առնելու, միւս կողմէն պատժելով ջարդերու մասնակցած անհատներ: Նիստի վերջին զեկուցումը կատարեց Գալիֆորնիոյ Նահանգային Համալսարան-Նորթրիճի հայագիտութեան վարիչ Վահրամ Շեմմասեան, որ կեդրոնացաւ Մուսատաղի գլխաւոր վեց գիւղերու պատմութեան վրայ՝ 1840էն 1915 թուականներու միջեւ: Պիթիաս, Հաճը Հապիպլի, Եօղունօլուգ, Խտըրպէկ, Վագըֆ եւ Գապուսիյէ գիւղերու 6000 բնակիչներուն համար այս շրջանը բնորոշեց որպէս խաւարէն եւ ադիտութենէն անցում մը դէպի անմահութիւն՝ իրենց վիպականացած ըմբոստութեամբ: Շեմմասեան նախ խօսեցաւ ընկերատնտեսական բնագաւառի մասին: Ցայտնեց թէ յիշեալ գիւղերը տուեալ ժամանակաշրջանին կը յատկանշուէին իրենց բաժանումներով, հակամարտութիւններով եւ անդադրում վէճերով, որոնք արգելք հանդիսացած են արդիւնաւէտ աշխատանքի, ինչ որ գումարուելով տեղւոյն խիստ կլիմային ու ծանր հարկերուն վրայ, շրջանի չարամարբուծութեան ճարտարարուեստին կաղալուն պատճառ դարձած է: Զեկուցաբերը յայտնեց, թէ հակառակ անոր որ օտար յարանուանութիւններու կողմէ բացուած դպրոցները կը միտէին Հայերը հեռացնել մայր եկեղեցիէն, անոնք պատճառ հանդիսացան որ շրջանի երիտասարդութիւնը յառաջդիմէ կրթական կեանքի մէջ, եւ Առաքելական եկեղեցին ստիպուի իր կարգին դպրոցներ բանալ՝ մրցելու համար:

Յաջորդ նիստին, Լոնտոնի Եունիվըրսիթի Գոլէճէն Շուշան Փաթթի հետաքրքրական վերլուծում մը կատարեց քեսապցիներու ինքնութեան յենակներու փոխարկումին մասին: Այդ ինքնութիւնը դարեր շարունակ հիմնուած էր մեծ մասամբ գերդաստաններու եւ տեղայնութեան՝ սեփական հողի եւ ֆիզիքական վայրի հետ կապին, ինչպէս նաեւ հասարակաց անցեալի մը գիտակցութեան վրայ. «քեսապցի» անուանումը կը սկսէր իրական դառնալ միայն երբ մարդ հեռանար տուեալ գիւղերու սահմաններէն: Անցեալը, որպէս ինքնութեան շարժական մէկ ստորոգելին, իրական դարձաւ 1947ի շուրջ՝ Ներգաղթի օրերուն, երբ «քեսապցիական» հողակեդրոն ինքնութենէն անցում մը արձանագրուեցաւ դէպի աւելի ընդհանուր նոյնացում մը «հայկականութեան» գաղափարին հետ, որ այս անգամ հիմնուած պիտի ըլլար կուսակցութիւններու, գրողներու եւ կղերի հայթայթած մտապատկերներուն վրայ: Նոր Հայաստանի մը հանդէպ հաւատքը, այսպէս, պատճառ եղաւ որ համայնքի գրեթէ կէսը կարենայ ինքզինք անջատել հողէն, ներգաղթի միջոցաւ անծանօթ հողի մը վրայ գիտակցօրէն ձեռնարկելու համար նոր եւ ընտրովի գաղափարի մը կերտումին:

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՅԵՐԷՆ ՊԱՏԿԵՐԱՊԱՏՈՒՄՆԵՐ (B. D.)

ՀՐԱՅՐ ՀՐԱԶԵԱՆ

9րդ արուեստ կոչուած «Bandes Dessinées _ B.D.»ն, հայերէն նորաստեղծ «Պատկերապատում» բառով, հայկական առաջին երեւումը ըրած էր Ֆրանսայի մէջ, 1950ական թուականներուն, Նուպար Յովհաննէսեանի նախաձեռնութեամբ, «Առաջ» պարբերականին էջերուն մէջ: Հոն գծագրուած պատկերներու միջոցով կը ներկայացուէին Հայոց պատմութեան որոշ դրուագներ ինչպէս ուրիշ արկածախնդրութիւններ: Տասնեակ տարիներ մեր մօտ մոռացութեան մատնուած այս մարզը այսօր նոր զարթօնք մը կ'ապրի, շնորհիւ վերջերս հիմնուած APBDA (Association Pour la Promotion de la BD en Arménie) ընկերակցութեան: Անոր հիմնադիրներն են Վարուժան Սրապեան (SIGEST հրատարակչատուն), Ժան Մարտիկեան՝ Անկուլեմի միջազգային հռչակաւոր պատկերապատումի փառատօնի ստեղծողներէն եւ վերջապէս Լօրան Մելիքեան: Այսպէս, «Թէնթէն»ի գոյութիւն ունեցող 24 ալպոմներէն արդէն լոյս տեսան երկուքին («Փիւրեղեայ 7 գնդիկները» եւ «Արեւի տաճարը») հայերէն տարբերակները: Մօտ օրէն պիտի տպագրուի նաեւ «Փարաւոնի սիկառները» իսկ Նոյեմբերին՝ «Կապոյտ լոտոսը»: Ծրագրուած է ամէն տարի լոյս ընծայել երկու նոր ալպոմներ, մինչեւ տասը անուն: Առաջին երկու հատորները արեւելահայերէն են եւ դասական ուղղագրութեամբ: Թարգմանութեան խատանքը կատարած են Ռուզան եւ Վարուժան Կիւրեղեան ամոլը, եւ պէտք է ըսել, մեծ յաջողութեամբ:

Իսկ լոյս տեսնելիք երրորդ եւ չորրորդ հատորները պիտի ըլլան արեւմտահայերէն, Վարդուհի Կիւզելլպոտուրի թարգմանութեամբ: Այսպէս, «Թէնթէն»ը, որ մինչեւ այսօր հրատարակուած էր աշխարհի 77 տարբեր լեզուներով, կ'արժանանայ նաեւ հայերէնին: «Թէնթէն»ի ալպոմներու տպագրութեան յաջողութենէն քաջալերուած (6000 օրինակ վաճառուած) APBDA-ն սկը-

սած է նաեւ ուրիշ հերոսի մը՝ Lucky Lukeի (հայերէն՝ «Լաքի Լուք»ի) արկածախնդրութիւնները լոյս ընծայել: Առաջին պատմուածքը՝ «Տալթոն սիթի», նոր լոյս տեսաւ, նմանապէս արեւելահայերէն եւ պաշտօնական ուղղագրութեամբ: Այս հեռանկարին ալ նախատեսուած է հրատարակել տարեկան երկու անուն յանձնականութեամբ: Ընթերցման նոր ձեւեր մեր վարժարաններու աշակերտներուն համար:

Նշենք որ Հայաստանի մէջ ալ սկսած է նոր հետաքրքրութիւն մը այս արուեստին նկատմամբ: Այսպէս, Տիգրան Մանկասարեան 2007ին հրատարակեց «Լըռութիւն» ալպոմը (արեւելահայերէն, գիտական ուղղագրութեամբ), նուիրուած Մեծ Եղեռնին եւ որ մօտ ատենէն լոյս պիտի տեսնէ նաեւ ֆրանսերէն թարգմանութեամբ: Երեւանի մէջ տպագրուեցաւ նաեւ Ֆրանսայի մէջ հանրածանօթ Ֆիլիփ Տիւփիւի – Շառլ Փերպէրեանի (երկուքն ալ Անկուլեմ քաղաքի 2008ի մեծ մրցանակին արժանացած) «Փառանձեմ» ալպոմը, հայերէն թարգմանութեամբ (այս անգամ սովետական ուղղագրութեամբ):

Այս բոլոր տեղեկութիւնները մեզի հաղորդուեցան երեկոյթի մը ընթացքին որ տեղի ունեցաւ Ուրբաթ Մարտի 14ին, Փարիզի Բարեգործականի կեդրոնին մէջ: Վարուժան Սրապեան, Վարուժան Կիւրեղեան, ինչպէս Լօրան Մելիքեան կը պատասխանէին Ցաւմիկ Փափազեանի հարցումներուն: Հոն տեղեկացանք որ APBDA-ն ծրագրած է յառաջիկայ Հոկտեմբեր 3էն 8 Երեւանի մէջ կազմակերպել պատկերապատում – B.D.-ին նուիրուած փառատօն-ցուցահանդէս մը: Այս նախաձեռնութիւնը պիտի վայելէ Հայաստանի Մշակոյթի նախարարութեան, Հայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանութեան եւ Անկուլեմի Պատկերապատումի միջազգային ոստանի բարձր հովանաւորութիւնները: Յաջողութիւն կը մաղթենք APBDA-ին այս խիստ ողջունելի ձեռնարկին որ նախատեսուած է կըրկնել ամէն տարի, մէկ նպատակ հետապնդելով՝ պատկերապատումի արուեստը ծանօթացնել եւ տարածել Հայաստանի մէջ:

Հ. Հ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԵՆԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Եւրոպական միութիւնը միութեան յատկանիշը փաստող յաջորդական ձեռնարկներու թատերաբեմ կ՚ըլլայ: Կան արեւելեան երկիրներ որոնք այնքան ալ համոզուած չեն թէ միասնութիւնը ուժ կը ներկայացնէ ու իրենց շահերը պաշտպանելու համար կը հակին ԱՄՆ-ու կողմը: Արդէն միութեան կորիզ երկիրներն ալ անցեալի չափ ամրապէս զօդուած չեն իրարու: Ատոր վերջին փաստն էր Գերմանիոյ ջանքը, խոչընդոտելու համար Ֆրանսայի կողմէ Միջերկրականեան միութեան մը ստեղծումը, ճիշդ Պրիւքսէլի Մարտ 13–14ի վեհաժողովի նախօրեակին: Սակայն հիմնադիր երկու երկիրներուն այս ճակատումը որ գրեթէ աննախադէպ է, շատ բան կ՚ըսէ միասնութեան ոգիին մասին: Ակներեւ է որ ազգային եսասիրութիւնը կը տիրապետէ համայնքային մտահոգութեան:

Անդին Չեխիա, Էստոնիա եւ Լատվիա ուղղակի կը բանակցին ԱՄՆ-ու հետ, վերցնել տալու համար այցագրի պարտաւորութիւնը: Առանձին շարժելու այս ընթացքը արգելք կ՚ըլլայ որ Եւրոպական միութիւնը Ուաշինկթընի հետ բանակցի ընդհանուրին անունով եւ ուստի աւելի զօրաւոր դիրքէ: Եւ ըսել որ անջատ պարագայ մը չէ ատիկա:

Լեհաստան եւ Չեխիա կը զանազանուին հակահրթիռային պաշտպանութիւն հաստատելու հարցին մէջ: Թերեւս հասկնալի է որ խորհրդային լուծին տակ ապրած երկիրներ իրենց ապահովութեան հարցերով դառնան դէպի Ուաշինկթըն: Բայց առանց եւրոպացի իրենց գործակիցներուն եւ ՕԹԱՆ-ի հետ խորհրդակցելու Եւրոպայի մէջ հակահրթիռային պաշտպանութիւն հաստատելու բանակցութիւնները անցեալի ծանր փորձառութեամբ չեն արդարացուիր: Ակներեւ է որ այս երկու անդամ երկիրները շատ ալ հոգ չեն ըներ որ իրենց ընթացքը եւրոպական բոլոր երկիրներուն ապահովութեան համակարգը փոփոխութեան կ՚ենթարկէ եւ արգելք կ՚ըլլայ որ միութիւնը Ռուսաստանի հետ պայմանագրային հիմով յարաբերութիւններ հաստատէ:

Ընդհանուր շահերուն նկատմամբ այս անտարբերութիւնը միութեան կառոյցին վրայ ճեղքեր կը բանայ եւ Ամերիկացիներն ու Ռուսերը զանոնք պիտի լայնցնեն: Արդէն Ուաշինկթըն որ ոչինչ հասկցած է Եւրոպական միութեան բնոյթէն, միայն գիտէ որ շահ չունի անոր հզօրացումէն, միշտ նախընտրած է ուղղակի բանակցիլ եւրոպական երկիրներուն հետ, զանոնք անջատաբար խօսակից առնելով: Իսկ Ռուսաստան որ միշտ կը կիրարկէ տիրելու համար բաժնելու սկզբունքը, մէկ կը փակէ լեհական միսին ներածումի ճամբան, մէկ կը խաղայ կազին կամ քարիւղին ծորակներուն հետ:

Գերմանացի լրագրողը այս կէտերուն անդրադառնալէ ետք կ՚ըսէ թէ Թուղթի վրայ այնքան տպաւորիչ միութեան տկարացումին, խոցելի ըլլալուն եւ բաժանումի հակումներուն պատճառներէն մէկը դէպի արեւելք անոր ընդլայնումն է: Նախկին անդամներ ալ օգնած են տկարացումին. Թոնի Պլէր, օրինակ, Իրաքեան պատերազմին ատեն ամերիկացիներուն կողքին կանգնեցաւ, առանց նախապէս խորհրդակցելու եւրոպացի իր գործընկերներուն հետ: Իսկ գերմանացի Կ. Շրէօտէր կը ձգտէր իր երկրին աւելի ուժանիւթ հայթայթել գերմանեւռուսական կազատարով մը, փոխանակ բաժնելու այդ հարցին մէջ եւրոպական մարտավարութիւնը: Վերջին օրինակը եղաւ Նախագահ Սարքոզիի Միջերկրականեան միութեան ծրագիրը որով կ՚ուզէր Ֆրանսայի վերադարձնել կորսնցուցած վարկը:

ՔԱՂՀԱՆ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԿԵՍԱՐԻԱ, ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ ԵՒ ՄՈՒՍԱ ԼԵՌ

Ինչպէս ամէն տարի Մեծ Պահքի շրջանին, այս տարի ալ տեղի ունեցած է աւանդական ուխտագնացութիւնը դէպի Կեսարիա, Իսկէնտէրուն եւ Մուսա Լեռ: Պատրիարքին ապաքինման շրջանը պատճառ եղած է որ ուխտագնացութեան նախագահէ Թաթուլ ծ. վ. Անուշեան: Խումբը, Մարտ 5ին, ցամաքի ճամբով մեկնած է Կեսարիա, ուր հասած է առաւօտ կանուխ եւ այցելած Ս. Գրիգոր Լուսաւորիչ պատմական եկեղեցին: Այցելութիւն մը տալէ ետք կուսակալին նոյն օրը, յաջորդ օրն ալ, Մարտ 7ին, ներկայ եղած է ուխտի պատարագին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, զոր մատուցանած է Թաթուլ ծ. վարդապետ: Ապա, հոգեւոր հայրերը եւ ուխտաւորները այցելած են քաղաքին Հայոց գերեզմանատունը, ուր կատարուած է հոգեհանգստեան պաշտօն: Խումբը, Մարտ 7ի երեկոյեան հասած է Անտիոք եւ յաջորդ առաւօտուն ալ ուխտաւորներ ներկայ եղած են Իսկէնտէրունի՝ պատմական Աղեքսանդրէթի Ս. Քառասուն մանկանց եկեղեցիին պատարագին: Կատարուած է նաեւ հոգեհանգստեան պաշտօն հանգուցեալ առաջնորդներուն, գաւիթին մէջ հանգչող Գրիգոր ա. քհնյ. Մինասեանի եւ նկատի առնելով որ երանաշնորհ Շնորհք պատրիարքի վախճանման 18րդ, Գարեգին Բ. պատրիարքի 10րդ տարելիցներն էին, հանգստեան աղօթքով յիշուած են նաեւ պատրիարքական Աթոռոյ այդ երկու գահակալները: Ուխտաւորներու խումբը այցելած է քաղաքի գերեզմանատան Հայոց բաժինը:

Թուրքիոյ միակ հայ գիւղին Մուսա Լերան Վաքըֆ գիւղի Ս. Աստուածածին գողտրիկ եկեղեցին, Մարտ 9ին, եղած է ուխտագնացութեան վերջին հաւաքական աղօթատեղին: Ցաւարտ պատարագի կատարուած է նաեւ արեւագալի ժամ: Արարողութենէն ետք, ուխտաւորներու խումբը այցելած է Վաքըֆ գիւղի գերեզմանատունը, ուր կատարուած է հոգեհանգստեան պաշտօն: Այս այցելութենէն ետք սիրոյ սեղան մը տեղի ունեցած է, Կարպիս Քուշի Ամինա հաստատութեան ընդարձակ սրահին մէջ: Ուխտագնացութեան ծրագրի աւարտէն յետոյ Թաթուլ ծ. վարդապետ եւ Վաղարշակ արք. Սերոբեան այցելած են Քըրըքխանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ կիսափուլ վիճակի մէջ է: Ամբողջ տանիքը ինկած էր տարիներ առաջ: Հոն ալ կատարուած է կարճ աղօթասացութիւն մը:

Հուսկ խումբը Պոլիս վերադարձած է:

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

– Որքա՜ն գեղեցիկ է այս ողբերգական դէմքը: Ինչքա՜ն ճիշդ են գտնուած բնաւորութեան գծերը, թէեւ ամէն ինչից երեւում է, որ նկարիչն ամենեւին գաղափար չունի գեղանկարչութեան կանոններից...

– Ես ձեզ խնդրում եմ, Իլյա Էֆիմովիչ, – յուզուած ասաց Այվազովսկին, – ծերունուն հարցուփորձ չանէք այդ նկարի մասին: Դա մի սոսկալի ընտանեկան ողբերգութիւն է: Ես ձեզ յետոյ կը պատմեմ այդ մասին:

– Բայց դու ճիշդ չես, Յովհաննէս, – ասաց Արան այդ րոպէին ներս մտնելով, – մեր հիւրը ռուս նկարիչ է, եւ դու ինքդ ես ինձ պատմել, թէ ինչպիսի կարեկից սիրտ ունի նա: Չէ՞ որ այդ նա է իր ժողովրդի տառապանքները պատկերող մի մեծ կտաւ նկարել, որը կարծեմ «Բուրլակներ» է կոչւում: Տեսնո՞ւմ ես, ես նոյնիսկ յիշում եմ այդ դժուար բառը: Այնպէս որ, նա մեր ժողովրդի տառապանքներն էլ կը հասկանայ:

Ծերունին տեղաւորուեց դիմանկարի առջեւ եւ վշտով լի հայեացք ուղղեց նրան:

– Այս ջահել կինը իմ մեծ եղբօր՝ Մուշեղի դուստրն է: Նրա անունը Սոնա էր: Անմման գեղեցիկ էր Սոնան: Ամենահարուստ տների երիտասարդները երազում էին նրան: Բայց նա սիրեց աղքատ Մարտիրոսին, որն ազնիւ հոգի ունէր, բայց ինչպէս Ռուսներն են ասում՝ տկլոր էր բազէի նման: Փոխարէնը շատ լաւ երգել ու նկարել գիտէր: Սոնայի այս դիմանկարն էլ նա ինքն է նկարել: Եւ ամուսնացան նրանք: Ապրում էին կարիքի մէջ, բայց սիրում էին իրար: Սոնան տղայ ունեցաւ: Դրանից յետոյ նրա գեղեցկութիւնն աւելի փթթեց: Մի անգամ Սոնային տեսնում է մեծահարուստ Սուլէյման բեկը: Դա իր մօտ է կանչում Մարտիրոսին, որպէսզի իբր լաւութիւն անի: Կարգադրում է, որ նրան մի կտոր հող, սերմ ու արօր տան: Մարտիրոսն էլ ուրախանում է եւ սրտանց շնորհակալ լինում բեկից: Եւ այլեւս առանց երկարբարակ մտածելու ստորագրում է այն պարտաւորագիրը, որը նրան դէմ է անում բեկի կատարածուն: Աշունը գալիս է, Մարտիրոսը լաւ բերք է հաւաքում: Նա երազում է ցորենի կէսը ծախել եւ այդ փողով կնոջ եւ որդու համար շորեր առնել: Բայց գալիս է բեկի կատարածուն եւ բռնագրաւում ամբողջ ցորենը, հողամասն օգտագործելու, սերմերի ու տոկոսների դիմաց: Երեք տարի տանջւում է խեղճ Մարտիրոսը, բայց էլի չի կարողանում պրծնել բեկի տոկոսներից: Ծայրը կտրած որոշում է գնալ օտար երկրներ ղարիբութեան, մի քիչ փող վաստակել եւ ազատել ընտանիքն այդ պարտքից:

Անիծուած բեկն էլ դրան էր սպասում: Մարտիրոսի գնալուց մի քանի օր յետոյ գիշերով մտնում է Սոնայի խրճիթը եւ փորձում պատուազրկել նրան: Բայց Սոնան բեկի գօտու միջից խլում է նրա դաշոյնն ու խրում կուրծքը: Յետոյ վերցնում է երեխային ու փախչում հարեւան գիւղը՝ հօր մօտ, այսինքն իմ աւագ եղբօր՝ Մուշեղի մօտ: Չանցած մի ժամ, բեկի մարդիկ հասնում են յետեւից ու մորթում ամբողջ ընտանիքին:

Արցունքները ողողել էին Արայի մօրուքը:

– Խեղճ Մարտիրոսի վրայ շատ թանկ է նստել մի կտոր հողը, – յանկարծ լըսւեց ծերունական դողդոջ մի ձայն:

Այվազովսկին եւ Ռեպինը իրար նայեցին: Շեմի վրայ արդէն եկել, նստել էին գիւղացիները Ծումա – Էլիից: Նրանք անաղմուկ մօտեցել էին դռներին ու ականջ դրել հայ ծերունու պատմութեանը:

Արան սրբեց աչքերը եւ հայրենակիցներին ասաց, որ պատմեն նկարչին իրենց հասած դժբախտութեան մասին: Ծերունիները պատմում էին երկար, հանգամանօրէն, վախենալով բաց թողնել ամենաչնչին մանրամասն իսկ: Նրանց պատմածից Այվազովսկու ու Ռեպինի համար պարզ դարձաւ, թէ ինչպիսի մեծ ողբերգութեան առաջ էր կանգնած գիւղը: Գիւղացիները, անգրագէտ լինելով, ժամանակին չէին վերանորոգել հողի վարձակալման պայմանագիրը: Այժմ ժամկէտն անցել էր, եւ Թէոդոսիացի մի մեծահարուստ որոշել էր օգտուել դրանից: Նա անմիջապէս իր վրայ էր վերցրել վարձավճարը, գիւղացիներից էլ հողն օգտագործելու համար շատ աւելի բարձր գին էր ուզում, քան մինչ այդ նրանք վճարում էին: Այվազովսկին Արային խնդրեց թանաքաման բերել եւ տեղնուտեղը գրեց Սիմֆերոպոլ, բարեկամներից մէկին, որն ազդեցիկ մարդ էր: «Սոյնը ձեզ յանձնող Ծումա – Էլի գիւղի բնակիչները խնդրագրով գալիս են Նահանգապետի մօտ. իրօք շատ դաժան են վարուել նրանց հետ: Նահանգային լրագրեր նրանք չեն կարդում եւ յանկարծ իմանում են, որ հողի վարձակալութիւնը փոխանցուել է ինչ-որ Թէոդոսիացու, որը եւ հաւանաբար որոշել է անխնայ կեղպով խեղդել նրանց, իսկ նրանք 110 տնտեսութիւն են: Փրկեցէք, խնդրում եմ, այդ դժբախտ մարդկանց...»:

(Շար. 194)

(Շար. Ա. էջէն)

Թիւնով ալ Պուշ իր զօրակցութիւնը կը յայտնէ: Պատրաստ է արդէն Ուկրանիոյ եւ Վրաստանի անդամակցութեան զօրավիգ ըլլալու, թէեւ Գերմանիա, Ֆրանսա, Սպանիա, Պելժիա դէմ են:

ՓԵՐՆՕ ՌԻՔԱՐ Շուէտի պետութենէն գնած է Ապսոլութ վոտքան, որ անոր կը պատկանէր 90ական թուականներէն ի վեր: Ապսոլութը 5,6 միլիառ եւրոյի ծախուած է ֆրանսական ընկերութեան, որ դրեթէ համաշխարհային թիւ 1ի կը վերածուի բրիտանական Տիաժէոյի կողքին:

Informations artistiques

LA COMPAGNIE ASTRES MELODIES présente un programme d'opéra, de mélodies et de chants arméniens
Le **Dimanche 6 avril à 16h30**
en la Cathédrale Sainte-Croix; 13 rue du Perche, 75003 Paris.
Direction artistique : **Astrig Dédéyan**, piano : **Anna Shirikyan**.
Réservations : 01.47.50.46.93.

CITE INTERNATIONALE UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens - Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն – Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

"Les mercredis de la MEA"

Les réfugiés arméniens et le droit international pendant l'entre-deux-guerres
Dzovinar KEVONIAN
Maître de Conférences à l'Université Paris X
Directrice-Adjointe du dépt. d'histoire
— Mercredi 9 avril/21h

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches au CNRS
— Mercredi 28 mai/21h

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

L'UCFAF organise deux voyages en Arménie

1 voyage touristique du 26 juillet au 10 août

soit 16 jours / 15 nuits au prix de 1565 euros par personne, max. 30 personnes, base demi-pension et chambre double, incluant un circuit de 6 jours jusqu'au Karabagh (taxes d'aéroport et visa en sus) renseignements : E. Yazidjian au 01 42 87 95 98 (heures de bureau)

1 voyage randonnée du 14 au 25 juillet

soit 12 jours / 11 nuits au prix de 1390 euros par personne, max. 12 personnes, incluant un circuit de 7 jours randonnée en pension complète et 3 jours à Erevan en demi-pension avec excursions et visites quotidiennes (taxes d'aéroport et visa en sus) renseignements : A. Samikyan au 01 48 03 18 78

ԱԶԳ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:
Հեռ. – 01·53·79·80·69
Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Date à retenir

SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à A. Aharonian
le **vendredi 18 avril à 20h30**
à la Maison de la Culture Arménienne de Marseille

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.
Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

Recherche Directeur(trice) de maison de retraite

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur(trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne.
Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arméniennes.
Possibilité de logement de fonction.
Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante :
Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77 rue la Fayette — 75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Ց. ՊԶՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ (Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90-ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝
25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux
Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ESPOIR POUR L'ARMÉNIE

VOYAGE EN ARMENIE ET AU KARABAGH
DU 6 AU 16 JUILLET

Logement en hôtel 3 étoiles en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh
— Lac Sevan, Khor Virab, Guéghard, Garni, etc... —

Prix 1550 euros
Serge Kurkdjian, tél. : 04 91 77 23 44
E-mail : serge@kurkdjian.org
www.espoirpourlarmenie.org

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
ԳԱՐԵԳԻՆ Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
ԿՈՉ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01·43·59·67·03 թիւին:

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— RECITAL DE PIANO
Mickaël EKMEKTCHIAN
Samedi 5 avril à 18 heures
Au Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado — 13008 Marseille
Au programme : Bach — Beethoven — Rachmaninoff...
—— Entrée libre ——

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 3
JEUDI
3 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար· 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·930 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 83e ANNEE — N° 21·930

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ սպանութեան դատին փաստաբաններէն Ֆ· Չէթին Թրքական թերթի մը տուած հարցազրոյցին համաձայն է թէ կարեւոր կապեր կան այդ սպանութեան եւ «Էրկէնէքոն» կազմակերպութեան միջեւ: Այդ կազմակերպութեան մէջ ընդգրկուած են ապահովութեան պաշտօնեաներ որոնք այսօր ալ գործի գլուխ են եւ Հ· Տինքի ոճիրին ամբողջական լուսաբանումը անիծ կ՚ըլլայ նաեւ կազմալուծելու «Էրկէնէքոն»ը: Փաստաբանուհին ամբաստանած է զօրավարներ ալ որոնք Սեւ ծովու շրջանին մէջ ցանտապականութեան վախ մը տարածեցին. իսկ Տրապիզոնի մէջ սպաննուած իտալացի հոգեւորականին ոճիրը լուսաբանելու ոչ մէկ ջանք կը կատարուի: Այդ դատը ամբողջովին անտէր մնացած է:

ՖՐԱՆՍԱՅԻ Ազգային Ժողովի Ապրիլ 1ի նիստը նուիրուած էր Աֆղանիստան զօրք ղրկելու հարցին: Ի վերջոյ օրակարգի նիւթ եղած էր, բայց առանց քուէարկութեան, ինչ որ սպասած էր ընկերվարականները, որ արդիւնքի բանաձեւի մը դիմեն: Ձախին համար, Սարքոզիի լոնտոնեան յայտարարութիւնը 1·000 զինուոր ղրկելու Աֆղանիստան կը նշանակէ պարզապէս որ Ֆրանսա քիչ մը աւելի կ՚ենթարկուի ամերիկեան քաղաքականութեան: Ազգային Ժողովին առջեւ Ֆիյոն ջանաց պաշտպանել Ֆրանսայի դերը, հազար զինուորի տեղ «քանի մը հարիւր» ըսելով եւ ուրանալով որ այս նոր դերը ենթարկում մըն է ՕԹԱՆ–ի ռազմավարութեան: Ֆիկառոյի մէջ, Հ· Վետրին հարցազրոյցով մը (Ապրիլ 2) կ՚ուզէ որ նախ ճշդուի ՕԹԱՆ–ի դերը: Ի դէպ, զինուոր ղրկելու որոշումը Իւ· ԷՄ· Փէ·ի մէջ ալ միաձնական ճակատ չէ կազմած, ընկերվարականներու արդիւնքի բանաձեւին շուրջ վիճաբանումը տեղի կ՚ունենայ Ապրիլ 8 կամ 9–ին, բայց անշուշտ դրական արդիւնք չի կրնար տալ:

ՓԱՐԻԶԻ մէջ, Մարտ 31ին, ցուցահանդէսներու միջազգային գրասենեակը Միլանօն ընտրած է իբրեւ վայր 2015ի համաշխարհային ցուցահանդէսին համար: Թուրքիոյ նախագահը՝ Ա· Կիւլ եւ Իտալիոյ վարչապետը՝ Փրոտի ներկայ եղած են ժողովին, պաշտպանելու համար իրենց քաղաքը, առաջինը Իզմիր, երկրորդը՝ Միլանօ:

ՍԱՐՔՈԶԻ արտաճմլիկ կոչ մը ըրաւ Ապրիլ 1ին ՖԱՐՔ–ի (Գոլոմպիոյ յեղափոխական՝ ուժեր) ղեկավարին, որպէսզի ժամ առաջ ազատ արձակէ Ինկրիտ Պէթանքուրը որ «մահուան վտանգի տակ է»: Ըստ վերջին լուրերուն, Ի· Պէթանքուր լեարդի ծանր հիւանդութենէ մը կը տառապի եւ վերջին շրջանին ալ ոչ կ՚ուտէ, ոչ դեղ կ՚առնէ:

ԺԱՆ ՆՈՒՎԷԼ Ֆրանսացի ճարտարապետը արժանացաւ Փրիցքէր մրցանակին որ կը համապատասխանէ Նոպէլեան մրցանակին: 62 տարեկան, հեղինակն է, Ֆրանսայի մէջ, Լիոնի Օփերայի, Արաբական աշխարհի հիմնարկին, Գարթիէ հիմնարկին: Մրցանակը իրեն կը յանձնուի Ուաշինկթըն Գոնկրէսի գրադարանը, Յունիս 2ին:

ՊՈՒՔՐԷՇԻ մէջ, Ապրիլ 2ին բացուեցաւ ՕԹԱՆ–ի վեհաժողովը, ուր նոյնիսկ «չնախատեսուած» հարցեր կրնան երեւան ելլել, ըստ ՄԱԿ–ի ընդհանուր քարտուղարին: Արդէն, օրակարգի հինգ հարցեր կան, որոնք բաւական կնճռոտ են՝ Աֆղանիստան, զինակցութեան բարեփոխումը, ընդլայնումը, հակահրթիռային պաշտպանութիւնը եւ Ֆրանսայի վերադարձը դէպի Ատլանտեան Ուխտը: Ռուսաստան հիմնովին դէմ է ընդլայնման (Վրաստան եւ Ուկրանիա) եւ կ՚ըսէ նոյնիսկ թէ Ուկրանիոյ անդամակցութեան ընդունման պարագային «խոր տագնապ մը» կը ստեղծուի: Ֆրանսա դէմ կը մնայ Վրաստանի եւ Ուկրանիոյ անդամակցութեան, որու համար նման բան մը չի համապատասխաներ Եւրոպայի ուժերու հաւասարակշռութեան, ոչ ալ Եւրոպայի եւ Ռուսաստանի յարաբերութիւններուն:

ԻՐԱՔԻ մէջ, միայն Մարտ ամսուան ընթացքին 1082 հոգի մեռած է, ինչ որ 50%ի յաւելում մը կը նշանակէ բաղդատմամբ Փետրուարին: Ըստ կառավարութեան տուեալներուն, յաւելումին գլխաւոր պատճառը կը նկատուին Պաղտատի եւ Պասրայի վերջին դէպքերը շիիներու եւ իրաքեան բանակին միջեւ:

ԱԹԷՆՔԻ մէկ հիւանդանոցին մէջ, Մարտ 31ին իր մահկանացուն կնքած է Ժիւլ Տասէն, 96 տարեկանին: Ծանօթ բեմադրիչն էր «Թօփգափի»ի եւ «Ժամէ լը Տիմանշ» ֆիլմերուն: Ամուսնացած էր Մելինա Մերքուրիի հետ, որ շրջան մը Յունաստանի մշակոյթի նախարարուհի եղած է: Համայնավարի իր համոզումները պատճառ եղած էին, որ Ժիւլ Տասէն ստիպուի մեկնիլ Հոլիվուտէն 1947–ին եւ Փարիզ ապաստան գտնել:

ՊՈԼՍՈՅ մէջ, Ապրիլ 1ին շուրջ 40 իսլամապաշտներ ձերբակալուած են: Կասկած կայ որ ոճրափորձեր կը պատրաստէին Թուրքիոյ մէջ:

ԹՐՔԱԿԱՆ զօրաբաժիններու եւ ՓՔՔ–ի զինեալներուն բախումները կը շարունակուին Թուրքիոյ հարաւ–արեւելեան շրջանին մէջ: Մարտի վերջին օրերուն սպայակոյտի նախագահութեան ենթակայ ջոկատներու եւ Քիւրտերու բախումներուն երեք թուրք զինուորական մահացած են, տասը զինուոր ալ վիրաւորուած է. Թրքական աղբիւրներ կը պնդեն որ իրենք ալ տասը քիւրտ զինեալ սպաննած են:

ԻՐԱՆԻ իշխանութիւնները կը շարունակեն պայքարիլ մեթիաներու դէմ եւ երեսփոխանական ընտրութեան վաղորդայնին մամուլի ինը թերթեր փակուած են: Ընդհանրապէս, մշակութային կամ գրասանքներու նուիրուած հրատարակութիւններ էին, առանց քաղաքական որեւէ բնոյթի: Իշխանութիւններու մեղադրանքն այն է որ «նախապաշարումներ» տարածած են: Բարեփոխման վերջին օրաթերթերէն մէկը՝ «Էթիմատ–է մելլի»» խորագրած է այս պատճառով՝ «Աշունը գարնան առեն» եւ ինք ալ մտահոգ է արդէն:

ԲԱՔՈՒ ԴԺԳՈՀ Է ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԷՆ

Ազրպէյճանի Ազգային Ժողովը Մինսկի խումբի նախագահ երկիրներուն Բաքուի դեսպանատուներուն յանձնած է յայտարարութիւն մը. ան կը վերաբերի «Ազրպէյճանի գրաւուած տարածքներուն կացութեան» եւ առարկութիւններ կը ներկայացնէ նոյն երկիրներուն էնցուածքին: Յայտարարութիւնը առաջարկած է «Նոր Ազրպէյճան» կուսակցութիւնը, ստորագրած են տասնեակ մը քաղաքական կազմակերպութիւններ: Բոլորը դժգոհութիւն կը յայտնեն երբեակին «հայամէտ» դիրքէն, կը շեշտեն թէ մինչ Ֆրանսա, ԱՄՆ, Ռուսաստան պարտին չէզոք կեցուածք ունենալ, որոշ պարագաներու մինչեւ իսկ «Հայաստանի յարձակողական նպատակները քօղարկող» յայտարարութիւններ կը կատարեն. կը հրաւիրեն երեք նախագահները եւ Մինսկի խումբը միջնորդական առաքելութեան յարգել, միջազգային իրաւունքի եւ սկզբունքներուն յարգանքով գործունէութիւն տանելու:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՕԹԱՆ–Ի ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

Վարչապետ եւ նորընտիր նախագահ Ս· Սարգսեան պատուիրակութեան մը ընկերակցութեամբ Ապրիլ 3ին Պուքրէշ կը մեկնի, մասնակցելու ՕԹԱՆ–ի վեհաժողովին: Պատուիրակութեան մաս կը կազմէ արտաքին գործերու նախարար Վ· Օսկանեան եւս: Կը նախատեսուի Մինսկի խումբի նախագահներուն հետ հանդիպում մըն ալ:

* * *

ՊԱՇՏՕՆԱԶՐԿՈՒՄ

Ըստ նախագահի մամուլի գրասենեակէն տրուած տեղեկութեան, Ռ· Քոչարեան Ապրիլ 2ի հրամանագրով մը վերջ տուած է զօր· Մանուէլ Գրիգորեանի պաշտպանութեան նախարարի տեղակալի պաշտօնին:

* * *

ՀԱՑԱԴՈՒԼԻ ԴԻՄՈՂՆԵՐ

Մարտ 1ի երեւանեան խռովութիւններուն առընչութեամբ բանտարկուածներէն շուրջ տասնեակ մը հոգի տեղեկացուցած են թէ հացադուլի կը դիմեն: Անոնք կը գտնուին «Երեւան կեդրոն», «Վարդաշէն», «Նուպարաշէն» կալանավայրերուն մէջ: Իրենցմէ խմբակ մը Ապրիլ 1ին դիմումնագիրով պահանջած է որ վերջ տրուի իրենց դէմ ձեռնարկուած քրէական հետապնդումին. ուրիշ խմբակ մը պնդած է թէ իրենք զիրենք քաղաքական բանտարկեալ կը նկատեն:

* * *

Վրաստանի մէջ ալ երեք շաբաթէ ի վեր ձերբակալուած է Լ· Տէր Պետրոսեանի համախոհ երեսփոխան Խաչատուր Սուքիասեանի եղբայրը: Ան ապօրինի կերպով անցած է Հայաստան – Վրաստան սահմանը, փորձելով երրորդ երկիր մը անցնիլ: Թիֆլիսի օդակայանին մէջ սահմանապահ ոստիկանները անդրադարձած են որ իր անցագրին մէջ չկայ երկիր մուտքի կնիք, ուստի սահմանը ապօրինի կերպով անցնելու կասկածով ձերբակալած են զինք:

ՊԷՅՐՈՒԹ

ԳՐ· ԱՐԱՊԱՂԵԱՆ ՕԴԱԿԱՅԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՊԵՏ

Լիբանանի բանակի դերգնդապետ Գրիգոր Արապաղեան Պէյրութի միջազգային օդակայանին ընդհանուր ապահովութեան բաժնին պետ նշանակուած է: Ան պաշտօնը ստանձնած է Մարտ 31ին, յաջորդելով հանգստեան կոչուած հազարապետ Թ· Ուաքիմի:

ԻՍՐԱՅԷԼ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹՈՎ ԲՈՒՌՆ ԲԱՆԱՎԷՃ

Ապրիլ 1ին Իսրայէլի խորհրդարանի գործերը համակարգող խումբի նիստին օրակարգի վրայ եղած է Հայկական Ցեղասպանութեան ճանաչման հարցով զբաղելիք յանձնախումբը որոշելու կէտը: Հայ–իսրայէլեան բարեկամութեան խորհրդարանական խումբի նախագահ երեսփոխան Զ· Էլկին (Քատիմա) առաջարկած է որ այդ յանձնախումբը ըլլայ կրթութեան եւ մշակոյթինը, իսկ Ե· Շակալ (Մեր տունը Իսրայէլն է) պնդած է արտաքին գործերու եւ պաշտպանութեան յանձնախումբին վրայ:

Երկու երեսփոխանները բուռն բանավէճ մը ունեցած են, վարկաբեկող արտայայտութիւններով: Էլկին և Շակալ նիստէն ետք հարցազրոյցի մը ընթացքին պարզած են իրենց տեսակէտը: Շակալ ճանաչումը քաղաքական հարց նկատած է, պնդելով որ միայն քննարկումը անգամ խնդրական վնաս կը պատճառէ Իսրայէլի: Աւելցուցած է թէ հարցը քննելու լուրն իսկ ազրպէյճանական եւ թրքական, նոյնիսկ ուզբեկական լրասփիւռները ողողած են այդ մասին հրապարակումներով:

Քաղաքական դէտեր այս մօտեցումը կը բացատրեն Ազրպէյճանի շուրջ 20 հազարնոց հրեայ համայնքին առընչուած մտահոգութիւններով. այդ համայնքը լաւ յարաբերութիւններ ունի թէ՛ իշխանութեան, թէ՛ ժողովուրդին հետ: Երկրին մէջ հակահրէութիւն ըսուած բան գոյութիւն չունի: Բայց դժուար չէ նախատեսել որ ինչ կը պատահի Ցեղասպանութեան ճանաչումի որոշումէ մը ետք: Դէմ արտայայտուողները չեն ուզեր վրդովել այդ համայնքը:

Այդ պատճառով է որ ճանաչման կողմնակից երեսփոխանները առաջարկած են որ հարցը քննութեան առնուի մշակութաբանական և պատմական առումով:

Ապրիլ 1ի նիստին ի վերջոյ որոշուած է հարցը փոխանցել արտաքին յարաբերութիւններու եւ ապահովութեան յանձնաժողովին քննարկումին:

ԹՈՒՐՔԻԱ ԼՈՊԻՆԵՐՈՒ ՊԷՏՔ ՈՒՆԻ

Թրքական աղբիւրներ կը հաղորդեն թէ վերջ տրուած է լոպիական Լիվինկսթըն ընկերութեան հետ համաձայնութեան եւ նախընտրուած է «ՏԼԱ Փիփըր»ը: Առաջինը ութ տարիէ ի վեր կ՚աշխատէր ԱՄՆ–ու Գոնկրէսին մէջ արգելք ըլլալու, չէզոքացնելու հայկական դիմումները, բանաձեւերը եւ վարկ ապահովելու Թուրքիոյ:

Նոյն աղբիւրները կ՚ըսեն թէ Թուրքիա լոպիական այդ գործունէութեան պէտք ունի եւ տարեկան 1–2 միլիոն տոլարի միջեւ գումար կը վճարէ անոնց:

«ՏԼԱ Փիփըր»ի նախագահը Տ· Արմէյ յայտարարած է թէ ԱՄՆ–ը, Գոնկրէսը պարտին աւելի լաւ ըմբռնել Թուրքիոյ ռազմավարական կարեւորութիւնը, աւելցնելով. «ան մեր գնահատածէն շատ աւելի մասնակցութիւն ունեցած է աշխարհի լաւութեան»:

ՀԻՒՍԻՍԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ՝ ՀԱՄԱՐԱԿԱՑ ԱՆՑԵԱԼԷՆ ԵԶԱԿԻ ՆԵՐԿԱՅ

(Բ. եւ վերջին մաս)

ՅԱԿՈԲ ԿԻՒԼԼԻՒՃԵԱՆ
U.C.L.A.

Իւթրեխթի Համալսարանէն (Հոլանտա) Սեդա Ալթուկ կեդրոնացաւ Թուրք-սուրիական սահմանին, այդ սահմանի փորձընկալումին եւ ատոր ազդեցութեան վրայ՝ համայնական ինքնութիւններու կերտման գործընթացին կապակցութեամբ, բաղդատական հայեցքի տակ առնելով Քեսապը եւ սահմանի միւս ծայրամասին գտնուող սուրիական Ճեզիրէի Հայերը: Զեկուցաբերը քննարկեց յատկապէս 1915ի եւ 1936էն 1940 թուականներու յիշատակներու դերը Քեսապի Հայերու համայնական ինքնութեան կառուցումին մէջ, դիտարկելով զանոնք սահմանամերձ տեղական պատումներու ընդմէջէն: Ասոնց համաձայն, սահմանը յատուկ եզականութիւն մը ունի թէ՛ որպէս շօշափելի իրականութիւն եւ թէ՛ որպէս փոխաբերութիւն մը որ իր մէջ կը ներփակէ կորուստ ու փորձընկալուած բռնութիւնը: Ալթուկ պնդեց թէ առկայ է գլխաւոր յղակէտը որ տեղւոյն Հայերու գոյութեան իմաստը կը զետեղէ թրքական ինքնութեան դէմ–յանդիմութեան առընչութեան ծիրին մէջ:

Հալէպէն Յակոբ Չոլաքեան երկրորդ եւ փայլուն զեկուցում մը տուաւ Քեսապի մասին՝ «իբրեւ սփիւռքահայ գաղութ», բնորոշում մը որ անշուշտ վիճելի է, թէ՛ «սփիւռքահայ» եւ թէ՛ «գաղութ» անուանումներով: Չոլաքեան նկարագրեց թէ ինչպէս 1919-1921 նախկին 7000 քեսապցիներէն շուրջ 2000ը վերադարձած էին տուն, հիմնելու համար Քեսապի Ազգային միութիւն մը, որուն իրաւասութիւնները յետոյ պիտի ստանձնուէին Ֆրանսական իշխանութիւններու կողմէ: Համայնքի չորս յարանուանութիւններր կարեւոր ցնցումներու պիտի ենթարկուէին. 1930-40–ականներու ազգայնական շարժումին հետեւանքով աւետարանականներու մէկ կարեւոր մասը զանգուածային կերպով պիտի վերադառնար մայր եկեղեցի, իսկ լատին համայնքը պիտի լուծուէր հայ կաթողիկէներու մէջ: Կարեւոր էր այն մատնանշումը, որ թէեւ Քեսապ 1939ին ազատած էր Թուրքիոյ կցուելէ, այնուհանդերձ գիւղերու կալուածներն ու արօտավայրերը մնացած էին սահմանին միւս կողմը, ինչ որ հետեւողական դժուարութիւններ պիտի պատճառէր տնտեսական գետնի վրայ, նախ շարժառիթ դառնալով արտագաղթի, եւ յետոյ բնակչութեան կէսը մղելով դէպի Հայաստան՝ 1947ին: Արտագաղթը պիտի շարունակուէր մինչեւ եօթանասունականները, երբ հետզհետէ զբօսաշրջային ճարտարարուեստ մը պիտի յառաջանար Քեսապի մէջ: Ներկայիս Քեսապ ամարանոցային քաղաք է, երբ բնակչութիւնը (ամարանոցներու Հայ եւ ոչ-Հայ տէրեր եւ այլ այցելուներ) կը տարուբերի հարիւր հազարէն կէս միլիոնի միջեւ: Ձմրան բնակիչները Հայեր են միայն:

Կէսօրուան դադարի ընթացքին Մուսա Լեռ ընկերակցութենէն Յակոբ Փանոսեան (Նորթրիճ համալսարան) եւ Քեսապի Կրթասիրացէն Հրայր Աթիկեան հակիրճ բացատրութիւններ տուին Մուսատաղի եւ Քեսապի բարբառներուն մասին, շատ հաճելի ընթերցումներ կատարելով անոնցմէ: Նշեցին թէ կան երեք ենթաբարբառներ՝ գրեթէ նոյն բառապաշարով, սակայն տարբեր առոգանութեամբ, Խտըրպէկ-Եօղուն Օլուգ-Վագըֆ, Պիթիաս-Հաճը Հապիպլի, եւ Գապուսիէ, իսկ Քեսապի բարբառը ընդհանրապէս նման է մուսատաղեանին:

Յետմիջօրէին երկու նիստեր եւս կայացան, որոնցմէ առաջինին սկիզբը Սոնա Զէյթլեան զեկուցեց Մուսա Տաղի բանահիւսութեան մասին: Ան պատմեց թէ ինչպէս 1960ականներուն սկսած էր Մուսա Տաղի բանաւոր աւանդութիւնները արձանագրել Լիբանանի Այնճար գիւղին մէջ, ուր հաստատուած էին Սանճագէն եկած վեց գիւղերու բնակիչները: Բանահաւաքի արդիւնքըն են շուրջ 300 զրոյցներ, որոնցմէ արեւմտահայերէնի վերածուած են հարիւր հատ:

ԵՈՒ.ՍԻ.ԷԼ.ԷՅ.–ի հայագիտական ուսմանց թեկնածու Արա Սողոմոնեան սահիկներով տպաւորիչ ներկայացում մը կատարեց Ֆրանց Վէրֆէլի հռչակաւոր վէպին հոլիվուտեան նկարահանման ոդիսականին մասին, որ մօտ օրէն «դարաւոր» պիտակին արժանի պիտի ըլլայ: Ուսումնասիրութիւնը հիմնըւած էր գլխաւորաբար պետական վաւերաթուղթերէ քաղուած տեղեկութիւններու վրայ: Սողոմոնեան սկսաւ 1934ին Մեթրօ-Կոլտուին Մէյըրի կողմէ վէպի նկարահանման իրաւունքներու գնումէն, որ ընկերութեան կողմէ տնտեսապէս շատ խոստմնալից ունեցուածք մը որակուած էր ատենին: Ատոր ճակատագիրը սակայն, ի վերջոյ, կանուխ բնորդ մը պիտի հանդիսանար արտաքին գործերու նախարարութեան եւ Հոլիվուտի միջեւ շարժանկարի գրաքննութեան եւ ինքնագրաքննութեան, միաժամանակ լոյս սփռելով Թուրքիոյ կողմէ միջազգային ճնշումներու ներկայ քաղաքականութիւնը յառաջ մղող մարտավարութիւններուն վրայ: Վերոյիշեալ ժամանակաշրջանին Թուրքիա կրցած էր յաջողիլ ժապաւէնին արգելք հանդիսանալու իր նպատակին մէջ՝ գլխաւորաբար դիմելով եւրոպական շուկաներու (յատկապէս Ֆրանսայի) մէջ ՄԿՄ-ի եւ ընդհանրապէս հոլիվուտեան ժապաւէններու դէմ պօյքոթ պարտադրելու սպառնալիքին: Կարելի չէ այստեղ խուսափիլ մտածելէ այն մասին, թէ ֆրանսական պետութեան բախտորոշ միջամտութիւնը շատ բան որոշեց Հայոց արդի պատմութեան մէջ, եւ այդ՝ տարբեր ճակատներու վրայ. քեմալականութեան հետ ֆրանսականներու համաձայնութենէն մինչեւ քառասնական թուականներու Սանճագը եւ Հայոց Աղէտին միջազգային հանրային կարծիքի յիշողութենէն շոգիացման յաջող ջանքերը:

Տէյվիսի մէջ Գալիֆորնիոյ համալսարանէն Քիթ Ուոթընփօ վերլուծում մը կատարեց Աղեքսանդրէթի 1937-1940ի տագնապին մէջ Հայոց դերակատարութեան մասին, հիմնուելով Ազգերու Լիկայի եւ Ֆրանսական խնամատարութեան արխիւային նիւթերու, ինչպէս նաեւ բանաւոր եւ լրագրական աղբիւրներէ քաղուած փաստերու վրայ: Ազգային ինքնորոշման ուիլսընեան հայեցակարգի Սանճագի մէջ խեղաթիւրեալ կիրարկումը քննադատելով, զեկուցաբերը շեշտեց թէ այդ առթիւ Հայոց քաղաքական կողմնորոշումներն ու Ֆրանսացիներու, Ազգային Լիկային, ալեւիներու եւ արաբ ազգայնականներու դիրքորոշումները ոչ միայն պիտի ազդէին Հայոց ճակատագրին, այլեւ Սուրիոյ արաբ ազգայնական շարժումի ապագայ զարգացումին եւ Ազգերու Լիկայի օրինաւորութեան ընկալման վրայ: Պատմուածը նոյնպէս հարցականի տակ պիտի դնէր միջազգային համայնքի կողմէ հանրաքուէային միջոցառումներու գործածութիւնն ու չահագործումը՝ այսպէս կոչուած ցեղային «փափուկ» մաքրագործումներ իրագործելու համար:

Հանդիպումի վերջին նիստին Սթէֆըրտի համալսարանէն Հրանտ Խաչատուրեան բաղդատական վերլուծում մը փորձեց Պէքաայի դաշտի (Լիբանան) մուսատաղցիներու Այնճար եւ անոր կից գտնուող արաբական Մաժտ էլ–Այնճար գիւղերուն միջեւ: Զեկուցման տուեալները կու գային խօսողին կողմէ 1963–1966 յիշեալ երկու համայնքներուն մէջ կատարուած ազգագրական եւ հոգեբուժական հարցախոյզներէ, որոնց նպատակը եղած էր այդ տուեալներու ընդմէջէն հետազօտել մշակոյթի, անձնականութեան եւ հոգէախտաբանութեան միջեւ եղած առնչութիւնները: Խաչատուրեան նշեց թէ հակառակ այն իրողութեան որ այնճարցիները երկուքուկէս տասնամեակ միայն գտնուած էին այդ հողերուն վրայ, զանոնք կրցած էին վերածել կոկիկ բնակավայրի՝ երեք եկեղեցիներով, մանկապարտէզէն մինչեւ երկրորդական վարժարան տարածուող կրթական ցանցով, եւ աւելի քան երկվեցեակ մը ընկերային կազմակերպութիւններով: Արաբական գիւղը, իր կարգին, դարէ մը աւելի երկարող իր գոյութեան ընթացքին շատ բան չէր փոխած իր գոյութեան մէջ եւ ունէր միայն նախակրթարան մը եւ փոքր մզկիթ մը: Խաչատուրեան իրենց միջավայրին յարմարելու այնճարցիներու յաջողութիւնը վերագրեց թէ՛ արտաքին ազդակներու, եւ թէ մշակութային եւ հոգեբանական յատկանիշներու, իր եզրակացութիւնները ընդհանրացնելով ընդգրկելու համար նաեւ սփիւռքեան համայնքներու կողմէ աշխարհագրական եւ մշակութային այլազան պայմաններու մէջ յառաջդիմելու կարողութիւնը: Զեկուցման հետաքրքրական կէտը սակայն, հարցախոյզի մասնակիցներու անհատական գիծերու եւ վկայութիւններու ընդմէջէն փնտռտուքըն էր այն հոգեբանական գինին, որ ենթակաները վճարելու ստիպուէր էին, կարելի դարձնելու համար նոր միջավայրի յաջող համարկումը:

Իր երկրորդ ներկայացումով գիտաժողովի վերջին զեկուցաբերը եղաւ Վահրամ Շէմմասեան, որ մանրամասն կերպով կեդրոնացաւ Թուրքիոյ մէջ մնացած միակ հայկական գիւղին՝ Մուսա Լերան Վագըֆի (Սամանտաղ) կեանքին, Սանճագի պարպումէն ետք մինչեւ այսօր: Գրաւման յաջորդող տարիներուն Թուրքիա քաղաքացիութիւն շնորհած է տեղւոյն բնակիչներուն, անոնց մականունները թրքացնելով: Հայկական վարժարանը փակուած, եւ անոր տեղ պետական դպրոց մը բացուած է, իսկ գիւղի տիրոյթներու մեծ մասը բռնագրաւուած Վագըֆներու վարչութեան կողմէ: Այս պատճառով, բնակիչներէն շատերը աշխատանք որոնելու համար մեկնած են մօտակայ քաղաքներ, Պոլիս, Եւրոպա կամ Ամերիկա: Վագըֆի Սուրբ Աստուածածին եկեղեցին շարունակած է գործել սեփական քահանայով մինչեւ 2002, որմէ ետք գիւղին ներկայ 150 բնակիչները (ամրան՝ 300), պէտք է սպասեն այցելու կղերականի մը: Վերջերս Պոլսոյ մէջ կազմուած է Վագըֆի հայրենակցական միութիւն մը, որ կը փորձէ հայրենական գիւղի արիւնահոսութիւնը դադրեցնել տեղւոյն տնտեսութիւնը քաջալերող ծրագիրներու սատարելով: Այսպէս, վերջին տարիներուն կարգ մը լքեալ քարաշէն տուներ վերանորոգուած են, վերածուելով զբօսաշրջային փոքր պանդոկներու, իսկ միւս կողմէ Վագըֆ ձեռնարկած է այսպէս կոչուած օրկանական պտուղներու մշակումին, զանոնք բարձր գիներով արտածելու համար Եւրոմիութիւն:

Գիտաժողովի նկարագրականը կիսատ պիտի մնար եթէ չյիշուէր Տէյվիսէն (Գալիֆորնիա) Ռիչըրտ եւ Անն Էլիզապէթ Էլպրեխթ ամոլը, որ անգամ մը եւս յանձն առած էր քարտէսներու եւ լուսանկարչական ցուցահանդէս մը կազմակերպել գիտաժողովի մուտքին, ինչ որ մասնակիցներուն առիթ մը տուաւ աւելի շօշափելի տպաւորութիւն մը կրելու խօսուած վայրերու եւ դէպքերու մասին:

ՓՈՒՇԱՆ ՏՈՄՍԻ

ԹԱՏՐՈՆԻ ՀԱՅԵՐԷՆ, ՄԱՄՈՒԼԻ ՀԱՅԵՐԷՆ, ՔԱՐՈԶԻ ՀԱՅԵՐԷՆ... ԻՆՉՈ՞Ւ ՈՉ՝ ՀԱՅԵՐԷ՛Ն

Կիրակի էր: Հայ եկեղեցիի կամարներուն տակ հնչած էր աստուածային գրաբարով աղօթք, անհաւատն անգամ հրաւիրելով հաղորդուելու ե՛ւ անդենականով ե՛ւ հայերէնի խորհուրդով: Եթէ կեդրոնականցի Արմենակ բացակայ ըլլար, թարմացած եւ հզօրացած տուն պիտի դառնայինք՝ լիցած: Կրնայինք նոյնիսկ չճաշել:

Բայց անզգալի Արմենակ վէճի բռնուած էր Հայաստանէն արտածուած քահանայի մը հետ, որ նոր հայերէնի մշակման յառաջամարտիկ էր, ժամանակակից ալքիմիստ մը, որ կը խառնէր երեւանեան բարբառը, Գեաւառի հայերէնը եւ Սփիւռքի մէջ ինչ որ կը լսէր որպէս արեւմտահայերէնի մանրուք: Ի վերուստ ստացուած իրաւունքով, ան չէր ուզեր լսել անգամ Արմենակի քաղաքավար նկատողութիւնը, որ հարկ էր յարգել զոյգ գրական աշխարհաբարները, եւ ժողովրդական ըլլալու համար չխառնել զանոնք... Ան, միշտ ի վերուստ ստացուած իրաւունքով, Արմենակին երեսն ի

վար ըսաւ. «Ձեւ հանիր, մի լսեր...»։ Կնոջը դարձուց ու գնաց։

Արմենակը տարի եկեղեցիին դիմացի սրճարանը, ուր բաժակ մը սուրճի շուրջ Ֆրանսացիները կը յաջողին լուծել իրենց հարցերը։ Եկան բաժակները, բայց ան զայրացածի լռութիւն կը պահէր։

— Սիրելիս, ես կը կարծէի որ զարմանալու ունակութիւնդ բթացած էր։ Ի՞նչ մեղք ունի քահանան։ Դուն գիտես որ հայ բեմադիրներ եւ դերասաններ երկեր կը թարգմանեն եւ կը բեմադրեն, հայերէնը եաթաղանով կը մորթեն, նոր լեզու կը ստեղծեն, եւ այդ կը կոչեն Թատրոնի լեզու։ Օտար հեղինակը միթէ ձեւազեղծուած լեզուով կը գրէ՞։

— Ուրեմն պիտի ընդունինք, որ եթէ կայ Թատրոնի լեզու, կայ նաեւ տէրտէրի լեզու։

— Նորութի՞ւն է։ Դուն կը խօսիս հայկական լրատուամիջոցներու տեսակ մը հայերէնի մասին։ Քու ջաղացքիդ ջուր բերելու համար նիւթեր հաւաքած էի։

Արմենակ ապշած կը լսէր։ Կը սպասէր։ Գրպանէս թղթիկ մը հանեցի.

— Վերտառութիւն մը. «Թիպէտցի ակտիվիստները», կարծես ըմբոստը չէր բաւեր։ Ուրիշ մը. «Հանրապետութեան տուեալներուն համաձայն», ինչո՞ւ չեն ըսեր՝ ըստ տուեալներուն։ Կամ. «Հաւատարիմ մնալով զինադադարի դրութեան», ի՞նչ դրութիւն, չի՞ բաւեր ըսել՝ յարգելով զինադադարը... Քաղաքական վերլուծում մը կ՚ըսէր թէ «նախնական վիճակը չի վերականգնիր»։ Ի՞նչ է, ծառերուն վրայ բնակութի՞ւն պիտի հաստատեն, այդքա՞ն դժուար է ըսել նախկին վիճակը չի վերականգնիր։

— Շարունակէ՛, այս ըսելով ի՞նչ բան կ՚ուզես հասկցնել։

— Զաւարտեցի։ Ակադեմիկոսներ ալ կան որոնք բառ կը թխեն, ինչպէս այս «արձագանգում»ը, արձագանգը չէ՞ր բաւեր։ Ուրիշ մը, արդիական ըլլալու համար կ՚ըսէ՝ «Թայմինկը յարգուեցաւ», ինչպէս հեռատեսիլէն փախած էին որ խօսակիցները «Թայմ աութ աուին»...։ Իսկ ի՞նչ պիտի ընենք սա «յաճախ» մակբային հետ։ Ձի՞ բաւեր ըսել որ Սագօն կամ Գօգօն յաճախ կը հեռաձայնեն, կամ ըսել որ յաճախակի են իրենց այցելութիւնները, եւ կը գրեն «յաճախակիօրէն»։ Իսկ գլուխ գործոց է այն որ «նախագահական պաշտօնը դատարկ է»...։ Խօսքը լիբանանեան «գէժէլ» սկսած եւ չաւարտող երգի նմանող նախագահական ընտրութեան մասին է։ Ճիշդ է որ երբեմն նախագահական կամ այլ պաշտօններ դատարկ են, քանի որ հոն նստեցուած կ՚ըլլան սոխի գլուխներ, բայց այս պարագային այդ պաշտօնը անտէր է կամ նախագահական աթոռը թափուր է։

Արմենակ ոտքի ելաւ եւ ըսաւ.

— Թայմինկը յարգենք, տիկինները հիմա մեզ կը փնտռեն։ Ուրեմն պիտի վարժուինք փողկապաւորներու եւ սքեմաւորներու նախնական հայերէնին... եւ ծառ ելլենք։

ՄԱԿԱՐ

ի Գաղիա, յամի Տեառն 2008
յաւուրն Քրիստոսի Հրաշափառ
Յարութեան եւ
ի նորոգ թաղման Մեսրոպի

ԲՐԻՏԱՆԱՑԻՆԵՐԸ ԽՍՏՈՒԹԵԱՄԲ ԴԱՏԱԾ ԵՆ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Ֆրանսայի նախագահին Լոնտոն այցը բաւական սուր նկատողութիւններու պատճառ եղած է բրիտանական մամուլին մէջ։ Վերապահութեան, հրջահայեացութեան, նրբավարութեան կանոններու արհամարհանքը այդ նկատողութիւններու հիմնական տարրերը կը կազմեն։ «Ինտիփէնտընթ»ի նման լուրջ օրկան մը անգամ ետ չէ մնացած կարգ մը կէտերու նշումէն։ Թերթին մէկ քրոնիկագիրը՝ Ճ. Ուայզ աներեւակայելի կը գտնէ պետութեան ղեկավարի մը յուշել թէ ի՛նչ կեցուածք պարտի ունենալ. բայց, կ՚ըսէ, Սարքոզի գոռոզութեան այնպիսի օրինակներ կու տայ որ իր խորհրդականները յորդորած են վէջ տալ այդ ընթացքին եւ ունենալ պետական իսկական ղեկավարի կեցուածք։ Ըսած են որ հանէ արեւի ակնոցները, յատկապէս Թագուհին ողջունելու պահուն, որպէսզի ան մութ գոյն ապակիներուն վրայ չտեսնէ իր կախ դէմքին ցոլացումը։ Յետոյ կ՚ենթադրէ Ն. Սարքոզիի տրուած խրատները.

— Պէտք չէ համբուրել Թագուհին. մանաւանդ բերնէն։ Եւ եթէ ան ստիպուի առիթ չտալ, պէտք չէ հակադարձել, ըսելով. «Կորսուէ՛ տխմար», ինչպէս եղաւ այն մէկուն պարագային որ մերժեց նախագահին ձեռքը թօթուել։

— Պէտք է ուշադիր ըլլալ հագուստ-կապուստի։ Հարկաւոր է ձեռք մը հագուստ հագուած ներկայանալ, եւ ոչ թէ հեծանիւ քշելու, կամ վազքի մարզազգեստով, կամ լողազգեստով։ Մարդիկ չեն մոռցած որ տիկին Սարքոզի վերջերս իր լուսանկարներով տեղ գտած էր թերթերու մէջ, միմիայն կաշիէ մոյկերով ու մատին մատանիով մը։ Պետական այցի մը պատշաճ ըրդգեստաւորումը չէ ատիկա։

— Նախագահ Սարքոզի պէտք չէ Թագուհիին ներկայութեան ձեռային կատակներ ընէ կնոջը, կամ ուրիշներու հետ, վազվզէ սաղին անդին, կամ ցատքէ աւազանին մէջ։

— Շատ լաւ չի դիտուիր երբ պետութեան ղեկավարներ եւ իրենց կիները պետական այցերու ընթացքին երաժշտութիւն ունկնդրեն։ Տիկին Սարքոզի պէտք չէ իր երգերը մըլտայ, կամ կիթառ նուագէ Թագուհիին ներկայութեան։ Մանաւանդ հրաւիրէ Թագուհին իրենց ձայնակցելու։

— Բոլոր խօսակցութիւններուն պէտք է Թագուհին նախաձեռնէ։ Հիւր նախագահը պարտի վարանոտ անգլերէնով պատասխանելու հարցումներու։ Պէտք է սպասէ որ հարց տան իրեն թէ երկար ճամբորդութիւն մը ըրա՞ւ։ Պէտք չէ դժգոհի որ Կալէճցիները գողցան ուրկիլի իր յաղթանակը...

ՔԱՂՀԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Հ·Օ·Մ·-Ի «ՋԱՒԱԽՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Հ·Օ·Մ·-ի արեւմտեան Ամերիկայի Շրջ· վարչութեան «Ջաւախք» հիմնադրամի յանձնախումբին կազմակերպութեամբ, Մարտ 9ին, «Քրիսթալ» նաւուն վրայ տեղի ունեցած է հանգանակութեան ձեռնարկ մը, ի նպաստ Ջաւախքի հայութեան մարդասիրական, առողջապահական, ընկերային եւ երիտասարդական ծրագիրներուն։ Ներկայ եղած են 200 հոգի։ Խօսք առնողներ ներկայացուցած են Ջաւախքի հայութեան ցարդ կատարուած օժանդակութիւնները եւ կոչ ուղղած շարունակելու զօրավիգ ըլլալ Հ·Օ·Մ·-ի այդ ուղղութեամբ մշակած ծրագիրներուն։ Ցուցադրուած է Ախալցխայի եւ Ախալքալաքի երիտասարդական կեդրոններու բացման արարողութիւններու տեսերիզը։ Տոքթ· Ալինա Դուրեան, որ 1994էն ի վեր ծառայած է Արցախի մէջ եւ անցեալ տարի այցելած է նաեւ Ջաւախքի հիւանդանոցները, խօսք առնելով շեշտած է անհրաժեշտութիւնը դեղորայք հասցնելու։ Ներկաներու նուիրատուութեամբ ձեռնարկէն գոյացած է շուրջ 60 հազար տոլար։

«ՕԳՆԵՆՔ ՋԱՒԱԽՔԻՆ» ՁԵՌՆԱՐԿԸ

Սան Ֆրանսիսքոյի «Խաչատուրեան» կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, Փետր· 15ին, տեղի ունեցած է «Գուլպեան - Զաքարեան - Վասպուրական» ազգային վարժարանի կազմակերպութեամբ «Օգնենք Ջաւախքին» ձեռնարկը։ Բացումը կատարած է ուսուցչուհի Կարինէ Փանոսեան։ Բանախօսած է Յովհան Թաշճեան, որ ցուցադրելէ ետք Ջաւախք կատարած իր վերջին ուղեւորութեան ընթացքին նկարահանած փաստանկարը, լուսապատկերներու միջոցով ներկայացուցած է Ջաւախքի դիմագրաւած մարտահրաւէրները՝ առողջապահական, ընկերային, կենցաղային եւ տնտեսական։ Ջաւախքի ռազմավարական կարեւորութեան անդրադառնալով բանախօսը նշած է թէ «Հայաստանի համար դէպի արտաքին աշխարհ բացուելու հիմնական ճամբան է Ջաւախքը, դէպի ծով բացուելու միակ հեռանկարը. այդ կամուրջը ամուր ու անառիկ պահելու համար հայրենի իշխանութիւնները լուրջ ընելիքներ ունին»։

ԼՐԱՏՈՒ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ· Ա· ՎԱԳՆԷՐ
Ն· Ս· ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍ Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Յետոյ նա գիւղի բոլոր բնակիչների անունից խնդրագիր գրեց նաեւ նահանգապետին։ Այվազովսկին ծերունիներին կարդաց իր գրած երկու նամակներն էլ եւ ուզում էր արդէն յանձնել նրանց, երբ Ռեպինը բռնեց նրա ձեռքը.

– Թոյլ տուէք, Իվան Կոնստանտինովիչ, ես լինեմ այդ նամակատարն ու խնդրագիրը յանձնողը։ Ինչոր մի ժամանակ, Պետերբուրգում, ես ձեզ խնդրեցի ընդունել իմ օգնութիւնը հայ գաղթականներին։ Դուք ինքներդ ապաստան տուեցիք նրանց ձեր կալուածքում, հող տուեցիք, դրանով ապացուցելով որ հանճարն ու բարին անբաժանելի են։ Հիմա էլ նկարչի եւ մարդու պարտքը թելադրում է ինձ սկսել եւ շահել մարտը՝ յանուն Ճումա – Էլիի գիւղացիների։

Մի քանի օր յետոյ Ռեպինը արդէն Սիմֆերոպոլում էր։ Իջեւանատանը նա փնտռեց դտաւ Ճումա-Էլիից եկած մարդկանց, որ ծայր աստիճան յուսահատուած շարուել էին դրան առաջ։

Այդ օրն էլ Ռեպինը եղաւ նահանգապետի մօտ։

– Հաշուի առնելով Ձեր եւ Իվան Կոնստանտինովիչի միջնորդութիւնը, – պատասխանեց նրան նահանգապետը, – ես այսօր եւեթ կարգադրութիւն կ՚անեմ իմ գրասենեակի կառավարչին չեղեալ յայտարարել Թէոդոսիայի յարգարժան նեգոցիանտի հետ կապուած պայմանագրութիւնը, թէեւ, անկեղծ ասած, դա դէմ է ամէն օրինականութեան, որովհետեւ գիւղացիք իրենք են մեղաւոր։ – Այստեղ նահանգապետը դադար տուեց, ապա նոյնքան սիրալիր, բայց բազմանշանակալից աւելացրեց, – իսկ դուք, յարգելիդ իմ Իլիա Եֆիմովիչ, լաւ կը լինէր փոքր-ինչ մնայիք մեր քաղաքում եւ... նկարէիք իմ ընտանիքի անդամներից մէկին։

Յաջորդ օրը Ռեպինը ճանապարհ դրեց գիւղացիներին, որոնք չգիտէին ինչպէս շնորհակալ լինել գործի այսպիսի բարեյաջող աւարտի համար։ Հրաժեշտ տալով ծերունիներին, նկարիչը խոստացաւ այցելել նրանց, իսկ ինքը վերադարձաւ նահանգապետի դղեակը, վրձնով վարձահատոյց լինելու նորին պայծառափայլութեան համաձայնութեան համար։ Մի շաբաթ յետոյ նա նորից վերադարձաւ Թէոդոսիա։

Այվազովսկին ամբողջ կեանքում սրտում փայփայեց սէրը Պուշկինի հանդէպ։

– Բանաստեղծը դարձել է իմ մտորումների, ներշնչանքների եւ անվերջանալի զրոյցների առարկան, – խոստովանում էր նա իր բարեկամներին։

Պուշկինին նուիրուած վեց կտաւ ստեղծեց նա։ Բայց դրանցից եւ ոչ մէկը լիակատար գոհացում չէր բերել նրան։ Նկարիչը լաւ գիտէր իր միանգամայն միջակ կարողութիւնները դիմանկարի բնագաւառում։ Ահա ինչու հիմա այնքան երջանիկ էր զգում իրեն, որ յաջողուել էր համոզել Ռեպինին։ Իսկ Ռեպինը ամենապահանջկոտ հարցաքննութեան էր ենթարկում նրան։ Ինչպիսի՞ տեսք ունէր բանաստեղծը, որո՞նք էին նրա բնաւորութեան բնորոշ գծերը, շարժուձեւերը, հագնուելու կերպը...

– Մտաբերէք, մտաբերէք Իվան Կոնստանտինովիչ։ Ձեր բացառիկ յիշողութեան մէջ պրպտէք գտէք այն հեռաւոր օրերը, երբ դուք՝ ամենաերջանիկդ երջանիկների մէջ, տեսել էք նրան, խօսել հետը, նայել աչքերի մէջ, ձեր ձեռքում զգացել նրա տաքուկ ափը...

Եւ Այվազովսկին վերյիշում էր...

Աշխատանքը Ռեպինի հետ առաջ էր գնում։ Շուտով կտաւի վրայ սկսեց յայտնուել բանաստեղծի կերպարը։ Պուշկինը հրաժեշտ է տալիս Սեւ ծովին։ Հանելով գլխարկը, նա վերջին անգամ դիմում է սիրելի ծովին.

Մնաս բարով, ազատ տարերք,
վերջին անգամ իմ դէմ՝ անափ
Քո ալիքներն են թաւալում,
Շողում քո վեհ գեղեցկութեամբ։
Հանց ընկերոջ հրաժեշտի կանչ,
Թախծոտ տրտունջ մտերմական,
Ձայնդ տխուր, ձայնդ կանչող
Լսում եմ ես վերջին անգամ։

Նկարում հոյակապ ներդաշնակում էին Պուշկինի եւ ծովի կերպարները։ Այդպէս ներդաշնակ էին եղել նաեւ երկու նկարիչների երեւակայութիւնները, երբ նրանք համատեղ նկարում էին այդ ըստեղծագործութիւնը. Ռեպինը Պուշկինին, իսկ Այվազովսկին՝ Ծովն ու ժայռոտ ափը։

(Շար· 195)

Մարի եւ Նուպար Լուսարարեան,
Արաքսի եւ Ցակոբ Նազարեան,
զաւակները,

Կարին, Անի, Լոռի, Թալին, Վիրժինի եւ Սթեֆանի,
թոռները

Նաեւ ծոռերը

ցաւով կը ծանուցանեն

ԹԱԳՈՒՀԻ ՆԱԶԱՐԵԱՆ-Ի
(Ծնեալ՝ Պոլիս)

մահը, որ պատահեցաւ Մարտ 20ին, 93 տարեկանին:

Թաղումը կատարուեցաւ Մարտ 26ին, ընտանեկան մտերիմ շրջանակի մէջ, ըստ հանգուցեալին փափաքին:

«ՅԱՌԱՋ». – Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Նուպար Լուսարարեանի եւ ընտանիքին:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐՍԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Ե. ՊՋՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

Date à retenir

SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à A. Aharonian
le **vendredi 18 avril à 20h30**
à la Maison de la Culture Arménienne de Marseille

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 7

Տօն է Աւետումն Սուրբ Աստուածածնի
Պատարագ՝ ժամը 10ին:
Մեր Եկեղեցւոյ զաւակները կը հրաւիրուին ներկայ ըլլալու եւ միատեղ աղօթելու:

ASSOCIATION ECOLE HAYTAS
et
LA VILLE D'ENGHIEN-LES-BAINS
présentent

LIZ SARIAN

EN CONCERT
AU THEATRE DU CASINO
d'Enghien-les-Bains
Le Dimanche 6 avril à 15h30

LOCATION :
- **Association HAYTAS**, M. KILIMLI Arto 06 09 02 04 54
- **Magasin B12** à Enghien-les-Bains 06 07 05 82 89
- **Théâtre du Casino d'Enghien-les-Bains** 01 39 34 10 80.

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.
Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

Recherche Directeur(trice) de maison de retraite

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur(trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne.
Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arméniennes.
Possibilité de logement de fonction.
Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante :
Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77 rue la Fayette — 75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

VOYAGE EN ARMENIE AVEC CHIRINIAN TRAVEL

Un voyage merveilleux et inoubliable soit pour des groupes, soit en individuel. Vol et service inclus à partir de 1.500 euros :
8 jours en hôtels 4 ou 5 étoiles (en chambre double) —
Repas dans les meilleurs restaurants — Guide français —
Toutes les excursions, toutes les entrées etc...

Nous sommes un Tour Oparator basé en Arménie.
En Italie et à Paris **Mlle DONARA** est notre représentante.

Visitez nos sites : www.chiriniantravel.com
www.urartutravel.eu

Adresse e-mail : info@chiriniantravel.com

Pour tous renseignements et programmes de voyages :
- **Bureau de Rome: Chirinian Travel** — ☎ + 39 06 64520118
- **Bureau d'Erevan: Chirinian Travel** — ☎ + 374 91481277
- **Représentante à Paris: Mlle Donara** — Port. : 06 29 15 56 63

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Փարիզի «Արշալոյս Թադէոսեան» մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 150 եւրօ իր դըպրոցին համար Տիկին Մարլէն Վարդանեանէ իր զաւկին Զարեհ Վարդանեանի մահուան առթիւ:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ԱԶԳ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:
Հեռ. – 01.53.79.80.69
Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— **RECITAL DE PIANO**
Mickaël EKMEKTCHIAN
Samedi 5 avril à 18 heures
Au Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado — 13008 Marseille
Au programme : Bach — Beethoven — Rachmaninoff...
— Entrée libre —

— **CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP**
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով Նուիրապետական Աթոռներու պահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Ցաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01.43.59.67.03 թիւէն:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ–շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90–ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝
25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux
Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 4
VENDREDI
4 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris

Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70

Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ

Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)

270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ

C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.931

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21.931

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԼՂՀ ՃԱՆԱՉՈՒՄԻՆ ՀԱՐՑՈՎ

Նախագահ Ռ. Քոչարեանի Ստեփանակերտի մէջ կատարած յայտարարութիւնը թէ Հայաստան կրնայ ճանչնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, կարծիքներու աշխոյժ փոխանակութեան պատճառ եղած է հայաստանեան քաղաքական շրջանակներուն մէջ:

Ազգային Ժողովի Նախագահ Տ. Թորոսեան կը նախընտրէ որ ճանաչումը Հայաստանէն առաջ կատարուի տարբեր երկիրներու կողմէ. այսուհանդերձ վստահ է որ թէ՛ Ռ. Քոչարեան, թէ՛ Ս. Սարգսեան այն տեսակէտը ունին որ սովորական ընթացքի եւ ինչ-ինչ զարգացումներու պարագային մօտեցումները կը տարբերին: Ան յայտնած է որ Հայաստանէն երեսփոխաններու խումբ մը Ապրիլ 12–20 ընթացքին հերթական հանդիպումի մը համար Ստեփանակերտ պիտի երթայ եւ այդ ընթացքին օրակարգի հարցերու կարգին կ'ըլլայ Ղարաբաղի խնդրին կարգաւորումը: Ինչ կը վերաբերի Հայաստանի ու ԼՂՀ միջեւ ապահովութեան, պաշտպանական համաձայնագիր ստորագրելուն, Տ. Թորոսեանի համոզումով ան երկար ատենէ ի վեր հասունցած հետանկար է, մանաւանդ ակնյայտ դարձած է որ Ատրպէյճան որեւէ պահու կրնայ ռազմական գործողութիւններու ձեռնարկել: Թէ՛ Ատրպէյճանը, թէ բոլոր միւս պետութիւնները հարկ է լաւ գիտնան որ միջազգային իրաւունքի սահմաններուն մէջ Հայաստան միշտ ԼՂՀ-եան կողքին եւ ժողովուրդին ապահովութեան երաշխաւորը պիտի ըլլայ:

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Ր. Յովհաննիսեան կողմնակից է ԼՂՀ-եան Հայաստանի կողմէ ճանաչումին: Իսկ «Բարգաւաճ Հայաստան»ի քարտուղար Ա. Սաֆարեան զգուշացուցած է որ հայրենասիրական մղումներով ըլլալիք ճանաչում մը մեծ վտանգ կը պարունակէ. եթէ Հայաստանի այդ քայլը միջազգային հանրութեան համար ըմբռնելի, ընդունելի չնկատուի, Ղարաբաղեան հարցը ատկէ օգուտ չի կրնար քաղել: Ինք կը նախընտրէ որ բանակցութիւնները շարունակուին Մինսկի խումբին շրջանակին մէջ:

Հ.Յ.Դ. Երեսփոխան եւ Պաշտպանութեան, Ազգային ապահովութեան և Ներքին գործերու խորհրդարանական յանձնաժողովի նախագահ Ա. Աղաբէկեան հարցին վերջնական լուծումը համարած է Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետութիւնը:

* * *

ԴԱՍԱԽՕՍ–ԿՈՒՍԱԿՑԱՊԵՏԸ ՊԱՇՏՕՆԱՆԿ ԵՂԱԾ Է

Ապրիլ 2ին Երեւանի համալսարանի հայերէն լեզուի դասախօս Միքայէլ Հայրապետեանի պաշտօնին վերջ տրուած է. ան նոյն ատեն նախագահն է «Պահպանողական» կուսակցութեան որ աջակցած էր Լ. Տէր Պետրոսեանին: Պաշտօնանկութեան համար տրուած պատճառը այն է որ դասախօսը երկար բացակայութիւններ ունեցած է: Մ. Հայրապետեան ներկայիս թաքնուած է:

* * *

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Մայր Աթոռի տեղեկատուական գրասենեակէն տեղեկացուցած են որ Ապրիլ 6ին Հայաստանի թեմերուն առաջնորդանիստ եկեղեցիներուն եւ Ս. Էջմիածնի մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Մարտ 1–2ի երեւանեան բախումներու զոհերուն քառասունքին առթիւ:

* * *

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄՆԵՐ

Երեւանի Աւան եւ Նոր Նորք համայնքներու դատարանը Ապրիլ 2ին մէկուկէս տարուան բանտարկութեան դատապարտած է «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքական խորհուրդի անդամ Գեղամ Յարութիւնեանը: Ան մեղադրուած է ապօրինի կերպով զէնք եւ զինամթերք պահելու յանցանքով:

Նոյն յանցանքով դատապարտուած են Յուսիկ Պաղտասարեան եւ Յովհաննէս Յարութիւնեան. առաջինը Արարատի ու Վայոց Ձորի մարզերու դատարանին կողմէ երեք տարուան, երկրորդը Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ – Զէյթունի դատարանին կողմէ մէկուկէս տարուան պատիժ կրած են:

ԿԻՊՐՈՍ

ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԸ ՎԵՐԱՏԻՐԱՆԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻՆ

Կիպրոսի Հանրապետութեան նախագահին եւ Թրքական գօտիին ղեկավարին միջեւ բանակցութիւնները յոյսեր արթնցուցած են որ կրնայ Հայ համայնքին վերադարձուիլ գրաւման գօտիին մէջ մնացած հայկական թաղամասը: Հոն կայ Ս. Աստուածածին եկեղեցին, Ցեղասպանութեան յուշարձանը, Մելիքեան – Ուզունեան նախակրթարանը եւ մանկապարտէզը:

Յոյսերը կապուած են այն համաձայնութեան որ Դ. Խրիստոֆիասի եւ Մ. Ա. Թալաթի հանդիպումին արդիւնք է եւ կը նկատուի Վիկտորիա փողոցին բացումը: Հայկական թաղամասը կը գտնուի այդ փողոցին Պաթոս դարպասին մօտ: Երկու ղեկավարներուն տեսակցութեան հետանկար ալ բացուած է 100 մ. երկարութեամբ այդ դարպասին նորոգութեան:

ՍԷՆ ՇԱՄՈՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՊՂԾՈՒԱԾ

Ցեղասպանութեան զոհերու յիշատակին կանգնած Սէն Շամոնի կոթողը պղծուած է. «անծանօթ»ներ անոր պատուանդանի վրայի Հայաստանի քարտէսին վրայ գրած են «Թիւրքիյէ»: Կոթողին վայրը մատնանշող ցուցատախտակներն ալ գողցուած են կրկին անգամ, մինչդեռ նորոգուած էին հազիւ ամիս մը առաջ:

Ապրիլ 24ի նախօրեակին այս երեւոյթը որ ժխտողներու անպատիժ ձգուած գործունէութեան հերթական օղակն է, կընայ ենթադրել ընել թէ ինչերո՛ւ պէտք է սպասել մինչեւ այդ թուականը:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ ընկերվարականները, անգամ մը եւս պառակտուած պատկեր մը կը պարզեն արդելքի բանաձեւին շուրջ, զոր պիտի ներկայացնեն Ապրիլ 8ին: Ոմանք կ'ուզէին որ այդ բանաձեւը միայն Աֆղանիստան զօրք ղրկելու չվերաբերի, այլ նաեւ կցուի կառավարութեան տնտեսական քաղաքականութեան քննադատութիւնը: Բայց, ի վերջոյ, ներքին բուռն վէճէ մը ետք Հոլանտ որոշեց կեդրոնանալ միայն Աֆղանիստան զօրք ղրկելու վրայ: Ֆապիուս կը խորհի որ այս կեդրոնացումը ընդդէմ Սարքոզիի ատլանտեանապաշտ ձգտումին, առաւելութիւններ ունի եւ կրնայ հրապուրել նաեւ կոլիստները, որոնք դէմ են ՕԹԱՆ-ի:

ԻՐԱՔԻ մէջ, Ապրիլ 2ին, 15 հոգի եւս մեռած են: Երկրին կեդրոն հիւսիսի շրջանը քաղաքագօրքի ութ անդամներ, որոնք զօրակոչի ենթարկուած էին ամերիկեան բանակին կողմէ, զոհ գացած են թակարդ կառքի մը պայթումին:

ՍՐԻ ԼԱՆՔԱՅԻ մէջ առնուազն 45 հոգի մեռած է, գլխաւորաբար թամիլ ըմբոստներ, ուր անջատողական տարրերը ամէնօրեայ բախումներ ունին կառավարական բանակին հետ:

ՊՈՒՔՐԷՇԻ մէջ, բացուած է ՕԹԱՆ-ի վեհաժողովը, որ նաեւ կը նշէ Ֆրանսայի վերադարձը Ատլանտեան ուխտէն ներս: Իր ելոյթին մէջ, Սարքոզի հաստատած է որ 800էն 1.000 զինուոր պիտի ղրկուի Աֆղանիստան: Հակառակ անոր որ Ֆրանսա հիմնադիրներէն մէկն է (1949) զինակցութեան, ինք է նաև որ քաշուած է 1966ին: Ժողովին առաջին ժամանողը եղած է Պուշ, որու վերջին միջազգային հանդիպումն է եւ կրկին պնդեց որ ՐԹԱՆ-ը իր դռները բանայ Վրաստանի եւ Ուկրանիոյ առջեւ: Կ'ուզէ նաեւ որ ՕԹԱՆ-ը իր դռները բանայ Վրաստանի Անդամ 26 երկիրներէն աւելի քան տասնեակ մը դէմ են այդ երկու երկիրներուն անդամակցութեան, որոնց մէջ են Ֆրանսա եւ Գերմանիա: Այս վերջինը ոչ մէկ պատճառ կը տեսնէ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները վատթարացնելու: Այդ յարաբերութիւնները արդէն լաւ չեն Արեւմուտքի կողմէ Քոսովոյի անկախութեան ճանաչման պատճառաւ:

ՎՐԱՍՏԱՆԻ նախագահը Մ. Սահակաշվիլի հարցազրոյցով մը Ֆիկառոյի (Ապրիլ 3) կը պնդէ որ ՕԹԱՆ պէտք չէ տեղի տայ Ռուսաստանի, հակառակ պարագային ինք է որ կը վտանգուի: Կը յուսայ որ Ֆրանսա կը փոխէ իր դիրքը Ուկրանիոյ եւ իրենց անդամակցութեան կապակցութեամբ, բայց նոյն յոյսը չունի ինչ կը վերաբերի Գերմանիոյ, որու ընդդիմացումը ընդլայնման, աւանդական բնոյթ ունի: Հաւանական է սակայն որ Ալպանիա եւ Խրուաթիա պաշտօնապէս անդամ դառնան: Յունաստան իր վէթօն կը դնէ Մակեդոնիոյ անդամակցութեան համար, ցորչափ անունը չի փոխեր:

ԽՈ–ՖՐԱՆՍ – ՔԱ.ԷԼ.ԷՄ. պիտի չգնէ իտալական Ալիթալիա օդանաւային ընկերութիւնը, վերջին բանակցութիւնները ձախողած ըլլալով. այս ձախողութենէն ետք, Ալիթալիայի նախագահն ալ՝ Մորիցիօ Փրաթօ, որ նշանակուած էր 2007ի ամառը, հրաժարած է: Բանակցութիւնները կը տեւէին չորս ամիսէ ի վեր Ալիթալիայի սենտիքաներուն հետ եւ ասոնց պատճառաւ է որ կարելի չէ եղած որեւէ կարգադրութեան յանգիլ: Փրաթոյի համար սենտիքաներն են պատասխանատուները, որոնց մեծ սխալն էր: Ալիթալիա, հաւանաբար սնանկութիւնը հռչակէ:

ԶԻՄՊԱՊՈՒԷի նախագահը՝ Ռոպէր Մուկապէ կորսնցուցած է ընտրութիւնները առաջին շրջանին իսկ, բայց անհաւանական չի նկատուիր որ Բ. շրջան մըն ալ ըլլայ: Ճչումներ կան որ Մուկապէ քաշուի եւ ԱՄՆ ու Եւրոպա կ'ուզեն որ Ա. շրջանի արդիւնքները հրապարակուին ժամ առաջ: Սկզբունքով ընդդիմութիւնը (Մորկան Ցվանժիրէ) ձայներու 50,3%ը ստացած է, Մուկապէ ալ՝ 43,8%ը եւ անհրաժեշտ է ձայներու նուազագոյն 51%ը առնալ ընտրուելու համար: Այս պատճառաւ, Բ. շրջան մը անհրաժեշտ կը նկատուի:

ՈԼԻՄՊԻԱԿԱՆ ջահը Փարիզ կը հասնի Երկուշաբթի, Ապրիլ 7ին եւ այդ առընչութեամբ արդէն իսկ վէճեր ծագած են: Փարիզի քաղաքապետութեան կազմակերպած մամուլի ասուլիսի մը ընթացքին (Ապրիլ 2) տարակարծութիւնները բացայայտ եղած են Ողիմպիական ազգային կոմիտէի նախագահին եւ «Առանց սահմանի Թղթակիցներ»ներու ընդհանուր քարտուղարին միջեւ: Այս վերջինը դատապարտած է առաջինին մերժումը, որ կը վերաբերէր փոքր երկրորդ փոխանցողի մը ներկայութեան, որ պիտի կրէր թի-շըրթ մը 5 ձեռնակապերով փոխանակ ողիմպիական 5 օղակներուն: «Առանց սահմանի Թղթակիցներ»ու ընդհանուր քարտուղարը՝ Մենար կը սպառնայ որ այս ընթացքով շատ մը բաներ հասկացողութեամբ չեն ըլլար և եթէ միջադէպեր պատահին ճամբուն վրայ, յանցաւորը Ողիմպիական եւ մարզական ազգային կոմիտէն կ'ըլլայ:

ԼԵՀԱՍՏԱՆԻ Տիէթը (խորհրդարան) վաւերացուցած է Լիզպոնի դաշինքը, որ կը վերաբերէր Եւրոպայի պարզացուած Սահմանադրութեան: Ապրիլ 1ի այս վաւերացումը վերջ կը դնէ քանի մը շաբթուան ճգնաժամներուն:

ԹՈՒՐՔԻՈՅ վարչապետը Թ. Էրտողան Շուէտ այցին ընթացքին թիրախ եղած է Հայերու, Քիւրտերու եւ Ասորիներու ցոյցերուն: Անոնք տեղի ունեցած են Թագաւորական պալատին առջեւ ուր Թուրք վարչապետը կ'ընդունուէր կիսթաւ Ժ.Զ.ի կողմէ:

ԽԱՌՆԱԿԻՉ «ՇՆՈՐՀԻ»Ը

Երեւանեան յետընտրական խառնվութիւնները գրեթէ անցեալ են արդէն, բայց պատճառները, հետեւանքները կը շարունակեն միտք զբաղեցնել: Պատճառները կենսական հրամայական մը կը ներկայացնեն վաղուան իշխանութիւններուն, եթէ անոնք կարողութիւնը եւ անկեղծութիւնը ունենան անդրադառնալու թէ մինչեւ այսօր կիրարկուած ուրագի քաղաքականութիւնը չի կրնար տեւել: Երկիրը, ժողովուրդը աւելի համբերելու կարողութիւն չունի, տեսնելու համար պատասխանատուներ որոնք գործեն աղօթի մտայնութեամբ: Դէպի իր եւ ընդհանուրին կործանումին առաջնորդող ամուր քայլերը պիտի առնէ այն ղեկավարութիւնը որ իմաստութիւն պիտի նկատէ արհամարհել Լ. Տէր Պետրոսեանի ցոյցի հրապարակը լեցնողներու պոռթկումը: Ճիշդ է որ անտրամաբան մը կայ ստեղծուած կացութեան մէջ. այդ պոռթկումը կուտակուեցաւ անկախութեան 16 տարուան անհոգութիւններով, անարդարութիւններով: Ու երբ այլեւս սպառնալիք ներկայացնելու խառութեան հասած է ան, այսօրուան ղեկավարութեան կը վիճակի դարմանի դժուար, վըտանգաւոր գործը: Բայց եթէ սրբագրութիւնը յապաղի, աւելի վախցնող հեռանկարներ պիտի չբացառուին:

Ինչ կը վերաբերի հետեւանքներուն, կայ պառակտումի երեւոյթը, որ չի սահմանափակուիր Հայաստանով: Ան առաջին օրէն գրաւեց Սփիւռքն ալ ուր հատուածներ, գրեթէ ճակատներ գոյացան: Յայտարարութիւններու, կոչերու տարափ մը թափեցաւ ամէն կողմ, մէկը կամ միւսը դատապարտող, ասոր կամ անոր զօրակցող: Եղան Հայաստանի մտահոգութեամբ շարժողներ, եղան կացութիւնը անձնական փառաբանութեան առիթ համարողներ: Նաեւ Հայաստանը երրորդ, չորրորդ կողմերու ջաղացքին ջուր լեցնելու պատրուակ դարձնողներ:

Այս վերջին խումբը թեւերը սոթտած աջ ու ձախ դիմելու արշաւի մը ձեռնարկեց: Դիմումներ, հրաւէրներ ուղղուեցան հոս ու հոն, որպէսզի միջամտեն Հայաստանի ընթացքին, հաշիւ պահանջեն, կեցուածք թելադրեն: Ու ամէնէն զարմանալին այն է որ այդ գործունէութիւնը ներկայացուեցաւ, ծանուցուեցաւ որպէս հայրենասիրական արարք: Տեղ մը երկուուկէս «մտաւորական»ի ստորագրութեամբ միջազգային կազմակերպութեան մը մատնութիւն կատարուեցաւ, ուրիշ տեղ մը գանգատի հասցէ առնուեցաւ այսինչ երկրին արտաքին գործերու նախարարութիւնը: Ու Հայաստանի ներքին խնդիրները նոր «Բիւզանդիոն–Տիզբոն»ներու յանձնելու պատմական «աւանդութիւն»ը շարունակուեցաւ ու կը շարունակուի: Տարօրինակ է որ այդ պատմութեան կորուստները ամէնէն կենսականները տարած են մեզմէ,— հող, ժողովուրդ, լեզու, բարքեր, եւլն. —, բայց ձգած են կռանալով դաւելու զզուելի պատրաստակամութիւնը, փութկոտութիւնը: Անհարկի ենթարկումներու ամօթալի ձգտումը:

Այս յատկանիշը ամէնէն չեշտ գիծերով ի յայտ եկաւ ամերիկահայութեան մէջ. Լ. Տէր Պետրոսեանի զօրակցութեան ամէնէն բազմամարդ ցոյցերը հոն տեղի ունեցան, ինչպէս նաեւ ամէնէն բազմաբնոյթ ձեռնարկները. անոնց գագաթնակէտը կազմեց, բստ յայտարարուածին՝ տասը հազար ստորագրութեամբ հանրագրութիւնը որով կը պահանջուէր որ ԱՄՆ-ու արտաքին գործերու նախարարութիւնը սաստէ, պատժէ Հայաստանի իշխանութիւնները, չեղեալ յայտարարել տայ նախագահական ընտրութիւնը, եւ այլն: Կարծէք Հայաստան ԱՄՆ-ու հեռաւոր մէկ գաղթավայրն էր, կամ հանրագրութեան ձեռնարկող ու ստորագրող իրենց այդ երազը պահ մը արդէն կատարուած իրականութիւն նկատեր էին..

Այդ երազին տէր յայտնուածներու ամէնէն անհասկնալին եղաւ ՍԴՀԿ-ի կեցուածքը. մեր աւանդական կուսակցութիւններուն աւանդաբար ամէնէն ձախակողմը տեղ գրաւած այս կուսակցութեան ԱՄՆ-ու թեւը այդ երկիրը օգնութեան կանչողներուն ամէնէն աշխոյժներէն յայտնուեցաւ: Նախաձեռնողներէն եղաւ ամէն դիմում–կոչի, ամէնէն աւելի բարձրաձայն արձագանգեց Ուաշինկթընէն Երեւանի ուղղուած «ժողովրդավարութեան», «մամուլի, խօսքի ազատութեան», «մարդկային իրաւունքներ»ու ծամօնային պղպղարութիւններուն:

Ըստածին խտացումն է նոյն կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի «Մասիս» պաշտօնաթերթին առաջին էջի հետեւեալ խորագիրը. «Շնորհիւ ամերիկահայութեան կեցուածքին Միացեալ Նահանգները կը կարծրացնէ իր դիրքը Հայաստանի իշխանութիւններուն նկատմամբ»: Կարելի է չանդրադառնալ Ուաշինկթընի հոսանքն ի վար թիավարող ափ մը Հայերուն եւ «ամերիկահայութեան» չփոթին, կամ «Հայաստանի իշխանութիւններուն նկատմամբ» ԱՄՆ-ու դիրքին կարծրացման մատնանշումին, երբ օժանդակութիւններու կրճատումը, ջնջումը ոչ թէ իշխանութիւնները, այլ ժողովուրդին ամէնէն անօգ հատուածը թիրախ կ'առնեն:

Բայց ի՞նչպէս հասկնալ սա «շնորհիւ»ին ներկայութիւնը նոյն խորագրին մէջ. այդ նախադրութիւնը, հայկական վարժարանի մը 11-12 տարու աշակերտն ալ սորված կ'ըլլայ թէ միմիայն դրական պարագայի մը նշանակն է. «շնորհիւ»ը կրնայ միայն դրական իմաստով շարունակութիւն ունենալ: Ուստի Ամերիկայի հնչակեաններուն խորագիրը մէկ բան կը նշանակէ. իրենց դատումով դրական արարք է Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ու դիրքին կարծրացումը «շնորհիւ ամերիկահայութեան կեցուածքին»... այսինքն, պէտք է գոհ ըլլալ իրենց օրինակով, որ Ուաշինկթըն որպէս ժողովրդավարութեան երեւանեան թերացումին պատիժ, վերջ տուած է, կամ կասեցուցած «Հազարամեակի մարտահրաւէր» ծրագիրը. իսկ ան աւելի քան 200 միլիոն տոլարի օժանդակութիւն կը նշանակէր Հայաստանի:

Սակայն պէտք չէ կարծել որ աջ ու ձախ բողոքի ու պատիժի հասցէ փնտռելու ձգտումը ԱՄՆ-ու Հայերուն մենաշնորհն է: Հոս, Փարիզի մէջ ալ կան դուրսի փրկիչներուն աղօթողներ: Վերջին օրերուն սկըսած է ցրուիլ թռուցիկ մը որ «ժողովրդավարութեան», «ազատութեան» նոյն խայծով կը դիմէ Եւրոպական միութեան: Թռուցիկը հաւաքի մը կոչ կ'ուղղէ Պրիւքսէլի մէջ, միութեան կեդրոնատեղիին առջեւ, «Ո՞ւր կ'երթայ Հայաստանը» ցնցիչ խորագիրով մը հրաւիրելով անտարբեր չմնալու: Հրաւիրակը մանրատառ գրուած կայքէջի հասցէ մըն է որուն ետեւ կը յայտնուի «Հայաստանի ժողովրդավարութեան զօրակցութեան մարմին» մը: Չենք գիտեր թէ այս մէկն ալ ունի՞ պաշտօնաթերթ մը որ սպասենք «Շնորհիւ Եւրոպայի հայութեան կեցուածքին Եւրոպական միութիւնը կը խստացնէ իր դիրքը Հայաստանի նկատմամբ»ի նման խորագիրի մը: Թէեւ ակնկալուած այդ «կեցուածք»ը այս պարագային բնական ջուր կը վերցնէ, երբ նկատի առնուի որ Թուրքիոյ անդամակցութեան դէմ բողոքի յամառ ու արդար կոչերն իսկ հազիւ երկու հազար հոգի խըմբած էին նոյն վայրին մէջ:

Տիգրոնասէրներու, բիւզանդամէտներու նախընթացներուն անտեղեակներ ի՞նչ որսալ կը յուսան արդեօք ուաշինկթընեւբրիւքսէլեան կաթսայէն, իրենց «շնորհիւ» չեբեփներով:

Ա. ԹՈՐՈՍԵԱՆ

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

«ԱՍՏՈՒԱԾ ՊԱՀԷ ՁԱՅՆ ՉԱՐ ԱՉՔԵՐԷ»

Կոմիտասի համբաւը Պոլսոյ մէջ տարածուեցաւ ո՛չ միայն հայկական շրջանակներէ, այլ նաեւ Թուրք երաժշտասէրներու ու մտաւորականներու շրջանակէն ներս: Կոմիտաս գտած էր մտքի ու հոգիի այն անդորրութիւնը, որուն կարօտովը ապրած էր այնքան երկար տարիներ: Բնականաբար շատ ալ գաղափար չունէր թէ ինչպիսի աղէտ մը կը սպասէր իրեն եւ իր ցեղակիցներուն, բայց ինքզինք նուիրած էր արդիւնաւէտ ու ստեղծագործ աշխատանքի: Իր դաշնաւորած գեղջկական հրաշալի երգերը անօրինակ յուզումներ կը ստեղծէին երաժշտասէրներու մօտ: Մանաւանդ երբ համերգի վերջին մասին մէջ ինք ալ բեմ կ'ելլէր ու իր իսկ դաշնակի ընկերակցութեամբ եւ իր ապաւորիչ ձայնով կը սկսէր երգել հայ ժողովրդական ու գեղջկական երգերը, սրահին մէջ յուզումի փոթորիկը կը հասնէր իր գագաթնակէտին:

Պոլսոյ մէջ ալ չկայի՞ն կարգ մը տիրացուներ որոնք խծբծած էին Կոմիտասը: Կային: Անոնք կը պնդէին թէ Կոմիտաս մեծամիտ էր, ինքզինք հայ երաժշտութեան աստուածը կը նկատէր եւ ուրիշներու մօտ արժանիք չէր տեսներ: Ասոնք թերեւս նախանձի հետեւանքով ըսուած խօսքեր էին: Կոմիտաս իրականութեան մէջ երբեք չէր մոռցած Կուտինայի մէջ իր համեստ ծնունդը եւ, էջմիածնէն այնքան դժգոհելով հանդերձ, յաճախ կ'ընդունէր որ շատ բան կը պարտէր էջմիածնին: Կ'ըսէր որ եթէ բախտը մըղած չըլլար իրեն ու զինքը տարած չըլլար մինչեւ էջմիածին, ան հաւանաբար դառնար պարզ կօշկակար մը, որովհետեւ արհեստով կօշկակար էր զինքը իր որբութեան օրերուն խնամող իր Յարութիւն հօրեղբայրը:

Բայց ճշմարտութիւն է որ Կոմիտաս Պոլսոյ մէջ գտած էր արուեստասէր շրջանակ: Թէ մեր սիրելի վարդապետը այդ շրջանին ինչպիսի համբաւի մը տիրացած էր նաեւ Թուրք շրջանակներէ ներս, այդ մասին վկայութիւն մը կրնանք գտնել հետեւեալ պատահարին մէջ որ տեղ գտած է Կոմիտասի Պոլսոյ օրերու կենսագրութեան մասին Սիրունիի հրատարակած յուշերուն մէջ:

1915ի Մարտ ամսուան ընթացքին էր որ Կոմիտաս հրաւիրուեցաւ երգելու եւ նուագելու Թուրք մտաւորականներու մէկ հաւաքոյթին: Հաւաքոյթը կազմակերպուած էր Երիտթուրքերու կողմէ: Երիտթուրքերը այս հաւաքոյթը կազմակերպած էին ցոյց տալու համար որ իրենք արժէք կուտային մշակոյթին ու արուեստին եւ թէ խտիր չէին դներ արուեստագէտներու միջեւ:

Բազմաթիւ Թուրք մտաւորականներ ներկայ էին, բայց Հայեր գրեթէ չկային: Կոմիտաս ինքզինք շատ ալ հանգիստ չէր զգար իրեն այնքան օտար այդ շրջանակին մէջ: Կոմիտասէն զատ միայն մէկ Հայ հրաւիրուած էր հաւաքոյթին: Յովհաննէս Մանուկեան անուն անձ մըն էր ան որ այդ գիշերուան հաւաքոյթը տարիներ վերջ նամակով մը սապէս պիտի նկարագրէր Սիրունիին.

«Բազմաթիւ յայտնի անձնաւորութիւններու կարգին Թալաթ փաշան ալ հոն էր: Հայազգի Մանուկեան առաջուց կը ճանչնար Կոմիտասը, բայց այդ գիշեր տեսաւ որ ան անճանաչելի դարձած էր: Գունատ էր ու տխուր: Հանդիսավարն էր Հատուլլահ Սուփհի որ մօտաւորապէս սապէս խօսեցաւ Կոմիտասը ծանօթացնելու համար ներկաներուն.

"Անատոլուի այս զաւակը, որ հայ հոգեւորական մըն է, իր չարքաշ աշխատանքով մեծ թեւեր ու թըռիչքներ շահեցուցած է Հայոց երաժշտութեան: Ան արհամարհեց հանգիստն ու բարօրութիւնը, կամ դրամը, ու ամբողջ Անատոլուն շրջելով հաւաքեց հայկական երգեր ու զանոնք շահեցուց հայ երաժշտութեան ժառանգութեան: Երանի՜ թէ իսլամ հոգեւորական մըն ալ նոյնը ընէր, ով գիտէ ի՛նչ հարստութիւններ պիտի հաւաքէր Անատոլուի խորերէն: Ճշմարտութիւնն այն է որ հայ ժողովուրդը կանգնած է մեր մշակութային կեանքին սահմաններուն վրայ: Թուրքիոյ մէջ ուր որ երթաք, Անատոլուի որեւէ մէկ անկիւնը, ձեզ կ'ողջունէ հայոց ստեղծագործ միտքը: Եթէ Սուլթանին պալատներէն ներս մտնէք, ճարտարապետները Հայ են, եթէ ձեր սիրելիներուն համար գերեզման մը շինել ուզէք, հայ վարպետ մըն է որ պիտի քանդակէ շիրմաքարը, հայ վարպետներն են որ շինեցին Վանի զարդատուփերը, բժշկական վարժարանի հիմնադիրներն ու գիտական գիրքերու հեղինակները Հայեր են: Ասիկա է այն ժողովուրդը որուն հետ ապրեցանք դարեր շարունակ":

Այս շատ փայլուն ու հայանպաստ ճառախօսութենէն վերջ Կոմիտաս վարդապետ նստաւ դաշնակին առջեւ ու իր իսկ դաշնակի ընկերակցութեամբ երգեց հայոց գեղջկական սրտախօսիկ երգերը: Ամբողջ սրահը թնդաց ծափահարութիւններով եւ արձակուեցան դրուատալից բացագանչութիւններ: Շատեր կը պոռային. "Աստուած պահէ ձայն չար աչքերէ": Կ'երեւի թէ անոնք անկեղծ էին իրենց այս հիացումին ու բարեմաղթութեան մէջ»:

Բայց ասիկա բարեմաղթութիւն մըն էր որ պիտի չիրականանար: Աստուած պիտի չկարենար այս արժէքաւոր վարդապետը պահել չար աչքերէ: Ամիս մը վերջ պիտի սկսէր Հայոց տարագրութիւնը եւ Կոմիտաս վարդապետն ալ, որ քաղաքական ո՛չ մէկ գործունէութիւն ունեցած էր կեանքին մէջ, պիտի գտնուէր առաջին տարագրուածներու խումբին մէջ, դէպի Չանքըրը:

Բարեբախտութիւն էր որ Կոմիտաս որպէս աքսորի ընկեր ունէր տոքթ. Թորգոմեան անուն անձ մը: Ասիկա նախախնամական պիտի ըլլար իրեն համար:

Ռ. Հ.

ՀԱՏՈՐ ՄԸ ՎԱՀԱՆ ԳԱՐՏԱՇԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Լոյս տեսած է «Վահան Գարտաշեան՝ Հայ դատի արտակարգ փաստաբան» հատորը (անգլ.), որուն հեղինակն է ամերիկահայ ծանօթ իրաւաբան, ապահովագրական արեւմտեան ընկերութիւններու դէմ Ցեղասպանութեան զոհերու ժառանգութեան դատերու նախաձեռնարկ Վարդգէս Եղիայեան: Հրատարակուած է Հայկական յիշատակութեան կեդրոնի «Հայկական ցեղասպանութիւնը – Հայ դատը» մատենաշարով:

Հատորը 350 էջ է, բաղկացած երկու մասէ· առաջինին մէջ կան ներածականներ եւ ութ գլուխներ, երկրորդը յատկացուած է յաւելուածներուն:

Վ. Գարտաշեան 1883ին ծնած է Կեսարիոյ մէջ, տեղւոյն ամերիկեան եւ ֆրանսական վարժարաններուն մէջ ուսանելէ ետք 1902ին մեկնած է ԱՄՆ եւ հաստատուած Նիւ Եորք: 1908ին իրաւաբան վկայուած է: 1915–1917 տարիներուն առանձին կարեւոր գործունէութիւն տարած է Հայ Դատի առումով: Ելոյթներ ունեցած է ամերիկեան լսարաններու, գիտական, կրօնական շրջանակներու մէջ, ստանձնած է Պոսթընի Հայկական մամուլի գրասենեակի պատասխանատուութիւնը, եղած է հոն կազմակերպուած Հայկական ազգային միութեան պատասխանատու քարտուղարը:

Անձնական ջանքերով լուրջ պայքար մղած է Լօզանի դաշնագրին դէմ, 1933ին ԱՄՆ-ու արտաքին գործերու նախարարութեան յանձնած 39 էջնոց յուշագիր մը:

Մահացած է 1934ին·

Publications reçues

L'AGE D'OR DE L'ARCHITECTURE ARMENIENNE
(336 pages, relié, 460 illustrations en couleurs)

PATRICK DONABEDIAN

Editions Parenthèses
Collection Architecture
(Diffusion Harmonia Mundi)
Marseille, 2008

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.-Ի «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ 15-ԱՄԵԱԿԸ

Միշըն Հիլզի «Տէօքմէճեան» սրահին մէջ, Մարտ 7ին, նշուած է Հ.Մ.Ը.Մ.-ի Քրեսենթա հովիտի «Շանթ» մասնաճիւղի հիմնադրութեան 15ամեակը: Բացումը կատարելով հանդիսավարուհին՝ Փաթիլ Արօշեան, շեշտած է մասնաճիւղի ստեղծման կարեւորութիւնը: Մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցելով ատենապետը՝ Ալեք Աբարատեան, ներկայացուցած է մասնաճիւղի պատմութիւնը եւ արձանագրած նուաճումները: Մասնաճիւղը ներկայիս ունի 850 անդամներ, 75 սկաուտներ եւ պասքէթպոլի 35 խումբեր, մարզիկ մարզիկուհիներ կը մասնակցին նաեւ նաւասարդեան մարզախաղերու թենիսի, փինկ-փոնկի, լողի եւ այլ մրցումներու: Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջ. վարչութեան ատենապետ Սթիւ Արթինեան գնահատած է այն անձերը, որոնք 15 տարի առաջ համախմբուելով հիմը դրած են «Շանթ» մասնաճիւղին, որ տարիներու ընթացքին ծառայած է երիտասարդութեան եւ համայնքին: Ստեղծուած խանդավառ մթնոլորտին մէջ եղած են նուէրներ, ի նպաստ մասնաճիւղի բարգաւաճման:

⁂

ԿԼԷՆՏԷՅԼԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿԸ

Կլէնտէյլի «Ռընեսանս» ճաշարահին մէջ, Մարտ 7ին, տեղի ունեցած է Հայ կեդրոնի ի նպաստ հանգանակութեան ձեռնարկը, կազմակերպութեամբ Հայ մշակութային հիմնարկութեան: Ներկայ եղած են 400 հոգի: Բացումը կատարած է Քրիստին Յովնանեան: Յայտագիրը վարած են Յովհան Թաշճեան եւ Արտաշէս Քասախեան: Ցուցադրուած է տեսերիզ մը, ներկայացնելով կառուցուելիք կեդրոնի աշխատանքները: Գեղարուեստական բաժնին հանդէս եկած են «Կիլիկիա» սենեկային նուագախումբը, ղեկավարութեամբ Միքայէլ Աւետիսեանի եւ երգչուհի Սալբի Մայիլեան: Վահիկ, Հարմիկ, Էդիկ եւ Արմէն Գազանճեան եղբայրները 150 հազար տոլար նուիրելով հովանաւորած են կեդրոնի մեծ սրահը: Հանգանակութենէն գոյացած է 600 հազար տոլար: Շնորհակալութեան խօսք արտասանած է հիմնարկութեան Կլէնտէյլի մասնաճիւղի ատենապետ Վահէ Պօղոյեան: Կեդրոնը պիտի ունենայ բազմաթիւ դասարաններ, տեղ յատկացնելով Հ.Օ.Մ.-ի հայերէն լեզուի դասընթացքներուն, ինչպէս նաեւ եկեղեցւոյ կիրակնօրեայ դըպրոցին եւ այլ ծառայութեանց, ժողովասրահ, ընթերցանութեան յատուկ սենեակ, գրադարան եւ գրասենեակներ, որոնք պիտի տրամադրուին ոչ շահութաբեր զանազան կազմակերպութիւններու:

⁂

ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ՀԱՄԵՐԳԸ

Կլէնտէյլի «Ալեքս» թատերասրահին մէջ, Մարտ 2ին, տեղի ունեցած է Իրանահայ միութեան երգչախումբին տարեկան համերգը, հոծ բազմութեան ներկայութեամբ: Բացումը կատարած է Թոմիկ Ալեքսանեան: Համերգին մասնակցած են հարիւր անդամներ՝ երգչախումբ, պարախումբ, նուագախումբ եւ մենակատարներ: Երգչախումբը, Միքայէլ Աւետիսեանի ղեկավարութեամբ, մեկնաբանած է հայկական ժողովրդական 23 երգեր՝ Սայաթ Նովայէ, Խաչատուր Աւետիսեանէ, Ռուբէն Ալթունեանէ եւ այլ երգահաններէ:

⁂

ՖԵԼԻՔՍ ՄԵՆՏԸԼՍՈՆԻ «ԷԼԱՅՃԱ»Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Փասատինայի առաջին մեթոտական եկեղեցւոյ մէջ, Մարտ 1ին, տեղի ունեցած է Ֆելիքս Մենտըլսոնի «Էլայճա» օրաթորիոյի ներկայացումը, կազմակերպութեամբ «Լորք» երաժշտական ընկերակցութեան, որուն երեք կարգի երգչախումբերը, հարստացած օտար քանի մը անուններով, ինչպէս նաեւ 40 հոգինոց նուագախումբը ղեկավարած է Վաչէ Պարսումեան: Բացման խօսք արտասանած է համերգին գլխաւոր հովանաւորը՝ տոքթ. Նազարէթ Տարագճեան: «Էլայճա» երկը, բաղկացած երկու մասերէ եւ 43 հատուածներէ, կը ներկայացնէ Եղիա Մարգարէի չարչարալից կեանքէն դրուագներ: Գլխաւոր դերերով հանդէս եկած են մեցցօ սոփրանօ Կարինէ Աւագեան, Ալենոյշ Նազարեան, թենոր Րաֆֆի Քերպապեան եւ պաս Սթիւ Փենսի:

⁂

Հ.Օ.Մ.-Ի ԿԱԼՈՒԱԾԻ ՊԱՐՏԱՄՈՒՐՀԱԿԻ ԱՅՐՈՒՄԸ

Լոս Անճըլըսի «Եունիվըրսըլ Շերաթոն» պանդոկին մէջ, Փետր. 23ին, տեղի ունեցած է Հ.Օ.Մ.-ի Կլէնտէյլի կեդրոնատեղիի կալուածի պարտամուրհակի այրումի հանդիսութիւնը: Յայտագիրը վարած է Մակի Սարգսեան: Ցուցադրուած է տեսերիզ մը, ներկայացնելով Շրջ. վարչութեան, 26 մասնաճիւղերու, շաբաթօրեայ դպրոցներու, մանկամսուրներու, ընկերային ծառայութեան եւ հոգեբանական կեդրոններու աշխատանքները: Բանախօսած է Մուրատ Թոփալեան, ներկայացնելով Հ.Օ.Մ.-ի 98 տարիներու գործունէութիւնը, անոր ցուցաբերած օգնութիւնը Հայկական ցեղասպանութենէն վերապրած եւ օտար ափերուն հաստատուած հայ ժողովուրդի բեկորներուն, իսկ 1997էն սկսեալ, նաեւ անոր ցուցաբերած հոգածութիւնը Հայկական համայնքներուն՝ բանալով շաբաթօրեայ վարժարաններ, ընկերային ծառայութեան գրասենեակներ, օգտակար հանդիսանալով նաեւ Հայաստանի ժողովուրդին՝ դպրոցներու, հոգեբանական եւ աչքի յատուկ կեդրոններու, որբանոցներու, ծննդատուններու եւ մանկապարտէզներու բացումով: Շրջ. վարչութեան ատենապետուհին՝ Սոնա Փէլթէքեան, իր խօսքին մէջ նշած է թէ օրուան ձեռնարկի եկամուտը պիտի յատկացուի Հ.Օ.Մ.-ի կեդրոնի շէնքի պարտամուրհակի այրման, որով կալուածը պիտի դառնայ միութեան սեփականութիւնը, սատարելու ծառայելու գաղութին բարեսիրական, ընկերային ծառայութեան, խորհրդատուական, հոյապահպանման եւ ուսման կարիքներուն, ինչպէս նաեւ հասնելու Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի մեր հայրենակիցներու կարիքներուն: Հուսկ՝ տեղի ունեցած է պարտամուրհակի այրման արարողութիւնը:

ԼՐԱՏՈՒ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Մ Ա Ս Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

«ԴՈՒՔ ՄԻՍ ՈՒ ԱՐԻՒՆ ԷՔ ՍՏԱՑԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ»

Շաբաթ օրը, 1887 թուականի Սեպտեմբերի 26ի առաւօտեան, Գեղարուեստի ակադեմիայի շէնքին մօտենալ չէր լինի, իսկ տասներկուսի մօտ արդէն, շատ նշանաւոր անձինք ստիպուած եղան մուտքից դեռ շատ հեռու իջնել կառքերից, եւ նրանց լիվրիաւոր սպասեակները դժուարութեամբ էին ճանապարհ բացում խիտ ամբոխի միջով:

Ոչ ոք չէր յիշում, որ Գեղարուեստի ակադեմիայի դռների առաջ այսպիսի բազմութիւն հաւաքուած լինէր: Միայն խոր ծերունիները պատմում էին, որ աւելի քան կէս դար առաջ, երբ արտասահմանից վերադարձել էր Կարլ Պաւլովիչ Բրիւլովը, ճիշդ այսպիսի բազմութիւն ու կառքերի կուտակում էր եղել հրապարակում:

Ճիշդ կէսօրին, Ակադեմիայի Մեծ դահլիճում բացուեց գեղանկարչութեան փրոֆեսօր, գաղտնի խորհրդական Իվան Կոնստանտինովիչ Այվազովսկու գեղարուեստական գործունէութեան 50ամեակին նուիրուած հանդիսաւոր հաւաքը:

Գեղարուեստի ակադեմիայի ուղերձի ընթերցումից յետոյ Այվազովսկուն յանձնուեց Սուրբ Վլադիմիրի 2րդ աստիճանի շքանշան, դիպլոմ Ռուսաստանի Գեղարուեստի ակադեմիայի պատուաւոր անդամի կոչման համար եւ ոսկէ մետալ՝ յոբելեարի դիմանկարով: Ընդսմին, յայտարարուեց ,որ կտրուել էր մէկ ոսկեայ եւ հարիւր պրոնզէ մետալ:

Ապա սկսուեց պատուիրակութիւնների ընդունումը: Յոբելեարին ուղղուած ողջոյնի խօսքով ու նուէրներով հանդէս եկան պատուիրակութիւններ Էրմիթաժից, Գեղարուեստները քաջալերող ընկերութիւնից, Պետերբուրգի համալսարանից, Ռուսական աշխարհագրական ընկերութիւնից, Թէոդոսիայի քաղաքային դումայից, Կայսերական թատրոնների դերասաններից, Ռիգայի «Գեղեցիկ արուեստներ» խմբագրութիւնից եւ այլ կազմակերպութիւններից:

Պատուիրակութիւնների ընդունումը անցնում էր պաշտօնական ու հանդիսաւոր պայմաններում, խստօրէն սահմանուած կարգով: Միայն մի դէպքում խախտուեց այդ կարգը· երբ Այվազովսկուն մօտեցաւ Պետերբուրգի Հայերի պատուիրակութիւնը:

– Մեծարգոյ Իվան Կոնստանտինովիչ: Ահա կէս դար է, որ դուք ծառայում էք գեղարուեստի անդաստանին: Ձեր կեանքի բոլոր այդ յիսուն տարիների ընթացքում դուք ձեր մեծագոյն յաջողութիւններով եւ համաշխարհային փառքով միշտ հանդիսացել էք այն ժողովրդի փառքն ու պարծանքը, որը ծնունդ է տուել ձեզ: Ս. Պետերբուրգի հայկական համայնքը, համարեա ամէն օր ձեզ տեսնելով իր եկեղեցու ծխականների շարքում՝ Կայսերական գեղարուեստից ակադեմիայում ձեր ուսումնառութեան սկզբից մինչեւ օրս, մերձաւորագոյնս ականատես է եղել ձեր գործերին ու վաստակին, ուստի եւ այսօր՝ ձեր գեղարուեստական գործունէութեան 50ամեայ տարելիցի օրը, ձեզ յղում է իր ողջոյնն եւ յարգանաց հաւատիքը: Դուք միս ու արիւն էք ըստացել հայ ժողովրդից: Արդ, ձեր պետերբուրգեան հայրենակիցների կողմից ընդունէք արուեստից այն զէնքերը, որով դուք փառք ու պարծանք բերեցիք ե՛ւ ձեզ, ե՛ւ ձեր ազգին:

Այդ խօսքերի հետ նրանք յոբելեարին յանձնեցին սեւ փայտից սարքուած գեղեցիկ մի մուշտարել եւ արեւելեան ոճով դրուագաւորուած մի մեծ արծաթեայ ներկապնակ, որի վրայ պատկերուած էին Արարատն ու Պետերբուրգի հայկական եկեղեցին, հակառակ կողմում էլ՝ հայերէն գրուած մի ուղերձ՝ ծխականների ինքնագիր ստորագրութիւններով:

Այվազովսկու աչքերը լցուեցին: Իսկ երբ նա, նուէրն ընդունելով խոնարհըւեց եւ խանդաղատանքով համբուրեց սրբազան լեռն Արարատ, սրահում շատերը լաց եղան:

Այվազովսկին հայ ժողովրդի զաւակն էր եւ ամբողջ կեանքի ընթացքում ամէն առիթով ընդգծում էր իր պատկանելութիւնը հայ ժողովրդին: Սրտին մօտիկ էր ընդունում նրա տառապանքները եւ որպէս քաղաքացի ու նկարիչ անում էր ամէն հնարաւոր բան, որպէսզի թեթեւացնէր Հայերի վիճակը: Անկեղծօրէն յուզւում եւ ուրախանում էր, երբ տարբեր մարդիկ կամ առանձին կազմակերպութիւններ օգնութիւն էին ցոյց տալիս նրան: 1858 թուականի Յուլիսի 18ին իր նամակում ուղղուած Նախիջեւան՝ Խալիբեանին, նկարիչը գրում էր. «Ես, ինչպէս եւ իւրաքանչիւրը մեր ազգից, իմ պարտքն եմ համարում շնորհակալութիւն յայտնել ձեզ այն պատրաստակամութեան համար, որ ցուցաբերում էք օգնելու մեր խեղճ ժողովրդին»:

(Շար. 196)

ՃՇԴՈՒՄ

Անուղղակի ճամբաներով կը տեղեկանամ որ Հայկական ծագումով Ֆրանսացի մտաւորականներու կողմէ OSCE–ի ընդհանուր քարտուղարին, 2008 Փետրուար 29ին, ուղղուած ուղերձի մը տակ իմ անունս ալ դրուած է առանց իմ գրաւոր կամ բերանացի հաւանութիւնը առնելու։

Հ. Ց. Վ. ՊԶՏԻԿԵԱՆ

Le jeudi 10 avril à 20h45
Le
Centre Culturel
SAINT MESROB
recevra
MARINA DEDEYAN
pour la présentation de son livre
L'Aigle de Constantinople
(éd. Flammarion)

Marina DEDEYAN, baignant depuis l'enfance en chevalerie et byzantinisme, a déjà publié avec succès Moi, Constance, princesse d'Antioche, se situant dans le même contexte historique.

10 bis rue Thouin - 75005 Paris
Métro Cardinal Lemoine ou Monge
RER Luxembourg
Entrée libre
Signature et vente du livre
Cocktail

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 7

Տօն է Աւետումն Սուրբ Աստուածածնի
Պատարագ՝ ժամը 10ին։

Մեր Եկեղեցւոյ զաւակները կը հրաւիրուին ներկայ ըլլալու եւ միատեղ աղօթելու։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Ալֆորվիլի «Էլէն Բիւզանդ» մասնաճիւղը, իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ տիկ. Լուսիա Ապօճեան–Պաղտիկեանի եւ իր ընտանիքին՝ պրն. Յակոբ Ապօճեանի մահուան առիթով։

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15·30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր)։

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20·30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001)։

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։
դասախօս՝ Հ. Ց. ՊԶՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20·30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A.
« Onnig Surmélian »
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

Informations artistiques

CONCERT
à la Chapelle Sainte Marie
2 rue de l'Abbaye à Antony
(RER B — Antony)
Le Dimanche 6 avril à 18 heures
Avec : Herminé Yerissian, Dominique Hollebeke, Hélène Cospen, André Clouqueur.
Chœur et ensemble vocal de solistes
Orchestre de chambre **Eurydis**
Direction : Dominique Sourisse
Au programme : Bach — Vivaldi.

Réservations: 01 49 73 80 56.

ASSOCIATION ECOLE HAYTAS
et
LA VILLE D'ENGHIEN-LES-BAINS
présentent

LIZ SARIAN

EN CONCERT
AU THEATRE DU CASINO
d'Enghien-les-Bains
Le Dimanche 6 avril à 15h30

LOCATION :
- **Association HAYTAS,** M. KILIMLI Arto **06 09 02 04 54**
- **Magasin B12** à Enghien-les-Bains 06 07 05 82 89
- **Théâtre du Casino d'Enghien-les-Bains** 01 39 34 10 80.

ԱԶԴ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն։ Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին։ Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին։

Հեռ. – 01·53·79·80·69
Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Երկիր եւ Մշակոյթ Կազմակերպութիւն

ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆ

Organisation Terre & Culture

DINER DE SOUTIEN

Le 12 avril à 20 heures
au Novotel Paris-Les Halles
3 place Marguerite de Navarre, Paris 1er
Métro : Châtelet, sortie rue de la Lingerie.

Participation : 65 euros — Etudiants : 45 euros.

Réservations : 01 46 72 84 77 — 01 45 87 27 52 — 01 42 06 74 26.

Les Activités du Mois d'Avril
du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille
Directeur : **Khatchig YILMAZIAN**

— RECITAL DE PIANO
Mickaël EKMEKTCHIAN
Samedi 5 avril à 18 heures
Au Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado — 13008 Marseille
Au programme : Bach — Beethoven — Rachmaninoff...
—— Entrée libre ——

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ–շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90–ամեակին։

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ։

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին։

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ. Մ. Ը. Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,
իր հետ աղօթակից ունենալով նուիրապետական Աթոռներու պահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը։

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ։

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01·43·59·67·03 թիւէն։

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 5-6
SAMEDI-DIMANCHE
5-6 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.932 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 83e ANNEE — N° 21.932

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖԱՐՔ–ը (Գոլոմպիոյ յեղափոխական զինեալ ուժեր) «միամիտ» որակած է Սարքոզին, անոր վերջին վարուելակերպին առթիւ: Սարքոզի իր կոչէն ետք ալ հիւանդապահ օդանաւ մը ղրկած է Գոլոմպիա շփում ստեղծելու համար Ի. Պէթանքուրը առեւանգողներուն հետ: ՖԱՐՔ–ի շրջանակէն յայտարարած են.– «Ցաւ պէտք է յայտնել որ նախագահ Սարքոզի այդքան միամիտ ըլլայ եւ Կարմիր Խաչի միջազգային կոմիտէն ալ ընկերանայ այդ վտանգաւոր արկածախնդրութեան»: Ապրիլ 3ին, Շաւէզ ալ յայտարարած էր թէ պատրաստ է կրկին միջնորդի դեր կատարելու եւ Սարքոզիին հետ երթալ Ի. Պէթանքուրը ազատելու: Կը թուի սակայն, թէ ՖԱՐՔ–ի նոր պայմանները շատ աւելի խիստ են:

ՖՐԱՆՍԱՅԻ լիսէներու աշակերտները կրկին փողոց իջան Ապրիլ 3ին, բողոքելու համար նախատեսուած պաշտօնազրկումներուն դէմ յառաջիկայ վերամուտին: Փարիզ եւ Գրէթէյլ միջադէպեր ալ պատահեցան եւ կարգ մը ցուցարարներ թալանի տուին վաճառատուներ կամ բախումներ ունեցան ապահովութեան ուժերուն հետ: Տարքոս, կրթական նախարարը, անդրդուելի կը մնայ եւ մեծ կարեւորութիւն չի տար այդ ցոյցերուն: Իրեն համար, որոշումը վաւերացուած ալ է Ազգային ժողովին կողմէ:

ՊՈՒՔՐԷՇ գումարուած ՕԹԱՆ–ի վեհաժողովը վերջ գտաւ Ապրիլ 4ին եւ նախքան փակումը, Սարքոզի ճշդեց թիւը այն զինուորներուն, որոնք Աֆղանիստան պիտի ղրկուին: Այդ թիւը 700 է եւ անոնք պիտի գործեն երկրին արեւելեան շրջանը, ինչ որ կը նշանակէ թէ Սարքոզի կրցած է ապահովել որ անոնք պիտի չերթան հարաւային շրջանը, որ շատ վտանգուած է: Հաւանական կը թուի որ Ֆրանսա վերջնապէս վերադառնայ ՕԹԱՆ–ի ծոցը յաջորդ վեհաժողովին, որ կը գումարուի 2009ին Սթրազպուրկ եւ Քեհլ: Ինչպէս նախատեսուած էր, ՕԹԱՆ–ի դուռը փակուեցաւ Վրաստանի եւ Ուկրանիոյ առջեւ, ինչ որ պարտութիւն մըն է Պուշի համար: Ինչ կը վերաբերի Մակեդոնիոյ, որ Յունաստանի վէթոյին պատճառաւ չկրցաւ անդամակցիլ, իր բարկութիւնը արտայայտած է դուռը քաշելով եւ մեկնելով:

ԻՍՐԱՅԷԼԻ սպայակոյտը բաւական մտահոգ է ի տես սուրիական զօրքերու շարժումներուն երկրին հիւսիսային շրջանը: Ըստ Իսրայէլի տեղեկատուական սպասարկութեանց Սուրիա զօրակոչի ենթարկած է պահեստի քանի մը զօրաբաժիններ սահմանին երկայնքին: Իսրայէլի կառավարութիւնը այն մտահոգութիւնն ունի, որ ստեղծուած այս կացութիւնը նախաբան մըն է Հեզպոլլայի մէկ գործողութեան, վրէժը լուծելու համար իր զինեալ թեւին ղեկավարին սպանութեան, որու պատասխանատուն կը նկատէ Իսրայէլի Մոսատը:

ԼԻԲԱՆԱՆԻ բանակին պետը՝ զօրավար Միշէլ Սլէյման ազդարարութիւն մը ըրած է երկրին քաղաքական զանազան հոսանքներուն, որ կրնայ քաշել իր թեկնածութիւնը նախագահական պաշտօնին, եթէ արեւմտամէտ եւ սուրիամէտ կողմերը չհամաձայնին իշխանութեան բաժանման մասին, մինչեւ ամսուան վերջ: Իր այս սպառնալիքը կը նկատուի վերջնագիր մը լիբանանեան Խորհրդարանի երկու կողմերուն: Խորհրդարանն է որ կ՚ընտրէ նախագահը:

ԱԼ–ՔԱԻՏԱՅԻ թիւ 2ը՝ ալ–Զաւահարի համացանցի միջոցաւ պատասխանած է լրագրողներու ըրած մօտ հարիւր հարցումներու: Ճշդած է որ Ուսամա Պէն Լատէն առողջ է եւ այդ մասին եղած շշուկները անհիմն են: Նախատեսուած է նաեւ որ ի մօտոյ վերջն է Սաուտի Արաբիոյ, միապետութիւն մը որ օպատմութեան հոսանքին դէմ կ՚երթայ»:

ՍԹԱՏ ՏԸ ՖՐԱՆՍԻ Մարտ 29ի ֆութպոլի թաժակի մրցումին ատեն պարզուած ցեղապաշտ պաստառներուն դէմ, որ մեծ աղմուկ հանեց ամբողջ շաբաթը, բացուած քննութիւնը առաջին արդիւնք մը տուած է Ապրիլ 4ին: Երեք երիտասարդներ ձերբակալուած են եւ դիպահ կը մնային: Կ՚ըսուի թէ մաս չեն կազմեր Փարի–Սէն–Ժերմէն խումբի համակիր ծանօթ եւ խանգարիչ տարրերուն, բայց կասկած կար որ իրենք բերած էին պաստառի զանազան կտորները:

ԳԵՐՄԱՆԻՈՅ գործազրկութիւնը կը շարունակէ բարելաւման ճամբան բռնել եւ այժմ արդէն (Մարտին) 8%էն վար է: Այս կացութիւնը ցոյց կու տայ որ գերմանական տնտեսութիւնը, հակառակ եւրոյի բարձր սակին եւ ելմտական տագնապին կը շարունակէ տոկալ եւ բարելաւումներ ալ արձանագրել ճարտարարուեստի մէջ:

«ԳԱՆԱՐ ԱՆՇԷՆԷ» երեւան հանած էր (Ապրիլ 2) որ Նիքոլա Սարքոզի յապաղումով (Յունուար 3ին, փոխանակ Դեկտեմբեր 31ի) արձանագրուած էր Փարիզի 8րդ թաղամասի ընտրական ցանկերուն մէջ: Կառավարութեան բանբերը՝ Լիւք Շաթէլ ճշդած է որ թաղամասին ընտրական յանձնախումբը վաւերացուցած էր արձանագրութիւնը: Ընկերվարական երեսփոխան Առնօ Մոնթըպուրի համար պէտք է կրէ այն պատիժը որ սահմանուած է ժամանակաշրջանէն դուրս արձանագրութեան համար:

ԹՈՒՐՔԻՈՅ պատմական 11րդ ատեանը մերժած է Բանուորական կուսակցութեան նախագահ ու յայտնի մխտող Տ. Փէրինչէքի փաստաբանին կողմէ ազատ արձակման դիմումը: Ան ձերբակալուած եւ բանտարկուած էր «Էրկէնէքոն» կազմակերպութեան դէմ բացուած հետաքննութեան շրջանակին մէջ Մարտ 24ի հարցաքննութենէն ետք:

«ԳԱՐԼԱ, ԼՈՆՏՈՆԻ ԹԱԳՈՒՀԻՆ» մերկացուած է Հանրապետութեան նախագահին կինը «Մաչ» շաբաթաթերթին կողմէ որ 14 էջ նուիրած է անոր: Գարլա Պրունի – Սարքոզի լուսանկարիչ Գլոտ Կասեանի դիմած է որ իրեն ընկերանայ Լոնտոն այդ լուսանկարներուն համար:

ԱՄՆ–ու մէջ «Ատելութեան խմբակները» կը բազմանան ըստ Սաութըրն Փովըրթի Լօու Սէնթրի հրատարակած քննութեան, որ 2000էն ի վեր 48%ի յաւելում մը կը նկատէ այն խմբակներուն, որոնք ցեղային ատելութիւն կը հրահրեն ճիշդ այն օրերուն, որոնք կը զուգադիպին Մարթին Լութըր Քինկի մահուան 40րդ տարելիցին: 2007ին այդ խմբակներուն թիւը 888ի հասած էր եւ կը բացատրուի նաեւ նոր խումբերու ստեղծումով գաղթողներու դէմ:

ՊՈՒՔՐԷՇ

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ս. Սարգսեան որ Ապրիլ 3ին Պուքրէշ կը գտնուէր ՕԹԱՆ–ի վեհաժողովին առիթով, հոն հանդիպում ունեցած է Մինսկի խումբի երեք նախագահներուն հետ: Կողմերը ընդհանուր արժեւորում մը ըրած են Ղարաբաղի հակամարտութեան բանակցութիւններուն ներկայ վիճակին: Երեք նախագահները ներկայացուցած են Ադրբեջանի նախագահին հետ նախորդ օրուան իրենց հանդիպումին արդիւնքները:

Հանդիպումին Հայաստանի նորընտիր նախագահը մտահոգութիւն արտայայտած է Բաքուի դիւանագիտական քայլերուն, Ղարաբաղ – Ադրբեջան սահմանին վրայ հրադադարը բռնաբարելու փորձերուն մասին. կրկնած է նոյն ատեն թէ Հայաստան յանձնառու կը մնայ հակամարտութիւնը հաշտարար ճամբով եւ Մինսկի խումբին միջնորդութեամբ լուծելու սկզբունքին:

Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներուն հետ տեսակցելէ ետք Մինսկի խումբին նախագահները յայտարարութիւն մը հրապարակած են: Հակամարտութեան խաղաղ ճամբով լուծումի համաձայնութենէն զատ նշում կայ Ադրբեջանի հողային ամբողջականութիւնը պաշտպանելու. ըսուած է նաեւ թէ խաղաղ կարգաւորումը կը պահանջէ Ղարաբաղի կարգավիճակին հարցով փոխադարձ զիջումի համաձայնութիւն, բնակչութեան ապագայ հաւանութեան ակընկալութեամբ:

Նախագահները յայտնած են որ կողմերը համաձայն են բանակցութիւնը շարունակելու. առ այդ անհրաժեշտ կը նկատուի նախագահներու մակարդակով անյապաղ հանդիպում կազմակերպել:

Ադրբեջանական մամուլը կը գրէր թէ Մինսկի խումբին յայտարարութեան մէջ Ադրբեջանի հողային ամբողջականութիւնը պաշտպանելու նշումը արդիւնք եղած է Ի. Ալիեւի խիստ ու քննադատող կեցուածքին: Ան երեք նախագահներուն հետ հանդիպումին կրկին նիւթ ըրած է ՄԱԿ–ի ընդհանուր ժողովին օրակարգին առնուած «Ադրբեջանի գրաւեալ տարածքներու կացութեան» բանաձեւին Ֆրանսայի, Ռուսաստանի ու ԱՄՆ–ու դէմ քուէն ու բացատրութիւն պահանջած այդ մասին:

ԲԱՔՈՒ

ԵԹԷ ԻՍՐԱՅԷԼ ՃԱՆՉՆԱՅ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ...

Բաքուէն անմիջապէս հակազդած են Ցեղասպանութեան ճանաչումի նիւթով Իսրայէլի խորհրդարանին մէջ տեղի ունեցած վիճարկումին: Երեսփոխան Ֆ. Կաղանֆարօղլու ըսած է թէ եթէ այդ ճանաչումը տեղի ունենայ, Պաղեստինցիներու ցեղասպանութեան բանաձեւ մը կը յղուի Ադրբեջանի խորհրդարանին: 1967էն ի վեր Պաղեստինցիներու հանդէպ Իսրայէլի վերաբերումը ցեղասպանութիւն համարող փաստաթուղթ մը պատրաստուած է, բայց չէ յղուած Ազգային ժողովին, պարզապէս Իսրայէլի հետ յարաբերութիւններուն վնաս չտալու մտահոգութեամբ: Երեսփոխանը վըստահ է թէ բանաձեւը օրակարգի առնուելու պարագային հարկաւոր զօրակցութիւնը պիտի ունենայ եւ Իսրայէլ պիտի մեղադրուի որպէս ցեղասպանութեան հեղինակ:

ՄՈՍԿՈՒԱ

ՌՈՒՍԱՍՏԱՆ–ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿ

Ռուսաստանի խորհրդարանի փոխ նախագահ «Միասնական Ռուսաստան» խմբակցութեան անդամ, երեսփոխան Լ. Սլիսկա յայտարարած է թէ Ռուսաստան պէտք է միութենական պետութիւն ստեղծէ Հայաստանի հետ: Առաջարկը հիմնուած է Ռուսաստան – Բելառուս միութեան դանդաղ ընթացքին վրայ, այն նկատումով որ եթէ այդ մէկը չի յաջողիր, Ռուսաստան պէտք է այլ ուղղութեամբ քայլեր փորձէ: «Մենք պէտք է միութիւն կազմենք, օրինակ, Հայաստանի, կամ որեւէ ուրիշ պետութեան մը հետ որ բարեկամական կեցուածքի տէր է Ռուսաստանի նկատմամբ» ըսած է երեսփոխանը:

Ռուսաստան – Բելառուս – Հայաստան միութեան մը գաղափարը արծարծուած էր 1997ին եւ Հայաստանի մէջ քաղաքական դէմքեր ստորագրութիւններ հաւաքած էին այդ գաղափարին որպէս զօրակցութիւն: Ըսուած էր որ մօտ մէկ միլիոն հոգի ստորագրած էր բացուած հանրագրութիւնը:

ՔԻՐՏԻՍՏԱՆԻ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՀԱԲԵԿԻՉ ՉԷ

Եւրոպական միութեան Արդարադատատեանը Ապրիլ 3ին բեկանած է 2002ի վճիռ մը որով Քիւրտիստանի բանուորական կուսակցութիւնը (ՓՔՔ) եւ քըրտական այլ կազմակերպութիւն մը «ահաբեկչական կազմակերպութիւն»ներու շարքին դասուած էին: Այդ որոշումով զոյգ ազմակերպութեան եւրոպական դըրամատուներու մէջ ունեցած հաշիւներն ալ արգելքի տակ դրուած էին:

Նոր որոշումը արդիւնք է ՓՔՔ–ի ներկայի ղեկավար Օսման Էօճալանի բողոքին: Ան եղբայրն է Թուրքիոյ մէջ ցմահ բանտարկութեան դատապարտուած ու կղզիի մը վրայ մեկուսացուած Ապտուլլահ Էօճալանի: Եւրոպական ատեանը 2002ի վճիռը բեկանած է, այն պատճառաբանութեամբ որ նման քայլի մը համար բաւարար հիմնաւորում չկար:

Բեկանումը ցնցող հակազդեցութեան պատճառ եղած է Անգարայի շրջանակներուն մօտ: Ընդդիմութիւնը պահանջած է որ անմիջապէս վերաքննութեան առնուին Եւրոպական Միութեան հետ Թուրքիոյ յարաբերութիւնները. իսկ իշխանութիւնը կը փորձէ վճիռին տարողութիւնը արհամարհել, ջանալով համոզել թէ նոր վճիռը չի նշանակեր անպայման որ ՓՔՔ պիտի հանուի ահաբեկչական կազմակերպութիւններու ցանկէն:

ԾԱԽՈՒ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՆԵՐ

Սոթպի՛զ աճուրդի տունը որոշած է Ապրիլ 15–16ին Նիւ Եորքի մէջ աճուրդի դնել Այվազովսկիի երկու պաստառներ. «Պարէնի բաշխում»ը եւ «Օգնութեան նաւը»: Իւրաքանչիւրին համար նախատեսուած է որ երկու միլիոն տոլարի կը վաճառուին:

Այվազովսկի այդ գործերը նուիրած է Ուաշինկթընի պատկերասրահներէն մէկուն: Ներկայիս նոյն աճուրդին դըրուելիք բոլոր պաստառները, ներառեալ Այվազովսկիները, կը ցուցադրուին Մոսկուայի մէջ:

ՏԽՈՒՐ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԿԱՄ Ի՛ՆՉ ՄՆԱՑ ՅԵՏԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՅՑԵՐԷՆ

«Ես կեանքում առաջին անգամ չասացի, որ Ղարաբաղցի եմ: Հարցրեցին՝ ո՞րտեղացի ես, ասացի՝ արովեանցի եմ»,— «Արմենիա-Նաու»ի լուսանկարիչ Անահիտ Հայրապետեանը պատմում է, թէ ինչպէս Մարտի 1ին Միասնիկեանի արձանի մօտ իւրաքանչիւր լուսանկարչի ու լրագրողի հարցնում էին, թէ որտեղացի է՝ կատաղած նրանց մէջ Ղարաբաղցի փնտռելով:

Ապատեղեկատուութիւն էր տարածուել, թէ առաւօտեան Ազատութեան հրապարակի նստացոյցը ցրողները խօսում էին Ղարաբաղի բարբառով:

Բայց դա պատահական չէր, դա Լ. Տէր Պետրոսեանի շարժման առաջացրած այլատեացութեան դրսեւորումն էր, որի թիւ մէկ թշնամին՝ դարձան Ղարաբաղցիները:

Յաջորդ օրը՝ Մարտի 2ին, Թաքսու վարորդը, քշելով Մաշտոցի աւերուած պողոտայով, ցոյց էր տալիս խանութներն ու բացատրում, թէ որը ումն է՝ ուզելով արդարացնել թալանը՝ սա Լֆիկինն է, սա էլ՝ Ղարաբաղցու: Լֆիկը օլիգարխ Սամուէլ Ալեքսանեանն է, ապարանցի: Իսկ ի՞նչ կապ ունի Ղարաբաղցին: Վարորդը շարունակում է, որ պէտք է Ղարաբաղցիներին քշել:

Մարտի 2ի առաւօտեան ընդհարման վայրի մօտակայքում մայթի սալայատակին ուսումնասիրող մի մարդ տեսաւ պահակութիւն անող զինուորներին եւ առանց կոնկրետ որեւէ մէկին նկատի ունենալու նետեց նրանց ուղղութեամբ. «Ղարաբաղցի շներ»:

Սրանք միակ դէպքերը չեն, դարձել է վերջին շարժման ընթացքում տարածուած կարծիք:

...Հակաղարաբաղեան այլատեացութեան գագաթնակէտը հասաւ փետրուարեան յետընտրական միտինգներին, երբ Օփերայում մի դասախօս հրապարակում էր այն ուսումնական հաստատութիւնների ղեկավարների անունները, որոնք պէտք է պատժուեն՝ զանգուածի բուռն աղաղակների ներքոյ շեշտելով նրանց Ղարաբաղցի լինելը, իսկ մի ուրիշ հռետոր էլ յայտարարեց. «Այս հրապարակում հաւաքուած հայորդիները 3 անգամ աւելի շատ են, քան Ղարաբաղի քաղաքացիները, կեցցեն հայորդիները»:

Ագրեսիայի դէմ որպէս բողոք՝ բլոգներից մէկում ոչ Ղարաբաղցիները սկսեցին յայտարարել՝ ես Ղարաբաղցի եմ, ինչպէս Տինքի սպանութիւնից յետոյ Թուրքերը յայտարարում էին՝ ես Հայ եմ:

Մարտի 1ին կիրառուեց 5 ամսուայ քաղպարապմունքի արդիւնքը՝ Մոլոտովի կոկտեյլների ու ձողերի տեսքով: Զանգուածը յարձակւում էր ոստիկանների վրայ՝ գոչելով. «Թուրքեր, Ղարաբաղցիներ, հեռացէք»: Ասում են, թէ այդ օրը կոտրուեց հայ ժողովրդի ոգին, եթէ կոտրուեց, ապա դա գուցէ այլատեացութեան ոգին էր:

...Սեփական քաղաքացիներին ողջակիզելու ժամանակներն անցել են, բայց հալածանքների ու կորուստների հաւանականութիւնը մնում է, եւ կանխագուշակելի է, որ Լ. Տէր Պետրոսեանի յաղթանակից յետոյ «դաւաճանների» որս կը սկսուէր, եւ հազարաւոր Ղարաբաղցիներ անհայրենիք կը մնային ու կը քոչէին այն երկիրը, որը նրանց սիրով չէր ընդունելու:

Բայց վտանգը չի վերացել. երկու օր առաջ Ծանօթիս հարեւանը չի թողել սրսկել իրեն ու տնից դուրս է արել շտապօգնութեան բուժքրոջը, երբ պարզուել է, որ նա Ղարաբաղցի է:

* * *

Ղարաբաղում բոլորն ուշադիր հետեւում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին, սակայն մեղաւորներին որոշելիս ելնում են բացառապէս Ղարաբաղի անվտանգութեան շահերից:

Այստեղ ակնյայտօրէն տեղեակ են Հայաստանում Ղարաբաղցիների նկատմամբ վերաբերմունքի վատացմանը: Սակայն դա Ղարաբաղում ամենաշատ քննարկուող թեման չէ, ոչ թէ որ չի յուզում, այլ որովհետեւ շատերը նախընտրում են բարձրաձայն չխօսել այդ մասին:

...Այն մարդիկ, ում «Արմենիա-Նաու»ն հարցերով դիմում էր Ստեփանակերտում, սկզբում այդ թեմայով ընդհանրապէս չէին ուզում խօսել՝ ասելով, որ բոլոր Հայերին պէտք է չպառակտուելու կոչ անել:

«Անցեալ ամրանը Երեւանում էի, եւ Ղարաբաղցիների մասին երեւանցիների կարծիքն իմացայ մի ծանօթից,— ասում է 53ամեայ Մարինա Մկրտչեանը:— Պարզւում է՝ Երեւանում մարդիկ կարծում են, թէ Ղարաբաղցիներն ապրում են լիութեան մէջ, որ ղարաբաղցի Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը Հայաստանցիների ամբողջ վաստակածն ուղարկում են Ղարաբաղ, ու այնտեղ մայթերը մարմարից են, ռեստորանները, Աստուած գիտէ, թէ ինչպիսին են, որ բոլորը ջիփ են քշում: Ես պարզապէս հրաւիրեցի նրան մեր տուն: Ի հարկէ, չեկաւ, բայց, կարծում եմ՝ սկսեց կասկածել Երեւանում տարածուող ասեկոսէներին»:

...«Քոյրս ապրում է Երեւանի կենտրոնում: Մենք Բաքուից ենք,— ասում է 46ամեայ Վիաչեսլաւ Սերոբեանը:— Արտակարգ դրութիւն յայտարարելու օրը քոյրս զանգահարեց ու ասաց, որ քաղաքում լուրեր են տարածուել, թէ գիշերը Ղարաբաղցիների տների վրայ յարձակուելու են: Նա լաց էր լինում ու յիշում էր Բաքուի ջարդերը: Ես հանգստացրի նրան ու ասացի, որ դա հնարած բան է, եւ այդպիսի բան հնարաւոր չէ: Ամէն դէպքում՝ տհաճ նստուածքը մնաց»:

* * *

Այս հատուածները առնուած են «Արմենիանաու»ի Մարտ 28ի թիւին մէջ տեղ գտած երկու գրութիւնէ: Առաջինը ստորագրուած է Վահան Իշխանեանի, երկրորդը՝ Թերթին Արցախի թղթակիցին՝ Նայիրա Հայրումեանի կողմէ: 1988ին, 1989ին, երբ այնքան հպարտութեամբ, խանդավառ պոռթկումով սկիզբ կ'առնէր «Ղարաբաղեան շարժում»ը, կարճ ժամանակի մէջ կը մաքրէր, կը բիւրեղացնէր հոգիները ամէն ոխէ, ատելութենէ, տասնամեակներու մուր ու սուգերէն, ո՞վ կրնար, կը համարձակէր, երեւակայել թէ Շարժումին քսանամեակը պիտի զուգադիպէր նոյն երկու հատուածներուն միասնութիւնը փոխարինած պառակտումի երեւոյթին: Ան, Երեւանի փողոցներուն մէջ այնքան ձրիօրէն ինկած ութ զոհերով, նոյնիսկ չարտօնեց քսանամեակին արժանավայել նշումը. ոչ ոք սիրտ ունէր ատոր: Եղան պարագայական խօսքեր, գրութիւններ, բայց բոլորին վրայ ինկած էին ութ զոհերուն ստուերները:

Առանց երկրաշարժին, Թուրքին, Ազրպէջանցիին, ի՞նչպէս հասանք հո՛ս: Ոչինչ կը թուի բաւարար արդարարութիւն ըլլալ մէկուն ու միւսին, անդրադառնալու ներկայի անդունդին մէջ իրենց բաժինին, դարմանի անհրաժեշտութեան:

Անդունդը որ բացուեցաւ անկախութեան 16 տարուան անխոհեմ, անփոյթ, եսամոլ, հատուածական, կարճատես քայլերով ու անոնց ամէն մէկուն ձգած փոսերը չհարթելու վերջին պահու ապարդիւն փորձի մը աւերով:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ԽԱՐԽԱՓՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՇՈՒՐՋ ԵՒ ՊԱՌԱԿՏԵԼՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Ինչե՞ր կ'ըսուին Արցախի մասին, ապարդիւն բանակցութիւններ կը շարունակուին, հայկական կողմը ազգային յստակութեամբ չի ներկայացներ իր տեսակէտները, արտաքին ուժեր կը հետապնդեն հակամարտութեան լուծումներ՝ տարբեր շահերէ մեկնելով, որոնք ոչ մէկ կապ ունին սկզբունքներու, արդարութեան, իրաւունքի եւ ճշմարտութեան հետ: Եզրակացութիւնը այն է որ Թուրք-ազրպէջանական համաթրքական նպատակներու տէր ճակատը, իր հին ու նոր դաշնակիցներով, կը շարունակէ զինուորական եւ քաղաքական ճնշումները, վերատիրանալու համար հայաշխարհի բռնագրաւուած բեկորներէն հանդիսացող ազատագրուած Արցախի:

Ինչո՞ւ մեզի կը պակսի քաջութիւնը ազատագրուած Արցախը իր անունով կոչելու, հրաժարելով օտարի տիրապետութեան հետեւանքով պարտադրուած «Ղարաբաղ»էն: Այս կ'ըլլայ հոգեբարոյական վերականգնումի քայլ, մենք մեզի եւ աշխարհին ըսելու որ Արցախը Հայաստան է: Ի՛նչ փոյթ որ այս քայլը նոր տեսակի անհասկացողութիւններու դուռ պիտի բանայ, բայց անոնք ժամանակաւոր պիտի ըլլան, մարդիկ պիտի վարժուին: Արցախ ոչ առաջին եւ ոչ վերջին շրջանը պիտի ըլլայ իր պատմական եւ հարազատ անունը վերագտնող: Գաղութարարներու կողմէ Ափրիկէի եւ Ասիոյ կարգ մը երկիրներու պարտադրուած անունները փոխուեցան եւ աշխարհ փուլ չեկաւ: Հետեւաբար՝ որդեգրել ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ անուանակոչումը: Պարզին վսեմութեամբ:

Մինսկի խումբի անդամները եւ անոնց համանախագահները դժուար թէ յիշեն թէ քանի տարիէ ի վեր կը տեւեն բանակցութիւնները, եւ մանաւանդ ո՞վ կրնայ ըսել թէ ինչ են արդիւնքները: Գէթ մենք պիտի ըմբռնենք որ այդ անդադրում երթեւեկի նպատակը ոչ արդարութիւնն է եւ ոչ խաղաղութիւնը: Տարբեր շահերու ծառայելու կոչուած պալար մը կը պահուի, բժշկութեան մէջ կը խօսին abcès de fixation-ի մասին: Հայկական կողմն ալ, Հայաստան, Արցախ եւ քիչ մըն ալ Սփիւռք, այդ երթեւեկով կը զբաղին, տպուած թուղթին եւ խօսքերու նիւթ կը մատակարարեն, այդ զբաղումն ալ կը կոչեն դիւանագիտութիւն կամ քաղաքականութիւն: Մինչդեռ, շարժման առաջին օրերուն քուէարկուած որոշում կայ, որ փոփոխութեան չէ ենթարկուած: Հայաստանի եւ Արցախի ընտրուած ներկայացուցիչները քուէարկած էին ՄԻԱՑՈՒՄ-ը: Ինչպէ՞ս կարելի է հասկնալ կամ արդարացնել այդ որոշման սառեցումը: Եթէ այդ որոշումը գործադրուի բարդութիւնները կ'աւելնա՞ն թէ կը նուազին: Այդ սառեցումը ունեցած է եւ ունի բացասական հետեւանք. Ազրպէջան կը կառչի կացութիւնը անդառնալի չհամարելու նուազագոյն յոյսին, եւ երբեմն կը ձեռնարկէ սահմանային միջադէպերու ստեղծման:

Հայաստանի Հանրապետութեան մէջ տեղի ունեցած նախագահական ընտրապայքարը ցոյց տուաւ ներազգային ճակատի անորոշութիւնը, որուն հետեւանքով խարխափումները կը շահագործուին հակահայ ուժերու կողմէ, որոնք բացորոշ կերպով թրքամէտ են, եւ կը պատուաստուին ապազգային նկարագիր ունեցող մրցակցութիւններու վրայ, որոնց արտայայտիչն էր եւ շարունակէ ըլլալ Լեւոն Տէր Պետրոսեան, իր համախոհներով: Տակաւին յստակութեամբ չխօսուեցաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութեան յաջորդող խառնակութիւններու ետին կանգնող ուժերու մասին, թէեւ քաղաքական կեանքին հետեւողներ, նոյնիսկ ցոյցերու պատկերները դիտողներ, իրականութենէ հեռու չեղող իրենց վերլուծումները կը կատարեն: Հայկական ճակատը կը տկարացնենք երբ ազգային բովանդակութեամբ հետաքրքրութիւնները տեղի կու տան: Եթէ ազգի եւ հայրենիքի ամբողջացման հեռանկարը բացակայի, եթէ դադրինք հողահաւաքի եւ հայահաւաքի առաջադրանքները հասարակաց պատուանդան համարելէ, հայութեան թշնամիները բնական է որ փորձեն պղտոր ջուրի մէջ ձկնորսութեան իրենց քաղաքականութիւնը: Երբ զանազան վայրերաններ կը յայտարարեն որ Հայաստան հողային պահանջներ չու-

Ի՞ՆՉՊԷՍ ԵՍ

ՍԻՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Քայլում եմ Պոլսի փողոցներով: Մարդկային խօսքից եռացող կեդրոնում չեմ; Սկիւտարում չեմ եւ ո՛չ էլ Հին Փէրայում: Արուարձան գուցէ կարելի է համարել Կինէչլին, ուր շէնքերը շքեղ չեն, փողոցները մաքուր չեն, ոչ մի ծաղկաթումբ չկայ, ուր աւելի շատ պուլղար եկուորներ են ապրում, ու ոչ մի Հայ չկայ: Զանձրոյթից քայլում եմ ու նայում գոյնզգոյն ցուցափեղկերին, մէկ-մէկ ներս մտնում, առանց որեւէ բան գնելու մտադրութեան հարցուփորձ անում վաճառողներին եւ օրիորդներին:

Դիմացս փոխ մարմնով, ոչնչով աչքի չընկնող օրիորդ մըն է: Չեմ գիտեր, թէ անոր ինչը գրաւեց ուշադրութիւնս, պահ մը զննեցի անոր խոշոր սեւ աչքերը, համեստ կեցուածքը, քիչ մը վախեցած հայեացքը եւ ուր որ է հարցում պիտի ընէի՝ «ո՞ւրկից ես», ան կանխեց հարցումս՝ «ո՞ւրտեղացի ես»:

— Հայաստանէն եմ,— ըսի:

— Հա՛, ես էլ Տիյարպաքըրից եմ:

— Ի՞նչ ազգութեան կը պատկանիս, հարցրի երանաւէտ մի յոյսով:

— Քուրտ եմ, ըսաւ ու երեւի զգալով հոգեւոր փլուզումս, կամացուկ աւելացրեց:

— Մեծ մայրս ու հայրս Հայ եղած են:

Ոտքից գլուխ ցնցուեցի պատասխանից: Աս աղջիկը մէկն էր հազարաւորներից, որոնք մոռացել կամ թէ սովորել են մոռանալ իրենց Հայ ըլլալը:

- Դուն հայերէն չե՞ս գիտեր...:

— Ո՛չ մերոնք Թրքերէն կը խօսէին:

Լռեց մի պահ, մի բան յիշողի նման աչքերը հեռուները յառեց ու մի քիչ ետքը ցանկութիւնս բաւարարել ուզելու եղանակով աւելացրեց.

— Մի ուրիշ լեզուով էլ կը խօսէին:

— Ի՞նչ է այդ լեզուն, վերջին մի յոյսով հարցապնդեցի ես:

— «Հէմշինճէ»...:

Բառը ծանօթ էր Պատկանեանի՞ց, թէ Րաֆֆուց, չեմ յիշում, բայց իմաստը չգիտէի: Հայրենակից» ազգակից նշանակութեամբ է մնացել յիշողութեանս մէջ:

— Բառ մը կրնա՞ս ասել, բան մը կը յիշե՞ս...:

Պատասխանը այդ խանութը, այդ փոշոտ փողոցները, ոչ մի Հայ իր մէջ չունեցող Կինէչլին լցրեց արեւով ու ջերմութեամբ:

— «Ի՞նչպէս ես»...:

Օտարահունչ ասաց նա:

Զգիտեմ՝ ինչպէս դրկեցի աղջկայ փոխ մարմինը, ինչպէս խնդացի ու լացի՝ մի քանի անգամ կրկնելով՝

— Ի՞նչպէս ես, ի՞նչպէս ես...:

— Առաջին հանդիպած Հայս Իսթանպուլում: Միտքս եկան Սիլվա Կապուտիկեանի, Վարդգէս Պետրոսեանի եւ այլոց գրքերում ժամանակին կարդացած նմանատիպ պատմութիւնները:

Կրկնութի՞ւն է սածս:

Այո՛ կ'ասէք:

Այո՛, բայց սա ի՛մ առաջին հանդիպումն է ինքս ինձ հետ՝ որպէս երկու կտրուած լարերի հանդուցակէտ: Սա իմ առաջին կենդանի հանդիպումն է 15 թուականի ու դեռ շարունակուող Եղեռնի հետ:

Ուշացա՞ծ են արդեօք մարմնիս ու հոգուս շանթահարումները:

Ո՛չ, անխախտ համոզում ունեմ:

Այսպէս է, որ պիտի շարունակուի «նահանջ առանց զէնք»ի ցաւի գիտակցութիւնը, այսպէս է, որ թէկուզ ուշացումով, կենդանի մարմին պիտի ստանայ արեան կանչի պատասխանատուութիւնը ու փոխանցուի թոռներիս, որ ուր էլ լինեն, ո՛ր հողի վրայ էլ, մի Հայ տեսնելիս հարցնեն մէկ մէկու՝ ո՞րտեղից ես, ու սպասեն մէկ պատասխան՝ Հայաստանից...:

«Ակօս»

նի, տրամաբանական հետեւութիւնը կ'ըլլայ այն որ՝ ինչո՞ւ պահել Արցախը:

Բարեխրութիւնը, կողմնապաշտութիւնը, զգացական հայրենասիրութիւնը, ազգային-մշակութային ենթահողի բացակայութիւնը, տեսակաւոր գործնապաշտութիւնները եւ հանգամանքի որսորդութիւնները նկուղի մէջ կը բանտարկեն ազգային գաղափարախօսութիւնը եւ ազգային հաւաքականութիւնը, Հայաստան եւ Սփիւռք, եւ ազգի լինելութիւնը, կ'առաջնորդեն անելի: Լեւոն Տէր Պետրոսեանի եւ Աշոտ Բլէեանի բացորոշ կերպով թրքամէտ եւ պարտուողական քաղաքականութիւնը ընթացած էր միակողմանի զիջումներու ճամբով, առանց նուազագոյն փոխադարձութեան արդիւնքի: Ռոպէր Քոչարեանի իշխանութեան տասը տարիներուն, ներազգային ճակատի ամրացումը, Հայաստանի հանրապետութեան վերականգնումի ընթացքը, եւ հայամէտ քաղաքականութիւնը հաճելի չէին ոչ թրքական ճակատին եւ ոչ ալ անոնց ետին կանգնող ուժերուն, որոնք չվարանեցան երկիրը ապակայունացնելու նախաձեռնութիւններու դիմելու: Արդիւնքը ծանօթ է:

Զարմացնող երեւոյթներու եւ արտայայտութիւններու ականատես եւ ականջալուր եղանք: Խըմբակներ գործի լծուեցան, նաեւ Սփիւռքի մէջ, որոնք իրենց մէկ ձեռքի մատներուն վրայ հաշուուող անդամներով, համացանցային նամակներ տեղացուցին, յայտարարելով որ Սփիւռքի այս կամ այն համայնքը դէմ էր կամ զօրավիգ... Ուրկէ՞ կ'առնէին այդ լիազօրութիւնը.. կամ ո՞վ եւ ո՞րնք կը թելադրէին, որ ոչ-հայկական ուժեր կային իրենց ետին: Դեռ չեմ խօսիր երեւելի դառնալու անհատական ցանկութիւններու եւ ազգականական-բարեկամական կապերու բացասական դերի մասին, որ կը բխի քաղաքական տհասութենէ:

Յաճախ կրկնած եմ, որ փոքր ժողովուրդները մեծերու ակումբին մէջ դիւանագիտական պարի պարկոթ չեն կրնար ըլլալ: Ուստի, ամենայն յստակութեամբ, գէթ մեր ներքին ճակատի ամրացման համար, ոչ միայն այսօրուան նպարավաճառային շահերու, այլ տոկալու եւ տեւելու կամքին, պէտք է ըսենք որ Արցախ եւ Հայաստան մէկ են, եւ հայ ժողովուրդը Ցեղասպանութեան հոգեպարար ճանաչումէն անդին՝ կը հետապնդէ Միացեալ Հայաստանի երազի իրականացումը, որպէսզի հողահաւաքը եւ ազգահաւաքը դառնան Հայոց ազգային քաղաքականութեան առանցքները:

Առանց կախարդի աշկերտ կամ ալշիմիստ ըլլալու:

Յ. Պ.

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍ ՎԵՑԵՐՈՐԴ

«ԴՈՒՔ ՄԻՍ ՈՒ ԱՐԻՒՆ ԷՔ ՍՏԱՑԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ»

Մեծ դահլիճում հանդիսաւոր հաւաքը տեւեց մինչեւ ուշ երեկոյ: Արտասանւեցին ճառեր, ընթերցուեցին աշխարհի բոլոր անկիւններից յղուած ողջոյնի խօսքեր: Միայն հեռագրեր՝ ստացուել էին աւելի քան հինգ հարիւր: Այվազովսկին այդ օրը ինքը էլ նուէր մատուցեց Ակադեմիային. իր վերջին մեծադիր նկարը՝ «Պուշկինը Սեւ ծովի ափին Օդեսայում»: Կտաւը հոյակապ էր. փիրեղեայ-թափանցիկ ալիքը խոնարհել է Պուշկինի ոտքերի տակ, ասես ուզենալով անվերջ փարուել պոէտին: Բոլորից երկար նկարով հիանում էր Ռեպինը: Շնորհաւորելով Իվան Կոնստանտինովիչին՝ Իլյա Էֆիմովիչը յայտարարեց.

— Վերջերս մենք Ձեզ հետ, երկուսով պատկերեցինք Ալեքսանդր Սերգէեւիչին ծովին հրաժեշտ տալիս: Այժմ ես ուղղակի ծարաւի եմ պատկերելու Ձեզ, Իվան Կոնստանտինովիչ, Ձեզ՝ Ձեր սիրելի Սեւ ծովի ափին: Միայն թէ... դա շատ վախենալու է. դիմանկարից մի կերպ գլուխ կը հանեմ, իսկ ծովը՝ այդ մէկը չգիտեմ ինչպէս կը ստացուի, մանաւանդ որ սիւժէն ինքը չափազանց պարտաւորեցնող է՝ Այվազովսկին եւ ծովը:

Նոյն օրը, հանդիսաւոր հաւաքից յետոյ, ճաշկերոյթ տուեց Այվազովսկու պատուին: Այն կայացաւ Պետերբուրգի ամենամեծ սալոններից մէկում՝ Պալովայի սրահում: Ճաշկերոյթի կազմակերպիչները ջանք չէին խնայել ամենահետաքրքիր ձեւով զարդարելու սրահը՝ պատերին ամէնուրեք կախուած էին տարբեր ազգութիւնների նաւատորմերի եւ ազգանշանային դրօշներ, իսկ դահլիճի մէջտեղում փառաւորապէս բազմել էլ հոյակապ մի ֆրեգատ՝ լրիւ նաւահանդերձով:

Այվազովսկին մեծապէս յուզուած էր իր ծառայութիւնների հանդէպ նման ուշադրութիւնից:

Առանձնապէս յուզմունք պատճառեցին երկու շնորհաւորանք. մէկը Բոգոլիւբովից ստացուած հեռագիրն էր: Ռուս նկարիչների միութիւնը Փարիզում, որի նախագահն էր Ալեքսէյ Պետրովիչը, գրում էր Ակադեմիայի կոնֆերենց-քարտուղար Պիոտր Ֆիոդորովիչ Իսաեւին.

«Ձերդ գերազանցութիւն Պիոտր Ֆիոդորովիչ,

Քանի որ Դուք գործուն մասնակցութիւն ունէք փրոֆէսէօր Ի. Կ. Այվազովսկու յիսնամեայ գործունէութեան յոբելեանի կազմակերպման մէջ, Փարիզի ռուս նկարիչների միութիւնը դիմում է Ձեզ՝ խոնարհաբար խնդրելով Միութեան անունից Իվան Կոնստանտինովիչին յայտնել իրենց խոր եւ ամենաակեղծ յարգանաց հաւաստիքը Նրա փառապանծ գեղանկարչական գործունէութեան յիսնամեայ յոբելեանի առթիւ՝ գործունէութիւն, այնքան փառաբանուած ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ արտասահմանում»:

Միւսը կարճառօտ մի հեռագիր էր, որը Ղրիմից նրան էր ուղարկել հայ անւանի ողբերգակ դերասան Պետրոս Ադամեանը.

«Ցանկանում եմ Ձեր այսօրուայ փառքի դափնեպսակին այնքան փայլ, ինչքան կեանք կայ Ձեր հանճարեղ վրձնով ստեղծուած ալիքներում

Դերասան Ադամեան»

Թանկագին այս խօսքերով հեռագիրը գրուած է նկարչի առջեւ. մտքերը նրան տանում են հեռու-հեռու: Նա կրկին ու կրկին յիշում է իր առաջին հանդիպումը Ադամեանի հետ:

1883ին էր դա, ձմրան վերջին: Այվազովսկին սովորականի նման պատրաստւում էր մեկնել Թէոդոսիա, որպէսզի գարունը դիմաւորէր Ղրիմում: Բայց հէնց այդ ժամանակ Մոսկուայից լուր ստացուեց, որ այնտեղ մեծ յաջողութեամբ ելոյթ է ունենում հայ դերասան Պետրոս Ադամեանը: Այդ անունը վաղուց էր ծանօթ Այվազովսկուն: Նա լսել էր նրա փայլուն ելոյթների մասին Թիֆլիսում, Նոր Նախիջեւանում: Բայց մինչեւ հիմա բախտ չէր ունեցել տեսնելու նրան: Եւ ահա դերասանը Մոսկուայում էր. նրա մասին հիացումով էին գրում մոսկովեան լրագրերը, յատկապէս Համլէտի նրա դերակատարման մասին. գրում էին, որ հայ դերասանն իր խաղով գերազանցում էր այնպիսի իտալական խոշոր բեմականների, որպիսիք էռնէսթօ Ռոսսին եւ Սալվինին են: Շատ չանցած, նամակ ստացուեց նաեւ Յովհաննէս Անանովից: Վաղեմի բարեկամը, որի տանը հաւաքւում էին շատ ու շատ անուանի հայ արուեստագէտներ, յորդորում էր Այվազովսկուն գալ Մոսկուա: Նա յայտնում էր, որ Մարտի 6ին նշանակուած է «Դիմակահանդէս»ի ներկայացում, եւ որ Ադամեանն առաջին անգամ հանդէս է գալիս Արբենինի դերով:

Գայթակղութիւնը մեծ էր: Այվազովսկին Աննա Նիկիտիչնային թողեց Ղրիմ ուղեւորուելու բոլոր նախապատրաստութիւններն, իսկ ինքը մեկնեց Մոսկուա:

Տեղ հասաւ Շաբաթ երեկոյեան եւ յաջորդ օրը, կէսօրին գնաց Անանովի տուն: Ադամեանն արդէն այնտեղ էր. նա Անանովից տեղեկացել էր հռչակաւոր նկարչի գալստեան մասին:

Ինչպէս միշտ, անեցիներն ու Անանովի հիւրերը ուրախութեամբ եւ ազմըկալից բացագանչութիւններով ընդունեցին Այվազովսկուն, անկեղծ ափսոսանք յայտնելով, որ չէին կարողացել դիտել նրա այդ տարուայ ցուցահանդէսը՝ Պետերբուրգում:

Այվազովսկին շնորհակալութիւն էր յայտնում, կատակում, իսկ յետոյ լըջօրէն յայտարարեց.

— Ոչինչ, հիմա ես ձեր ներկայութեամբ գրչով մի ծովային տեսարան կը նկարեմ եւ այն կը նուիրեմ ձեզանից մեկնումէկին:

(Շար. 197)

EXPOSITION
au CENTRE CULTUREL SAINT-MESROB

du 2 au 12 avril
P A Y S A G E S
D U L I B A N
Oeuvres récentes
(peintures et scultures)
de ROULA AZRAK

Horaires :
Exposition visible tous les jours en présence de l'artiste de 15h à 19h ou sur rendez-vous au 06.78.96.64.17.

au 10 bis rue Thouin — Paris 5ème
Métro : Cardinal Lemoine, Monge

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Ֆր. Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Անահիտ Զէօվիւրեանէ 2.000 եւրօ օժանդակութեան կայանին համար եւ շնորհակալութիւն կը յայտնէ նաեւ իր եօթնամեայ միրայօժար նուիրումին համար որպէս հիւանդապահուհի Պէլֆոնթէնի կայանին մէջ:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ԻՍԻ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ապրիլ 7

Տօն է Աւետումն Սուրբ Աստուածածնի

Պատարագ՝ ժամը 10ին:

Մեր Եկեղեցւոյ զաւակները կը հրաւիրուին ներկայ ըլլալու եւ միասին աղօթելու:

ARMAVIA

Cet Eté

ARMAVIA opérera chaque samedi un vol direct de Marseille à Erevan

Renseignements et réservations :

- **SABERATOURS**
11 rue des Pyramides
75001 Paris
☎ 01.42.61.51.13
e-mail : armenie@saberatours

- **SEVAN VOYAGES**
48 Cours de la Liberté
69003 Lyon
☎ 04.78.60.13.66
e-mail : sevan@selectour.com

- **WASTEELS VOYAYGES**
67 la Canebière
13001 Marseille
☎ 04.95.09.30.60
e-mail : marseille@wasteels.fr

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ,
1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Ե. ՊՉՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎԸՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

Երկիր եւ Մշակոյթ Կազմակերպութիւն

Ս Ի Ր Ո Ց Ս Ե Ղ Ա Ն

Organisation Terre & Culture

DINER DE SOUTIEN

Le 12 avril à 20 heures
au Novotel Paris-Les Halles
8 place Marguerite de Navarre, Paris 1er
Métro : Châtelet, sortie rue de la Lingerie.

Participation : 65 euros — Etudiants : 45 euros.

Réservations : 01 46 72 84 77 — 01 45 87 27 52 — 01 42 06 74 26.

CITE INTERNATIONALE
UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens -
Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն –
Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A.
«Onnig Surmélian»
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 143»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղւոյն ձեր հոգեւոր հովիւներուն եւ հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01.43.59.67.03 թիւին:

"Les mercredis de la MEA"

Les réfugiés arméniens et le droit international pendant l'entre-deux-guerres
Dzovinar KEVONIAN
Maître de Conférences
à l'Université Paris X
Directrice-Adjointe du dépt. d'histoire
— Mercredi 9 avril/21h

*

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences
à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

*

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches
au CNRS
— Mercredi 28 mai/21h

*

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— **R E C I T A L D E P I A N O**
Mickaël EKMEKTCHIAN
Samedi 5 avril à 18 heures
Au Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado — 13008 Marseille
Au programme : Bach — Beethoven — Rachmaninoff...
—— Entrée libre ——

— **C O N C E R T D U C H O E U R A R M E N I E N D E M A R S E I L L E S A H A K - M E S R O P**
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

Le jeudi 10 avril à 20h45
Le
Centre Culturel
SAINT MESROB
recevra
MARINA DEDEYAN
pour la présentation de son livre

L'Aigle de Constantinople
(éd. Flammarion)

Marina DEDEYAN, baignant depuis l'enfance en chevalerie et byzantinisme, a déjà publié avec succès Moi. Constance, princesse d'Antioche, se situant dans le même contexte historique.

10 bis rue Thouin - 75005 Paris
Métro Cardinal Lemoine ou Monge
RER Luxembourg

Entrée libre
Signature et vente du livre
Cocktail

ԱԶԴ
ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ
BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:

Հեռ. – 01.53.79.80.69
Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 8
MARDI
8 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·933 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 83e ANNEE — N° 21·933

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀԱՇՈՒԵՏՈՒԱԿԻ ԽՕՍՔԵՐԸ

Նախագահ Ռ. Քոչարեան Ապրիլ 3ին վերջին հանդիպումը ունեցած է կառավարութեան կազմին հետ ու հաշուետուակ մը ներկայացուցած իր ղեկավարութեան տասնամեակին: Այդ տարիները բարդ, կարեւոր ու բովանդակային համարած է, ապա ծանրացած բարեփոխումներուն վրայ: Ըսած է թէ անոնց նպատակը երկրին արդիականացումն էր: Ըլլալիքներուն առաւել կարեւորը համարած է տնտեսական ոլորտի յաջորդ փուլի բարեփոխումները: Ասոր հետ շեշտած է թէ Հայաստանի առջեւ ծառացած խորագոյն հարցը ապահովականն է: Նկատելով որ շրջանը հակասութիւններով լեցուն է, հետեւողական քայլերու անհրաժեշտութիւնը ընդգծած է, երկրին ապահովութիւնը ամրապնդելու, բանակին մարտունակութիւնը աւելցնելու համար: Իր հաստատումը եղած է այն որ դուրսի որոշ ուժերու համար կայուն ու բարգաւաճ Հայաստան մը փափաքելի չէ եւ ցաւալի է որ ներսը կան գործիչներ որոնք պատրաստ են այդ նպատակին համար գործելու: Ապա մաղթած է նոր կառավարութեան որ յաջողի դիմագրաւել ներկայացող մարտահրաւէրները:

Յաջորդ օրն ալ լրագրողներու հետ հանդիպումի մը Ռ. Քոչարեան անհեթեթ որակած է որպէս իշխանութեան եւ Լ. Տէր Պետրոսեանի երկխօսութիւնը կարգաւորելու ճար, խորհրդարանական արտակարգ ընտրութիւն կազմակերպելու առաջարկները: Աւելցուցած է թէ արտակարգ ընտրութիւնը կը պատասխանէ կացութեան մը ուր խորհրդարանը չի կրնար աշխատիլ, կամ չի կրնար կառավարութիւն կազմել: Յայտարարած է թէ ինք պատրաստ չէ Լ. Տէր Պետրոսեանի հետ որեւէ գործակցութեան, բայց նոր նախագահը եւ կառավարութիւնը կրնան նման հարց քննարկել:

«Համարում եմ որ բրէօրէն պատժելի արարք գործող մարդիկ պէտք է պատասխանատուութեան ենթարկուեն օրէնքով: Երկիրը քայքայելու համար մարդկանց պէտք է խստօրէն պատժել. եւ ոչ թէ երկխօսութիւն վարել նրանց հետ» ըսած է Ռ. Քոչարեան, տեղեկացնելով նաեւ թէ ինք առաջարկած է քրէական հետաքննութիւն բանալ ժողովուրդի երկու հատուածի միջեւ ատելութիւն սերմանելու արարքին պատասխանատուներուն դէմ:

Անդրադառնալով Հայաստանի ներքաղաքական տագնապէն օգտուելով Ղարաբաղի մէջ գետին շահելու ազրպէյճանական փորձին, նախագահը ըսած է թէ երեւոյթը հայկական կողմը աւելի վճռականութեան պէտք է առաջնորդէ սկզբունքային հարցերու մէջ: Իսկ ԼՂ Հանրապետութեան Հայաստանի կողմէ ճանաչումին առումով իր համամտութիւնը կրկնելով, ըսած է թէ յաջորդ նախագահն ու կառավարութիւնը կ'որոշեն այդ մասին: Ինչ կը վերաբերի նման քայլի մը պատերազմի վերսկսման վտանգ ներկայացնելուն պնդումներուն, Ռ. Քոչարեան նշած է թէ իր պաշտօնավարման ընթացքին նման պահեր եղած են եւ «եթէ այն ժամանակ որոշ կտրուկ քայլեր չձեռնարկուէին, շատ հաւանական է որ բանակցային գործընթացը չարունակուէր Հայաստանի համար շատ անբարենպաստ տարբերակով»:

Ջրոյցին նիւթ եղած են Մարտ 1-2ի երեւանեան պատահարներն ալ. Ռ. Քոչարեան համոզում յայտնած է որ անոնք նախապէս ծրագրուած ու կազմակերպուած էին: Հետաքննութիւնը գրեթէ ժամ առ ժամ վերակազմած է այդ օրերու դէպքերը, եւ գանոնք չահարկողները խոր հիասթափութիւն պիտի ապրին դատավարութեան ընթացքին երբ այդ վերակազմութիւնը տեսնեն:

Նախագահը չէ պատասխանած այն հարցումին թէ Ապրիլ 9էն (նոր նախագահին պաշտօնի ստանձնումի օրը) ետք ի՛նչով կը զբաղի: Ըսած է թէ յատկապէս չի փափաքիր պատասխանել «Ազատութիւն» ռատիօկայանի հարցումներուն, քանի որ այդ մէկը Հայաստանի պետականութիւնը քայքայելու քարոզչութեան լծուած է:

* * *

«ՕՐԻՆԱՑ ԵՐԿԻՐ»Ը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱԿԱՆԻ ԱՆԴԱՄ

Մարտ 31ին Պրիւքսէլի մէջ գումարուած է քրիստոնեայ-ժողովրդավարական եւ ժողովրդական կուսակցութիւններու համաշխարհային միջազգայնականի խորհուրդը. այդ ընթացքին որոշուած է Հայաստանի «Օրինաց երկիր»ին անդամակցութիւնը այդ կառոյցին: Երաշխաւորները եղած են Ֆրանսայի նախագահ Ն. Սարքոզին եւ Գերմանիոյ վարչապետ Ա. Մերքէլը, Սլովենիոյ Ժողովրդավար կուսակցութիւնը եւ բազմաթիւ երկիրներու կուսակցութիւններ: Քրիստոնեայ-ժողովրդավարական եւ ժողովրդական կուսակցութիւններու միջազգայնականը անդամ ունի աւելի քան 80 աջակողմեան կեդրոնամէտ կուսակցութիւն: «Օրինաց երիր»ի անդամակցութեան հոլովոյթը հինգ տարի տեւած է:

Կուսակցութեան Երեւանի դրասենեակին մէջ ընդունելով լրագրողները, կուսակցապետ Արթիւր Պաղտասարեան շատ կարեւոր համարած է անդամակցութեան որոշումը, յատկապէս նկատի առած՝ Ազրպէյճանի ու չինիչ եւ ռազմատենչ յայտարարութիւնները:

Նոյն առուլիսին խօսելով յետընտրական պատահարներուն մասին, Ա. Պաղտասարեան ըսած է թէ պատասխանատուութիւն պէտք է կրեն այն ուժերը որոնք տասը օր շարունակ առանց ծրագրի ժողովուրդը հաւաքեցին Ազատութեան հրապարակին վրայ:

Պատասխանելով որպէս Ապահովութեան խորհուրդի քարտուղար ի՛նչ կ'ըլլայ իր առաջին քայլը, հարցումին, ան ըսած է թէ նոր նախագահին պաշտօն ստանձնելէն ետք ծաւալուն փոփոխութիւններ կը կատարուին քաղաքական եւ ընկերային ոլորտներուն մէջ:

* * *

Ս. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մամուլի ազգային ակումբին մէջ լրագրողներու հետ հանդիպում ունենալով Լ. Տէր Պետրոսեանի համախոհներէն, Հայաստանի ժողովրդական կուսակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեան յայտարարած է թէ իշխանութիւններու եւ Լ. Տէր Պետրոսեանի կողմնակիցներուն միջեւ երկխօսութեան մը առաջին նախապայմաններն են յետընտրական պատահարներու ընթացքին ձերբակալուածներու ազատ արձակումը և հանրահաւաքներ, երթեր, ցոյցեր կազմակերպելու օրէնքին մէջ վերջերս կատարուած փոփոխութիւններուն վերաքննութիւնը: Վերջնագիր մըն ալ տուած է, ըսելով որ առանց այդ պայմանները յարգելու որեւէ երկխօսութիւն կարելի չէ: Ներքաղաքական լարուած, պայթելու տակ կացութիւնը փոխելու համար իշխանութիւնները պէտք է առարկայական քայլեր առնեն, բայց չեն ըներ, ըստ ընդդիմադիր ղեկավարին:

Ան շեշտած է խորհրդարանական արտակարգ ընտրութեան հարկը որուն կազմակերպումը կրնայ կողմերու երկխօսութեան թեմաներէն մէկը ըլլալ: Աւելցուցած է թէ ընտրութեան յաջորդած ճգնաժամը այդ ճամբով կը մեղմանայ եւ թէ այսօրուան խորհրդարանը հանրութեան տրամադրութիւնները արտայայտելէ հեռու է:

Մարտ 1-2ի դէպքերուն մասին խօսելով ան ըսած է թէ անոնց քաղաքական պատասխանատուները իշխանութիւններն են որոնք ուժի դիմած են ժողովուրդին դէմ:

Ապրիլ 9ին, նոր նախագահին երդումի արարողութեան օրը իրենք որեւէ շարժումի դիմելու պատրաստութիւն չեն տեսներ, սակայն ինքնաբուխ ցոյցեր կրնան ըլլալ. ըստ իր տեղեկութիւններուն, կարգ մը կազմակերպութիւններ ազերթ կը կատարեն դէպի Միասնիկեանի արձանը:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ բոցը Փարիզ հասաւ կիրակի, Ապրիլ 6ի կէս գիշերին եւ այդ վայրկեանէն իսկ խիստ պաշտպանութեան տակ առնուեցաւ: Պետական ղեկավար մը իսկ այդ ապահովութիւնը չէր վայելած: 3000 ոստիկաններ զօրակոչուած էին: Ճիշդ է որ բուռն միջադէպեր ու ձերբակալութիւններ տեղի ունեցած էին նախորդ օրը Լոնտոնի մէջ: Բոցը ամբողջ օրը 28 քմ. պիտի կտրէ մեկնելով ցերեկին էյֆէլի աշտարակէն, հասնելու համար ժամը 17ի շուրջ Սթատ Շարլէթի, ուր կը գտնուի ֆրանսական մարզական եւ ողիմպիական Ազգային կոմիտէի կեդրոնավայրը: Մինչ այդ ցոյցեր եւ բողոքներ նախատեսուած էին: Թիպէթցիները վճռած էին նաեւ փողոց իջնել: Մոնտի մէջ, Ռամա Եատէ յօդուածով մը կը նշէր թէ երեք պայմաններ կան որպէսզի Սարքոզի պօյքոթի չենթարկէ ողիմպիականի բացման արարողութիւնը, բայց ստիպուեցաւ հերքել եւ յայտնել թէ պայման բառը չէ գործածած, ինչ որ Քուշնէր ալ հաստատեց: Սարքոզի յայտնած էր թէ ըստ կացութեան կը վճռէ ինչ որ պիտի ընէ: Փարիզի քաղաքապետարանին ճակատն ալ, հսկայ պաստառի մը վրայ արձանագրուած է՝ «Կը պաշտպանենք մարդկային իրաւունքները, ամէնուրեք աշխարհի վրայ»:

ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈԶԻ, Ապրիլ 4ին Հանրային քաղաքականութիւններու արդիականացման Բ. խորհուրդի նիստին, ներկայացուցած է խնայողութեան 166 միջոցները, զորս կառավարութիւնը ձեռք պիտի առնէ եւ որոնց շնորհիւ 7 միլիառ եւրոյի խնայողութիւն մը պիտի իրագործուի: Նախագահը բարենորոգում կ'որակէ ինչ որ ընկերվարականներու համար խստակեաց դրութեան մը կիրարկումն է: Ձեռք առնուած այդ «բարենորոգումները» կը վերաբերին նախ եւ առաջ չփոխարինելու ոեւէ պաշտօնատար որ հանգստեան կը կոչուի: Միւսները հետեւեալ մարզերուն հետ կապ ունին.-բնակարան, աշխատանք, առողջապահութիւն, պաշտպանութիւն, ապահովութիւն, բարձրագոյն ուսում եւ հետազօտութիւն:

ԹՈՒՐՔԻՈՅ մէջ «աններելի զանցառում» կը նկատուի ու խստագոյն քննադատութիւններու թիրախ է լիսէի աշխարհագրութեան դասագիրքին մէջ փոխանակ Աղրըի, Արարատ անունին գործածութիւնը: Ազգային կրթութեան սենդիքայի նախագահը շեշտած է թէ Արարատ անունը Հայկական Ցեղասպանութեան խորհրդանիշին վերածուած է եւ նախարարութիւնը հայկական քարոզչութեան գետին տրամադրած է իր այս «սխալ»ով... Խնդրայարոյց դասագիրքը 2007 Յունիսին վաւերացուած է եւ տպաքանակը 305 հազար է:

ԻՐԱՔԻ մէջ բուռն կռիւներ ամերիկեան բանակին եւ շիի քաղաքազօրքերուն միջեւ 20 մեռեալներ պատճառած են, որոնց մէջ բազմաթիւ կիներ եւ մանուկներ:

ՍՊԻՏԱԿ ԵՐԹ մը կազմակերպուած էր Ապրիլ 6ին, Ինկրիտ Պէթանքուրի գաւկին կողմէ, անգամ մը եւս պահանջելու համար իր մօր ազատագրումը: Փարիզի տողանցքը համախմբուած էր Օփերայի հրապարակը եւ կը մասնակցէին նաեւ Պ. Տըլանոյէ, Գարլա Պրունի-Սարքոզի, Պ. Քուշնէր, Արժանթինի նախագահուհին: Տեղւոյն վրայ, ուր կը գտնուի նաեւ Ֆրանսայի ղրկած հիւանդատար օդանաւը, ոչ մէկ լուր կայ այդ մասին:

ԱՌԱՍԻ մօտ, Ալպէն-Սէն-Նազէրի Նոթր Տամ տը Լորէթի զինուորական գերեզմանատունը, Ապրիլ 5էն 6ի գիշերը, մահմետականներու 148 շիրիմներ պղծըւած են ցեղապաշտ արձանագրութիւններով, ինչ որ ընդհանուր վրդովում պատճառած է:

ԻՏԱԼԻՈՅ կառավարութիւնը կը ջանայ դարման մը գտնել Ալիթալիայի վաճառման համար, այլ խօսքով փրկել իտալական ընկերութեան եւ Էր Ֆրանս-ՔԱ. ԷԼ. ԷՄ.-ի բանակցութիւնները, որպէսզի սնանկութիւն չյայտարարուի:

ՖՐԱՆՍԱՅԻ Ներքին նախարարուհին յայտարարեց Ապրիլ 3ին, որ գալիք քանի մը տարուան ընթացքին կը նախատեսէ 20 հազար Թաքսիներու յաւելում մը: Անմիջականին մէջ, այդ թիւը 4·000 պիտի ըլլայ, ինչ որ արդէն բողոքի առիթ տուած է Թաքսիի վարորդներուն:

ՍՈՄԱԼԻԻ ԲԱՑԸ ֆրանսական եաթ մը ծովահէններու կողմէ բռնագրաւուած է: Անձնակազմը բաղկացած է 22 Ֆրանսացիներէ եւ 10 Ուկրանացիներէ: Ֆրանսական իշխանութիւնները բանակցութիւններու մէջ են, որոնք սակայն, կրնան երկար տեւել:

ԹԱԼԻՊԱՆՆԵՐԸ ամբաստանած են Սարքոզին որ դրժած է այն խոստումը զոր ըրած է ընտրապայքարի իր ելոյթներուն ատեն, երբ յայտարարած է 2007 Ապրիլ 26ին որ պիտի քաշէր ֆրանսական զօրքը

(Շար.ը Դ. էջ)

ՄԱՐՄԱՐԱ

Ժ. ԼԻՊԱՐԻՏԵԱՆ՝
«Լ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՅՔԱՐԸ»

Հայաստանի ներքաղաքական ոլորտը արտաքին ուժերու դատումին ենթարկելու կողմնակիցներու խումբէն աւելցած է Լ. Տէր Պետրոսեանի խորհրդական Ժիրայր Լիպարիտեանն ալ։ Հայաստանի նախկին նախագահին թեկնածութեան յայտարարութեան հետ մամուլի օրոշ անուններու հետաքրքրութեան թիրախ խորհրդականը հարցազրոյց մը տուած է Պոլսոյ «Ակօս»ին (Մարտ 28), պատասխանելով Եաւէմին Զոնկարի հարցումներուն։ Եւ առաջին բանը այն եղած է որ Երեւանի պատահարները զինք չեն զարմացուցած, այլ քիչ մը զարմացած է միայն միջազգային համայնքին լայն չափով անտարբերութեան եւ անպատասխանատու ընթացքին։ Իր կարծիքով՝ այդ համայնքը ար դէն կանխակալ հաւատքին տէր էր թէ ընդդիմադիր ոչ մէկ թեկնածու կրնայ ընտրուիլ։ «Կը խորհէին թէ Լ. Տէր Պետրոսեան պիտի չյաջողի ժողովուրդին միասնութիւնը պահպանել։ Սակայն, հակառակը պատահեցաւ» ըստ Ժ. Լիպարիտեանի. մինչ ամէն հոսանքի թերթեր յետընտրական զարգացումներու որպէս ամէնէն չօշափելի մնացորդ, ութ զոհերուն հետ կը մատնանշեն երկրին մէջ ժողովրդական պառակտումի սուր երեւոյթը, Հայաստանցի–ղարաբաղցի բեւեռներով։

Խորհրդականը կը քննադատէ միջազգային դէտերը որոնց առաջին տեղեկագրերը ապօրինութիւններու նշում չեն ըրած։ Յետագայ տեղեկագրերով անդրադարձած են անոնց, հակառակ որ այդ պարագաները ծանօթ եղած են։ Թերացում կը նկատէ այդ դէտերուն աւելի կանուխ Հայաստան չգտնուիլն ու ընտրական պատրաստութիւններուն չըհետեւիլը, քուէաթուղթերը արտասահմանի մէջ, կամ անկողմնակալ հիմնարկներու հակակշռին տակ տպելու պահանջ չներկայացնելը եւ քուէարկողներու ձեռքը անջնջելի կնիքով մը կնքելու պարտաւորութեան անտեսումը։ Այս բաները մտածել կու տան թէ Ս. Սարգսեանի 53%ի քուէներուն մասին թերահաւատութեան պատճառներ կան։ Լ. Տէր Պետրոսեան կը յամառէր թէ ինք է ընտրութեան յաղթականը։ Եթէ Սահմանադրական ատեանը անոր դիմումը ընդունած եւ ընտրութեան բ. փուլ մը հրահանգած ըլլար, այդ փուլին օրինաւորութեան համար անհրաժեշտ միջոցները ապահովուած ըլլային, այսօրուան հարցերը գոյութիւն չէին ունենար։ Բայց ըստ իր համոզումին, Սահմանադրական ատեանը տկար դիրքի վրայ էր, արտակարգ վիճակի պայմաններով այլ բան չէր կրնար ընել։

Յետոյ Ժ. Լիպարիտեան պատասխանելով Լ. Տէր Պետրոսեանի յետագայ քայլերուն առընչուած հարցումին, կ՚ըսէ թէ ան Հայաստան պիտի մնայ եւ շարունակէ պայքարը։ Աքսորի ընտրանք մը խնդրոյ առարկայ չէ։

Ինչ կը վերաբերի Ս. Սարգսեանի նախագահութեան շրջանին իր նախատեսութեան, նոր նախագահը կրնար դրական նորութիւններ բերել, սակայն ընտրութեան որակը եւ յետընտրական զարգացումները պատճառ եղած են որ կանխահակերպով վատնէ ունեցած քաղաքական դրամագլուխը։ Ուստի դժուարին շրջան մը կը սպասէ իրեն։ Մանաւանդ եթէ Ռ. Քոչարեան կառավարութեան մէջ պաշտօն ունենայ, Հայաստանի քաղաքականութեան մէջ մեծ փոփոխութիւն ակնկալելի չէ։ Ժ. Լիպարիտեան կ՚ըսէ. «Այս պայմաններով արտաքին քաղաքականութեան կարեւորագոյն հարցերուն՝ Ղարաբաղի եւ Թուրքիոյ ոլորտներուն մէջ նոր մօտեցում մը ունենալ պիտի դժուարանայ։ Իսկ այնքան ատեն որ այդ երկու հարցը կարգաւորուած չըլլայ, Հայաստանի կարեւոր հարցերէն ոչ մէկը կրնայ լուծումի յանգիլ»։ Կ՚աւելցնէ թէ տկար կառավարութիւն մը փոփոխութեան նախաձեռնելու ուժը պիտի չզգայ։

Հարցազրոյցին վերջին մասին նիւթ կ՚ըլլայ արտաքին ճնշումի հեռանկարը։ Միջազգային հանրութիւնը չի՞ կրնար Ղարաբաղի ու Թուրքիոյ հարցերով ճնշում բանեցնել Երեւանի վրայ։ Ժ. Լիպարիտեան թերահաւատ է։ Միակ երկիրը որուն ճնշումը արդիւնք կրնայ տալ Հայաստանի մէջ, Ռուսաստանն է։ Ոչ մէկ ուրիշ մայրաքաղաք ունի անոր հեղինակութիւնը։ Ո՛չ Եւրոպան, ոչ ալ ԱՄՆ-ը։ Սակայն նոյնիսկ եթէ Ռուսաստան որոշէ քաղաքական փոփոխութիւն պահանջել, ատիկա Հայաստանի նպաստաւոր քաղաքականութիւն մը պիտի չըլլայ։ «Ռուսաստան մինչեւ այսօր, յատկապէս Ղարաբաղի օրինավիճակին առումով, միշտ ադրբեջանամէտ կեցուածք արտայայտած է»։

Իսկ արեւմուտքի միջամտութեան հաւանականութիւն մը խնդրական է, քանի որ յստակ չէ թէ հայ ժողովուրդը ինչպէս կը դիմաւորէ զայն։ Եթէ Ս. Սարգսեան տիրականօրէն անցնէր իշխանութեան գլուխը, կացութիւնը տարբեր կ՚ըլլար. բայց այսօր, Ժ. Լիպարիտեան վստահ չէ որ ան ժողովուրդին վստահութիւնը կը վայելէ։

Անակնկալ չկայ Լ. Տէր Պետրոսեանի խորհրդական ու անոր թեկնածութեան հրապարակումէն ետք իրեն դէմ մահափորձի վախեր յայտնած Ժ. Լիպարիտեանի բառերուն մէջ։ Թերեւս միակ ուշագրաւը այն հաւաստումն է որ ձախողած թեկնածուն պիտի շարունակէ պայքարը, թէ երկրէն մեկնելու մտադրութիւն չունի։

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿՈՄԻՏԱՍ ՇԻՇԼԻԻ ՀՕՓԻԹԱԼ ՏԸ ԼԱ ՓԷ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՋ

Շուրջինները ցաւով ու խորունկ մտահոգութեամբ կը տեսնէին որ Կոմիտաս վարդապետ տակաւ կը մտնէր մեկուսացումի մէջ, իր կապերը կը խզէր շրջապատին հետ։ Ի՞նչ կ՚անցնէր կը դառնար, ինչպէս հիւա՞նդ էր Վարդապետը, թէ ոչ անցողակի անտրամադրութիւն մըն էր այդ։

Վարդապետին բարեկամներէն Կարօ Ուշաքլեան, բժիշկին յանձնարարութեամբ, գիշեր մը մնաց Կոմիտասին բնակարանին մէջ, որպէսզի տեսնէր թէ Վարդապետը ի՞նչպէս կ՚անցընէր գիշերները։ Կէս գիշերին Կոմիտաս արթնցաւ ու անկողնին մէջ նստաւ։ Ուշաքլեան հարցուց թէ հիւա՞նդ էր, բա՞ն մը կը զգար։ Կոմիտաս պատասխանեց որ միայն անձկութիւն ունէր, բայց վստահ էր որ ատիկա շուտով պիտի անցնէր։

Նոյն տեսարանը գիշերուան ընթացքին քանի մը անգամ կրկնուեցաւ։ Կոմիտաս կ՚արթննար, կ՚ըսէր որ անձկութիւն ունի։ Պիտի անցնի։ Եւայլն։ Բայց այս բոլորը բնական չէին։ Անձկութիւնը, ընկճուածութիւնը չէր անցներ։ Արդէն յաջորդ օր ան դարձեալ թաղուած էր նորայայտ այդ հիւանդութեան տակ։

Անկէ վերջ է որ տոքթ. Թորգոմեան հասկցաւ որ Կոմիտաս իսկապէս հիւանդ էր ու կարելի չէր այս հիւանդութիւնը դարմանել տան մէջ։ Պայման էր որ Կոմիտաս հիւանդանոց մը փոխադրուէր։

Եւ ահաւասիկ կը սկսէր Կոմիտաս Վարդապետի հիւանդանոցի կեանքը։ Առաջին հիւանդանոցը որուն մասին տոքթ. Թորգոմեան մտածեց, Շիշլիի «Հօփիթալ Տը Լա Փէ» հիւանդանոցն էր։

Այս հիւանդանոցը, որ այսօր ալ գոյութիւն ունի ու կը գտնուի Ֆրանսացի մայրապետներու հսկողութեան ներքեւ, 1916 թուականին զինուորական հիւանդանոց էր ու հիւանդանոցին բժշկապետն էր Թուրք նշանաւոր հոգեբոյժ տոքթ. Մաշհար Օսման Ուզման։ Մաշհար Օսման այդ թուականներուն արդէն սկսած էր հեղինակութիւն դառնալ հոգեկան ու մտային հիւանդութիւններու մարզէն ներս։ Տոքթ. Թորգոմեան որոշեց որ Կոմիտաս դարմանուի այդ հիւանդանոցին մէջ։ Դիւրին պիտի չըլլար համոզել Կոմիտասը, բայց ատիկա պայման էր։

Տրուած ըլլալով որ հիւանդանոցը այդ շրջանին զինուորական հիւանդանոց էր, Կոմիտաս հիւանդանոց պիտի փոխադրուէր զինուորականի մը ընկերակցութեամբ։ Ասիկա ալ ուրիշ դժուարութիւն մըն էր ահաւասիկ, որովհետեւ Կոմիտաս ահաւոր սարսափ կը զգար երբ կը տեսնէր զինուորական համազգեստով մէկը։ Տոքթ. Թորգոմեան ստիպուեցաւ սուտ դիմել, ան Թուրք սպան Կոմիտաս վարդապետին ծանօթացուց որպէս սպայ մը որ զինք պիտի տանէր նախարար Նազըմ պէյի մօտ։ Իբրեւ թէ Նազըմ պէյ երաժշտական խնդրի մը մասին իր կարծիքը կ՚ուզէր իմանալ։ Կոմիտաս հաւանեցաւ ու բոլորը միասին ճամբայ ելան։ Բայց քիչ վերջ Կոմիտաս դարձաւ զինուորականին եւ ըսաւ.

— Էֆէնտի, դուք խաբեցիք զիս։ Նազըմ պէյը հոս չի բնակիր։

Այդ վայրկեանէն սկսեալ Կոմիտաս յանձնուեցաւ շուրջիններուն, բայց ինքզինք այլեւս կը նկատէր Թուրք զինուորականներու կողմէ բանտարկուած տարագիր մը։

Նոր ու բախտորոշ շրջան մը կը սկսէր Կոմիտասին կեանքին մէջ։ Բարեկամները գացին իր տունը, տուփերու մէջ լեցուցին անոր բոլոր թուղթերն ու տետրակները եւ զանոնք յանձնեցին Պատրիարքարան, առանց սակայն կնքելու ու անոնց անվտանգութիւնը ապահովելու։ Մնացեալ ինչքերն ալ ծախեցին, որպէսզի անոնցմով ապահովուի Կոմիտաս վարդապետին դարմանումի ծախքերը։ Ծախքերու ապահովման համար կատարուած այս կարգադրութիւնները Կոմիտասի կամքէն անկախ էին, ուստի անոնք ո՛չ միայն տխուր ոտնձգութիւն մըն էին Կոմիտաս վարդապետի անձնական կեանքին, այլ նաեւ ամօթալի էին հայ ժողովուրդի արժէքները յարգելու տեսակէտէ։

Այսօր երբ կը կարդանք այդ օրուան մանրամասնութիւնները, հարց կրնանք տալ թէ Կոմիտասի նման մէկու մը դարմանումին համար պայմա՞ն պէտք է ըլլար որ վաճառուէին անոր անձնական ինչքերը։ Ո՞ւր էր ամբողջ հայ ժողովուրդը, որ ազգային Կոմիտասը պիտի պաշտէր որպէս հայ երաժշտութեան արեւն ու հիմնադիրը։ Ճիշդ է որ ժամանակաշրջանը անբնականոն ու դժուարին շրջան մըն էր քաղաքական տեսակէտէ, ճիշդ է որ հայ ժողովուրդը այդ օրերուն կ՚ապրէր իր մեծագոյն ողբերգութիւնը, բայց Կոմիտաս վարդապետն ալ սովորական մարդ մը չէր։

Մաշհար Օսմանը Թուրք զինուորական բժշկական վարժարանը աւարտելէ վերջ իր ուսումը կատարելագործած էր Գերմանիոյ մէջ եւ այդ շրջանին արդէն դարձած էր Քրէփլինի ու Ցիհէնի նման հեղինակաւոր հոգեբոյժներէն մէկը։ Տոքթ. Թորգոմեան անտարակոյս մեծ վստահութիւն ունէր անոր նկատմամբ, բայց Կոմիտաս այդպէս չէր մտածեր։ Կոմիտասի աչքին տոքթ. Մաշհար Օսման ուրիշ մէկը չէր եթէ ոչ զինքը բանտարկող Թուրք զինուորական մը։

Թ. Հ.

ԻՆՉՈ՞Ւ ԹԻՊԷԹԵԱՆ ՀԱՐՑ ՄԸ

Թիպէթեան 2008 Մարտի ապըստամբութիւնն ալ դատապարտուած էր չինական հզօր բանակի ուժերուն կողմէ ետ մղուելու, ինչպէս եղած էր 1959ին, 1987ին: Քանի մը ամիսէ ի վեր արագ միջամտութեան միաւորներ որոնք կոչուած են ժողովրդական շարժումներ ջախջախելու, ակներեւ կերպով կը մարզուէին Թիպէթեան քաղաքներու մէջ, այսօր կատարուածը փորձելով: Իսկ ցուցարարները գիտակցօրէն վըտանգած էին իրենց կեանքերը, քաջ գիտնալով որ աշխարհը ակնարկը հազիւ այլ կողմ դարձուցած, միջազգային հանրութիւնը ամէն բան պիտի մոռնայ:

Շատեր հարց կուտան թէ հազարամեակներէ ի վեր քով քովի ապրած այս երկու ժողովուրդներուն այս աստիճանի հակադրութեան պատճառը ի՞նչ է: Ճիշդ է որ Չինաստան մեծամեծ գումարներ կը յատկացնէ Թիպէթի, անոր ճամբաները, երկաթուղիները, զբօսաշրջային ենթակառոյցները արդիականացնելու համար, նաեւ վճարելու բարձրաստիճան պաշտօնատարները: Սակայն, հարցը հոն է որ այդ արդիականացումը չի ծառայեր Թիպէթցիներու շահերուն: Անոնց մեծամասնութիւնը գեղջկական ընդարձակ շրջաններու մէջ կ'ապրի իր հօտերով, տասնամեակներ առաջ սահմանագծուած իր հողին վրայ: Աւելի ճիշդ է ըսել. կը ջանայ ապրիլ: Չինացի պաշտօնատարները կը մերժեն վերաքննել այդ հողերուն սահմանները, նկատի չեն առներ որ ընտանիքները կը մեծնան, նորեր կը կազմուին: Աղքատութիւնը միայն վիճակ է Թիպէթցիներու համար, երբ գաւառային շրջաններու վիճակագրութիւններ չեն զանազաներ քաղաքներու զարգացումն ու գիւղական գօտիներու լքումը ու կը պնդեն թէ կեանքի մակարդակը բարձրացած է:

Թիպէթցիներու ուղղուած վերջին սպառնալիքը բնապահպանական պատրուակներ ունի. իբրեւ թէ չինական մեծ գետերու՝ Եանկցէի եւ Դեղին գետին հուները պաշտպանելու պատճառաբանութեամբ, հազարաւոր վաչկատուն Թիպէթցիներ տեղահանուած են իրենց հողերէն եւ բնակութեան պարտադրուած որեւէ տեղ կառուցուած խեղճ ու կրակ նոր ոստաններու մէջ: Ու այդ պահէն հողագործական անոնց ամբողջ գիտելիքը, փորձառութիւնը, անպէտ բանի վերածուած է: Անոնցմէ քիչեր միայն կարելիութիւն գտած են այլ մասնագիտութեան տիրանալու: Որեւէ միջոց ալ չեն ունեցած իրենց հողին իրենց փարումը արտայայտելու. մինչ Համայնավար կուսակցութեան ընտրանին որ մեծ մասով քաղաքաբնակ Չինացիներէ բաղկացած է, զիրենք տխմար, կոպիտ կը նկատէ. մարդիկ որ ոչ մէկ կրթութեան, գիտական ոչ մէկ գիտելիքի տէր են:

Չինացիները, յատկապէս իշխանութեան տէրերը, կ'արհամարհեն Թիպէթցի գեղջուկները, իսկ անոնց զարգացած դասէն կը զգուշանան: Միշտ զանոնք կը մղեն Չինաստանի եւ կուսակցութեան յարգանքին փաստը տալու, մերժելով ամէնէն յարգուած լամաներու մտնութեան: Այդ քաղաքականութիւնը հասարակաց է չինական Համայնավար կուսակցութեան, նախագահ Հու Ժինթաոյի գլխաւորութեամբ: Անոնք չեն հասկցած որ Թիպէթցի կրօնաւորները պարտադրել Տալայ Լամայի լուսանկարը ոտնակոխելու, կամ անոր վրայ թքնելու, աւելի կը լարէ կիրքերը: Չինական տիրակալութեան ենթակայ Թիպէթը հսկայական յետքայլի մը ձեռնարկած է. կրօնքին դէմ կայ մարքսիստական քարոզչութիւնը, զանգուածային մտնութեան դրդումը, մը կ'ունենայ: Հարկ է որ Չինաստանի կողմէ Թիպէթի պարտադրուածները շատ հակասական են եւ դատապարտուած ձախողելու: Փէքին կ'ուզէ որ Թիպէթցիները փարին հայրենիքին ու կուսակցութեան. սիրեն զանոնք, բայց կայունութիւնը ճնշելով ապահովելու քաղաքականութիւնը ժխտական հետեւանք կ'ունենան: Հարկ է որ Չինաստանի բարեկամները ըսեն իրեն թէ կարելի չէ բռնի ուժով կայսրութիւն մը ազգութեան մը վերածել: Ինչպէս միշտ կրկնած է տալայ-լաման.

Թիպէթցիներն ու Չինացիները անցեալին լաւ յարաբերութիւններ ունեցած են եւ կրնան նորէն ունենալ: Սակայն ատոր նուազագոյն պայմանն է փոխադարձ յարգանք ունենալ մարդ արարածին որ իր երջանկութիւնը այլ տեղ կը փնտռէ:

ՔԱՂՀԱՆ

ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ԴԻՒՐԱՑՆՈՂ ՀՆԱՐՔՆԵՐ

1

Եթէ ձեր սրունքներուն մէջ ծանրութիւն կը զգաք, շատ հաւանաբար անիկա հետեւանք է արեան ոչ լաւ շրջագայութեան, իսկ դարմանումի ձեւերը այլազան են: Զանոնք մարձեցէք նախապէս մարմնի սերով օծելէ ետք, պաղ տուշին տակ բռնեցէք, երկարեցէք եւ ձեր ոտքերուն տակ որոշ բարձրութեամբ բարձ մը զետեղեցէք, քալեցէք, բայց մանաւանդ ձեր մատներուն ծայրերուն վրայ աստիճան բարձրացէք:

Այս բոլորը կ'օգնեն արեան շրջագայութեան աշխուժացման եւ կը հանգստացնեն ձեզ:

2

Ծխախոտէն դեղնած ձեր մատները մաքրելու համար պատրաստեցէք կիտրոնի հիւթի եւ օքսիժէնի խառնուրդ մը, անոր մէջ թաթխեցէք բամպակը եւ շփեցէք ձեր դեղնած մատները:

3

Եթէ ձեր աչքի շպարի մատիտին ծայրը տաշելու ժամանակ կը ճըդմուի կամ կը կոտրի, ճարը հետեւեալն է, զայն քանի մը ժամ սառնարանը պահեցէք եւ ապա տաշեցէք:

4

Ճաշէն ետք յաճախ ստամոքսի ցաւ ունեցողները թող փորձեն «մեծ մայրիկի» հետեւեալ թելադրանքը. ճաշի ժամէն ետք այդպիսիները թող ուտեն խոշոր կրիֆոն մը... Քանի մը օրէն արդիւնքը պիտի զարմացնէ:

5

Լուացարանին խողովակին գէշ հոտերը չէզոքացնելու համար անոր մէջ թափեցէք ապուրի երկու դգալ սուրճի մրուր, ապա բացէք ծորակին ջուրը եւ շուտով հոտը կը չքանայ:

6

Պահարանին դարաններէն ցեցերը հեռացնելու համար շիշի մը մէջ մեխակի ռամ լեցուցէք եւ բերանը բաց դրէք պահարանին մէջ, ցեցերը երբեք չեն ախորժիր անոնց հոտէն ու կը փախչին:

7

Ամբողջ տարին ձեռքի տակ ռեհան ունենալու համար, ռեհանի եղանակին մեծաքանակ ջարդել եւ ապակեայ մաքուր շիշի մէջ լեցնել, վրան ձիթաիւղ աւելցնել, կափարիչը գոցել:

Այս խառնուրդը սառնարանէն դուրս վեց ամիս կը դիմանայ:

8

Որպէսզի աւոքատոները շուտով չհասուննան, նոյնիսկ սառնարանը ճարը չունի: Միակ ձեւը զանոնք ալիւրի մէջ թաղելն է:

9

Երշիկները դիւրին կեղուելու համար զանոնք ուտելէ ժամ մը առաջ խոնաւ լաթի մէջ փաթթել, պատրաստութեան ժամանակ անոնք շատ դիւրաւ կը կեղուըուին:

10

Որպէսզի եփի ատեն կանկառները սրճագոյն չդառնան եւ պահեն իրենց մութ կանաչ գոյնը, եռացած ջուրին մէջ կտոր մը շաքար եւ ապուրի դգալ մը քացախ աւելցուցէք: Ատկէ վերջ կանկառները պիտի պահեն իրենց գոյնը:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ»

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

«ԴՈՒՔ ՄԻՍ ՈՒ ԱՐԻՒՆ ԷՔ ՍՏԱՑԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ»

Այդ ըսելով Այվազովսկին նստեց սեղանի առաջ ու սկսեց նկարել: Բոլորը պատկառանքով, շունչերը պահած, կանգնել էին մի կողմ ու հետեւում էին նկարչի կախարդական ձեռքի: Անցաւ հինգ րոպէ եւ Այվազովսկին նկարի անկիւնում արդէն դրեց իր ստորագրութիւնը:

– Ահա եւ նկարը պատրաստ է, – ասաց նա, – կարծում եմ, այն պէտք է պատկանի մեր մէջ ամենաշնորհալի երիտասարդին՝ Պետրոս Ադամեանին:

Բոլորը, համաձայն, ծափահարեցին, իսկ Այվազովսկին մօտեցաւ երեխայի նման ուրախացած դերասանին, եւ նկարը մեկնելով՝ գրկեց նրան:

– Ես վաղուց եմ լսել ձեր մասին եւ միշտ ուզեցել եմ տեսնել ձեզ բեմում:

– Յաջորդ Կիրակի ես Արբենին եմ խաղալու, – կմկմաց ասաց Ադամեանը, – բայց հիմա... ինչո՞վ վարձահատոյց լինեմ այս նկարի եւ ձեզ տեսնելու ու լսելու երջանկութեանս համար: Այս բոլորն ինձ մանկութեան երազ է թւում... Պոլսում, երբ ես դեռ երեխայ էի, բոլորիս համար ամենահետաքրքիր հէքեաթից էլ թանկ էին փոքրիկ հայ պատանի Յովհաննէս Այվազովսկու մասին զանազան պատմութիւնները:

– Դուք ինձ մեծ հաճոյք կը պատճառէիք, եթէ արտասանէիք որեւէ բան...

Եւ Ադամեանը կարդաց իր սիրած Գոփփէի «Գործադուլ դարբնեաց»ը:

...Կիրակի օրը, Մարտի 6ին Ադամեանն իր խաղով գերեց բոլորին: Մոսկովեան հանդիսատեսը առաջին անգամ բեմի վրայ տեսաւ խոր եւ համակողմանի Արբենինին:

Խոշոր դերասանը պատկերում էր ոչ թէ մէկ մարդու, այլ ամբողջ մի սերնդի ողբերգութիւնը:

Ադամեան-Արբենինն անման էր իր բուռն ապրումների մէջ. երբեմն նրա ձայնը խզւում, վեր էր ածւում շշնջոցի, բայց այդ թոյլ շշնջոցն իսկ ցնցում էր հանդիսականին իր ներքին ահեղ փոթորկով: Եւ մարդիկ հաւատացին, որ Ադամեանը Արբենինի կերպարն իրօք հասցնում էր շէյքսփիրեան կերպարների՝ Համլէթի եւ Օթելլոյի մակարդակին: Ներկաները երկար ժամանակ բաց չէին թողնում դերասանին: Ներկայացումն աւարտելուց յետոյ նա ստիպուած եղաւ տասն անգամ բեմ դուրս գալ: Բուռն ծափահարում էր ոչ միայն հասարակութիւնը, այլեւ շատ նշանաւոր ռուս դերասաններ: Դերասանուհիներ Երմոլովան եւ Վոլգինան ծափահարում էին յոտնկայս:

Ադամեանի խաղով հմայուած էր նաեւ Այվազովսկին:

Յաջորդ օրը նա չկարողացաւ այցելութեան արժանացնել նրան, յետոյ էլ ժամանեց Աննա Նիկիտիչնան, եւ այդ անգամ այլեւս նրանք չհանդիպեցին Մոսկուայում: Բայց Անանովի միջոցով Այվազովսկին կարողացաւ յայտնել իր հիացմունքը փայլուն խաղից եւ նրան հրաւիրեց այցելել իրեն՝ Թէոդոսիա:

Նրանք հանդիպեցին միայն երեք տարի անց, երբ Ադամեանը հիւրախաղերի էր Ղրիմում: Բայց հանդիպումը կարճատեւ եղաւ. խումբը Ադամեանին սպասում էր Կերչում: Այնպէս որ, նրանք իսկապէս հանդիպեցին միայն վերջերս: Այս անգամ Ադամեանը Թէոդոսիա եկաւ Օգոստոս ամսին եւ Այվազովսկու մօտ հիւրընկալուեց շուրջ երկու շաբաթ: Բարեկամներն անբաժան էին իրարից: Երկու հայ արուեստագէտները շատ ու շատ բան ունէին իրար պատմելու: Նրանցից իւրաքանչիւրը ձգտում էր արուեստի մէջ կատարելութեան: Ադամեանը գալիս էր Այվազովսկու արուեստանոցը եւ ժամերով դիտում նրան աշխատելիս: Քանի-քանի՛ անգամ այդ օրերին, դերասանը նրա առաջ բաց էր արել իր սիրտը, խոստովանել այն, ինչ անկեղծօրէն տանջում էր իրեն:

– Ահա դուք մի նկար նկարեցիք, որը գերեց եւ հիացմունք պատճառեց բոլորիս: Նրանով կը հիանան ոչ միայն այսօր, այլեւ վաղը եւ դեռ շատ տարիներ անց: Նկարչից, բանաստեղծից մնում են նրա ստեղծած գործերը, իսկ ի՞նչ կը մնայ դերասանից:

Եւ տխրամած աչքերով նայելով Այվազովսկուն, ինքն էլ, ահաւոր վշտով լի, պատասխանում էր.

– Ո՛-չինչ:

Այվազովսկին ջանում էր մխիթարել տառապող բարեկամին, բայց սա յամառում էր ու անընդհատ կրկնում.

– Թողնելո՛ւ եմ բեմը, թողնելո՛ւ եմ անպայման: Կը զբաղուեմ նկարչութեամբ, պոէզիայով, որպէսզի մի բան մնայ ինձանից:

Հրաժարուել բեմի՞ց: Մի՞թէ նա ընդունակ էր դրան:

Այվազովսկին տեսել էր նրա գեղանկարչական աշխատանքները, գիտէր, կարդացել էր նրա բանաստեղծութիւնները: Այդ բոլորը զուրկ չէր օժտուածութիւնից, բայց այդքանը միայն, մինչդեռ որպէս դերասան Ադամեանն անման էր:

Ոչ, պէտք էր ամէն կերպ յետ կանգնեցնել նրան այդ մտքից:

Մի անգամ, Ադամեանի ներկայութեամբ, նա աւարտեց իր մի նկարն ու անկիւնում հայերէն մակագրեց՝ «Այվազեան»: Ադամեանը վեր թռաւ տեղից ու գրկեց նրան: Եւ այստեղ Այվազովսկին գտաւ այն խօսքերը, որ պէտք է սպեղանի լինէին նրա տառապող հոգուն:

(Շար. 198)

(Շար. Ա. էջէն)

Աֆղանիստանէն, քանի «անոր ներկայութիւնը երկար ատեն վճռական չէր»:

ՉԱՐԼԹԸՆ ՀԷՍԹԸՆ աբերիկացի դերասանը, որ մեծ համբաւի տիրացած էր Պէն Հուրի եւ 10 պատուիրաններուն մէջ, մեռած է 84 տարեկանին: Քանի մը տարի է կը տառապէր արդէն Ալցհայմըրի հիւանդութենէն:

ՊՈՒՏԻՆ ԵՒ ՊՈՒՇ վերջին հանդիպում մը ունեցած են Սեւ Ծովի ափին եւ ըստ Պուշի հանդիպումը «հաճելի եղած է իրենց տարակարծութիւններով»: Ոչ մէկ համաձայնութիւն գոյացած է սակայն ինչ կը վերաբերի ռազմագիտական մարզի իրենց խոր տարակարծութեան: Այդ տարակարծութիւնը կը կայանայ Չեխիոյ եւ Լեհաստանի մէջ հակահրթիռ կազմածներու զետեղման ամերիկեան ծրագրին մէջ:

ՍՐԻ ԼԱՆՔԱՅԻ մայրաքաղաքին՝ Գոլոմպոյի մէջ անձնասպանական ոճրափորձի մը ընթացքին փոխադրութեանց նախարարը սպաննուած է եւ իր շուրջը գտնուող 11 հոգի ալ մեռած է: Արարքը կը վերագրուի Թամուլ ազատագրութեան վագրերուն:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15·30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ուէ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20·30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւն, (26 ուէ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Ց. ՊՉՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20·30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

EXPOSITION

au CENTRE CULTUREL SAINT-MESROB

du 2 au 12 avril
PAYSAGES DU LIBAN
Oeuvres récentes
(peintures et scultures)
de ROULA AZRAK

Horaires :
Exposition visible tous les jours en présence de l'artiste de 15h à 19h ou sur rendez-vous au 06.78.96.64.17.

au 10 bis rue Thouin — Paris 5ème
Métro : Cardinal Lemoine, Monge

L'UCFAF organise deux voyages en Arménie

1 voyage touristique du 26 juillet au 10 août

soit 16 jours / 15 nuits au prix de 1565 euros par personne, max. 30 personnes, base demi-pension et chambre double, incluant un circuit de 6 jours jusqu'au Karabagh (taxes d'aéroport et visa en sus) renseignements : E. Yazidjian au 01 42 87 95 98 (heures de bureau)

1 voyage randonnée du 14 au 25 juillet

soit 12 jours / 11 nuits au prix de 1390 euros par personne, max. 12 personnes, incluant un circuit de 7 jours randonnée en pension complète et 3 jours à Erevan en demi-pension avec excursions et visites quotidiennes (taxes d'aéroport et visa en sus) renseignements : A. Samikyan au 01 48 03 18 78

Date à retenir

SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à A. Aharonian
le vendredi 18 avril à 20h30
à la Maison de la Culture Arménienne de Marseille

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville ,75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ԱԶԴ
ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ
BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:

Հեռ. – 01·53·79·80·69
Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A.
«Onnig Surmélian»
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

CITE INTERNATIONALE UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens - Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն – Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

"Les mercredis de la MEA"

Les réfugiés arméniens et le droit international pendant l'entre-deux-guerres
Dzovinar KEVONIAN
Maître de Conférences à l'Université Paris X
Directrice-Adjointe du dépt. d'histoire
— Mercredi 9 avril/21h

**

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

**

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches au CNRS
— Mercredi 28 mai/21h

**

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

Le jeudi 10 avril à 20h45
Le Centre Culturel SAINT MESROB
recevra
MARINA DEDEYAN
pour la présentation de son livre

L'Aigle de Constantinople

(éd. Flammarion)

Marina DEDEYAN, baignant depuis l'enfance en chevalerie et byzantinisme, a déjà publié avec succès Moi, Constance, princesse d'Antioche, se situant dans le même contexte historique.

10 bis rue Thouin - 75005 Paris
Métro Cardinal Lemoine ou Monge
RER Luxembourg

Entrée libre
Signature et vente du livre
Cocktail

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

—**CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP**
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
ԳԱՐԵԳԻՆ Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
ԿՈՉ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01·43·59·67·03 թիւէն:

Երկիր եւ Մշակոյթ Կազմակերպութիւն
ՍԻՐՈՑ ՍԵՂԱՆ

Organisation Terre & Culture

DINER DE SOUTIEN

Le 12 avril à 20 heures
au Novotel Paris-Les Halles
8 place Marguerite de Navarre, Paris 1er
Métro : Châtelet, sortie rue de la Lingerie.

Participation : 65 euros — Etudiants : 45 euros.

Réservations : 01 46 72 84 77 — 01 45 87 27 52 — 01 42 06 74 26.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 9
MERCREDI
9 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.934

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21.934

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ

ԲՈՑԻՆ ՓԱՐԻԶԵԱՆ ՈԴԻՍԱԿԱՆԸ

ՈՒ՞Վ ԷՐ ՅԱՆՑԱՒՈՐԸ

Ողիմպիական բոցին փարիզեան անցքը այնպիսի քաոսային պատկեր մը պարզեց Երկուշաբթի, Ապրիլ 7ին, որ կը մնար յանցաւորը փնտռել: Այս պարագային ամէն մէկ կողմ միւսին վրայ կը թողուր ծիծաղելի ձախողութեան մը պատասխանատուութիւնը եւ այդ ձեւով ամէն կողմ «անմեղ» կը դառնար:

Բոցը ճամբայ կ'ելլէր Էյֆէլի աշտարակէն եւ ժամը 17ի շուրջ պէտք է հասնէր Սթատ Շարլէթի: Բայց, ամբողջ ճամբուն ընթացքին «Առանց սահմանի թղթակից»ներու համարձակ անդամները, Թիպէթցիները, ցուցարարները, ապահովութեան ուժերը, Չինացիները քաոսային կացութիւն մը ստեղծեցին, որ պատիւ չէր բերեր Ֆրանսայի: Պէտք է ըսել որ ապահովութեան ուժերու ներկայութիւնն ալ որ բազմամարդ էր, չէր կրնար կիրքերը հանդարտեցնել, քանի միջադէպերը իրարու յաջորդեցին: Կային նաեւ պարզ հանդիսատեսներ, որոնք կ'ուզէին բոցին անցքը դիտել, բայց չյաջողեցան:

Ժամը 12ին, Էյֆէլի աշտարակին տակը հաւաքուած էին արդէն Թիպէթցիներ, Չինացիներ եւ անցորդներ, մինչ ոստիկանութիւնը կը ջանար զսպել Թիպէթցի բողոքողները: Միջադէպերը արդէն կը սկսէին, երբ «Առանց սահմանի թղթակիցներ»ու անդամները կը ջանային պաստառ մը զետեղել աշտարակին վարի մասը: Պաստառը կը ներկայացնէր դրօշակ մը, ուր ողիմպիական խորհըրդանշական հինգ օղակները վերածուած էին հինգ ձեռնակապերու: Մարդիկ մարդիկ բոցին փոխանցումն ալ դիւրին չէր, երբ Թիպէթի կողմնակիցներ չէին յաջողեր իրենց բողոքները արտայայտել եւ ապահովութեան ուժերն ալ կոպտօրէն կը ջանային զսպել ու ձերբակալութիւններու կը դիմէին: Հեռատեսիլի Բ. կայանի նկարահան մըն ալ կը խոշտանգուէր, վիրաւորուելով ալ գլխէն եւ հիւանդանոց կը փոխադրուէր: Ճամբու սկիզբէն իսկ, փորձեր կ'ըլլային բոցը մարելու: Ցուցարարները կը յարձակէին երբ Կարիկլիանօ կամուրջէն կ'անցնէր խումբը եւ կը մարէին բոցը: Քիչ ետք, բոցը հանրակառքի մը մէջ կը դըրուէր, առ ի պաշտպանութիւն: Աւելի անդին, Շան զ'Էլիզէ հաւաքուած դիտողներու բազմութիւնն ալ յուսախաբ էր քանի չէր յաջողեր բոցը տեսնել: Մինչ ջանք կը թափուէր ճամբան շարունակելու, բոցը մարդիկի ձեռքէ մարդիկի ձեռք անցընելով, չինացի պատասխանատու մը որ կապի մէջ էր իր դեսպանատան հետ, կը յայտարարէր որ Փարիզի քաղաքապետարանին արարողութիւնը ջնջուած է: Հոս ալ, քաղաքապետարանին ճակատը սեւ դրօշակ մըն ալ զետեղուած էր Թիպէթի դրօշակի կողքին: Պարզուած պատկերը ողբալի էր, մինչ թափօրը կը շարունակէր իր ճամբան: Կ'անցնէր Ազգային ժողովի շէնքին առջեւէն. հոն ալ հաւաքուած էին խումբ մը երեսփոխաններ բոլոր հոսանքներէ: Այս հանդրուանէն ետք, յաջորդ բոլոր հանդրուանները ջնջուած էին, որպէսզի ի վերջոյ բոցը հասնի Շարլէթի: Միջադէպերը, խոշտանգումները, բուռն բախումները չէին դադրած սակայն եւ կային նաեւ վիրաւորներ:

Եզրակացութիւնն այն է որ մարզական դետնի վրայ բոլորը յուսախաբ են եւ կը դատապարտեն «Առանց սահմանի թըղթակիցներ»ու խանգարիչ արարքները: Բողոքի գետնի վրայ սակայն, «Առանց սահմանի թղթակիցներ»ու պատասխանատուն՝ Ռ. Մենար շատ գոհ է որ յաջողած է ճամբու ամբողջ երկայնքին արտայայտել իր բողոքը զանազան եւոյթներով: Չինացիները դժգոհ են. միջադէպերու նկարները չցուցադրուեցան իսկ Չինաստանի հեռատեսիլէն եւ իրենց կարգադրութիւններով ալ կարգ մը արարողութիւններ եւ հանդրուաններ տեղի չունեցան: Ֆրանսական իշխանութիւններն ալ գոհ չեն քանի չյաջողեցան ա-

(Շար.ը Դ. էջ)

ԹՐՔԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՎՍՏԱՀ Է՝ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԸ ԻՍՐԱՅԷԼԻ ՄԷՋ ԱՐԴԻՒՆՔԻ ՉԻ ՅԱՆԳԻՐ»

Թուրքիոյ Ազգային ժողովի արտաքին գործերու յանձնաժողովէն պատուիրակութիւն մը նոյն յանձնաժողովին նախագահ Մ. Մէրճանի գլխաւորութեամբ Իսրայէլ գացած է, ղեկավար դէմքերու հետ հանդիպումներ ունենալու: Օրակարգի առաջին նիւթը Իսրայէլի խորհրդարանին մէջ առաջին քննարկումի մը ատնուած Ցեղասպանութեան ճանաչումի խնդիրն է:

Թրքական պատուիրակութեան նախագահը Անգարայի տեղեկացուցած է թէ սկսած Հանրապետութեան Նախագահ Շ. Փերէսէն, տեսակցած բոլոր դէմքերը ապահովութիւն տուած են իրենց թէ այդ խնդիրը ոչ մէկ արդիւնքի կը յանգի: Իրենք ալ ամէն առիթով շեշտած են թէ Թուրքիոյ համար որքա՛ն կենսական է նոյն նիւթը:

Մէրճան պատասխանելով լրագրողներու, յայտնած է թէ ամէն մարդ պէտք է հասկնայ շրջանին մէջ Իսրայէլի ապահովութեան մտահոգութիւնները: Պէտք է հասկնալ Գազայի գօտիէն արձակուած հրթիռներուն պատճառած նեղութիւնը, նոյն ատեն պաղեստինցի ժողովուրդին տնտեսական հոգերն ու կրած տառապանքը: Ապա ծանրացած է որպէս խաղաղութեան միջնորդ Թուրքիոյ կարեւոր դերին վրայ, աւելցնելով որ շրջանին մէջ Սուրիա եւս կարեւոր ազդակ է:

ՄԱՅՐ ԱԹՈՌ

ՈԳԵԿՈՉՈՒՄ ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ապրիլ 6ին սենեկային երաժշտութեան տան մէջ «Նահատակ հայրապետը» խորագրուած երեկոյթով մը ոգեկոչուած է Խորէն Ա. Մուրադբէկեան կաթողիկոսը, իր նահատակութեան 70րդ տարելիցին: Կազմակերպած են Մայր Աթոռն ու Ազգային արխիւը:

Մայր Աթոռի դիւանի տնօրէն Ասողիկ քհնյ. Կարապետեան տեղեկացուցած է թէ նոյն տարելիցին առթիւ կը հրատարակուի Խորէն Ա.ի անտիպ վաւերագրերու եւ լուսանկարներու ալպոմ մը:

Խորէն Ա.ի կենսագրութեան, ազգային – եկեղեցական աւանդին եւ եղերական մահուան պարագաներուն անդրադարձած են Եղիշէ Քհնյ. Սարգսեան եւ Ազգ. Արխիւի տնօրէնը Ա. Վիրաբեան: Երեկոյթը աւարտած է Գարեգին Բ.ի հայրապետական պատգամով ու օրհնութեամբ:

Նոյն օրը Ս. Էջմիածնի մէջ յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօն կատարուած է ի յիշատակ Խորէն կաթողիկոսին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Ս. ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ

Նորընտիր նախագահ Ս. Սարգսեան Ապրիլ 9ին երդումի արարողութեամբ պիտի ստանձնէ Հայաստանի նախագահութեան պաշտօնը. ինք երրորդը կ'ըլլայ այդ դիրքին վրայ, Լ. Տէր Պետրոսեանէն (1991–1998) եւ Ռ. Քոչարեանէն (1998–2008) ետք:

Հանդիսաւոր արարողութեան ներկայ կ'ըլլան ի միջի այլոց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութենէն պատուիրակութիւն մը, Հայ կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. կաթողիկոս–պատրիարքը, Մինսկի խումբի ամերիկացի նախագահը Մ. Պրայզա եւ ԱՄՆ–ու Երեւանի գործավար Ճ. Փենինկթըն:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան պատուիրակութիւնը կը բաղկանայ Լիբանանի եւ Բերիոյ թեմին առաջնորդներ՝ Գեղամ Եպիսկ. Խաչերեանէ եւ Շահան Եպիսկ. Սարգիսեանէ:

Պէյրութէն Ապրիլ 7ին Երեւան մեկնած է Ներսէս–Պետրոս ԺԹ. Կաթողիկոս–պատրիարքը, ընկերակցութեամբ Միքայէլ Ծ. Վրդ. Մուրադեանի որ Զմմառի վանքին մեծաւորն է:

ԱՄՆ–ու գործավարը Ապրիլ 7ին մամուլի ասուլիսի մը ընթացքին յոյս յայտնած է որ կրնան աշխատիլ Հայաստանի նոր վարչակազմին հետ եւ օգնել որ երկիրը վերադառնայ ժողովրդավարութեան ճամբան: Ատոր համար անհրաժեշտ նըկատած է արդար կառավարում եւ մամուլի ազատութիւն:

* * *

Երեւանի քաղաքապետարանը յայտարարութեամբ մը տեղեկացուցած է որ Ապրիլ 9ին ժամը 10.30էն մինչեւ 16 կը սահմանափակուի երթեւեկը եւ հետիոտն շրջագայութիւնը քաղաքին կեդրոնական մասին մէջ. յատկապէս Օփերայի շրջակայքը: Օփերայի մեծ սրահին մէջ Ազգային ժողովի յատուկ նիստը կը գումարուի այդ ժամերուն եւ այդ ընթացքին տեղի կ'ունենայ Ս. Սարգսեանի երդումի արարողութիւնը:

* * *

ՀԱՄԱԽՈՀԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հայաստանի նոր ձեւացած համախոհութեան անդամ կուսակցութիւններուն ներկայացուցիչները ռուսական թերթի մը հարցումներուն պատասխանելով արտայայտուած են ընդդիմութեան հետ երկխօսութեան հեռանկարին մասին:

Հանրապետական կուսակցութեան ղեկավար Ս. Սարգսեան ըսած է թէ իրենց համախոհութիւնը հիմնուած է փոխադարձ յարգանքի, ըմբռնումի եւ համեբաշխութեան սկզբունքներուն վրայ: Որոշած են որ տարակարծութիւնները պէտք է բանակցութեան, քննարկումներու, եւ միջկուսակցական երկխօսութեան ճամբով հարթուին, նախագահին հետ գործակցութեամբ:

Բարգաւաճ Հայաստանի կուսակցապետ Գ. Ծառուկեան ըսած է թէ դէմ չեն ընդդիմութեան հետ երկխօսութիւն ունենալու: Կը կարծեն սակայն նաեւ որ փոքրամասնութիւն մը իր յարձակողական ընթացքով ու ստեղծած լարուած վիճակով չի կրնար ամբողջ հանրութեան վզին փաթթել իր տեսակէտներն ու ցանկութիւնները:

Օրինաց Երկրի ղեկավար Ա. Բաղդասարեան զանազանած է քաղաքական ու իրաւական հոլովոյթները: Մարտ 1–2ի հանրահաւաքներով ցանցուած է քաղաքական հոլովոյթը եւ անկարգութիւնները ուխ գոհի ալ պատճառ դարձած: Այդ կէտէն կը բանին իրաւական չափանիշերը:

ՀՅԴ–ի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Ա. Ռուստամեան կարեւոր նկատած է բոլորին հետ աշխատելու նորընտիր նախագահին ցանկութիւնը. ըսած է թէ դուրս մնացած է միայն «ժառանգութիւն»ը, բայց ատիկա իրենց ընտրած ճամբան է: «Մենք դուները բաց ենք թողել» ըսած է Ռուստամեան:

* * *

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏՆԵՐԸ

Նախագահ Ռ. Քոչարեան իր պաշտօնավարութեան աւարտին, Ապրիլ 7ին հանդիպում ունեցած է պաշտպանութեան, արտաքին գործերու, արդարութեան նախարարութիւններուն, ոստիկանութեան, ազգային ապահովութեան ղեկավարութիւններուն հետ: Իր պաշտօնավարութեան տարիները այդ կառոյցներուն կայացման շրջանը նկատելով շեշտած է պետութեան կայացումին մէջ անոնց անհրաժարելի տեղը: Մաղթած է որ իրենց յետագայ աշխատանքը աւելի արդիւնաւոր կատարելու առիթը ունենան եւ հասնին աւելի մեծ յաջողութիւններու: Նախագահը աւելցուցած է թէ Հայաստան ունի փայլուն ապագայ, իսկ նորընտիր նախագահը՝ արդիւնաւոր ղեկավարութեան մը բոլոր կարելիութիւնները:

* * *

ՏԻԿԻՆ ՓՈՒՏԻՆ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապերու ընկերութեան մէջ Ապրիլ 7ին Հայաստանի ու Ռուսաստանի նախագահներուն կիները՝ Բելլա Քոչարեան եւ Լուտմիլա Պուտին բացումը կատարած են Ռուսական գիրքի կեդրոնին: Այդ կեդրոնին ստեղծման առիթով շուրջ 120 հազար հատոր գրականութիւն ստացուած է Ռուսաստանէն. մէկ մասը տրամադրուած է մայրաքաղաքի ու մարզերու գրադարաններուն: Կեդրոնը կ'ունենայ ընթերցասրահ: Յառաջիկային կը ստանայ նաեւ 40 հազար նոր հատորներ:

ՅԻՊԷ-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵՒՍԵԲԻՈՍԻ ՀԵՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՅԻՊԷ — Օհանավանքը կը սիրես որովհետեւ մօտ է Երեւանին, 20 վայրկեան, շատ բարեկամներ ունիս, եւ հիանալի բնակիչներ, ուրի՞շ:

ԵՒՍ. — Հոն, Սուրէն Պապուկին տունին դիմաց, Քասախի ձորի եզերքին կայ ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԸ՝ հայկական վանական համալիրներու ամէնէն գեղեցիկներէն մին: Վանքը իր անունը տուած է գիւղին որ թաղուած է պտղատու ծառերու մէջ, ունի բարեխառն կլիմայ եւ շուրջ 2000 բնակիչ, առանց հաշուելու չարաթավերջերու երեւանցի բնակչութիւնը:

Կեդրոնական կորիզը կազմուած է երկու եկեղեցիներէ, գաւիթէ եւ յաւելեալ տարածութենէ: Հնագոյն կառոյցը հիւսիսային եկեղեցին է որուն շուրջ ժամանակի ընթացքին կառուցուած են մնացեալ տարածութիւնները եւ հիւսիսային եկեղեցին, ասբիտաւոր սրահի նման, կռթնած երեք ընդմիջական կամարներու վրայ, որոնք իրենց կարգին դէպի հիւսիս եւ հարաւ ձգուող երկարաձեւ չորս զոյգ կամարներ կը կրեն:

Առաջին փոքր եկեղեցիին հիմնադիրը, ըստ աւանդութեան, եղած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ որ հոն բերած է Յովհաննէս Մկրտիչէն փոքր մասունք մը. սակայն Առաքել Դաւրիժեցիի համաձայն Յովհաննէս վանահօր անունը տրուած է վանքին:

Այս փոքր եկեղեցին Ե. դարու գործ է, միանաւ պազիլիք է, իր այդ վիճակով հասած է մինչեւ մեր օրերը:

Կողքին կը գտնուի ուրիշ հին կառոյց մը, գործածութիւնը անյայտ, ուր կը պահուին խաչքարի բեկորներ եւ զանազան առարկաներ:

Գլխաւոր տաճարը Ս. Յովհաննէսի նուիրուած, կառուցուած է 1216–1221 թ. Վաչէ Վաչուտեան իշխանին հրամանով: Գաւիթը իր տպաւորիչ տարածութեամբ գործն է Վաչէի որդի Քուրդ Վաչուտեանին, աւելցած՝ 1250 թուականին:

Զ. դարէն որպէս մեծահռչակ յիշատակուած Յովհաննավանքը ունէր զանազան շէնքեր, դպրատուն, բնակարաններ, ընդարձակ գերեզմանատուն, որոնց աւերակները մինչեւ այսօր կը վկայեն անցեալ փառքի օրերը:

Համալիրը մեծապէս վնասուած է ԺԹ.-Ի. դարերու երկրաշարժներէն, փլած են գմբէթ եւ պատեր. վերակառուցուած են սովետական եւ յետ-սովետական տարիներուն, մինչեւ օրս մնացած անաւարտ:

Յովհաննավանքը բացի իր հարուստ գրադարանէն, եղած է գրչութեան կարեւոր կեդրոն, այդ ձեռագիրներէն մաս մը պահպանուած են մինչեւ այսօր:

Վանքի մանրամասն նկարագրութիւնը կատարած է ԺԷ. դարուն՝ Զաքարիա Պատմիչ. անկէ ետք հատուածներ մէջբերուած են Ալիշանէն (Այրարատ էջ 165–177) տալով բազմաթիւ արձանագրութիւններու պատճէններ:

Դարձեալ Ալիշանէն կը քաղեմ հետեւեալ ցաւալի պատմութիւնը. (էջ 177).

«Յովհաննավանքի կարեւոր շնորհքներէն մէկն ալ ձեռագիրներու ժողովածուն էր... որ մինչեւ ԺԷ. դար գոյութիւն ունէին. պարսիկ-օսմանեան պատերազմներու առեն ձէլալի կոչուած թուրք հէն մը, Արարատեան գաւառները ասպատակելով հասաւ մինչեւ Յովհաննավանք. զայս տեսնելով վանքի բոլոր բնակիչները փախան. անոնք բռնեցին տկար եւ հիւանդ աբեղայ մը եւ ստիպեցին որ ցոյց տայ իրենց դրան եւ պահարան: Երեք օր անդադար կը ծեծէին կախուած աբեղան եւ չարաչար կը տանջէին. տն ճարահատ անոնց ցոյց տուաւ դարանը. եւ ներս մտնելով կողոպտեցին եւ յափշտակեցին ամէն բան. ապա աբեղան ալ սպաննեցին եւ վանքին ձորը նետեցին և դարանէն շատ առարկաներ հանեցին, զգեստեղէն, պղնձեղէն, ամաններ, խաչ, սկիհ, շուրջառ եւ բուրվառ, եւ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ որոնց ամբողջութիւնը վարդապետական պատուական գրութիւններ էին: Եւ տակաւին կային այդ դարանին մէջ վանքին սրբութիւնները, Քրիստոսի երեսին վարշամակը եւ Փուշէ պսակէն մաս մը եւ Աջը Ս. Ստեփանոս Նախավկային եւ այլ սրբութիւններ եւ սուրբ նշաններ: Ջալալիները այս ամէնը առնելով տարին կորսնցուցին. անոնց գլխաւորին անունը Արդուազմար Մուսալիմ կը կոչուէր»:

ՅԻՊԷ — Այս ի՜նչ սարսափելի աղէտ եղած են մեր գլխուն իսլամները սկսած Է. դարէն մինչեւ այսօր, յատկապէս Արաբները եւ թուրք բոլոր ցեղերը անխտիր: Արդեօք ի՞նչ ճակատագիր կ'ունենային յափշտակուած, կողոպտուած առարկաները...:

ԵՒՍ. — 1966ին էր անծանօթ անձ մը հեռաձայնով ժամադրուեցաւ ինծի հետ, Փարիզի 9րդ թաղամասի փողոցներէն մէկուն մէջ «ձեզ հետաքրքրող բաներ» ցոյց տալու, գնելու առաջարկով: Ներկայացայ, մտանք մութ սենեակ մը հազիւ լուսաւորուած, բայց գետին հանգչած մեծ փայտէ սնտուկ մը... եւ ի՛նչ տեսնեմ. Կարինի՝ Սանասարեան Գոլէճի, Տրապիզոնի՝ Մխիթարեան վարժարանի կնիքները կրող հաստափոր գիրքեր... ԺԷ. դարու Կ.Պոլիս գրուած ձեռագրեր, եկեղեցական առարկաներ եւ այլ մանր բաներ.. զորս չեմ յիշեր, այնքան ցնցուած էի. առաջարկած գիները իմ կարողութենէս շատ-շատ վեր ըլլալով, խնդրեցի որ քիչ մը ժամանակ տայ մտածելու: Յաջորդ շաբաթ արդէն անհետացած էր...: Հիմա հասկցա՞ր թէ ինչ ճակատագիր կ'ունենան: Կ'ենթադրեմ որ մեծագոյն մասը կրօնական մոլեռանդութեամբ կը փճացուէին եւ այսպէս 1400 տարիներ շարունակ: Բայց մենք ուրիշ ենք: Յովհաննավանքի աւերակոյտերուն մէջ գտայ փոքրիկ տապանաքար մը, հազիւ 50 սմ. երկայնքով եւ 30 լայնքով, տարական կամարի ձեւ տրուած որ հօ կոէր արաբերէն արձանագրութիւն: Ջխորտակեցի, ոչ ալ ոտնակոխեցի, հանեցի քարակոյտէն, մաքրեցի եւ կոկիկ մը գաւիթին մէկ մութ անկիւնը զետեղեցի, ուր պահուած է մինչեւ այսօր:

ՈՒՇԻ անգնեւէ առաջ կ'ուզեմ հոս արձանագրել Վաչէ Վաչուտեան իշխանին հրաչալի արձանագրութիւնը եկեղեցիի հիւսիսային պատին վրայ, առանց մոռնալու այն բացառիկ խորաքանդակը եկեղեցիի մուտքին վրայ, որ կը ներկայացնէ մեծաւոր Քրիստոսը, իմաստուն եւ Յիմար կոյսերով շրջապատուած, ամբողջութիւնը պսակուած աստղաձեւ քանդակազարդերով, բացառիկ նրբութեամբ:

«ՌԿԶ. 1217. Աստուծոյ շնորհքներու ծագումէն սկսած, եւ Արարատեան գաւառի եկեղեցիներու հիմնարկութենէն եւ լուսաւորութենէն Զաքարիա եւ Իւանէ երկու հարազատ եղբայրներու ձեռքով եւ անոնց արդարածնունդ զաւակներուն Շահնշահի եւ Աւագի, ես Վաչէ իշխանաց իշխան, Վաչուտեանց Սարգիսի որդի, մեծ պատիւով սիրուած աստնցմէ, իմ հաւատարիմ ծառայութեանս համար կանչուեցայ որպէս գաւառիս վերակացու, իմ Մամախաթուն կնոջս հետ միասին միաբանեցայ Յովհաննավանքի Սուրբ Ուխտին, բազում նուէրներով եւ ընծաներով օգնական եղանք մեծափառ ձեռակերտիս շինութեան համար. եւ Սուրբ Ուխտիս Առաջնորդները ամէն տարի որոշեցին պատարագել զՔրիստոս իմ անունիս Ղազարու տօնը, բոլոր հին եւ նոր եկեղեցիները, եւ ԳԻՒՏ ԽԱՉԻՆ օրը զՔրիստոս պատարագել Մամախաթունին համար, հին եւ նոր եկեղեցիները անխափան մինչեւ Աստուծոյ Որդիին Գալուստը. Ով որ չգործադրէ թող դատուի Քրիստոսէն» (Այրարատ, էջ 168):

ՈՒՇԻ — Կը գտնուի Աշտարակ-Ապարան մայր ճամբուն ձախ կողմը, միայն խճուղիով բաժնուած Յովհաննավանքէն, որ գրաւած է ճամբուն աջ կողմը: Արագածի հարաւ-արեւելեան փէշերուն, ալիքաւոր սարահարթակի մը վրայ տարածուած, առատ բուսականութեան մէջ թաղուած, շուրջ 1500 բնակչութեամբ, միջնադարեան հայկական սիրուն գիւղ մըն է, որուն բնիկ բնակչութեան վրայ աւելցած են Ռշտունիքէն, Խութէն, Մուշէն, Խլաթէն ժամանած գաղթականներ:

Գիւղին մէջ յատուկ հնութիւն չէ մնացած, բացի հին եկեղեցիի մը աւերակներէն: «Իսկ հռչակաւոր վանքն Ուշոյ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ սակաւուք հեռի ի գեղջէ յարեւմտից - հիւսիս նորին կայ ի բարձու սարատափի ստորոտից Արագածու» (Այրարատ, էջ 181):

Ուշիին կարեւորագոյն յուշարձանը իր Ս. Սարգիս վանքն է, պարսպապատուած, քառանկիւն, երեք բազմանկիւն ամրոցներով եւ զոյգ մը բոլորաձեւ աշտարակներով:

Այս շրջափակին մէջ կը գտնուին մատուռ մը, հիմնովին կործանած եկեղեցի մը, եւ աւերուած վիճակի մէջ գտնուող գաւիթ մը:

Համալիրը կառուցուած է սրբատաշ, դեղնաւուն տուֆով, չորս մեթր բարձր պազալտէ պարիսպով:

Հիմնական եկեղեցին Ե.-Է. դարերուն կառուցուած ըլլալու է եւ վերածուած է քարակոյտի: Մատուռը Ժ. դարու գործ է, իսկ գաւիթը չորս սիւներու վրայ կառուցուած է ԺԱ. - ԺԲ. դարերուն:

Յայսմաւուրքներու աւանդութեան համաձայն, Մեսրոպ Մաշտոց Պարսիկներու Համիան քաղաքէն բերած է Ս. Սարգիսի մարմինը եւ պատիւով զետեղած Ուշիի մէջ եւ նոյն տեղը շինած հռչակաւոր վանք մը որ կանգուն է մինչեւ այսօր (էջ 181):

Ալիշան կը համարի որ վանքին աւերումին մեծ մասը հետեւանք է 1827ի երկրաշարժին: Տուած է մի քանի կիսատ մնացած արձանագրութիւններ եւ 1264 թուականը կրող ամբողջական մը:

«Աստուծոյ եւ Ս. Սարգիս Զօրավարի ողորմութեամբ, Այլղաններու աշխարհակալութեան օգնութեամբ, Աւագ Սարգիսի տեղւոյն տէրութեան առեն, Աստուծոյ Մեծ Տաճարը շինուեցաւ խախտուած եկեղեցիին փոխարէն որ հիմերէն շարժած էր, ձեռամբ Տէր Յովհաննէսին, իր հալալ կերպով ունեցածներով: Քրիստոս թող ողորմի իրեն, եւն. Թ. ՉԺԳ» (նոյն, էջ 181):

Ուշիի վանահայրներուն մէջ փայլած է հռչակաւոր ՈՍԿԱՆ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻՆ, որուն գործն է 1634ին բարձրացած չորս մեթր բարձրութիւն ունեցող պարիսպը որուն մասին մեծ դրուատիքով կը խօսի դարուն պատմիչ՝ Առաքել Դաւրիժեցին.

«Ոսկան վրդ. թէպէտ չկրցաւ եկեղեցիներուն տանիքները նորոգել, քանի չունէր բաւարար գումար, բայց մեծ տաժանքով եւ բազում աշխատասիրութեամբ, եկեղեցիին չորս կողմը պեղեց եւ շուրջը ամուր պարիսպ պատեց եւ պարիսպէն ներս շինեց խուցեր եւ պատշաճ տուներ եւ ինք հոն է բարի կարգաւորութեամբ, Աստուծոյ ողորմութեան յոյս դնելով եւ Ս. Սարգիս զօրավարին բարեխօսութեամբ» (Առաքել, գլ. ԻԶ.):

Նոյն Առաքելի եւ Սիմէոն Երեւանցիի վկայութեամբ Ուշին եղած է գրչութեան վայր եւ ունեցած է ընդարձակ կալուածներ:

Բացի Ս. Սարգիս վանքի համալիրէն, Ուշիի հնավայրը բաղկացած է ուշ պղնձէ դարի եւ վաղ երկաթէ դարի բնակավայր-ամրոցներէ, ջրամբարի մնացորդներէ, դամբանադաշտէ մը եւ միջնադարեան գիւղատեղէ:

(Շար. 16)

ՀԱՅ ԸԼԼԱԼԸ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ Է

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

Հայոց պատմութեան ներկայ հանգրուանը դժուարին կացութեան մը առջեւ կը դնէ հայ մարդը: Մեր հայրենիքին խոշորագոյն տոկոսը բռնագրաւուած է թշնամիին կողմէ, իսկ պզտիկ մէկ մասը՝ Հայաստան, կը շարժի այնքան որքան թոյլ կու տան իւրայատուկ պայմանները:

Մարդկային կեանքի ներկայ հանգրուանը եւս կնճռոտ ու բարդ կացութիւններ կը ստեղծէ մարդ անհատին: Պահանջկոտ եւ բիրտ ընկերութիւնը կը լափէ մարդու ազնիւ զգացումները, աւանդական պարզութիւնները փուլ կուգան, եկեղեցին կը դիմագրաւէ մեծ տատանումներ, կը քայքայուի նահապետական ընտանիքը, ոճիրն ու թմրեցուցիչը ազատօրէն կը շրջագային փողոցներու մէջ, եւ մարդիկ օրը - օրէն աւելի կը մեքենայանան, կը կղզիանան իրարմէ:

Ներկայ պայմաններու մէջ Հայ ըլլալը, Հայու հոգի ու հաւատք պահելը իրապէս որ կ'ենթադրէ դժուարին ճակատագիր մը: Հայ ըլլալը, Հայու աւանդութիւն եւ ազատ կամք պահպանելը իրապէս որ կը կարօտին դերմարդկային համբերութեան մը: Յամառութեան մը:

Պատմութեան տեւողութեան, հայութիւնը քիչ անգամ ունեցած է բարօր եւ անդորր կեանք մը: Հայ ըլլալը՝ ժամանակներու վազքին մէջ, երբեք դիւրին չէ եղած եւ հայ անհատէն պահանջուած է ուժեղ նկարագիր մը, չարքաշութիւն եւ կռիւ:

Ինչպէս երկար դարերու ընթաց-

քին, եւ թերեւս ամէն ժամանակէ աւելի, այսօ՛ր, Հայ ըլլալը ամէն բանէ առաջ եւ որեւէ՛ գնով կ'ենթադրէ կամաւոր ու գիտակից յանձնառութիւն մը:

Ներկայ հանգրուանը կը նուաճուի հայ մարդու այդ յանձնառութեամբ, եւ անով պայմանաւորուած են հայութեան գոյատեւման պայքարն ու Հայկական հարցի յաղթական ելքը:

Յանձնառութիւն:

Լրիւ կամ մասնակի, բայց անպայման յանձնառութիւն՝ որեւէ տեղ, որեւէ կալուածի մէջ, որեւէ կազմակերպութեան շարքային գիտութեան մէջ, հաստատութեան մը հրջապատին մէջ, հանդէսի մը նըստարաններուն վրայ, բեմի մը առջեւ: Տեղ մը:

Մեծ կամ պզտիկ յանձնառութիւններ չկան. ընտրութիւնն ու նախընտրութիւնները ժամավաճառութիւն են: Իմաստ չունի քաղաքական յանձնառութիւնը գերադասել մշակութայինին, ստորադասել համեստ միութեան մը աւելի քան համեստ նախաձեռնութիւնը, արհամարհել ազգային ծառայութեան այս կամ այն կալուածը, որքան ատեն որ այս բոլոր գործերը կ'ըլլան հայութեան գոյատեւումին համար:

Հայ ըլլալ եւ այդ ըլլալը արդարացնել ու ապրի՛լ էութենէն փրթող բանով մը՝ յոգնութիւն, արիւն, չունչ կամ դրամ:

Հայ ըլլալ եւ մասնակցիլ մեր կեանքին, հաւաքաբար գոյատեւելու մեր վճիռին, հաւաքաբար՝ իբրեւ հայութիւն, յաղթանակելու պատուոյ մեր յանձնառութեան: Մասնակցիլ համեստօրէն հետեւելով, գործակցելով կամ դժգոհելով, աւելի՛ն ընելու համար նոյնի՛սկ կռուըտելով:

Բայց մասնակցի՛լ անպայման:

Յանձնառութիւն ունենալ մեր եկեղեցիին հանդէպ, ծառայել անոր պայծառութեան, եւ բարօրութեան: Պայքարիլ, որպէսզի անոր խորաններէն ճառագայթող լոյսը չարունակէ պսպղալ, որպէսզի անոր զանգակները ղօղանջեն տեւաբար ու շարականները արձագանգեն հայ հոգիներէն ներս:

Հայը, որ կը մոռնայ իր եկեղեցին, անպայման բա՛ն մը կը պակսի իր նկարագիրէն, անպայման անաւարտ կը մնայ Հայ մնալու իր կոչումը, իր էութեան դրսեւորումը:

Յանձնառութիւն ունենալ ընտանիքին հանդէպ, պահպանել հայ ընտանիքին բարոյական հին արժէքները, միշտ վերադառնալ ընտանեկան մեր աւանդական ու մաքրակենցաղ բարքերուն եւ տեւաբար վերանորոգել զանոնք:

Հայը, որ կը մոռնայ ընտանիքի սրբութիւնն ու նուիրականութիւնը, անպայման կը վերածուի անդիմագիծ անհատի մը, կը կորսնցնէ ցեղային իր սեփական դրոշմը:

Յանձնառութիւն ունենալ մեր մըշակոյթին հանդէպ, եւ անոր համար զօրավիգ կանգնիլ մեր դպրոցներուն, նոր աշակերտներ բերել անոնց, քար մը աւելցնել անոնց շէնքին վրայ, ծառայել անոնց բարգաւաճումին, որպէսզի անոնք շարունակեն մեր վիրաւոր մայրենի լեզուն փոխանցել նորահաս սերունդներուն՝ իբրեւ Հայաստան աշխարհի ամէնէն թանկագին աւանդութիւնը, իբրեւ մեծաքանչ ձայնը դարաւոր ու բազմատանջ մեր հայրենիքին:

Հայը, որ կը մոռնայ իր լեզուն, անպայման պարապ կը մնայ իր հոգին, իրմէ կը պակսի զգայարանք մը, կը պակսի ջի՛ղը որով կապուած պիտի ըլլար իր մայր հողին, ընդերքային արմատներուն:

Այս երեք սիւներուն քով կան տակաւին կուսակցութիւններն ու միութիւնները: Կան մամուլն ու գիրքը, մեծ ու պզտիկ նախաձեռնութիւնները:

Բայց կայ գլխաւորապէս Հայ Դատը: Հայու գոյութեան ու գոյապահպանման իմա՛ստն իսկ, առանց որուն նշանակութիւն չունի պահել եկեղեցի ու դպրոց, սիրտ մաշեցնել լեզուն սորվելու եւ սորվեցնելու, ժողովներ գումարել. պայքարիլ ասոր ու անոր դէմ, դիմումներ կատարել

Հայ ըլլալը կ'ենթադրէ յանձնառու ըլլալ վերի գործօններէն մէկին ու մէկուն, բայց մանաւանդ Հայ Դատին հանդէպ:

Եկեղեցւոյ հաւատացեալ ըլլալ, կամ մօտ ըլլալ հայ դպրոցին: Հայ թերթ ստանալ կամ ներկայ ըլլալ հայկական ցոյցի մը, հանդէսի մը, մասնակցիլ ազգօգուտ հանգանակութեան մը:

Ըլլալ դաշնակցական, հնչակեան կամ ռամկավար, իսկ եթէ կուսակցական - քաղաքական գործունէութիւնը խառնուածքի խնդիր է, ուրեմն նուիրուիլ մշակութային ծառայութեան, մարզական կամ բարեսիրական միութեան մը:

Բայց անպայման ըլլալ. յանձնառութիւն ունենալ, որպէսզի արժեւորուի եւ արդարանայ Հայ ըլլալու ճակատագիրը:

Այլապէս, երակներու մէջ Հայու արիւն ունենալը ապահով երաշխիք մը չէ Հայ մնալու: Զտարիւն Հայեր էին Անիէն մինչեւ Լեհաստան գացող Հայերը, բայց այսօր ոչ ոք մնաց անոնցմէ: Ապահով երաշխիքներ չեն նաեւ լաւ քրիստոնեայ ըլլալը, անսխալ կամ վճիտ հայերէն խօսիլը, Հայու անուն - մականուն ունենալը:

Այս բոլորը պէտք է՝ արիւնը, քրիստոնէական ոգին, վճիտ հայերէնը, բայց հիմնական երաշխիքը, Հայ ըլլալու գիտակցութիւնն է, որ անպայման կ'առաջնորդէ յանձնառութեան:

Հայը, որ մոռցած է իր եկեղեցին, իր զաւակը հեռու պահած է հայ դպրոցէն, դուրս է բոլոր կազմակերպութիւններէն, հայ թերթ չի ստանար, չի մասնակցիր ոչ մէկ ձեռնարկի, հաղորդակից չէ հայ կեանքին, ինչպէ՞ս, ինչո՞վ կրնայ արդարացնել Հայ եղած ըլլալու իր անունը:

Հայ ըլլալու հիմնական երաշխիքը յանձնառութիւնն է:

Եւ Հայ Դատի լուծումը պայմանաւորուած է այդ յանձնառութեամբ:

Գ. Հ.

ՓԱՐԻԶ

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ԵՐԵԿՈՅԹ ՀԱՅ ՏԱՆ ՄԷՋ

Երկուշաբթի, Մարտ 17ին, Ստեփան - Խաչատուր Ճերմակեան Հայ Տան մէջ հետաքրքրական դասախօսութիւն մը տուաւ, «Շահան Շահնուր – հայկակա՞ն թէ ֆրանսական գրականութիւն» նիւթով: Տան տնօրէն Ս. Սուքիասեան ներկայացուց երիտասարդ գանատահայ բանաստեղծը որ շառաւիղներէն է բանաստեղծ Ռուբէն Որբերեանի եւ Ստեփան Շահումեանի: Որպէս ուսանող ԻՆԱԼՔՕ-ի հայկական ամպիոնին, պատրաստած է Մուշեղ Իշխանի գործին մասին հետաքրքրական աւարտաճառ մը, որուն թեման աքսորն է:

Դասախօսը նիւթ ընտրած էր Շահնուրի ֆրանսերէն էջերը որոնք Արմէն Լիւպէն ստորագրութիւնը կը կրեն, գրուած՝ զանազան առողջարաններու մէջ: Ըսաւ թէ այդ բանաստեղծութիւններուն մէջ կը գտնենք հեղինակին աքսորին վերաբերող վայրերն ու պահերը: Իսկ լեզուն ֆրանսերէն մըն է որ ունի արեւելեան նշումներ:

Ա. Լիւպէնի առաջին հաւաքածոյին՝ «Le passager clandestin»-ի անցորդը վերապրողն է որ աքսորը հետը բերած է օտար ափեր ու երկը կազմող միտքերը պանդուխտին պատկանողներ են:

Այդ աքսորին վայրերը Լիւպէնի համար պանդոկն ու առողջարաններն են: Պանդոկը՝ որ իջեւան կ'ըլլայ գաղթականներու, պոռնիկներու եւ ուրկէ ինք եւս պարտաւոր է անցնելու, որպէսզի մտնէ նոր կեանքին մէջ: Գրողը կը փորձէ անկարելի բաղդատութիւն մը երկու հակադիր աշխարհներու՝ իր մանկութեան Պոլիսին եւ աքսորավայր Փարիզի միջեւ:

Մինչ այդ տառապանքն ու վիշտը ներկայ են բանաստեղծին տողերուն մէջ երբ անոնք կը վերաբերին երկրորդ վայրին, հիւանդանոցին: Այս անգամ ընթերցողը կը մտնէ գաղտնիութեան այդ աշխարհը ուր մարդը կը տառապի ու կը մեռնի անանուն:

Յետոյ դասախօսը անդրադարձաւ Ա. Լիւպէնի «Sainte patience» հատորին ուր աքսորը անգամ մը եւս կը յայտնուի քառասունական տարիներու Փարիզին մէջ: Հոն բանաստեղծին գրիչը կը թեթեւնայ, կեանքի փիլիսոփայութիւնը երգելով: Այս հատորին մէջ ան կ'անդրադառնայ ձուլումի վտանգին: Անոր դէմ Հայը կամ պիտի ընտրէ հայկական աշխարհին մէջ փակուիլ, կամ հրաժարիլ հայութենէն:

Ֆրանսահայ ծանօթ հեղինակ ու բեմադիր Ա. Ադամով կը գրէր Շահնուրի այս երկին մասին.

«Rien de plus injuste que les critiques souvent adressées à Armen Lubin, cet homme qui ne parle que de son lit d'hopital. Mais que peut on objecter au lit d'hopital quand celui-ci devient vraiment un centre du monde, un lieu où il se passe des choses qui ne peuvent se passer ailleurs ? Si la maladie est continuellement l'œuvre d'Armen Lubin, c'est sous la forme d'une douleur qui n'est pas seulement celle du corps ou de l'âme ou de n'importe quoi, mais qui est la douleur d'être. »

Combat août 1949

«Կրակ կրակի դէմ»ն ալ կը բանի աքսորի թեման: «L'exil est un grand etonnement» կ'ըսէ Լիւպէն որ աքսորը նոր աշխարհի մը պատկանող երկրորդ լոյսը կը նկատէ. նոր աշխարհը արեւմուտքն է որ յաճախ հակասական տպաւորութիւններ ու կարծիքներու ծնունդ կուտայ բանաստեղծին մտքին մէջ:

Դասախօսը հարց տուաւ թէ ինչո՞ւ Շահնուր որոշեց ֆրանսերէն գրել: Շատերու կարծիքով ֆրանսերէնին ընտրութիւնը փախուստի իւրայատուկ լուծումն էր: Իսկ Ս. Խ. Ճերմակեան բացատրեց թէ Շահնուր իր արձակով մասնակից էր հայերէն լեզուին ու մշակոյթին պահպանումին: Բայց նոյն ատեն որպէս աքսորեալ հետաքրքրուեցաւ ֆրանսական գրաւիչ աշխարհով, զոր արդէն բաւական հարազատ ու մտերիմ կը զգար: Ան կ'ուզէր հաղորդակցիլ այդ աշխարհին, ենթակայ դառնալով փոփոխութեան փորձառութեան: Իսկ ատոր միջոցը ըլլալ կը թուի լեզուն: Այդ պարագային աքսորը երկրորդական դեր կը խաղայ, այլեւս անցք մը կը յայտնուի: Հայ գրողը պիտի անցնի ուրիշի մը լեզուին մէջ, անոր մտերմութիւնը լաւ ճանչնալու համար: Ու արուեստը լաւագոյն ճամբան է այդ նոր աշխարհը հետազօտելու: Ան հիմնական գետինն է ուր կը գոյանայ լեզուին ու աքսորին կապը:

ՏԻԳՐԱՆ Ա. ԵԿԱՒԵԱՆ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Մ Ա Ս Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

«ԴՈՒՔ ՄԻՍ ՈՒ ԱՐԻՒՆ ԷՔ ՍՏԱՑԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՑ»

– Ահա, տեսնո՞ւմ էք Պետրոս, որքան ուրախացաք այդ հարազատ տառերով: Մեզ, Հայերիս համար, անչափ թանկ է մեր էութեան իւրաքանչիւր դրսեւորում: Որպէսզի պահպանենք աշխարհով մէկ սփռուած մեր ազգը, մենք փայփայում ու պահպանում ենք մեր լեզուն, մեր սրբութիւնները, հպարտանում մեր հանճարի իւրաքանչիւր արտայայտութեամբ: Դուք՝ ժողովրդի ծոցից դուրս եկած դեռատանդ, մի՞թէ ձեր կաշուի վրայ չէք զգում, թէ ինչպիսի մեծ բերկրանք էք պատճառում ձեր ժողովրդին ձեր յաջողութիւններով: Այնպէս որ ոչ թէ տրտմել է պէտք, այլ ընդհակառակը՝ աշխատել աւելի մեծ սիրով ու եռանդով, որպէսզի է՛լ աւելի փառաբանէք մեզ...

Այդ խօսքերի վրայ Ադամեանի աչքերը նոր փայլ ստացան, եւ նա խանդավառուած առաջարկեց թէոդոսիացիների համար ելոյթ ունենալ հէնց իր՝ նկարչի պատկերասրահի դահլիճում:

Յետոյ եկաւ Օգոստոսի 30ը, յոբելենական հանդիսաւոր տօնակատարութեան նախօրեակը, երբ Իվան Կոնստանտինովիչը հիւրեր հրաւիրեց նշելու համար իր յիսնամեայ գործունէութիւնը... Շատ ճառեր արտասանուեցին այդ օրը, շատ խօսք ու ողջոյններ եղան, բայց բոլորից թանկը Այվազովսկու համար Ադամեանի յուզումնալից ճառն էր:

...Հիմա այդ բոլորի մասին էր մտածում Այվազովսկին ձեռքում Ադամեանի հեռագիրը: Յետոյ նա վերցրեց թղթապանակներից մէկը, որտեղ հաւաքուած էին Ռուսաստանի եւ այլ երկրների Հայերից ստացուած շնորհաւորանքները: Մատները դողդողալով թերթում էին էջ առ էջ, երբ հայեացքը յանկարծ կանգ առաւ այն ուղերձի վրայ, որ յղել էին Անանովն ու իր բարեկամները.

«Մենք Մոսկուայի Հայերս, մեր սրտագին ողջոյնն ու շնորհաւորանքներն ենք յղում Ձեզ եւ սրտանց ցանկանում ուժ եւ քաջառողջութիւն յետագայ բեղմնաւոր աշխատանքում ի փառս Ռուսաստանի եւ համայն հայութեան»:

– Այո, – մտորում էր Այվազովսկին, – շատ ճիշդ է ասուած. Հայերի ճակատագիրը անխզելիօրէն կապուած է Ռուսաստանի հետ: Այդ նոյն Ռուսաստանն է, որ թեւ ու թիկունք կանգնեց ինձ, ահա հիմա էլ այդպէս մեծարում է Պետրոս Ադամեանին. մի՞թէ դա մեր երկու ժողովրդների բարեկամութեան լաւագոյն առհաւատչեան չէ...

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Ռուսական խիստ ձմեռ էր:

Նկարիչ Վարդան Մախոխեանը ժամանեց Պետերբուրգ: Մախոխեանը թէեւ արդէն անուն հանած ծովանկարիչ էր, բայց իր նկարները չէին բաւարարում նրան: Պէրլինի ակադեմիայում, որտեղ սովորում էր նա, դասախօսների մէջ ոչ մի ականաւոր ծովանկարիչ չկար: Եւ Մախոխեանը երազում էր հանդիպել Այվազովսկուն: Հանգամանքների բերումով նա եղաւ Փարիզում. այստեղ ընկերները խորհուրդ տուեցին հանդիպել միւս նշանաւոր ծովանկարիչ Բոգոլիւբովի հետ: Բոգոլիւբովը սիրով ընդունեց Մախոխեանին, նրան ցոյց տուեց իր նկարները, երկար զրոյց ունեցաւ հետը:

(Շար. 199)

(Շար. Ա. էջէն)

պահովութեան այդ վանդուածային ներկայութեամբ, կամ թերեւս աւոր իսկ պատճառով, ներկայացնել բոլին պատկառելի թափօրը մեկնումէն մինչեւ վերջին հանգրուանը: Ի վերջոյ, ի՞նչ բանի ծառայեց այս բոլորը: Հաւանական չէ որ «Առանց սահմանի Թղթակիցներ»ու գործողութիւնները բան մը փոխեն Չինաստանի մէջ, ոչ ալ Թիպէթի:

* * *

Սկզբունքով, բոցին յաջորդ հանգրուանը Սան-Ֆրանսիսքօն է: Կ'ըսուի նոյնիսկ որ փոփոխութիւններ ըլլան, Փարիզի միջադէպերուն պատճառաւ: Ապրիլ 8ի առաւօտուն, լրատուները կը հաղորդէին նոյնիսկ որ Ողիմպիական միջազգային կոմիտէն կ'ուսումնասիրէր բոցի այս աւանդական երթին վերջնական ընդհատումը Փեքինի խաղերէն յետոյ:

* * *

Ֆիկառօ կը յայտնէր նաեւ որ այս ամբողջը աւելի քան 400 հազար եւրօ արժած էր ֆրանսական իշխանութիւններուն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ Եւրոպայի դաշնակցութիւնը յայտարարութեամբ մը հրաւիրած է եւրոպացիները որ չքաջալերեն Թրքական դրօսաշրջութիւնը, չերթան այդ երկիրը: Բացատրութիւնը այն է որ զբօսաշրջութեան եկամուտը Անգարա կը ծառայեցնէ Քիւրտերու իրաւունքները կապտելու: Կոչով չեշտուած է թէ տասնեակ հազարաւոր Քիւրտերու սպանութեան, չորս հազար քրտական գիւղերու հրկիզումին, աւելի քան 3 միլիոնի տեղահանութեան, ձերբակալութիւններու, ոճիրներու պատասխանատու Թրքական պետութիւնը վերջին շրջանին զարկ տուած է իր այդ ընթացքին:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Իսիի «Տիրուհի Սէրէնկիւլեան» մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Պարգեւ եւ Վերժին Սայրինին, Ղուկասեան, Տէրտէրեան, Խանթեմուրեան, Սայրեն ընտանիքներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իրեց քրոջ եւ մօրը՝ Նուարդ Պալի մահուան առթիւ:

Date à retenir

SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à A. Aharonian
le **vendredi 18 avril** à **20h30**
à la Maison de la Culture Arménienne de Marseille

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Յ. ՊՉՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

ԱԶԴ
ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:

Հեռ. – 01.53.79.80.69

Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A.
« Onnig Surmélian »
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

Le jeudi 10 avril à 20h45
Le
Centre Culturel SAINT MESROB
recevra
MARINA DEDEYAN
pour la présentation de son livre
L'Aigle de Constantinople
(éd. Flammarion)

Marina DEDEYAN, baignant depuis l'enfance en chevalerie et byzantinisme, a déjà publié avec succès Moi, Constance, princesse d'Antioche, se situant dans le même contexte historique.

10 bis rue Thouin - 75005 Paris
Métro Cardinal Lemoine ou Monge
RER Luxembourg

Entrée libre
Signature et vente du livre
Cocktail

L'Association Sainte-Croix de Paris propose
une **E X C U R S I O N E N N O R M A N D I E**
LISIEUX — HONFLEUR — PELERINAGE ET TOURISME
Le Dimanche 1er juin

PROGRAMME

Départ à 8h15 en autocar de la Place de la République à Paris.
Divine liturgie célébrée par S.E.R. Mgr Grégoire GHABROYAN dans la crypte de la Basilique Sainte Thérèse de Lisieux, à 11 heures.
Déjeuner dans une auberge normande.
Après-midi : Promenade à Honfleur.
Retour vers 20 heures Place de la République à Paris.
Participation aux frais : 60 euros
Renseignements et inscriptions :
Séta : 01 57 63 95 31 ou **Stephen** : 01 42 88 17 91.
Règlement par chèque à libeller à : **Association Sainte-Croix**
à envoyer au 10 bis rue Thouin, 75005 Paris.

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak-Mesrop de Marseille
Directeur : **Khatchig YILMAZIAN**

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

Association Arménienne d'Aide Sociale A.A.A.S.
Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

Recherche Directeur(trice) de maison de retraite

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur(trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne.
Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arméniennes.
Possibilité de logement de fonction.
Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante :
Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77 rue la Fayette — 75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

ESPOIR POUR L'ARMÉNIE
VOYAGE EN ARMENIE ET AU KARABAGH
DU 6 AU 16 JUILLET

Logement en hôtel 3 étoiles en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh
— Lac Sevan, Khor Virab, Guéghard, Garni, etc... —

Prix 1550 euros
Serge Kurkdjian, tél. : 04 91 77 23 44
E-mail : serge@kurkdjian.org
www.espoirpourlarmenie.org

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

«ՅԱՌԱՋ»ի ընթացիկ ազդերու սակագինը

	€	
Մահազդ	150	(179,40)
Հոգեհանգիստ	135	(161,46)
Շնորհակալիք	135	(161,46)
Հարսնիք-Նշանտուք	135	(161,46)
Ծնունդ	135	(161,46)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ.Վ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհանուր գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8րդ (12–13 տող) ծնունդներուն:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 10
JEUDI
10 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.935 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 83e ANNEE — N° 21.935

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ԻՐ ՊԱՇՏՕՆԸ

Ապրիլ 9ին Օփերայի մեծ դահլիճին մէջ գումարուելիք Ազգային ժողովի յատուկ նիստին տեղի կ՚ունենար նորընտիր նախագահ Ս. Սարգսեանի երդումի արարողութիւնը: Նախատեսուած էր 58 երկրի պաշտօնական պատուիրակութեան եւ միջազգային 12 կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն ներկայութիւնը: 2003ի նոյն օրը իր լիազօրութիւնները ստանձնած էր Ռ. Քոչարեան:

Նորընտիր նախագահը կ՚արտասանէ հետեւեալ երդումը որ տեղ գտած է Սահմանադրութեան մէջ.

«Ստանձնելով Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնը՝ երդւում եմ. անվերապահօրէն կատարել Սահմանադրութեան պահանջները՝ յարգել մարդու եւ քաղաքացու իրաւունքները ու ազատութիւնները, ապահովել հանրապետութեան անկախութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ անվտանգութիւնը՝ ի փառս Հայաստանի Հանրապետութեան եւ ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի»:

Երդումի արարողութենէն ետք տեղի կ՚ունենար Ազատութեան հրապարակին վրայ հանդիսաւոր շքերթ մը: Պաշտպանութեան նախարարութեան, ոստիկանութեան, սահմանապահ զօրքերու միաւորներ եւ Պաշտպանութեան նախարարութեան նուագախումբը պատասխանելով նոր նախագահին ողջոյնին, շքերթով կ՚անցնէին հրապարակէն:

Ըստ Սահմանադրութեան, նոր նախագահը իր պաշտօնի ստանձնումին օրը կ՚ընդունի կառավարութեան հրաժարականը. բայց կառավարական կազմը իր աշխատանքը կը շարունակէ, մինչեւ նորին վաւերացումը:

Նախագահը վարչապետ պէտք է նշանակէ կառավարութեան հրաժարականը ընդունելէ մինչեւ տասը օր ետք, իսկ նոր կառավարութիւնը պէտք է կազմուի վարչապետի նշանակումին յաջորդած քսան օրուան ընթացքին:

* * *

ՆՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱ՞Ն

Վերջին օրերուն Երեւանի մէջ որպէս նոր վարչապետ, յաճախ կը տրուի Կեդրոնական դրամատան նախագահ Տիգրան Սարգսեանի անունը: Այդ մասին յայտնած է «Բարգաւաճ Հայաստան»ի կուսակցապետ Գ. Ծառուկեան եւս: Ինչ կը վերաբերի ենթակային, Ապրիլ 8ին հանդիպում ունեցած է լրագրողներու հետ եւ մերժած է պատասխանել իր վարչապետ նշանակումին հաւանականութեան մասին հարցումներու:

* * *

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՈՒՂԵՐՁԸ

Ռ. Քոչարեան նախագահական պաշտօնին աւարտին նախօրեակին, Ապրիլ 8ին, ժողովուրդին ուղերձ մը յղած է հեռատեսիլէն: Ըսելէ ետք թէ իր ղեկավարութեան տասնամեակին երկրին արդիականացման երեւոյթը ակնյայտ է եւ բարելաւուած է քաղաքացիներու կեանքը, չեչտած է թէ տակաւին շատ ընելիք կայ:

Շնորհակալութիւն յայտնած է ժողովուրդէն վայելած վստահութեան, նաեւ իր գործակիցներուն, Սփիւռքին որ սատարած է իր բոլոր նախաձեռնութիւններուն: Ապա ներողութիւն խնդրած է բոլոր անոնցմէ որոնց կեանքը նոյն տասնամեակին բարելաւուած չէ, որոնց երազները իրականացած չեն:

Ուղերձը աւարտած է Հայաստանի ապագային, ժողովուրդի հզօր ներուժին եւ նոր նախագահին արդիւնաւէտ ղեկավարութեան հաւատքի արտայայտութեամբ:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԲՈՂՈՔԱԳԻՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ

Ադրբեջանի Մոսկուայի դեսպանութիւնը բողոքագիր մը յղած է Ռուսաստանի Արտաքին գործերու նախարարութեան, Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները «Քոսովոյէն ետք. չճանչցըւած պետութիւններու գործակցութիւնը ճանաչումի ճամբուն վրայ» թեմայով միջազգային համաժողովին հրաւիրած ըլլալուն պատճառով: Համաժողովը գումարուած է Մարտ 28ին Մոսկուայի մէջ, ՀԱՊ-ի երկիրներու հիմնարկին նախագահ, Ռուսաստանի խորհրդարանի ՀԱՊ-ի գործերու յանձնաժողովի փոխնախագահ Կ. Զատուլինի նախագահութեան տակ:

Ադրբեջանի դեսպանութիւնը յայտարարութիւն մըն ալ հրապարակած է ուր անթոյլատրելի կը համարուի Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներուն մասնակցութիւնը: Իսկ ներկայացուած բողոքագիրով բացատրութիւն պահանջըւած է Ստեփանակերտի ուղղուած հրաւէրին մասին:

* * *

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՆԻՒԹՈՎ

Ազգային ժողովի Ապրիլ 8ի նիստին նախագահ Տ. Թորոսեան հանդէս եկած է Լեռնային Ղարաբաղի հարցին կարգաւորումին վերաբերող յայտարարութեամբ մը որ ունեցած է նախագիծի բնոյթ: Հոն անդրադարձ կ՚ըլլայ ադրբեջանական կողմին վերջին շրջանի ռազմատենչ կեցուածքին եւ Հայաստանի նախագահին ու կառավարութեան կ՚առաջարկէ զարկ տալ Ղարաբաղեան խնդրին մասին միջազգային հանրութիւնը տեղեակ պահելու գործունէութեան, միջազգային իրաւունքի շրջանակներուն մէջ հաստատել այն իրաւական հիմերը որոնք Հայաստանի իրաւունք կու տան, Ադրբեջանի յարձակման մը պարագային, նախաձեռնելու ԼՂՀ-եան ապահովութեան, պաշտպանութեան:

Հաւանական կը նկատուէր որ նախագիծը օրակարգի նիւթ ըլլայ ու քննարկուի Ապրիլ 10ի նիստին:

* * *

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ԿՈՂՈՒԱԾՆԵՐԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

Լ. Տէր Պետրոսեանի համախոհ ու գործակիցներէն ներկայիս ձերբակալուածներու կիներ, քոյրեր ու եղբայրներ Ապրիլ 8ին ասուլիսի մը ընթացքին պահանջած են որ անոնք ազատ արձակուին, ըլլալով քաղաքական բանտարկեալներ: Ասուլիսին մասնակցած են Ալ. Արզումանեանի, Ա. Զուրաբեանի, Ն. Փաշինեանի, Մ. Մալխասեանի եւ միւսներուն կիները, հարազատները:

Ասուլիսը տեղի ունեցած է Լ. Տէր Պետրոսեանի ընտրական կեդրոնին մէջ:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱ՞Ր ԱԼ ՉՈՒՆԻՔ...

Թուրքիոյ իշխանութեան գլուխ գտնուող ԱԶ կուսակցութեան կնոջական բաժինը իր համագումարին ուզած է նիւթ ընել թուրք կնոջ հանրապետութեան հռչակումէն առաջ ապրած նեղութիւնները ու հանրապետութեան օրով արձանագրած նուաճումները: Այդ նպատակով տեսերիզ մը պատրաստուած է: Դիտողները շշմած են տեսնելով որ գործածուած "փաստագրական նիւթ"ին մէջ կը գտնուի շատ ծանօթ լուսանկար մըն ալ որ ո՛չ թրքուհիին, ո՛չ ալ անոր ապրած նեղութեան հետ կապ ունի: Ան առնուած է գերմանացի զինուորական Արմին Վեգնէրի արխիւէն ու կը ներկայացնէ Ցեղասպանութեան ճամբուն վրայ զաւակը կուրծքին գրկած հայուհին որուն կը հետեւի հալածական հայ խլեակներու խումբ մը: Լուսանկարը որ աշխարհը շրջած է, յայտնապէս շատ ծանօթ է նաեւ թրքական շրջանակներու որոնք առանց կասկածի նշոյլի մը շշմած են իրենց ցոյց տրուածին:

Ա՛լ գրեթէ հակազդեցութիւն իսկ չէր արթնցներ տեսնել թէ Թուրքերը հայկական ամէն բան – պալատ, դպրոց, տուն, պարտէզ, գիւղ, երկիր, եւլն. – իւրացնելու քաղաքականութիւնը ծաւալած են մինչեւ իրենց հայ զոհերու ոսկերոտիքին. այսինչ, այնինչ վայրէն յայտնաբերուած ոսկրակոյտ մը անմիջապէս կը ծանուցուի որպէս "Հայերու զոհ Թուրքեր"ու պատկանող:

Բայց մինչեւ լուսանկա՞րը: Այլեւս կարծես այս հանգրուանին կը թօթափին ողբերգականին բոլոր շերտերը ու Երեւանի մէջ խորհրդային կարգերու յամառ քննադատութեան պատճառով ձեւական զնդակահարութեան դատապարտուած սփիւռքցիին հարցումը փոխ կ՚առնէ մարդ.

Թրքուհինե՛ր, ձեր մամուն ու տատին նեղութիւնները ցոյց տալու լուսանկա՞ր ալ չունիք...

Թ. ԱՐՓԻ

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՕԶԻ կ՚ուզէ ջնջել Սահմանադրութեան թիւ 33 յօդուածը, զոր դրած էր Ժ. Շիրաք եւ որ կը պարտադրէր հանրաքուէի դիմել Եւրոպայի ընդլայնման համար եւ հարցը կը վերաբերէր գլխաւորաբար Թուրքիոյ անդամակցութեան, իբրեւ հետեւանք Ֆրանսացիներու մեծամասնութեան «ո՛չ»ին 2005 Մայիս 29ին Եւրոպական Սահմանադրութեան: Այդ 33րդ յօդուածը կը նախատեսէ որ Հանրապետութեան նախագահը, որեւէ նոր անդամակցութեան պարագային կրնայ հանրաքուէի դիմել կամ նախընտրել խորհրդարանական քուէարկութիւնը: Սարքօզիի ծրագիրը, առաջին առթիւ, վրդոված է Իւ. Էմ. Փէ.ի երեսփոխան Ռիշար Մալիէն, որ նախագահն է նաեւ գզօնութեան խորհրդարանական կոմիտէին՝ Թուրքիոյ անդամակցութեան դէմ: Իրեն համար կարելի չէ ջնջել 2005ի որոշումը եւ անտեսել այն մտահոգութիւնները, որոնք ծագած էին Թուրքիոյ մուտքին դէմ: Զգօնութեան նշեալ կոմիտէն ի մօտոյ պիտի ճշդէ իր դիրքը եւ դիմէ Հանրապետութեան նախագահին: Ապրիլ 8ին, Էլիզէ ալ հաստատած է որ Սարքօզի այլեւս չուզեր դուռը գոցել Թուրքիոյ առջեւ:

ՖԻՅՈՆ 45 վայրկեան տեւող ելոյթով մը փորձեց պաշտպանել կառավարութեան ատլանտեանամէտ դիրքը ընդդէմ ձախին, որ կը քննադատէր տրուած որոշումները, ինչպէս Աֆղանիստան զօրք ղրկել կամ վերադառնալ ՕԹԱՆ-ի ծոցը: Ինչպէս կը սպասուէր, ընկերվարականներու արդելքի բանաձեւը ոչ մէկ բանի ծառայեց, ապահովելով միայն 227 ձայն (անհրաժեշտ մեծամասնութիւնը 288 է):

ԹՈՒՐՔԻՈՅ կառավարութիւնը այնքան քննադատութիւններու, Թիրախ 301րդ յօդուածին առընչութեամբ իր խոստումը յարգած ու բարեփոխուած տարբերակ մը յղած է խորհրդարան: Այդ տարբերակին մէջ «Թրքութիւն» եզրը փոխարինուած է «Թուրք ժողովուրդ»ով, իսկ «Հանրապետութիւնը» «Թուրքիոյ Հանրապետութեամբ»: Պատժական օրէնքին այս յօդուածը պատճառ եղած էր որ Հ. Տինքէն սկսեալ, բազմաթիւ գրողներ, մտաւորականներ դատական հետապնդումի առարկայ ըլլան «Թրքութիւն»ը անարգելու ամբաստանութեամբ: Երկրին ազգայնամոլ տարրերը բնաւ գոհ չեն առաջարկըւած փոփոխութենէն, առարկելով թէ նոր տարազաւորումով կարելի պիտի ըլլայ ազատ համարձակ հակաթուրք բովանդակութեամբ ամէն վերադրում եւ պնդում, առանց պատիժի հեռանկարին: Առաջարկուած տարբերակը նաեւ պայման կը դնէ որ նոյն յօդուածով ամբաստանեալ մը դատարան կանչելու համար անհրաժեշտ ըլլայ Հանրապետութեան նախագահին հաւանութիւնը:

ՖՐԱՆՍԱՅԻ Արտաքին Նախարարութիւնը յայտարարած է Ապրիլ 8ին, որ ի մօտոյ այն մարդասիրական գործողութիւնը որու ձեռնարկած էր Ի. Պէթանքուրի համար, վերջ կը գտնէ, քանի ՖԱՐՔ-ը զեկոյցով մը յայտնած է թէ ֆրանսական նախաձեռնութիւնը անընդունելի է: Այս պայմաններու մէջ հարց կը ծագի թէ ինչո՞ւ Ֆրանսա այս հապճեպ կարգադրութիւնները ըրաւ, հիւանդատար օդանաւ ղրկելով, երբ ոչինչ ըստոյգ էր: Ինկրիտ Պէթանքուրի առողջական վիճակն ալ իր դերը խաղացած էր, թէեւ յետագային հերքուեցաւ թէ «մահուան դուռը հասած է», ինչպէս ըսած էր Սարքօզի, խուճապ ստեղծելով:

ԻՍՐԱՅԷԼԻ աշխատանքի նախարարը՝ Բենիամին Պէն Էլիէզէր, սպառնացած է Ապրիլ 7ին, որ պիտի «ոչնչացնէ Իրանը» եթէ համարձակի Իսրայէլի վրայ յարձակիլ: Նախարարին համար նման յարձակում մը պիտի նշանակէր պարսիկ ազգին բնաջնջումը: Նախարարը այս յայտարարութիւնները ըրած է իր նախա-

(Շար.ը Դ. էջ)

ՅԻՊԷ-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵՒՍԵԲԻՈՍԻ ՀԵՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՅԻՊԷ – Եթէ չեմ սխալիր հաղորդումի մը ընթացքին մեծ ուրախութեամբ անտեցիր որ Ուշիի Ս. Սարգիս վանքին վերականգնումը սկսած է...:

ԵՒՍ. – Ճիշդ ես. քանի մը տարի առաջ նման աղմուկ մը բարձրացաւ. ըսուեցաւ նաեւ որ այս աստուածական գործին իր մասնակցութիւնը կը բերէ լուսահոգի Շահէ արք. Աճէմեան: Փութացի Ուշի, տեսայ համարակալուած քարեր, գետնին վրայ բոլորածեւ շարուած թմբուկի կամարներ եւ այլ բեկորներ. ճարտարապետ մը եւ քանի մը գործաւորներ: Տարի մը վերջ կրկին վերադարձայ, շարուած քարերը հոն էին. չկային ճարտարապետ եւ բանուորներ... մշակոյթի նախարարութեան գումարները սպառած են մայրաքաղաքի զանազան վաղանցուկ եւ ուշադրութիւն գրաւող հանդէսներու համար... մէկ ազգ մէկ ժողովուրդ – Ոսկէ աշուն – բաղէ, մաղէ, համահայկական խաղեր–երկու աստղ, երեք լուսին, չորս արեւ եւ նման բաներ... աւերակ մշակոյթը թողած են օտար հաստատութիւններու եւ սփիւռքահայերու բարեխղճութեան...: Տարօրինակ երկիր, տարօրինակ լռջութիւն:

ՅԻՊԷ – Կը ներես. նպատակս հին վէրքերդ նորոգել չէր. շարունակենք մեր ուխտագնացութիւնը:

ԵՒՍ. – Ուշադրութեամբ կրկին անցնինք մայրուղիին աջ ափը եւ մտնենք ԿԱՐԲԻ. պտղատու ծառերու մէջ տարածուած բաւական ընդարձակ գիւղ է Կարբին շուրջ 2500–3000 բնակչութեամբ, մաս մը գաղթած 1829ական թուականներուն, Փասկեւիչի բանակներուն հետ, Հին Բայազիտի գիւղերէն:

Հայաստանի, նոյն բարձրութեան վրայ գտնուող բոլոր միւս գիւղերու նման, բնակչութեան եկամուտի աղբիւրները երկրագործութենէն եւ անասնապահութենէն կու գան: Կարբին ունի ընտիր խնձոր եւ ծիրան: 1310 մեթր բարձրութիւն ունի: Կը գտնուի Օհանավան եւ Մուղնի գիւղերուն մէջտեղ, գրաւելով ընդարձակ տարածութիւն մը որ միջին դարուն կոչուած էր «Կարբիի դաշտ»:

Մխիթար Ապարանեցին կը պատմէ որ Վարդ Պատրիկ որ 1000 եկեղեցիներ կառուցած է, նոյնքան թիւով ձիթահանքեր կը շինէ Կարբիի մէջ որպէսզի այդ եկեղեցիները ունենան բաւարար ձէթ որպէս լուսաւորութեան նիւթ:

1278 թուականով ձեռագիր մը կը գտնուի Մատենադարանին մէջ որ գրուած է Կարբիի մէջ Մկրտիչ անունով երէցէ մը:

Կարբին եւ ամբողջ Արագածոտնի շրջանը բազմաթիւ տառապանքներ եւ աւերներ տեսած են ԺԷ.–ԺԸ. դարերուն պարսիկ Շահ Աբասի եւ Օսմանեան Թուրքերու երկարատեւ պատերազմներու առեն, հայկական հողերու վրայ, որոնց վերջ դրուեցաւ ցարական բանակներու շնորհիւ, Փասկեւիչ զօրավարին հրամանատարութեան տակ, 1828ին Թիւրքմէնչայի դաշինքէն վերջ:

Առաքել պատմիչ, ժամանակակից էր այս դէպքերուն (վախճանած է 1670ին), սահմռկեցուցիչ տեղեկութիւններ կը հաղորդէ իր պատմութեան 7րդ գլուխին մէջ.

Այդ տարիներուն, ինքնագլուխ բռնաւորներ յայտնուեցան, ինչպէս ՔԱՆԱՔԵՐԼՈՒ ՄՈՒՀԱՄՄԱՏ կոչուած, որ հալածուած Ճելալի հէնի Թօփալ Օսմանէն, հազար սրիկաներ հաւաքած գլխուն, կայան հաստատած էր ԿԱՐԲԻ գիւղին մէջ, հոն ձմեռելու. ուստի իր զօրքերը կը ղրկէր շրջակայ գաւառներն ու գիւղերը իրենց եւ իրենց անասուններուն կերակուր բերելու. եւ անոնք ո՛ր տունն ալ մտնէին, չէին բաւարարուեր յափշտակուածով... տուներուն յատակներն եւ այլ կառոյցներ կը փորէին որեւէ բան գտնալու համար եւ տուներուն որմերն ու տանիքները փլելով շատ աւերներ կը գործէին: Նախ Կարբի գիւղը այդպէս ըրին եւ նոյն գիւղէն մարդէ մը բաներ պահանջելով, բանտեցին, չարչարեցին եւ ապա սպաննեցին եւ երկուքի բաժնելով ճամբուն վրայ կախեցին սարսափեցնելու համար անցորդները:

Նոյն ասպատակողները Սեւանի շրջանէն գերիներ եւ աւար լեցուցած այրեր, կիներ, մանուկներ, լեռները անցնելով բերին Կարբի գիւղ, մաս մը դրամով ծախեցին, մաս մըն ալ իրենց գործերուն ծառայութեան համար պահեցին... մինչեւ գարուն մնացին, եւ Համբարձման տօնի օրերուն ելան Ախալցխայի երկիրը գացին, հոն ալ միեւնոյն բաները ընելով» (Առաքել Պ. գլ. Է) եւ (Այրարատ, էջ 178-9):

ՅԻՊԷ – Ի սէր Աստուծոյ, ինծի ասանկ մէջբերումներ մի կատարեր, դիմանալիք չէ: Այս ինչե՛ր բերեր են մեր ազգին գլխուն:

ԵՒՍ. – Որպէսզի իմանաս որ «կանք, պիտի լինենք եւ դեռ շատանանք»: Լուսահոգի մայրս որ բացի Մեծ Եղեռնէն, ապրած էր նաեւ Կիլիկիոյ պարպումը, Մուսա լերան 40 օրերը, երկրորդ համաշխարհային պատերազմը եւ Լիբանանի բոլոր քաղաքական եւ եղբայրասպան պատերազմները, 90 տարիներ բոլորած, զարմանալի քաջութիւնը ունէր, Սեւակէն տասնեակ տարիներ առաջ ըսելու

«Տղա՛ս. որքան զարնեն, որքան ջարդեն մեզ չեն կրնար ոչնչացրնել...»:

Եւ իր քաղցր ձայնով կ'երգէր ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԻՆ երգը որ շատ կը սիրէր: ... Հիմա երբ կը լսեմ Տուպայի, Պոլսոյ, Տրապիզոնի մայթերուն վրայ թափառող մեր հայրենակիցները, որքա՛ն մօրս կարօտը կը քաշեմ:

ՅԻՊԷ – Տարտամօրէն կը յիշեմ որ 40 օրերու հետ կապուած բան մը կար Կարբիի պատմութեան մէջ:

ԵՒՍ. – Քառասունը հերոսամարտերու պաշտօնական թուական պէտք է դառնայ մեզի համար: Մուսա Լերան 40 օրերու հերոսամարտէն ճիշդ 200 տարի առաջ, 1724ին, Կարբիի բնակիչները 40 օր հերոսաբար դիմադրելէ վերջ, նոյն Օսմանեան Թուրքերուն (որ երկու դար յետոյ կրկին պիտի յայտնուէին Կիլիկիոյ մէջ եւ հանդիպէին հայկական գիւղախումբի մը հերոսներու դիմադրութեան), Ապտուլլահ Փաշային զօրքերը պարտադրուեցան հաշտութիւն կնքել եւ հեռանալ գիւղէն: Աբրահամ Երեւանցի ամէն գրիչ կ'աւանդէ որ Կարբեցիները 6000 հոգի էին, եւ դիմադրութեան գլուխ կը գտնուէին՝ Ազապապ, Ստեփան, Սարգիս, Աւագ, Մկրտում, Պօղոս եւ Մանուկ:

Կարբին միայն փէտայիներ չէ տուած, իր զաւակներէն Յովհաննէս՝ արժանացած է Ամենայն Հայոց աթոռին (1831–1842):

ՅԻՊԷ – Նման բազմամարդ կարեւոր կեդրոն մը հնութիւններ պահա՞ծ է:

ԵՒՍ. – Բացի գիւղի կանգուն եւ վերջերս վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցիէն, որ 1691-93 տարիներու ընթացքին կառուցուած է, գիւղացիները պարտէզներու մէջ ինծի ցոյց տուին չորս հնագոյն եկեղեցիներու աւերակներ: Ս. Գէորգ կամ Ս. Կիրակի՝ կառուցուած ԺԱ.–ԺԳ. դարերուն, Ծիրանաւորը շատ աւելի հնաբոյր, Թուխ Մանուկ եւ Մենաստան կուսանաց, իրարմէ ոչ շատ հեռու:

Ս. Աստուածածին կառուցուած է 1691ին, եռանաւ պազիլիկ է առանց գմբէթի եւ որպէս զանգակատուն ԺԳ. դարու փոքր եկեղեցի մը կը գործածէ, կազմուած մի քանի յարկերէ եւ պսակուած ութ սիւներէ բաղկացած գմբէթով:

1693 թուականը կրող արձանագրութիւնը ամբողջութեամբ ընթեռնլի է.

«Մարդացեալ Բանին Աստուծոյ կամքով եւ բարեխօսութեամբ եւ օժանդակութեամբ իր մաքուր ծնող Կոյս Մարիամին, սկսաւ Ս. Եկեղեցիին շինութիւնը Ս. Աստուածածնի անունը կրող, Կարբի գիւղաքաղաքին մէջ, Խոճազատ Պարոն Այվազի արդիւնքներով եւ ինչքերով Հայոց ՌՃԽ թուականին, Պարսիկներու Շահ Ապտուլլայի թագաւորութեան առեն եւ Արարատեան երկրի բռնակալ Զուհրապ Խանին առեն եւ Էջմիածնի Ս. Աթոռի հայրապետ՝ Տէր Նահապետ կաթողիկոսի առեն, եւ մեր առաջին ուխտ Յովհաննու խրոխտ եւ պերճ վանքի հեզահոգի վարդապետ Տէր Սարգիսի առաջնորդութեան առեն, իսկ աւոր աւարտը եղաւ ՌՃԽԲ թուականին նոյն հայրապետի եւ նոյն առաջնորդի օրերուն բայց ոչ նոյն թագաւորին եւ իշխանին: Ով որ հանդիպի այս գրութեան կարդալով կամ լսելով մէկ ՈՂՈՐՄԵԱով յիշեցէք Պարոն Այվազը իր ծնողներով եւ բոլոր արենակիցներով որպէսզի դուք ալ յիշուիք Աստուծոյ անմահ Գառնուկին առջեւ: – Յիշեցէք Մարկոսն ալ» (Այրարատ, էջ 180):

ՅԻՊԷ – Կը տեսնեմ որ Հայաստանի ամէն գիւղ հարուստ պատմութիւն ունի:

ԵՒՍ. – Եթէ հրաշալի անդադար կրկնուող ասպատակութիւնները, մատենադարաններու հրկիզումները, գերեվարութիւնները եւ կոտորածները վայրագ ցեղերու, հարաւէն եւ արեւելքէն ասպատակողները չինարար, խաղաղասէր մեր ժողովուրդին վրայ, ով գիտէ հերոսութեան որքա՜ն դրուագներ աւանդած պիտի ըլլային մեզի մեր մատենագիրները եւ գրասէր եկեղեցականները: Պատմութենէն տեղեակ ենք թէ ինչպէս ծանօթ քրոնիկագիր պատմիչներու ձեռագիրներ յափշտակուած եւ կրակի տրուած են նոյն ինքն հեղինակի կենդանութեան:

(Շար. 17)

ՆԵՐԿԱՅԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ԳՐԻԳՈՐ ՔԷՕՍԷԵԱՆ

Հայաստանի նախագահական ընտրութիւններուն առընչուած բոլոր ողբալի եւ նուազ ցաւալի իրադարձութիւններուն հաշուեկշիռը կարելի պիտի ըլլայ կատարել երբ անհրաժեշտ քննական թղթածրարները պատրաստ ըլլան, քիչ մը հեռու՝ ներկայի փոթորկայոյզ մթնոլորտէն: Մինչեւ արդար հաշուեյարդարի այդ պահը, կարելի է անդրադառնալ կարգ մը ընդհանուր հարցերու, որոնք առաջին օրէն հրապարակի վրայ կը գտնուին: Անոնցմէ ոմանք կը շարունակեն ծառայել նաեւ որպէս պայքարի դրօշակ – ինչպէս ազատութիւնը եւ արդարութիւնը, եւ ասոնց յարակից հարցեր:

Խորքին մէջ երանի թէ խնդիրը վերաբերէր միայն «ժողովրդավարութեան» եւ «բռնատիրութեան», ազատ ընտրութիւններու կամ ընտրական զեղծարարութիւններու եւ անոնց դարմանումին: Երանի նաեւ թէ հարցը միայն շաղկապուէր յետանկախութեան շրջանի իրերայաջորդ իրաւակարգերու կոպիտ ընթացքին եւ ներքին շահամոլ քաղաքականութեան յառաջացուցած լեռնակուտակ դժգոհութիւններուն: Եթէ ամբողջ խնդիրը միայն անոնց մէջ կայանար, Հայաստանի ամբողջ ժողովուրդը պէտք է գրաւէր մայրաքաղաքին բոլոր հրապարակները, բոլոր կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու հետեւորդներով միասին, որովհետեւ երկրին ամբողջ բնակչութիւնն է որ տուժած է վերջին մէկուկէս տասնամեակի ընթացքին, բացի իշխանութեան լծակները իրենց ձեռքը ամփոփած բռնած շահագրգիռ շրջանակներէն: Այդ պարագային ո՛չ մէկ ոստիկանական կամ զինուորական միջամտութիւն պիտի կարենար խափանել ժողովրդային ահեղ մակընթացութիւնը: Սակայն իրողութիւնը թէ տասնօրեայ ցոյցերու ընթացքին այդպէս չեղաւ, նոյնիսկ մէկ ժամ, մտածումը կ'առաջնորդէ այլ ուղղութիւններու:

Այլ հարց թէ իսկական ժողովրդավարութեան եւ արդարութեան ոգին դեռ այնքա՜ն հեռու է երկրին հոգեբանութենէն եւ ըմբռնումէն, մասնաւորաբար անոր ղեկավար շրջանակներէն, որ մարմին առնող նոր կառոյցներուն դէմ ալ քանի մը տարի ետք պէտք պիտի ըլլար կազմակերպել հաւանաբար նոյնքան բուռն ժողովրդային ընդդիմութիւն:

Հայաստանի ժողովուրդը ներկայիս երկփեղկուած է: Այդ իրավիճակը սահմանափակել դժգոհութեան յայտարարուած պատճառներով, ցոյց կու տայ անգիտացումը այն հիմնական վտանգին, որ կը սպառնար Հայաստանին եւ որուն վերահասու պէտք է եղած ըլլան այլ հոսանքներ: Կը նշանակէ նաեւ չտեսնել այն զօրաւոր հոսանքը, որ կրնար քշել երկիրը անապահով ափեր, գլխաւոր դերակատարներուն թաքուն ծրագիրներով կամ, աւելի մտահոգի՛չ, իրենց անգիտակցութեամբ: Բայց ինչպէ՞ս կարելի չէր տեսնել թէ դահավէժ սահանքը ո՛ւր կ'առաջնորդէր հազար ու մէկ ցաւերով տուայտող փոքրիկ երկիրը, որ անթացուպերով ոտքի կանգնած էր: Արտաքնապէս շինարար յեղաշրջումի մը շարժումը ըլլալէ շատ աւելի պետական բիրտ հարուածի մը բացայայտ տուեալները ունէր շարժումը, երբ մասնաւորաբար նկատի առնուին անոնց գլխաւոր քանի մը ղեկավարներու յոխորտ

յայտարարութիւնները, անոնց թեքումը եւ ախորժակները: Հարցը այն է թէ Հայաստան ողջ դուրս պիտի ելլէ՞ր նման արկածախնդրութենէ մը, եր ներկայի ներքին եւ արտաքին պայմաններուն մէջ: Իրադատութիւնը ցոյց կու տայ հակառակը, տոմինոյի խաղի շղթայական տապալում մը՝ աներեւակայելի տեսարանով: Այո՛, ցոյցերը խաղաղ էին, գոնէ մինչեւ վերջին պահը, Ազատութեան հրապարակը տօնական էր «երգ ու պար»ով՝ ատրիկով, հօրմով, զաւակով, հրապարակին թէ հարթակին վրայ: Նոյնիսկ հրջօրեայ ցոյցերը կը սկսէին տէրունական աղօթքով (անկա պատճառ մը չեղաւ որ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով Ամենայն Հայոց կաթողիկոս մը իր դէմ փակ գտնէ նոյն այդ տէրունական աղօթքները հովանաւորողին տան դուռը): Բայց ներքին պայթուցիկ կացութիւնը չէր կրնար աւելի տեւել առանց բոցավառումի, ինչ որ պատահեցաւ:

Եթէ վերջնագրային պայմաններ արձակող ընդդիմադիր առաջնորդներուն բոլոր յոյսերը արտաքին միջամտութեան կը յենէին, ան առաւել եւս ցոյց կու տայ քաղաքական կարճատեսութիւն մը, որ ներելի չէ երկիր ղեկավարելու կոչուած անհատներու: Արտաքին ժողովրդավար մեծ երկիրները, որոնք մասնագէտ են լիաբուռն ժողովրդավարութիւն սերմանելու աշխարհի չորս կողմերը, Իրաքէն մինչեւ Փաքիստան, երկու կարգի «օգնութիւն» ցոյց կու տան միջամտութիւն աղերսող եւ երբեմն նաեւ չըպահանջող ուժերու: Ըստ գնահատականի, կամ ամբողջովին նեցուկ կը կանգնին շարժումին, յաջողութեան յոյսով եւ երբեմն ալ երկիրը քարուքանդ ընելու գնով, կամ կ'ընձեռեն մասնակի օժանդակութիւն, որպէս առաջին փորձ ոտք դրած ըլլալու համար այդ երկրին մէջ: Հայաստանի պարագային, օգնութիւն հայցողները պէտք է գիտնային թէ պիտի չպատահի առաջին սցենարիօն, արեւմտեան ուժերը աւելի հրագեկ ըլլալով Հայաստանը հաւասարակշռող ուժերուն, քան իրենք: Իսկ հազիւ թէ երկրորդ, այդքան մե՛ղմ միջամտութիւնը արդէն տագնապեցուց երկիրը սրելով իր դրացիներուն աւելի ախորժակները: Դիտեցէք մէկ օրէն միւսը արեւմտեան միջամտութիւններու դիմաց խղճալի երեւոյթ պարզող Երեւանը, որուն ի տես մեր մէջ շատեր յաղթակա՜նօրէն երջանիկ ալ կը թուին ըլլալ:

Այս կազմակերպուած չփոթին մէջ, ամէն ոք ինքը իրեն Հայաստանի փրկարարի առաքելութիւն մը տուած կը թուի ըլլալ: Լոս Անճըլըս բնակող Հայաստանի քաղաքացիներու խումբ մը «փտարանդի գրողներ եւ մտաւորականներ», ահազանգային կոչեր ուղղած են աշխարհի չորս մը մարդկային իրաւունքներու եւ ժողովրդավարութեան պաշտպան հիմնարկներու, կցելով կոչին զօրակցող շուրջ «20 ազգերի եւ 150» ստորագիրներու ցանկը, Թիպէթէն եւ Նեփալէն մինչեւ Ափրիկեան Քալահարի: Այդ ցանկին մէջ կը գտնուին նաեւ ազերի — եւ Ադրբեջան բնակող — այսպէս կոչուած ութ «մարդկային իրաւանց պաշտպան» եւ գրող, որոնք անշուտ տխրած պէտք չէ ըլլան իրենց երկրին կողմէ Հայաստանի վերջին սահմանային ռմբարքումներով եւ արիւնահեղութեամբ:

Այս ուղեկորոյս եւ մտահոգիչ կացութեան համար յանցաւոր չեն, բնականաբար, մեզի մարդասիրաբար «օգնութիւն» ընձեռող երկիրները: Բնա՛ւ երբեք: Կը բաւէ որ Հայը ինքզինք լաւ դիտէ հայելիին մէջ:

Հայաստանի մէջ ներկայիս մարմին առած է համաձայնական իշխանութիւն մը, որ կը ներկայացնէ ժողովուրդին մեծագոյն տոկոսը: Ինչպէս ալ բացատրուին գանոնք գործակցութեան մղող ազդակները, իրողութիւնը չի դադրիր բարերար ըլլալէ երկրին անհրաժեշտ ներքին կայունացման համար: Ուժերու այս մէկտեղումը այլապէս կ'արժեւորուի նկատի առնելով իրենց սկզբունքային ընդդիմադիր հանգամանքը: Միւս կողմէ, Հայաստանի ժողովուրդի հոգեբանութեան մէջ այժմ արմատական բեկում մը յառաջացած է, ինչ որ պիտի արագացնէ հիմնական բարենորոգումներու ծրագիրներու ընդգրկումը ընկերութեան բոլոր մակարդակներուն վրայ:

Հրամայական կը դառնայ որ բոլոր կողմերը ցոյց տան պահին լրջութեան համապատասխան պատասխանատու մօտեցում մը, մէկ կողմէն դարմանելու համար գործուած աւերը, միւս կողմէ երկիրը զօրացնելու աւելի քան երբեք:

Ո՛չ հայրենասիրութիւնը, ոչ ալ ժողովրդավարութեան սէրը արտայայտութեան այլ ձեւեր ունին, ներկայի ճգնաժամային պայմաններուն մէջ:

Գ. Ք.

Պոսթըն

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԴԱՍԱԼԻՔՆԵՐԸ ԳԱՆԱՏԱ Կ'ԱՊԱՍՏԱՆԻՆ

Գանատայի Խորհրդարանը Ապրիլին օրկարգի վրայ պիտի ունենայ բանաձեւ մը որ կը նախատեսէ երկրին բնակիչ նկատուելու դիմումի իրաւունք տալ ամերիկացի դասալիքներուն: Անոնք կը կազմեն այն խումբը որ կը մերժէ զինուորական ծառայութիւն ընել, կամ բաժնուած է բանակէն, մասնակից չըլլալու համար ՄԱԿ-ի կողմէ չվաւերացուած պատերազմի մը:

Այդ պատերազմը Իրաքեանն է, իսկ բանաձեւը կը միտի Գանատայի մէջ չորս տարիէ ի վեր տեւող վիճարկում մը եզրակացնելու: Հարցը այն է թէ ինչ պէտք է ընել ամերիկացի զինուորները որոնք սահմանը կ'անցնին, խուսափելու համար Իրաք ղրկուելու հեռանկարէն: Անոնց մեծ մասը կը նախընտրէ հեռու մնալ գանատական իշխանութիւններէն: Բայց ոմանք կը դիմեն փաստաբանի մը օժանդակութեան: Անոնք ընդհանրապէս հայրենասիրական զգացումներով բանակ գացած են: Մէկը ըսած է թէ կը կարծէր որ Իրաքցիները 2001 Սեպտ. 11ի մահափորձերուն մէջ դեր ունեցած էին: Բայց երբ գացած է հոն, անդրադարձած է որ զուտ յարձակողական նպատակով պատերազմ է որուն համար ոչ մէկ գրգռութիւն կատարուած է: Լքած է իր զօրաբաժինը, մերժելով կռուիլ:

Վիեթնամի պատերազմին ալ հազարաւոր դասալիք Ամերիկացիներ Գանատա ապաստանած էին: Բայց այն ատեն աւելի դիւրին էր բնակութեան կարգավիճակ ունենալ: Այն ատենուան վարչապետը Փ. Թրիւտօ իր երկիրը զինամէտութեան դէմ պատուարի մը վերածած էր: Իսկ այսօրուան վարչապետը նախագահ Պուշի հաւատարիմ դաշնակից մըն է: Ուստի պատերազմը մերժողներու նոր սերունդը մնացած է երկու կրակի միջեւ:

Այսօրուան կացութեամբ դասալիքները օրինաւոր մէկ ընելիք միայն ունին. որպէս ապաստանեալ բնակութեան իրաւունք ուզել: Գաղթի խորհրդարանական յանձնաժողովը 2007 Դեկտեմբերին քուէարկած է բանաձեւ մը որ այդ իրաւունքը ստանալ կարելի կը դարձնէ: Քուէարկութեան Պահպանողական կուսակցութեան չորս անդամները դէմ արտայայտուած են, բայց մնացած եօթը վաւերացուցած են: Ստոյգ չէ թէ Ապրիլի քուէարկութեան ընդդիմութիւնը նոյն ձեւի միութեամբ մը պիտի ներկայանա՞յ: Դասալիքներուն համար վարանումի պատճառ չկայ. որեւէ ձեւով Գանատա գտնուիլ, բացայայտ է որ նախընտրելի է, քան Իրաքի կռիւներուն մասնակից ըլլալ:

ՔԱՂՀԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ԾՆՈՒԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԱՆՅԱՐՄԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԷՄԻԼ ՍԻՈՐԱՆ

Թրգմ.՝ Նունէ Աբրահամեան

Յառաջաբան՝ Մարկ Նշանեան

Ինքնագիր մատենաշար

Երեւան 2008

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ

Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Խօսք բացուեց նաեւ Այվազովսկու մասին, եւ ռուս նկարիչն ասաց. Թէեւ մենք՝ Այվազովսկու հետ զբաղուած ենք միեւնոյն գործով, բայց երբեք չենք խանգարել մէկս միւսին: Ես միշտ եղել եմ բնապաշտ, իսկ նա՝ խոէալիստ: Ես միշտ ապէս էտիւդներ եմ անում, առանց որոնց ինձ թւում է անհնարին է նկար ստեղծել, մինչդեռ նա հրապարակաւ յայտարարեց, որ դա անմտութիւն է եւ հարկ է նկարել տպաւորութեամբ, դիտելով բնութիւնը...

Բոգոլիուբովի ծովանկարները հրապուրեցին Մախոխեանին. լաւ մտայղացուած լինելով հանդերձ, նրանց կատարման մէջ պակասում էր պոէտական ներշնչանքը:

Արդէն շուտով մեկնելու էր Փարիզից, երբ պատահաբար հիւրընկալուեց մի հայ ընտանիքում: Այստեղ էլ նա տեսաւ Այվազովսկու՝ «Նէապոլիտանական ծովածոցը մառախլապատ առաւօտեան» կտաւը: Եւ հիացաւ նկարի բանաստեղծական, գունեղ արտայայտչականութեամբ ու պատկերման վարպետութեամբ: Տեսաւ եւ տեղնուտեղը որոշեց անպայման գնալ Ռուսաստան՝ Այվազովսկու մօտ:

Պետերբուրգում նա տեղեկացաւ, որ այդ ձմեռ նկարիչը սովորականից շուտ էր մեկնել Թէոդոսիա: Երիտասարդ ծովանկարիչը որոշեց գնալ նրա հետքերով: Միաժամանակ մնաց Մոսկուայում, այդ ընթացքում մի քանի անգամ այցելելով Տրետեակովեան պատկերասրահ «Սեւ ծովը» դիտելու:

Ռուսական ձմեռը դուր եկաւ նկարչին, եւ նա այնտեղ սկսեց նկարել «Ձմեռը ռուսական գիւղում»: Երբ նկարն աւարտուած էր, նրա նոր բարեկամները խորհուրդ տուեցին ցոյց տալ Տրետեակովին, ենթադրելով, որ վերջինս կը գնի այն:

– Չեմ կարող, – պատասխանեց Մախոխեանը, – ես այն տանելու եմ Այվազովսկուն:

Հիւրատան տէրը մեծ հետաքրքրութեամբ լսում էր նորեկ օտարականին, որը պատմում էր, որ ինքը նկարիչ է եւ Թէոդոսիա է ժամանել յատկապէս Այվազովսկու հետ ծանօթանալու նպատակով:

– Ներեցէք, պարոն, – յարգալից խոնարհուելով պատասխանեց նրան պանդոկապետը, – բայց ես ոչ մի կերպ չեմ կարող ձեզ սենեակ տրամադրել:

– Այսինքն... ինչպէ՞ս թէ չէք կարող, – զարմացաւ Մախոխեանը: – Ես շատ յոգնած եմ ճանապարհից եւ ինձ անպայման անհրաժեշտ է հանգստանալ: Ձեզ արդէն ասացի, որ գալիս եմ հեռուից եւ եկել եմ Այվազովսկու մօս:

– Ճիշդ դրա համար էլ չեմ կարող ընդունել ձեզ, – աշխուժօրէն վրայ բերեց տէրը: – Այվազովսկին ինձ չի ների, եթէ իմանայ, որ իմ կտուրի տակ իջեւանել է իր հիւրը: Հասկանո՞ւմ էք՝ ի՛ր հիւրը: Այնպէս որ... – եւ պանդոկապետը յուզուած թափ տուեց ձեռքը:

Մախոխեանը չէր նկատել, որ այդ խօսակցութիւնն սկսուելու հետ, պանդոկի սպասաւորն անյայտացել էր: Հիմա նա յայտնուեց նորից, միայն ոչ թէ մենակ, այլ Այվազովսկու սպասաւորի ուղեկցութեամբ:

– Ահա, – հանգստացած դիմեց պանդոկապետը նկարչին, – ձեր յետեւից Այվազովսկին արդէն մարդ է ուղարկել:

Յաջորդ օրը, նախաճաշի սեղանի շուրջը, Այվազովսկին նախատում էր Մախոխեանին.

– Եւ դուք, Վարդան, ամօթ չէ՞ք անում գալ ինձ մօտ՝ Թէոդոսիա եւ գիշերելու տեղ փնտռել պանդոկո՞ւմ:

Այվազովսկին հիւրին դիմում էր ֆրանսերէնով, բայց Մախոխեանը, շփոթուած, սկսեց արդարանալ հայերէն...

– Լսո՞ւմ էք, զաւակներս, – ուրախ փայլ ստացան Այվազովսկու աչքերը, եւ նա շուռ եկաւ իր դստերերին ու թոռներին, – պարոնը երբեք չի մոռանում իր ազգութիւնը, չնայած ապրում է Եւրոպայում:

– Ո՛հ, հիմա արդէն դուք շատ դուր կը գաք պապային, Վոլդեմար... – ֆրանսերէն ասաց Ժաննան:

– Վարդան, – կամաց ուղղեց Մախոխեանը:

– Ա՛յ այդպէս, – բացագանչեց Այվազովսկին: – Գոնէ դուք ցոյց տուէք սրանց, թէ որն է իսկական արժանապատուութիւնը: Թէ չէ, խոյս են տալիս սեփական ազգութիւնից էլ, մայրենի լեզուից էլ:

Ժաննան ճիշդ դուրս եկաւ: Մախոխեանն իսկոյն դուր եկաւ Այվազովսկուն եւ, Իվան Կոնստանտինովիչը նախաճաշից յետոյ նրան հրաւիրեց արուեստանոց:

Մախոխեանի կեանքում սկսուեցին փերկրալից օրեր:

Այվազովսկու նկարակալի վրայ մի նկարը յաջորդում էր միւսին: Տարեց նկարիչը նրա առաջ բաց էր անում իր ամբողջ հմտութիւնը: Ամէն երեկոյ Մախոխեանն անց էր կացնում նկարչի ընտանեկան շրջանում: Նա կամ պատմում էր Գերմանիայի մասին, կամ նուագակցում Ժաննային: Երաժշտութեան մեղմ հնչիւնների տակ Իվան Կոնստանտինովիչը ալբոմների ու նկարների հաւաքածուներ էր թերթում եւ ժամանակ առ ժամանակ թղթի կտորի վրայ քաշում արագագայ որեւէ մի նկարի ուրուագիծը: Այդպիսի րոպէներին ոչ ոք չէր խօսեցնում մտորումների մէջ խորասուզուած նկարչին: Իսկ երբ հարկ էր լինում որեւէ անհրաժեշտ որոշում առնել, Այվազովսկին ինքն էր միանում ընդհանուրի խօսակցութեանը: Մախոխեանը միայն զարմանում էր, յաջորդ առաւօտեան փաղ տեսնելով, թէ ինչպիսի վճռականութեամբ է ծեր վարպետը մօտենում նոր քաշած մաքուր կտաւին:

(Շար. 200)

(Շար. Ա. էջէն)

թարութեան մէջ կազմակերպուած ժողո-վի մը ընթացքին, նուիրուած կրաւորա-կան պաշտպանութեան: Պաշտպանութեան նախկին նախարար, Էլիէզէր բաած է նա-եւ.— «Պարսիկները փառակից են մեր ու-ժին, բայց կը շարունակեն մեզ զրգռել զինելով Սուրիան եւ Հեզպոլլան: Պէտք է դէմ դնենք»: Առաջին անգամն է որ իս-րայէլացի նախարար մը այսքան բուռն արտայայտութիւն մը կ'ունենայ Իրանի հասցէին:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ արեւելեան շրջանի իշխանութիւնները ամբաստանած են ա-մերիկեան հրամանատարութեան տակ գտնուող միջազգային համախմբումը, որ շուրջ 30 բնակիչներ սպաննած է իսլա-մապաշտ ապստամբներուն դէմ մղուած գործողութեան մը ընթացքին: Համա-խմբումը յայտնած էր որ «բազմաթիւ ապստամբներ» զոհ գացած են:

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Կարէն Սիմոնեանի
«ԼՈՅՍ
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
Գրական – Գեղարուեստական
Երեկոյթներու շարք
ՑԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹ
ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Հինգշաբթի, Ապրիլ 17, ժամը 20ին
Ճ ա ռ ա պ ա տ կ ե ր,
Դ ր ո ւ ա գ ն ե ր
Ե ր գ ա ց ա ն կ է ն,
Յ ի շ ո ղ ո ւ թ ի ւ ն ն ե ր
10 bis, rue Thouin, Paris Vème
Métro Cardinal Lemoine, Monge
Մուտքը ազատ է

CINE-CLUB

«Achkhar» / UCFAF

Ciné-Club
«Rouben Mamoulian»
Sous le parrainage
de Robert GUEDIGUIAN,
réalisateur

Jeudi 17 avril à 20 heures

Hommage aux victimes
du Génocide Arménien de 1915
ARCHIVES DE A. PEHLIVANIAN
&
LES QUARANTE JOURS
DE MOUSSA DAGH

Suivi d'une conférence débat
avec Claude Mutafian, historien

Film américain, 1982, 1h50, VF

D'après le roman de Franz Werfel
Un film de Sarkis Mouradian

— Entrée libre —

Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

P.A.F. : 5 euros — Réduit : 3 euros

UCFAF
6 Cité du Wauxhall — 75010 Paris
Métro: République

CROIX BLEUE
DES ARMENIENS
DE FRANCE

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Անիէրի «Ակնունի» մաս-նաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Զարեհ Վարդանեան – Նոան-եանի մահուան առթիւ ողբացեալին ըն-տանիքին եւ շորհակալութիւն կը յայտնէ Հիմինեան եւ Սարգիսեան ընտանիքնե-րուն, իրենց նուէրներուն համար:

L'UCFAF organise
deux voyages
en Arménie

1 voyage touristique
du 26 juillet au 10 août

soit 16 jours / 15 nuits au prix de 1565 euros par personne, max. 30 personnes, base demi-pension et chambre double, incluant un circuit de 6 jours jusqu'au Karabagh (taxes d'aéroport et visa en sus) renseignements : E. Yazidjian au 01 42 87 95 98 (heures de bureau)

1 voyage randonnée
du 14 au 25 juillet

soit 12 jours / 11 nuits au prix de 1390 euros par personne, max. 12 personnes, incluant un circuit de 7 jours randonnée en pension complète et 3 jours à Erevan en demi-pension avec excursions et visites quotidiennes (taxes d'aéroport et visa en sus) renseignements : A. Samikyan au 01 48 03 18 78

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆ -
ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ Կաթողիկէ Ժողովրդապե-տութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Յ. ՊՉՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

L'Association Sainte-Croix de Paris propose
une **EXCURSION EN NORMANDIE**
LISIEUX — HONFLEUR — PELERINAGE ET TOURISME
Le Dimanche 1er juin

PROGRAMME

Départ à 8h15 en autocar de la Place de la République à Paris.
Divine liturgie célébrée par S.E.R. Mgr Grégoire GHABROYAN dans la crypte de la Basilique Sainte Thérèse de Lisieux, à 11 heures.
Déjeuner dans une auberge normande.
Après-midi : Promenade à Honfleur.
Retour vers 20 heures Place de la République à Paris.
Participation aux frais : 60 euros
Renseignements et inscriptions :
Séta : 01 57 63 95 31 ou **Stephen** : 01 42 88 17 91.
Règlement par chèque à libeller à : **Association Sainte-Croix**
à envoyer au 10 bis rue Thouin, 75005 Paris.

MAISON ARMENIENNE
DE LA JEUNESSE
ET DE LA CULTURE
MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La Maison de la Culture Arménienne de la Jeunesse et de la Culture et l'Association pour la Création Audiovisuelle d'Artistes d'Origine Arménienne vous invitent à la PROJECTION de
« NOUS LES AUTRES »
Un film d'Edouard SARXIAN
le **Vendredi 11 avril à 19h30**
à la M.A.J.C.

Après le «MARSEILLE DES ARMENIENS» présenté en 2002, ce nouveau film est un regard sur la population française d'origine arménienne de Marseille. C'est un constat qui devrait susciter auprès de la deuxième et troisième générations vivant en dehors des terres arméniennes, une prise de conscience d'un devenir identitaire. Comment vivent-ils leur double identité?

* * *

La M.A.J.C. et l'Association les 3A présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
AVEDIS
AHARONIAN

Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.
— Entrée libre —

Maison de la Culture
Arménienne
d'Alfortville

AUDITIONS
ET CONCERT
ANNUELS
DES ELEVES
DE MUSIQUE
DE LA M.C.A.
«Onnig Surmélian»
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

Association
Arménienne
d'Aide Sociale
A.A.A.S.

Reconnue d'utilité publique par décret du 8 juin 1956

Recherche
Directeur(trice)
de maison de retraite

L'Association Arménienne d'Aide Sociale recherche un(e) Directeur(trice) pour une de ses maisons de retraite de la région parisienne. Le(la) candidat(e) devra faire preuve de ses capacités de gestion et posséder une bonne connaissance de la culture et de la langue arméniennes.
Possibilité de logement de fonction.
Prière d'envoyer lettre de motivation et CV à l'adresse suivante :
Monsieur le Président
ASSOCIATION ARMENIENNE
D'AIDE SOCIALE
77 rue la Fayette — 75009 PARIS
e-mail : aaas.paris@aaas.fr

Les Activités du Mois d'Avril
du Centre Culturel Sahak—Mesrop de Marseille
Directeur : **Khatchig YILMAZIAN**

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

«ՅԱՌԱՋ»ի
ընթացիկ ազդերու
սակագինը

	€	
Մահազդ	150	(179,40)
Հոգեհանգիստ	135	(161,46)
Շնորհակալիք	135	(161,46)
Հարսնիք-Նշանտուք	135	(161,46)
Ծնունդ	135	(161,46)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թէ.Վէ.Ա. (տե՛ս. փակագծի մէջ ընդհանուր գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագա-յին եւ 1/8րդ (12–13 տող) միւս-ներուն:

Առեւտրական եւ այլ ծանուցումնե-րու համար, դիմել թերթին վար-չութեան:

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 11
VENDREDI
11 AVRIL
2008

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ _ ԹԻՒ 21·936 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 83e ANNEE — N° 21·936

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ՝ «ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՐԸ ԿԸ ԼԻՆԻ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ»

ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Ապրիլ 9ին յայտարարուած ժամուն ապահովութեան աննախադէպ պայմաններու մէջ տեղի ունեցաւ Նորընտիր Նախագահին երդումի արարողութիւնը, Օփերայի մեծ դահլիճին մէջ: Փակուած էին դէպի Ազատութեան հրապարակը տանող բոլոր փողոցները: Սրահ բերուեցան նախագահի պաշտօնավայրէն Հայաստանի դրօշակը, Սահմանադրական դատարանէն Սահմանադրութեան մայր օրինակը եւ Մատենադարանէն Է. դարու Վեհամօր աւետարանը: Ս. Սարգսեան Ազգային ժողովի նախագահին հրաւէրով մօտեցաւ ամպիոնին եւ աջ ձեռքը դնելով Սահմանադրութեան ու Աւետարանին վրայ, արտասանեց նախագահական երդումը:

Արարողութեան ներկայ էին Հայաստանի, ԼՂՀ-եան, պետական, քաղաքական, մշակոյթի ու գիտութեան դէմքեր, դեսպանութիւններու ներկայացուցիչներ, արտասահմանեան երկիրներէ հիւրեր. անոնց կարգին էին Ռուսաստանէն խորհրդարանի նախագահ Բ. Գրիզլով, Վրաստանի վարչապետ Լ. Գուրգէնիձէ, արտաքին գործերու նախարար Դ. Բաքրաձէ, եւլն.:

Իր երդումէն ետք ներկաներուն ուղղուած ելոյթ մը ունեցաւ նոր նախագահը, ըսելով. «...Ես գիտակցում եմ, որ ստանձնել եմ իսկայական պատասխանատուութիւն, գիտեմ, որ լինելու եմ այն մարդը, ում պատասխանատու էք համարելու ամէն ինչի համար: Ես երաշխաւորում եմ, որ այդ պատասխանատուութիւնից չեմ խուսափելու, ես այդ պատասխանատուութեան չափը գիտակցել եմ, երբ մտել եմ Հանրապետական կուսակցութիւն եւ յայտարարել եմ, որ ՀՀ նախագահի ընտրութիւններում կ՚առաջադրուեմ միայն այն դէպքում, եթէ Հանրապետական կուսակցութիւնը ընտրութիւններում ստանայ առաւելագոյն քուէներ: Ես այդ պատասխանատուութեան չափը գիտակցում եմ հիմա, ու գիտակցելու եմ առաջիկայ հինգ տարիներին, իւրաքանչիւր օր: Ես պատրաստ եմ կրելու Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիների նախագահը լինելու պատասխանատուութիւնը»:

Յետոյ շնորհակալութիւն յայտնեց իր ծրագրին աջակիցներուն, իրեն ցոյց տրուած վստահութեան: Նաեւ կոչ ուղղեց փոփոխութիւններու, ըսելով. «իւրաքանչիւրը պէտք է պատրաստ լինի փոփոխութիւնները սկսել հէնց իրենից»:

Շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ նախագահ Ռ. Քոչարեանին որուն օրով երկիրը նշանակալի ձեռքբերումներ ունեցաւ, որոնց վրայ հիմնուելով ինք այսօր լուրջ ծրագրեր կ՚առաջադրէ:

Ս. Սարգսեան ակնարկեց նաեւ «սուր» ու «վիրաւորանքներէ ոչ զերծ» ընտրարշաւին: Խոստացաւ յարգել նախընտրական բոլոր առաջադրանքները, կառուցանելու համար այն Հայաստանը որ կ՚ըլլայ բոլոր Հայերուն հայրենիքը եւ ուր կը տիրէ փոխադարձ յարգանքի, սիրոյ եւ հանդուրժողութեան մթնոլորտ: Ատոր համար պատրաստակամութիւն յայտնեց իր ողջ ուժերը գործի լծելու եւ կոչ ուղղեց միասնական աշխատանքի, քանի որ «միայնակ ոչ ոք ի վիճակի չէ Հայաստանը դարձնել երազների երկիր»:

Ինչ կը վերաբերի «ցաւալի իրադարձութիւններ»ուն, որոնց վէրքերը դեռ թարմ են, Ս. Սարգսեան յորդորեց դէպի առաջ նայիլ, միասնաբար փնտռել ու գտնել ապաքինման ու համախմբման ճամբան, վաղուան Հայաստանի զարգացման ճամբան:

Երդումի արարողութեան խօսք առաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. եւս:

Ս. Սարգսեանի Արցախի ազատագրութեան եւ Հայաստանի պետականութեան կայացման, զօրացման գործին վաստակը դրուատելով, վստահութիւն արտայայտեց անոր, պետական բարձր պաշտօններու փորձառութիւնը երկրին յառաջիկայ տարիներու հզօրացման գործածելու առումով: Գարեգին Բ. եւս շեշտեց միասնութեան կարեւորութիւնը օրով կարելի պիտի ըլլայ բարի աւարտի առաջնորդել ԼՂՀ-եան խնդրին խաղաղ կարգաւորումը, ապահովել մեր արդար դատին՝ Ցեղասպանութեան ճանաչումի պայքարին յաղթանակը:

Խօսքը աւարտեց դիմելով Ռ. Քոչարեանին, յաջողութիւն մաղթելով անոր յետագայ գործունէութեան:

Ապա հրաւիրեց միասնաբար յոտընկայս արտասանելու Տէրունական աղօթքը:

Նախագահ Ս. Սարգսեան երդումի արարողութենէն ետք գնաց Եռաբլուրի պանթէոնը, յարգանքի տուրք մատուցանելու Հայոց պետականութեան գործին իրենց կեանքը նուիրածներու յիշատակին: Ան ծաղիկ դրաւ ու խոնարհեցաւ զօր. Անդրանիկի, Վազգէն Սարգսեանի շիրիմներուն, Արցախեան մարտի զոհերուն յիշատակը յաւերժացնող յուշակոթողին առջեւ:

Իրեն կ՚ընկերանային Ազգային ժողովի նախագահ Տ. Թորոսեան, արտաքին գործերու եւ պաշտպանութեան նախարարները՝ Վ. Օսկանեան եւ Մ. Յարութիւնեան, Երեւանի քաղաքապետը, օրէնսդիր ու գործադիր իշխանութիւններու ներկայացուցիչներ, զինուորականներ:

* * *

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Իր պաշտօնը ստանձնելէ ետք նոր նախագահը հրամանագիր ստորագրած է կառավարութեան հրաժարականին մասին: Այսուհանդերձ, նախարարներուն յանձնարարուած է շարունակել իրենց պաշտօնները, մինչեւ նոր կառավարութեան կազմին հրապարակումը:

* * *

Տ. ՍԱՐԳՍԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ

Նորընտիր Նախագահ Ս. Սարգսեան Ապրիլ 9ի երկրորդ հրամանագրով վարչապետ նշանակած է Կեդրոնական դրամատան տնօրէն Տիգրան Սարգսեանը. անոր անունը արդէն որպէս այդ պաշտօնին ամէնէն հաւանական թեկնածուն, վերջին շրջանին յաճախ կը տրուէր:

Տ. Սարգսեան ծնած է 1960ին Վանաձորի մէջ: Բարձրագոյն ուսումը ստանալէ ետք Երեւանի ժողովրդական տնտեսութեան հիմնարկին մէջ, աւարտած է Պետերսբուրգի Վոզնեսենսկի տնտեսական հիմնարկը, ապա աւարտաճառ մը պաշտպանած «Տարածաշրջանային ընկերատնտեսական զարգացման ծրագրաւորումը Հայաստանի օրինակով» նիւթով եւ ստացած տնտեսական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան:

1987–1990 աշխատած է Տնտեսութեան եւ ծրագրաւորման գիտահետազօտական հիմնարկին մէջ. 1988–1993 եղած է Երիտասարդ մասնագէտներու եւ գիտնականներու հանրապետական խորհուրդի նախագահ: 1993–94ին դասաւանդած է Երեւանի պետական համալսարանին մէջ: Ընտրուած է Երեսփոխան: 1995 – 1998 վարած է Հայաստանի դրամատուներու ընկերակցութեան նախագահութիւնը:1995–2008 տնօրէնն էր Անցումային հանրութեան հետազօտութեան հիմնարկին: 1998 Մարտին նշանակուած էր Կեդրոնական դրամատան նախագահ եւ 2005ին պաշտօնը վերահաստատուած:

Տ. Սարգսեան անկուսակցական է. ամուսնացած, երկու զաւկի հայր:

* * *

Վ. ՕՍԿԱՆԵԱՆ ԿԸ ԶԲԱՂԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

Կառավարական նոր կազմին մէջ պիտի չըլլայ արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան: Ան նոր նախագահի պաշտօնի ստանձնումի նախօրեակին լրագրողներուն յայտնած է թէ ճիշդ կ՚ըլլայ որ նախագահին քով պաշտօն վարէ իր կողմէ ընտրուած արտաքին գործերու նախարար մը որուն հետ հանգիստ կրնայ գործակցիլ: Ինչ կը վերաբերի իր անձին, տասը տարուան պաշտօնավարութենէն յոգնած չէ, բայց կը կարծէ որ տեղին կ՚ըլլայ փոփոխութիւնը: Ինք կը շարունակէ Երեւան մնալ եւ երբ իրեն պէտքը զգացուի պատրաստ կ՚ըլլայ աջակցելու, որպէսզի երկրին ապագայ ղեկավարութիւնը կարենայ արդիւնաւէտ աշխատանք տանիլ:

Իր յետագայ ծրագիրներուն մասին Վ. Օսկանեան ըսած է թէ սկզբնական շրջանին կ՚ուզէ ոչ թէ քաղաքական, այլ քաղաքացիական հարցերով զբաղիլ: Իր ծրագիրները տակաւին բիւրեղացումի փուլին են, յետագային կ՚արտայայտուի որոշակի քայլերու մասին:

Առայժմ չհաստատուած տեղեկութիւններու համաձայն արտաքին գործերու յաջորդ նախարարին համար հաւանական կը նկատուի Ֆրանսայի դեսպան Է. Նալպանտեանի թեկնածութիւնը:

Մ. ՊՐԱՅԶԱ՝

« ԱՄՆ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ »

Մինսկի խումբին ամերիկացի նախագահը Մ. Պրայզա որ մասնակցած էր նոր նախագահին երդումի արարողութեան, նոյն օրը լրագրողներուն ըսած է թէ իր երկիրը պատրաստ է գործակցելու Հայաստանի Նորընտիր նախագահին, նաեւ քաղաքական բոլոր ուժերուն եւ անոնց առաջնորդներուն հետ:

Ամերիկացի դիւանագէտը ըսած է նաեւ թէ ինք ԱՄՆ-ը կը ներկայացնէր երդումի արարողութեան եւ որպէս այդ շնորհաւորած է Ս. Սարգսեանն ու նոր նշանակուած վարչապետ Տ. Սարգսեանը:

Պրայզա հարկաւոր նկատած է որ ազատութիւնը կարելի չափով շուտ վերահաստատուի Հայաստանի մէջ եւ ընդդիմադիր ղեկավարներն ալ պատրաստ ըլլան կառավարութեան հետ ընդհանուր լեզու գտնելու: Ան մաղթած է տակաւին որ Ս. Սարգսեան Ղարաբաղի հարցին կարգաւորումին ուղղութեամբ շարունակէ աշխատանքը:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԹԱԼԻ ՔՈՇԻՈՒՍՔՕ-ՄՈՐԻԶԷ, բնապահութեան ենթանախարը, բաւական աղմուկ հանած է Ապրիլ 9ին անխո-

(Շար.ը Դ. էջ)

* * *

ՄԱՐՏ 1-Ի ԶՈՀԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նորընտիր նախագահին երդման արարողութեան ժամերուն Միասնիկեանի արձանին մօտ հաւաքուածներ ծաղիկներ կը զետեղէին ու մոմեր կը վառէին, ի յիշատակ Մարտ 1ի պատահարներուն 8 զոհերուն: Խումբ մը երիտասարդներ ալ պաստառներով բողոքի ցոյց մը կազմակերպած էին Կեդրոնական ընտրական յանձնաժողովին առջեւ: Շէնքը ոստիկանական հսկողութեան տակ առնուած էր: Բողոքողներու խումբը անկէ ուղղուեցաւ Օ. ԽՍ. ՍԷ.Ը.ի գրասենեակը, անկէ Միասնիկեանի արձանին մօտը: Արձանը եւս ոստիկաններով շրջապատուած էր:

Հոն կը գտնուէին ընդդիմադիր քաղաքական դէմքեր եւս, ինչպէս Ս. Դեմիրճեան, Ա. Սարգսեան, Դ. Շահնազարեան: Ս. Դեմիրճեան ըսաւ լրագրողներուն թէ կը պահանջեն քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը. իսկ Արամ Սարգսեան յայտնեց թէ իրենց յետագայ ընելիքը կ՚որոշէ Լ. Տէր Պետրոսեան:

Սուգի արարողութեան մասնակիցները վանկարկեցին «Լե՛ւոն», «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Սերժիկ մարդասպան», եւլն.:

Ս. Սարգսեանի երդումի արարողութենէն ետք նոյն վայրը եկան նախագահական թեկնածուներէն Տիգրան Կարապետեան եւ անկախ երեսփոխան Վ. Դալլաքեան, իրենք եւս յարգանք մատուցանելու Մարտ 1ի զոհերուն յիշատակին:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՀԱՅ ԳԻՐՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Վերջերս Ադրբեջանի հանրապետութեան Արտաքին գործերի նախարարութիւնը, Հէյդար Ալիեւի հիմնադրամի աջակցութեամբ, մի գիրք է հրատարակել, որի խորագիրն է «Ադրբեջանի դէմ պատերազմը. Թիրախն է մշակութային աւանդութիւնը»: Գիրքը մաս է կազմում «Ղարաբաղի ճշմարիտ իրողութիւնը» շարքի, որի նպատակն է իրականութիւնը խեղաթիւրելով միջազգային շրջանակներում բարենպաստ մթնոլորտ ստեղծել Արցախի անկախութեան հաստատման դէմ:

Գիրքը տպագրուած է լաւագոյն թղթի վրայ, լաթակազմ է եւ պարունակում է երկու լազերային բուկաւառակ, մէկը տեսահոլովակ է, իսկ միւսը՝ պատկերների շարան (CD–ROM): Ունի 27×25 սմ. չափի 280 էջ, հրատարակուած է Բաքւում, 2007 թուականին: Գիրքը պատրաստելու եւ ներկայացնելու համար ոչ մի ծախս չի խնայուած:

Առաջին գլուխներում տրուած է Կովկասեան Աղուանքի պատմութիւնը, որի ժողովուրդը իբր իրենց նախահայրերն են եղել: Քրիստոնեայ մի ժողովուրդ, որը կառուցել է եկեղեցիներ եւ կրօնական բազմաթիւ յուշարձաններ: Ապա շարունակում է խօսել Իրանի Սաֆաւի թագաւորների մասին, նրանց անուանելով Ադրբեջանական պետութիւն, իսկ բոլոր հայկական եկեղեցիները, վանքերը, յուշարձաններն ու խաչքարերը նշուած են որպէս ադրբեջանական–աղուանական կոթողներ, որոնցից մեծ մասը՝ 1994ի տարածքային գրաւումներից յետոյ ոչնչացուել է Հայերի ձեռքերով: Իրականութիւնը թաքցնելու նպատակով, նոյնիսկ պատկերուած եկեղեցու հայատառ արձանագրութիւնները տաշուած են ու մաքրուած:

Գրքում անուանուած են Գանձասարի, Ամարասի, Տաթեւի, Գոշավանքի եւ այլ համալիրներ, որոնք բոլորը իբր աղուանական-ադրբեջանական են եւ Հայերի հետ առընչութիւն չունեն: Նոյնիսկ Բերձորի (Լաչին) մօտակայ Ծիծեռնավանքը, հայկական հնագոյն եկեղեցիներից մէկը, կոչուած է աղուանական «Աղօղլու» վանք:

Ապա գալիս է մի շարք արբանեակային պատկերներ Արցախի ու շրջակայ տարածքներից, ուր նշուած են մեծ թուով աղուանական, իսլամական յուշարձաններ եւ այլ մշակութային շինութիւններ, ներկայացուած են սրանցից մէկ մասի փոքրածաւալ լուսանկարները նշելով, որ սրանք բոլորը այժմ աւերուած են Հայերի կողմից, չնայած որ դրանց մեծ մասը իրականում հայկական են: Սրան յաջորդում է մի աղիւսակ, ուր մէկ առ մէկ նշուած են բոլոր կոթողները եւ շէնքերը, իրենց աշխարհագրական գօրտինաթներով, անուանումով, անցեալ եւ ներկայ իրավիճակով: Այս դրուածքը կրկնւում է Արցախի եւ գրաւուած բոլոր տարածքների համար՝ առանձին գլուխներով:

Առաջին հայեացքից սա մի տպաւորիչ ցուցակ է: Բայց երբ ցանկին նայում ես մօտիկից, ապա շատ բան է պարզաբանւում: Առաջին շարքերում տրուած յուշարձանների մեծ մասը հայկական են՝ բայց անուանափոխուած, իսկ յաջորդ էջերում շարուած են անանուն բազմաթիւ շինութիւններ, որոնք կրում են ընդհանուր «բնակելի շէնք», «գրադարան», «համայնքի ակումբ», «մշակոյթի տուն» եւ նման անուանումներ, որոնց համար չկան ոչ գօրտինաթներ, ոչ լուսանկարներ եւ ոչ անուններ, բայց եւ այնպէս բոլորը նշուած են «աւերուած»: Ըստ գրքի, բացի բոլոր եղած կրօնական, հնագիտական, պատմական, մշակութային շինութիւնները, Հայերը աւերել են նաեւ հետեւեալ շէնքերը.

– 574 գրադարան

– 292 համայնքային ակումբ

– 167 մշակոյթի տուն եւ այլն

– 121 տուն միայն Շուշիում:

Այս պատկերների մէկ մասը կարելի է տեսնել www.war-culture.az կայքէջում, որն, ինչպէս ասուեց, առաջին հայեացքով տպաւորիչ է երեւում, բայց երբ մանրակրկիտ նայէք, ապա կը տեսնէք, որ ցուցակում շարուած հարիւրաւոր անունների 90 տոկոսը անհիմն են եւ անորոշ:

Բուն գիրքը պատրաստուած է գեղեցիկ, բայց պատմականօրէն ոչ մի արժէք չի ներկայացնում: Սա միմիայն կարող է ծառայել պատմութիւնից ու աշխարհագրութիւնից անտեղեակ անհատներին, որոնք այսօրուայ աշխարհի ժողովրդի գերակշռող տոկոսն են կազմում, նրանց համոզելու, որ ո՛չ թէ Ադրբեջանցիները՝ այլ Հայե՛րն են մշակոյթի կոթողներ աւերողները:

Հայաստանում մենք ունենք Արցախի յուշարձաններին, ճարտարապետութեանն ու պատմութեանը քաջածանօթ մասնագէտներ, որոնք կարող են գիրքը քննարկել ու ներկայացուած կեղծիքները մանրակրկիտ բացայայտել:

Աւելացնեմ, որ միայն վերջերս էր, որ Ադրբեջանի բանակը ջարդեց ու հեռացրեց Ջուղայի հայկական հին գերեզմանոցի բազմաթիւ եւ հսկայական խաչքարերը, այն էլ բացայայտ կերպով, ամբողջ աշխարհի աչքերի առջեւ: Իսկ Նախիջեւանի հայկական եկեղեցիներից այսօր մեծ մասամբ ոչ մէկ հետք էլ չեն թողել: Թերեւս կարիքը կայ այս մշակութային ջարդի մասին աւելի մանրամասն տեղեկութիւն տուող յօդուածներ ու գրքեր պատրաստել, որոնցից են Հայկական Ճարտարապետութիւն Հետազօտող Կազմակերպութեան (RAA) 2006ին հրատարակած գրքոյկն ու տեսահոլովակը:

Առկայ են բոլոր նիւթերն ու պատկերները, պէտք է դրանք համադրել եւ հրատարակել: Յուսամ Հայաստանի ու Հայերի ապագայով հետաքրքրուող Սփիւռքի մեր բոլոր կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները այս նիւթով լրջօրէն կը զբաղուեն:

ՌՈՒԲԷՆ ԳԱԼՉԵԱՆ

Լոնտոն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՄԱՐՏԻ 1-Ի ԽԺԴԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՐԱՀՐԵԼՈՒ ՓՈՐՁ ԷԻՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ «ԱՐԱՐԱՏ» ՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԷՆ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ ԱՐՄԷՆ ԱՅՎԱԶԵԱՆԻ ՀԵՏ

– Պարոն Այվազեան, յետընտրական զարգացումները կարելի՞ է համարել «գունաւոր» յեղափոխութեան անյաջող փորձ:

– Տեղի ունեցածին քաղաքական եւ իրաւական ճիշդ գնահատականներ տալը չափազանց կարեւոր է: Համոզուած եմ, որ Մարտի 1ի խժդժութիւնները քաղաքացիական պատերազմ հրահրելու փորձ էին:

Ես ապրում եմ «ցուցարարների» եւ իրաւապահ ուժերի միջեւ տեղի ունեցած խոշոր բախումների վայրից 100 մեթր հեռաւորութեամբ: Այսինքն՝ տեսել եմ եւ լսել գրեթէ ամէն ինչ: Մօտակայքում՝ Գրիգոր Լուսաւորիչ փողոցի երկայնքով ապրում են նաեւ իմ բարեկամներն ու ընկերները, որոնց հետ այդ օրուայ ողջ ընթացքում կապ եմ պահպանել:

Այսպէս կոչուած «յեղափոխականները» գրաւեցին քաղաքի կենտրոնի մի մեծ հատուած, այնտեղ կառուցեցին պատնէշներ, կազմակերպեցին «ինքնապաշտպանութիւն» եւ, ի վերջոյ, յարձակուեցին հայ զինուորների վրայ: Հայ զինուորին ու ոստիկանին «թուրք» անուանելով՝ նրանք միաժամանակ կոչ էին անում միանալ իրենց, չենթարկուել հրամաններին, այսինքն՝ զէնքով դուրս գալ կառավարութեանը հաւատարիմ զինուած ուժերի դէմ:

Հետեւաբար այս ամէնը ոչ թէ սոսկ պետական յեղաշրջման ու «գունաւոր» յեղափոխութեան փորձ էր, այլ, որ առաւել վտանգաւոր է, քաղաքացիական պատերազմ ու եղբայրասպանութիւն հրահրելու կանխամտածուած փորձ:

Այս առումով կարեւոր է նկատի ունենալ ու պարզ պատկերացնել ոչ միայն Մարտի 1ին կատարուած ողբերգութիւնը, այլեւ այն հնարաւոր վատթարագոյն հետեւանքները, որոնք կարող էին տեղի ունենալ: Մի պահ պատկերացնենք, որ թէկուզ մէկ զումարտակ կամ թէկուզ մէկ դասակ ենթարկուէր այդ սադրանքին, զէնքը ձեռքին անցնէր խռովարարների կողմը: Երեւանի կենտրոնում կը սկսուէր իսկական մարտ՝ զինուորականների միջեւ: Այդ դէպքում զոհերի թիւը անհամեմատ մեծ կը լինէր:

Տէր Պետրոսեանի եւ նրա թիմի հրահրած նման գործողութիւնները ցուցադրում են քաղաքական անպատասխանատուութեան բարձրագոյն աստիճան, առաւել եւս եթէ նկատի ունենանք նոր յարձակում ծաւալելու Ադրբեջանի նախապատրաստութիւնները, նրա թիկունքում կանգնած Թուրքիայի գոյութիւնը:

– Դուք կարծում էք, որ Հայաստանն ու երկրի բնակչութիւնը վրտանգուած էին ե՛ւ ներքին ե՛ւ արտաքին ճակատներում:

– Բնականաբար Իլհամ Ալիեւը կ'օգտուէր իրադրութիւնից եւ խոշորածաւալ յարձակում սկսելու հրաման կը տար: Այդ ամէնը կարող էր աւարտուել Արցախի եւ Սիւնիքի կորստով: Ի վերջոյ, երկրի կործանումով:

Պէտք է գիտակցել, ուրեմն, որ Մարտի 1ին եւ 2ին լուծւում էր հայկական պետականութեան հարցը: Այս ամէնից յետոյ ՀՅԴ-ին ընդդիմութիւն համարելն անհեթեթութիւն է: Յուսով եմ, պետութիւնը բաւականաչափ քաղաքական կամք կը դրսեւորի կատարուածին տալու համարժէք իրաւական գնահատական:

Անհրաժեշտ է նաեւ ճիշդ վերլուծել Մարտի 1ի իրադարձութիւններին նախորդող նախընտրական եւ յետընտրական փուլերը: Լ. Տէր Պետրոսեանն ու նրա ղեկավարած ուժերը, օտարի հովանաւորութեամբ, պետական յեղաշրջում իրականացնելուն եւ քաղաքացիական պատերազմ հրահրելուն նախապատրաստւում էին մինչեւ 2008 թուականի նախագահական ընտրութիւնները:

10 տարի շարունակ ՀՀՇ-ական մամուլը օրնիբուն զբաղուած էր «Մարտի 1ի» նախապատրաստութեամբ: Ազգային արժէքներն ու արժանապատուութիւնը նսեմացնելով, ադրբեջանաթրքական վտանգի նկատմամբ ժողովրդի զգացումը բթացնելով, Հայաստանցի–ղարաբաղցի արհեստական բաժանում մոգոնելով ու խորացնելով, պետական բոլոր կառոյցների նկատմամբ անվստահութիւն սերմանելով՝ հետեւողականօրէն խարխլում էին Հայաստանի անվտանգութեան հիմնաքարերը:

Պէտք է խոստովանել, որ նշուած խնդիրներում, այս կամ այն ձեւով ու չափով, մեղաւոր են նաեւ իշխանութիւնները: Այսօր գործող պետական պաշտօնեաներից շատերը անցել են ՀՀՇ-ի գաղափարական ու կադրային դարբնոցի միջով եւ իրենց գործունէութեան շրջանակներում յաճախ հէնց ՀՀՇ-ի քաղաքականութիւնն էին իրականացնում: Իսկ ՀՀ համապատասխան մարմինները քնած էին կամ չտեսնելու էին տալիս ինչպէս հայկական պետականութեան դէմ ներսից ծաւալուած տեղեկատուական–հոգեբանական պատերազմը, այնպէս էլ կազմակերպչական բուռն գործունէութիւնը, որը ֆինանսաւորւում եւ ուղղորդւում էր դրսից:

– Յետադարձ հայեացքով դուք տեղի ունեցածը կանխելու ի՞նչ հնարաւորութիւններ կարող էք մատնանշել:

– Տասնամեայ նախապատրաստական աշխատանքներից յետոյ Տէր Պետրոսեանը վերադարձաւ քաղաքական դաշտ եւ յայտարարեց յեղափոխութիւն իրականացնելու իր մտադրութեան մասին: Երբ նախագահի թեկնածուն ամիսներ շարունակ հանրահաւաքներում, ինչպէս նաեւ իրեն տրամադրուած հեռուստաեթերով երկրի խորհրդանիշը հանդիսացող նախագահին անուանում է «ոճրագործ» եւ մեղադրում ծանրագոյն յանցագործութիւններ կատարելու մէջ, բայց իր ունեցած «փաստերը» չի ներկայացնում դատական ատեաններին, Հայաստանի Հանրապետութիւնը համարում է «աւազակապետութիւն», մերժում է պետական բոլոր հաստատութիւնները, իրաւական բոլոր ատեանները, ապա պարզից էլ պարզ է, որ նա պատրաստւում է ոչ թէ ընտրութիւնների, այլ յեղաշրջման, յեղափոխութեան, անկարգութիւնների, ահաբեկչութեան:

Պետութեան առաջին դէմքերին

հրապարակաւ ոճրագործ յայտարարելը եւ դա հաստատող փաստերը իրաւական ատեաններին չներկայացնելը ոչ այլ ինչ է, քան ինքնադատաստանի նախաձեռնութիւն ու ահաբեկչութեան կոչ: Դա էլ անում էր Տէր Պետրոսեանը: Իշխանութիւնները մեղաւոր են, որ դեռեւս աշնանը չկասեցրին Տէր Պետրոսեանի բացայայտ հակաօրինական, յեղափոխական ընթացքը, նրան դատարան չկանչեցին ու պատասխան չպահանջեցին:

Փետրուարի 27ի հանրահաւաքին նա արդէն յայտարարեց՝ «մեր այսօրուայ շարժումը բուրժուա-դեմոկրատական յեղափոխութիւն է»: Եւ նորից իշխանութիւնը չկասեցրեց նրա գործունէութիւնը, սխալմամբ յուսալով, որ ամէն ինչ ինքն իրեն կը կարգաւորուի: Փետրուարի 19ի ընտրութիւններից յետոյ պարզ դարձաւ նաեւ, որ Տէր Պետրոսեանը վաղուց ի վեր քայքայիչ գործունէութիւն է ծաւալել անգամ ուժային կառոյցներում, ներառեալ Հայոց բանակում եւ կարողացել է հաւաքագրել գոնէ մէկ ազդեցիկ զինուորական պաշտօնեայի: Փետրուարի 27ի հանրահաւաքում Տէր Պետրոսեանը նաեւ կեղծ ու սադրիչ յայտարարութիւն արեց, թէ իբր «իրաւապահ մարմինների եւ զինուորականների ճնշող մեծամասնութիւնն անցել է ընդդիմութեան կողմը»:

Նրա գործողութիւնները ձեռք էին բերել Հայաստանի ազգային անվտանգութեանը սպառնացող ծայրայեղ վտանգաւոր ընթացք, որի հնարաւոր հետեւանքները կարող էին աղէտալի լինել՝ յանգեցնելով Հայոց բանակի ներսում երկպառակութիւնների, զինուած առճակատման, արդարացում չունեցող եղբայրասպան բախումների: Եւ այս ամէնը ադրբեջանական լայնածաւալ ներխուժման իրական սպառնալիքի պայմաններում: Դեռ մինչեւ Մարտի 1ը Տէր Պետրոսեանը, միտումնաւոր անտեսելով արտաքին վտանգը, գործը տանում էր դէպի քաղաքացիական պատերազմ, ինչը որեւէ հանգամանքում արդարացում ունենալ չի կարող: Բարեբախտաբար իշխանութիւններն ի վերջոյ կարողացան չէզոքացնել բախումների, յեղաշրջման, քաղաքացիական պատերազմի ծրագիրը:

– Իսկ ինչո՞ւ այս ամէնը աւելի վաղ չկանխուեց:

– Խանգարեցին մեր հասարակական-քաղաքական կեանքում կուտակուած արատաւոր երեւոյթները՝ տեղեկատուական պաշտպանուածութեան բացակայութիւնը, [պետական] պաշտօնէութեան համատարած կաշառամոլութիւնը, խմբակային համակարգը, ընկերային ահագնացած անարդարութիւնը, կադրային զաւեշտալի քաղաքականութիւնը, ազգային արժէքների եւ մշակոյթի զանգուածային ուրացումը...

Բայց այսօր մարդիկ, ովքեր անցած տարիների ընթացքում երբեք չեն յայտնել քաղաքացիական դիրքորոշում, պատճառահետեւանքային կապերն ու հերթականութիւնը չփոթելով, երեկուայ, այսօրուայ ու վաղուայ անելիքները միմեանց խառնելով, արտաքին վտանգը եւ Հայաստանի ռազմավարական խոցելիութիւնը կատարեալ մոռացութեան մատնելով յանկարծ յեղափոխական են դարձել եւ ցանկանում են մէկ հարուածով լուծել երկրի ներսում կուտակուած բարդագոյն խնդիրները: Անհրաժեշտ է գիտակցել, որ այս խնդիրների լուծումը պահանջելու է երկարատեւ ու տքնաջան աշխատանք:

Ո՞ւր էր, ի դէպ, Տէր Պետրոսեանը վերջին երկար ու ձիգ 10 տարիներին, որոնց ընթացքում նա երբեք հանդէս չեկաւ քաղաքական որեւէ վերլուծութեամբ, ելոյթով կամ կառուցողական քննադատութեամբ: Նա երբեւէ քաղաքական գնահատականներ չտուեց, չփորձեց աշխատել ազգային գաղափարական դաշտում կամ դաստիարակել հայրենասիրական – քաղաքացիական գաղափարներով տոգորուած երիտասարդութիւն, չօգտագործեց պետութեան ղեկին լինելու ընթացքում ձեռքբերած իր կենսափորձը: Զարեց այն, ինչը եւ պարտաւոր էր անել երկրի առաջին նախագահը՝ ի շահ հայկական պետականութեան քաղաքական հասունացման ու կայացման:

Մարտի 1ից յետոյ Հայաստանը յայտնուել է իւրայատուկ «սահմանային իրադրութեան» մէջ, որից կայ երկու ելք: Կա՛մ խոր վերլուծութեան եւ ճիշդ եզրակացութիւնների հիման վրայ պետութիւնը մշակում է արմատապէս նոր քաղաքականութիւն եւ դուրս է գալիս հասարակութեան բոլոր վէրքերը բացած ճգնաժամից աւելի ուժեղ, քան մինչ այս էր, կա՛մ տեղի կ՚ունենան մակերեսային փոփոխութիւններ, ճգնաժամի խորացում, հայկական պետականութեան փլուզում:

Պէտք է ամէն ինչ անել, որպէսզի իրականանայ առաջին տարբերակը, որովհետեւ դա է պետութիւնը պահպանելու միակ հնարաւորութիւնը:

Հարցազրոյցը վարեց՝
ԳԷՈՐԳ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

«Հայոց աշխարհ»

ՓԱԹՐԻՔ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՊԱՆԷԼՕԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Համայնավար կուսակցութենէն Փաթրիք Ալեքսանեան, Մարտ 16-ին, Գանթոնալ ընտրութիւններուն Օ-տը-Սէնի ընդհանուր խորհրդական ընտրուած է ձայներու 66%-ով:

Յիշենք, որ ենթական զաւակն է «Աշխարհ»ի ողբացեալ հիմնադիր խմբագիր Աւետիս Ալեքսանեանի:

ԼԻԶ ՍԱՐԵԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

Անկէնի գաղինոյին թատրոնը ծայրէ ծայր լեցուած էր Կիրակի Ապրիլ 6ին, Լիզ Սարեանի համերգին առթիւ, զոր կազմակերպած էր տեղւոյն Հայդասս կրթական միութիւնը: Այս ձեռնարկով, հակառակ ակամայ յապաղումին, կը փակուէր Հայաստանի տարին Անկէնի մէջ: Ձեռնարկին նպատակն էր նաեւ օժանդակել դպրոցի մը շինութեան Հայաստանի մէջ:

Բացման խօսքը արտասանեց Փաթրիս Մանփրէտի, քաղաքապետին կցորդը, ապա, թաղապետական խորհուրդի անդամ Փոլ Հաճիպօղոսեան ողջունեց ներկաները, մատնանշելով գլխաւորաբար Հայաստանի դեսպան Է. Նալպանտեանի, Ֆրանսահայ թեմի առաջնորդ Նորվան արքեպիսկոպոսի, Շառլ Ազնաւուրի, Անկէնի քաղաքապետին, Սէն-Կրասիէնի քաղաքապետին, Ռոզի Վարդի, Ֆրանսայի Հայաստան հիմնադրամի նախագահ՝ Պետրոս Թէրզեանի եւ մամուլի ներկայացուցիչներու ներկայութիւնը:

Ընկերակցութեամբ Ֆրէտէրիք Մանուկեանի նուագախումբին Լիզ Սարեան բեմ եկաւ ու սկսաւ իր համերգը ֆրանսերէն եւ հայերէն ճոխ յայտագրով մը: Լիզ Սարեան ծանօթ եւ սիրուած անուն մըն է եւ այդ անունը արդէն կը բաւէ սրահ լեցնելու համար: Իր ջերմ, հաղորդական ձայնը տարիներէ ի վեր գրաւած է հանդիսականներուն սիրտը եւ ընտրած յայտագիրն ալ կը նպաստէր աւելի սերտ կապ մը հաստատելու երգչուհիին եւ հանդիսականին միջեւ:

Դադարէն ետք, երկրորդ բաժնի սկզբնաւորութեան բեմը գրաւած էին տեղւոյն Ֆրանսացի թէ հայ կարգ մը անձնաւորութիւններ եւ այդ առթիւ Հայդասի պատասխանատու Արթօ Գիլլմլի բեմ հրաւիրեց Հայաստան հիմնադրամի նախագահը՝ պրն. Պետրոս Թէրզեան, որու յանձնեց 15 հազար եւրոյի չէք մը դպրոցի մը՝ Դրախտիկի մէջ, ծնունդ տալու համար Ղարաբաղ, նոյն ատեն տեղւոյն նուիրատուներէն 6150 եւրոյի չէք մը եւս յանձնուեցաւ ընդհանուր խանդավառութիւն ըստեղծելով: Խօսք առնելով, Անկէնի քաղաքապետը՝ Ֆիլիփ Սիւէօր դրուատեց ֆրանքեւհայկական բարեկամութիւնը, յիշեց նաեւ որ 1988ի երկրաշարժին տեղւոյն հրշէջները Հայաստան փութացած էին եւ բեմ հրաւիրեց անոնց ներկայացուցիչը զոր պատուեց յուշանուէրով մը:

Լիզ Սարեան բեմ վերադարձաւ մեզի հրամցնելու համար իր երգացանկին երկրորդ մասը, հայերէն թէ ֆրանսերէն ընտրուած երգերով: Իր տաք, ունկնդիրը գրաւող դիւրահաղորդ մեկնաբանութեամբ, Լիզ Սարեան կրկին խանդավառեց ներկաները ու այս երկրորդ բաժնին աւարտին անակնկալ մըն ալ ներկայացուց, յատկապէս Լոս Անճըլըսէն եկած Սեդա Ազնաւուրը (Շառլ Ազնաւուրի անդրանիկ զաւակը), որ նախ առանձին, ապա զուգերգով մը Լիզ Սարեանի հետ փակեցին այս հաճելի համերգը: Արդարեւ, ինչպէս Ֆրանսացին պիտի ըսէր՝ համերգ մը որու նպատակը եղաւ «Joindre l'utile à l'agréable», քանի համերգին հաճոյքին կցեց կրթական օգտակար ձեռնարկի մը օժանդակութիւնը: Արդարեւ, ընդառաջելով Հայդասի որոշումին նպաստելու համար դպրոցի մը շինութեան, Հայաստան հիմնադրամը առաջարկած էր Ղարաբաղի Դրախտիկի դպրոցի շինութիւնը եւ որու մատակարարութիւնը պիտի ապահովեն կառավարութիւնն ու քաղաքապետութիւնը շինութենէն ետք:

Մեզի կը մնայ ուրեմն ըսել ձեր վարձքը կատար Լիզ Սարեանին եւ Հայդասին:

Ա. Մ.

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Արդէն մի քանի օր էր, ինչ Մախոխեանը հիւրընկալւում էր Այվազովսկու տանը եւ ամէն առաւօտ նրա հետ միասին ուղեւորւում էր արուեստանոց: Շաբաթ օրը, կէսօրից յետոյ, ներքեւի յարկից ինչ-որ ձայներ եկան: Այվազովսկին կարգադրեց սպասաւորին.

– Պետիա, գնա ասա թող բարձրանան վերեւ:

Մի քանի րոպէ անց ստուդիան լցուել գիմնազիստներով: Բարեւելով, նրանք կամաց ու անաղմուկ դիրք էին գրաւում այն աթոռի շուրջը, որի վրայ ժամանակ առ ժամանակ նստում էր նկարիչը: Քիչ յետոյ Իվան Կոնստանտինովիչը մի կողմ դրեց վրձինները եւ երիտասարդներին առաջարկեց իջնել ներքեւ նրանց աշխատանքները դիտելու: Պատանիներն իսկոյն սլացան պատկերասրահ: Այվազովսկին Մախոխեանին նոյնպէս տարաւ իր հետ: Հսկայական դահլիճում, որտեղ կախուած էին նկարչի վերջին աշխատանքները, նկարակալների մօտ կանգնած սպասում էին աշակերտները: Այվազովսկին մօտենում էր իւրաքանչիւրին եւ եթէ որեւէ բան նրան դուր չէր գալիս, սուս ու փուս վերցնում էր աշակերտի ձեռքից մատիտը կամ վրձինը եւ ուղղում կատարում: Նրա վրձնի թեթեւ մի հըպումից ամէն ինչ կենդանանում էր... Աշակերտները ուշիուշով, հիացած հետեւում էին ուսուցչի ուղղումներին:

– Ճաշի ժամանակն է, պարոնայք, – ասաց Այվազովսկին՝ լսելով զանգի ձայնը:

Գիմնազիստները, միանգամայն բնականօրէն, առանց չեմ ու չում անելու, ուղղուեցին դէպի ճաշարան: Մախոխեանը չտապեց հասնել այն պատանու յետեւից, որը դեռ արուեստանոցում գրաւել էր իր ուշադրութիւնը: Նրա նկարակալի առաջ ուսուցիչն ամէնքից երկար էր կանգ առել եւ զննելով այն, լուռ հեռացել:

Սեղանի շուրջ Այվազովսկին այդ տըղային նստեցրեց իր կողքին ու մի քանի անգամ կրկնում էր նրան.

– Կոտիա, սեղանի մօտ գոնէ ամպերի մէջ մի սաւառնիր, այլ աշխատիր կշտանալ մարմնական սնունդով:

– Այսօր ես ախորժակ չունեմ, Իվան Կոնստանտինովիչ, – տրտնջաց գիմնազիստը:

– Ինչո՞ւ, քո տարիքում հիանալի ախորժակ են ունենում:

– Գլուխս մի քիչ ցաւում է...

– Իսկ ինչո՞ւ անմիջապէս չասացիք՝ Ես լաւ դեղափոշիներ ունեմ, – անհանգստացաւ Ժաննան: – Խմեցիք թէ չէ՝ անմիջապէս կը մոռանաք ցաւը:

Ճաշից յետոյ աշակերտները չցրուեցին, այլ անցան հիւրասրահ: Այնտեղ էլ նրանք զգում էին այնպէս, ինչպէս իրենց տանը, իւրաքանչիւրն անում էր այն, ինչ սիրտն ուզում էր. ոմանք խորասուզւում էին շախմատի տախտակի վըրայ, ոմանք գլուխները թաղում ամսագրերի մէջ, ոմանք էլ նուագում էին: Պատանիների հետ միասին ուրախանում էր նաեւ Իվան Կոնստանտինովիչը: Միայն երեկոյեան, երբ մութն ընկնում էր, նկարիչը բաց էր թողնում իր սաներին.

– Իսկ հիմա գնացէք տուն, արդէն կը սպասեն ձեզ:

Յաջորդ օրը Այվազովսկին երկար մնաց Մախոխեանի հետ: Արտասովոր տաք օր էր: Փետրուարեան քամին յանկարծ դադարեց, երկինքը մաքրուեց գորշ ամպերից, եւ միանգամից զուարթացած Թէոդոսիայի վրայ փռուեց պայծառ երկնագոյն մի ծածկոց: Արեւը սկսեց թեքուել դէպի մայրամուտ, երկինքը դարձաւ մուգ վարդագոյն: Մայրամուտի բոսորագոյն ցոլքերը թեւածելով ճենովական մռայլ աշտարակների վրայ, նրա ամենաբարձր կատարին լուսաւորեցին սլացիկ մի կերպարանք:

– Գեղեցիկ է, – բացագանչեց Մախոխեանը, հայեացքը աշտարակի քարէ եղուստին արձանացած գեղեցիկ պատանուն յառելով. – Եթէ չեմ սխալւում, դա այն նոյն աշակերտն է, որին երէկ տեսայ ձեր տանը:

– Այո, դա Կոստա Բոգաեւսկին է... Ես հէնց նրա մասին էլ մտածում էի: Ուզում եմ խօսել հետը... Եւ լաւ կը լինի՝ ձեր ներկայութեամբ:

Այդ դէպքում ձայն տամ թող իջնի ներքեւ:

(Շար. 201)

(Շար. Ա. էջէն)

հեմ յայտարարութիւններու պատճառաւ, զորս ըրած էր Մոնաքօ մէջ (Ապրիլ 10) ժան–Ֆրանսուա Քոփէի եւ ժան–Լուի Պորլոյի հասցէին: Զէր վարանած գրելու թէ «այլեւս զզուած եմ դէմ յանդիման գտնուելէ վատերու բանակի մը: Վատութեան եւ անվայել կեցուածքի մրցում մը կայ Քոփէի եւ Պորլոյի միջեւ»: Իր. ԷՄ. Փէ.ի եւ կառավարութեան պատասխանատուներու մօտ մեծ խրարանցում մը ծագած էր, ենթանախարարուհին ստիպուած եղած էր ներողութիւն խնդրելու, քանի Սարքոզի ըսած էր Ֆիյոնի՝ «կամ ներողութիւն կը խնդրէ, կամ ճամբու կը դրուի»: Ենթակային վերջնագիր ալ կը տրուի՝ պէտք է ներողութիւն խնդրէ Ապրիլ 9ին, ժամը 16էն առաջ, մինչ Օ. Ժէ. ԷՄ.ներու մասին վիճարկում կար Ազգային ժողովին մէջ: Այս մէա գուլփայէն ետք, Նաթալի Քոշիուսքօ–Մորիզէ կրնար սահմաննել Իր. ԷՄ. Փէ.ի քարտուղարի կցորդի իր պաշտօնը, բայց կը զրկուէր Ֆիյոնին ընկերանալէ դէպի Ճափոն, հակառակ եղած կարգադրութեան: Շատեր նոյնիսկ ուզած էին որ կառավարութենէն հրաժարի: Պատահածը կը վերաբերի առաւելաբար իր անհորձութեան ըստ անոնց որոնք աւելի բարեացակամ են իրեն հանդէպ: Ի վերջոյ, Օ. Ժէ. ԷՄ.ի ծրագիրը քուէարկուած է 228ի դէմ 249 ձայնով: Ծրագիրը աւելի լայն տեղ կու տայ անոնց որոնք դէմ են (Պովէ), ինչ որ ըսել տուած է մեծամասնութեան կարգ մը անդամներուն, որ անձնատուր եղած են Պովէի առջեւ: Օրինագիծը անգամ մը եւս պէտք է Ծերակոյտին ներկայանայ:

ՍԱՆ–ՖՐԱՆՍԻՍՔՕՅԻ մէջ ալ, ուր ողիմպիական բոցը հասած էր Փարիզէն ետք, միջադէպերը շարունակուեցան հակառակ անոր որ նախազգուշական միջոցներ ձեռք առնուած էին եւ բոցին ուղեգիծն ալ կրճատուած: Բախումներ ալ պատահած են չինամէտ եւ ընդդիմադիր Զինացիներու միջեւ: Քաղաքին 770 հազար բնակիչներուն մէկ հինգերորդը չինական ծագում ունի:

ԿԱԶԻ գիներու 5,5%ի անակնկալ յաւելումը Ապրիլ 1էն սկսեալ, բաւական բողոքներու առիթ տուած է, շրջանի մը մէջ ուր արդէն գիներու կարողութիւնը օրէ օր կը նուազի այլ յաւելումներու պատճառաւ: Ընդդիմութիւնը կը պահանջէ որ այդ յաւելումը ջնջուի, քանի կը խորհի որ նուէր մըն է որ կ'ըլլայ կազի ընկերութեան:

ՍՈՒՐԻԱՅԻ ՎԿԱՅ ՄԸ, որ կապ ունէր Հարիրիի սպանութեան հետ, անհետացած է ըստ Պերնար Քուշների Ապրիլ 8ի յայտարարութեան: Ենթական՝ Մոհամէտ Սայիտ Ասատիք ձերբակալուած էր 2005ին փարիզեան արուարձան մը, բայց հսկողութեան տակ չէր եւ պարտադիր բնակութեան ալ ենթակայ չէր: Ֆրանսա մերժած էր սուրիական գործակալութեանց այդ նախկին պաշտօնատարը յանձնել լիբանանեան արդարութեան, առարկելով որ հարկ եղած երաշխաւորութիւնը չկայ Լիբանանի մէջ, որ մահապատիժի չենթարկուիր:

«ՄՈՆՏ»ի տնօրէնութիւնը, յայտարարած ըլլալով որ 130 պաշտօնազրկումներ պիտի կատարէ, աշխատաւորները որոշեցին գործադուլի դիմել եւ օրաթերթը լոյս պիտի չտեսնէ Երկուշաբթի, Ապրիլ 14ին:

ՊԱՂՏԱՏԻ Սատր Սիթի թաղամասին մէջ, Ապրիլ 9ին, 13 հոգի եւս մեռած է ամերիկեան զօրքերու եւ շիի քաղաքազօրքերու միջեւ ծագած բախումներու ընթացքին: Նոյն օրը Իրաք կը տօնէր Ս. Հիւսէյնի վարչակարգի տապալման 5րդ տարեդարձը:

ԱԴՐԲԵՋԱՆԻ նախագահական ընտրութիւնը տեղի կ'ունենայ Հոկտեմբեր 15ին: Իր յաջորդութեան թեկնածու Ի. Ալիեւի վերընտրութիւնը ստոյգ կը նկատուի: Ան 46 տարեկան է, այդ պաշտօնին ընտրուած է, յաջորդելով հօրը, 2003 թուականին: Ըստ նախնական տուեալներու, երկիրը ունի 4,8 միլիոն ընտրող:

ՌՈՊԷՐ ԿԷՏԻԿԵԱՆԻ նոր ֆիլմը՝ Լէյտի ձէյն որ հրապարակ ելաւ Ապրիլ 9ին, մամուլին ընդհանուր գնահատանքին արժանացաւ: Այս անգամ բեմադիրը դիմած է ոստիկանական նիւթի մը որ հիմնուած է վրէժի վրայ: Ընտրուած վայրը եւ դերասաններու երրեակը (Արիան Ասքարիտ, Տարուսէն, Մէյլան) չեն փոխուիր եւ կը պարզուի նաեւ որ իր այդ հաւատարմութիւնը չի վնասեր:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

ՀՐԱՒԷՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
2006 / 2007 թթ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ Կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին

Սահակ–Մեսրոպ մշակութային կեդրոնի Ա. Զրբաշեան սրահին մէջ

339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը:

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը:

Ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈՊԷՐ ԱԶԻԼԱԶԵԱՆ

Հոգեւոր հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, ժամը 15.30ին
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ
ՍԿՍԱԾ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (26, ռիւ Թրուայոն, Սեւր):

– ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20.30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ, 1894–1925 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
Մարսէյլի Հայ կաթողիկէ ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001):

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Ց. ՊԶՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20.30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԻՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՕՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGLISE ARMENIENNE
DE CHAVILLE

Vous invite
à
une

SOIREE - DIAPORAMA

« UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE »
par
Hrant NORSEN

Samedi 19 avril à 20h45
à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

CINE-CLUB

«Achkhar» / UCFAF

Ciné-Club
«Rouben Mamoulian»
Sous le parrainage
de Robert GUEDIGUIAN,
réalisateur

Jeudi 17 avril à 20 heures

Hommage aux victimes
du Génocide Arménien de 1915
ARCHIVES DE A. PEHLIVANIAN
&
LES QUARANTE JOURS
DE MOUSSA DAGH

Suivi d'une conférence débat
avec Claude Mutafian, historien

Film américain, 1982, 1h50, VF

D'après le roman de Franz Werfel
Un film de Sarkis Mouradian

— Entrée libre —

Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

P.A.F. : 5 euros — Réduit : 3 euros

UCFAF
6 Cité du Wauxhall — 75010 Paris
Métro: République

Ս. ՄԵՍՐՈՊ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Կարէն Սիմոնեանի
«ԼՈՅՍ
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
Գրական – Գեղարուեստական Երեկոյթներու շարք
ՑԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹ
ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հինգշաբթի, Ապրիլ 17, ժամը 20ին

Տարժապատկեր,
Դրուագներ
երգացանկէն,
Յիշողութիւններ

10 bis, rue Thouin, Paris Vème
Métro Cardinal Lemoine, Monge

Մուտքը ազատ է

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La Maison de la Culture Arménienne
de la Jeunesse et de la Culture
et l'Association pour la Création
Audiovisuelle d'Artistes
d'Origine Arménienne
vous invitent
à la PROJECTION de
« NOUS LES AUTRES »
Un film d'Edouard SARXIAN
le **Vendredi 11 avril à 19h30**
à la M.A.J.C.

Après le «MARSEILLE DES ARMENIENS» présenté en 2002, ce nouveau film est un regard sur la population française d'origine arménienne de Marseille. C'est un constat qui devrait susciter auprès de la deuxième et troisième générations vivant en dehors des terres arméniennes, une prise de conscience d'un devenir identitaire. Comment vivent-ils leur double identité?

* * *

La M.A.J.C. et l'Association les 3A
présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
AVEDIS
AHARONIAN
Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.

— Entrée libre —

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A. «Onnig Surmélian»
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.

— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.

— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier,
94140 Alfortville

— Entrée libre —

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 12-13
SAMEDI-DIMANCHE
12-13 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jbaratch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.937 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 83e ANNEE — N° 21.937

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ապրիլ 10ին, կառավարութեան նիստէն առաջ, նախագահ Ս. Սարգսեան կառավարութեան անդամներուն ներկայացուցած է նոր նշանակուած վարչապետ Տ. Սարգսեանը։ Ցոյս եւ համոզում յայտնած է որ ան իր պաշտօնավարութեան տարիներուն շատ կարեւոր ծրագիրներ կ'իրականացնէ։ Նոր վարչապետը շնորհակալութիւն յայտնած է եւ շեշտած թէ կողմնակից է խմբական աշխատանքի։ Ըսած է թէ կը տարուի կաշառակերութեան դէմ պայքարի ծրագիր։

Նոյն օրուան կառավարութեան նիստը վարելէ ետք Տ. Սարգսեան հրաժեշտ առած է Կեդրոնական դրամատան աշխատակիցներէն. ապա պատասխանած է լրագրողներու հարցումներուն։ Խօսելով կառավարութեան ծրագիրներուն մասին, ըսած է թէ Ազգային ժողովը հաստատած է իր նախորդին՝ Ս. Սարգսեանի ծրագիրները. անոնք կը նախատեսեն Հայաստանը դարձնել ֆինանսական, առողջապահական եւ զբօսաշրջական կեդրոն, գործարարութեան լաւագոյն միջավայրի տէր երկիր որ կը հիմնուի իր մտաւոր ներուժին վրայ։

Նոր վարչապետը առաջնային հարց նկատած է մաքսային եւ հարկային վարչարարութեան կատարելագործումը։ Շեշտած է թէ ստուերայինը, անհաւասար դաշտը, կաշառամոլութիւնը, չարաշահումները այդ մարզին տիրող անբաղձալիներ են եւ «այս համակարգում լինելու են լրջագոյն եւ ցաւոտ փոփոխութիւններ»։

Վարչապետի պաշտօնին նշանակուած դէմքի կողմէ այս մատնանշումն իսկ յուսադրիչ է որպէս առաջին քայլ։ Հարցը այն է որ Տ. Սարգսեան եւս չհետեւի իրենց գործունէութեամբ իրենց խօսքին ու գործին միջեւ անդունդներ գետեղած շատ ղեկավարներու օրինակին։

* * *

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻՆ ՕԳՆԱԿԱՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Ապրիլ 8ի գիշերը ձերբակալուած է պաշտպանութեան նախկին փոխնախարար Մանուէլ Գրիգորեանի օգնական Ջօհրապ Գալստեանը։ Փոխնախարարը որ միացած էր Լ. Տէր Պետրոսեանի ընդդիմադիր շարժումին, ձերբակալուած էր, այն պատճառաբանութեամբ որ սպանութեան սպառնալիք ըրած էր Վաղարշապատի բնակիչի մը։ Իր օգնականն ալ ձերբակալուած է նոյն պատճառով։

* * *

ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՕՏԱՐ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Լ. Տէր Պետրոսեանի ներկայացուցիչներ Արամ Սարգսեան, Դաւիթ Շահնազարեան, Լեւոն Զուրաբեան, Արտակ Զէյնալեան Ապրիլ 9ին հանդիպում ունեցած են ԱՄՆ-ու արտաքին գործերու տեղակալի օգնական եւ Մինսկի խումբին նախագահներէն Մ. Պրայզայի հետ. ներկայ գտնուած են նաեւ Եւրոպական Միութեան Հարաւային Կովկասի յատուկ յանձնակատար Փ. Սեմնեպին, ԱՄՆ-ու Երեւանի գործավար Ճ. Փենինկթընը եւ նոյն դեսպանատան աշխատակիցներ։ Քննարկուած են Հայաստանի իրավիճակին կարգաւորման եւ ժողովրդավարութեան վերահաստատման ճամբաները։

Նոյն օրը քաղաքական բանտարկեալ նկատուածներու կիները եւս հանդիպում ունեցած են Մ. Պրայզայի հետ։

ԱՄՆ

Ճ. ՔԱՆՉԵԼԵԱՆ_ՍՓԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

Ճէքի Քանչելեան – Սփիր Գոնկրէսի Ապրիլ 8ի արտակարգ ընտրութեան մը յաղթանակելով Գոնկրէսի անդամ դարձած է, ամբողջացնելու համար վերջերս մահացած Թոմ Լանթոսի շրջանը։ Հայազգի երեսփոխանուհին իր թեկնածութիւնը դրած էր Թ. Լանթոսի մահէն առաջ Գալիֆորնիոյ 12րդ շրջանէն եւ ընտրապայքարը պիտի շարունակէ յաջորդ նստաշրջանին ալ աթոռ ունենալու համար։

Ճ. Քանչելեան – Սփիր Ապրիլ 8ի ընտրութեան տիրացած է քուէներու մօտ 80%ին եւ հայազգի երկրորդ անդամն է Ներկայացուցիչներու ժողովին, Աննա Իշուի կողքին։

* * *

Հ. ՏԻՆՔ ԶՈՀ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԿԱՐԳԻՆ

Ուաշինկթընի թանգարանին մէջ աշխարհի չորս կողմը 1837 – 2007 զոհուած շուրջ երկու հազար լրագրողի համար յուշարձան մը զետեղուած է։ Անոր վրայ արձանագրուած է Հրանդ Տինքի անունն ալ։ Յուշարձանին բացումի արարողութեան ներկայ գտնուած է Ռաքէլ Տինք։

2007 Յունուարին Հ. Տինքի սպանութենէն ետք ԱՄՆ-ու Հայկական համագումարը թանգարանին հետ շփման մէջ մտած է, որպէսզի անոր անունն ալ ընդգրկուի յուշարձանին վրայ արձանագրեալներու շարքին։

* * *

ՀՐԵԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿՈՉԸ ԻՍՐԱՅԷԼԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Հայաստանի հրէական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետեան նամակով մը կոչ ուղղած է Իսրայէլի խորհրդարանին որ ճանչնայ Հայկական Ցեղասպանութիւնը։ Ըսած է թէ այդ հարցին քննարկումը շատ կարեւոր է երկրին համար որուն քաղաքացիները վերապրողներ են ու կը շարունակեն ապրիլ Ողջակէզին ու ահաբեկչութեան սարսափները։

Ռ. Վարժապետեան գրած է. «Իսրայէլ աշխարհին ցոյց տուած է թէ ի՛նչ է մարդկային կեանքին գինը, որքան կարեւոր է ամէն մէկ Հրեայի կեանքը և ինչ հակազդեցութիւն կը սպասէ բոլոր անոնց որոնք կը վտանգեն անոնց կեանքը։ Հայկական Ցեղասպանութեան, ի. դարու առաջին դաժան այդ յանցանքին ճանաչումը փաստը կու տայ քաղաքակիրթ հանրութեան ուժին, միտքին եւ աշխարհի միասնութեան։ Ատիկա պարտք մըն է զոհերուն, ապագային, երիտասարդ սերունդին եւ ձեր ընտրողներուն առջեւ։ Մեր ապագայի ապահովութիւնը ձեր ձեռքն է։ Հայկական Ցեղասպանութեան անհերքելի փաստերուն դատապարտումին մէջ ցոյց տալով անտեղիտալի կեցուածք, հաւատարմութիւն, խիզախութիւն, իմաստութիւն, դուք վեհութիւն կը նուաճէք ձեր յաջորդ սերունդներու աչքին»։

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԵՐԴՈՒՄԷՆ, ԽՈՍՏՈՒՄՆԵՐԷՆ ԵՏՔ

Սահմանադրութիւն, դրօշակ, Է. դարու Աւետարան, սահմանադրական երդում, տեղացի ու օտար հիւրեր, կաթողիկոսական օրհնութիւն, խոստումներու տարափ, շնորհաւորութիւններ, զինուորական շքերթ, Եռաբլուր այց, ծաղիկներ, աղօթք, ապա ժողովրդական խրախճանք, երաժշտութիւն, ծափեր, մաղթանքներ. քիչ մը ամէն երկրի հասարակաց պարագայական այս բեմայարդարումին մէջ իր պաշտօնը ստանձնեց Հայաստանի նորընտիր նախագահը։ Եւ նման առիթներու ընկալեալ սովորութիւն է, ըսել թէ երկրին պատմութեան մէջ նոր էջ մը կը բացուի։

Հայաստանի Փետրուար 19ի ընտրութեամբ բացուած «նոր» էջը բաւական ամուր կապերով առընչուած է նախորդ նախագահին պաշտօնավարութեան տասնամեակին, նաեւ՝ անկախութեան հռչակումէն մինչեւ այդ տասնամեակը երկարող շրջանին։ Առաջին կապը կը կազմէ դժգոհութեան, պոռթումի այն կուտակումը որ Ս. Սարգսեանի նախագահութիւնը կը զետեղէ ճգնաժամու մը մեկնակէտին վրայ։ Իսկ երկրորդը նոյն ճգնաժամը հասունցնող վերջին տարիներուն անոր վարչապետ ըլլալու պարագան է։

Որքան ալ ներս-դուրսի մեղսակցութեան պնդումներ, վերլուծումներ ըլլան, պառակտումի ու զոհերու առաջնորդած կիրքեր ամբաստանուին, «անձնական»ի սիրոյն մինչեւ կործանում դիմելու մեղադրանք ուղղուի, անկարելի է անտեսել էականը. միայն մրոտելով, խոստումով, գումարներով կարելի չէր որ վերջին պահու ընդդիմութեան մը փորձը այնքան շօշափելի սպառնալիքի վերածուէր, եթէ չըլլար ամէնէն հիմնական ազդակը. ժողովուրդը այլեւս չէր կրնար, չէր ուզեր հանդուրժել անձնասէր, կամապաշտ, խմբակային մտայնութեամբ միայն շարժող ղեկավարութիւններու։ Եւ ո՛վ որ ալ ըլլար այդ հոգեվիճակին արտայայտութեան առիթը, պիտի գտնէր Լ. Տէր Պետրոսեանի ցոյցերուն «յաջողութիւն»ը։

Այս իրողութիւնը այպանելի, դատապարտելի այդ շարժումին կու տայ կարեւոր «բարենիշ» մը. առանց անոր, շատ հաւանօրէն տակաւին առեն մըն ալ շարունակուէր իշխանութիւններու անտարբեր ու ինքնագոհ ընթացքը։ Շարունակուէր ընկերային անդունդին ընդլայնումը՝ ղեկավարներու, անոնց մօտիկ շրջապատին եւ ժողովուրդի լայն զանգուածներուն միջեւ։ Մինչեւ որ կացութիւնը թերեւս հասնէր անդարմանելիին։

Երդումի արարողութեան ընթացքին նոր նախագահին ճառը տեղ-տեղ այն տպաւորութիւնը կու տար որ հոգեշահ խօսքերու ետին կար իրողութիւնը նըշմարած մէկը։ Ըմբռնած թէ կենսական էր ձեռնարկել փոփոխութիւններու։ Սակայն ժողովուրդին, երկրին, նաեւ Արցախի ներկան ու ապագան կապուած է այն միջոցին որ ինկած պիտի ըլլայ խոստումներուն եւ իրագործումի կամքին ու յաջողութեան միջեւ։

Շատ, շատ կարեւոր է որ այդ միջոցը կարճ ըլլայ կարելի եղածին չափ։ Ժողովուրդը իր պարտականութիւնը կատարեց. ըսաւ, աղաղակեց, սպառնաց որ հանդուրժելու տեղ չունի այլեւս։ Ջըպայթելու համար կը սպասէ շօշափելի քայլերու։

Ամբողջ հարցը հոն է որ Ս. Սարգսեանի վաղուան վարչախումբը պիտի կարենա՞յ ութ զոհերով տրուած դասը իսկապէս հասկցածի ու դարմանի անկեղծ տրամադրութեան փաստը տալ։ Խօսքը միայն որոշ փոքրամասնութեան մը ու Երեւանի կեդրոնին մասին չէ. անոնցմով չի սահմանուիր Հայաստանը, որքան ալ այդպէս կարծողներ, կամ նկատել ուզողներ ըլլան։ Նոր նախագահը պիտի յաջողի՞ չէզոքացնել իր ալ շրջապատին կաշառամոլ, եսակեդրոն, մակաբոյծ ու ինքնագլուխ տարրերը ու գործի գլուխ բերել երկրին ու ժողովուրդին ամբողջութեան մտահոգութեան տէր, կարող, հեռատես ղեկավարներ։

Երկրին ոչ միայն կայունութիւնը, այլեւ մինչեւ իսկ գոյութիւնը կապուած է այսօրուան ճառերուն եւ վաղուան գործին առընչութեան։ Ան թացակայելու պարագային, բոլոր նախադրեալները կան որ Ազատութեան հրապարակի բազմութիւնը, անոր դժգոհութիւնը, զայրոյթը, անհամբերութիւնը, այդ բաները շահարկելու տրամադրութիւնները, մինչեւ իսկ ութ զոհերը, պարզ նախաբանի վերածուին։

Ա. Թ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ նախագահը՝ Խոսէ Մանուէլ Պարոզօ երկօրեայ այցելութիւն մը կատարած է Անգարա Եւրոպայի ընդլայնման պատասխանատու՝ Օլի Ռէնի հետ եւ տեսնուած է Կիւլի եւ Էրտողանի հետ։ Պարոզոյի համար Թուրքիա դեռ երկար ճամբայ մը ունի կտրելիք եւ տանելիք ալ մեծ աշխատանք, նախքան մուտք գործելը Եւրոպա։ Էրտողան ըսած է սակայն թէ Թուրքիոյ համար միակ ճամբան անդամակցութիւնն է, կը բացառէ գործընկերութեան բնոյթ ունեցող որեւէ լուծում։

ՖՐԱՆՍԱՅԻ ԼԻՍԷՆՆԵՐՈՒ աշակերտները հինգերորդ անգամ ըլլալով փողոց իջան Ապրիլ 10ին։ Փարիզի մէջ անոնց թիւը 19.000էն 40.000 կը գնահատուի, ըստ աղբիւրներու։ Բողոքի պատճառը նոյնն է՝ նախատեսուած 11.500 պաշտօնազրկումները։ Ցոյցերէն զատ միջադէպեր ալ պատահած են Անկէն, Պրի-Գոնթ-Ռոպէր եւ այլուր։ Կրթական նախարարը անդրդուելի կը մնայ եւ ցոյցերուն

(Շար.ը Դ. էջ)

ՊՈԼԻՍ

ԵԿԵՂԵՑԻԻՆ ԲԱԿԻՆ ՄԷՋ ԿՐԱԿԵԼՈՒ՞ ԳԻՆԸ

Պոլսոյ պատրիարքանիստ Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ օդին կրակած երկու Թուրքերու դատավարութիւնը աւարտած է։ Մէկը անպարտ արձակուած է, միւսը դրամական տուգանքի ենթարկուած։ Ան պիտի վճարէ շուրջ 9500 տոլար։

Երկու Թուրքերը կրակած էին այն օրը երբ Մեսրոպ պատրիարք կը պատարագէր նոյն եկեղեցիին մէջ, Հ. Տինքի մահուան քառասունքին առթիւ։ Բուն յանցաւորը նախ ըսած էր որ ծրագրած էր պատրիարքը թիրախ առնել, սակայն աւելի ետք հերքած էր ըսածը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՆԻՒԹՈՎ ԵՐԵԿՈՅԹ

Փարիզի Զօպանեան հիմնարկը եւ ՀԲԸՄ-ը շատ այժմէական երեկոյթ մը կազմակերպած էին, Ապրիլ 4ին, Ա. Մանուկեան մշակութային կեդրոնի սրահին մէջ: Հայաստանի ապահովութեան հարցերով ընդհանուր եւ արդար մտահոգութեան այս օրերուն հրաւիրած էին Երեւանի «Արարատ» ռազմավարական հետազօտութեան կեդրոնի տնօրէն Արմէն Այվազեանը որուն վերլուծական գրութիւններէն ոմանք վերջին շրջանին լոյս տեսան «Յառաջ»ի մէջ, ինչպէս իրեն հետ հարցազրոյց մը: Ան նոյն ատեն քաղաքական գիտութիւններու դասախօս է Երեւանի Ամերիկեան համալսարանին մէջ:

Երեկոյթին հրաւիրուած էր նաեւ աշխարհաքաղաքագէտ Ֆրանսուա Թիւալ որ այլ առիթներով ալ մասնակցութիւն բերած է հայկական նոյն բնոյթի ձեռնարկներու:

Օրուան զրուցավարն էր Զօպանեան հիմնարկի հիմնադիր-նախագահ Վարուժան Սրապեան, իսկ թարգմանութեան պաշտօնը յանձնուած էր տիկին Ս. Կիւրեղեանի:

Ողջոյնի խօսքէն, կազմակերպիչներու եւ օրուան հիւրին պարագայական նախաբանէն ետք, Ա. Այվազեանի առաջին նախադասութիւններէն պարզուեցաւ որ երեկոյթին երկլեզու բնոյթը անոր ընթացքը կասեցնող, ծանրացնող ազդակ էր, մանաւանդ որ թարգմանութիւնը բաւական հեռու էր նման առիթներու պահանջած որակէն: Ու դասախօսին ելոյթը կրճատուեցաւ թարգմանութեան պարտադրանքով, այնքան որ ըսուածին իմաստը գրեթէ վրիպեցաւ ունկնդիրէն: Ի վերջոյ Ա. Այվազեան ելքը գտաւ կարճ կապելուն մէջ, հարցումներու բաժինին ձգելով հարկաւոր բացատրութիւնները:

Ան անկախութեան շրջանի առաւել կարեւոր նուաճումը նկատեց որոշակի տարածքի մը մէջ Հայաստանի տեղաւորուիլը. այդ տարածքը կ'ընդգրկէր Հայաստանը, Լեռնային Ղարաբաղը եւ ազատագրուած շրջանները (շուրջ 42 հազար քառ. քմ.): Զանգեզուրի երկու կողմէն Ադրբէջանով շրջապատուած վիճակը խորհրդային կարգերու անկումով հին թշնամիներուն թիրախ ըրած էր Հայաստանը: Առաջին հարուածներուն ենթարկուած էր Ղարաբաղը որուն անկումը կ'առաջնորդէր Սիւնիքին ուղղուած սպառնալիքներու: Ասկէ այն եզրակացութիւնը թէ 1991–94ին մղուած պատերազմը միայն Արցախի համար չէր, այլեւ Հայաստանի երկարատեւ ապահովութեան: Իսկ անոր արդիւնք նոր սահմաններով Հայաստանը (Հայաստան + ԼՂՀ + հայկական հսկողութեան տակ միջանկեալ տարածքները) ռազմավարական փաստ էր այսօր, բայց տակաւին ոչ տնտեսական եւ իրաւական:

Հարցը կարելի չէ վերջնականապէս լուծուած նկատել, քանի որ Ադրբէջան նոր յարձակումի կը պատրաստուի:

Ասիկա ըսելէ ետք Ա. Այվազեան մէկ-մէկ անդրադարձաւ պատերազմի հեռանկարը անհաւանական նկատող մօտեցումներու եւ հերքեց զանոնք:

Առաջինը այն համոզումն էր թէ մեծ տէրութիւնները թոյլ չեն տար նոր պատերազմի: Բացատրեց թէ Անդրկովկասը այսօր մեծ տէրութիւններէ մէկուն վերահսկողութեան տակ չէ. եւ որեւէ պահու անոնցմէ մէկուն կրնայ ձեռնտու ըլլալ պատերազմի հրահրումը:

Երկրորդ փաստարկը կը հիմնուէր նաւթամուղերու, կազատարներու գոյութեան վրայ: Անոնք Ադրբէջանին համար մեծ արժէք կը ներկայացնեն, կ'անցնին Հայաստանի սահմանէն տասնեակ մը քիլոմեթր անդին: Այլ խօսքով՝ կրնան իյնալ հայկական կողմին հարուածներուն հասողութեան սահմանին մէջ: Սակայն, հարցը այն էր որ Ադրբէջան կը ծրագրէր կայծակնային պատերազմ մը, 1-2 ամիսէն իր հարցերը լուծելու մտադրութեամբ. անկէ ետք ի հարկին կրնար վերակառուցանել նաւթամուղերն ու կազատարները:

Պատերազմը քիչ հաւանական նկատել տուող ազդակ մըն էր հայկական բանակին հզօրութիւնը: Ասիկա ըսել կու տար որ Ադրբէջան չի համարձակիր նոր յարձակումի: Ա. Այվազեան համաձայն էր այդ ազդակին, բայց դիտել տուաւ հետեւեալը. չենք գիտեր թէ Ադրբէջան ի՛նչ հաշուարկներով կը շարժի: Իսկ համաշխարհային պատմութեան պատերազմներուն կէսը սխալ հաշուարկներով սկսած է:

Ռուսաստանի ու Հայաստանի ռազմական դաշինքն ալ պատերազմը կանխելու շատ լուրջ ազդակ չէր կրնար նկատուիլ, քանի որ թէ՛ Հայաստան, թէ՛ Ադրբէջան ՀԱՊ-ի անդամ էին եւ լման մասնակցութիւն բերել Արցախի ազատագրութեան, քաղաքական չափազանց բարձր գին կը պարտադրէր Մոսկուայի: Մանաւանդ որ հայեւռուս ռազմական դաշինքը առաւելաբար ուղղուած է Հայաստանը Թուրքիոյ դէմ պաշտպանելու: Արդէն աւելի կարեւորը այն էր որ Հայաստան իր ուժերով Ադրբէջանին չկարենայ յաղթելու պարագային, ռազմավարական իր արժէքը պիտի կորսնցնէր յաչս թէ՛ Ռուսաստանի, թէ՛ միւսներուն:

Վերջին պատահարները Ա. Այվազեանի վերլուծումը արդարացնող շատ մը տուեալներ ունեցան. Հայաստանի քաղաքական իրավիճակին առած սուր բնոյթին հետ անմիջապէս Ադրբէջանի ու Թուրքիոյ կողմէ պնդումներ առաջ քշուեցան թէ ՓՔՓ-ի քիւրտ զինեալներ Հիւսիսային Իրաքէն Ղարաբաղ փոխադրուած են: Իսկ Հայաստանի յետընտրական ցոյցերուն հետ Ադրբէջանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց թէ Թուրքիոյ հետ կը պատրաստուին հետապնդելու, հարուածելու Ղարաբաղ ապաստանած քիւրտ զինեալները: Իսկ քանի մը օր ետք փորձեցին աննախադէպ սաստկութեամբ հարուածել Լեռնային Ղարաբաղի գիծը, տուին ութ զոհ եւ բարեբախտաբար փորձը այդքանով սահմանափակուեցաւ, երբ հայկական կողմը փաստը տուաւ ո՛ր իր զինեալ ուժը տկարացած չէ:

Այս ենթախորքին վրայ Հայաստանի ծանօթ իրադարձութիւնները հետեւանք էին քաղաքական անպատասխանատուութեան բարձրագոյն աստիճանի մը: Երկիրը լուրջ մարտահրաւէրներու առջեւ էր այսօր եւ ելքը նոր իշխանութեան ներքին եւ արտաքին մարզերու անյետաձգելի փոփոխութիւններու ձեռնարկելու քաջութիւնը պիտի ըլլար:

Աւելի կարճ ելոյթ մը ունեցաւ Ֆր. Թիւալ. աւելի լաւ ընկալուեցան անոր խօսքերը, քանի որ թարգմանութեան տեւական միջամտութիւնը չկար: Հայ ժողովուրդին նկատմամբ սիրոյ նախաբանէ մը ետք համեմատեց Հայաստանի ու Ադրբէջանի բանակները: Չմոռցաւ նշելու Գիւմրիի մէջ 3200 ռուս զինուորներու ներկայութիւնը: Համաձայն էր Ա. Այվազեանի եւ ուրիշներու համոզումին թէ հայկական բանակը կարեւոր ուժ կը ներկայացնէ եւ Հայաստան անկախութեան տարիներուն յաջողեցաւ կանգուն մնալ շնորհիւ զինուորական իր աւանդութեան: Ըսաւ թէ խորհրդային բանակին մէջ հայազգի շատ զինուորականներ կային: Աւելցուց որ Ադրբէջան հակառակ իր տպաւորիչ զօրահանդէսներուն, լաւ գիտէ որ Հայաստան չի կատակեր:

Անկէ անդին իր մօտեցումները հակոտնեայ էին Ա. Այվազեանի ունեցածներուն: Թիւալ կը պնդէր թէ Ռուսաստան պիտի չընդունի Հայաստանի գոյութեան վտանգումը, Ղարաբաղի կարգավիճակին փոփոխութիւնը: Իսկ ԱՄՆ որոնք ըսաւ թէ մէկ միլիոն հայ քուէարկող ունին (մինչդեռ այդ թիւը կը տրուի գաղութին ամբողջութեան համար եւ շատեր քուէարկող չեն տակաւին), պիտի չթոյլատրեն ադրբէջանական յարձակում մը, հակառակ Թուրքիոյ հետ իրենց բարեկամութեան: Իրան բարեկամ էր թէ՛ Հայաստանի, թէ՛ Ադրբէջանի, իսկ Թուրքիա գիտէր թէ առանց որոշ պատճառի անկախ երկրի մը վրայ յարձակիլ, իր անձնասպանութեան հոմանիշ էր: Ինչ կը վերաբերի Վրաստանի, ճիշդ էր որ Ջաւախքի հայութիւնը դժուար շրջան կ'ապրի, բայց Վրաստան Հայաստանը նեղելէ տարբեր հարցեր ունի:

Հայաստանի միակ լուրջ սպառնալիքը ան նկատեց ժողովրդագրականը: Անկախութեամբ Սփիւռքի հայութիւնը չներգաղթեց, իսկ երկիրը շատ բնակիչ կորսնցուց: Եթէ կացութիւնը չշրջուի, 25–30 տարի ետք երկիրը լուրջ հարցի դէմ յանդիման կը մնայ. մանաւանդ նկատի առած՝ Ադրբէջանի բնակչութեան աւելնալու թափը:

Ա. Այվազեան համաձայն չէր որ Հայաստանին այսօր ռազմական վտանգ չի սպառնար. համաձայն չէր նաեւ Ռուսաստանի ենթադրուած նեցուկին. փաստերով ակնարկեց անցեալին. Առաջին աշխարհամարտէն ետք ոչ մէկ մեծ տէրութիւն նեցուկ եղաւ Հայաստանին, 1991-1994ին ալ տարբեր չէր պարագան: Իսկ Պուտափէշթի մէջ հայ սպային Ադրբէջանցիի մը կողմէ սպանութիւնը, ոճրագործին ազգային հերոսի կարգի դասուիլը, Նախիջեւանի խաչքարերուն քանդումը, Ադրբէջանի ղեկավար դէմքերուն յայտարարութիւնները թէ 25–30 տարի ետք Հայաստան չի մնար, յետոյ Լեռնային յարձակումը, եւլն. պարագաներ էին որոնք կը վկայէին ադրբէջանական տրամադրութիւններու:

Ֆր. Թիւալ կրկին խօսք առնելով նշեց թէ ինք բացառելով պատերազմի հեռանկարը, նկատի ունէր մեծածաւալ գործողութիւններ. թէ ոչ, չէր ժխտեր Բաքուի յարձակողական ախորժակները:

Հետեւեցաւ հարցումներու բաժին մը որ շուտով վերածուեցաւ փոքր դասախօսութիւններու շարքի մը, Իրան–Վենեցուէլա յարաբերութիւններէն Լ. Տէր Պետրոսեանի դէմ կամ թէր քարոզչութեամբ, Հայ ըլլալէ ամօթ կամ պատիւ զգալու վէճերով, Ղարաբաղի նոր պատերազմի մը ո՛վ կռուելու կ'երթայի նման խակապէս փոքր եւ յաճախ կրքոտ արտայայտութիւններով:

Այնքան որ երեկոյթին Ֆրանսացի միակ մասնակիցը հարկը տեսաւ միաբանելու հրաւէր ուղղելու լսարանին: Ապա կրկին շեշտեց Հայաստանի բնակչութեան թիւին ծանրակշիռ հարցը որուն դարման չգտնելու պարագային, իր կարծիքով երկիրը կենաց-մահու ճգնաժամ կրնար ապրիլ 50–70, թերեւս հարիւր տարիէն:

Կացութիւնը եւ երեկոյթին ըսուածները եզրափակելու բնոյթ ունէին Ֆրանսահայ խորհուրդի նախագահ Ա. Կէօզճեանի խօսքերը, որոնցմով փակուեցաւ երեկոյթը: Ան ըսաւ թէ անկախութեան առաջին հրամայականը երկրին վերակառուցումն էր որուն օգնեց Սփիւռքը: Հիմա հարկ է մտածել ժողովրդագրական կացութեան բարելաւումին մասին, նաեւ ընկերային պառակտումը դարմանելու: Մեծ պատասխանատուութիւն կը վիճակի իշխանութիւններուն որոնք պարտին ժողովուրդին ակնկալութիւնները նկատի առնել եւ ստեղծել նաեւ պայմաններ որպէսզի Սփիւռքի երիտասարդութիւնը սկսի մտածել Հայաստան հաստատուելու մասին:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԷՋ

ԱՐՄԷՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

Մարտի մէկեան ողբերգութիւնից յետոյ Հայաստանը գտնւում է քաղաքական, գաղափարական եւ բարոյական ճգնաժամի մէջ: Ու եթէ հարցի քաղաքական կողմը լուծելը հնարաւոր է, ապա գաղափարական ու բարոյական ճգնաժամից դուրս գալը բաւականին դժուար խնդիր է: Պարզ է, որ իշխանութեան համար նախկինների ու ներկաների միջեւ առկայ առճակատման հետեւանքով տուժեց ողջ հայ ժողովուրդը՝ Հայաստան պետութիւնը: Ու խնդիրն այստեղ միջազգային հեղինակութեան ու մեր, այսպէս կոչուած, միջազգային վարկանիշի հարցը չէ, տուեալ դէպքում դա երկրորդական է, քանի որ մենք կանգնած ենք աւելի մեծ խնդրի՝ պետականութեան կործանման խնդրի առջեւ: Ու չեմ կարծում, որ նման մօտեցումը չափազանցութիւն է, ամէն մի պետութիւն հզօր է պետականութեան ստեղծման ջատագով գաղափարական հասարակութեան առկայութեան դէպքում, մի հասարակութիւն, որի լիակատար բացակայութիւնը փաստ դարձաւ հէնց այս օրերին: Անկախ Հայաստանի գոյութեան 17 տարիների ընթացքում այդպէս էլ մեծամասնութիւն չկազմեցին նրանք, ում համար հայկական պետականութեան գոյութիւնը լինէր գաղափարական հենք, որից ելնելով էլ կառուցէին իրենց մօտեցումները երկրում առկայ զարգացումների նկատմամբ:

Մի բան պարզ է, որ քաղաքական նման զարգացումների պատճառը Հայաստանում առկայ հաւատի, գաղափարի պակասի ու քաղաքական իրական դաշտի բացակայութեան հետեւանք է: Տարիներ շարունակ մենք զբաղուել ենք ազգային պետութեան ստեղծման նմանակումով: Եթէ նախկին իշխանութիւնների համար ազգային գաղափարախօսութիւնը «կեղծ կատեգորիա» էր, ապա նրանց յաջորդների համար այդ հասկացողութիւնը տութիւն անդէմ ու անգաղափար, պետութիւն, որի քաղաքական կա- ընդհանրապէս գոյութիւն չունէր: Մենք փորձում էինք ստեղծել պե-

ռուցուածքը վերցուած է Արեւմուտքից, տարածուող արժէքները նոյնպէս արեւմտեան են, մենք նոյնիսկ մեր կուսակցութիւններն ենք յարմարեցնում արեւմտեան չափանիշներին։ Ու այդպէս էլ ոչ մէկի մտքով չանցաւ տարրական մի բան, Հայկական պետութիւնը գոնէ ինչ-որ բանով, ինչ-որ ձեւով պէտք է ունենայ Հայկական, ազգային նկարագիր-դիմագիծ։ Տարիներ շարունակ մենք ձեւաւորել ենք գոզմոփոլիթ ապազգային, անկերպարանք գանգուած, բնակչութիւն անուանմամբ, որի անտարբերութիւնը երկրում ընթացող գործընթացների նկատմամբ բաւականին ձեռնտու էր իշխանութիւններին, թէ՛ նախկինում եւ թէ՛ ներկայում։ Գաղափարի ու բարոյականութեան պակասը քաղաքականութեան մէջ յանգեցրեց այն բանին, որ որեւէ գաղափար առաջադրողը, եթէ նոյնիսկ դա կործանման, ոչնչացման, կազմալուծման գաղափար էր, կարողացաւ իր շուրջը համախմբել համախոհների հսկայական բանակ, որոնք պատրաստ էին ամէն քայլի իրենց ձայնը լսելի դարձնելու համար։ Այս մթնոլորտից առաջին հերթին օգտուեցին նրանք, ովքեր ժամանակին հիմնել էին ապազգային-անբարոյական այդ հենքը ու լաւ էին հասկանում, թէ ինչ են ցանել և որոշել էին, որ արդէն հնձելու ժամանակն է։ 1998ի իշխանափոխութեան արդիւնքում փաստօրէն ազգային ամէն մի հուրց կեղծ կատեգորիա յայտարարողներին փոխարինելու եկաւ նոյն այդ ազգայինի հանդէպ անտարբեր մի զանգուած, որը նախկիններից ժառանգեց կաշառակերութեան համակարգ եւ կատարելագործեց այն։ Իշխանութեան եկած գոզմոփոլիթ անողնաշար մտաւորականութեանը փոխարինելու եկաւ մականուանորների մի բանակ, որն ընդունեց նախկինների հիմնած խաղի կանոնները ու փորձեց այդպէս էլ կառավարել։

Սառոյց Հասարակութեան մէջ ազգը պառակտողներն ու միմեանց դէմ հանողները, ի սկզբանէ կ՚արժանանային ժողովրդի, մտաւորականութեան պարսաւանքին։ Սակայն ժամանակը ցոյց տուեց, որ ազգիս քաղաքական ընտրանիի միտքն այն աստիճան սնանկ է, որ մենք ոչինչ չունեցանք առաջադրելու կազմաքանդելու կողմնակիցներին, իսկ իշխանութիւնները, զրկուած մտաւոր կարողութիւնից, այդպէս էլ չկարողացան ոչինչ առաջադրել ոչնչացման քաղաքականութեան դէմ։

Մարտիմէկեան ողբերգութեան կրկնութիւնը յետագայում բացառելու համար հարկաւոր են ազգային մտածելակերպի, նոր որակի քաղաքական ու գաղափարական գործիչներ, որոնք քաղաքականութեանը չեն վերաբերում որպէս կեղտոտ խաղի, որտեղ նպատակին հասնելու համար ընդունելի են բոլոր մեթոդները, այլ պատրաստ են իրականացնել հասարակութեան առողջացման լուրջ գործընթաց։ Կարող ենք միայն աւելացնել, որ միայն Մարտի 1ին ժողովրդին իրար դէմ հանած մարդիկ չեն կարող լինել երկրի ու հասարակութեան առողջացման գաղափարական ծրնուցիչները, իրենց իսկ բարոյական կերպարի խոցելիութեան եւ ժողովրդի մեծ մասի կողմից այդ մարդկանց նկատմամբ առկայ ատելութեան պատճառով։ Հայ ժողովրդին նոր գաղափարներ ու առաջնորդներ են պէտք. մարդիկ, որոնց համար Հայկական պետութեան կառուցման համար որպէս հենք կարող է լինել միայն ազգային՝ Հայկական արժէքային համակարգի ստեղծումը։

Ա. Մ.

«Ազգ»

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՄՈՆՐԷԱԼԻ ԹՄՄ-ի կեդրոնին մէջ, Մարտ 22ին, տեղի ունեցած է աւանդական դարձած ճրագալոյցի խրախճանքը ՌԱԿ հայ իրաւանց խորհուրդի։ Բացման խօսքը արտասանած է ատենապետը տոքթ. Հրայր Տէր-Գէորգեան եւ յայտնած որ ձեռնարկին հասոյթը կը տրամադրուի գլխաւորաբար «Ապագայ» շաբաթաթերթի կարիքներուն։ Ան յայտարարած է նաեւ որ Աղեքսանդրիայէն Մոնրէալ իր բազմակողմանի վարչական եւ երիտասարդական կազմակերպչական գործունէութիւններով օրինակելի անձնաւորութիւն մըն է Պարգեւ Նազարէթեան որ կը դառնայ «տարուան մարդը» եւ այդ առթիւ ապակեայ պատուագիր մը յանձնուած է իրեն։ Պրն. Նազարէթեանի շնորհակալութեան խօսքէն ետք, տոքթ. Արզումանեան ներկայացուցած է օրուան հիւրը՝ Քեմալ Եալչըն, որ Մոնրէալ կը գտնուէր իր վերջին գիրքին անգլերէն թարգմանութեան առթիւ (« You rejoice my heart »)։ Գեղարուեստական բաժինէ մը ետք, կէս գիշերուան մօտ կատարուած է վիճակահանութիւն մը եւ խանդավառ մթնոլորտի մը մէջ վերջ գտած է հաւաքոյթը։

⁂

ԹՈՐՈՆԹՈՅԻ Հայ կեդրոնին մէջ, կազմակերպութեամբ տեղւոյն ՀՅԴ ԳԵՄ-ի պատանեկան միութեան, Փետրուար 24ին, տեղի ունեցած է Փետրուարեան ապստամբութեան 87րդ եւ Արցախի ազատագրական շարժման 20րդ տօնակատարութիւնը։ Օրուան հանդիսավարը եղած է Հրայր Իզմիրեան, որ բարի գալուստ մաղթած է ներկաներուն։ Գեղարուեստական բաժինէ մը ետք, բեմ հրաւիրուած է օրուան բանախօսը՝ Յարութ Գալայճեան։ Սփիւռ վրդ. Քէչէճեան պահպանիչով փակած է հանդիսութիւնը։

⁂

ՄՈՆՐԷԱԼԻ Պոլսահայ միութեան սրահին մէջ, Մարտ 21ին, միացեալ կազմակերպութեամբ Պոլսահայ միութեան, ՀԲԸՄ-ի եւ ԹՄՄ-ի վարչութիւններուն հանդիսութիւն մը տեղի ունեցած է նուիրուած Քեմալ Եալչընի «Սիրտս քեզմով կը խայտայ» հատորին անգլերէն հրատարակութեան։ Գնահատանքի խօսքերով հանդէս եկած է Պոլսահայ միութեան ատենապետը՝ Մուրատ Արմութլու, ԹՄՄ-ի կողմէ խօսք առած է տոքթ. Յարութիւն Արզումանեան, իսկ փակման եւ շնորհակալութեան խօսքերով արտայայտուած է ՀԲԸՄ-ի ատենապետ՝ Արմէն Պչաքճեան։ Հատորէն հատուածներ կարդացած է Արմենական երիտասարդներէն Քրիսթոֆըր Ջիոֆի։ Հեղինակին վաստակին եւ գրքին մասին տեղեկագիր մը պատրաստած էր Գեղարդ պարբերականի խմբագիր Արա Կարմիրեան, որու ընթերցումը կատարած է Հերման Օտապաշեան, Ա. Կարմիրեանի անհանգստութեան պատճառով։ Ք. Եալչըն ալ յայտնած է թէ գիրքը ցարդ թարգմանուած է ութ լեզուներու։ Իր խօսքերուն աւարտին, հատորին հեղինակը ոգեկոչած է յիշատակը գիրքին գլխաւոր հերոսներէն 93ամեայ Վահրամ Քարաբենդի, Եղեռնէն վերապրած Մարգուանի Հայուն եւ բեմ հրաւիրած է անոր թոռը գաղութի ծանօթ դէմքերէն՝ Անդրանիկ Օհանեանը, որ յուզում յայտնած է թէ լսելով եւ կարդալով իր մեծ հօր խօսքերը, հաստատած է որ անոնք իր հարազատ արտայայտութիւններն էին եւ ոչ թէ գրական երեւակայական կամ չափազանցուած նկարագրութիւններ։ Հաւաքոյթը վերջ գտած է հարց-պատասխանի բաժինով մը եւ հիւրասիրութեամբ։

ՓԱՐԻԶԵԱՆ ՀԻՆԳՇԱԲԹԻՆԵՐԸ

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

Անոնք երեք երիտասարդ ըմբոստներ էին՝ Գէորգ Քանանեան, Մնացական Թիմուրեան եւ Ռափայէլ Պատկանեան որ նպատակ ունէին ռուսահայութիւնը ազգային թմբիրէն արթնցնել։ Այդ նպատակով, միասին խումբ մը կազմեցին որուն տուին ընդհանուր «Գամառ Քաթիպա» անունը։ Որոշ ժամանակ յետոյ, առաջին երկուքին ճամբաները առանձնացան եւ Ռափայէլ Պատկանեան մնալով մինակը, խումբին անունը որդեգրեց իբր իր գրական եւ ազգային գործունէութեան ծածկանուն։ Այսպէս, Փարիզի Ս. Մեսրոպ մշակութային կեդրոնի «Հինգշաբթիներու» Մարտ 27ի երեկոն նուիրուած էր Ժթ. դարու այդ անուանի դէմքին՝ Գամառ-Քաթիպային։

Ձեռնարկը սկսաւ «Մայր Արաքսի ափերով» եւ Բարսեղ Կանաչեանի «Քուն եղիր...» երգերու ունկնդրութեամբ։ Ապա, Արտաշէս Ոսկանեան պատմեց նոր Նախիջեւանի ռուսահայ գաղութի մասին ուր Ժթ. դարուն սկիզբը, կրթական մեծ աշխատանք կ՚իրականացնէր Գաբրիէլ քահանայ Պատկանեանը՝ ապագայ բանաստեղծին հայրը։ Այնուհետեւ, ան ներկայացուց բանաստեղծին գործերէն փունջ մը։ Ներկաները ոչ միայն հաճելի յիշողութիւններ վերապրեցան, այլեւ ծանօթացան մէկուկէս դար առաջ կատարուած հետաքրքրական փաստերու եւ նախազգուշացումներու։ Անոնք վայելեցին նաեւ մեծ հայրենասէրին բանաստեղծութիւնները որոնք մինչեւ այսօր ալ կ՚երգուին ու չեն կորսնցուցած իրենց այժմէականութիւնը։ Գամառ Քաթիպայի ժառանգութեան հետ հաղորդակցուիլ կը շարունակէ միշտ լաւ պահել հայ մարդու ազգային արժանապատուութիւնն ու անոր դէպի ազատութիւն ձգտումը։

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ԿԱԼԿԱԹԱ

ՃԱՏՐԱԿԻ ՎԱՐՊԵՏ Ս. ԼՊՈՒՏԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՋ

Ապրիլ 3ին Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը հիւրընկալած է Հայաստանի ճատրակի ակադեմիայի հիմնադիր նախագահ, Ողիմպիական կոմիտէի եւ Ակադեմիայի հոգաբարձուներու խորհուրդի անդամ, վարպետ Սմբատ Լպուտեանը։ Ան Կալկաթա կը գտնուէր, քաղաքին ճատրակի բաց առաջնութեան մասնակցելու։

Ճեմարանի սաներուն եւ ուսուցչական կազմին հետ հանդիպում ունենալով Ս. Լպուտեան մեծ խանդավառութիւն ստեղծած է։ Ճեմարանի տնօրէն եւ Հնդկահայոց հովուապետ Հովիւ Օշական վրդ. Գիւլգիւլեան ողջունած է հիւրը, ըսելով թէ աշակերտութիւնը անհամբեր կը սպասէր իրեն։ Ս. Լպուտեան անդրադարձած է մարզիկի իր հարուստ կենսագրութեան, պատասխանած բազմաթիւ հարցումներու։ Ի պատիւ իրենց հիւրին, ճեմարանականները հանդէս եկած են գեղարուեստական յայտագրով մը ու մտերիմ զրոյց ունեցած անոր հետ։

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՎԵՆԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Մ Ա Ս Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

– Կարիք չկայ։ Շուտով արեւը մայր կը մտնի, եւ նա ինքը կ՚իջնի։ Հիմա նա անուրջների մէջ է... Եկէք նստենք այստեղ, եւ ես ձեզ կը պատմեմ նրա մասին։ Վեց տարի առաջ էր, ամրան մի առաւօտ ինձ մօտ՝ արուեստանոց ներկայացաւ մի նոր աշակերտ։ Նոր էի վերադառնում զբօսանքից, տեսնեմ տան առաջ ինձ սպասում է տեղացի գեղանկարիչ Ֆէսլէրը, կողքին էլ գիմնազիստի շորերով մի փոքր պատանի է կանգնած՝ մըտախոհ հայեացքը դէպի ծով սեւեռած։ Պատանին այնքան էր տարուած իր երազներով, որ անմիջապէս չնկատեց ինձ։ Նրան այդ վիճակից դուրս բերեց Ֆէսլէրը, որն շտապում էր ինձ ընդառաջ։ Ես հիւրերիս առաջնորդեցի արուեստանոց, իսկ ինքս գնացի զգեստափոխուելու։ Ֆէսլէրը յետագայում պատմում էր, որ Բոգաեւսկին փորձում էրագել եւ սրտի տրոփիւնով է սպասել այս հանդիպմանը։ Ես զարմացել էի իմ արուեստանոցում համեստ մի կահաւորում գտնելով, որովհետեւ ամէնուրեք լսել էր, թէ իմ ապարանքը չտեսնուած շքեղ է։ Վերադառնալով արուեստանոց, ես զգացի իմ երիտասարդ հիւրի ապրումները։ Լռելեայն ընդունելով Ֆէսլէրից նրա նկարների ալպոմը, սկսեցի զննել գըրանք։ Ֆէսլէրին սկզբում թուաց, թէ ես հիասթափութեամբ եմ դիտում իր աշակերտի աշխատանքները։ Իսկ ինքը Բոգաեւսկին, դարձեալ կտրուելով շրջապատից, մի կողմ քաշուած տարուել էր անուրջներով։ Ես վրդովմունքով կանգ առայ նրա վերջին նկարի վրայ։ Դա ժայռերի մէջ պատկերուած տխուր մի վանք էր, իսկ բարձրում, երկնքի էմալէ ֆոնի վրայ, կախուած էին մռայլ, չարագուշակ ամպեր։ Նկարի աջ անկիւնում այսպիսի մակագրութիւն կար. «Նատալիա Եուլեւնա Ֆէսլէրին իր մենաստանային երազներն է նուիրում Բոգաեւսկին» Եւ ապա հետեւում էր քառեակ.

Ես մենակ էի... մենակ՝ վշտիս հետ,
Անհասկանալի, մեծ ուժերի մէջ,
Որտեղ երկինքը՝ թափանցիկ էմալ,
Իսկ աղջամուղջը շիրիմ է անտեսն...

– Այս ի՞նչ երազների մասին է խօսքը, – շուռ եկայ ես Ֆէսլէրին եւ Բոգաեւսկուն։ – Այս ի՞նչ բանաստեղծութիւններ են։

– Երբ Կոստեան հինգ տարեկան է լինում, Թուրքերի դէմ պատերազմի ժամանակ, սկսեց բացատրել Ֆէսլէրը, – մօր հետ Թէոդոսիայից տեղափոխւում է Տոպլինների կանանց մենաստանը։ Այնտեղ, ժայռերի եւ անտառների մէջ, ապրում է երեք տարի։ Դրանից յետոյ յիշում է այդ օրերի մասին։

– Իսկ ի՞նչ գործ ունի այստեղ ձեր տիկինը՝ Նատալիա Եուլեւնան, եւ այդ ինչ տտանաւորներ են, – հարցրեցի ես, աւելի ու աւելի զարմանալով։

– Պետերբուրգից Նատալիա Եուլեւնային ուղարկել էին Վէրլէնի հատորեակը, եւ նա այդ գիրքը նուիրեց Կոստիային, ընդհանրութիւն տեսնելով նրա մենաստանային յիշողութիւնների եւ Վէրլէնի երազանքների միջեւ։ Իսկ Կոստեան ի նըշան շնորհակալութեան Նատալիա Եուլեւնային նուիրեց այս նկարը, – իմ առաջ արդարանում էր Ֆէսլէրը։

(Շար. 202)

(Շար. Ա. էջէն)

յաջորդ օրն ալ յայտարարեց որ բան չի փոխեր, բայց պատրաստ է խօսակցութիւններու ձեռնարկելու:

ՔԻՒՐՏ ՆԱԽԿԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒՀԻՆ՝ Լէյլա Զանա երկու տարուան բանտարկութեան դատապարտուած է Տիյարպէքիրի դատարանի մը կողմէ, այն ամբաստանութեամբ որ Ա. Էօճալանը, Ճ. Թալապանին եւ Մ. Պարզանին քիւրտ ժողովուրդին ղեկավարները նկատած է: Երեսփոխանուհին աւելցուցած է թէ մարդկային ու խղճի պատասխանատուութիւն է տէր կանգնիլ իր առաջնորդին:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ անդամ ընտրուեցաւ Ժան-Լու Տապատի, ժողովրդական դէմք մը, հեղինակ գլխաւորաբար երգերու բառերու (Իվ Մոնթանի, Ժիւլիէթ Կրեքոյի, Միշէլ Փոլնարէֆի, Ժիւլիէն Գլերի համար), գրած է նաեւ երկու վէպեր եւ ակնարկներ: Ընտրուած է առաջին շրջանին իսկ 14 ձայնով 2ի դէմ (25 քուէարկող): Եղած են նաեւ 7 քուէաթուղթ, որոնց վրայ խաչ մը գծուած էր, ինչ որ բոլոր թեկնածուներու մերժում կը ներկայացնէ:

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGLISE ARMENIENNE
DE CHAVILLE

Vous invite
à
une

SOIREE - DIAPORAMA

« UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE »

par
Hrant NORSEN

Samedi 19 avril à 20h45
à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ առօթակից ունենալով Նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՄՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հոգեւոր հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01-43-59-67-03 թիւէն:

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.-ի շրջանները ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10-11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին:

Նոյն իրիկուան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–

06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak—Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP

Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La M.A.J.C. et l'Association les 3A présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
A V E D I S A H A R O N I A N

Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.

— Entrée libre —

Maison de la Culture Arménienne d'Alfortville

AUDITIONS ET CONCERT ANNUELS DES ELEVES DE MUSIQUE DE LA M.C.A.
« Onnig Surmélian »
108 enfants et adolescents !

SAMEDI 12 AVRIL

— à 17h : **Audition des élèves de Guitare** sous la direction de leur professeur B. Kouyoumdjian.
— à 20h30 : **Concert des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

DIMANCHE 13 AVRIL

— à 14h30 : **Audition des élèves de Violon** sous la direction de leur professeur P. E. Nimylowycz.
— à 16h : **Audition des élèves de Piano** sous la direction de leurs professeurs : C. Delaunay, Z. Galstanian, Z. Sarkissian.

à l'Espace Culturel «LE 148»
148 rue P. V. Couturier.
94140 Alfortville

—— Entrée libre ——

Renseignements :
9 rue de Madrid, 94140 Alfortville
☎ 01 43 76 55 89
e-mail : contact@mca-alfortville.com

CINE-CLUB

•Achkhar• / UCFAF

Ciné-Club
«Rouben Mamoulian»

Sous le parrainage
de Robert GUEDIGUIAN, réalisateur

Jeudi 17 avril à 20 heures

Hommage aux victimes du Génocide Arménien de 1915
ARCHIVES DE A. PEHLIVANIAN
&
LES QUARANTE JOURS DE MOUSSA DAGH

Suivi d'une conférence débat avec Claude Mutafian, historien

Film américain, 1982, 1h50, VF

D'après le roman de Franz Werfel
Un film de Sarkis Mouradian

— Entrée libre —

Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

P.A.F. : 5 euros — Réduit : 3 euros

UCFAF
6 Cité du Wauxhall — 75010 Paris
Métro: République

ARMENIE 2008

Demandez notre brochure ARMENIE 2008.

Vous y trouverez différentes formules de séjours à la carte, de circuits accompagnés et extension au Karabagh.

● **SABERATOURS**
Le spécialiste des voyages en Arménie
11 rue des Pyramides
75001 PARIS
☎ 01.42.61.51.13
e-mail : armenie@saberatours.fr

● **SEVAN VOYAGES**
48 Cour de la Liberté
69003 LYON
☎ 04.78.60.13.66
e-mail : sevan@selectour.com

● **WASTEELS VOYAGES**
67 La Canebière
13001 MARSEILLE
☎ 04.95.09.30.60
e-mail : marseille@wasteels.fr

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

Հ Ր Ա Ւ Է Ր
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ա Ն
Ժ Ո Ղ Ո Վ Ի
2006 / 2007 ԹԹ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ Կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին

Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի Ա. Զրքաշեան սրահին մէջ

339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը:

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը:

ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈՊԷՐ ԱԶԻԼԱԶԵԱՆ

Հոգեւոր հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱԻԵՏԻՔԵԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Կարէն Սիմոնեանի
«ԼՈՅՍ
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
Գրական – Գեղարուեստական
Երեկոյթներու շարք
ՑԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹ

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հինգշաբթի, Ապրիլ 17, ժամը 20ին

Տարժապատկեր,
Դրուագներ
երգայանկէն,
Յիշողութիւններ

10 bis, rue Thouin, Paris Vème
Métro Cardinal Lemoine, Monge

Մուտքը ազատ է

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 15
MARDI
15 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ _ ԹԻՒ 21.938

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21.938

ՄԱՐՄԱՐԵԱՅ ՅՈՒՇԱՔԱՐԻ ՄԸ ԲԱՑՈՒՄԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. ՄԵՍՐՈՊ ԿՐԹԱՐԱՆԻՆ 30ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Կիրակի, Ապրիլ 13ին, Ալֆորվիլի Ս. Մեսրոպ Կրթարանի 30ամեակին առթիւ յուշաքարի մը բացումը կատարուեցաւ եկեղեցիին մուտքին: Նախապէս Սուրբ Պօղոս–Պետրոս եկեղեցւոյ մէջ պատարագեց Ֆրանսահայ Թեմի առաջնորդ՝ Նորվան Արք. Զաքարեան, ապա կարճ ելոյթով մը օրուան տօնին անդրադարձաւ հոգեւոր հովիւը՝ Ներսէհ Ծ. Վրդ. ապա քարոզեց Նորվան Արք.:

Արարողութեան աւարտին, եկեղեցիի մուտքին, բացումը կատարուեցաւ մարմարեայ յուշաքարին, ուր փորագրըւած է այբուբենը. քարին օրհնութենէն ետք յաջորդաբար խօսք առին Նշան Գայան, Սիմոն Սիմոնեան–Ալըճը, Գիւտ Արք. եւ Ալֆորվիլի քաղաքապետը՝ Ռընէ Ռուքէ: Արարողութիւնը վերջ գտաւ հիւրասիրութեամբ մը:

ԻՍՐԱՅԷԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ

Իսրայէլի մամուլի ծանօթ անուն «Հաարեց» օրաթերթը Ապրիլ 11ին տեղեկացուցած է թէ հակառակ Թրքական պատուիրակութեան պնդումներուն, երկրին կառավարութեան ներկայացուցիչները Հայկական Ցեղասպանութեան բանաձեւին դէմ քայլերու պիտի չդիմեն: Բանաձեւը խորհրդարանականներու առաջարկն էր, իսկ անոնց նախաձեռնութիւնը կառավարութեան հետ կապ չունի:

Թերթը գրած է նաեւ թէ նոյն բանաձեւին քննարկումը կրնայ տեղի ունենալ Ապրիլ 24ին:

Թրքական խորհրդարանական պատուիրակութեան անդամները Իսրայէլ այցելելէ ետք յայտարարած էին թէ երաշխիք ստացած են վարչապետ Օլմերթի կառավարութենէն թէ բանաձեւին դէմ աշխատանք պիտի տարուի ու ան չյանգի վաւերացումի փուլին:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովը որ գարնանային նստաշրջանը կը բանար Ապրիլ 14ին, մինչեւ Ապրիլ 18ի օրակարգին վրայ ունի Հայաստանի առընչուած երկու հարց: Առաջինը Փետրուար 19ի նախագահական ընտրութեան վերաբերող զեկուցում մըն է, երկրորդը՝ երկրին մէջ ժողովրդավարական հիմնարկներու գործունէութեան հարցը: Այս երկրորդին վեհաժողովը կ'անդրադառնայ Ապրիլ 17ին:

Նստաշրջանի աշխատանքին կը մասնակցի Ազգային Ժողովի պատուիրակութիւնը պետաիրաւական հարցերու յանձնաժողովի նախագահ Դաւիթ Յարութիւնեանի գլխաւորութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՄԱՐՏ 1-Ի ԻՆՆԵՐՈՐԴ ԶՈՀԸ

Ապրիլ 12ին Երեւանի Միքայէլեան հիւանդանոցին մէջ մահացած է ոստիկանութեան զօրքերու շարքային Տիգրան Աբգարեան. ան 19 տարեկան էր: Վիրաւորուած էր հրազէնի փամփուշտներու թիրախ ըլլալով ու Մարտ 2էն ի վեր բժշկական լուրջ ջանք կը տարուէր կեանքը փրկելու համար: Վիրաբուժական գործողութեան ենթարկուած էր եւ այդ ընթացքին պարզուած էր որ վնասուած է ողնուղեղը եւս:

Տ. Աբգարեանի մահով Մարտ 1–2ի քաղաքական խռովութիւններու զոհերուն թիւը բարձրացած է իննի:

* * *

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՅՑԵԼԱԾ Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ

Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսը Ապրիլ 12ին այցելած է նորընտիր Նախագահ Ս. Սարգսեանին: Նկատելով որ ան պաշտօնը ստանձնած է պետութեան համար շատ վճռորոշ պահու մը, Գարեգին Բ. ըսած է թէ Ս. Սարգսեանի ծրագրերը, ճշդած ուղիներն ու պահանջները վստահութիւն կը ներշնչեն թէ յառաջիկայ տարիները երկրին համար կ'ըլլան հետեւողական յառաջընթացի շրջան:

Նախագահը հաւաստած է Եկեղեցի – Պետութիւն յարաբերութիւնները ամուր հիմերու վրայ պահելու վճռականութիւնը:

* * *

Վ. ՕՍԿԱՆԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏՆԵՐԸ

Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան որ առաջին յայտնողը եղաւ որ մաս չի կազմեր Տ. Սարգսեանի կառավարութեան, Ապրիլ 10ին հրաժեշտ տուած է իր գործընկերներուն:

Շնորհակալութիւն յայտնելէ ետք անոնց, ըսած է թէ Հայաստանի անկախութենէն յետոյ հոն փոխադրուիլ իրեն համար ակնյայտ տարբերակ եղած է ու չի պատրաստուիր մեկնիլ: Ցիշեցուցած է որ ինք այդ պաշտօնը վարած է թէ՛ Ռ. Քոչարեանի, թէ՛ Լ. Տէր Պետրոսեանի օրով ու եզրակացուցած «ծառայել եմ ոչ թէ մարդուն, այլ ժողովրդին ու իմ երկրին»:

Վ. Օսկանեան հպարտութեամբ նշած է թէ իր գլխաւորած նախարարութիւնը այսօր ունի ամենամաքուր, ամենամասնագիտական, ամենականոնակարգըւած եւ անկաշառ հաստատութեան համբաւ: Հպարտութիւն արտայայտած է նաեւ այն իրողութեան որ նոյն նախարարութեան մէջ մարդիկ արժանապատիւ վերաբերում կը գտնեն, յարգանք ու հանդուրժողութիւն:

Անդրադառնալէ ետք Հայաստանի վերջին տասնամեակի ձեռքբերումներուն, անոնց բերած նոր փորձութիւններուն ու խնդիրներուն, ընդգծած է. «մեր ներքին զօրութիւնը, անճակտելիութիւնը, կայունութիւնը, բարոյականութիւնն ու հաստատակամութիւնը մեր ամենալաւ, իրականում միակ յաղթաթուղթն են միջազգային ասպարէզում»:

Վ. Օսկանեան խօսելով իր յետագայ գործունէութեան մասին, ըսած է թէ անոր մարզը կ'ըլլայ ներքաղաքականը, հանրութեան բաժանումները ջնջելու, տարբերութիւնները մեղմացնելու, ուղիներ փնտռելու նպատակով:

Վ. Օսկանեան հրաժեշտի հանդիպում մը ունեցած է նաեւ օտար երկիրներու Երեւանի դեսպաններուն հետ: Շնորհակալութիւն յայտնած է անոնց գործակցութեան եւ երախտագիտութեամբ անդրադարձած անոնց երկիրներուն Հայաստանի ցոյց տուած աջակցութեան: Դեսպաններն ալ իրենց կարգին յաջողութիւն մաղթած են Վ. Օսկանեանի յետագայ գործունէութեան:

Ինչ կը վերաբերի նոյն պաշտօնին վրայ իրեն յաջորդին հաւանականութեան, յամառօրէն կը շրջի Ֆրանսայի դեսպան Է. Նալպանտեանի անունը:

* * *

ՀԱՑԱԴՈՒԼՆԵՐԸ ԴԱԴՐԱԾ ԵՆ

Մարտ 1–2ի պատահարներուն առընչութեամբ հսկողութեան տակ առնուած, կամ ձերբակալուածներէն 22 հոգի հացադուլի դիմած էր: Անսալով Լ. Տէր Պետրոսեանի կոչին, Ապրիլ 11ին անոնք վերջ տուած են իրենց շարժումին: Այս խումբին մէջ կը գտնուին երեսփոխան Յ. Յակոբեան, Հ.Հ.Շ.ի վարչութեան նախագահ Ա. Զուրաբեան, Ազգային Ժողովի նախկին փոխնախագահ Կ. Ռուբինեան, Ազգային ապահովութեան նախկին փոխնախարար Գ. Եղիազարեան:

* * *

ՆՈՐ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ապրիլ 10ին ձերբակալուած է ազգային գործիչ Շանթ Յարութիւնեան: Ան նախկին նախագահն էր Ցեղակրօն կուսակցութեան: Ըստ հայաստանեան լրատուներու, ան Մարտ 1ին Երեւանի Ֆրանսայի դեսպանատան մօտ հաւաքուած բազմութեան առջեւ ելոյթ ունեցած է. իսկ իր մերձաւորները պնդած են որ վերջին տարիներուն գործօն քաղաքականութեամբ չէր զբաղեր:

* * *

ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԳԱՐԵԳԻՆ Բ.-Ի

Խումբ մը մտաւորականներ յայտարարութեամբ մը դատապարտած են Հայաստանեայց առաքելական եկեղեցիին եւ անոր գահակալին դէմ մամուլին մէջ տեղ գտած նախատական տողերը, իրենց զօրակցութիւնը յայտնած են Գարեգին Բ.ի: Այդ տողերը յատկապէս Մարտ 1ի պատահարներուն կ'առընչուէին, պնդելով որ Մայր Աթոռը կարելին չէ ըրած այդ օրուան ողբերգութիւնը կանխելու համար:

Յայտարարութեան հեղինակ 24 մտաւորականները, – ակադեմական, ստեղծագործական միութիւններու ղեկավարներ, համալսարաններու տեսուչներ–, վստահութիւն յայտնած են որ Գարեգին Բ. ընկրկում ցոյց չի տար սխալ կեցուածքներու դէմ եւ ազգային բարձրագոյն շահերուն իր անսակարկ նուիրումով կը շարունակէ հովուել ժողովուրդը:

* * *

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԿԱՊՈՒԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ

Մարտ 26–28 Հոլանտայի Ազգային գրադարանին տեղի ունեցած է Եւրոպայի ազգային գրադարաններու տնօրէններուն խորհրդակցութիւնը. մասնակցած է Հայաստանի ազգային գրադարանի տնօրէն Դ. Սարգսեան ալ: Հոն

ԶԱՒԱԽՔ

ՀՕՄ-Ի ՆՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Ախալքալաքի մէջ Ապրիլ 7ին բացումը կատարուած է ՀՕՄ–ի նոր գրասենեակին: Ներկայ եղած են միութեան կեդր. վարչութեան ատենապետուհի Ցասմիկ Տէրտէրեան, կեդր. վարչութեան գրասենեակի տնօրէն Ժիրայր Պէօճէքեան, Ախալքալաքի ոստիկանապետը, Վիրահայոց Թեմի առաջնորդական փոխանորդը, տեղական խորհրդարաններու ներկայացուցիչներ, հիւրեր:

Գրասենեակին օծումէն ետք բացման խօսք արտասանած է Վրաստանի ՀՕՄ–ին ատենապետուհին Կարինէ Թաղեւոսեան, իսկ Ցասմիկ Տէրտէրեան անդրադարձած է ՀՕՄ–ի անցեալին, կատարած դերին:

ՀՕՄ–ը Վրաստանի մէջ պաշտօնապէս արձանագրուած է 2002ին,

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՐԱՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ նեղ կացութեան մատնուած են Ֆրանսայի պատճառով որ տրամադրութիւն ցոյց տուած է 500 քրիստոնեաներ ընդունելու: Քաղթէացիներու Բաբելոնի պատրիարքը՝ գերպ. Էմմանուէլ Գ. Տէլլի յայտարարած է.– «Շնորհակալ եմ Պերնար Քուշնէրի, բայց չեմ կարծեր որ քրիստոնեաներու վիզաներ շնորհելը լուծում մը ըլլայ: Հարկ է աշխատիլ Իրաքի խաղաղութեան համար փոխանակ վայրեր շնորհելու քրիստոնեաներուն որպէսզի երթան Եւրոպա մուրալու»: Քուշնէր է որ այդ հրաւէրը կատարած էր անցեալ ամիս:

ՇԻՐԱԶԻ (Իրան) մզկիթի մը մէջ պայթում մը պատահած է Ապրիլ 12ի իրիկունը, որու հետեւանքով 11 մեռեալ կար եւ 191 վիրաւորներ: Առաջին հարցումը այն էր որ արկած է թէ ոճրափորձ: Ներքին նախարարութեան մէկ պատասխանատուն յայտարարած էր յաջորդ օրը թէ արկած է, որովհետեւ անհոգութեան պատճառաւ զինամթերք մընացած էր տեղւոյն վրայ:

ՓԱՐԻԶԻ փիթիէ – Սալփէթրիէր հիւանդանոցին մէջ, Ապրիլ 11ին, Ժագ Շիրաք փոքր գործողութեան մը ենթարկըւած է: Նախկին նախագահին դրած են սրտի խթանիչ մը եւ երկու օր ետք, Շիրաք կրցած է տուն վերադառնալ: Նախկին նախագահը 75 տարեկան է:

ՍՈՎԸ կը տարածուի աշխարհի մէջ, գլխաւորաբար Ափրիկէ եւ ՄԱԿ–ի սնուն-

(Շար.ը Դ. էջ)

որոշուած է Եւրոպական գրադարանին միացնել Հայաստանի, Մակեդոնիոյ, Ուկրանիայի, Ալպանիոյ, Վրաստանի, Թունիայի, Ատրպէյճանի ազգային գրադարանները:

Այս որոշումը կարելի կը դարձնէ օգտուիլ Եւրոպայի Խորհուրդի 47 ազգային գրադարաններու թուային հաւաքածոներէն եւ համացանցային ցուցակներէն:

Հայաստանի Ազգային գրադարանին մէջ արդէն աշխատանքի խումբ մը կազմուած է. ան պիտի պատրաստէ գրադարանին ելեկտրոնային էջը:

ՎՐԱՍՏԱՆԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՋԱՒԱԽՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Վրաստանի եւ Ուկրանիոյ ՕԹԱՆ-ի անդամակցութեան խնդիրը պատճառ եղաւ որ միջազգային հանրութեան ուշադրութիւնը անգամ մը եւս անդրադառնայ նախկին խորհրդային ոլորտին իրականութիւններուն: Նշուած երկու երկիրներէն յատկապէս Վրաստանը արեւմտամէտ հակումներու պաշտպանութիւնը ուրիշին չձգելու մրցումի մը ելած կը թուի: Երէկուան միազանգուած այդ աշխարհը քիչ-քիչ կրծելու ամերիկեան քաղաքականութեան ամէնէն դիւրին արձագանգողին վերածուած է, առանց նոյնիսկ նկատի առնելու ներքին հարցերով ամէն պահ Թիֆլիսի սպառնացող վտանգները, անոնց չահարկումի համեմատաբար դիւրին կարելիութիւնները: Ցոյցեր, յեղաշրջում, իշխանութեան փոփոխութիւն, բոլորն ալ տեղ գտան վրացական օրակարգին վրայ ու տակաւին երկիրը կը փնտռէ կայուն երթի մը բանալիները, հակառակ իր նոր հովանաւոր՝ հեռուի սուրբին հաւաստիքներուն. կամ ճիշդ անոնց պատճառով...

ՕԹԱՆ-ի անդամակցութեան ձգտումին Մոսկուայի խոչընդոտումով կէս ճամբան մնալը հաւանօրէն բան պիտի չփոխէ վրացական իշխանութիւններու ընթացքէն. անոնք քիչ մը աւելցած տրտունջով պիտի շարունակեն քալել նոյն ճամբէն: Թերեւս սպասեն որ շրջանին մէջ նոր պատառներու տիրանալու ուաշինկթընեան փորձերը իրենց գործն ալ դիւրացնեն: Բայց առ այժմ շրջանին մէջ միայն Ատրպէյճանը կայ համախոհ:

Այս վիճակը ի՞նչ անդրադարձ կ'ունենայ Վրաստանի հարաւային, Հայաստանի սահմանակից Ջաւախքի գօտիին վրայ: «Վիրք» կազմակերպութեան նախագահ Դաւիթ Ռստակեան բացատրած է, պատասխանելով Առաքել Մայուրեանի («Երրորդ ուժ» փլիս) հարցումներուն:

Ան բաւական մութ գոյներով պատկեր մը կը ներկայացնէ. խորհրդային օրով արդէն Ջաւախքը անտեսուած, արհամարհուած գօտի էր. անկախութեան շրջանին իշխանութիւններու քաղաքականութիւնը աւելի՛ եւս կոշտացած է. առաւելագոյն ջանքեր կ'ըլլան, որպէսզի Հայերը լքեն իրենց հայրենիքը: Մասնաւորաբար «վարդերու յեղափոխութենէն» ետք աննախադէպ չափեր առած է անգործութիւնը, խստացած է Թիֆլիսի մշակութային ծաւալապաշտութիւնը: Հայերը աւելի յաճախ կը ստիպուին հրաժարիլ մայրենին սորվելէ: Իսկ ՕԹԱՆ-ի անդամկցութեան հեռանկարը աւելի մեծցուցած է ժխտականներու չափն ու խառնութիւնը: Այդ հեռանկարին իրականութիւն դառնալու պարագային Հայաստանն ու Ջաւախքը կը յայտնուին ապահովութեան տարբեր համակարգերու մէջ. նոյն ատեն լարուած եւ հետեւաբար անկայունացած շրջանի մը մէջ, նկատի առած՝ Ռուսաստանի եւ ՕԹԱՆ-ի, անոր յարող երկիրներու հանդէպ առաջինին վերաբերումը:

Նման կացութեան մը հետեւանքը այն կ'ըլլայ որ աւելի կը բարդանայ Ջաւախքի եւ Հայաստանի սահմանին անցնելու գործընթացը: Հայաստանի շրջափակումը աստիճան մը աւելի կը շեշտուի:

Դ. Ռստակեան կ'ըսէ թէ ՕԹԱՆ-ի անդամակցութեան ձգտումը առաւելաբար կը պատկանի Վրաստանի իշխանութիւններուն եւ ոչ ժողովուրդին: Անոր մեծամասնութիւնը դէմ է այդ անդամակցութեան. իսկ Ջաւախքի պարագային, համեմատութիւնը գրեթէ բացարձակ է: Այդ մասին հարցախոյզի մը Ախալքալաքի եւ Նինոծմինդայի բնակչութեան միայն 1%ը համաձայնութիւն յայտնած է: Սակայն պաշտօնական տեղեկատուութեան մէջ այդ տոկոսը վերածուած է 33%ի:

Վրաստանի նախագահական բոլոր թեկնածուներուն ՕԹԱՆ-ի անդամակցութեան համամտութիւնը Դ. Ռստակեան կը բացատրէ անով որ անոնք չեն պատկերացներ ապագան, կը գտնուին իշխանութիւններու հզօր ազդեցութեան տակ. մանաւանդ յոյս ունին որ աբխազական եւ օսէթական խնդիրները կրնան լուծել ՕԹԱՆ-ի միջոցներով:

«Վիրք»ի նախագահը համոզուած է որ ՕԹԱՆ-ը կորսնցուցած է իր գոյութեան իմաստը եւ երկար ատենէ ի վեր խաղալիքի վերածուած է ԱՄՆ-ու ձեռքը: Իրապէս, մարդ երբ անդրադառնայ որ զինուորական այդ ուխտը կազմակերպուած էր Խորհրդային Միութեան ներկայացուցած սպառնալիքին դէմ, անխուսափելի կ'ըլլայ հարցումը թէ 17 տարիէ ի վեր, մինչ, նոյն միութիւնը կազմալոյծ է, որո՛ւ ուղղուած է ան: Կամ պէտք է մտածել որ ԱՄՆ եւ անդամ երկիրները հակառակ այդ կազմալուծման, նոյն տեղը նոյն թշնամին կը նշմարեն, յանձին գլխաւորաբար Ռուսաստանի:

Ա. Մայուրեան հարց կուտայ իր խօսակիցին թէ ճի՞շդ է որ Վրաստան իր տարածքէն ռուսական զօրքը դուրս հանած է, ՕԹԱՆ-ի անդամակցութեան պայմաններ ստեղծելու համար: Դ. Ռստակեան այլ բացատրութիւն ունի. չի կարծեր որ Վրաստան յաջողած է ռուսական զօրքը դուրս բերել.ատոր որոշումը Մոսկուային պատկանած է:

Վերջին հարցումով լրագրողը կը շօշափէ պարբերաբար սեղան բերուած նիւթը. «Ի՞նչպէս պիտի պահպանուին Ջաւախքի հայութեան շահերը, ներկայի կացութեան մէջ: Արդեօք չէ՞ հասունցած Ջաւախքին ինքնավարութիւն տալու անհրաժեշտութիւնը»: Դ. Ռստակեան նախ կ'ըսէ որ այդ շահերը պաշտպանելու համար բոլոր միջոցներու կը ձեռնարկեն. երկրին իշխանութիւններէն կը պահանջեն որ յարգեն միջազգային իրաւունքի չափանիշերը եւ կատարեն ջաւախահայութեան նկատմամբ իրենց պարտականութիւնները:

Ինչ կը վերաբերի ինքնավարութեան հարցին, Ջաւախքի մէջ այդ պահանջը նոր չէ: Անոր անհրաժեշտութեան մասին կանոնաւոր յիշեցում եղած է, թէ՛ միջազգային հանրութեան, թէ վրացական իշխանութիւններուն: Երկրին ղեկավարութիւնը բազմաթիւ անգամներ յայտարարած է որ պատրաստ է Աբխազիոյ եւ Հարաւային Օսէթիային ամենալայն ինքնավարութիւն տալու: Ջաւախքի մէջ ալ պէտք է վարուիլ այնպէս մը որ նոյն պատրաստակամութիւնը գոյանայ այդ գօտիին նկատմամբ ալ:

ՕԹԱՆ-ի անդամակցութեան նիւթը Թիֆլիսի օրակարգէն վերցած է, գոնէ որոշ ժամանակի մը համար: Ատիկա ո՞ր աստիճանի կը մեղմացնէ հայկական շրջանին ու վրացական մայրաքաղաքին հակադրութիւնը: Մանաւանդ որ կայ մեսխէթ Թուրքերուն հայաբնակ վայրեր վերադարձի հեռանկարը: Ծրագիրը կը վայելէ Թուրքիոյ կառեւոր հովանաւորութիւնը. իսկ Թուրքիա նոր բարեկամն է, գործակիցը Վրաստանի:

Տուեալներ որոնք Ջաւախքի պահանջներուն ուղղութեամբ շատ դիւրին ու դրական զարգացումներ նախատեսել չեն տար:

Ա. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱՐԺԱՆԹԻՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ

Կազմակերպութեամբ Հայաստանի դեսպանատան եւ Հայ կեդրոնի վարչութեան, Մարտ 28ի Ուրբաթ գիշեր, Ս. Գր. Լուսաւորիչ Մայր տաճարի մէջ տեղի ունեցաւ հոգեւոր համերգ մը, խմբավարութեամբ Հ. Մխիթար Գուտուզեանի եւ մենակատարութեամբ անուանի երգիչ երգչուհիներու: Եկեղեցին լեցուն էր բերնէ բերան: Հրաւիրեալներու մէջ մեծ թիւ կը կազմէին տարբեր երկիրներու դեսպաններ, դեսպանական անձնակազմի մարդիկ, պետական պաշտօնատարներ, արուեստագէտներ, պետական թատրոնի երգիչներ, եւն.:

Հ. Մխիթար փոքրակազմ բայց որակաւոր երգչախումբով եւ մենակատարութեամբ թենոր տոքթ. Նազարէթ Թեհճիրեանի եւ սոփրանօ Ալա Աւետիսեանի ներկայացուց յայտագիր մը Հէնտելի, Պախի, Մոցարթի, Կոմիտասի, Մակար Եկմալեանի, Արա Պարթեւեանի, Օհան Տուրեանի, Ռուպէր Աթայեանի, Առնօ Բաբաջանեանի, Աղեքսանդր Յարութիւնեանի, Ռոսսինիի, Խորէն Մէյխանաճեանի, Շուպերթի հոգեւոր մշակումներէն, արժանանալով երկարատեւ ծափահարութիւններու: Դուդուկահար Գագիկ (Գասպարեան) մեկնաբանեց կտորներ Կոմիտասի, Աթայեանի, Եկմալեանի եւ ուրիշներու գործերէն: Ցաջող եւ ծափահարելի ձեռնարկ մը:

ԱՐՄԵՆԻՕ – ԱՐԽԵՆԹԻՆԱ

Հինգշաբթի, Մարտ 27ի առաւօտ, տեղւոյս Արմենիօ-Արխենթինա վարժարանը այցելեցին ռամկավար ղեկավարներ Մայք Խարապեան եւ Արա Ահարոնեան, որոնք Պուէնոս Այրէս կը գտնուին կազմակերպական առաքելութեամբ: Վարժարանի տնօրէնութիւնը հանդիսաւորապէս ընդունեցաւ հիւրերը, հաստատութեան շրջափակին մէջ կատարելով փոքր հանդիսութիւն մը: Եօթներորդ և վեցերորդ դասարաններու աշակերտները երգեցին Հայաստանի պետական քայլերգը եւ ժողովրդական քանի մը երգեր: Տնօրէնուհին բարի գալուստ մաղթեց եւ ջերմ խօսքեր ըրաւ հայ ժողովուրդի մասին, որուն անդամներէն երկու նախկին որբեր՝ քոյր-եղբայր Սիրանոյշ եւ Պօղոս Արզումանեան եղան դպրոցի հիմնադիրները: Արա Ահարոնեան շնորհակալութիւն յայտնեց եւ շծածկեց իր հիացումը հանդէպ խանդավառութեան, որով աշակերտները կատարեցին հայկական երգերը, մաքուր առոգանութեամբ:

Այնուհետեւ, հիւրերը շրջեցան հաստատութեան զանազան բաժանումները եւ իրենց տպաւորութիւնը արձանագրեցին այցելութեան տոմարին մէջ: Արմենիօ-Արխենթինա բազաքապետական վարժարանը կը գործէ աւելի քան 40 տարիէ եւ ունի շուրջ 800 աշակերտ-աշակերտուհի, ոչ-հայ: Հաստատութեան մէջ կը պարզուի Հայաստանի դրօշը եւ պատին վրայ քանդակուած է քերթը: Մուտքին՝ կայ հիմնադիր-նուիրատուներու որբութեան արձանիկը:

Հիւրերուն կ'ընկերանային վարժարանի բարերար Արմէն Մեծատուրեան, Պուէնոս Այրէս նահանգի երեսփոխան Սերխիօ Նահապետեան եւ Պետրոս Հաճեան: Յայտնենք, որ Արմէն Մեծատուրեան, իբրեւ փոխադարձ երախտագիտութիւն, երեւանի մէջ հաստատած է դպրոց Արժանթինի հանրապետութեան անունով, որուն մուտքին զետեղուած է Ազատարար Սան Մարթինի արձանը:

ՌԱԿ

Մարտի վերջին շաբաթավերջին, Պուէնոս Այրէսի մէջ գումարուեցաւ ՌԱԿ Հարաւային Ամերիկայի շրջանակի պատգամաւորական ժողովը, Արժանթինի, Պրազիլի եւ Ուրուկուէյի մասնաճիւղերու ներկայացուցիչներով: Ներկայ ըլլալու համար ժողովական աշխատանքներուն, Պ. Այրէս ժամանած էին ՌԱԿ Կեդրոնական վարչութեան ատենապետ պրն. Մայք Խարապեան եւ Կեդր. վարչութեան անդամ պրն. Արա Ահարոնեան: Ժողովական աշխատանքներուն առընթեր, նոյն կազմակերպութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Արա Ահարոնեանի «ՌԱԿ-ի հերոսներ» գրքին շնորհահանդէսը: Գիրքը սպաներէնի թարգմանուած է տիկ. Տիանա Տէր Կարապետեան – Վալտէրրամայի կողմէ եւ հանգամանօրէն ներկայացուեցաւ պրն. Հայկ Շահինեանի կողմէ: Խօսք առաւ նաեւ հեղինակը: Այնուհետեւ, Կիրակի, Մարտ 30ի կէսօրին, ՀԲԸՄ-ի «Կիւլպէնկեան» սրահին մէջ, մասնաւոր հրաւիրեալներու ներկայութեան, պատուոյ ճաշ մը տրուեցաւ մեծարելու համար շրջանիս ռամկավար ղեկավարներէն Նահապետ Նահապետեանը, իր հանրային եւ կազմակերպական գործունէութեան 60ամեակին առիթով: Խօսք առին եւ ծնծարեալին գործունէութեան ու դէմքին արժեւորումը կատարեցին ՌԱԿ ատենապետ Մայք Խարապեան, տեղւոյս ՌԱԿ ղեկավարներէն Հայկ Շահինեան, «Կոմիտաս» երգչախումբի խմբավար Մաքրուհի Էօլմէսէքեան, Հնչակեան ղեկավար Սամօ Սարգիսեան եւ Հայ կեդրոնի վարչութեան կողմէ Պետրոս Հաճեան: Պրն. Նահապետ Նահապետեան արտասանեց շնորհակալութեան յուզիչ խօսք մը: Ձեռնարկը փակուեցաւ Հ. Մխիթար Գուտուզեանի խօսքով:

ՔԵՄԱԼ ԵԱԼՉԸՆ

Քեմալ Եալչընի «Սիրտս ճերմակ կը խայտայ» գործը, որ սպաներէնի թարգմանուեցաւ փրոֆ. Էտուարտօ Գարասաքեանի կողմէ, նախաձեռնութեամբ ու մեկենասութեամբ Ճորճ Փուշիճեանի, Պուէնոս Այրէս

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԱՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ

Իլ-տը-Ֆրանսի (Փարիզ եւ յարակից ութ շրջաններ) Շրջանային խորհուրդին որոշումով, Փարիզի, Գրեթէյի եւ Վերսայլի երեք կրթական տեսչութիւնները (Ակադեմի) հինգ հարիւր երկրորդական վարժարաններուն ղրկուած է «Հայկական յիշողութիւն» խորագրով տեսասկաւառակ մը (DVD): Երեք վաւերագրական ժապաւէններ պարունակող այս սկաւառակը 135 վայրկեանի տեւողութիւն մը ունի: Անոր նախաձեռնողները եւ հեղինակներն են Ժան-Գլօտ Քեպապճեան, Ժաք Քեպատեան եւ Իզապէլ Ուզունեան: Այս առթիւ, անցեալ տարի Լա Վիլէթի «Սիթէ տէ սիանս»ին մէջ իրենց ներկայացուցած երեք ժապաւէններուն որպէս նախաբան, անոնք աւելցուցած են «Օսմանեան կայսրութեան վախճանը եւ Հայոց ցեղասպանութիւնը» անունով նոր փաստագրական ժապաւէն մը որ ամփոփ ձեւով կը ներկայացնէ Ցեղասպանութեան պատճառներն ու ծալքերը:

Հայկական հարցը եւ 1915ի ցեղասպանութիւնը փարիզեան շրջանի աշակերտներուն ծանօթացնելու այս նոր նախաձեռնութիւնը երկրորդն է: Յիշեցնենք որ աւելի երկու տարի առաջ, նոյն խորհուրդը փարիզեան շրջանի բոլոր երկրորդական վարժարաններուն կէս միլիոն տպաքանակով յաջող թերթիկ մը հրամցուցած էր Գլօտ Մութաֆեանի, Ռ. Յարութիւն Գէորգեանի եւ Ֆիլիփ Վիտըլէի ստորագրութեամբ (տես՝ «Յառաջ»ի 2006 Յունիս 7ի թիւը): Այս նախաձեռնութիւնը մեծ աղմուկ պատճառած էր իր ժամանակին եւ առիթ տուած Թուրքիոյ հակազդեցութեան, նաեւ անսպասելիօրէն, Ֆրանսացի պատմաբաններու եւ մանկավարժներու: Պէտք է յուսալ որ այս նոր նախաձեռնութիւնը իր արդար նպատակին կը ծառայէ առանց նոր խառնակութիւններու եւ յուզումներու: Այս տողերը կը գրենք որոշ վերապահութեամբ որովհետեւ գործին առաջին հանգրուանին, կարգ մը դպրոցներու մէջ շրջանային իշխանութեանց նախաձեռնութիւնը հանդիպած էր քանի մը ուսուցիչներու ընդդիմութեան: Անոնք երբեմն մերժած էին աշակերտութեան բաժնել Հայկական ցեղասպանութիւնը ներկայացնող թերթիկը առարկելով թէ «իշխանութեանց չի պատկանիր որոշել թէ պատմութիւնը ինչպէս պիտի դասաւանդուի»: Ուրիշներ ալ չէին վարանած յայտարարելու թէ «կը մերժէին ենթարկուիլ հայկական լոպիին ազդեցութեան տակ առնուած որոշումի մը»: Զարմանալիօրէն նոյն առարկութիւնները գոյութիւն չունին երբ հարցը կը վերաբերի, օրինակի համար, Հրէական ողջակիզումին: Այս վաւերագրական ժապաւէնները գլխաւորաբար պիտի ներկայացուին Ա. դասարանի աշակերտներուն որոնց պատմութեան յայտագրին մաս կը կազմէ Առաջին աշխարհամարտը:

Գովելի ձեռնարկ մը որուն սակայն պետական դպրոցներուն մէջ ծառայող հայազգի ուսուցիչները պարտին հետեւիլ քայլ առ քայլ:

ԿՈՐԻՒՆ

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՄԱՄԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՑԱԽԵԱՆ ՇԱՐԺՄԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Հայ օգնութեան միութեան Արցախի վարչութիւնը Արցախեան շարժման 20ամեակը նշեց Մարտ 30ին, Ստեփանակերտի Մշակոյթի եւ Երիտասարդութեան պալատին մէջ կազմակերպելով «Հայ կնոջ դերը հասարակական-քաղաքական կեանքին մէջ» թեմայով ձեռնարկ մը, ընդգծելու համար ընդհանրապէս հայ կնոջ եւ յատկապէս Հայ օգնութեան միութեան դերը թէ՛ Արցախի ազատագրական պայքարի տարիներուն, թէ՛ յաջորդող շրջանին, ծառայելով Արցախի ամրացման գործին:

Ձեռնարկի բացումը կատարելով, ՀՕՄ-ի Արցախի վարչութեան ատենապետուհի Մարկարիտա Թարանեանը շեշտեց, որ հայ կինը միշտ ալ գտնուած է առաջամարտիկի դերին մէջ, ան ո՛չ միայն եղած է սիրող մայր ու հոգատար կին, այլ նաեւ հայրենիքի զինուոր:

Ձեռնարկին առաջին հերթին ելոյթ ունեցաւ Հայ օգնութեան միութեան Հայաստանի Շրջանային վարչութեան ատենապետուհի եւ Հայաստանի հանրապետութեան Ազգային ժողովի անդամ Ալվարդ Պետրոսեանը: Ան լայնօրէն անդրադարձաւ Արցախեան շարժման ընթացքին հայ կնոջ դերին եւ այդ փոթորկոտ տարիներուն ՀՕՄ-ի գործունէութեան՝ որպէս գթութեան քոյր: Ան ընդգծեց, որ ՀՕՄ-ը միշտ հաւատարիմ պիտի մնայ իր այդ կոչումին, եւ իր կարելին պիտի չխնայէ հասնելու մեր ժողովուրդի կարիքներուն, հայրենի տարածքներուն մէջ թէ արտերկրի:

Յաջորդիւ խօսք առաւ Արցախի պետական համալսարանի Մարդասիրական բաժանմունքի տնօրէն՝ Արվիկ Մխիթարեանը, որ խօսեցաւ «Հայ կինը եւ ապագայ սերունդի դաստիարակութիւնը» թեմային մասին: Ան շեշտեց, որ Արցախի մէջ հայ կինը այսօր կը շարունակէ մատղաշ սերունդին մէջ վառ պահել այն կրակը, զոր երկու տասնամեակ առաջ հայրենիքի պաշտպանութեան գործին մէջ նետած էր ամբողջ սերունդ մը:

Վերջին խօսք առնողը եղաւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան Ազգային ժողովի անդամ Ժաննա Գալստեանը. ան իր խօսքին մէջ շեշտեց, որ հրացանը հայրենիքը պաշտպանելու միակ զէնքը չէ եւ հայուհին որպէս մայր ու դաստիարակ, ամէն օր կը ծառայէ հայրենիքի պահպանման ու պաշտպանութեան գործին:

Խօսքերէն ետք ներկաներուն ցուցադրուեցաւ տեսերիզ մը, որ կ՚անդրադառնար Արցախի, Հայաստանի եւ Ջաւախքի մէջ ՀՕՄ-ի գործունէութեան: Այնուհետեւ գեղարուեստական յայտագիր մը ներկայացուցին ՀՕՄ-ի Արցախի «Սօսէ» մանկապարտէզներու աշակերտները:

Յաջորդող օրերուն Արցախեան մամուլն ու պատկերասփիւռը լայնօրէն անդրադարձան վերոյիշեալ հանդիսութեան, որ արժանացած էր տեղական պետական ու պաշտօնական անձնաւորութիւններու, ինչպէս նաեւ անոր մասնակցած բազմութեան գնահատանքին:

մայրաքաղաքի Խորհրդարանին կողմէ հռչակուեցաւ հանրային շահեկանութիւն ներկայացնող հրատարակութիւն: Որոշումնագիրին մէջ, որ քուէարկուեցաւ միաձայնութեամբ հատորը կը ներկայացուի հետեւեալ բնորոշումով.- «Յայտարարել մշակութային շահեկանութիւն ներկայացնող հրատարակութիւն մը "Սիրտս քեզմով կը խայտայ", ճամբորդութիւն մը Թուրքիոյ մէջ թաքուն կերպով ապրող Հայերուն մէջ գիրքը»:

Տեղւոյս ամէնէն տարածուն օրաթերթէն «Քլարին» գրախօսական մը հրատարակելով Եալչընի գրքին մասին, կը յիշէ, որ Թուրքիոյ մէջ մինչեւ 2006 Դեկտեմբեր դատուած են 185 գրագէտներ եւ փրոֆէսէօրներ Թուրք ազգային ինքնութիւնը մրոտած ըլլալու ամբաստանութեամբ, այնուհետեւ կը գրէ, թէ «ոչ մէկ Թուրք կրնայ խօսիլ Հայկական ցեղասպանութեան մասին, 20րդ դարու առաջինը, որ (հայ ժողովուրդին վրայ) գործադրուեցաւ 1915-1923 տարիներուն: Աւելի քան 1.5 միլիոն Հայեր կոտորուեցան եւ հազարաւոր ուրիշներ աքսորուեցան Թուրք կառավարութեան կողմէ: 2007 Յունուար 19ին Պոլսոյ մէջ սպաննուեցաւ լրագրող Հրանդ Տինք, «Ակօս» թերթի տնօրէնը»:

Այնուհետեւ խօսելով Եալչընի գործին մասին, գրախօսականը կը յիշէ, որ բազմաթիւ Հայեր պարտաւորուեցան փոխելու իրենց կրօնքը, փրկուելու եւ կարենալ վերապրելու համար: Կիսագաղտնի կերպով պտըտելով Թուրքիոյ խորերը եւ խօսեցնելով նման Հայեր, հեղինակին գիրքը կը ծառայէ ճշմարտութեան, կ՚եզրակացնէ գրախօսականը: Գիրքը համակրանքով կը խօսի Հայերու մասին:

Ա. Պ.

ՍՏԱՑԱՆՔ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

* * *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԱԾ
ՏԱՐԱԾՔԸ ԵՒ
ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

կազմեց եւ խմբագրեց՝
ԱՐՄԷՆ ԱՅՎԱԶԵԱՆ

Երեւան, 2006, 2007

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց
Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Շուրջ չորս տարի Բոգաեւսկին ուրախացնում էր ինձ: Գալիս էր, եռանդագին զբաղւում արտանկարելով, ցոյց էր տալիս բնականից արուած իր ճեպանկարները եւ ինձ թւում էր, թէ նա ամբողջովին հակուած էր դէպի իրական, ռէալ կեանքը... Բայց ահա արդէն տասը տարուց աւելի է, ինչ պատանին նորից ընկել է իր հին տրամադրութիւնների գիրկը: Իսկ դա վախեցնում է ինձ. չէ՞ որ Կոտիան ամենատաղանդաւորն է իմ սաներից, աւելի տաղանդաւոր, քան նրանք, ովքեր ամրան ամիսներին Գեղարուեստի ակադեմիայից գալիս են այստեղ: Ես վախենում եմ նրա համար. այս տարի նա աւարտում է գիմնազիան եւ, ի հարկէ, կ՚ընդունուի Գեղարուեստի ակադեմիա, դրանում ես ամենեւին չեմ կասկածում: Բայց Պետերբուրգում նրան վըտանգ է սպառնում ընկնել դեկադենտների ազդեցութեան տակ, որ հիմա այնքան տարածուած է...

Մինչ Այվազովսկին Մախոխեանին պատմում էր իր տարօրինակ աշակերտի մասին, արեւը մայր մտաւ, եւ իրիկնային աղջամուղջը սկսեց ծանրօրէն փըռուել քաղաքի ու ծովի վրայ: Բոգաեւսկին ցած իջաւ աշտարակից եւ զարմանքով նկատեց մօտիկ կանգնած Այվազովսկուն՝ իր հիւրի հետ:

– Որտե՞ղ էք սովորել այդպէս լաւ ժայռերը մագլցել, – հարցրեց Մախոխեանը.

– Տակաւին Տոպլիներում: Դա ժայռերի մէջ կորած ղրիմեան մի վանք է: Այնտեղ ես մի ընկեր ունէի, որը եղնիկի պէս մագլցում էր սարերն ի վեր:

– Լաւ է. նկարիչը պէտք է ուժեղ լինի: Այն ժամանակ նրա ձեռքն աւելի ամուր կը բռնի վրձինը, – նկատեց Մախոխեանը:

– Իսկ ինչի՞ մասին էիք այդպէս երազում աշտարակի վրայ, Կոտիա, – յանկարծ կամաց հարցրեց Այվազովսկին:

Բոգաեւսկին փոքր-ինչ լռեց, ապա խօսեց դանդաղ, ընտրելով բառերը,

– Երազ էի տեսնում: Այդպիսի երազներ տեսել է նաեւ այս երկրի հողը, հին ու չարչարկուած այս երկիրը: Մենք միասին անրջում էինք Յոյների, Ճենովացիների եւ միւս ցեղերի մասին, որ ապրել են այս վայրում եւ որոնցից աղօտ յիշողութիւններ են մնացել միայն...

«Եւ իմ հոգում՝ բիւր տեսիլներ ինչպէս տժգոյն աղջամուղջ դողդողում են ստուերների նման...»:

– Օ՛, դա արդէն Վէռլէնն է, – գոչեց Մախոխեանը:

– Կոտիա, ինչո՞ւ դուք անընդհատ համակուած էք ինչ-որ մելամաղձութեամբ եւ բնաւ չէք ուզում պայքարել նրա դէմ, – տխուր հարցրեց Այվազովսկին:

Բոգաեւսկին բարձրացրեց գլուխն ու հայեացքն ուղղեց արդէն մթին տուող երկնքին, որի վրայ թրթռում էին վաղժամ աստղերը:

– Քիչ յետոյ, ահա այդտեղ, – ցոյց տուեց Բոգաեւսկին, – կը յայտնուի Սատուրնը... Ես ծնուել եմ այդ աստղի տակ: Եւ ինձ նմանների պոէտն այսպիսի տողեր է յղել.

Իմաստունները վաղուց մի երազով են
տարուել՝
(Թէեւ խնդիրը նրանց գուցէ եւ
չի կատարուել)
Կարդալ լեզուով երկնքի՝ ճակատագիրը
մարդկանց,
Թէ ինչպէս մարդը կեանքում
իր աստղի հետ է կապուած:
Նրանց որպէս պատասխան
մի չար ծաղրանք էր լինում,
Թէեւ ծաղրողը յաճախ ծիծաղելի էր
դառնում:
Բայց գաղտնիքը ահաւոր գերել է
միտքն իմ արթուն:
Գիտեմ, որ ով ծնուած է այն աստղի
տակ իմաստուն՝
Դեղին Սատուրն աստղի տակ,
որին դիւթերն են յարգում,
Ճակատագիրը նրան վիշտ կը բերի
ողջ կեանքում.
Ինչքան էլ որ դրա դէմ ըմբոստանայ
ամէն օր,
Բախտի առջեւ, անկասկած,
նա կը լինի միշտ անզօր...

(Շար. 203)

(Շար. Ա. էջէն)

դէ ճիւղին պատասխանատուին՝ ժան Զիկլէրի համար այ ապագան չատ աւելի մտահոգիչ է։ Իրեն համար գլխաւոր պատասխանատուները աշխարհի մեծերն են իրենց անտարբերութեամբ։ Առաջին անգամ ըլլալով արդէն կառավարութեան ղեկավար մը իր պաշտօնը կորսնցուց իբրեւ հետեւանք ստեղծուած կացութեան (Հայիթի)։ Մէկ շաբթուան մէջ բրինձին գինը կրկնապատկուած էր խռովութեանց պատճառ ըլլալով։ Զիկլէր հեղինակ է հատորի մը որ խորագրուած է «Ամօթի կայսրութիւնը», մինչ Դրամական միջազգային հիմնարկի նախագահը Տոմինիք Սթրօս-Քահն յայտարարած է Ապրիլ 12ին.– «Եթէ սննդի գիները շարունակեն յաւելում կրել, հարիւր հազարաւոր անձեր սովէ պիտի մեռնին»։

«ՄՈՆՏ» օրաթերթը լոյս չտեսաւ Երկուշաբթի օր (Ապրիլ 15ի թիւ) պաշտօնէութեան գործադուլին պատճառաւ, որ հետեւանք էր նախատեսուած 130 պաշտօնազրկումներու։

ՄԱՄՈՒԼ

«LE MONDE DIPLOMATIQUE»

(Avril 2008)

DANGEREUSE INSTABILITE EN ARMENIE

JEAN GUEYRAS

Ժան Կէյռաս (Հայկ Քիրազեան) յօդուած մը ստորագրած է Մոնտ Տիփլոմաթիքի Ապրիլի թիւին մէջ, ուր վերլուծումը կը կատարէ Հայաստանի վերջին շրջանի իրադարձութիւններուն։ Սկիզբը պատմական հակիրճ ակնարկով մը կը նկարագրէ կացութիւնը նախքան Փետրուար 19ի նախագահական ընտրութիւնը։ Ապա, կը պարզէ մթնոլորտը մասնաւորաբար Հոկտեմբեր 27ի ջարդէն ետք Խորհրդարանին մէջ, Սարգսեան – Քոչարեան տարակարծութիւններու ծագումը ամէն երկու տարի առաջ, հուսկ նախագահական ընտրութիւնը, որուն անկանոն բնոյթը կասկած չի վերցներ։ Կը բացատրէ նաեւ Լեւոն Տէր Պետրոսեանի թեկնածութեան պատճառները, անոր համոզումը որ իշխանութիւնը կը ներկայացնէ «ոճրագործ խմբակ մը» եւ «մաֆիոզական վարչակարգ մը»։ Չի ծածկեր, Լ. Տէր Պետրոսեանի տեսակէտը ինչ կը վերաբերի Ղարաբաղի հարցի կարգադրութեան եւ Թուրքիոյ հետ բնականոն յարաբերութեանց եւ բարի դրացնութեան կապերու տեղծման, ինչ որ թոյլ կրնայ տալ որ Թուրքիա ճանչնայ, թէ՛ կամ կանուխ, Հայոց Ցեղասպանութիւնը։ Ցօղուածագիրին համար Լ. Տէր Պետրոսեան կ'արտայայտէ ինչ որ ժողովուրդը կը մտմտայ, դատապարտելով գլխաւորաբար կաշառակերութիւնը։

Իր եզրակացութեան մէջ, Կէյռաս դիտել կու տայ որ «դէչ ընտրուած իր նոր նախագահով, Հայաստան կրնայ խռովութեանց եւ անկայունութեան շրջան մը ապրիլ»։ Ժողովուրդը որ այլեւս չունի այն վախը զոր Լ. Տէր Պետրոսեան կը յաւակնէր ստեղծած ըլլալ երկրին մէջ, դիւրին դիւրին տեղի պիտի չտայ։ Կը մնայ գիտնալ թէ Ս. Սարգսեան վարպետութիւնը եւ իմաստութիւնը պիտի ունենա՞յ արդիւնաւոր երկխօսութիւն մը ստեղծելու նոր ընդդիմութեան մը հետ որ կրնայ վախնալիք ըլլալ։

LA COMMISSION CULTURELLE DE L'EGLISE ARMENIENNE DE CHAVILLE

Vous invite à une

SOIREE - DIAPORAMA

« UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE »

par **Hrant NORSEN**

Samedi 19 avril à 20h45 à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Հայ տիկին մը աշխատանք կը փնտռէ երախայ կամ տարեց անձ խնամելու կամ տան գործերու համար։

Հեռաձայնել Տիկին Անահիտ Մելտոնեանի.–

06. 98. 45. 10. 07

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ESPOIR POUR L'ARMÉNIE

VOYAGE EN ARMENIE ET AU KARABAGH
DU 6 AU 16 JUILLET

Logement en hôtel 3 étoiles en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh
— Lac Sevan, Khor Virab, Guéghard, Garni, etc... —

Prix 1550 euros

Serge Kurkdjian, tél. : 04 91 77 23 44
E-mail : serge@kurkdjian.org
www.espoirpourlarmenie.org

Հ.Մ.Ը.Մ. ՖՐԱՆՍ

● Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ֆութպոլի խումբի փորձերը տեղի կ'ունենան ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի ժամը 21.00–էն 22.30։

18 տարեկանը լրացուցած ու Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խումբէն խաղալ ուզող մարզիկները կրնան դիմել Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ֆութպոլի պատասխանատուին հեռաձայնելով հետեւեալ թիւին՝ 06 61 82 05 96

Փորձերու դաշտի հասցէ՝

Parc des Choisy — Plaine Sud — 94000 Choisy le Roi

● Իսկ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պասքէթի խումբի փորձերը տեղի կ'ունենան Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը, ժամը 20.30–էն 22.30։

Հասցէ՝ Gymnase Glacière — 121 rue Glacière — 75013 Paris

16 տարիքը լրացուցած տղաք կրնան դիմել եւ մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պասքէթի խումբին։

Արձանագրութեան եւ մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել 06 68 97 94 94 թիւին։

Les Activités du Mois d'Avril
du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille
Directeur : **Khatchig YILMAZIAN**

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP

Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

ՀՐԱՒԷՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ
2006 / 2007 թթ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ Կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին

Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի Ա. Զրբաշեան սրահին մէջ

339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը։

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը։

Ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈԳԷՐ ԱՋԻԼԱՋԵԱՆ

Հոգեւոր հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱԻԵՏԻՔԵԱՆ

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Կարէն Սիմոնեանի
«ԼՈՅՍ
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
Գրական – Գեղարուեստական
Երեկոյթներու շարք

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹ

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հինգշաբթի, Ապրիլ 17, ժամը 20ին

Ճարտապատկեր,
Դրուագներ
երգացանկէն,
Յիշողութիւններ

10 bis, rue Thouin, Paris Vème
Métro Cardinal Lemoine, Monge

Մուտքը ազատ է

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La M.A.J.C. et l'Association les 3A présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
AVEDIS AHARONIAN

Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.

— Entrée libre —

CINE-CLUB

«Achkhar» / UCFAF

Ciné-Club
«Rouben Mamoulian»

Sous le parrainage de Robert GUEDIGUIAN, réalisateur

Jeudi 17 avril à 20 heures

Hommage aux victimes du Génocide Arménien de 1915
ARCHIVES DE A. PEHLIVANIAN
&
LES QUARANTE JOURS DE MOUSSA DAGH

Suivi d'une conférence débat avec Claude Mutafian, historien

Film américain, 1982, 1h50, VF

D'après le roman de Franz Werfel
Un film de Sarkis Mouradian

— Entrée libre —

Directeur des programmes : ARTO PEHLIVANIAN

P.A.F. : 5 euros — Réduit : 3 euros

UCFAF
6 Cité du Wauxhall — 75010 Paris
Métro: République

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակին։

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.-ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ։

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին։

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէս, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–

06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 16
MERCREDI
16 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.939

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21.939

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԻՏԱԼԻՈՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԿՐԿԻՆ ՊԷՐԼՈՒՍՔՈՆԻ

Ինչպէս կ՚ակնկալուէր, անգամ մը եւս (երրորդ) Սիլվիօ Պէրլուսքոնի կը վերադառնայ իշխանութեան գլուխը: Իր յաղթանակը կը պարտի առաւելաբար Փրոտիի կառավարութեան մղած քաղաքականութեան ձախողութեան, քան իր քաղաքական ծրագիրներուն: Նման Ֆրանսացիին, Իտալացին ալ կը քուէարկէ մէկուն դէմ, եւ ոչ՝ մէկուն թեր: Պէտք է ըսել որ Հիւսիսի Լիկային հետ իր գինակցութիւնն ալ օգնած է: Բայց եւ այնպէս ան յաղթած է եւ նոյնիսկ ապահոված բացարձակ մեծամասնութիւն մը թէ Երեսփոխանական ժողովին եւ թէ Ծերակոյտին մէջ: Արդարեւ, Պէրլուսքոնի 340 աթոռի տէր է Երեսփոխանական ժողովին մէջ, մինչ ձախը միայն 241 աթոռ ունի. Պէրլուսքոնի ա՛լ աւելի լաւ դիրք մըն ալ ունի Ծերակոյտին մէջ, ուր իր համախմբումը՝ «Ազատութեան ժողովուրդը» 22 աթոռի առաւելութիւն մը ունի, ձեռքձգած ըլլալով 163 աթոռ 141ի դէմ: Պէրլուսքոնի սկիզբէն յայտարարած է որ իր քաղաքականութիւնը երեք նախապատուութիւններ ունի.– Նափոլիի աղբերու հարցը, Ալիթալիայի տագնապին լուծումը եւ հուսկ՝ շինարարութեան ծրագիր մը մատչելի վարձքերով բնակարաններու համար: Ընտրապայքարի իր լոզունգը եղած էր՝ «Իտալիա՛, արթնցի՛ր» եւ հարկ է որ պէտք եղածը ընէ այդ ուղղութեամբ, ինչ որ այնքան ալ դիւրին չէ, քանի երկիրը տնտեսական ծանր տագնապի մէջ է:

Ընտրութեան մասնակցած են քուէարկողներու 80,4%ը, ինչ որ շատ լաւ համեմատութիւն մըն է, հակառակ անոր որ ժողովուրդը կրնար ձանձրացած ըլլալ այն անվերջանալին քաղաքական տագնապներէն, զորս երկիրը ապրած է յետպատերազմեան շրջանին: Նկատի կ՚առնուի սակայն որ նման համեմատութիւն մը սովորական երեւոյթ է երկրին մէջ: Ապրիլ 14ի իրիկունն իսկ ձախ հոսանքի պարագլուխը՝ Վալթէր Վելթրոնի ընդունած է իր պարտութիւնը:

Սիլվիօ Պէրլուսքոնի ծանօթ դէմք մըն է նաեւ Իտալիայէն դուրս: 71 տարեկան, երկրին երրորդ հարուստն է եւ տէրն է շէնքերու, հեռատեսիլի կայաններու, ֆութպոլի խումբերու, հրատարակչական ձեռնարկներու: Առաջին անգամ վարչապետ եղած է 1994ին, հրաժարած է 7 ամիս ետք, կրկին յաղթական եղած է 2001ի ընտրութիւններուն եւ հինգ տարի վարած է երկրին վարչապետութիւնը: 2006ի ընտրութիւններուն պարտուած է Փրոտիի դէմ ու այսօր ասպարէզը կրկին իրն է: Կը թուի որ, ինչպէս կը գրէ Լիպէրասիոն (Ապրիլ 15), պէրլուսքոնիզմը որքան ալ մաշի, կրկին կը տոկայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ նախարարուհին՝ Ռոզըլին Պաշըլօ Ապրիլ 14ին նոր կարգադրութիւն մը հրապարակեց, որ նոր իրարանցումի մը պատճառ եղաւ: Ցայտնեց թէ ընկերային ապահովութիւնը կրնայ այլեւս բնաւ չմասնակցիլ տեսողութեան հետ կապ ունեցող ծախքերու եւ զանոնք բեռցնել միայն միւթիւէլներու ուսին, ինչ որ առաջին վրդովում մը ստեղծեց այս վերջիններուն նախագահին մօտ: Ձախն ալ իրար անցած է եւ կը քննադատէ այս նոր կարգադրութիւնը, որ առայժմ ծրագիր է միայն: Մնաց որ ցարդ այդ ճիւղին հետ կապ ունեցող հատուցումներու համեմատութիւնն ալ ծիծաղելի է:

ՊԱՊԸ հինգօրեայ այցելութեան մը համար Միացեալ Նահանգներ մեկնած է, ուր նախ ելոյթ կ՚ունենայ ՄԱԿ-ի առջեւ, ապա Ուաշինկթընի մէջ կ՚ընդունուի Պուշի կողմէ: Ոչ մէկ հանդիպում նախատեսուած է նախագահական թեկնածուներուն հետ: Ուրբաթ օր ալ (Ապրիլ 18) պիտի այցելէ Մանհաթանի սինակոկը եւ ելոյթ ունենայ հրեայ համայնքին առջեւ:

ԱՄՆ-ու նախկին նախագահին՝ Ճիմի Գարթըրի ներկայութիւնը անրաղձալի է Իսրայէլի մէջ, քանի ան ուզած է համ-

(Շար.ը Դ. էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ՝ Է. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԵՒ Ս. ՕՀԱՆԵԱՆ

Նախագահ Ս. Սարգսեան Ապրիլ 14ի երկու հրամանագրով նշանակած է կառավարական նոր կազմին առաջին երկու նախարարները. առաջինը արտաքին գործերու նախարարն է, երկրորդը պաշտպանութեան: Արտաքին գործերու նոր նախարարն է Ֆրանսայի դեսպան Էտուար Նալպանտեան որուն նշանակումին մասին վերջին օրերուն շրջող յամառ լուրերը արդէն գրեթէ անակնկալի տեղ չէին ձգած: Է. Նալպանտեան Ս. Սարգսեանի նոյն օրուան մէկ այլ հրամանագրով կը թողու Ֆրանսայի և անոր զուգահեռ Վատիկանի, Իսրայէլի, Անտորայի իշխանապետութեան եւս լիազօր դեսպանի պարտականութիւնները:

Է. Նալպանտեան ծնած է 1956ին Երեւան: 1978ին աւարտած է Մոսկուայի միջազգային յարաբերութիւններու պետական հիմնարկը, ապա Խորհ. Միութեան Գիտութիւններու ակադեմիային Արեւելագիտութեան հիմնարկին մէջ պաշտպանած է աւարտաճառ եւ ստացած քաղաքական գիտութիւններու թեկնածուի աստիճան:

Ուսումնաւարտ ըլլալէ անմիջապէս ետք անցած է դիւանագիտական գործունէութեան. 1978–83 գտնուած է Լիբանան, քանի մը տարի աշխատած է Խորհ. Միութեան Արտաքին գործերու նախարարութեան մէջ, յետոյ ղրկուած է Եգիպտոս ուր պաշտօնավարած է նախ որպէս Խորհ. Միութեան, ապա Ռուսաստանի դեսպանութեան խորհրդական: 1992էն սկսած է մաս կազմել Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան եւ նշանակուած է Եգիպտոսի մէջ Հայաստանի գործավար, 1994ին՝ դեսպան. նոյն ատեն Հայաստանի շահերը ներկայացուցած է Մարոքի եւ Օմանի մէջ:

1999ին Է. Նալպանտեան նշանակուեցաւ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան. նոյն ատեն Հայաստանի շահերը կը ներկայացնէր Իսրայէլի, Վատիկանի, Անտորայի մէջ: Իր պաշտօնավարութեան այս շրջանին Հայաստան – Ֆրանսա յարաբերութիւններուն մէջ նշանակելի եղելութիւն մը հանդիսացաւ Ֆրանսայի մէջ Հայաստանի տարին:

Ինչ կը վերաբերի պաշտպանութեան ոլորտին, նոր նշանակուած նախարարն է զօրավար – գնդապետ Սէյրան Օհանեան որ զինեալ ուժերու սպայակոյտի պետն էր ու պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալը: Ս. Սարգսեանի մէկ այլ հրամանագրով անոր զինուորական այս պաշտօններուն վերջ տրուած է:

Նոր նախարարը ծնած է 1962ին, Շուշի: Միջնակարգ ուսումը Հայաստանի մէջ ստանալէ ետք, աւարտած է Բաքուի հրամանատարական բարձրագոյն ուսումնարանը. 1983ին ծառայութեան մեկնած է Գերմանիա: 1988ին փոխադրուած է Անդրկովկասի զինուորական շրջան եւ Ստեփանակերտ բանակած 366րդ գունդին հրաձգային վաշտին հրամանատար նշանակուած: 1992ին զինուորական ծառայութիւնը շարունակած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան բանակին մէջ:

Մասնակցած է արցախեան պատերազմին գրեթէ բոլոր ռազմաճակատներուն մարտերուն. 1992 Սեպտեմբերին վիրաւորուած է Մարտակերտի Ջլորան գիւղին մօտ: Նոյն տարուան Դեկտեմբերին նշանակուած է ԼՂՀ ինքնապաշտպանութեան կոմիտէի սպայակոյտի պետ:

1994–98 վարած է ԼՂՀ պաշտպանութեան բանակի հրամանատարի առաջին տեղակալի պաշտօնը:

1998 Հոկտեմբերին Հայաստանի պաշտպանութեան նախարարին կողմէ նշանակուած է 5րդ բանակային զօրաբաժնի հրամանատար: Յաջորդ տարին ստանձնած է ԼՂՀ պաշտպանութեան նախարարի պաշտօնը: 2000ին կարգուած է նաեւ պաշտպանութեան բանակի հրամանատար:

2007 Մայիսէն Հայաստանի զինեալ ուժերու սպայակոյտի պետն էր եւ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալը:

Ապրիլ 15ին Հայաստանի զինեալ ուժերու սպայակոյտի պետ եւ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ նշանակուած է զօրավար – տեղակալ Եուրի Խաչատուրով: Նոյն առթիւ իրեն շնորհուած է զօրավար – գնդապետի կոչում:

* * *

Այս երկու նշանակումները յաջորդած են համախոհական դաշինքին կուսակցութիւններու ղեկավարներուն հետ նախագահ Ս. Սարգսեանի նախօրեակի խորհրդակցութիւններուն: Ան հանդիպումներ ունեցած էր Օրինաց երկիրի նախագահ Ա. Բաղտասարեանի, Բարգաւաճ Հայաստանի նախագահ Գ. Ծառուկեանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Հ. Մարգարեանի եւ Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Ա. Ռուստամեանի հետ:

* * *

ՄԱՐՏ 1-Ի ՏԱՍՆԵՐՈՐԴ ԶՈՀԸ

Ապրիլ 11ին զինուորական ծառայող 19-ամեայ Տիգրան Աբգարեանի մահուան լուրով Մարտ 1ի երեւանեան խռովութիւններուն զոհերուն թիւը ինը եղած էր: Նոյն օրը, քիչ ետք, հրապարակուած է Արարատի մարզի Լուսառատ գիւղէն 29 տարեկան Սամուէլ Յարութիւնեանի մահուան լուրը: Այս վերջինին մահուան պատճառ եղած են գլխուն ըստացած հարուածները:

Նոյն դէպքերուն վիրաւորուածներէն հինգին վիճակը ծանր նկատուած էր: Այս երկու մահացողներէն ետք մնացեալ երեքէն մէկը Ապրիլ 15ին հիւանդանոցէն կ՚ելլէր, երկրորդին առողջական վիճակը կայուն կը համարուէր, իսկ երրորդը կը մնար մտահոգիչ վիճակի մէջ:

* * *

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄՆԵՐ

Մարտ 1ին Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ իշխանութեան ներկայացուցիչներու դէմ բռնութեամբ ամբաստանուած Մեսրոպ Զաքարեանի եւ Ռաֆիկ Պետրոսեանի դատերը աւարտած են բանտարկութեան պատիժներով: Մ. Զաքարեանի պատիժը պայմանական է:

Դատավարութիւնները տեղի ունեցած են Երեւանի Կեդրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու դատարաններուն մէջ: Ռ. Պետրոսեան պիտի կրէ երկու տարի, վեց ամսուան բանտարկութեան պատիժը, քանի որ նախապէս ալ երկու անգամ դատուած է զինուորական ծառայութենէն խոյս տալու եւ թմրեցուցիչ գործածելու յանցանքներով:

Մ. Զաքարեանի պատիժը պայմանական է, քանի որ քրէական անցեալ չունի:

* * *

ԼԵՒՈՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ

Լ. Տէր Պետրոսեան հարցազրոյց մը տուած է ռուսական «Նովոյէ Իզվեստիա» թերթին եւ քննադատած Եւրոպական խորհրդարանն ու Օ.Ա.Հ.Ը.Խ.-ն, որոնք ճիշդ արժեւորում չեն կատարած Հայաստանեան յետընտրական իրադարձութիւններուն: Աշխատակազմերուն առումով զանոնք «պիւրոկրատական կազմակերպութիւններ» նկատած է, աւելցնելով որ անոնց մէջ հաւաքուած են «թոշակառու դիւանագէտներ եւ երիտասարդ քարիէրիստներ»: Դժգոհելով անոնց գործունէութենէն, նախկին նախագահը շեշտած է թէ Հայաստանի մէջ 150 քաղաքական բանտարկեալ կայ եւ ինք չի գիտեր Եւրոպական խորհուրդի երկիր մը ուր քաղաքական բանտարկեալներ գտնուին:

Իր յետագայ ծրագիրներուն մասին ըսած է թէ բոլոր կարելի օրինաւոր միջոցներուն դիմելով պիտի ջանայ հանրային որոշակի կարծիք ձեւաւորել, «որպէսզի այս իշխանութիւնը չճանչցուի»:

ԱՄՆ

ԳՈՆԿՐԷՍԻ ՀԵԼՍԻՆՔԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ «ԿԸ ԴԱՏԷ» ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԱՄՆ Գոնկրէսի Մարդու իրաւունքներու Հելսինքեան յանձնախումբը Ապրիլ 17ին ունկնդրութիւն կազմակերպած է Հայաստանի յետընտրական կացութեան մասին: Յանձնախումբին կայքէջին վրայի հաղորդագրութեան մէջ ըսուած է. «Փետրուար 19ի նախագահական ընտրութենէն ետք Հայաստան վերջին տասնամեակի լրջագոյն քաղաքական տագնապը ապրեցաւ: Իշխանութիւններու եւ ընդդիմութեան կողմնակիցներու ճակատումը առնուազն ութ զոհի պատճառ եղաւ եւ արտակարգ վիճակի յայտարարութիւնը լուրջ վնաս տուաւ Հայաստանի հեղինակութեան»:

Նշանակուած ունկնդրութեան վկայութիւն կու տան Հայաստանի նախագահի օգնական Վիգէն Սարգսեան, Լ. Տէր Պետրոսեանի ներկայացուցիչ Արման Գրիգորեան եւ ԱՄՆ-ու արտաքին գործերու նախարարի օգնականի տեղակալ Մ. Պրայզա:

ՀԻՆ, ԲԱՅՑ ՉՀԻՆՑՈՂ ԷՋԵՐ

ՀԱՅՈՑ ԱԶԳԻՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. ՄԱՆՈՒԷԼ ՔԱՋՈՒՆԻ (*)

Հայոց ազգին գլխաւոր պակասութիւնները որո՞նք են:

Շատ փափաքելի էր որ այս գլխոյս վրայօք բան մը չունենայինք զրուցելու, բայց մէկը՝ որ ազգային պատմութիւնը ուշի ուշով կարդայ ու տեսնայ այլեւայլ ժամանակ, այլեւայլ դէպքերու մէջ ազգին գլուխը եկած կերպ-կերպ չարիքը ու թշուառութիւնները, անկարելի է որ չխոստովանի թէ ոչ միայն շրջակայ օտար ազգաց թշնամութիւնը ու անգթութիւնը, այլ շատ հեղ նաեւ ազգայնոց բարոյական պակասութիւնները պատճառ եղեր են ազգին խեղճութեանը: Աս պակասութիւններուն մէջ ամէնէն աւելի եւ աչքի զարնողը Անմիաբանութիւն կամ երկպառակութիւնն է, որ շատ չարեաց պատճառ եղաւ Արշակունեաց, Բագրատունեաց եւ մարզպանաց ժամանակը, եւ մանաւանդ Վարդանանց պատերազմի ատեն, որոյ մէջ Վասակ Սիւնիին անմիաբանութեանը պատճառաւ Պարսիկք բոլոր Հայաստանը տակն ու վրայ ըրին: Նոյնպէս նաեւ շատ աւերմունք ու նեղութիւններ կրեց Հայաստան, Բուղայի ու Յուսփայ ոստիկաններուն ատեն մեր իշխանաց անմիաբան ըլլալուն համար:

Անմիաբանութիւնն էր որ շատ անգամ համազգեաց արիւնով դաշտերը կը ներկէր, նախարար, իշխան մէկմէկու դէմ գրգռելով: Դարձեալ անմիաբանութեան պատճառաւ էր որ Բագրատունեաց ատենը այլեւայլ մանր թագաւորութիւններ բաժնուեցան չուզելով մէկմէկու հնազանդիլ. նոյն պատճառաւ նաեւ կաթողիկոսական աթոռն ալ զանազան ճիւղ բաժնուեցաւ: Ուստի մեր ազգին պատերազմներուն մէջ յաղթուելուն պատճառը՝ ոչ թէ իրեն վատութիւնը կամ տկարութիւնն էր, հապա շատ անգամ անմիաբանութիւնն էր: Իսկ երբոր իշխանները ու զօրքերը թագաւորին հետ միաբանած թշնամեաց դէմ կը պատերազմէին, միշտ յաղթող կ'ըլլային: Ինչպէս Արշակ Բ.-ին ատեն քանի որ նախարարներն ու զօրքերը իրեն հետ միաբան էին: 30 տարի անդադար պատերազմ ընելով միշտ յաղթեց Պարսից, բայց երբոր զօրքերը իրենց թագաւորը թողուցին եւ չուզեցին հնազանդիլ, մէկէն յաղթուեցան:

Մեր ազգին ո՞րն է երկրորդ գլխաւոր պակասութիւնը:

Երկրորդ պակասութիւնն է նախանձը որ շատ անգամ անմիաբանութեան ալ պատճառ կ'ըլլար: Վասն զի ուր որ հաւասար պատուով եւ իշխանութեամբ անկիրթ նախարարներ ու իշխաններ շատ գտնըւին, հոն նախանձն ալ աւելի կ'ըլլայ, որով մէկը մէկալէն աւելի ուզելով մեծնալ ու պատուիլ, անիրաւ քսութիւններով ընկերին չարեացը ու մահուանն ալ պատճառ կ'ըլլայ եւ երբեմն վատախորհուրդ մատնութեանց ալ:

Ուրիշ ի՞նչ պակասութիւններ կը յիշուին մեր ազգին վրայօք:

Մեր ազգին պակասութիւններէն մէկն էր բնութեամբ անխորագէտ ըլլալը, որով բանի մը ետեւ առաջը լաւ չմտածած իրենք զիրենք կը կործանէին, եւ վնասէն ետքն ալ դարձեալ չէին զգաստանար: Ինչպէս, թէպէտ այնչափ անգամ փորձեր էին թէ Պարսիկք միշտ նեղեր են զիրենք, ու հաւատոյ կողմանէ ալ այլեւայլ ատեն հալածանք հաներ են, եւ սակայն նախարարները միաբան գնացին խնդրեցին Պարսից թագաւորէն, որ իրենց բնիկ Արշակունի թագաւորը վերցնէ, ու Պարսիկ մարզպան դնէ. միտքերնին դնելով թէ օտար թագաւորը իրենց համարիւն թագաւորէն աղէկ է. որով անկէ ետքը նեղութիւն ու վիշտ չմնաց զոր Հայաստան չքաշէ թէ՛ հաւատոյ եւ թէ տէրութեան կողմանէ: Նոյնպէս մեծ սխալմունք էր բոլոր նախարարներուն միաբան Յազկերտին երթալը, ուր ինչպէս կ'ըսեն Փարպեցի ու Եղիշէ, գիտէին թէ խաղաղութեան համար չի կանչեր զիրենք, հապա սպաննելու կամ հաւատքնէն ուրացնելու համար: Նոյնպէս սխալմունք էր որ Վարդանանց պատերազմին ատեն Վասակը՝ որ այնչափ չարութիւններ ըրեր էր, բռնելով նորէն թողուցին, թէպէտ՝ կ'ըսէ Եղիշէ՝ գիտէին թէ երդմունքը պիտի չպահէ, ու նորէն պիտի թշնամանայ: Նոյնպէս սխալմունք էր Գագիկ Բագրատունեաց վերջին թագաւորին ըրածը, որ Վեստ Սարգիսը բռնելէն ետեւ նորէն արձըկեց, ու իրեն ներքին խորհրդական ըրաւ, ուր շատ անգամ փորձեր քններ է անոր խորամանկութիւնը, չարութիւնը եւ անհաւատարմութիւնը: Նոյնպէս անխորագիտութիւն էր բոլոր նախարարներուն միաբան Բուղային երթալը. բայց ասկէց ալ աւելին այն է, որ երբոր Բուղա մնացած նախարարներն ալ կանչեց, երդուընելով ու այլեւայլ պարգեւներ խոստանալով, անոնք միամտութեամբ հաւատալով անոր խօսքին, գնացին իրեն, թէպէտեւ գիտէին անոր ըրած չարութիւնները, եւ թէ առջի գացած նախարարները բոլոր բռնեց ու զամէնքը կապած ամիրապետին խաւրեց. ասով գրեթէ բոլոր նախարարները ջնջըւեցան Հայաստանի մէջէն, որ է իրենց անխորագէտ ու պարզամիտ ըլլալուն պտուղը:

Մեր ազգին պակասութեանց պատճառը ո՞րն է:

Առաջին եւ գլխաւորագոյն պատճառն է անկրթութիւնը, վասն զի 'ի սկզբանէ հետէ շատ պակաս էր մեր ազգին մէջ դպրոցներ բանալու ջանքը եւ սովորութիւնը, ուր որ պզտիկուց սկսեալ տղոց բարքը յառաջինութիւն կը շտկուի: Այս պատճառաւ նաեւ ուսմունքները ետ կը մնային, ինչպէս կ'ըսեն Մագիստրոս եւ Յոհան Եզնկացին: Ուստի մեծամեծներուն տղաքը իրենց տանը մէջ առանց կրթութեան փափուկ մեծնալով, շատը ըմբոստ, կամապաշտ, ինքնագլուխ մարդիկ կ'ըլլային: Թէպէտեւ Արտաշէս Բ.-ին, Վռամշապհոյ եւ ուրիշ քաղաքագէտ թագաւորաց ատեն այլեւայլ դպրոցներ բացուեցան, բայց քիչ ատեն տեւեցին, եւ յաջորդ թագաւորները անփոյթ եղան անոնց վրայ:

Երկրորդ պատճառն է նախարարներուն ազատ իշխանութիւնը, որ մէյմէկ պզտի թագաւորի պէս իրենց երկիրը կը կառավարէին որդւոց որդի յաջորդելով: Այս տեսակ կառավարութիւնը թէպէտեւ աւելի փառաւոր է, բայց այնչափ աւելի վնասակար կ'ըլլայ ազգի մը, որչափ որ այն ազգը դեռ անկիրթ է, որով տեսակ-տեսակ մոլութեանց ու ախտից ենթակայ կ'ըլլայ:

Երրորդ պատճառն է ընտիր եւ առաքինի անձանց պաշտօնի չհասնիլը, եւ իրենց քաջութեանցը կամ արդեանցը վարձք չտրուիլը. եւ ընդ հակառակն շատ անգամ անպիտան եւ մոլի մարդկանց պաշտօնի հասնիլը, որով եւ քաղաքականութիւնը ազգերնուս մէջ շատ ետեւ մնացած էր Արշակունեաց վերջի թագաւորներու ժամանակէն սկսեալ: Եւ մի տէրութեան եւ ազգի մէջ անյարմար անձինք շատ կը գտնուին պաշտօնի մէջ, այն տէրութեան եւ ազգին չէ թէ միայն յառաջդիմութեանը արգելք կ'ըլլան, հապա նաեւ անոր կործանմանը պատճառ:

Մեր ազգին պակասութեանցը ի՞նչ դարման կրնայ ըլլալ:

Որովհետեւ մեր ազգին աղէտից գլխաւոր պատճառը անկրթութիւնն է եղած, ուստի կրթութենէ աւելի զօրաւոր դարման մ'ալ չկրնար ըլլալ իրեն: Վասն զի միայն դաստիարակութիւնն է որ մարդուս ճանչցնել կու տայ իրեն առ Աստուած առ անձն եւ առ ընկերս ունեցած պարտքերը: Եւ ահա այս պարտքերուն ճանաչմանն որով եւ գործադրութեանը վրայ հաստատեալ է ազգի մը ճշմարիտ երջանկութիւնը. եւ զասոնք լաւ չըճանչնալուն որով եւ 'ի գործ չդնելուն բնական հետեւանքներն են այն ամենայն մոլութիւնք ու աղէտք, որոնք հետզհետէ, անապատ դարձուցին մեր ցանկալի հայրենիքը: Արդ եթէ մեր տղաքը մտքերնին կրթելու ու զարգացնելու ջանան իրենց դաստիարակուելու ժամանակը՝ այնուհետեւ ոչ միայն իրենք իրենցմէ կարող կ'ըլլան մեր ազգին դաստիարակութեան պակասութենէ կրած թէ՛ կրօնական եւ թէ քաղաքական աղէտիցը խելամուտ ըլլալ, հապա նաեւ անոր դարմանին ալ իրենք իրենցմէ օգնական եղած կ'ըլլան, առած լաւ դաստիարակութեանը գործադրութեամբ:

«Հնախօսութիւն Հայոց»
1850, Վենետիկ

(*) Հ. ՄԱՆՈՒԷԼ ՔԱՋՈՒՆԻ

Մխիթարեան միաբանութեան այս կարկառուն դէմքը ծնած է Պոլիս 11.8.1823, վախճանած՝ Պոլիս 1.12.1903ին եւ թաղուած Ս. Ղազար:

Եղած է ուսուցիչ եւ տեսուչ՝ Պոլիս եւ Վենետիկ (Մուրատ-Ռափ. վրժ.), երեք տարի (1848–1851) վարած է «Բազմավէպ»ի խմբագրութիւնը եւ միջազգային համբաւի տիրացած է իր հիմնած բնագիտութեան աշխատանքով եւ թանգարանով Ս. Ղազարի մէջ, ստեղծելով շքեղ կառոյց մը որ մինչեւ այսօր կը կրէ իր անունը:

Հայերէն լեզուով պատրաստած է գիւղատնտեսութեան տարբեր մարզեր ընդգրկող գիրքեր, դասագիրքեր, արուեստաբանութեան հանրագիտարան «Տնեմարան գիտելեաց» անունով եւ մանաւանդ կոթողային աշխատանք մը, առաջինը իր տեսակին մէջ, պատկերազարդ «Բառագիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց» (1891–93):

Հեղինակ է Հայաստանի տեղագրութեան եւ աշխարհագրութեան նուիրուած հատորներու:

2008 ԱՊՐԻԼ 7

Թութսիներու համար Ապրիլ 7 համանիշ է Հայերու Ապրիլ 24ին: 1994ի այդ օրը սկսաւ Ռուանտայի Թութսիներուն ցեղասպանութիւնը որ տեւեց մօտ 3 ամիս եւ խլեց աւելի քան մէկ միլիոն զոհ: Այս տարի նոյն թուականին ամբողջ աշխարհի Թութսիները եւ անոնց բարեկամները ոգեկոչեցին այս ցեղասպանութեան 14րդ տարելիցը:

Փարիզի մէջ ոգեկոչումի երկու նշումներ եղան. մէկը Շան տը Մարսի «Խաղաղութեան պատ»ին առջեւ, ուր ներկայ էր Մարդկային իրաւունքներու ենթանախարար Ռ. Եատ, միւսը՝ 12րդ թաղամասի մէկ սրահին մէջ հսկումի ձեւով, որուն չէր կրցած մասնակցիլ Պ. Քուշնէր եւ գործակից մը ղրկած էր: Ռ. Եատ ցաւով անդրադարձաւ Ռուանտայի պատահարներուն դէմ միջազգային հանրութեան, նաեւ Ֆրանսայի «տկարութիւններուն» եւ «սխալներուն»: Աւելցուց թէ այդ պատահարները «կը ստիպեն, ի միջի այլոց Ֆրանսան, խորհրդածելու մեր տկարութիւններուն, կամ սխալներուն մասին»:

Երկու ձեռնարկներն ալ կազմակերպուած էին «Իպիւքա Ֆրանս»ի կողմէ. այս ընկերակցութեան նպատակն է յիշողութեան պահպանումին հետ վերապրողներուն արդարութեան եւ զօրակցութեան ապահովումը: Իր հաղորդագրութեան մէջ կը շեշտէր արձանագրուած յառաջդիմութիւնը. «Այսօր Իպիւքա Ֆրանս գոհունակութեամբ կը նշէ քանի մը ամիսէ ի վեր ցեղասպանութեան առնչութեամբ Ֆրանսայի մէջ արձանագրուած յառաջդիմութիւնը: Ֆրանսա ցոյց տուաւ թէ ցեղասպանութեան հեղինակներուն ապաստան պիտի չըլլայ, ոչ ալ ժխտողներու համար հանգիստ կայք մը: Անկէ դատ, «Իպիւքա Ֆրանս» նեցուկ է լարումը մեղմացնելու, հաշտութեան ուղղուած Ֆրանսայի եւ Ռուանտայի կառավարութիւններուն ջանքերուն»: Ոգեկոչումին ֆրանսական խորհրդարանը ներկայացուած էր երեսփոխանուհի Ք. Թօպիրայի կողմէ որ Կիւյանէն յատկապէս ժամանած էր: Մինչդեռ վերջին 12 տարուան ոգեկոչումներուն Ֆրանսայի ոչ մէկ պաշտօնական դէմք մասնակցութիւն ունեցած էր:

Դժուար է թարգման ըլլալ այն բոլոր զգացումներուն զորս մարդ կ'ունենայ յիշողութեան այդ պահերուն գտնուելով վերապրողներու մօտ:

Զոհերուն ձօնուած արարողութենէն մէջբերում մըն են հետեւեալ տողերը.

«Ահաւասիկ մենք բոլորս
Իմանա աստուծոյ օրհնած
հոգիներով
հոգիներ օծուած մաքրիչ
բալասանով
. . .
լսեցէք սիրելի նախնիներ

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ՊՈԼՍՈՅ Կեդրոնական սանուց միութեան մէջ, Մարտ 29ին, նշուած է Թատրոնի Համաշխարհային օրը: Հանդիսութիւնը կը նշուէր յատկապէս Իգնա Սարըասլանի «Իրիկնամուտին Թոտորի» երկարաշունչ բանաստեղծութեան մրքերէն ներկայացմամբ: Թարգմանութիւնը կատարած էր Պերճուհի Պէրպէրեան, բեմադիրն էր Պօղոս Զաւկըրճեան: Բացումը կատարած է միութեան ատենապետ Գէորգ Սիմքէշեան: Յայտագրին առաջին մասին մէջ ցուցադրուած է Թալին Պիւյիւքքիւրքճեանի եւ Սեւան Աթաօղլուի կողմէ «Քուլիս»ի հրատարակիչ ողբացեալ Յակոբ Այվազի մասին պատրաստուած վաւերագրական ժապաւէն մը: Դադար մը ետք, գործադրուած է յայտագրին երկրորդ մասը՝ «Իրիկնամուտին Թոտորի» ներկայացումը, որ մէ նոք, ատենապետ Գէորգ Սիմքէշեան խօսելու հրաւիրած է գանազան հիւրեր, որպէսզի արտայայտուին Թատրոնի օրուան մասին:

**

ՊԷՅՐՈՒԹԻ «Աղբալեան - ՀԲԸՄ» համալիրին մէջ, Մարտ 14ին տեղի ունեցած է մարզական նոր կեդրոնի մը՝ «ԱՖԻԼ հելթ գլապ»ի բացման հանդիսութիւնը, ներկայութեամբ պաշտօնական հիւրերու: Բացման արարողութենէն ետք, ԱՖԻԼ-ի անունով խօսք առած է Յակոբ Լատոյեան: Ան թուելէ ետք ԱՖԻԼ-ի կատարած ներդրումները մարզական նոր կեդրոնին մէջ, նշած է որ հոն կը գործեն 16 մնայուն պաշտօնեաներ ու պիտի ստեղծուին 15 մարզական նախաձեռնութիւններ: Ներկաները ծանօթացած են նաեւ ԱՖԻԼ-ի առողջապահական նոր կեդրոնի սարքերուն ու բաժանումներուն: Կեդրոնը ունի 2000 քառակուսի մեթր տարածք եւ ամէնօրեայ դրութեամբ պիտի ունենայ տարբեր տեսակի իր գործունէութիւնները:

**

ՊԷՅՐՈՒԹԻ Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ, Մարտ 13ին, տեղի ունեցած է Արթըր Միլըրի «Սալեմի վհուկները» թատերգութեան առաջին ներկայացումը կազմակերպութեամբ ՀԲԸՄ–ՀԵԸ «Վահրամ Փափազեան» թատերախումբին: Թատերգութեան բեմադիրը եղած է Երուանդ Ղազանճեան, իսկ թատերգութիւնը թարգմանած է Վարուժան Խտըշեան: Ներկայացումները շարունակուած են Մարտ 14էն 30:

**

ՊՈԼՍՈՅ աթոռանիստ մայր եկեղեցւոյ «Պէզճեան ամիրա» սրահին մէջ, Մարտ 23ի կէսօրէ ետք, Զատկուան առթիւ, Մեսրոպ պատրիարք պաշտօնական ընդունելութիւն մը ըրած է, կողքին ունենալով Շահան արքեպիսկոպոս, Արամ եպիսկոպոս, Ասորից եպիսկոպոսը, հրեայ խախամապետը, վարդապետներ եւ հոգեւոր դասը: Կարճ ուղերձով հանդէս եկած են Ասորից եպիսկոպոսը, հրեայ խախամապետը, Յակոբոս վարդապետ և Շահան արք. բարեմաղթութիւններ ընելով: Վերջին խօսքը առնողը եղած է Մեսրոպ պատրիարք որ շնորհաւորած է ամբողջ համայնքը եւ արդիւնաւէտ աշխատանք մաղթած:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ 80 ԱՄԵԱԿ

ՓԱՐԻԶ

«ՀԱՄԱԶԳԱՅԻՆ»Ի ԶԱՏԿՈՒԱՆ ՃԱՇԸ

Մարտ 23ին, Փարիզի «Տիամանթէր» ճաշարանին մէջ «Համազգային»ի վարչականներ, անդամներ եւ համակիրներ, աւելի քան հարիւր հոգի, մասնակցեցան այլեւս աւանդական դարձած Զատկուան ճաշին: Վարչութեան ատենապետուհի Հուրիկ Պաղտասարեան անդրադառնալէ ետք Ս. Յարութեան խորհուրդին, շեշտեց Սփիւռքի հեւ ի հեւ կեանքին մէջ «Համազգային»ի պահակի դերը որուն նպատակն է լեզուին, մշակոյթին եւ աւանդութիւններու պահպանումը:

Խանդավառ մթնոլորտ մը ստեղծուեցաւ կազմակերպուած հաւկիթախաղով եւ վիճակահանութեամբ որուն տոմսերը շատ արագ սպառեցան: Բազմաթիւ արկաւոր նուէրներու գլխաւորն էր Լեւոն Պաղտասարեանի նուէր Փարիզ-Վենետիկ տոմսակը:

Ճաշի ընթացքին իրարու յաջորդեցին երգերն ու պարերը, արտասանութիւնները: ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Հրաչ Սիսեռեան գնահատելով «Համազգային»ի գործունէութիւնը, հադար եւրոյի նուէր մը ըրաւ: Մարինա Գաբրիէլեան արտասանեց Սայաթ Նովայի տաղերէն, Մկրտիչ Ոսկեան ուրախ երգերով աւելի ջերմացուց մթնոլորտը:

Ներկաները մեկնեցան ուրախ տրամադրութեամբ ու փարիզահայ կեանքին մէջ «Համազգային»ի ըստանձնած դերին կարեւորութեան անդրադարձով:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

լսեցէք բոլորդ՝
անմեղ զոհեր
սպաննուած վայրի գազաններու
նման
առանց մեղանչած ըլլալու
Աստուծոյ եւ մարդոց դէմ
յանցաւորներ՝ ծնած ըլլալով
յանցաւորներ՝ ձեր ինքնութեամբ
լսեցէք սիրելի մեծեր
լսեցէք սիրելի ծնողքներ
եւ նաեւ դուք՝ զաւակներ
վաղահասօրէն կաթէ կտրուած
կամ սպաննուած դեռ չծնած իսկ
լսեցէք բոլորդ
Ձեզ երբեք պիտի չմոռնանք»:

Վերապրած մը վկայեց: Կարդաց անունները բոլորին զորս կը ճանչնար եւ որոնք անհետացան. իր ընտանեկան պարագաներուն, բարեկամներուն, ուսուցիչներուն («անոնք ինծի ֆրանսերէն սորվեցուցին. լեզուն որով կը դիմեմ ձեզի»), դասընկերներուն... տասնեակ ու տասնեակ անուններ: Ամէն մէկուն կ'աւելցնէր քանի մը բառ, ըսելու համար թէ ո՛վ էին, իրենց ու մեր՝ ողջերուս միջեւ սերնչութեան մը ձգտելով: Զկրցաւ շարունակել, յիշողութեան եւ իր հեծեծանքին մէջ խեղդուած:

Բոլոր ներկաներն ալ յուզուած էին: Իսկ մենք՝ Հայերս, առանց այս մէկը ապրած ըլլալու, կը գտնուէինք մեզի ծանօթ պարագաներու առջեւ, ինչպէս 20ական թըւականներու վերջերուն, պատահարներէն 14 տարի ետք:

Հրեաներ (ԳՐԻՖ-ը, Ֆանսայի հրեայ ուսանողներու միութիւնը) եւ Հայեր (Վան, Համագործակցութիւն Հայաստան) եւս ներկայ էին իրենց զօրակցութիւնն ու եղբայրութիւնը արտայայտելու վերապրողներուն:

Ժամանակը անցաւ, բայց չմոռցանք: Միշտ կրնանք ճանչնալ մեր քոյրերն ու եղբայրները՝ դժբախտութեան, դիմադրութեան, արդարասիրութեան, մահացողներուն համար ու ապրողներուն արդարութեան պահանջին մէջ:

Թուրքիներն ալ գիտեն Հայերուն ապրածը: Ուրիշ վերապրող մը մեզի կ'ըսէր. «Հայերու մասին գիրքեր կը կարդամ... այդ գողգոթային...»:

Մէկը կ'ըսէր. «Ցեղասպանութիւնը բան մըն է որ չաւարտիր»:

ԼԻԼԻԱՆ ՏԱՐՕՆԵԱՆ
«Համագործակցութիւն
Հայաստան»

(թարգմանութիւն)

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց
Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

– Բաւական է, – բացագանչեց Այվազովսկին, – սթափուէ՛ք, Բոգաեւսկի: Դուք օժտուած էք անուրանալի տաղանդով: Եւ հաւատացած եմ, որ մեծ նկարիչ կը դառնաք: Բայց հարկ է, որ սիրէք կեանքը, եւ ազատուէք մեր ժամանակում մոդայիկ դարձած այդ ախտերից. այդ վաղաժամ ծերութիւնից, մըռայլ միստիցիզմից, որ այժմ ներսից կրծում է ձեր ուղեղն ու հոգին... Դժբախտաբար, այդ որդը շատ-շատերի մէջ է բոյն դրել այժմ. ե՛ւ բանաստեղծների, ե՛ւ նկարիչների: Բայց ես համոզուած եմ, որ դուք կը բուժուէք եւ դրանից յետոյ դառնօրէն կ'ափսոսաք, որ այդքան ժամանակ եւ հոգու կորով էք զուր վատնել: Այնժամ կը յիշէք, որ ես՝ ծեր նկարիչս, զգուշացրել եմ ձեզ այդ վտանգից:

Այվազովսկին վեր կացաւ: Մախոխեանն անմիջապէս նկատեց, որ Իվան Կոնստանտինովիչն իր կողքից քայլում է ծերունավարի ծանր. յանկարծ չքացաւ շարժումների այն թեթեւութիւնը, որ այնպէս զարմացնում էր նրան ծեր նկարչի մէջ: Իսկ Բոգաեւսկին քայլում էր գիշերային Թէոդոսիայի փողոցներով, մտքերի մէջ խորասուզուած, ժամանակ առ ժամանակ բարձրացնելով գլուխն ու նայելով դեղնագոյն Սատուրնին, որն արդէն բարձր թրթռում էր հորիզոնում:

Տակաւին շատ վաղուց, երբ բնակութիւն հաստատեց Թէոդոսիայում, Այվազովսկին երազում էր ժամանակի ընթացքում հայրենի քաղաքում ստեղծել յատուկ մի ուսումնարան սկսնակ նկարիչների համար: Նա նոյնիսկ այդպիսի ուսումնարանի նախագիծ մշակեց եւ ապացուցում էր, որ Ղրիմի գեղեցիկ բնութիւնը յարմարագոյն վայրն է դրա համար:

Պետերբուրգի բարեկամները պաշտպանում էին Այվազովսկու ծրագիրը: Բայց Նիկոլայ Ա. կայսրը հարկ չհամարեց միջոցներ բաց թողնել Ռուսաստանի հեռաւոր ծայրագաւառում, ինչ-որ եօթ սարերից այն կողմ, նկարչութեան դպրոց բաց անելու համար: Դժուար կը լինէր վերահսկելը, այստեղ Պետերբուրգում անգամ դժուար էր Գեղարուեստի ակադեմիային հետեւելը: Եւ անկատար մնաց Այվազովսկու նուիրական իղձը: Բայց նկարիչը չէր ընկրկում: 1865 թըւականին նա Թէոդոսիայում սեփական միջոցներով հիմնեց Գեղարուեստական արուեստանոց: Միայն ձգտում էր, որ իր սաները օգտուէին ակադեմիստների թէկուզ որոշ իրաւունքներով:

1865ի փետրուարին Գեղարուեստի ակադեմիայի կոնֆերենց – քարտուղարը Ակադեմիայի վիցեպրեզիդենտին գրում էր.

«Այժմ Թէոդոսիայում բաց անելով Գեղարուեստական արուեստանոց, Այվազովսկու նպատակն է թեթեւացնել նկարչական արուեստով պարապող այն նկարիչների գործը, որոնք կը ցանկանան օգտուել իր խորհուրդներից ու ղեկավարութիւնից: Նա յոյս է տածում, որ նման գործունէութիւնը շուտով կը տայ իր բարի արդիւնքը, քանի որ մայրաքաղաքից հեռու ծայրամասերում քիչ չեն այն տաղանդաւոր երիտասարդները, որոնք երկար ճանապարհորդութիւն կատարելու հնարաւորութիւն չունենալով, ստիպուած են լինում հրաժարուել նրանից, ինչին կոչուած են ծառայելու կեանքում: Ըդմին, Այվազովսկին, իր արուեստանոցի միջոցով մշտական կապի մէջ լինելով այն երիտասարդների հետ, որոնք ցանկանում են իրենց նուիրել գեղանըկարչութեան, հնարաւորութիւն կ'ունենայ ճշդիւ յանձնարարելու մեզ այն աշակերտներին, որոնք իրենց տաղանդով արժանի կը լինեն Ակադեմիայի օգնութեան ու խրախուսանքին:

Վերը շարադրուած հանգամանքներն ի նկատի ունենալով, Այվազովսկին ենթադրում է, որ իր գործունէութեան շրջանակները Գեղարուեստական արուեստանոցում ինչ-որ չափով համապատասխանելու են Ակադեմիայում փրոֆէսորների տարած պարապմունքներին: Արդ, նա իր համար միանգամայն գոհացուցիչ կը համարէր ծառայութեան մէջ համարուել Գեղարուեստի ակադեմիայում եւ օգտուել բոլոր այն իրաւունքներից, ինչից օգտւում են Ակադեմիայում ծառայող դասախօսները, բացառութեամբ, ի հարկէ, աշխատավարձի...»:

Այվազովսկու արուեստանոցում աշակերտները պարապում էին, – ինչպէս եւ Ակադեմիայում, – նկարչութեամբ՝ բընօրինակից եւ ապա իւղաներկով: Լաւագոյն աշակերտների աշխատանքներն ուղարկում էր Ակադեմիա՝ խրախուսանքի:

Այվազովսկու մօտ սովորել ցանկացողների եւ նրա նկարներն արտանկարողների թիւը գնալով աւելանում էր: Այն ժամանակ նա որոշեց իր տանը կից կառուցել գեղարուեստական պատկերասրահ, որտեղ մշտապէս կը ցուցադրուէին իր նըկարները: Գեղանկարչութեան իւրաքանչիւր սիրահար կը կարողանար գալ եւ տեսնել դրանք: Իսկ որ գլխաւորն է, այստեղ կը ժամանէին երիտասարդ նոր նկարիչներ, կ'աւելանար նրա սաների թիւը, եւ նա նրանց սիրով կը հաղորդէր իր գիտելիքներն ու հմտութիւնը...

...Եւ ահա արդէն տասը տարի է, ինչ գոյութիւն ունէր այդ պատկերասրահը: Նրա մասին հիմա գիտէին և խօսում էին ամէնուրեք: Ամռան ամիսներին այստեղ էին գալիս երիտասարդ նկարիչները Պետերբուրգից, Մոսկուայից, Օդեսայից: Իվան Կոնստանտինովիչը երջանիկ էր զգում իրեն, որ կը կարողանայ հաղորդել նրանց իր փորձը, որ ապրելով Պետերբուրգից հեռու, ինքը՝ գեղանկարչութեան փրոֆէսոր, կը կարողանայ նոյնքան օգտակար լինել, որքան եթէ դասաւանդէր այնտեղ՝ բուն Ակադեմիայում:

(Շար. 204)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ
ՀԱՄԱՐ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՓԱՐԻԶ.— Տոքթ. Լ. Մամճեան 100 եւրօ տուր է գնահատութիւն Թ. Արփիի «Լուսանկա՞ր ալ չունիք» Օրը օրին։

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGLISE ARMENIENNE
DE CHAVILLE

Vous invite
à
une

SOIREE - DIAPORAMA

« UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE »
par
Hrant NORSEN

Samedi 19 avril à 20h45
à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

CINE-CLUB

«Achkhar» / UGFAF

Ciné-Club
«Rouben Mamoulian»

Sous le parrainage
de Robert GUEDIGUIAN,
réalisateur

Jeudi 17 avril à 20 heures

Hommage aux victimes
du Génocide Arménien de 1915
ARCHIVES DE A. PEHLIVANIAN
&
LES QUARANTE JOURS
DE MOUSSA DAGH

Suivi d'une conférence débat
avec Claude Mutafian, historien

Film américain, 1982, 1h50, VF

D'après le roman de Franz Werfel
Un film de Sarkis Mouradian

— Entrée libre —

Directeur des programmes :
ARTO PEHLIVANIAN

P.A.F. : 5 euros — Réduit : 3 euros

UCFAF
6 Cité du Wauxhall — 75010 Paris
Métro: République

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

ՊԱՏԱՐԱԳ
1915-Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24ԻՆ,
ՅԻՇԱՏԱԿ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՆ ՄԵՐՈՑ՝
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս առթիւ ժամը 15ին, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագ եւ Հոգեհանգիստ կը մատուցուի մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակին։

ԾԱՆՕԹ.— Պետական տնօրէնութեամբ, բոլոր Հայերը (դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր եւ ուրիշներ) այսօր կրնան բացակայիլ իրենց զբաղումներէն՝ յանուն կրօնական պարտաւորութիւններուն։

Ս. ՄԵՍՐՈՊ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ

Կարէն Սիմոնեանի
«ԼՈՅՍ
ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ
ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
Գրական – Գեղարուեստական
Երեկոյթներու շարք

ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅԹ

ԳՈՀԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Հինգշաբթի, Ապրիլ 17, ժամը 20ին

Տարժապատկեր,
Դրուագներ
երգացանկէն,
Յիշողութիւններ

10 bis, rue Thouin, Paris Vème
Métro Cardinal Lemoine, Monge

Մուտքը ազատ է

MAISON ARMENIENNE
DE LA JEUNESSE
ET DE LA CULTURE
MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La M.A.J.C. et l'Association les 3A
présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
A V E D I S
A H A R O N I A N

Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.

— Entrée libre —

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Mercredi 23 avril
18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle - Etoile.
19h : Veillée des jeunes — Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem, Parvis de Notre-Dame de Paris.

Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: ● **Pour** rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915; ● **Pour** condamner le négationnisme de la Turquie en tant que stade suprême du génocide; ● **Pour** affirmer le droit des fils de survivants, deboutés et déterminés à obtenir enfin justice pour le peuple arménien. Dépôts de fleurs au pied de la statue de Komitas.
Interventions de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert Iᵉʳ - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. **Oeuvres** de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

SARCELLES

Samedi 19 avril
12 : Rassemblement devant la stèle, rue du 24 avril 1915, Centre Sportif Nelson Mandela.

CHARENTON

Vendredi 25 avril
17h30 : Dépôt de gerbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux, en présence de M. Jean-Marie Bretillon, Maire de Charenton-le-Pont et Conseiller Général du Val-de-Marne, des Membres du Conseil Municipal de la Commune, des Membres du CA de l'ACAM, des Anciens Combattants arméniens, du donateur du monument et d'autres officiels civils et religieux. — Prise de paroles, recueillement, prières.

SEVRES

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

CHAVILLE

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d'honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

(Շար. Ա. էջէն)

գիպլիլ Համասի ղեկավարին հետ եւ չէ ծածկած նոյնիսկ իր քննադատութիւնները Իսրայէլի մղած քաղաքականութեան դէմ։ Այս դիրքորոշումը պատճառ եղած է որ Օլմերթ եւ Լիվնի (վարչապետը եւ արտաքին նախարարը) մերժեն որեւէ հանդիպում։ Նախագահ Փերէսն է միայն որ ընդունած է զինքը «այն օժանդակութեան համար որ բերած է Եգիպտոսի հետ խաղաղութեան համաձայնութեան»։

ԶԻՆԳԱՊՈՒՐԻ մէջ, ընդդիմութեան ընտրական մէկ պաշտօնատարը սպաննուած է նախագահ Մուկապէի կողմնակիցներուն կողմէ։ Մթնոլորտը միշտ լարուած կը մնայ, որովհետեւ Արդարութիւնն ալ մերժած էր հրահանգել որ Մարտ 29ի նախագահական ընտրութեան արդիւնքները հրապարակուին եւ այդ գիրքը պատճառ եղած էր որ ընդդիմութիւնն ալ ընդհանուր գործադուլի հրահանգ տայ։

ՍՊԱՆԻՈՅ վարչապետին՝ Զափաթերոյի նոր կառավարութիւնը կը բաղկանայ ինը կիներէ եւ ութ այրերէ եւ գործի կ'անցնէր երդման արարողութենէ մը ետք Խուան Գարլոս Թագաւորին առջեւ, Ապրիլ 14ին։ Կին մըն է նաեւ պաշտպանութեան նախարարուհին։

ՓԻՓՓԱ ՊԱՔՔԱ խոալացի խաղաղասէր եւ բնապահ արուեստագէտը որ խաղաղական երթով մը հասած էր Թուրքիա, հոն բռնաբարուած ու սպաննուած է Գոճաէլիի մէջ։ 33 տարեկան երիտասարդուհիին ոճիրը մեծ զայրոյթ պատճառած է լայն շրջանակներու որոնք անոր մարմնին Իտալիա փոխադրութենէն առաջ ցոյցերով, հանրահաւաքներով ուխտած են շարունակել անոր խաղաղական առաքելութիւնը։

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ
ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90–ամեակին։

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ։

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին։

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէս, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 17
JEUDI
17 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·940 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 83e ANNEE — N° 21·940

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ ԼԻՍԷՆԵՐՈՒ աշակերտները 6րդ ցոյց մը ըրին Ապրիլ 15ին, բողոքի մէջ նոյն դրդապատճառով՝ վերջ տալ պաշտօնազրկումներուն: Եօթներորդ մըն ալ տեղի պէտք է ունենայ Հինգշաբթի, Ապրիլ 17ին: Ապրիլ 15ին, ցուցարարներու թիւը 20էն 50 հազար կը նըկատուէր ըստ աղբիւրներու: 2008ի վերամուտէն 11·200 պաշտօնազրկում նախատեսուած է կրթական մարզին մէջ, որոնց մէկ մասը պէտք է փոխարինուի յաւելեալ ժամերու դրութեամբ: Հակառակ տրուած բոլոր արդարացումներուն, կրթական նախարարն ալ կ'ընդունի որ անախորժ մթնոլորտ մը կը տիրէ:

ՊԱՔՈՒՊԱՅԻ ԵՒ ՌԱՄԱՏԻԻ (Իրաք) մէջ, թակարդ կառքերու միջոցաւ երկու ոճրափորձեր փորձուած են Ապրիլ 15ին եւ որոնց հետեւանքով 56 հոգի մեռած է: Կը թուի որ ալ–Քաիտայի գործն է, թէեւ ոչ ոք ստանձնած էր:

ԻՏԱԼԻՈՅ ընտրութիւններու վերջնական արդիւնքները հետեւեալ պատկերը կը պարզեն: Երեսփոխանական ժողովին մէջ, Պէրլուսքոնիի «Ազատութեան ժողովուրդը» 272 աթոռ ունի որու վրայ կ'աւելնան Հիւսիսի Լիկային 60 աթոռները, 8 աթոռ ալ ունի «Ինքնավարութեան շարժում»ը: Վելթրոնիի Դեմոկրատ կուսակցութեան կը մնայ 211 աթոռ: Ծերակոյտին մէջ, Պէրլուսքոնի ապահոված է 144 աթոռ, Հիւսիսի Լիկան 26, Վելթրոնի 116, 22 աթոռներ ալ ունին 3 փոքր կուսակցութիւններ: Ի դէպ, Պէրլուսքոնի չէ ծածկած որ «դժուար տարիներ» պիտի ապրին Իտալացիները եւ կը ծրագրէ ձեռնարկել Պետութեան արդիականացման եւ տնտեսական տագնապի բարելաւման:

ՔՐԻՍԹԻԱՆ ԷՍԹՐՈԶԻ, նախկին նախարար, այժմ Նիսի քաղաքապետ, խիստ ոճով կը քննադատէ իր կուսակցութեան՝ Իւ. ԷՄ. Փէ.ի ղեկավարութեան աշխատանքի ձեւը: Իրեն համար, ղեկավարները պէտք է ընտրուին, որովհետեւ, այժմ օրէ օր կը կտրուին շարքերէն: Ո՞ւր է, կ'ըսէ, այս ղեկավարութեան օրինաւոր բնոյթը (Փաթրիք Տեվէճեան եւ Ազգային խորհուրդի փոխ նախագահ մը՝ Ժ.-Փ. Ռաֆարէն): Լաւագոյնը կը նկատէ ընդհանուր միակ քարտուղարի մը ընտրութիւնը անդամներուն կողմէ, որու օժանդակէ գործօն մարմին մը, ան եւս վաւերացուած՝ անդամներուն կողմէ:

ՄՈՍԿՈՒԱՅԻ կեդրոնի ցուցահանդէսներու սրահին մէջ հաւաքուած նախագահական կուսակցութեան՝ «Միացեալ Ռուսաստան»ի անդամները միաձայնութեամբ ընտրեցին Վլ. Պուտինը որպէս նախագահ կուսակցութեան, ինչ որ նոր ստեղծուած պաշտօն մըն է: Այս վերջինը յայտարարած է այդ առթիւ.— «Այսօր, աւելի քան անցեալին, պէտք է որ ամրապնդենք քաղաքական ուժերը եւ մեր ժողովուրդներուն հոգեւոր միասնութիւնը»:

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ որու ազգային բիւրօն նիստ գումարած էր Ապրիլ 15ին, կրնայ կուսակցութենէն արտաքսել նախկին նախարար Միշել Շառասը, զոր «դրդիչ» մը կը նկատէ: Առայժմ կը գոհանայ կախակայումով մը, ինչպէս նաեւ Փիւի–տը–Տոմի 17 ընդհանուր խորհրդականներ: Բոլորին յանցանքն այն է որ զօրավիգ եղած էին նահանգին Ընդհանուր խորհուրդի նախագահին՝ Ժան–Իվ Կուեթպէյի, որ թեկնածու եղած էր հակառակ շրջանի ընկերվարական դաշնակցութեան տեսակէտին: Արտաքսումը կը բացառուի եթէ որոշեն այլեւս զօրավիգ չըլլալ անոր:

ԶԻՆԱՍՏԱՆ վճռած է ջօյէօքի ենթարկել Ֆրանսան, երբեւ հետեւանք Ողիմպիականի բոցին փարիզեան ողբալի տողանցքին: Ընդհանուր ձեւով կոչ կայ որ այլեւս այդ ջօյէօքին ենթարկուին Գառըֆուր, Քրիսթիան Տիոր, Լուի Վուիթոն, եւլն., եւլն.:

ՎԱՐՇԱՒԱՅԻ մէջ, Ապրիլ 15ին Լեհերն ու Հրեաները միասնաբար ոգեկոչած են Վարշաւայի կէթոյին ապստամբութեան 65րդ տարելիցը: Խօսք առած են Լեհաստանի եւ Իսրայէլի նախագահները եւ մեծարած յիշատակը այն ապստամբներուն որոնք 1943 Ապրիլ 19ին կռուած են 6·000 նացիներու դէմ, երեք շաբաթներու երկայնքին:

ԼԻՈՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑՈՒՇԱԿՈԹՈՂԸ ԱՊՕՐԻՆԻ՞ ԷՐ

Լիոնի Անթօնէն – Փօնսէ հրապարակին վրայի հայկական յուշարձանը Ֆրանսայի մէջ կանգնած նման կոթողներու ամէնէն բազմաչարչարներէն մէկը եղաւ: Ծրագիրը առաջին օրէն բախեցաւ առարկութիւններու, մերժումի արտայայտութիւններու, օրինական խոչընդոտումի փորձերու. աւարտելէ եւ 2006 Ապրիլ 24ին պաշտօնապէս բացուելէ ետք թիրախ եղաւ Թուրք ազգայնամոլ ժխտողներու բողոքի ցոյցերուն, պղծումի արարքներուն:

Նոր–նոր ալ, ըստ "20 Մինիւթ" թերթին Ապրիլ 14ի հրապարակման, յայտնի կ'ըլլայ որ անոր օրինաւորութիւնը լուրջ կասկածի տակ է: Լիոնի Վարչական ատեանը Ապրիլ 3ին այդ իմաստով վճիռ արձակած է, քննելէ ետք Պէլքուր եւ Անթօնէն–Փօնսէ հրապարակներուն պաշտպանութեան եւ պահպանութեան ընկերակցութեան եւ քաղաքապետական նախկին խորհրդական Մարի–Շանթալ Տէպգայի դիմումները. դատարանը ջնջած է կոթողին կառուցումին "ապօրինութեամբ արտօնուած" արտօնութիւնը որ տրուած էր Մեծն Լիոնի եւ նահանգապետարանին կողմէ:

Դատավարութեան ընթացքին առարկող կողմի ներկայացուցիչը շեշտած է թէ խնդրոյ առարկան Հայկական Ցեղասպանութիւնը չէ, բայց յուշարձանը կրնար այլ տեղ զետեղուիլ: Վարչարար արդարութեան նկատումը այն եղած է որ քաղաքաշինութեան մարմինները որոնք վայրին հողատարութիւնը ստանձնած են, իրաւասու չեն նման արտօնութիւ տալու, հետեւաբար անցքի յատուկ այդ գօտիին մէջ: Դատաւորները այն կարծիքը յայտնած են որ նահանգապետը պարտէր շինութեան արտօնագիր մը պահանջել:

Առեանը, այսուհանդերձ, շեշտած է թէ տրուած վճիռը անպայման պիտի չառաջնորդէ յուշակոթողին քանդումին եւ հրապարակին նախկին վիճակին վերադարձին:

Ա. ՄԵՐՔԷԼ

«ՈՎ ՈՐ ՉԻ ԳԻՏԵՐ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ԿԸ ԴԺՈՒԱՐԱՆԱՅ ԱՊԱԳԱՆ ԿԱՌՈՒՑԱՆԵԼՈՒ»

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովին Ապրիլ 15ի նիստին քննարկուած է մարդու իրաւունքներու 2007ի տարեկան զեկուցումը. զայն ներկայացուցած է Թ. Համերպերկ:

Ան առանձին աւուլիսի մը ընթացքին յայտարարած է թէ Եւրոպական խորհուրդը Երեւանէն յատուկ պատասխան կ'ակնկալէ թէ ի՛նչ է Եւրոպական խորհուրդին հետ գործակցելու տրամադրութեան բնոյթը: Ապա ըսած է թէ նոյն խորհուրդին առաջարկները ընդգրկած են Հայաստանի յետընտրական կացութեան անկախ ու անաչառ հետաքննութեան անհրաժեշտութիւնը:

Նոյն վեհաժողովին երբ Գերմանիոյ վարչապետը Ա. Մերքէլ պատուիրակներու հարցումներուն կը պատասխանէր, Հայաստանի պատուիրակութենէն Րաֆֆի Յովհաննէսեան հարց տուած է թէ որպէս հրէական Ողջակէզը ընդունած երկրի վարչապետ, ի՛նչ է Ա. Մերքէլի մօտեցումը Հայկական Ցեղասպանութեան ճանաչումին:

Գերմանիոյ վարչապետը պատասխանած է թէ կողմնակից են հարցին քննարկումին բոլոր այն երկիրներուն մէջ ուր նման ողբերգութիւններ պատահած են: «Ով որ չի գիտեր իր պատմութիւնը, կը դժուարանայ իր ապագան կառուցանելու» ըսած է Ա. Մերքէլ:

«ՃԵՐՈՒԶԱԼԷՄ ՓՈՍԹ»Ը ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Իսրայէլեան ծանօթ օրաթերթ «Ճէրուզալէմ Փոսթ»ի մէջ լոյս տեսած է «Հայկ. Ցեղասպանութեան նոր թանգարան» խորագրուած յօդուած մը, ստորագրուած՝ Մ. Հենրի: Ան յօդուածը աւարտած է հետեւեալ խորհրդածութեամբ. «Ինչպէս յամառօրէն կը պահանջենք որ Ողջակէզի հերքումին առիթ չտրուի, նոյն կեցուածքը պէտք է ունենանք ցեղասպանութիւններու պարագային: Այլապէս մենք մեզ նկուն դիրքի կը մատնենք եւ կը վընասենք մեր ունեցած բարոյական իշխանութեան: Այդ իշխանութիւնը արդիւնք է ոչ թէ Հրեաներու յիշելու պարտաւորութեան, այլ այն տուեալին որ Գերմանիա խոստովանած, ընդունած է գործած ոճիրը»:

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ ՅՈՒԼԻՍ 6-13

Յուլիս 6–13 Հայաստանի ու Արցախի մէջ տեղի կ'ունենայ Գրողներու Համահայկական Դ. Համաժողովը. կ'ակնկալուի Սփիւռքի տարբեր գաղութներէն աւելի քան եօթը տասնեակ մասնակից: Այս տարուան համաժողովը կը յանկացուի «Գրական երիտասարդական սերունդը. ԻԱ. դարի մարտահրաւէրներ» նիւթին, կ'ընդգրկուի «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնի շրջանակին մէջ:

Ձեռնարկին զուգահեռ կը կազմակերպուին գիրքի ցուցահանդէս – վաճառք, գործերու քննարկումներ, կը կատարուին հրատարակութիւններ:

Կը նախատեսուի Գրողներու Համահայկական Ե. Համաժողովը Սուրիոյ մէջ կազմակերպել, իսկ Օտարագիր հայ գրողներու յաջորդ համաժողովը՝ 2009ին ԱՄՆ–ու մէջ:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԻՒՏՃԷՆ

Ադրբեջանի 2008ի ռազմական պիւտճէն, ըստ նախագահ Ի. Ալիեւի, կ'ըլլայ 2 միլիառ տոլար: Լուրը հաղորդուած է կառավարութեան նիստին ընթացքին: Ան ըսած է թէ այդ պիւտճէն 1 միլիառ 300 միլիոն նախատեսուած էր, բայց երկրին աւելցող եկամուտները թոյլ կու տան երկու միլիառի բարձրացնել զայն:

Իր ելոյթին մէջ անդրադառնալով ղարաբաղեան հարցին կարգաւորման, Ի. Ալիեւ կրկնած է թէ իրենք Ադրբեջանի հողային ամբողջականութեան սկզբունքին հակասող որեւէ զիջում չեն ընդունիր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՊԵՏԸ

Ս. Սարգսեանի Ապրիլ 15ի յատուկ մէկ հրամանագրով պաշտօնէն ազատ արձակուած է Մաքսային վարչութեան պետ Արմէն Աւետիսեան: Առժամապէս անոր փոխանորդ կարգուած է իր տեղակալը Գագիկ Խաչատրեան:

Վարչապետ Տ. Սարգսեան իր նշանակումէն ետք առաջին յայտարարութիւններէն մէկուն ընթացքին շեշտած էր թէ ստուերային տնտեսութեան դէմ պայքարը կը սկսի այս վարչութենէն:

Սերժ Սարգսեանի նշանակումներուն կարգին հետաքրքրութեամբ կը սպասուի Սփիւռքի նախարարին անունին: Շրջող լուրեր կը նշեն Հանրապետական կուսակցութենէն Հրանոյշ Յակոբեանի հաւանականութիւնը, մինչ նախապէս նոյն պաշտօնին համար կը տրուէր ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասեանի անունը:

* * *

ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՄԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

Աղդամի շրջանի Եուսիֆճանլը գիւղին մօտ ձերբակալուած է ադրբեջանցի զինուոր մը որ կը փորձէր հայկական կողմը անցնիլ: Երիտասարդը ինքնութեան որեւէ փաստաթուղթ չէ ունեցած վրան: ԼՂՀ համապատասխան մարմինները ձեռնարկած են ադրբեջանցի զինուորին ղարաբաղեան կողմը անցնելու պատճառները պարզելու: Նոյն ատեն տեղեակ պահուած են Լեռնային Ղարաբաղի Օ.ԷՍ.ՍԷ.Ը.ի եւ միջազգային Կարմիր Խաչի դրասենեակները:

* * *

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Ապրիլ 13ին Հայաստանեայց Առաքելական եկեղեցիի երիտասարդաց կեդրոնին կազմակերպութեամբ, բարձրագոյն ուսման զանազան հաստատութիւններու շուրջ 150 ուսանողներ ուխտագնացութեան մը մասնակցած են: Անոնք այցելած են Գօշավանք, Հաղարծին. ետդարձի ճամբուն վրայ կանգ առած են Սեւանի թերակղզիին վրայ, Վազգէնեան հոգեւոր դպրանոցի սաներուն հետ հանդիպում ունեցած: Իրենց մասնակցութեամբ կատարուած է մկրտութեան արարողութիւն:

ԱՆՀԵՏԱՑՈՂ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այլ շրջաններու մէջ ինչպէս է, չենք գիտեր, բայց արժանթինահայ գաղութի մէջ նորայայտ սովորութիւն է եւ յաճախ կը տեսնուի մեր հանրային կեանքին ներս.— Նիւթական յանձնառութիւններէ խուսափումը հայ մարդուն մօտ:

Հայ մարդիկ կը դժկամակին վճարելու իրենց ազգային-եկեղեցական տուրքը, կամ բոլորովին կ՚անգիտանան զայն, յաճախ նոյնիսկ կ՚անգիտանան, որ պէտք է անդամ ըլլան համայնքային կազմակերպութեան, որպէսզի իրաւունք ունենան գործնապէս մաս կազմելու ընթացիկ գործերու յանձնաժողովին, ընտրութեանց, յանձնախումբերու, եւն.:

Անդամ ըլլալով հանդերձ այս կամ այն կազմակերպութեան եւ միութենական կեանքին մէջ լրիւ կերպով օգտագործելով այդ հանգամանքը՝ կը դանդաղին վճարելու համար իրենց անդամատուրքը, սպասելով... հերթական ընտրութիւններու պատեհութեան:

Կը դժուարանան վճարելու իրենց զաւակներու կրթաթոշակը եւ կամ ոգի ի բռին կը սակարկեն ճշդուած սակերու համար: Ուրիշ հարց, որ հայ դպրոցին սակերը երբեք գերիվեր չեն եղած օտար վարժարաններու սակերէն, հակառակ անոր որ ուսումնական իրենց մակարդակով չեն վիջիր անոնց, եթէ տակաւին աւելի գերազաս չեն: Այսօր, մեծ է թիւը այն ծնողներուն, որոնք կ՚անտեսեն հայ դպրոցը եւ իրենց զաւակներու դաստիարակութիւնը կը վստահին օտար վարժարաններուն: Կան նաեւ ուրիշներ, որոնք... շնորհք ընելու պէս կը դիջանին ընտրելու հայ դպրոցը, նիւթապէս օգտուելու ակնյայտի նպատակով:

Չեն ուզեր բաժանորդ ըլլալ հայ թերթի մը խուսափելով բաժնեգին վճարելու պարտաւորութենէն: Աւելի քան ծանօթ է պատրաստի պատրուակը... «հայերէն կարդացող չմնաց»: Այս վերջին շքմեղանքը բոլորովին անտեղի է այսօր, որովհետեւ արեւմտեան կողմն աշխարհի գրեթէ թերթ չմնաց, որ չունենայ իր յաւելուածը՝ տեղական լեզուով, յաճախ աւելի ծաւալուն՝ քան հայերէնը: (Միջին Արեւելքի մէջ եւս հայ թերթերը սկսած են ունենալ արաբերէն յաւելուածներ):

Գրեթէ մոռցուած են թերթերու մէջ լոյս տեսնող նուիրատուութիւններու երկար ցանկերը, ուրախ կամ տրտում առիթներով, ինչպէս կրթական կամ բարեսիրական ձեռնարկներու, Ամանորի կամ Ս. Յարութեան առիթներով գոնէ-դուռ կատարուող նուիրահաւաքները, եւայլն, եւայլն:

Ա՛լ չենք խօսիր հայ գրքի ճակատագրին մասին: Վիճակագրութիւն մը կա՞յ արդեօք գիտնալու համար, թէ գիրք հրատարակող հայ գրողները, պատմաբանները, մանկավարժներն ու բանաստեղծները ի՞նչ տպաքանակով հրատարակած են իրենց գրքերը, եւ քանի՞ օրինակ վաճառած՝ միլիոններ հաշուող Սփիւռքի մէջ: Նման վիճակագրութիւն մը անկասկած պիտի յանգի անվրէպ հետեւեալ եզրայանգումին. Հայ մարդը գիրք չի գներ կամ կը գնէ նուազագոյն տոկոսով:

Չերկարենք: Սփիւռքահայ մարդը նաե՛ւ այս մարզին մէջ տեղատուութեան մէջ է:

Սփիւռքեան տարեգրութեան մէջ եթէ պիտի ընդգծենք հանրային կեցուածքի մեծապէս դրական քանի մը գիծեր, անոնցմէ մէկը եւ կրնանք ըսել գլխաւորագոյններէն մէկը՝ նիւթական յանձնառութեան պատրաստակամութիւնն է (էր) հայ մարդուն մօտ, նիւթապէս զոհաբերելու բերրի հողը հայ գանգուածներու մօտ:

Եղեռնին հետեւող յաջորդական տասնամեակներուն, եթէ սփիւռքեան տարբեր գաղութներուն մէջ կեանքի կոչուեցան եւ շուտով սեփական շէնքերով իրենց կրթական առաքելութեան լծուեցան մեր վարժարանները, եթէ իրարու ետեւէ սկսան լոյս տեսնել օրաթերթեր կամ շաբաթաթերթեր, հայ տունէն ներս սփռելու համար հայկական տառը, ոգին ու շունչը, եթէ միութիւններ կամ կուսակցութիւններ սկսան իրենց շուրջ համախմբել հայ երիտասարդներն ու պատանիները, եւ յաջողեցան ոչ միայն ազգային շարժում ու ոգեւորութիւն ստեղծել օտար միջավայրերու մէջ, այլեւ ունեցան իրենց համեստ կամ արդիական հաւաքատեղիները, եւ թէ եկեղեցին եւ բազմաթիւ ու բազմաբնոյթ միութիւններ գործեցին վեր ի վարոյ բարեյաջող պայմաններով, այս բոլորը կարելի եղան շնորհիւ հայ մարդու նիւթական յանձնառութեան, նիւթապէս զոհաբերելու ինքնայատուկ առաքինութեան, զոր չենք սխալիր եթէ նկատենք իբրեւ բացառաբար հայկական հանրային բարոյական, հայ մարդու հանրային-քաղաքացիական վերաբերում:

Չենք մոռնար այն հանգամանքը, որ մեր կեանքի ներկայ համայնապատկերին մէջ մեծ է թիւը հայ բարերարներու, որոնց նիւթական ներդրումով կ՚իրագործուին կարեւոր ձեռնարկներ, ըլլայ տեղական իրենց գաղութներուն եւ ըլլայ այլ շրջաններու մէջ, ինչ որ կը բացակայէր սփիւռքեան կազմաւորումի սկզբնական շրջանին: Մեր խօսքը չի վերաբերիր նաեւ պարագայաբար կազմակերպուող ժողովրդային հանգանակութիւններուն, որոնց կը մասնակցին որոշ թիւով Հայեր:

Խօսքը կանոնական պարտաւորութեանց մասին է, համայնքի կամ միութեանց անդամավճարներու, մամուլի բաժանորդագրութեան, կամ դպրոցական կրթաթոշակներու, ազգանպաստ ձեռնարկներու, եւայլն, որոնց մէջ կաղացումն ու թերացումը՝ հայ մարդոց մօտ, կը շեշտուի հետզհետէ:

Հայ ըլլալը սկսած են բեռ նկատել ոմանք:

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

Պուէնոս Այրէս

ՄԱՐՄԱՐԱ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ի՞ՆՉ ԷՐ ԱՐԴԵՕՔ ԿՈՄԻՏԱՍԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԸ

Գիտենք որ Կոմիտաս Վարդապետ Շիշլիի «Հոփիթալ տը Լա Փէ» հիւանդանոցին մէջ որոշ շրջան մը մնալէ վերջ Ֆրանսա պիտի ղրկուի ու հոն ալ իր մնացեալ կեանքը պիտի քաշքշէ երկու հիւանդանոցներու մէջ: Կոմիտասի հիւանդութիւնը նոր ողբերգութիւն մըն էր որ կ՚իջնէր Կոմիտասի անձին ու հայ երաժշտութեան վրայ:

Բայց ճշգրիտ կերպով ու բժշկական բառագիտութեամբ ի՞նչ էր Կոմիտասին հիւանդութիւնը: Այս մասին ո՛չ մէկը բան մը գիտէր, այս մասին միշտ ալ լռութիւն պահուած էր ամէնուրեք: Կոմիտաս Վարդապետ երկար տարիներ պիտի ապրի ու յետոյ պիտի վախճանի առանց որ այս մասին գիտական յստակ տեղեկութիւններ տրուին հայ ժողովուրդին: Կոմիտասին հիւանդութիւնը խորհրդաւոր էր եւ անհասկնալի էր բազմաթիւ հոգեբոյժներու համար:

Գանատահայ ժամանակակից անուանի հոգեբոյժ Ռիթա Սուլահեան Գույումճեանն ալ մէկն էր անոնցմէ որոնք յաճախ կը հարցնէին թէ ի՞նչ էր Կոմիտասի հիւանդութեան անունը: Ան օր մը կարդաց Պարոյր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոէմը, որ նուիրուած էր Կոմիտասին ու այդ հոյակապ պոէմը կարդալէ վերջ սկսաւ հետաքրքրուիլ Կոմիտաս Վարդապետին հիւանդութեամբ: 1988ին կապ հաստատեց Փարիզի մօտերը Վիլժուիֆի հիւանդանոցին հետ, ուր 13 տարի մնացած էր Կոմիտաս: Այդ թուականին Կոմիտասին մահուան վրայէն ճիշդ 53 տարի անցած էր եւ տոքթ. Ռիթա, հիւանդանոց դիմելով հանդերձ, գրեթէ վստահ էր որ հիւանդանոցի ղեկավարութիւնը պիտի չկարենար որեւէ արձանագրութիւն գտնել Կոմիտասի մասին: Մինչդեռ սխալած էր: Նոյն տարին, երբ արդէն վեց ամիս անցած էր իր առաջին նամակին վրայէն, պատասխան մը ստացաւ փրոֆ. Կինէսթէրէն որ կը գրէր թէ Կոմիտասի թղթածրարը պահուած էր ու տոքթ. Ռիթա կրնար զայն տեսնել երբ որ փափաքէր: Այս անակնկալ պատասխանը աննկարագրելի ուրախութիւն ու զարմանք պատճառեց տոքթ. Սուլահեանին: Շաբաթ մը վերջ տոքթ. Ռիթա Փարիզ թռած էր արդէն:

Շատ մեծ յուզում մը զգաց երբ զինքը հրաւիրող փրոֆ. Կինէսթէրին սեղանին վրայ պատրաստ տեսաւ Կոմիտասին թղթածրարը: Ճիշդ է որ այդ թղթածրարին մէջ ճիշդ իր ուզածները չկային, հիւանդութեան մասին յստակ տեղեկութիւններ կը պակսէին, բայց ատոր փոխարէն հոն կային սովորական թուղթեր ու տեղեկութիւններ, հագուստներու կամ այցելուներու ցանկեր, մանր-մունր վիրաբուժական գործողութիւններու տեղեկագիրներ: Ո՛չ մէկ տեղ ճշգրիտ տուեալ մը կար հիւանդութեան ախտաճանաչման կամ գործադրուած դարմանումներուն մասին: Աւանք կրնային որոշ յուսախաբութիւն մը պատճառել տոքթ. Սուլահեանին, բայց ան այնքան ալ յուսախաբ չեղաւ, որովհետեւ այդ թղթածրարէն ճամբայ ելլելով գրի առաւ իր սքանչելի գիրքը, «Խենթութեան հնագիտութիւնը՝ Կոմիտաս» խորագրով, անգլերէն: Բժշկական տուեալներու տեսակէտէ շատ կարեւոր ու թերեւս ալ միակ գիրքն է ասիկա Կոմիտասի մասին: Տոքթ. Ռիթա Սուլահեան, Կոմիտասի հիւանդութեան դրուագներուն վրայ հակած էր Շիշլիի հիւանդանոցէն սկսեալ: Եւ մենք Կոմիտաս Վարդապետի այդ շրջանի կեանքի քուլիսներուն մէջ պտըտելու ընթացքին լայնօրէն պիտի օգտուինք տոքթ. Ռիթա Սուլահեանի այս սքանչելի ու բովանդակալից գիրքէն:

⋆ ⋆ ⋆

Շիշլիի Լա Փէ հիւանդանոցին մէջ Կոմիտաս Վարդապետին դարմանումը դրուած էր Մազհար Օսմանի պատասխանատուութեան տակ, բայց դարմանումով կը զբաղէին երկու ուրիշ բժիշկներ ալ, տոքթ. Թորգոմեան ու տոքթ. Քոնոս անուն յոյն հոգեբոյժ մը: Կոմիտաս կասկածամտութիւն ցոյց կուտար թէ՛ Մազհար Օսմանին նկատմամբ, թէ՛ իր սիրելի բախտակից ընկեր տոքթ. Թորգոմեանին նկատմամբ, բայց ատոր փոխարէն

«Ի՞ՆՉՈՒ ՉԵՍ ԼՌՈՒՄ»

Սպանիայի Թագաւոր Խուան Կառլոս Ա.ի աննախադէպ հարցը դեռեւս շարունակում է այս կամ այն առիթով գրաւել մարդկանց ուշադրութիւնը: Այս անգամ այն իր ցայտուն տեղը գտաւ Մալագայի «Արարատ» հայկական միութեան կողմից կազմակերպուած «Սուտասանը» ներկայացման մէջ: Ալբերտ Մկրտչեան տօնի կապակցութեամբ Արարատ Ղուկասեանի կողմից բեմականացուած այս հայկական հէքեաթն առաջին անգամ հանդիսատեսին հրամցուեց սպաներէն լեզուով՝ հնարաւորութիւն տալով Սպանացիներին դնահատել հայ երեխաների բեմական տաղանդը: Իսկ գնահատականը միանշանակ գերազանց էր: Այնքան մեծ էր բազմազգ հանդիսատեսի ոգեւորութիւնը, որ շատերն առաջարկեցին մասնակցել յաջորդ տարուայ Սան Վիսենթէ մրցոյթին, արդէն Վալենսիա մարզի լեզուով: Դահլիճում առանձնակի ոգեւորութիւն տիրեց այն պահին, երբ Անդրանիկը (Թագաւոր) Հայկին (Նազիր) ասում է. «Ինչո՞ւ չես լռում»:

Ազնաւուր, Անահիտը եւ Սուրէնը հերթականութեամբ իրենց սուտերն են պատմում Թագաւորին, իսկ վերջինս իր սրամիտ պատասխաններով կարողանում է յաղթող դուրս գալ «մենամարտ»երից, մինչեւ որ ասպարէզ է մտնում ամենափոքրիկը՝ Տիրանան եւ խաբում «ամենակարող արքայ»ին:

Բեմադրութեանը առանձնակի շունչ են հաղորդում պարերը՝ Վաղարշապատի, Արթիւրի, Արմանի, Աշոտի, Էլէնի, Մարիանայի եւ միւսների կատարմամբ: Այդ ժողովրդական պարերը հնարաւոր դարձան Հայաստանի Պարի պետական անսամբլի նախկին պարողներ Արթիւր Թադեւոսեանի եւ Սրբուհի Պլանջեանի քրտնաջան աշխատանքի շնորհիւ:

Մալագայի քաղաքապետարանի մշակոյթի եւ սպորտի խորհրդական Ֆերնանդօ Հերնանդեսի խօսքերով. «Նմանատիպ ներկայացում Սպանիայում դեռեւս տեղի չի ունեցել»: Բեմականացմանը ներկայ էր նաեւ բարսելոնացի գրող Խոսէ Մեմբրիվին, որը նոր գրքի հրատարակման է սպասում Հայերի մասին: Վերջինս իր հետ բերել էր Մարկ Մորթէյի «Արարատի զաւակները» վէպը, որի ներկայացմանը «Արարատ» միութիւնը պատրաստւում է Մայիսի 8ին: Իսկ մինչ այդ Ապրիլի 11-13ը միութիւնը պատրաստւում էր միութիւնների Ը. տօնավաճառին, ուր, ինչպէս եւ անցեալ տարի, կը ներկայացուի Հայաստանի հարուստ ու դարաւոր մշակոյթը:

ՆԱՐԻՆԷ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Սպանիա

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՂԵՌՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՇՐՋԱՆԻՆ

Քիչ մը մոռցուած, պատմութեան անցեալի էջերը պրպտող հետաքրքրական մատուցում մըն էր Հ. Ցարութիւն վրդ. Պզտիկեանի մշակած նիւթը, Շաբաթ Ապրիլ 12ին Սամուէլ-Մուրատեան Մշակութային կեդրոնի մեծ դահլիճին մէջ, որ բերնէ-բերան լեցուած էր որակաւոր հանդիսականներով, նախկին եւ ներկայ սաներով եւ անոնց ծնողներով:

640 Թուականին Արաբները առաջին անգամ ոտք կը կոխեն մեր երկիրը 18 հազար բանակով: Կը հասնին Դուին, կը կոտորեն 12 հազար հոգի, գերի կը տանին 5.000 երիտասարդներ եւ մանուկներ եւ կը հեռանան: Դիմադրական ուժերու առաջնորդ՝ Տիրան Մամիկոնեան կը նահատակուի պատերազմի դաշտին վրայ:

640 Թուականին կրկին կը մտնեն Շատախ, Մոկս, Վասպուրական կը գերեն եւ կոտորեն 200 հազար հոգի:

Նոյն տարին երրորդ անգամ ըլլալով կը մտնեն Աղիովիտ, Արբերանի, Կոգովիտ եւ Արարատ գաւառները, թալան, սպանդ եւ 35.000 գերիներով կը վերադառնան:

643ին Սմբատեան դաշտ հասած Արաբներուն դէմ կ'ելլէ Թէոդոր Ռշտունին երբ աւերը գործուած էր:

649ին եւ 661ին պատժական արշաւանքներով կը հասնին Հայաստանի բիւզանդական գաւառները, ահաւոր կոտորածներ կազմակերպելով եւ հազարաւոր գերիներով ողողելով Դամասկոսի եւ Եգիպտոսի շուկաները:

679ին Բառաբա արաբը իր բանակներով կրկին կ'արշաւէ աւեր սփռելով:

688ին բիւզանդական բանակներն են որ կը ներխուժեն հայկական 25 գաւառներ, մահ եւ աւեր սփռելով, կը վերադառնան 25.000 գերիներով, կարծելով ամայութիւն ստեղծել արաբական բանակներուն առջեւ...:

Արաբ տիրակալներու եւ ոստիկաններու ՄԵԾԱԳՈՅՆ ՈՃԻՐԸ կը հանդիսանայ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՒՆԵՐՈՒ ԲՆԱՋՆՋՈՒՄԸ:

Մուհամմէտ Բ. Մրուան, նոյն տարին Միջագետքէն մտնելով չի գոհանար վանքերն ու վարդապետարանները կործանելէ, հազարաւոր ձեռագիրներ այրելէ, պղծելով ամէն սրբութիւն, խաբէութեամբ իր շուրջ կը հաւաքէ նախարարական տուները եւ մէկ օրուան մէջ կը կոտորէ բոլորը եւ բիւրաւոր գերիներով կը դառնայ...:

Բանախօս վարդապետը դիտել տուաւ գործելակերպի զարմանալի նմանութիւնը 1915 Ապրիլ 24ի նախօրեակին հայ ընտրանիին ձերբակալումն ու բնաջնջումը...:

700ին 2.000 հայ ազնուականներ, շատ յստակ տեսնելով արաբ տիրակալներու ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԻ քաղաքականութիւնը, բիւզանդական բաժին կ'ապաստանին:

704ին, չորս տարի չանցած Կաշմ արաբ ոստիկանը, ամէնէն սարսափելի հարուածը կը հասցնէ մնացեալ նախարարական տուներուն, խաբէութեամբ Նախիջեւան հրաւիրելով բոլորը եւ զանոնք ողջ այրելով մայր տաճարին մէջ:

166 տարի (693–859) Հայաստան կ'ապրի արաբական տիրապետութեան սարսափը: Հայաստան կ'ունենայ 20 ոստիկան Դամասկոսի եւ Պաղտատի խալիֆաներէն նշանակուած, Դուին քաղաքը ընտրած որպէս բնակավայր: Անոնցմէ վերջին չորսը Բագրատունեաց տոհմէն էին եւ Աշոտ պիտի յաջողէր Թագաւորութեան հիմը դնել:

Արաբ ոստիկանը Թալանեց երկիրը, աշխատեցաւ բնաջնջել նախարարական տուները: Մեծ մասով կրօնական մոլեռանդութեամբ վառուած խալամներ էին, որ անլուր հալածանք եւ խստութիւններ գործադրեցին հայ ժողովուրդին վրայ. պարտադրելով դաւանափոխութիւններ, բռնի խալամացնելով գերի տարուած երիտասարդ սերունդը, անոնում ԲԻՒՐԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՎ հարստացուցին Հայ եկեղեցիին երկնակամարը. անոնց Թափած արիւնը աւելի եւս զօրացուց անոր արմատները որ քիչ յետոյ, Բագրատունեաց Թագաւորութեան հիմնադրութեամբ ցոյց պիտի տար չտեսնուած ծաղկում վանական մեծագոյն համալիրներու, վարդապետարաններու եւ համբաւաւոր, սրբակեաց եկեղեցականներու: Անոնց Թողած ժառանգութիւնը մինչեւ այսօր կը լուսաւորէ մեր ինքնութիւնը, առաջնորդ հանդիսանալով մեր կեանքը փոթորկող պարագաներուն:

Բանախօսը մաղթեց որ այս դժուարին օրերուն ալ մեր հայեացքը ուղղած պահենք մեր ընտիր նախնիքներուն, եղբայրութեան եւ սիրոյ բանաստեղծ՝ Մկրտիչ Պէշիկթաշլեանի հետ երգենք

«Տուր ինձ քու ձեռք, Եղբայր եմք մենք
Որ մըրրկաւ էինք զատուած,
Բախտին ամէն ոխ չարանենգ,
Ի մի բամբոյր ցրուին ի բաց:

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն»:

ԹՂԹԱԿԻՑ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Տրջ. վարչութիւնը քօքթէյլ մը կազմակերպած էր Շաբաթ, Ապրիլ 12ին, Փարիզի Ցրդ Թաղամասի քաղաքապետարանին մէջ: Կազմակերպութեան պատգամաւորական ժողովը պատճառ էր նաեւ որ ներկայ գտնըւին նաեւ գաւառէն եկած խաչուհիներ եւ սկիզբէն իսկ ստեղծուեցաւ ջերմ մթնոլորտ մը:

Խօսք առնելով բարի գալուստ մաղթեց տիկին Հելէն Մերճանեան, որ հակիրճ անդրադարձ մըն ալ ըրաւ Կապոյտ Խաչի 80ամեայ գործունէութեան: Ողջունեց ներկայ անձնաւորութիւնները ինչպէս Ղարաբաղի ներկայացուցիչը՝ Յովհ. Գէորգեան, Հայաստանի դեսպանութեան կողմէ Համլէթ Գասպարեան եւ այլ բազմաթիւ անձեր: Ապա, խօսքը տուաւ Համլէթ Գասպարեանի, որ դեսպանին բացակայութեան պատճառաւ, կարդաց Հայաստանէն ղրկած անոր շնորհաւորական գիրը: Պրն. Է. Նալպանտեան կ'ողջունէր Կապոյտ Խաչի 80ամեակը, շեշտելով թէ ան իր չինիչ դերը խաղացած է ազգային կեանքի մէջ եւ ֆրանսահայութեան կեանքի յաջողութիւններուն: Ցոյց տուած է նաեւ իր սէրը հայրենիքին հանդէպ, առաջին շարքերու վրայ եղած է նաեւ «Հայաստանի տարւան» ձեռնարկներու մէջ: Տիկին Մերճանեանի շնորհակալութեան խօսքէն ետք, քանի մը խօսք ալ արտասանեց ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան նախագահուհին՝ տիկին Ցամիկ Տէրտէրեան (ԱՄՆ-էն) որ իր շնորհաւորական խօսքին միացուց նոր մաղթանքներ պատրաստելու համար 100ամեակը:

Ինչպէս ըսինք, սկիզբէն իսկ ըստեղծուած էր ջերմ մթնոլորտ մը որ շարունակուեցաւ մինչեւ ուշ ատեն: Բայց, Թող Թոյլ տրուի մեզի ըսել թէ, Կապոյտ Խաչի 80ամեակին առթիւ կազմակերպուած այս քոքթէյլը ոչ մէկ ձեւով արդարացուց այդ «80ամեակին առթիւ»ը, քանի ոչ մէկ յիշատակութիւն եղաւ անցեալի իր գործունէութեան մասին, ոչ ալ ծրագրեր ներկայացուեցան նոյն տարեդարձին առթիւ: Այս կէտերը պիտի ըլլան հաւանաբար յետագային:

Ա. Մ.

տարօրինակ կերպով լեզու կը գըտնէր տօքթ. Քոնոսին հետ: Մինչ կը մերժէր խօսիլ ուրիշ բժիշկներու հետ, Կոմիտաս ժամեր շարունակ սիրով կ'ընդունէր նստիլ տօքթ. Քոնոսին դիմաց ու ամէն նիւթի մասին զրուցել անոր հետ: Կոմիտասի կենսագիրները պիտի ըսեն որ ասիկա ծնունդ կ'առնէր տօքթ. Քոնոսին էթնիք պատկանելիութենէն: Կոմիտաս կը մտածէր հաւանաբար որ Յոյներն ալ Հայերու նման տառապանքներ կ'ապրէին Օսմանեան տէրութեան հողերուն վրայ ու այս հասարակաց տառապանքը զինքը կը մօտեցնէր անոնց, այլ խօսքով՝ յոյն բժիշկի մը դիմաց ինքզինք ապահով կը զգար: Շատ զարմանալի էր որ նոյնը չէր զգար տօքթ. Թորգոմեանին նկատմամբ: Հակառակ որ Թորգոմեանին հետ էր որ տարագրուած էին Չանքըրը եւ հակառակ որ ինք ու Թորգոմեան փրկուած էին Թորգոմեանի կնոջ կողմէ կատարուած դիմումներու ու խնդրանքներու շնորհիւ, Կոմիտաս կը վախնար Թորգոմեանէն: Ասիկա արդէն բնական չէր ու կը մատնէր Կոմիտասի հիւանդ հոգեվիճակը: Աւելի վերջ, 1919ին, Թորգոմեանին կողմէ Արշակ Չօպանեանին գրուած նամակի մը մէջ պիտի կարդանք որ Կոմիտաս բոլորին մէջ, բոլոր զինքը դարմանողներուն մէջ, մասնաւորաբար Թորգոմեանի անձին մէջ թշնամիներ կը տեսնէր:

Ռ. Հ.

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Պետերբուրգից ժամանած ուսանողների ամառային պարապմունքներին փոխարինելու են գալիս ձմրան օրերը, երբ պատկերասրահը լցւում է գիմնազիստներով եւ նկարչութեան այլեւայլ սիրահարներով: Այստեղ յատկապէս մարդաշատ է այն օրերին, երբ Սիմֆերոպոլից, Եալթայից, Սեւաստոպոլից, եւ Ղրիմի այլ վայրերից գալիս են նկարիչներ, գալիս են արտանկարելու նրա կտաւները: Ահա այսօր էլ պատկերասրահում նեղուածք է անթիւ-անհամար նկարակալներից: Այվազովսկին քայլում է նրանց միջով, դիտում, օգնում խորհուրդներով, երբեմն ձեռքն է առնում վրձինն ու ուղղում: Իսկ յետոյ, երբ մութն ընկնում է եւ ստիպուած են ընդհատել աշխատանքը, նկարիչները շրջապատում են Իվան Կոստանտինովիչին, եւ սկսւում է աշխոյժ խօսք ու զրոյցը նկարների արտանկարման արուեստի, գեղանկարչութեան տեխնիկայի մասին:

Մախոխեանը, ուրիշների հետ միասին այդ օրը արտանկարելով Այվազովսկու «Ալուպկան», յանկարծ հարցրեց.

– Ուսուցիչ, քանի՞ նկար էք ստեղծել ձեր կեանքի ընթացքում:

– Ինքս էլ չգիտեմ, – պատասխանեց նկարիչը:

– Միթէ՞ ցուցակ չէք պահում:

– Չեմ պահում, երբեք չեմ ունեցել: Մի՞թէ բանը քանակն է, – աւելացրեց նա ժպտալով: – Ճիշդ է, իմ նկարների թիւը մեծ է, նոյնիսկ շատ մեծ, համեմատած նրա հետ, ինչ սովորաբար ստեղծում են ուրիշ նկարիչներ: Ես միշտ զարմացել եմ եւ երբեք չեմ կարողացել հասկանալ, թէ ինչպէս է, որ շատ նկարիչներ, մարդիկ ովքեր օժտուած են անվիճելի շնորհով, կարող են երբեմն շաբաթներով մի կողմ թողնել սկսուած նկարը, պատճառաբանելով որ սպասում են ներշնչման, որպէսզի շարունակեն: Դա ինձ համար անհասկանալի է, եւ ես յաճախ այդ աններելի անգործութիւնն ուզում եմ բացատրել եռանդի, կամքի պակասով կամ պարզապէս ծուլութեամբ:

– Բայց, իրօք, ինչպէ՞ս նկարել, երբ ներշնչանք չկայ: Չկա՛յ, եւ վերջ: Ցամաք ջրհորից հօ ջուր չե՞ս քաշի, – փորձեց առարկել աշակերտներից մէկը:

– Մեր արուեստում, որի պտուղներն, ինչպէս ընդհանրապէս բոլոր ընագաւառներում, կարելի է քաղել միայն յամառ աշխատանքով, կարեւորն այն է, որ բաց չթողնես ինքդ քեզ... Մէկ այլ մասնագիտութեան մարդկանց հետ համեմատած, նկարիչն ամէնից հեշտութեամբ բաց կը թողնի իրեն, ասելով թէ՝ «տրամադիր չէ նկարելու» կամ «ներշնչում չկայ»: Ես պէտք է ասեմ, որ այդ ասացուածքն այնքանով է վտանգաւոր, որ դրանից կառչելով նկարիչները յաճախ իրենք իրենց թիւրիմացութեան մէջ են գցում եւ երկար ժամանակ պարապ մնում: Ինքնախաբէութեան պէս մի բան: Ամբողջ հարցն այն է, որ նախ եւ առաջ ինքդ քեզ սովորեցնես աշխատանքի, պէտք է հասնել նրան, որ աշխատանքի արտաքին, ֆիզիքական կողմը նկարչի համար ամենափոքր իսկ խոչընդոտ չհանդիսանայ: Եւ հաւատացէք ինձ, որ իսկական օժտուածութիւնը, բնածին տաղանդը միշտ նիւթ կը գտնի: Իսկ ցամաք ջրհորի հետ ձեր համեմատութիւնը, ներեցէք արտայայտութեանս համար, տրամաբանութեան ապարդիւն ճիգ է, որը ոչ մի ընդհանուր բան չունի արուեստի հետ: Եւ իրօք, եթէ դու պարապ ջրհոր ես, կը նշանակի ամենեւին էլ ջրհոր չես, այլ խղճուկ մի փոս, հողի մէջ փորուած մի ծակ, կամ նման մի բան, եւ բնաւ երբեք՝ ջրհոր. զուլալ ջրի շտեմարան, որ սընունդ է առնում ներքին անկասելի, մըշտահոս շիթերից:

– Դուք վաղո՞ւց էք այդ կարծիքին, թէ աստիճանաբար էք հասել դրան:

– Այն ինչ ասացի հիմա, իմ դաւանանքն է եղել ողջ կեանքիս ընթացքում, սկսած վաղ պատանեկութիւնից: Ի հարկէ, սկզբում աւելի շատ տարերայնօրէն էի զգում այդ բանը, քան գիտակցում, բայց յետոյ, ժամանակի ընթացքում գնալով աւելի ու աւելի համոզուեցի դրա ճշմարտութեան մէջ: Ասենք, գուցէ եւ դա կախուած է իմ աշխատանքի ձեւից, իմ նկարելակերպից: Նախ եւ առաջ ես երբեք գործի չեմ անցնում առանց որոշակի, բոլոր մանրամասներով նախապէս մշակուած սիւժէի՝ լոյսի, կոլորիտի իր բոլոր պարագաներով հանդերձ: Այս կամ այն գործը նկարելիս, ես ոչ թէ այն ստեղծում եմ կտաւի վրայ, այլ միայն հնարաւոր ճշգրտութեամբ վերարտադրում այն, ինչ մինչ այդ ներկայացել է իմ երեւակայութեան մէջ եւ արդէն պատրաստ կանգնած է աչքերիս դէմ: Իմ նկարների ստեղծմանը որպէս կանոն, ձեռքերից ու երեւակայութիւնից բացի, մասնակցում է նաեւ իմ գեղարուեստական յիշողութիւնը: Յաճախ ես կարողանում եմ զարմանալի յստակութեամբ յիշել այն, ինչ տեսել եմ տասնըեակ տարիներ առաջ եւ դրա համար շատ դէպքերում Սուդակի ժայռերն իմ նկարներում լուսաւորուած են արեւի հէնց այն ճառագայթներով, որ խլւում էին Սորենթոյի աշտարակներին:

(Շար. 205)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Խաչիկ Թէօլէօլեան 100 տոլար կը նուիրէ «Յառաջ»ին իր հօր՝ Մինաս Թէօլէօլեանի (1997 Ապրիլ 18) եւ մօր՝ Գոհար Թէօլէօլեանի (2006 Ապրիլ 11) մահուան տարելիցներու յիշատակին։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Գուրգ. Օտտոյի «Լէօլա Սասունի» մասնաճիւղի ընկերուհիները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն իրենց ատենապետուհիին՝ Ռոզ-Մարի Սահակեանին, իր եղբօր՝ Սահակ Սահակեանի մահուան առթիւ։ Նոյն տխուր առթիւ ցաւակցութիւններ կը յայտնեն նաեւ Այրի Տիկին Վելոյեանի, Տէր եւ Տիկին Արսէն Տէրտէրեանի եւ զաւակներուն, իրենց եղբօր եւ մօրեղբօր մահուան առթիւ։

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE MARSEILLE

12-14, rue St-Bazile — 13001 Marseille
Tél. : 04. 91. 50. 15. 09

Métro / Tram : Réformés

La M.A.J.C. et l'Association les 3A présentent
une soirée poétique
SUR LE CHEMIN DE LA LIBERTE
Hommage à
AVEDIS AHARONIAN

Vendredi 18 avril à 20 heures 30
à la M.A.J.C.
— Entrée libre —

LA COMMISSION CULTURELLE DE L'EGLISE ARMENIENNE DE CHAVILLE

Vous invite
à
une

SOIREE - DIAPORAMA

« UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE »
par
Hrant NORSEN

Samedi 19 avril à 20h45
à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

ԱԶԳ. ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստի մը տէր է եւ կ'ուզէ ճոխացնել զայն։ Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին։ Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները յաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին։

Հեռ. _ 01·53·79·80·69

Իմակ. _ mikael.nichanian@bnf.fr

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՊԱՏԱՐԱԳ 1915-Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24ԻՆ,
ՅԻՇԱՏԱԿ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՆ ՄԵՐՈՑ՝
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս առթիւ ժամը 15ին, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագ եւ Հոգեհանգիստ կը մատուցուի մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակին։

ԾԱՆՕԹ. _ Պետական տնօրէնութեամբ, բոլոր Հայերը (դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր եւ ուրիշներ) այսօր կրնան բացակայիլ իրենց զբաղումներէն՝ յանուն կրօնական պարտաւորութիւններուն։

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

Հ Ր Ա Ւ Է Ր
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ա Ն
Ժ Ո Ղ Ո Վ Ի

2006 / 2007 թթ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին

Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի Ա. Զրբաշեան սրահին մէջ

339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը։

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը։

Ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈԳԷՐ ԱՋԻԼԱՋԵԱՆ

Հոգեւոր Հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

_ ԿԻՐԱԿԻ, ԱՊՐԻԼ 20, ժամը 20·30ին
ՄԵՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ,
1894–1925 *ՏԱՐԻՆԵՐՈՒՆ*
Մարսէյլի Հայ կաթողիկէ ժողովրդապետութիւն, (26 ռիւ Սիպիէ, 13001)։

_ ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. _ Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։
դասախօս՝ Հ. Ե. ՊՋՏԻԿԵԱՆ

_ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20·30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր)։

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Mercredi 23 avril
18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle - Etoile.
19h : Veillée des jeunes — Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem, Parvis de Notre-Dame de Paris.
Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: ● Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915; **● Pour** condamner le négationnisme de la Turquie en tant que stade suprême du génocide; **● Pour** affirmer le droit des fils de survivants, debouts et déterminés à obtenir enfin justice pour le peuple arménien.
Dépôts de fleurs au pied de la statue de Komitas.
Interventions de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert Iᵉʳ - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. **Oeuvres** de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

ALFORTVILLE

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

ARNOUVILLE-LES-GONESSE

Dimanche 27 avril
10h30 : Départ du Square d'Estienne d'Orves (face au stade Léo Lagrange) en direction du Cimetière avec recueillement devant la stèle du groupe Manouchian;
11h : Cérémonie du souvenir au Monument aux Morts — Cimetière d'Arnouville (dépôt de gerbes, minute de silence et discours)
11h30 : Messe à l'Eglise Sainte-Croix de Varak, rue Saint-Just;
12h15 : Messe de requiem devant le Khatchkar situé dans le jardin de l'Eglise Sainte-Croix en présence des drapeaux;
12h30 : Marche en direction de la stèle commémorant le Génocide, située à l'angle des rues Jean-Jaurès et Saint-Just. Dépôt de gerbes, minute de silence, prière et discours.

SARCELLES

Samedi 19 avril
12 : Rassemblement devant la stèle, rue du 24 avril 1915, Centre Sportif Nelson Mandela.

CHARENTON

Vendredi 25 avril
17h30 : Dépôt de gerbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux, en présence de M. Jean-Marie Bretillon, Maire de Charenton-le-Pont et Conseiller Général du Val-de-Marne, des Membres du Conseil Municipal de la Commune, des Membres du CA de l'ACAM, des Anciens Combattants arméniens, du donateur du monument et d'autres officiels civils et religieux. — Prise de paroles, recueillement, prières.

SEVRES

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

CHAVILLE

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d'honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 18
VENDREDI
18 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83րդ ՏԱՐԻ – Թիւ 21·941

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21·941

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԳԻԾԵՐԸ

Նախագահ Ս. Սարգսեան Ապրիլ 16ին արտաքին գործերու նախարարութեան ղեկավար կազմին ներկայացուցած է նոր նշանակուած նախարար Էտուար Նալպանտեանը: Այդ առիթով կարեւոր ելոյթ մը ունեցած է, ամփոփելով արտաքին քաղաքականութեան իր կողմէ նշուած մայր գիծերը: Նախ շեշտած է զուգադիպութիւնը որով նոյն օրուան հրամանագրերով նշանակուեցան արտաքին գործերու եւ պաշտպանութեան նախարարները: Ըսած է թէ ինք կը հաւատայ որ ամէն երկրի դիւանագէտ, յատկապէս Հայաստանի պարագային, նաեւ իր երկրին զինուորն է, սպան, զօրավարը: Որպէս այդ նոյն պատասխանատուութիւնը կը կրէ երկրին սահմաններուն անառիկութեան, ապահովութեան առումով:

Ս. Սարգսեան ապա շնորհակալութիւն յայտնած է նախորդ նախարար Վ. Օսկանեանին որ այդ դժուարին պաշտօնը վարեց տասը տարի, բարձր որակներով ներկայացուց Հայաստանը աշխարհին: «Պարոն Օսկանեանի աւանդը մեր պետութեան կառուցման գործում անուրանալի է» ըսած է նախագահը, յոյս յայտնելով որ ան իր հարուստ փորձառութեամբ, ճշմարիտ քաղաքացիական կեցուածքով կը շարունակէ հայրենանուէր իր գործունէութիւնը:

Ինչ կը վերաբերի արտաքին քաղաքականութեան մայր գիծերուն, Ս. Սարգսեան շեշտած է փոխլրացման սկզբունքին կարեւորութիւնը, միջազգային շրջանակներու մէջ Հայաստանի ընդգրկումին համար պէտք է միջազգային բարենպաստ պայմաններ ստեղծուին եւ Ադրբեջան հարկ է միանգամընդմիշտ ընկալէ պարզ այն իրողութիւնը թէ Լեռնային Ղարաբաղի անկախ հանրապետութեան գոյութեան փաստը անդառնալի է: Անկարելի է նոյնիսկ երեւակայել Ադրբեջանի ենթակայութեան որեւէ ձեւ: «Այսպէս թէ այնպէս, Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան ժողովուրդը նուաճել է ազատ եւ անկախ ապրելու իրաւունքը: Եւ մեր ջանքերով այդ իրաւունքը պէտք է ճանաչուի միջազգային հանրութեան կողմից» ըսած է Ս. Սարգսեան:

Արտաքին քաղաքականութեան առջադոյն խնդիրներէն համարած է բարեկամ երկիրներու հետ տնտեսական, մարդասիրական, տեղեկատուական կապերու հզօրացումը, Հայաստանի մշակութային ժառանգութեան արժանի մակարդակով ներկայացումը արտերկրի մէջ:

Սփիւռքի հետ աշխատանքը կարեւորագոյն նշանակութիւն ունի Ս. Սարգսեանի հայեցողութեամբ: Հայապահպանումը ամէնէն առաջ Հայաստանի հանրապետութեան գործն է եւ ներկայի իշխանութիւնը պիտի ըլլայ այդ քաղաքականութեան նախաձեռնողն ու պատասխանատուն:

Ս. Սարգսեանի գլխաւորած վարչակազմին օրակարգին վրայ պիտի շարունակէ մնալ Ցեղասպանութեան միջազգային ճանաչումի եւ դատապարտումի խնդիրը:

* * *

ԵՐԵՔ ՆԱԽԱՐԱՐ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՈՒԱԾ

Նախագահի մամուլի գրասենեակը տեղեկացուցած է թէ հրաժարած կառավարութեան կազմէն երեք նախարարներ կը պահուին իրենց պաշտօններուն վրայ: Նախագահ Ս. Սարգսեան Ապրիլ 16ի հրամանագրերով վերահաստատած է գիւղատնտեսութեան նախարար Դաւիթ Լոքեանը, արդարութեան նախարար Գէորգ Դանիէլեանը եւ մարզական եւ երիտասարդութեան հարցերու նախարար Արմէն Գրիգորեանը: Այս երեքէն առաջինը ՀՅԴ–էն է, երկրորդը Հանրապետական, իսկ երրորդը Բարգաւաճ Հայաստանէն:

Գիւղատնտեսութեան նախարար Դ. Լոքեանին տրուած է նաեւ գիւղատնտեսութեան ազգային ծրագիրը համակարգելու լիազօրութիւն:

* * *

ԼՂՀ

ԱՐԹԻՒՐ ՄԿՐՏՉԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒԱԾ

Ապրիլ 14ին, ՀՅԴ Ստեփանակերտի «Արթիւր Մկրտչեան» կոմիտէութեան անդամներուն կողմէ ոգեկոչուած է ԼՂՀ Գերագոյն խորհուրդի առաջին նախագահ Ա. Մկրտչեանի յիշատակը, անոր մահուան 16րդ տարելիցին առթիւ: Իրենց միացած են զինակիցներ, մտերիմներ, հարազատներ, որոնք ծաղիկներ զետեղած են անոր յուշարձանին: Ոգեկոչումին մասնակցած են պետական դէմքեր, ինչպէս՝ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլեան, նախարար Գ. Պետրոսեան:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ հերթական հանդիպումին, Ապրիլ 16ին, նախագահ Սարքոզի խիստ ոճով յանդիմանած է իր նախարարները, վերջին շաբաթներու ձախաւեր արտայայտութիւններուն պատճառաւ: Անկարգապահ նախարարները կրնան ճամբու դրուիլ: Ծանօթ է որ զանազան կենսական հարցերու շուրջ (Օ.Ժ.Է.ԽՄ., բազմանդամ ընտանիքներ, Ողիմպիական, ակնոց) նոյն օրուան մէջ որոշումներ հաղորդուեցան, որոնք քիչ ետք հերքուեցան: Սարքոզի կարգապահութիւն կը պահանջէ այլապէս կը պաշտօնազրկէ: Այս մարզին մէջ, ծանօթ է նախկին նախարար՝ Շըվէնըմանի խօսքը՝ «նախարար մը կա՛մ կը լռէ կա՛մ կը հրաժարի», ինչ որ ենթական ալ ըրաւ Ծոցի պատերազմի օրերուն, երբ Պաշտպանութեան նախարար էր: Սարքոզի նաեւ հաղորդակցութեան ճիւղին մէջ իր մէկ բարեկամը նշանակած է, կարգ ու կանոնը պահպանելու համար:

ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐՔՈԶԻԻ յանդիմանութեան օրն իսկ, ձախաւեր նոր գործ մը եւս տեսնուեցաւ, երբ Մոնտ (Ապրիլ 16) կը հաղորդէր որ, Մայիս 1էն ընտանեկան նպաստները նուազում պիտի արձանագրեն, այլ խօսքով նախկին երկու յաւելումները 11 եւ 16 տարեկան զաւակներու համար պիտի սահմանափակուին մէկ յաւելումի 14 տարեկանին, ինչ որ 130 միլիոն եւրոյի խնայողութիւն մը կ'ապահովէ: Կառավարութեան բանբերը կը հերքէր լուրը, որ քիչ ետք կը հաստատուէր նոր ձարտուքի մը պատկերը պարզելով:

«ՄՈՆՏ» օրաթերթը, շաբթուան մէջ երկրորդ անգամ ըլլալով, լոյս չտեսաւ Հինգշաբթի օր (Ապրիլ 18ի թիւ): Աշխատաւորները նոր ընդհանուր ժողով մը գումարած էին Ապրիլ 16ին եւ ղեկավարութեան նախագահին՝ Էրիք Ֆոթորինոյի ներկայացուցած ծրագիրը չէ համոզած, քանի անոնց գլխաւոր բողոքը կը վերաբերի 130 պաշտօնազրկումներու: Նոր բանակցութիւններու պահանջ կայ, աշխատաւորները կ'ուզեն որ պաշտօնազրկումները կամաւոր ըլլան եւ պարբերականներու պարագան ալ չփոխուի:

ՄՈՍՔՈՎԻՉԻԻ ՑԵՂԱՊԱՇՏ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆԸ ՏԷՎԷՃԵԱՆԻ ԴԷՄ

Երկուշաբթի, Ապրիլ 14ին, ընկերվարական երեսփոխան՝ Փիէր Մոսքովիչի չէ վարանած ցեղապաշտ արտայայտութիւններ ունենալու Փաթրիք Տէվէճեանի դէմ անոր Հայ ըլլալուն վերագրելով Թուրքիոյ անդամակցութեան մերժումը: Ան ըսած է Տէվէճեանի հասցէին.– «Վարուելակերպ մը, յարձակողական ընթացք մը ունի որ ամէն չափ կ'անցնի: Եւ ինչո՞ւ, որովհետեւ Հայ է, Հայոց ցեղասպանութեան ճանաչումը կ'ուզէ: Ես ալ կողմնակից եմ, չեմ ընդունիր Թուրքիոյ անդամակցութիւնը, եթէ չճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը: Բայց, ատիկա պատճառ չէ որ հանրաքուէի միջոցաւ արգելք մը ըլլայ: Գայթակղեցուցիչ է»: Մոսքովիչի գոհ է որ Սարքոզի միտքը փոխած է այս ուղղութեամբ:

Ինչ կը վերաբերի Իւ.ԷՄ.Փէ.–ին, անոր բանբերը՝ Տամինիք Փայ կուսակցութեան վրդովումը արտայայտած է Մոսքովիչիի ցեղապաշտ մատնանշումին համար: Բանբերը շեշտած է որ «Մոսքովիչի ոչ միայն անընդունելի անհանդուրժողութիւն մը ցուցաբերած է, այլեւ չափը անցուցած է ցեղապաշտ անձնական մատնանշումով մը, ինչ որ կը կարծէինք թէ վերջ գտած է վերջնականապէս քաղաքական արտայայտութիւններու մէջ»:

ԼԻՈՆԻ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ ՀԱՐՑՈՎ

Ցեղասպանութեան Լիոնի յուշակոթողին օրինաւորութեան հարցը որ յանգած էր դատական վճիռի մը, վրդոված է հայ համայնքը: Վարկաբեկումի զգացում կը տիրէ հայկական շրջանակներուն, նոյնիսկ երբ առաջին օրէն ըսուեցաւ թէ կոթողին քանդումը խնդրոյ առարկայ չէ:

Կոթողին կառուցման ընկերակցութեան նախագահը Ժիւլ Մարտիրոսեան բացատրած է թէ դատաւորներուն պահանջածը կացութեան կանոնաւորում մըն է: Արդէն կառուցումի արտօնութիւն անհրաժեշտ չէր, քանի որ կոթողը 5 քառ. մեթրէն աւելի մեծ չէր: Այսուհանդերձ դատարանին կողմէ այդ արտօնութեան պահանջը օրէնքի տարարնոյթ ընթերցումին արդիւնք է: Անոր մէջ անտեսուած է 2007 Հոկտ. 1ի բարեփոխումն ալ որ արձանները, յուշակոթողները, արուեստի գործերը զերծ կը կացուցանէ կառուցումի արտօնութեան պարտաւորութենէն:

Ժ. Մարտիրոսեան կ'ապահովցնէ թէ կոթողը քանդելու հարց չկայ: Ըլլալիքը կանոնաւորում մըն է: Սակայն, անընդունելի կը նկատէ հայ համայնքին ուղղուած դատընթացային այս յամառութիւնը. զայն կը նկատէ դատարան դիմողներու օտարատեաց կեցուածքին արտայայտութիւնը:

ԱԴՐԲԵՋԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱԿԱՀԱՅ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Ազգային ժողովը կը պատրաստուի յառաջիկայ օրերուն յայտարարութիւն մը հրապարակել կորսուած տարածքներուն մասին, ըստ նոյն ժողովի նախագահ Օ. Ասատովի: Ապրիլ 15ի նիստին ան ըսած է թէ Երեւանի ադրբեջանական հող ըլլալուն եւ Հայաստանի տրուելուն մասին նախագահ Ալիեւի արտայայտութիւնը Ազգային ժողովին մէջ քննարկուած ու այդ նիւթով զբաղելու համար յատուկ յանձնաժողով մը կազմուած է:

Երեսփոխան մը առաջարկած է Բաքուի կեդրոնական պողոտաներէն մէկը մկրտել «Իրեւան» ու հոն ցուցատախտակ մը զետեղել, բացատրելու համար որ Հայաստանի մայրաքաղաքը ադրբեջանական հող էր եւ տրուած՝ Հայերուն:

Երկրորդ առաջարկ կ մըն ալ ըրած է Գանձայի Նոր Երեւան թաղին գիւղաքաղաքի կարգավիճակ տալու: Թաղը հիմնուեր է 1905ին, «Արեւմտեան ադրբեջան»էն գաղթածներու կողմէ: Յետոյ, 1918ին, 1948ին եւ 1988ին «Հայաստանէն աքսորուած» Ադրբեջանցիներն ալ հոն բնակութիւն հաստատեր են: Եթէ թաղը գիւղաքաղաք դառնայ, հոն յուշակոթող մըն ալ պիտի կանգնեն «Հայաստանէն աքսորուած»ներուն յիշատակին:

Ազգային ժողովի նոյն նիստին «Մայր հայրենիք» կուսակցութեան նախագահը շեշտած է թէ Հայաստան տեղի ունեցածները եւ երկրին նոր ղեկավարութեան Ղարաբաղի հարցին մէջ կեցուածքը վրդովումի պատճառ են: Ֆ. Աղամալը համոզուած է թէ Ս. Սարգսեանի վարչախումբը անկարելի պիտի դարձնէ խնդրին խաղաղարար լուծումը: Իսկ Ադրբեջան ուշ կամ կանուխ պէտք է պատրաստուի իր հողերուն վերատիրանալու համար պատերազմական տարբերակին:

Նոյն երեսփոխանը խօսած է նաեւ Արեւմտեան Ադրբեջանի պատմական կոթողներուն «քանդումին» մասին ու որպէս կարեւոր ընելիք, առաջարկած է ցանկագրել այդ կոթողները...

Ուրիշ երեսփոխաններ շեշտած են թէ Հայաստան վերջին շրջանին շատ յարձակունակ դարձած է եւ ատոր պատճառներէն մէկը միջազգային կազմակերպութիւններու մէջ Բաքուի աշխոյժ գործունէութիւնն է. իսկ բուն պատճառը ժողովուրդին ուշադրութիւնը երկրին ներքին քաղաքականութեան զարգացումներէն այլ կողմ կեդրոնացնել է:

ԱՐԱՄ Ա.-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը Ապրիլ 8ին Պարսելոնայի մէջ հանդիպում մը ունեցած է Իրանի նախկին նախագահ Այաթոլլա Խաթամիի հետ: Տեսակցութեան նիւթ եղած են Լիբանանի կացութիւնը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Իրանի յարաբերութիւնները եւ Իրանի հայութեան առնչուած հարցեր:

Կը նախատեսուի նոր հանդիպումներ կազմակերպել Իրանի եւ նոյն կաթողիկոսութեան միջեւ: Թէ՛ Արամ Ա., թէ՛ Այաթոլլա Խաթամի շեշտած են ներկայի աշխարհին մէջ միջկրօնական երկխօսութեան կարեւորութիւնը:

ԴՈՒՐՍԸ՝ ԿԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՋ

ՃԱՆՆԻ ՌՈՏԱՐԻ (*)

Հանգստեան կոչուած կայարանապետ Պարոն Անթոնիօ որդի մը ունի, ունի հարս մը, Անթոնիօ անունով թոռնիկ մը ունի, որուն Նինօ կ'ըսեն, ունի Տանիէլա անունով թոռնուհի մը, սակայն իրեն մտիկ ընող մէկն իսկ չունի:

— Կը յիշեմ որ, կը սկսի պատմել, Փօճիպոնզի փոխկայարանապետ եղած ատենս...

— Հայրիկ, խօսքը կը կտրէ որդին, կը հաճի՞ք ձգել որ լրագիրս կարդամ հանգարտ: Սա Վենեցուէլայի կառավարութեան մէջ անցած դարձածը շատ մտահոգիչ է:

Պարոն Անթոնիօ հարսին կը դառնայ ու ծայրէն կը սկսի.

— Կը յիշեմ որ Կալարաթէի մէջ կայարանապետին օգնականը եղած ատենս...

— Հայրիկ, մեղմօրէն կը յանդիմանէ տիկին հարսը. ինչո՞ւ չէք ուզեր քիչիկ մը օդ առնել մինչ ես տախտակ կը շփեմ: Նայեցէք. մեղրամոմով կը շփեմ որպէս զի աղուոր մը փայլի:

Նինօ Թոռնիկին հետ ալ պրն. Անթոնիօյի բախտը չի ժպտիր: Մանչը պէտք է կարդայ Սատանան Սաղաջէլին դէմ շունչը բռնել տուող գիրքը որ արգիլուած է տասնեւութ տարի չբոլորածներուն: Նինօ տասնըվեց իսկ չկայ:

Մեծ հօրը յոյսը Տանիէլա Թոռնիկին կը մնայ, որուն երբեմն թող կու տայ երկաթուղայինի իր փեգոյրը գլուխը դնել արկած-արկած խաղալու համար՝ քառասունըեօթը մեռեալներով ու հարիւրքսան վիրաւորներով: Սակայն Տանիէլան ալ խիստ զբաղած է այս պահուն: Կ'ըսէ.— Մեծ հայրիկ, ուշադրութիւնս չշեղես: Մանկական հաղորդում մը կը դիտեմ որ շատ ուսանելի է:

Հազիւ եօթը տարու՝ այդչափ ուսումնատենչ է: Պրն. Անթոնիօ կը հառաչէ. այն տունը քառասուն տարուան վաստակին տէր Պետական երկաթուղիին հանգստեան կոչուած պաշտօնեային տեղը չէ: Ա՛լ կը բաւէ քաշած նուաստացումս: Կ'երթամ ուրիշ բնակելու, կատուներու մէջ:

Եւ իրաւ, առտուն տունէն կ'ելլէ ըսելով որ կ'երթայ լոթօ խաղալու, սակայն կը քալէ դէպի Փիացցա Արճենթինա ուր հնամեայ Հռոմի փլատակներուն մէջ կը սլքտան կատուները: Սանդուխն ի վար կ'իջնէ, կը մագլցի պարիսպին վրայ որ կատուներուն թագաւորութիւնը կը բաժնէ ինքնաշարժերու կալուածէն ու կը դառնայ կատու մը: Խնամքով կը լզէ թաթերը որպէսզի մարդոց ոտքի փոշիէն խել մը իսկ չմնայ վրանին: Այդ միջոցին քոսոտ կատու մը կը մօտենայ իրեն ու պիշ պիշ կը զննէ: Վերջապէս կը հարցնէ.

— Ներող կ'ըլլաք, դուք պրն. Անթոնիօն չէ՞ք:

— Ձեմ ուզեր այդ անունով յիշուիլ: Առաջուան պաշտօնս ձգած եմ:

— Հասկնալի է: Գիտէք, ես ալ հանգստեան կոչուած ուսուցչուհի մըն եմ: Բնակած եմ ձեր տան ճիշդ դիմաց: Զիս տեսած կ'ըլլաք: Կամ թերեւս քոյրս կը ճանչնաք:

— Տեսած եմ: Միշտ դեղձանիկներու մասին կը վիճաբանէիք:

— Ճիշդ: Ու այդչափ մեծ էր այդ վէճերուն տաղտուկը, որ վճռած եմ հոս գալ՝ կատուներու մէջ ապրելու:

Պրն. Անթոնիօ զարմացած է: Զինք միակը կը կարծէր այդ գեղեցիկ գաղափարը յղացող: Մինչդեռ հետզհետէ կը պարզուի թէ Փիացցա Արճենթինայի կատուներուն հազիւ կէսը հօրմէ-մօրմէ կատու էին, մինչ միւսները մարդիկ էին. մարդկային կեանքէն քաշուած ու կատու դարձած: Կայ աղբահաւաք մը, ծերանոցէն փախած: Տիկիններ կան որ դառնացած էին իրենց աղախիններէն: Դատաւոր մըն ալ կայ. ամուսնացած, զաւակներու տէր, բնակած՝ զոյգ պէտքարաններով օժտուած ըստասենեակ յարկաբաժինի մը մէջ: Մէկը չէր գիտեր թէ ինչո՛ւ եկած էր: Մեծամիտ հովեր չունի, սակայն երբ կատուներուն մայրիկները՝ բարեսիրտ կնիկները, դոյլերով կը բերեն ձուկի գլուխ, խոզապուխտի կտրուանք, դդմաճի աւելցուք, պանիրի կեղեւ ու հաւու ոսկոր՝ համեստօրէն կ'առնէ իր բաժինը ու կը քաշուի առանձին ճաշելու տաճարին ամէնէն բարձր աստիճանին վրայ:

Հօրմէ-մօրմէ կատուները չեն նախանձիր կատու դարձած մարդոց, այլ հաւասարէ հաւասար կը վարուին հետերնին: Սակայն իրենց մէջ կը փսփսան. մեր միտքէն պիտի անցնէ՞ր մարդու զաւակ մարդ դառնալ երբ խոզապուխտը կրակի գին է շուկային վրայ:

— Մեր կազմած շրջանակը շատ համակրելի է, կ'ըսէ ուսուցչուհի կատուն: Այս իրիկուն աստղագիտութեան նիւթով դասախօսութիւն մը կայ: Կու գա՞ք:

— Հարկա՛ւ: Աստղագիտութիւնը շատ կը սիրեմ: Կը յիշեմ երբ որ Քասթիլիոն տէլ Լակօ կայարանապետ էի, խուցիս մէջ հեռադիտակ մը դրած էի՝ երկու հարիւր աստիճանով աղին-անդին դարձող: Գիշերանց Երեւակին ծիրը ու Լուսընթագին փամփուշտներու պէս շարան շարան արբանեակները կը դիտէի եւ Անդրոմեդէի միգամածութիւնը որ կոյսի մը կը նմանի:

Կատուներէն շատերը կը մօտենան մտիկ ընելու: Ջէ՞ որ կայարանապետի մը ներկայութիւնը չեն վայելած մինչեւ հիմա: Հետաքրքիր էին աւելի շատ գիտնալու կառաշարերու մասին, կը հարցնէին թէ ինչո՛ւ երկրորդ կարգի լուացարաններուն մէջ միշտ օճառը կը պակսի եւ ուրիշ բաներ: Իսկ ժամը հասնելուն պէս, երբ երկինքին մէջ աստղերը կը յըստակին, ուսուցչուհի կատուն իր դասախօսութեան կը սկսի:

— Նայեցէք, կ'ըսէ. Այդ համաստեղութիւնը Մեծ Արջ կը կոչուի: Իսկ անդին միւսը Փոքր Արջն է: Ինծի հետեւելով սապէս դարձէք ու պիտի տեսնէք Փիացցա Արճենթինայի միւս կողմը Օձը:

— Կարծես կենդանաբանական պարտէզը ըլլայինք, կ'ըսէ նախկին աղբահաւաքը:

— Այնուհետեւ դիտեցէք Այծեղջիւրը, Խոյը եւ Կարիճը,

— Իսկապէ՛ս, կը հիանայ մէկը:

— Իսկ անդին Համաստեղութիւնը Շուն է:

— Կատարեալ խենթանոց, կը մռմռջեն հօրմէ-մօրմէ կատուները: Ամէնէն շատ քրթմնջողը կը կոչուէր Կարմիր Աւազակը: Ոչ թէ գոյնին համար, վասն զի ոտքէ գլուխ սպիտակ էր, այլ բախտախնդիր նկարագրին համար:

Քիչ մըն ետքը Կարմիր Աւազակը կը հարցնէ. իսկ Կատու կոչուող համաստեղութիւն մը կա՞յ արդեօք:

— Ջկայ կը պատասխանէ ուսուցչուհին:

— Իսկ գոնէ ա՞ստղ մը, հոգ չէ թէ պճլիկ:

— Ան ալ չկայ:

— Ասոնց նայեցէք. շուներուն ու խոզերուն աստղեր ձօնած են, իսկ կատուներուս՝ ոչինչ: Հրաշալի՛, կ'ըսէ Կարմիր Աւազակը:

Բողոքի մլաւիւնները կը լսուին: Կատու ուսուցչուհին ձայնը կը բարձրացնէ աստղագէտները պաշտպանելու համար:

— Իրենց ընելիքը գիտեն, կ'ըսէ. ամէն մէկը իր գործին թող նայի: Եւ եթէ երկնաքար մը իսկ Կատուի անունով չէ կոչուած, հաւանաբար ծանրակշիռ պատճառներ կան:

— Ջուկի պոչ մը չարժող պատճառներ, կը հակադարձէ Կարմիր Աւազակը,— Դո՛ւն դատաւոր, ի՞նչ կ'ըսես:

Դատաւորը կը ճշդէ թէ պաշտօնը լքած է եւ մտադիր չէ որեւէ վճիռ արձակելու: Սակայն այս անգամ աննշան զանցառութիւն մը կրնայ ըլլայ:

— Վճիռս հետեւեալն է, կ'ըսէ. աստղագէտները սեւ հողը մտնեն:

Որոտաձայն ծափեր: Ուսուցչուհի կատուն իր զղջումը կը յայտնէ փաստերու հանդէպ յայտնած հիացումին համար: Եւ կը խոստանայ ընթացքը փոխել: Ժողովը կը վճռէ բողոքի ցոյց մը կազմակերպել: Ուղերձներ յղել Հռոմի բոլոր կատուներուն, Թորիի, արուարձաններու, Սան Գամիլլոյի, սպանդանոցին շուրջի կատուներուն, հիւանդանոցի պատուհաններէն նետուելիք պատառին սպասող կատուներուն, որպէսզի հասկնան, թէ ինչ նուաստացուցիչ բան է մուրալը: Հանդիպակաց գետեզերքին խառնածին թափառականներուն: Միջին դասակարգի կատուներուն, որպէս զի միանան՝ պահիկ մը մոռնալով համեղ յօշած փորոտիքը, փետուրով լեցուած բարձերուն փափկութիւնը եւ վզին կապուած երիզները: Ժամադրավայրը Կոլոսէոնն է, կէսգիշերին:

— Հիանալի՛ է, կ'ըսէ կատու պրն. Անթոնիօ, Կոլոսէոնը այցելած եմ իբրեւ զբօսաշրջիկ, իբրեւ ուխտաւոր ու իբրեւ թոշակաւոր: Սակայն իբրեւ կատու տակաւին չեմ այցելած: Աննախընթաց փորձառութիւն մը կը սպասէ ինծի:

Առտու, երբ դէպի Կոլոսէոն կը ժողվուին ինքնաշարժով ու հետիոտն Ամերիկացիները, հանրակառքով ու շարժանիւով Գերմանացիները, ուսապարկով Զուիցերացիները, ճափոնական լուսանկարի գործիքներով միլանցիները եւ գոքանչներով Ապրուցցօ գաւառին բնակիչները, կը պարզուի որ կատուներէն պաշարուած Կոլոսէոնը անմատչելի է: Պաշարուած էին մուտքերն ու ելքը, մրցահարթակը, աստիճանաթոռները, սիւներուն ոտքերն ու կամարները: Կարմիր Աւազակին տուած նշանին վրայ ուսուցչուհիին եւ պրն. Անթոնիօյին գծած պաստառը կը պարզուի որ կ'ըսէ. «Կոլոսէոնը պաշարուած է: Կը պահանջենք Կատու անունով աստղ մը»: Զբօսաշրջիկները, ուխտաւորներն ու անցորդները (որոնք իրենց տեղը գամուելով կը դադրէին անցորդ ըլլալէ, ոգեւորութեամբ կը ծափահարեն): Ալֆոնսօ Կաթթօ (իտալ. Կատու, Ծ.Թ.) բանաստեղծը ճառ մը կ'արտասանէ: Ներկաներէն շատերը ճառին իմաստը չեն ըմբռներ, սակայն շատ բնական կը գտնեն, որ եթէ բանաստեղծի մը անունը Կատու կրնայ ըլլալ, ուրեմն աստղ մը առաւել եւս կրնայ այդպէս կոչուիլ: Մեծ ու գեղեցիկ տօն մը կ'ըլլայ: Կոլոսէոնէն ճամբորդներ կը մեկնին Փարիզ, Մոսկուա, Լոնտոն, Նիւ Եորք, Փէքին ու Մոնթէփորցիօ Քաթոնէ գիւղը: Շարժումը կը սկսի աշխարհով մէկ ծաւալիլ.

Կը վճռուի պաշարել Էյֆէլի աշտարակը, Պիկ Պէնը, Մոսկուայի Միջնաբերդը, Ըմփայր Սթէյթ Պիլտինկը, Ջինաստանի Երկնային տաճարին հրապարակը եւ Լաթինիի ծխախոտավաճառին կրպակը, մէկ խօսքով՝ աշխարհիս ամէնէն նշանաւոր տեղերը: Ամբողջ մոլորակին կատուները ամէն լեզուով պահանջագիր մը պիտի ներկայացնեն աստղագէտներուն, որ օր մը օրանց, աւելի ճիշդ՝ գիշեր մը գիշերանց աստղ մըն ալ շողայ երկնակամարին վրայ՝ Կատու անունով:

Լուրերուն սպասելով Հռոմի կատուները տեղերնին կը դառնան: Պրն. Անթոնիօ եւ ուսուցչուհին ալ հանդարտօրէն կը քալեն դէպի Փիացցա Արճենթինա, քննարկելով կատարելիք պաշարումներուն ծրագիրները:

— Ինչ լաւ կ'ըլլար, կ'ըսէ ուսուցչուհին, որ Սբ. Պետրոս տաճարին գմբէթը պոչը տնկած կատուներով ծածկուէր:

— Իսկ ի՞նչ կ'ըսես, կ'աւելցնէ ուսուցչուհին եթէ պաշարենք Ողիմպիական մարզադաշտը ճիշդ Հռոմի ազգային խումբին խաղալու օրը:

Պրն. Անթոնիօ բերանը կը բանայ «հիանալի կ'ըլլայ» ըսելու, սակայն բացականչութիւնը շուրթերուն վրայ կը մնայ վասն զի ականջին կը հասնի.

— Մեծ հայրի՛կ:

Ո՞վ է, ո՞վ կ'ըլլայ արդեօք: Տանիէլան է, որ դպրոցին աստիճաններէն իջնելով կը ճանչնայ զինք: Պրն. Անթոնիօ, կատուի իր դերին բաւական ընտելացած, չլսել կը ձեւանայ: Սակայն Տանիէլա կը պնդէ.

— Մեծ հայրիկ, ինչո՞ւ կատուներուն գացեր ես, չարաճճի: Օրն ի բուն կը փնտռենք քեզ ամէն տեղ: Իսկոյն տունը դարձիր:

— Աղուորիկ աղջնակ մըն է, կ'ըսէ կատու ուսուցչուհին: Ո՞ր դասարանն է: Գիրը մաքո՞ւր է: Եղունգները խնամքով կը կտրէ՞: Յուսամ պէտքարանին դուռին վրայ անպատկառութիւններ գրած չունի:

— Ջէ շատ ուշիմ ու բարի է, կը պատասխանէ պրն. Անթոնիօ շփոթահար, երբ միասին տեղ մը երթայինք, ինքն էր որ գիս կարմիր լոյսին կը կեցնէր:

— Հասկցայ, կ'ըսէ ուսուցչուհին, ես ալ երթամ քրոջս աչք մը նետեմ: Զըլլայ թէ յօդացաւէն բռնուի ու մինակը չկարենայ կօշիկը ոտքը անցընել:

— Եկուր տեսնեմ մեծ հայրիկ, կը հրահանգէ Տանիէլա: Շուրջի մարդիկ չեն զարմանար որ աղջնակ մը կատուին մեծ հայրիկ ըսէ: Զարմա-

(*) ՃԱՆՆԻ ՌՈՏԱՐԻ (1920 - 1980)

Ուսուցիչ, լրագրող ու կարկառուն մանկագիր: Հեղինակ բազմաթիւ հատորիկներու: « La grammatica della fantasia » մենագրութեան մէջ ամփոփած է թէ՛ մանկագրի իր հաւատամքը, թէ՛ մանկավարժի իր պատգամները, մնալով խնդուն եւ առկայծ՝ ամէնէն ծանրակշիռ նիւթերուն ալ մէջ: Ակամայ կը զարմանաս թէ արգաւանդ երեւակայութեան տէր այս գրագէտը ինչպէս կրցած էր յարիլ նախ ֆաշական, իսկ այնուհետեւ՝ համայնավար կուսակցութեան, որդեգրելով հակոտնեայ զոյգ վարդապետութիւններ որոնք կը զլատեն ամէն թռիչք ու վերելք:

Ծ. Թ. (Ճիաննի ձեւը սխալ պիտի ըլլար. իտալերէնի մէջ «g»էն ետք «i» գիրը «ճ» հնչիւնը կը շինէ միմիայն՝ առանց յաւելեալ վանկ մը կազմելու):

Ե. Լ.

նալի ոչինչ կայ ատոր մէջ. չէ՞ որ կատուներուն մարդու անուն կը դնեն երբեմն:

Տուն մտածին պէս պրն. Անթոնիօ իր սիրած բազկաթոռին կը ցատքէ եւ ականջները եռանդով կը շարժէ իբրեւ բարեւի նշան:

— Տեսա՞ք, գոհունակութեամբ կ'ըսէ Տանիէլա, մեծ հայրիկն է:

— Իրաւունք ունիս, կը հաստատէ Նինօ, ան ալ ականջները կրնար շարժել:

— Աղէկ, կ'ըսեն ծնողքը քիչ մը շուարուն, իսկ հիմա սեղանին շուրջը նստեցէք: Լուացոյն պատառները կատու մեծ հօրը առջեւը կը դրուին: Ալ միսը, ալ կաթիկը, ալ կրկնեփները, ալ գդալները, ալ համբոյրները: Թաթերը կը շօշափեն, որպէս զի սուր ճանկերը ցցէ: Գորովանքով գլուխը կը քերեն: Ասեղնագործ բարձի մը վրայ կը պառկեցնեն: Ցաչած տախտակներով պէտքարան մը կը շինեն:

Ճաշէն ետք մեծ հայրը պատշգամը կ'ելլէ: Հանդիպակաց պատշգամին վրայ կեցած է ուսուցչուհին՝ աչքը դեղձանիկներուն:

— Ինչպէ՞ս է հիմա, կը հարցնէ պրն. Անթոնիօ:

—Վարդ ու ծաղիկ կը շաղէ ոտքիս տակ, կը պատասխանէ դիմացինը: Պապին վայել պատիւներ կ'ընծայէ ինծի քոյրս: Լուսահոգի մայրիկնուս վերմակը տուաւ ինծի, որուն առաջ նայելու իսկ իրաւունք չունէի:

— Սակայն ինքզինքդ ճանչցուցա՞ծ ես:

— Ատ էր պակաս: Աններելի սխալ մը պիտի ըլլար: Շիտակ խենթանոց պիտի ճամբէ զիս. չես ճանչնար քոյրիկս:

- Իսկ ես երկու մտքի վրայ եմ, կը խոստովանի պրն. Անթոնիօ: Տանիէլա շատ կը փափաքի որ նորէն մեծ հայրիկ դառնամ: Միւսներն ալ հոգի կու տան ինծի:

— Խելքդ սիրեմ: Ոտքովդ դրախտ հանիս որպէսզի ե՞տ դառնաս: Աղուոր մը մտմտա՛ առաջ, Չըլլա՛յ եաքը զղջաս:

— Բոլորովին մտամոլոր եմ, ինչ ընեմ, վիճա՞կ ձգեմ, կ'ըսէ պրն. Անթոնիօ: Սիրտս ալ կ'այրի, կ'ուզեմ սանկ հաստկէկ ծխագլան մը վառել:

Եւ կ'ուղղուի շիտակ դէպի փիացցա Արճենթինա, երկաթէ ցանկապատին վրայէն կը ցատքէ եւ կը դառնայ տարէց պարոն մը որ ծխագլան մը վառելու համար կանգ առած է: Սրտի տրոփինով երբ տունը կը դառնայ, Տանիէլա զինք տեսնելով ուրախութենէն կ'ոստնու: Հանդիպակաց պատշգամէն ուսուցչուհի կատուն աչք կ'ընէ իրեն, սակայն քիթին տակէն կը մրթմրթայ. «Խելքդ սիրեմ»:

Վերջինիս քոյրն ալ պատշգամին վրայ կեցած է, կը նայի կատուին գորովալից նայուածքով, սակայն մտքին մէջ կ'ըսէ. չարժեր որ վրադ այդչափ սիրտս հատցնեմ, Չըլլայ սատկիս, ու վիշտը արեան գերճընշում պատճառէ ինծի:

Այնուհետեւ Ֆիորիի կատուները կ'արթննան ու մուկ որսալու կ'ելլեն: Փիացցա Արճենթինայի կատուները ճաշի աւելցուքները բերող բարեսիրտ կիներուն կը սպասեն: Սան Գամիլլոյի կատուները կը խռնուին նրբանցքներուն մէջ, հիւանդանոցի պատուհաններուն տակ ու յոյսը կը փայփայեն որ ճաշը համով Չըլլայ ու պատուհանէն դուրս նետուի, մայրապետին աչքէն հեռու: Իսկ Թափառական կատուներէն՝ նախապէս մարդիկ եղածները կը յիշեն, որ առենօք կը վարէին կառաշարերը, հաստոցները կը դարձնէին, կը մեքենագրէին, գեղեցիկ էին, սիրած էին ու սիրուած:

Իտալերէնէ թարգմանեց՝

ԵՆՈՎՔ ԼԱԶԵԱՆ

ԵՐԱԶԱՅԻՆ ԳՈՒՊԱՆ

Ա.Մ.Ն.-ու Ֆլորիտա թերակղզիին հարաւը մեծ կղզի մըն է Գուպան՝ 115.000 քառ. քմ. տարածութեամբ եւ շուրջ 12 միլիոն բնակչութեամբ: Նախկին սպանական այս գաղութը անկախ դարձաւ 1849ին: Բնակչութեան հիմնական մասը գաղթային օրերէն մնացած Սպանացիներն են, սեւամորթներ եւ այս երկուքին խառնուրդէն յառաջ եկած խառնածինները: Պետական ու ժողովրդական լեզուն սպաներէնն է: Քսաներորդ դարու բ. կէսին Գուպան թատր հանդիսացաւ քաղաքացիական արիւնալի պատերազմի մը, տապալելու համար բռնատէր Պաթիսթան. վերջացաւ Ֆիտէլ Գասթրոյի եւ իր զինակից Չէ Կեվարայի գլխաւորած համայնավար յեղափոխութեան յաղթանակով: Չէ Կեվարան արժանթինցի բժիշկ մարքսիստ մը ըլլալով, Գուպայի յեղափոխութեան յաջողութենէն յետոյ ուղեւորուեցաւ Հարաւային Ամերիկա՝ հոն եւս համայնավար յեղափոխութիւն կազմակերպելու համար, եւ հոն ալ սպաննուեցաւ: Գուպայի յեղափոխութեան աւարտին, 1959էն ի վեր, իշխանութեան գլուխը կը մնայ Ֆիտէլ Գասթրօն, արդէն 83 տարեկան, վատառողջ վիճակին պատճառով վերջերս իշխանութիւնը փոխանցեց կրտսեր եղբօր Ռաուլին՝ մինչեւ որ նոր ղեկավար մը ընտրուի:

Բնականաբար, Գուպայի համայնավարացումը մարսելի իրականութիւն մը չէր իր հզօր դրացիին՝ Ա.Մ.Նահանգներուն համար, որ տնտեսական ու քաղաքական ճնշումներով եւ նաեւ զինուորական միջամտութեամբ փորձեցին իրենց ենթարկել Գուպան: Թշնամական այս վարմունքին դիմաց Գուպա օգնութեան դիմեց Խորհրդային միութեան, որ փութաց հրթիռներու պաշտպանութեան ցանց մը հաստատել հոն, ինչ որ Մ. Նահանգներուն համար, իր ապահովութեան սպառնալիք նկատուեցաւ եւ որուն հետեւանքով ամերիկեան ռազմանաւերը ծովային պաշարման տակ առին Գուպան: 1960ին ստեղծուած այս կացութիւնը պայթուցիկ վիճակ մը առաւ, մարդկութիւնը դնելով համաշխարհային պատերազմի մը արհաւիրքին առջեւ: Ահա այդ պահուն է որ Խորհ. միութեան նախագահ Անաստաս Միկոյեան առաքելութիւն ստացաւ այս վտանգաւոր կացութեան առաջքը առնելու՝ երթեւեկելով Հաւանայի եւ Ուաշինկթընի միջեւ: Այդ առթիւ է որ ստեղծուեցաւ քաղաքականութեան արուեստին մէջ գործածուող «մագոգի դիւանագիտութիւն» գործելակերպը՝ բնորոշելու համար Միկոյեանի ոճը, որ Հաւանայի եւ Ուաշինկթընի միջեւ բազմաթիւ երթեւեկներով յաջողեցաւ քակել «գորթեան հանգոյցը», համաձայնութիւն գոյացնելով որ Խորհրդային միութիւն քանդէ իր հաստատած հրթիռներու ցանցը, իսկ Մ. Նահանգներ վերցնեն իրենց պաշարման օղակը, միաժամանակ, խոստանալով յարգել Գուպայի անկախութիւնը: Այժմ, Գուպայի մէջ կը տիրէ համայնավար վարչաձեւը, Խորհ. միութեան փոխարէն զօրակցութիւնը վայելելով Չինաստանի:

Գուպան հարուստ է հանքերով եւ երկրագործական արտադրութիւններով: Հանքերու զանազան տեսակներուն մէջ գլխաւորներն են երկաթն ու նիքելը: Իսկ երկրագործական արտադրութիւններուն մէջ շաքարեղէգը, ծխախոտը, բամպակը, Գուպան աշխարհահռչակ կը դարձնեն: Շաքարեղէգէն ստացուած ռոմը և ծխախոտէն պատրաստուած սիկառները համաշխարհային համբաւ ունին: Այս բոլորը հարուստ եկամուտ կ'ապահովեն Գուպային, բայց, գուցէ, մեծագոյն եկամուտը կ'ունենայ զբօսաշրջութենէն: Աշխարհի բոլոր կողմերէն միլիոնաւոր զբօսաշրջիկներ Գուպա կը խուժեն, վայելելու համար անոր հաճելի կլիման, գեղեցիկ բնութիւնը եւ հմայիչ ծովն ու ծովափները: Հիմնական երկու բառով կարելի է բնորոշել Գուպան՝ գեղեցկութիւն ու մաքրութիւն: Գեղեցկութիւնը եթէ բնութեան պարգեւն է, մաքրութիւնը մարդու գործն է, Այո՛, ակներեւ է Գուպայի մաքրութիւնը: Մեր կեցութեան վայրը Վարատերօ քաղաքն էր, ուր մաքրութիւն կը տիրէր ներքին փողոցներէն մինչեւ ծովափ:

Ուտող, խմող, երգող ու պարող ժողովուրդ է Գուպացին: Գուպայական երաժշտութիւնը օդին մէջն է անդադար: Մեր հիւրանոցէն մինչեւ ծովափ երկարող շուրջ 300 մեթր ճամբուն վրայ բազմաթիւ ըմպարաններ (պառ) ու ճաշարաններ կան: Աշխարհի բոլոր ըմպելիներու կողքին տիրապետողն է տեղական ռոմը, որ հիմնական բաղադրամասն է շատ մը քոքթէյլներու, որոնց գլխաւորն է Հեմինկուէյը: Ինչպէս ըսի, աշխարհի բոլոր կողմերէն եկող զբօսաշրջիկները կը վայելեն այդ բոլորը, բացի դրկից ամերիկացի ժողովուրդէն, որուն արգիլուած է Գուպա այցելել: Անիրաւ եւ անզօր փորձ մըն է Գուպան տնտեսապէս ընկճելու համար որուն հետեւանքով ամերիկացի ժողովուրդն է որ կը զրկուի հրաշալի արձակուրդներու հաճոյքներէն:

Մէկ շաբթուան մեր անմոռանալի կեցութեան ընթացքին օր մը տրամադրեցինք Գուպայի մայրաքաղաք Հաւանա այցելութեան. օթոպիւսով շուրջ երկու ժամ տեւեց: Հաւանան մեծ եւ արդիական քաղաք մըն մըն է. հարուստ՝ տեսարժան վայրերով ու թանգարաններով, որոնցմէ ոմանց այցելելիք մեր ժամանակին թոյլատրած չափով: Ինծի համար ամէնէն հետաքրքրական վայրը մեծ գրողին բնակած պանդոկն էր եւ այն սրճարանը՝ ուր ան ժամանց կը կատարէր, ըմպելով այդ համեղ ըմպելին, որ իր անունով մկրտուեցաւ: Գուպան իրաւամբ հպարտ է ամերիկածին իր հարազատով, որուն ապրելու նախասիրած վայրը եղաւ. ի վերջոյ, որսորդի անոր բնազդը զինք առաջնորդեց Քենիա, ուր Սպանիոյ քաղաքացիական պատերազմին մասնակցութեան ընթացքին ստացած իր վէրքերուն ցաւերով տառապեցաւ առանց դարմանի եւ վերադառնալով իր ծննդավայրը՝ Այտահօ, ի վերջոյ անձնասպան եղաւ:

Մեր վայելած հաճոյքներուն գլխաւորը ծովն էր անշուշտ: Ծով՝ որ խենթ ու խելառ Ատլանտեան ովկէանոսն է, որ Գուպայի ափերուն վերածուած է խելօք եւ անսահման ջրաւազանի մը, որուն յատակը ծածկուած է մաքուր եւ նուրբ աւազով եւ որուն վրայ կրնաս քալել աւելի քան հարիւր մեթր, կուրծքդ ջուրը պահած:

Վերջապէս ի՞նչ գրեմ տակաւին. գուպայական արձակուրդին պարգեւած ո՛ր մէկ հաճոյքը թուեմ: Կը խորհիմ թէ ամէնէն ճիշդը պիտի ըլլար թելադրել որ անձամբ ապրիք այդ փորձառութիւնը:

Եթէ հաճելի ու առողջարար արձակուրդ մը կ'ուզէք անցընել, այցելեցէք Գուպա:

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Մոնրէալ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Թէոդոսիայի ափերին, ջուրը խելայեղօրէն չորս կողմ ցայտեցնելով, լափին է տալիս հէնց նոյն այն ալիքը, որով ես բախտ եմ ունեցել հիանալու Սկիւտարի տան պատշգամբից: Իմ գեղարուեստական նկարելակերպի այդ իւրայատկութեամբ էլ պիտի բացատրել այն արագութիւնը, որով ես ստեղծում եմ իմ նկարները: Երեւակայութեան մէջ ստեղծելով լիովին աւարտուն տեսարանը, ես, ինչպէս յաճախ նկատած կը լինէք, պատշգամբում նստած թղթի կտորի վրայ ուրուագծում եմ ուղեղումս արդէն լրիւ պատրաստ նկարը: Եւ դա անում եմ աւելի շատ նրա՛ համար, որպէսզի ճիշդ պատկերացնեմ չափսերը, հեռանկարն ու միւս մանրամասնութիւնները, որ պէտք է պահպանել նկարում: Եւ միայն յաջորդ օրն առաւօտեան ձեռնամուխ եմ լինում բուն գործին: Այն ժամանակ արդէն ոչ միայն չեմ ընդհատում իմ աշխատանքը, այլեւ չեմ հեռանում նկարից այնքան ժամանակ, մինչեւ վերջնականապէս չաւարտեմ:

— Ուսուցի՛չ, Տրետիակովեան պատկերասրահում ես բախտ ունեցայ տեսնելու ձեր «Ծովը փոթորկից յետոյ» սեպիանկարը, եւ ինձ յատկապէս զարմանք պատճառեց այն վարպետութիւնը, որով վերստեղծուած են ափամերձ ժայռերն ու քարքարոտ ափը: Եթէ թոյլ կը տաք յայտնել նկարչի իմ կարծիքը, ապա կ'ասեմ, որ ջրաներկի տեխնիկայում էլ դուք մեծ յաջողութիւնների էք հասել... Դուք այժմ էլ նկարո՞ւմ էք ջրաներկով, — հարցրեց Մախոխեանը:

— Ջրաներկով, բարեկամս, ես բաւականաչափ գործեր ունեմ ստեղծած, յատկապէս վերջին տարիներին: Երիտասարդ ժամանակ ես սեպիան՝ դարչնագոյնը, փորձում էի ներդաշնակել նէյտրալտինի եւ ինդիգոյի հետ: Եւ հազուադէպ էի դիմում աւելի լայն ներկապնակի, միայն թեթեւակի գունաւորում էի մատիտանկարները: Այդ կարգի նկարներից յիշում եմ իմ մի փոքր ջրաներկ աշխատանք, որի վրայ աշխատել եմ ամբողջ հոգով՝ «Նէապոլիտանական ծովածոցը եւ ափին կանգնած մի խումբ Իտալացիներ»: Բայց նկարը չգոհացրեց ինձ, շատ շատ խայտաբղէտ ու մի տեսակ անհոգի թուաց... Յիշում եմ, այն ժամանակ անմիջապէս ետ կանգնեցի ջրաներկից եւ յետագայում սկսեցի նկարել գրեթէ բացառապէս դարչնագոյնով: «Ծովը փոթորկից յետոյ», որ ձեզ դուր է եկել, ես նոյնպէս համարում եմ իմ յաջողութիւններից եւ դրա համար այն նուիրեցի Պաւէլ Միխայլովիչին: Ջրաներկով աշխատելիս ես նօսրացած գոյներով նկարում եմ երկինքը, հազիւ նկատելի դարձնում ամպերը, շատ թեթեւ ձեռք եմ տալիս ջրերին եւ ընդհակառակը, ամենաթանձր մութ գոյներով նկարում եմ կտաւի առաջին պլանը, ապա անցնում երկրորդ պլանին: Հէնց այսպիսի եղանակով էլ ես ստեղծել եմ իմ միւս ջրաներկ աշխատանքները: Բայց, աղնուօրէն ասած, ես այնուամենայնիւ նախընտրում եմ իւղաներկը...

(Շար. 206)

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Mercredi 23 avril
18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle - Etoile.
19h : Veillée des jeunes — Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem, Parvis de Notre-Dame de Paris.
Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: ● Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915: **Interventions** de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert Ier - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. Oeuvres de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

ALFORTVILLE

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

ARNOUVILLE-LES-GONESSE

Dimanche 27 avril
10h30 : Départ du Square d'Estienne d'Orves (face au stade Léo Lagrange) en direction du Cimetière avec recueillement devant la stèle du groupe Manouchian;
11h : Cérémonie du souvenir au Monument aux Morts — Cimetière d'Arnouville (dépôt de gerbes, minute de silence et discours)
11h30 : Messe à l'Eglise Sainte-Croix de Varak, rue Saint-Just;
12h15 : Messe de requiem devant le Khatchkar situé dans le jardin de l'Eglise Sainte-Croix en présence des drapeaux;
12h30 : Marche en direction de la stèle commémorant le Génocide, située à l'angle des rues Jean-Jaurès et Saint-Just. Dépôt de gerbes, minute de silence, prière et discours.

CHARENTON

Vendredi 25 avril
17h30 : Dépôt de gerbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux, en présence de M. Jean-Marie Bretillon, Maire de Charenton-le-Pont et Conseiller Général du Val-de-Marne, des Membres du Conseil Municipal de la Commune, des Membres du CA de l'ACAM, des Anciens Combattants arméniens, du donateur du monument et d'autres officiels civils et religieux. — Prise de paroles, recueillement, prières.

LIVRY-GARGAN

Samedi 26 avril
16h : Hommage aux victimes du génocide, au Parc Lefèvre, devant la stèle du souvenir, RN3 - avenue du Consul-Général-Nordling.

SEVRES

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

CHAVILLE

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d'honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

ՊԱՏԱՐԱԳ
1915-Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24ԻՆ,
ՅԻՇԱՏԱԿ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՆ ՄԵՐՈՑ՝
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս առթիւ ժամը 15ին, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագ եւ Հոգեհանգիստ կը մատուցուի մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակին :

ԾԱՆՕԹ.– Պետական տնօրինութեամբ, բոլոր Հայերը (դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր եւ ուրիշներ) այսօր կրնան բացակայիլ իրենց զբաղումներէն՝ յանուն կրօնական պարտաւորութիւններուն :

LA COMMISSION CULTURELLE
DE L'EGLISE ARMENIENNE
DE CHAVILLE

Vous invite
à
une

SOIREE - DIAPORAMA

«UN REGARD SUR LA PRESENCE ARMENIENNE EN FRANCE»
par
Hrant NORSEN

Samedi 19 avril à 20h45
à la Salle Balabanian

6 rue Père Komitas
92370 — Chaville

— Entrée libre —

Date à retenir

Le samedi 17 mai
Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» 83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérite de Sens.Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

ՀՐԱՒԷՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ

2006 / 2007 *թթ.*
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիւս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին
Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի
Ա. Չըքաշեան սրահին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը :

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը :

Ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈՊԷՐ ԱԶԻԼԱԶԵԱՆ

Հոգեւոր հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ՄԻԵՏԻՔԵԱՆ

LYON

Mercredi 23 avril
20h30 : Devant le Consulat de Turquie pour une marche aux flambeaux jusqu'à l'Hôtel de Ville à **21h** pour se rendre au Mémorial du Génocide des Arméniens.

Jeudi 24 avril
15h30 : Messe en l'Eglise Saint-Jacques;
16h30 : Rassemblement devant l'église;
18h : Allocutions des représentants de la communauté arménienne, du représentant du Tibet, de Michel Mercier, de Gerard Collomb.

MARSEILLE

Samedi 19 avril
Le Marathon des 12 églises. Départ 10h de l'Eglise apostolique arménienne Sourp Garabed, 41 allée du Petit Pont, 13015.

Jeudi 24 avril
9h : Messe de requiem en l'Eglise apostolique arménienne Sourp Krikor Loussavoritch — Saint Grégoire l'Illuminateur, Impasse des Monts, 13012.
10h : Marche en direction du Mémorial.
11h : Dépôt de gerbes et prière au Mémorial du Génocide arménien, Esplanade L2, Beaumont.
17h : Rassemblement - manifestation de Marseille et de sa region, au Rond point Périer (métro Périer), 13008.
18h : Marche vers le Consulat de Turquie.
18h45 : Discours devant le Consulat de Turquie.
19h : Cérémonie de requiem en la Cathédrale apostolique arménienne de Marseille.
20h : Extinction de la flamme de la Mémoire. Fin des commémorations.

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 19-20
SAMEDI-DIMANCHE
19-20 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20 €

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jbaratch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.942
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
83e ANNEE — N° 21.942

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԷՄԷ ՍԷԶԷՌ, գրականութեան, քաղաքականութեան մարթինիքցի մեծ դէմքը, որ պայքար տարած է գաղթատիրութեան դէմ, մեռած է 95 տարեկանին: Անթիլլացի ինքնութեան մեծ ջատագով, ինք էր նաեւ հեղինակը Նեկրիթիւտ որակումին, ի պաշտպանութիւն սեւամորթներու: Ազգային յուղարկաւորութիւնը կը կատարուի Կիրակի Ապրիլ 20ին: Բազմաթիւ ներկաներու կարգին կ'ըլլայ նաեւ Նիքոլա Սարքոզի: Ֆրանսացի կարգ մը երեսփոխաններ կ'ուզեն նոյնիսկ որ մարմինը Պանթէոն փոխադրուի: Ուսումը կատարած էր Փարիզ, 1934ին: Սենկորի հետ հիմնած է «Սեւամորթ ուսանողը» պարբերականը, 1941ին կը միանայ գերիլլապաշտներու, բայց, միաժամանակ կը նետուի քաղաքական ասպարէզ, քաղաքապետ եւ երեսփոխան դառնալով: Գրական իր վերջին գործն է «Բանաստեղծութիւնը» լոյս տեսած 1995ին:

ՎՐԱՍՏԱՆ ՄԱԿ-ի դիմած է եւ Ապահովութեան Խորհուրդի արտակարգ նիստ պահանջած, որպէսզի ան կոչ ընէ Մոսկուայի որ հրաժարի իր սերտ գործակցութենէն ռուսամէտ անջատողական Աբխազիոյ եւ Հարաւային Օսէթիայի հետ: Ֆրանսա իր մտահոգութիւնը արտայայտած է եւ Մոսկուայի դիմած որ աւելի ճշգրիտ տեղեկութիւններ տայ իր հեռանկարներուն մասին:

ՄԱՐՍԷՅԼ – ՓՐՈՎԱՆՍ – ՄԵԹՐՈՓՈԼԻ նախագահ ընտրուած է ընկերվարական Ժօժէն Գազէլլի, ինչ որ մեծ անակնկալ մըն էր քանի շրջանը աջին ձեռքն էր եւ Միւզըլիէ (ԻՒ.ԷՄ.ՓԷ.) վստահ էր որ կը յաղթէ, բայց երկու ձայնի տարբերութեամբ (79 եւ 77) պարտուեցաւ:

ԲԷՐԲԻՒՔԻ մօտ (Իրաք) անձնասպանական ոճրափորձ մը գործուած է Ապրիլ 17ին, որուն հետեւանքով 52 մեռեալ կար եւ քանի մը տասնեակ վիրաւորներ: Ըստ իրաքեան ոստիկանութեան, ժողովուրդը կը մասնակցէր երկու սիւննիներու յուղարկաւորութեան երբ արարքը գործուած է:

ՊԱՊԸ, որ բացառիկ շուքով ընդունուած է Ամերիկա, փառքն ալ հիւսած է Ամերիկայի եւ ողջունած ամերիկեան լայք օրինակը որ թոյլ կուտայ կրօնքներու ծաղկումին: «Աստուած օրհնէ Ամերիկան» բացագանչած է Բենեդիկտոս ԺԶ., որուն 81րդ տարեդարձն ալ տօնուած է Սպիտակ Տան մէջ անակնկալ մը պատճառելով իրեն: Թափօրին անցքին թշնամական պաստառներ ալ ցուցադրուած են:

ԳԱԶԱՅԻ գօտիին մէջ, Ապրիլ 16ին, Ռոյթըրզ գործակալութեան համար աշխատող պաղեստինցի լրագրող մը սպաննուած է, իսրայէլեան հրթիռի մը արձակումէն: Կառքը կը կրէր լրագրողները յատկանշող պիտակ մը, ինչ որ պատճառ եղած է որ իսրայէլեան բանակը «ցաւ յայտնէ» պատահարին համար:

ԹԵՀՐԱՆԻ մէջ, երեսփոխանական ընտրութիւններէն քանի մը օր առաջ (Ապրիլ 25) ուսանողական երեք պարագլուխներ 22է 30 ամիս բանտարկութեան դատապարտուած են, ինչպէս Արդարութեան նախարարութիւնը հաստատած է Ապրիլ 15ին: Անոնք բանտն էին 2007 Մայիսէն ի վեր այն ամբաստանութեամբ որ «Նախատած են Իսլամի արժէքները» մամուլի մէջ լոյս տեսած յօդուածներով: Թեհրանի յեղափոխական դատարանը նախ 3, 2.5 եւ 2 տարուան բանտարկուդային ընդհանուր դատախազը նոր վճիռ քննութեան առեն անմեղ հռչակուած էին, բայց, ազատ չէին ձգուած: Յետագային ընդհանուր դատախազն է որ վճիռ մը պահանջած էր:

ՖՐԱՆՍԱՅԻ Հաշուեքննութեան Ատեանը կ'առաջարկէ որ ԷՍ.ԷՆ.ՍԷ.ԷՖ.-ի (ֆրանսական ազգային երկաթուղի) ուղեւորները այլեւս կախում ունենան ԷՌ.ԷՖ.ԷՖ.-էն այսինքն Ֆրանսայի երկաթուղիի ցանցէն, որ տէրն է գիծերուն: Այս կարգադրութիւնը կը վերաբերի 55 հազար ուղեւորներու եւ ՍԷ.ԺԷ.ԹԷ.-ն յայտարարած է արդէն որ նման հեռանկար մը լայնածաւալ գործադուլի մը պատճառ կրնայ ըլլալ:

ԻՐԱՆԻ նախագահը՝ Ահմատինէժատ հեռատեսիլէն ելոյթի մը ընթացքին (Ապրիլ 16) կասկածներ յայտնած է 2001 Սեպտեմբեր 11ի ոճրափորձերուն մասին: Ի մէջ այլոց ըսած է.– «4–5 տարի առաջ, կասկածելի արարք մը գործուեցաւ Նիւ Եորք: Շէնք մը քանդուեցաւ եւ ըսին որ 3000 հոգի մեռած է: Բայց, այս պատրուակով Աֆղանիստանի եւ Իրաքի վրայ յարձակեցան եւ անկէ ի վեր մէկ միլիոն մարդ մեռաւ»:

ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ պատմաբաններ եւ անկախ հետազօտողներ (ֆրանսացի, բայց նաեւ ամերիկացի, գանատացի եւ բրիտանացի) դիմում մը ստորագրած են Ապրիլ 12ին, ուր կը քննադատեն արխիւներու վերաբերող օրինագիծ մը: Այդ օրինագիծը պիտի ուսումնասիրուի երեսփոխաններուն կողմէ Ապրիլ 29ին. ան տարբեր է նախնական բնագրէն, որովհետեւ ծերակուտականները սահմանափակում մը ըրած են, ըստ որուն արխիւներու դիմելու պայմանաժամը 60էն 75 տարիի կը բարձրանայ: Պատմաբանները դէմ են այս կացութեան որ «կը սպառնայ պատմութեան հետազօտութեան եւ քաղաքացիներու ազատութեան»: Օրինակ, թոյլ չի տար ուսումնասիրելու Ալժերիոյ պատերազմի արխիւները 2037էն առաջ:

ԵՒՐՈՊԱՆ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ ՊԱՏԺԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովը Ապրիլ 17ին 93 թեր, 8 դէմ, եւ 8 ձեռնպահ քուէով ընդունած է Հայաստանի ժողովրդավարութեան ընթացքը արժեւորող բանաձեւ. նաեւ արձանագրած է որ եթէ անով նախատեսուած առաջարկներու ուղղութեամբ յառաջդիմութիւն չապահովուի մինչեւ յունիսեան նստաշրջանը, Հայաստան կը զրկուի քուէի իրաւունքէն:

Բանաձեւ առնուած զեկուցումը որուն հեղինակներն են նոյն վեհաժողովի դէտերու յանձնաժողովէն Ճ. Փրեսքոթ եւ Ժ. Գոլոմպիէ, կը յորդորէ Հայաստանի ներկայի ճգնաժամուն վերջ դնել եւ ընել հետեւեալները. անկախ, թափանցիկ եւ վստահելի հետաքննութիւն Մարտ 1ի պատահարներուն, ընդդիմադիր ձերբակալեալներու ազատ արձակում, սրբագրութիւն հանրահաւաքներու, երթերու, ցոյցերու օրէնքին մէջ կատարուած վերջին փոփոխութիւններուն, որոնք եւրոպական չափանիշերուն յարիր չեն:

Հայաստանի պատուիրակութեան նախագահ Դ. Յարութիւնեան քուէարկուած փաստաթուղթը արժեւորած է որպէս «կոշտ, բայց հաւասարակշռուած»:

Աւելորդ է նշումը թէ նիստին ընթացքին ադրբեջանական պատուիրակութիւնը մեծ աշխուժութիւն ցոյց տուած է, ամէն առիթ օգտագործած, հարուածելու համար Հայաստանը:

ՕՐԸ ՕՐԻՆ

«ՈՐՈՎՀԵՏԵՒ ՀԱՅ Է»...

Ապտակի պէս իջաւ Փ. Տէվէճեանին ուղղուած այս վերագրումը, ընկերվարական երեսփոխան Փ. Մոսքովիչի կողմէ: Այտակ որ «յանցաւոր»ին հետ թիրախ դրաւ ֆրանսական քաղաքական ոլորտն ալ, վիճարկումի, վիճաբանութեան տեղ հրամցնելով ցեղապաշտական վերագրումը:

Տէվէճեան կը յամառի պնդելու որ Թուրքիոյ Եւրոպա մուտքին մասին Ֆրանսայի քուէն որոշուի հանրաքուէով: Մոսքովիչի համաձայն չէ ու չէ վարանած քաղաքական հարցը լուծելու իրեն տարակարծիք երեսփոխանին ազգային պատկանելիութեան շահարկումով. «ՈՐՈՎՀԵՏԵՒ ՀԱՅ Է»...

Ասիկա կ'ըլլայ հո՛ս, երկրի մը մէջ ուր ցեղապաշտ բնոյթի ստորակէտն իսկ ծանրագոյն դատապարտումին կը տանի. կայ հակահրէութիւնը պատժող օրէնք որ խըստագոյն ձեւով կը կիրարկուի, նոյնիսկ փողոցի խլէզի մը պարագային: Հոս պետական շէնքերու ճակատը դրոշմուած է «Ազատութիւն – Հաւասարութիւն – Եղբայրութիւն»ը ու մարդիկ տակաւին կը հաւատան որ ան միայն պիտակ կամ լոզունգ չէ: Ֆրանսայի մէջ Վոսփորի ափերուն վրայ ալ չենք, որոնց հետ մռայլ զուգահեռ մը կը յուշէ սա «Որովհետեւ Հայ է»ն...

Զարիքին բարիքը պիտի ըլլայ փաստը ունենալ որ ցեղապաշտ բընոյթի, խտրական արտայայտութիւն Ֆրանսայի մէջ ներելի է ո՛չ ոքի. փողոցի խլէզէն մինչեւ երեսփոխանին, հակահրեային, հակահայուն, հակասեւամորթին, հակախուլին. բոլոր ու բոլոր «հակա»յիններուն:

Թ. ԱՐՓԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Վ. ՄԱՆՈՒԿԵԱՆ – Ս. ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ԱԺՄ նախագահ Վազգէն Մանուկեան Ապրիլ 17ի ասուլիսին յայտնած է թէ իր նախաձեռնութեամբ հանդիպում ունեցած է նախագահ Ս. Սարգսեանի հետ եւ քննարկած են երկրին մէջ իրականացուելիք փոփոխութիւնները: Անոնք աւելի արդիւնաւոր կ'ըլլան, «եթէ Ս. Սարգսեանի անձնական շահը համընկնի պետական շահի հետ» ըստ Վ. Մանուկեանի:

Վերջին տասնամեակը լճացման տարիներ որակած է ան, աւելցնելով որ այսօր անխուսափելի են փոփոխութիւնները: Անընդունելի գտնելով ներկայի կառավարութեան ձախողութիւն մաղթողներու ընթացքը, ԱԺՄ-ի նախագահը ըսած է. «Ես ինքս ընդդիմադիր եմ, բայց ամէն ինչով կ'օգնեմ, որպէսզի այս կառավարութիւնը յաջողակ լինի»:

Վ. Մանուկեան գոհունակութիւն յայտնած է Տ. Սարգսեանի վարչապետ նշանակումին, ըսելով որ բանիմաց մասնագէտ եւ պարկեշտ մէկն է, չի պատկանիր որեւէ կուսակցութեան, կամ խմբակի: Դրական արտայայտուած է արտաքին գործերու եւ պաշտպանութեան նախարարներուն նշանակումներուն մասին:

Պատասխանելով լրագրողներուն, ըսած է թէ իրեն որեւէ պաշտօն չէ առաջարկուած եւ Ս. Սարգսեանի հետ այդ կարգի հարց քննարկած չէ:

* * *

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՆԵՐՈՎ

Նախագահ Ս. Սարգսեան փուլային տարբերակով կը լրացնէ նոր կառավարութեան կազմը: Նշանակուած երկու առաջին նախարարներէն – արտաքին գործերու եւ պաշտպանութեան –, եւ իրենց պաշտօնին մէջ վերահաստատուած երեքէն ետք – արդարութեան, գիւղատնտեսութեան եւ մարզական, երիտասարդական հարցերու –, ան վերանշանակած է երեք նախարար եւս: Հասմիկ Պօղոսեան կը մնայ մշակոյթի նախարար, Լեւոն Մկրտչեան՝ կրթութեան եւ գիտութեան, իսկ Վարդան Վարդանեան՝ քաղաքաշինութեան: Առաջինը անկուսակցական է, երկրորդը ՀՅԴ-ի, երրորդը «Բարգաւաճ Հայաստան»ի անդամ:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԻ ԲԱՆԱՁԵՒ ՔՈՒԷԱՐԿՈՒԱԾ

Վառնայէն, Փլովտիւէն եւ Պուրկազէն ետք Ռուսէի քաղաքապետարանն ալ Ապրիլ 17ին ընդունած է Հայկական ցեղասպանութեան ճանաչումի բանաձեւ մը: Թեր քուէարկած են 36 հոգի, երեք դէմ, հինգ հոգի ալ ձեռնպահ մնացած է:

Ռուսէ 184 հազար բնակիչ ունի որուն մաս կը կազմէ հայկական փոքրաթիւ, բայց աշխոյժ համայնքը:

Պուլկարիա կը ղեկավարուի համախոհական կառավարութեամբ մը որ կազմուած է ընկերվարականներէն եւ Թուրք համայնքը ներկայացնող կուսակցութենէն: Թուրքերը 10%ի համեմատութիւն ունին երկրին մէջ:

ԱՄՆ

ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԱՊՐԻԼ 24-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Նահանգապետ Ա. Շուարցենեկէր յայտարարութեամբ մը Ապրիլ 24-27ը հռչակած է Հայոց ցեղասպանութեան յիշատակումին նուիրուած օրեր: Ըսած է թէ ան կ'որակուի Ի. դարու առաջին ցեղասպանութիւնը եւ խթանած է Սփիւռքի ձեւաւորումը: Շեշտած է թէ Գալիֆորնիա երաշխաւորած է որ այդ ողբերգութեան զոհերն ու վերապրողները մոռացութեան չեն մատնուիր:

ՍՏԱՄՊՈՒԼԵԱՆ ՕՐԵՐԻ ՔՐՈՆԻԿՈՆ

Երբեւէ չէի մտածել, որ Հայոց պատմութեան, մանաւանդ Արեւմըտահայաստանի, էջերը մի օր կեանք կ'առնեն ու կը կանգնեն աչքիս առաջ:

… Երբ ինքնաթիռը թռչում էր Ստամպուլի՝ մեր Հայերի բնօրրան Կոստանդինուպոլիսի վրայով, ինձ թուաց, թէ ես լսում եմ կոչկակարների, դարբինների, վաճառականների ձայները, ինձ թուաց, թէ տեսնում եմ, ինչ ոգեւորութեամբ է Դանիէլ Վարուժանը պատրաստւում գրելու «Հայկական հոմերագիրքը», որ, աւաղ, մնաց միայն կիսատ երազներում, թուաց, թէ լսում եմ Կոմիտասի «Տլէ եաման»ը ու քթիս տակ արձագանգում եմ նրան.

Տլէ եաման
Քեամին էկաւ կրակի պէս
վայ տլէ եաման,
Իկաւ, հասաւ չոր ծովու կէս,
Եաման, եաման…

Ո՞ՐՆ ԷՐ ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Մենք — Հարաւկովկասեան երկըրներից «Ես մարդ եմ» կինօփառատօնին յայտ ներկայացրած եւ յաղթածներն ենք, որ հաւաքուել ենք, մի երկրում որը ե՛ւ տարածքով է մօտիկ հարաւկովկասեան բոլոր երկըրներին, ե՛ւ այն վայրն է, ուր կարող են հանդիպել կովկասցիները, քանի որ, աւաղ, ողջ Կովկասը ազգամիջեան հակամարտութիւնների մէջ է: «Ես մարդ եմ»ը խաղաղութեան եւ մարդու իրաւունքների մասին պատմող վաւերագրական ֆիլմերի Հարաւկովկասեան կինօփառատօն է: Դա իր ձեւի մէջ առաջինն է այս երկրներում, որ առաջին անգամ անց է կացուել 2007 թուականին: Կինօփառատօնի գաղափարը ծնուել է 2005թ. Գերմանիայում՝ Հենրիխ Պէօլ հիմնադրամի կազմակերպիչների եւ «Բաց հասարակութիւն — Վրաստան» մասնակիցների կողմից:

Հանդիպման 5 օրերն անցան հետաքրքիր եւ ուսանելի մթնոլորտում: Հետաքրքիր էր ոչ միայն այն պատճառով, որ նոր բաներ էինք սովորում, մերձենում արուեստին, դիտում ոչ սովորական, ոչ տարածուած ֆիլմեր, այլ այն, որ ֆիլմերից յետոյ կազմակերպում էինք բանավէճեր: Ահա այստեղ է, որ ի յայտ է գալիս մարդու ինքնութիւնը, տարբեր թեմաների վերաբերեալ նրա ընկալումը: Չէ՞ որ հաւաքուած էին այնպիսի մարդիկ, ովքեր իրենց կաշուի վրայ են զգացել պատերազմի արհաւիրքները, որոնք այսօր ապրում են յետպատերազմեան երկրներում, որ ունեն հարեւանների հետ խնդիրներ: Հանդիպմանը ներկայ էին նաեւ չորս Ադրբեջանցի: Եւ այն, որ նրանք կլոր սեղանի շուրջ նստած էին Ղարաբաղի ներկայացուցիչների հետ, արդէն ինքնըստինքեան շատ բանի մասին էր խօսում: Նրանցից մէկի համար յայտնագործութիւն էր (կամ էլ այդպէս ներկայացրեց), որ Ղարաբաղում մարդիկ ապրում են, որ կեանքը ընթանում է իր բնականոն հունով. «Ես լսել եմ, թէ Ղարաբաղում ապրող չկայ, ազատ տարածքներ են»,— ասաց նա: Ես, ի հարկէ վրդովուած էի նման արտայայտութեան համար, սակայն պարզուեց, որ նրանց լրատուամիջոցները, իրօք, հէնց այդպիսի տեղեկատուութիւն են տրամադրում իրենց ժողովրդին: Ասացի, որ գնա ու գրիր ձեր լրատուամիջոցներում, որ Ղարաբաղում կեանքը մի քանի անգամ աւելի գեղեցիկ է, քան կար, մարդիկ ապրում են, ամուսնանում, ապագայի ծրագրեր կազմում, ընտրում, ընտրւում…

Երկխօսութեան, փոխըմբռնման փորձեր էին անում Վրացիները, Աբխազներն ու Ասետինները, նրանք շատ բան ունէին իրար ասելու, կիսելու, բոլորի ցաւն էլ մէկ անուն ունէր՝ պատերազմ:

Փառատօնի ֆիլմերը պատմում են ուրիշ հակամարտութիւնների երկրների մասին՝ Արաբների ու Հրեաների, Չէչէնների ու Ռուսների, Գոսովայի… եւ բոլոր ֆիլմերի առանցքը ՄԱՐԴՆ է, պարզապէս մարդը՝ իր մտատանջութիւններով, իր ճակատագրով, իր ցաւերով:

«ԵՍ ՄԱՐԴ ԵՄ» կինօփառատօնը Հադրութում կը լինի Հոկտեմբերի սկզբին եւ 3 օր շարունակ հադրութցիները նրա մասնակիցը կը լինեն:

ԹՈՒՐՔԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Եւ ոչ միայն Թուրքերի մօտ… հիմա ողջ աշխարհն է այդպիսին դարձել. Փողը, փողն է լուծում բոլոր հարցերը: Զբօսաշրջիկների քաղաք է Ստամպուլը: Անգամ Փետրուար ամսին, երբ ծովափը դեռ չի ծառայում իր նպատակին՝ քաղաքը լիքն է զբօսաշրջիկներով. փողոցներում, սրճարաններում ու ճաշարաններում կարող ես լսել տարբեր լեզուներով զրոյցներ եւ Թուրքերէն լեզուով «էստի համեցէք»ը: Կանչում են ամէն տեղից՝ խանութներից, սրճարաններից. եկէք, առէք, տարէք, էժան կը տամ, լաւ կը տամ: Նայում ես ու մտածում՝ որքա՛ն բարեհաճ է գտնուել նրանց հանդէպ իրենց Ալլահը. ինչպիսի՜ հարուստ քաղաք, էժան ապրանքներ առաջարկող խանութներ, ու խաբհագրական առումով որքա՜ն յարմար դիրք՝ ծովը — նրանց հարստութիւնների աղբիւրը, ու խարհի հետ կապուելու միջոցը:

Բարեացակամ են վերաբերւում բոլորի հետ՝ անկախ ազգութիւնից: Մենակ թէ առեւտուր անես նրանցից, այն էլ ցանկալի է իրենց փողով՝ լիրայով, որի ինքնարժէքը շատ բարձր է: Մենք հաշուեցինք. 1 լիրան մեր 250 դրամն է մօտաւորապէս: Իսկ 5, 10 լիրայով կարող ես մի հատ գեղեցիկ հրջազգեստ առնել իւրաքանչիւր պատահական խանութից: Ճաշատեսակները զանազան են՝ մանաւանդ ձկնեղէնից պատրաստուածները: Օգտագործում են տարբեր տեսակի, մեզ համար անծանօթ, եւ ոչ միշտ դուրալի, սուր համեմունքներ:

ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ես նրանց սիրեցի, մանաւանդ Թովմասեաններին ու նրանց ընտանիքը: Աննկարագրելի բարեացակամ, անմիջական, ազնիւ մարդիկ են: Հայերը մեծամասամբ ապրում են Ստամպուլում, ուրիշ քաղաքներում ու գիւղերում կա՛մ ընդհանրապէս չեն ապրում, կա՛մ էլ չնչին թիւ են կազմում:

Ստամպուլում ապրողները հէնց բնիկ այդտեղից են: Եղեռնից փրկըւածներն են: Ասում են, որ Եղեռնի օրերին Կոստանդինուպոլսում գրեթէ կոտորած չիրականացրին, քանի որ այստեղ էին տեղադրուած արտասահմանեան շատ ներկայացուցչութիւններ, ուստի եւ Թուրքերը չցանկացան միջազգային հանրութեան աչքի առաջ կոտորած կազմակերպել: — Մենք Սփիւռք չենք, սա մեր ծննդավայրն է, այստեղ են թաղուած մեր նախնիները, այստեղ մենք տիրոջ իրաւունքով ենք,— ասում է Եդուարդ Թովմասեանը:

… Տիրոջ իրաւունքով՝ ասաց, սակայն ինչո՞ւ աչքերը տխուր էին: Նրանց հետ զրոյցից իմացայ, որ Հայերը այստեղ թէկուզ իրենց հայրենիքում են, սակայն միշտ ստիպուած են իրենց պահել զուսպ, հեզ, հակադրութեան մէջ չմտնել Թուրքերի հետ: Այստեղ բարձրաստիճան հայ պաշտօնեաներ չկան: Մեծամասամբ արհեստաւորներ են, եւ ինչպէս նման դէպքերում է լինում, որպէսզի կարողանաս հացիդ փողը վաստակել, քո ընտրած գործում՝ ամենաչաւ վարպետը պէտք է լինես.

Ստամպուլում կայ 30ից աւելի հայկական եկեղեցի, ճիշդ է, ոչ բոլորն են գործող, սակայն Հայերը յաճախակի են այցելում եկեղեցի: Կան հայկական վարժարաններ, ուր յաճախում են Հայերի երեխաները: Սակայն վարժարանն աւարտելուց յետոյ ստիպուած են բարձրագոյն կրթութիւն ստանալ թուրքական բարձրագոյն ուսման հաստատութիւններում: Վարժարանները գործում են հէնց Հայերի գումարներով. կառավարութիւնը ոչ մի օժանդակութիւն չի ցուցաբերում: Փոխարէնը իր խիստ վերահսկողութիւնն ունի այդ վարժարաններում: Ամէն-ամէն կերպ ձգտում են Հայ մնալ. հայ աղջիկներ են կնութեան առնում, հայկական թերթեր են ընթերցում: Ի դէպ, տպագրւում է 3 հայկական թերթ. «Մարմարա», «Ակօս», «Ժամանակ». օրուայ ընթացքում մեծ մասամբ Հայաստանի Առաջին ալիքն են դիտում՝ Հ1-ը եւ յուզւում են հայկական երգեր լսելով, ձայնակցում են, ուրախութեամբ նշում, թէ որը ում սիրելի երգն է:

… Այսօր, երբ արդէն անցեալում են Ստամպուլեան օրերը, ես մի տեսակ հոգեկան թրթիռով եմ յիշում դրանք: Ինձ համար իրականութիւն է դարձել իմ ազգի պատմութեան մի էջը: Սա այն քաղաքն է, որտեղ ծնուել ու գրականութիւն են կերտել շատ հայ գործիչներ, սա այն երկիրն է, ուր Հայի արիւնը գետի պէս հոսել է փողոցներով, ուր այսօր տիրոջ իրաւունքով ապրում են (ու վատ չեն ապրում) հին ստամպուլցիները եւ ուր երէկ դաժանաբար սպանեցին հայ մտաւորականին՝ Հրանդ Տինքին:

ԱՐՓԻ ՎԱՆԵԱՆ

Արցախ — Հադրութ

ՄԱՐՄԱՐԱ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

«ԻՆՉՈ՞Ւ ԹՐՔԵՐԷՆ ՉԷՔ ԽՕՍԻՐ»

Կոմիտաս Վարդապետ Շիշլիի հիւանդանոցին մէջ կ'ապրէր վախի ու անձկութեան օրեր: Վախնալիք բան չկար այլեւս իրեն համար, բայց իր հիւանդութիւնը իր մէջ ստեղծած էր վախի ու անձկութեան մթնոլորտ: Վարդապետը կը հաւատար որ բժշկապետ Մազհար Օսման զինուորական մըն էր որ զինքը թունաւորել ու սպաննել կ'ուզէր: Նշանաւոր բժիշկին նկատմամբ իր այս վերապահութիւնը այդ տարիներուն անտարակոյս բան մը կաղացուց Կոմիտաս Վարդապետին դարմանումին մէջ: Բայց ամէնէն ցաւալին այն էր որ անպայման էր նոյնիսկ տոքթ. Թորգոմեանէն, որուհետեւ բատ իրեն իր բարեկամը յուսախաբ ըրած էր զինքը: Ինչո՞ւ այդպէս կը մտածէր, չենք գիտեր: Թերեւս անոր համար որ Թորգոմեան զինքը հիւանդանոց տարած էր խաբելով: Թերեւս ալ աւելի հիմնական պատճառ մը կար: Տոքթ. Թորգոմեան Վարդապետը հիւանդանոց փոխադրելէ առաջ, անոր արգիլած էր զբաղիլ երաժշտութեամբ: Ասիկա մահ էր Կոմիտասին համար: Բայց Թորգոմեան կը հաւատար որ Կոմիտասի հիւանդութեան պատճառներէն մէկն ալ երաժշտական մարզէ ներս անոր երկար տարիներու տքնաջան աշխատանքն էր: Կոմիտաս չարքաշ ու սպառիչ աշխատանքո՛վ էր որ մէջտեղ բերած էր այն ինչ որ այսօր կը կազմէ կոմիտասեան ժառանգութիւնը: Տոքթ. Թորգոմեան կը մըտածէր որ Կոմիտաս այլեւս աշխատելու չէր: Ասիկա յուրջ պատճառ մը չէ՞ր որպէսզի Կոմիտաս վշտանար տոքթ. Թորգոմեանին:

Կոմիտասի հիւանդանոցի կեանքին մէջ շատ տարօրինակ ու ուշագրաւ պատահար մը կայ: Այս պատահարը ինքնին ցոյց կուտայ թէ Կոմիտաս որքան փոխուած էր իր ազգային մտահոգութիւններուն ու կեցուածքին մէջ, կամ թէ խեղճ Վարդապետը որքա՛ն կը վախնար շրջապատէն: Հարցը սա էր: Կոմիտաս այլեւս կը վախնար Թրքերէնէ ուրիշ լեզու մը խօսելու կամ լսելու: Իր կենսագիրներուն կարծիքն այն է որ Կոմիտաս Մազհար Օսմանէն վախնալուն համար էր որ Թրքերէն կը խօսէր շարունակ: Կը մտածէր հաւանաբար որ եթէ տարագրուեցաւ, պատճառն այն է որ ինք Հայ էր, Հայերէն կը խօսէր, հայ երաժշտութեամբ կը զբաղէր ու ասիկա ալ անպատեհ նկատուած էր Օսմանեան իշխանութիւններու կողմէ: Կոմիտաս Թրքերէն խօսելու իր մտասեւեռումը պիտի տանէր մինչեւ ծայրայեղութիւն: Կը պատմուի որ Իսթանպուլի հիւանդանոցէն արձակուելէ ու Փարիզ տեղափոխուելէ քիչ ժամանակ առաջ Հայեր կ'այցելեն իրեն ու հայերէնով կը հարցնեն իր ողջութիւնը: Կոմիտաս կը զայրանայ ու Թրքերէն կը պոռայ անոնց.

— Դուք սատանաներ, ձեր երկրին լեզուն Թրքերէն է, ինչո՞, Թրքերէն չէք խօսիր:

Ո՛վ գիտէ ինչ զգացած էին այդ հայ այցելուները երբ այսպէս յանդիմանուած էին Կոմիտասին կողմէ: Բայց Կոմիտաս բժշկական բոլոր քննութիւններու ընթացքին նոյ-

նը կ՚ընէր, որպէսզի խբրեւ թէ լաւ տպաւորութիւն թողու բժիշկին ու հիւանդանոցի զինուորական վարչութեան վրայ: Անգամ մըն ալ յոյն բժիշկ մը, որ Մազհար Օսմանի ընկերակցութեամբ եկած էր քննելու Կոմիտասը, Կոմիտաս վարդապետը ողջունեց Ֆրանսերէնով ու Կոմիտաս զայրացաւ. «Դուք Թրքերէն չէ՞ք գիտեր»: Յետոյ դարձաւ Մազհար Օսմանին ու ըսաւ. «Այս մարդը հեռացուցէք ինծմէ»:

Քանի մը ժամ վերջ եկաւ հայ բժիշկ մըն ալ ու հայերէնով հարցուց.

– Բարեւ վարդապետ, ի՞նչպէս ես:

Կոմիտաս բարկացաւ.

– Ահաւասիկ մէկը եւս, դուք ի՞նչ կ՚ուզէք ինծմէ:

Շարունակ Մազհար Օսմանէն կը խնդրէր որ իր քովէն հեռացնէին այս մարդիկը: Ընկերութենէն խորշիլ սկսած էր ան:

– Թող երթան, ես ճաշել կ՚ուզեմ, կ՚ըսէր չուրջիններուն:

Զանազաններու վկայութիւնները ցոյց կու տան որ Կոմիտաս յուսախաբ եղած էր նաեւ իր ժողովուրդէն, հայ ժողովուրդէն: Արդէն աքթ. Թորգոմեան համոզուած էր որ Կոմիտաս երկու անգամ հոգեբանական ցնցում կրած էր հիւանդանալէ առաջ: Առաջինը Չանքըրըի մէջ աքսորի ընթացքին իր տեսած վերաբերումն էր: Իսկ երկրորդը պատահած էր երբ Պոլիս վերադարձած էր աքսորէն: Վերադառնալու ընթացքին կը կարծէր որ հայ ժողովուրդը զինքը պիտի դիմաւորէր մեծ պատիւներով ու գուրգուրանքով, մինչդեռ կը թուի թէ այդպէս չեղաւ: Ժողովուրդը արդէն իր հոգերը ունէր ու թերեւս չկրցաւ արժանի հոգածութիւնն ու սրտակցութիւնը ցոյց տալ այնքան չարչարուած Կոմիտասին: Մնաց որ ժողովուրդը կը մտածէր այն միւսներուն մասին որոնք չէին կրցած վերադառնալ, մինչ Կոմիտաս բախտաւորութիւնը ունեցած էր վերադառնալու: Այս բոլորէն վերջ Կոմիտաս հիւանդանոց դրուած էր հակառակ իր կամքին, բան մը որ նմանապէս ցաւ պատճառած ըլլալու էր անոր արդէն հիւանդ հոգեբանութեան: Այս մասին հետաքրքրական վկայութիւն մը ունի Տիգրան Չիթունի, որ կրցած էր չահիլ Կոմիտասի վըստահութիւնը, երբ ան Պուլկարիայէն Պոլիս եկաւ ու այցելեց Հօփիթալ Տը Լա Փէ: Չիթունի Կոմիտասը գտաւ շատ լաւ տրամադրութեան մէջ: Կոմիտաս երկար ժամանակ զրուցեց անոր հետ: Կ՚ըսէր որ կ՚ուզէր ըլլալ իր ժողովուրդին հետ, կ՚ուզէր վերադառնալ իր տունը, տիրանալ իր անձնական գոյքերուն: Կ՚ուզէր դարձեալ նստիլ իր աշխատասեղանին առջեւ: Հարցուցած էր որ ի՞նչ պատահած էին Թէրլէմէզեանի իւղանկարներուն, ո՞ւր էր իր դաշնակը: Ի՞նչ եղած էր իր խոհարարին, զոր շատ կը սիրէր: Ո՞ւր էին իր աշակերտները: Ո՞վ արտօնութիւն տուած էր որ իրեն դէմ այդպիսի վերաբերում մը ցոյց տրուէր: Այսպէս Կոմիտաս կարծես Չիթունիին դիմաց առիթ մը գտած էր զինքը խնամող բժիշկներէն ու մերձաւորներէն գանգատելու:

Ռ. Հ.

«ՓՈԽԱՆ ՏՈՄՍԻ»

ԲԱՅՑ ԱՐՄԵՆԱԿ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ

– Ինչո՞ւ անտէր է հայերէնը...

Ասոնք եղան առաջին բառերը Արմենակի, երբ հեռաձայնեց Շաբաթ առաւօտ:

– Բարի լոյս չըսե՞ս, պատասխանեցի:

–Ի՛նչ լոյս: Մութ է, մութ:

– Հասկնանք, ըսէ՛ թէ ի՞նչ է պատահեր:

– Երէկ օրս երկու անգամ թունաւորուեցայ: Կրկին կը կարդայի Երեւանէն ստացուած էջ մը: Բանգէտ մը, ամենագէտ տեսակէն, խօսած է, վարդապետականօրէն բացատրած որ չեմ գիտեր որ «պրագմատիկայում», հարցերը բարդ են երբ կը վերաբերին «բռնազաւթուած» տարածքներու, որ առաջարկուած «կոմպրոմիս»ը «նոնսենս» է: Ան չէ մոռցած տակաւին «պրեզիտենդական»ը եւ «պառլամենտական»ը: Ի՞նչ կը բանի լեզուի պետական վարչութիւնը, եթէ չի պատժեր, գէթ վերադաստիարակման դասընթացք թող կազմակերպէ: Այդ բառերուն համապատասխանները չըկա՞ն միթէ: Երբ ազգի լեզուն չեն անկախացներ, ո՞ր ժողովուրդը կ՚անկախանայ:

– Դեռ չվարժուեցա՞ր: Ինչ որ կ՚ըսես մանրուք է, կարեւորը «բիզնես»ն է, անոր կողքին նախագահի, երեսփոխանի, մարզպետի, քաղաքապետի պաշտօնը: Գիտես, ըՍփիւռքի մէջ ալ կ՚ըսենք, լեզուի աղճատման պարագային, որ «այսպէս ալ կ՚ըլլայ այնպէս ալ»: Երէկ հանդիպում մը կար հայրենիքէն եկած հիւրի մը հետ: Գացի՞ր:

– Գացի եւ այդ պատճառով ալ երկրորդ անգամ օրս թունաւորուեցայ: Մեր հիւրը խօսեցաւ Հայաստանի եւ հոն տիրող մթնոլորտի մասին: Ըսաւ որ կարեւոր հարցերու համար «տիպէյթ» պէտք է ընել: Կը թուի թէ ինքն իրեն վայել չըգտաւ այդ «տիպէյթ»ը, եւ դառնալով կողքին նստած անձին հարցուց թէ ինչպէ՞ս կ՚ըսեն հայերէն, եւ ան, նոյնքան ամենագէտ բանգէտի պէս ըսաւ՝ «բանավէճ»: Սիրելիս, ասոնք չե՞ն գիտեր «բանավէճ»ի եւ «վիճարկում»ի տարբերութիւնը: Եւ հիանալու պատրաստ ներկաները ծափահարեցին...

– Ի՞նչ կ՚ուզես որ ընէին: Բայց եթէ այդ խօսողները ֆրանսերէն, անգլերէն, արաբերէն կամ այլ լեզուով մը բարբառէին եւ նման ձախաւերութիւններ ընէին, մեր «էսթէպլիշմընթ»ները կրակ կը ժայթքէին... առանց բանավէճի եւ վիճարկումի: Գիտես, Արմենակ, շատ կը սիրեմ Նազովրեցիի կեանքի այն դրուագը երբ մտրակ շաչեցնելով գոչած է՝ «դուրս հօրս տունէն»...

– Այս մասին գրէ՛, Մակար, նոյնիսկ եթէ ականջները խցուած են... նոյնիսկ եթէ պիտի ըսեն որ գրածդ «նոնսենս» է... որպէսզի շառլաթանները բեմէն իջնելէ ետք ընկերոջ ականջին չփսփսան թէ «այսօր ալ կլլեցուցինք»...

ՄԱԿԱՐ

ի Կլենտորա, Գալիֆորնիա

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ «ԱՄԵՆԱՄԵԾ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ»Ը

ԻՒՆԵՍՔՕ-ի կողմից հովանաւորուող՝ հռչակաւոր մարդկանց եւ կարեւոր իրադարձութիւնների տարեդարձներին նուիրուած միջոցառումների չարքում 2008–2009թթ. համար ընդգրկուած է Վիկտոր Համբարձումեանի ծննդեան 100ամեակի տօնակատարութիւնը: Այս յոբելեանը առիթ է ծառայելու մի անգամ եւս բացայայտելու գիտնականի, մարդու, քաղաքացու էութիւնն ու նրա գիտական գործունէութեան նշանակութիւնը: Համբարձումեանի համար մի առանձնակի կուռք է եղել Հայոց լեզուն: Իր մահուանից առաջ թողել է շատ յուզիչ մի կտակ, ուր գիտնականն ու մարդը խօսում է իր կեանքի ամենամեծ երջանկութեան մասին: Եւ դա չի եղել նրան համաշխարհային հռչակ բերող գիտական յայտնագործութիւնները: Մինչդեռ, յատկապէս երիտասարդ աստղերի մասին նրա տեսութիւնը յեղափոխեց աստղագիտութեան նորագոյն ըմբռնումները:

Աստղագիտութիւնը այն տեսութիւնն էր պնդում, որ բոլոր աստղերը ծնուել են մի քանի միլիոն տարի առաջ, որից յետոյ այլեւս նոր աստղեր չեն առաջանում: Համբարձումեանը աստղերին տուեց «նորածին», «մանուկ», «պատանի» ու «երիտասարդ» որակաւորումները. տիեզերքին կարծես կեանք տուեց ու դարձրեց ապրող մի ամբողջութիւն:

Իր կեանքի մայրամուտին յետահայեաց իր կեանքն ու գործունէութիւնը գնահատելով Վիկտոր Համբարձումեանը գրում է.

«Կտակում եմ.

Ինձ յաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս եւ այլն, տիրապետել Հայոց լեզուին: Ամէն մէկը պէտք է իր պարտքը համարի ուսումնասիրել Հայոց լեզուն, գրագիր լինել հայերէն, անկախ նրանից, ինչպիսի տոկոս է կազմում նրա մէջ հայկական արիւնը: Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում:

Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թէ արիւն, այլ գաղափարներ եւ այդ գաղափարների մէջ՝ ինձ համար ամենաթանկը Հայոց լեզուն է:

Այդ կապակցութեամբ իւրաքանչիւր սերունդ պարտաւոր է սովորեցնել յաջորդին Հայոց լեզուն:

Գիտցիր, որ իմ կեանքիս ամենամեծ երջանկութիւնը եղել է եւ կը մնայ, քանի ապրում եմ, Հայոց լեզուին տիրապետելը:

Ցանկանում եմ երջանկութիւն բոլորիդ: Դա նշանակում է, որ պէտք է լաւ տիրապետել Հայոց լեզուին:

29.8.1994»:

Երջանկութեան համբարձումեանական ըմբռնումը:

Ցուզիչ ու համոզիչ...

ԵՐԿՐՊԱԳՈՒ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԵՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Յաջորդ օրը Մախոխեանը մեկնեց: Յետեւում մնացին ղրիմեան եւ ուկրաինական տափաստանները: Ճանապարհին արդէն սպիտակին էին տալիս սարերի կատարները, իսկ նա դեռ էլի մտաբերում էր մեծ ծովանկարչի հետ անցկացրած իր երանելի օրերը, նրա խրատները...

– Տեսնում եմ, – ասում էր նրան ուսուցիչը, – որ իմ նկարներն ուժեղ տպաւորութիւն գործեցին ձեր վրայ: Պարտքս եմ համարում զգուշացնել ձեզ նմանակութիւնից, որը վնասում է նկարչի ինքնուրոյն զարգացմանը: Այս կամ այն նկարչի տեխնիկան կարող էք փոխառնել, իսկ մնացած ամէն ինչին պէտք է հասնէք բնութեան սեփական զննումներով: Ջանացէք ծայր աստիճան իրական լինել, բարեկամս:

ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒԿՐԱՆԻԱՅՈՒՄ

Ուղեւորութիւնները դէպի Ուկրանիա միշտ մեծագոյն բերկրանք էին պատճառում Այվազովսկուն: Ահա այժմ էլ, վագոնի լուսամուտից տեսնելով առաջին բրգաձեւ բարդիներն ու բալենու այգիների մէջ սպիտակին տուող կաւածեփ խրճիթները, նա իջեցրեց փեղկն ու այլեւս չփակեց պատուհանը: Պետերբուրգում հաստ մուշտակի միջով անգամ ցուրտը թափանցում էր ոսկորները, իսկ այստեղ ապրիլեան քամին կուպէն լցրել էր հաճելի զովով եւ բարդիների թացուող բողբոջների բուրմունքով: Այվազովսկին դուրս կախուեց լուսամուտից, տաքուկ քամուն տալով արդէն բոլորովին ճերմակած գլուխը:

Իսկ գնացքն ինչքա՛ն արագ է գնում: Հիմա, 1891 թուականին, թեթեւ եւ հաճելի է Ղրիմից Պետերբուրգ ուղեւորութիւն կատարելը: Մինչդեռ երիտասարդ տարիներին այդ ճանապարհն անցնում էին կառքով, մի քանի անգամ փոխելով ձիերը, երկար ու տանջալից էր ճամբորդութիւնը: Ասենք, նա չէր ձանձրանում փոստակառքով ուղեւորուելիս. ինչե՛ր ասես չի կարելի տեսնել այդ հեռաւոր ճանապարհորդութիւնների ընթացքում, ինչպիսի՛ ճեպանկարներ ասես չի կարելի անել ճանապարհորդական ալբոմում: Եւ ինչքան լաւ է, որ այսօր, այդքան տարիներ անց, այս լայնարձակ տափաստանների առթած բերկրանքը չի նուազել ժամանակի հետ, այլ միշտ նոյնն է մնացել նրա հոգում: Փետրախոտի տափաստանները նրան միշտ յիշեցրել են հարազատ լայնարձակ ծովը: Յիշեցրել տափաստանային ճանապարհներով քարշ եկող չումակների գոյնզգոյն սայլաշարանների մասին, որ յայտնւում էին որպէս Ղրիմի հարազատ աւետաբերներ:

Պատուհանից դուրս արդէն բուն Ուկրանիան էր, տափաստանային Ուկրանիան: Ոչխարների հօտը, մի կողմ քշուած, վախուորած նայում էր սլացող գնացքին:

(Շար. 207)

ԱՍԱՏՈՒՐ

Ասատուրի գործերը (1995-2008) կը ներկայացուին մինչեւ Յունիսի վերջ Ասիզէ (Palazzo del Capitano Perdone, Piazza Garibaldi 1/c):

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Mercredi 23 avril
18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle - Etoile.
19h : Veillée des jeunes — Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem, Parvis de Notre-Dame de Paris.
Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: • Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915: **interventions** de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert I[er] - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. Oeuvres de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

ALFORTVILLE

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

ARNOUVILLE-LES-GONESSE

Dimanche 27 avril
10h30 : Départ du Square d'Estienne d'Orves (face au stade Léo Lagrange) en direction du Cimetière avec recueillement devant la stèle du groupe Manouchian;
11h : Cérémonie du souvenir au Monument aux Morts — Cimetière d'Arnouville (dépôt de gerbes, minute de silence et discours)
11h30 : Messe à l'Eglise Sainte-Croix de Varak, rue Saint-Just;
12h15 : Messe de requiem devant le Khatchkar situé dans le jardin de l'Eglise Sainte-Croix en présence des drapeaux;
12h30 : Marche en direction de la stèle commémorant le Génocide, située à l'angle des rues Jean-Jaurès et Saint-Just. Dépôt de gerbes, minute de silence, prière et discours.

CHARENTON

Vendredi 25 avril
17h30 : Dépôt de gerbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux, en présence de M. Jean-Marie Bretillon, Maire de Charenton-le-Pont et Conseiller Général du Val-de-Marne, des Membres du Conseil Municipal de la Commune, des Membres du CA de l'ACAM, des Anciens Combattants arméniens, du donateur du monument et d'autres officiels civils et religieux. — Prise de paroles, recueillement, prières.

LIVRY-GARGAN

Samedi 26 avril
16h : Hommage aux victimes du génocide, au Parc Lefèvre, devant la stèle du souvenir, RN3 - avenue du Consul-Général-Nordling.

SEVRES

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

CHAVILLE

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d'honneur sera offert dans la salle de l'**église arménienne, 6 rue** Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

LYON

Jeudi 24 avril
15h30 : Messe en l'Eglise Saint-Jacques;
16h30 : Rassemblement devant l'église;
18h : Allocutions des représentants de la communauté arménienne, du représentant du Tibet, de Michel Mercier, de Gerard Collomb.

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ – ՄԿՐՏԻՉ
ՓԱՐԻԶ

ՊԱՏԱՐԱԳ 1915-Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24ԻՆ,
ՅԻՇԱՏԱԿ
ԹԻՒՐՔԻՈՒՐ ՆԱՀԱՏԱԿՆ ՄԵՐՈՑ՝
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս օրը, ժամը 15ին, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագ եւ Հոգեհանգիստ կը մատուցուի մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակին :

ԾԱՆՕԹ.– Պետական տնօրինութեամբ, բոլոր Հայերը (դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր եւ ուրիշներ) այսօր կրնան բացակայիլ իրենց զբաղումներէն՝ յանուն կրօնական պարտաւորութիւններուն :

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

Հ Ր Ա Ւ Է Ր
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ա Ն
Ժ Ո Ղ Ո Վ Ի

2006 / 2007 *ԹԹ.*
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ Կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին

Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի
Ա. Զրբաշեան սրահին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին անոր-ժաքերով մը :

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը :

Ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈՊԷՐ ԱԶԻԼԱԶԵԱՆ

Հոգեւոր հովիւ
ԶԱՏԻԿ ՎՐԴ. ԱԻՆՏԻՔԵԱՆ

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

VAULX-EN-VELIN

Jeudi 24 avril
12h : Cérémonie, Place du 24 avril (angle rues Louis Duclos et Franklin).

MARSEILLE

Samedi 19 avril
Le Marathon des 12 églises. Départ 10h de l'Eglise apostolique arménienne Sourp Garabed, 41 allée du Petit Pont, 13015.
Jeudi 24 avril
9h : Messe de requiem en l'Eglise apostolique arménienne Sourp Krikor Loussavoritch — Saint Grégoire l'Illuminateur, Impasse des Monts, 13012.
10h : Marche en direction du Mémorial.
11h : Dépôt de gerbes et prière au Mémorial du Génocide arménien, Esplanade L2, Beaumont.
17h : Rassemblement - manifestation de Marseille et de sa region, au Rond point Périer (métro Périer), 13008.
18h : Marche vers le Consulat de Turquie.
18h45 : Discours devant le Consulat de Turquie.
19h : Cérémonie de requiem en la Cathédrale apostolique arménienne de Marseille.
20h : Extinction de la flamme de la Mémoire. Fin des commémorations.

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérite de Sens-Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Ֆրչ. վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է 160 եւրօ Տէր եւ տիկին Մինասեանէ, Հայաստանի որբերուն համար :

ARMAVIA

Cet Eté

ARMAVIA opérera chaque samedi **un vol direct de Marseille à Erevan**

Renseignements et réservations :

- **SABERATOURS**
11 rue des Pyramides
75001 Paris
☎ 01.42.61.51.13
e-mail : armenie@saberatours

- **SEVAN VOYAGES**
48 Cours de la Liberté
69003 Lyon
☎ 04.78.60.13.66
e-mail : sevan@selectour.com

- **WASTEELS VOYAYGES**
67 la Canebière
13001 Marseille
☎ 04.95.09.30.60
e-mail : marseille@wasteels.fr

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 22
MARDI
22 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·943 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 83e ANNEE — N° 21·943

ՄԱՐՍԷՅԼ

ՑԱՑՆԱՍՓԻՒՌ ՀԱՅ ՀԱՂՈՐԴԱՎԱՐԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Մարսէյլի «Ռատիօ կալէռ»ի ալիքէն «Ցաղթանակ» խորագրով հաղորդումներ կը կատարուին Շաբաթ օրերը: Հաղորդավարն է Շուշիկը: Ապրիլ 19ին ինք եւ գործակիցները հաղորդումի ընթացքին ուղղակի սպառնալիքներու թիրախ եղած են: Հեռաձայնողներ ազդարարած են վերջ տալ իրենց գործունէութեան, վերջ տալ Ցեղասպանութեան մասին խօսելու: Մէկը նոյնիսկ սպառնացած է թէ եթէ շարունակէ, Հ. Տինքի վախճանը պիտի ունենայ:

Հայկական հաղորդումներու խմբակը վերջին շաբաթներուն նման բազմաթիւ սպառնալիքներ ստացած է. իսկ սպառնալիքներու հեղինակները անյայտ կը մնան: Ոստիկանութիւնը տեղեակ պահուած է:

«Ցաղթանակ»ը կը սփռէ մշակութային, կրթական, երաժշտական յայտագրեր, տեսակցութիւններ կ'ունենայ արուեստագէտներու, գրողներու հետ, լրատուութիւն կը կատարէ Մարսէյլի հայկական կեանքէն:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԽՄԷ ՍԷՋԷՐԻ ազգային յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Ապրիլ 20ին Սարքոզիի եւ Ֆրանսայի քաղաքական դէմքերու ներկայութեան: Հոն էին նաեւ Ֆր. Պայրու, Լ. Ֆապիւս, Սեկոլէն Ռուայալ, Քրիսթին Ալպանել, Ռամա Եատ եւ այլք: Սարքոզի քանի մը խօսքըսած է օդակայանը, քանի ընտանիքը չէ փափաքած որ խօսի յուղարկաւորութեան ատեն: Սեկոլէն Ռուայալի առաջարկը Սէզէռը Պանթէոն փոխադրելու մերժուած է, ընտանիքն ալ փափաքելով որ իր հողէն չհեռանայ, արդէն ենթական պատիւները չէր սիրեր: Սարքոզի իր կարճ ոգեկոչումին մէջ ըսած էր թէ ամէն մէկ Ֆրանսացի ինքզինք Մարթինիքցի կը զգայ այսօր: Ի դէպ, Սարքոզիի ներկայութիւնը այնքան ալ տեղին չէր, քանի Տաքարի իր ճառէն ետք, ուր գովքը հիւսած էր գաղթատիրութեան, Սէզէռ մերժած էր գինք ընդունիլ եւ ձեռքը սեղմել, երբ Ֆոր–տը–Ֆրանս գացած էր: Բայց, ըստ երեւոյթին ալ թէ ձախ երար անցած էին օգտագործելու համար Սէզէռի դիակը:

ԱՏՐՊԵՃԱՆ եւ կանչած է ՕԹԱՆ–ի Քոսովոյի խաղաղական ուժին մասնակից իր գումարտակը որ կը գործէր Թրքական հրամանատարութեան տակ: Պատճառը Քոսովոյի անկախութեան հռչակումն է որ չէր ճանչցուած Բաքուի կողմէ. այդ հռչակումը վրդոված էր Ատրպէյճանցիները, Ղարաբաղի կարգավիճակի հարցին նախընթաց կազմելու վտանգով: Գումարտակը կը բաղկանար 34 զինուորէ:

ԹՈՒՐՔԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ Արդարութեան յանձնաժողովը ընդունած է պատժական օրէնքի 301րդ յօդուածին «բարեփոխուած» տարբերակը: Անոր մէջ «Թրքութիւնը անարգել» փոխարինուած է «Թուրք ժողովուրդ»ով, իսկ «Հանրապետութիւնը»՝ «Թուրքիոյ Հանրապետութեամբ»: Երեք տարուան առաւելագոյն պատիժը զեղչուած է երկուքի, ճշդուած է այն կէտը որ պատիժը մէկ երրորդ համեմատութեամբ կ'աւելցնէր, եթէ Թրքութիւնը անարգելու յանցանքը Թուրքիոյ քաղաքացիի մը կողմէ արտասահմանի մէջ գործուէր: Նախադիծով պայման դրուած էր որ անարգողին դէմ դատական հետապնդումը ունենայ Հանրապետութեան նախագահին հաւանութիւնը. ընդունուած տարբերակով այդ լիազօրութիւնը տրուած է արդարութեան նախարարին:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ Հարաւ–արեւմտեան շրջանը, Նիմրոզի գաւառը անձնասպանական ոճրափորձ մը գործուած է Ապրիլ 17ին: 17 մեռեալներու մէջ ոստիկանական երկու պատասխանատու կային, 35 հոգի ալ վիրաւորուած են:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ անդամ ընտրուեցաւ գերպ. Գլոտ Տաժենս, Անկուլէմի եպիսկոպոս. կը գրաւէ Ռընէ Ռեմոնի աթոռը: Ծնած էր 1940ին եւ քահանայ օծուած 1970ին:

18 ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒ եւ 3 Իսրայէլցիներու մահերէն ետք, մթնոլորտը շատ լարուած է Գազայի մէջ, ուր Համասը վրէժի կոչ կ'ընէ եւ Իսրայէլ ալ հակադարձութիւններ կը խոստանայ: Օլմէրթ կ'ուզէ Համասի վճարել տալ ինչ որ կ'անցնի կը դառնայ Գազայի մէջ:

ԼԻՊԷՐԱՍԻՈՆԻ համար եղած հարցախոյզի մը համաձայն (Ապրիլ 21) իր ընտրութենէն 11 ամիս ետք Ն. Սարքոզիի մղած քաղաքականութիւնը ձախո-

(Շար.ը Դ. էջ)

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՀԱՅՑԵՒՑՈՅՑ ԲԱԽՈՒՄ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Ապրիլ 20ին Ծաղկազարդի արարողութեան ընթացքին Ս. Յարութեան տաճարին մէջ իսրայէլեան ոստիկանութիւնը պարտաւոր եղած է միջամտելու, իրարմէ բաժնելու համար Հայ եւ յոյն հաւատացեալներ, որոնց վէճը ծեծկռտուքի աստիճանին հասած էր: Հաւատացեալներէն ոմանք թիրախ առած են ոստիկանները, զանոնք հարուածելով օրհնուելու համար տաճար բերուած ձիթենիի ճիւղերով: Միջադէպին ընթացքին երկու Հայ ձերբակալուած են:

Միջադէպէն ետք հայ համայնքէն տասնեակներով հոգի ոստիկանատուն գացած են բողոքելու համար Հայերու ձերբակալման դէմ:

Ս. Յարութեան տաճարը, որ ըստ կրօնական աւանդութեան Քրիստոսի թաղուած ու յարութիւն առած վայրին վրայ կառուցուած է, քրիստոնէութեան ամէնէն սրբազան վայրն է: Անոր մատակարարումը շատ խիստ կանոններով բաժնուած է Հայերու եւ Յոյներու միջեւ, թէեւ նման միջադէպեր հազուադէպ չեն: Վայրին բանալիները մահմետական երկու ընտանիքի յանձնուած են, աւելի քան 700 տարիէ ի վեր, տեղի չտալու համար աւելորդ մրցակցութեան:

Հ.Յ.Դ. ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ Փ. ՄՈՍՔՈՎԻՉԻԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Ապրիլ 18 թուակիր հաղորդագրութեամբ մը ՀՅԴ ցաւով կ'անդրադառնայ Ընկերվարական կուսակցութեան քաղաքական կարեւոր պատասխանատու եւ Եւրոպական խորհրդարանի նախկին փոխնախագահ Փ. Մոսքովիչիի կողմէ Թուրքիոյ անդամակցութեան հարցով Փ. Տէվէճեանի ուղղուած, անոր ծագումին առընչուած արտայայտութեան: Ձայն կը նկատէ ծայր աստիճան կոպիտ եւ անընդունելի:

Անհանդուրժելի կը գտնէ յատկապէս ֆրանսացի քաղաքական դէմքի մը կողմէ ազգային ծագումի չէշտումը, անով կատարուած անձնական վիրաւորանքը, նոյնիսկ երբ ենթական իր անձնական կայքէջին վրայ «սխալ հասկացողութեան» վերագրած է զայն ու անկարեւոր նկատած:

ՀՅԴ կը յիշեցնէ թէ Թուրքիոյ անդամակցութեան հարցը հանրաքուէով վճռելու մասին յայտարարած էր Ընկերվարական կուսակցութեան ընդհանուր քարտուղար Ֆր. Հոլանտ Հայաստան այցին ընթացքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՉՈՐՍ ՆԱԽԱՐԱՐ ԵՒՍ

Նախագահ Ս. Սարգսեանի Ապրիլ 18ի հրամանագրով իրենց պաշտօններուն վրայ վերահաստատուած են ուժանիւթի նախարար Արմէն Մովսիսեանը, առողջապահութեան նախարար Յարութիւն Քուշկեանը, բնապահութեան նախարար Արամ Յարութիւնեանը, եւ աշխատանքի ու ընկերային հարցերու նախարար Աղւան Վարդանեանը: Այլեւս վստահութեամբ կարելի է ըսել որ Տ. Սարգսեանի կառավարութիւնը կը բաղկանայ մեծ մասով նախկին կազմէն:

* * *

ԹՈՒՐՔ ԳՈՐԾԱԿԻՑԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ Է. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԸ

Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Ա. Պապաճան շնորհաւորական գիր մը ղրկած է նոր նշանակուած նախարար Է. Նալպանտեանին: «Վստահ եմ որ ձեր փորձառութեամբ օգտակար պիտի ըլլաք ձեր երկրին ու կը հաւատամ որ բաղձալի նպատակներու հասնելու համար պիտի կարենանք երկխօսութիւն մը հիմնել» ըսած է Թուրք նախարարը:

Է. Նալպանտեան շնորհաւորութիւններ ստացած է Ռուսաստանի, Գերմանիոյ, Իրանի, Ցունաստանի իր պաշտօնակիցներէն ալ:

* * *

ԱՐՏՕՆՈՒԱԾ ՑՈՅՑ

Կեդրոնական խուովութիւններէն ետք «Կանայք յանուն խաղաղութեան» կազմակերպութեան հրաւէրով արտօնուած ցոյց մը տեղի ունեցած է Ապրիլ 19 Շաբաթ օր Ա. Միասնիկեանի արձանին կից մանկական զբօսապարտէզին մէջ:

Նախորդ օրն ալ քանի մը տասնեակ կիներ գլխաւոր դատախազութեան շէնքին մօտ բողոքի ցոյցի ելած են, պահանջելու համար Մարտ 1էն ետք ձերբակալուածներու ազատ արձակումը: Այդ անձերէն Հանրապետութիւն կուսակցութեան քաղաքական խորհուրդէն Սուրէն Սուրէնեանց նախապէս ազատ արձակուած էր. իրմէ քաղաքէն չհեռանալու յանձնառութեամբ ստորագրութիւն առնուած էր:

Ապրիլ 19ի ցոյցին ժողովրդավարական ուղի կուսակցութեան փոխնախագահ Վարդան Գրիգորեան ելոյթ ունեցած ու նշած է թէ Լ. Տէր Պետրոսեանի ըսածին պէս, Ս. Սարգսեանի երդումի արարողութեամբ ոչինչ կը վերջանայ, այլ ընդհակառակը՝ կը սկսի:

Ելոյթներ ունեցած են Սուրէն Սուրէնեանց, «Հայկական ժամանակ»ի խմբագիր, հետախուզման մէջ գտնուող Նիկոլ Փաշինեանի կինը. ան ամուսնին կողմէ ցուցարարներուն յայտարարած է թէ եթէ իշխանութիւնները կը կարծեն որ ժողովուրդը բանտերը լեցնելով կրնան անոր ոգին կոտրել, չարաչար կը սխալին. պայքարը կը շարունակուի թէ՛ բանտերու մէջ, թէ ընդյատակեայ: «Մեր պայքարն անկասելի է, մեր յաղթանակն՝ անխուսափելի» յայտարարած է ամուսնին բանբեր Աննա Յակոբեան:

Խօսք առած է արտաքին գործերու նախկին նախարար, ներկայիս բանտարկուած Ա. Արզումանեանի կինը Մելիսա Պրաուն եւս, նաեւ՝ Մատենադարանի փոխտնօրէն նոյնպէս բանտարկուած Ս. Բանուչեանի, հանգուցեալ ակադեմական Ռ. Ղազարեանի կիները: Ցոյցին ներկայ գտնուած է Լ. Տէր Պետրոսեանի կինը:

Ելոյթ ունեցած է տակաւին 26 օրէ ի վեր հացադուլի դիմած Ա. Բոզինեան, որ ըսած է թէ իշխանութիւններու կողմէ բռնութեան առարկայ ըլլալու պարագային իր շարժումը պիտի շարունակէ ԱՄՆ–ու Երեւանի դեսպանատան մէջ, որուն ներկայացուցիչներուն համաձայնութիւնը ունի արդէն:

Լ. Տէր Պետրոսեանի կեդրոնական գրասենեակի անդամ Լ. Զուրաբեան Վրաստանի եւ Ուկրանիոյ ընդդիմութեան պայքարէն աւելի դաժան նկատած է հայաստանեանը. ըսած է թէ այդ երկիրներուն նախագահները աւելի քաղաքական մշակոյթի տէր են, քան Հայաստանի իշխանութիւնները որոնք ամէն տեսակ յանցանք գործելու պատրաստ են իրենց աթոռները պահպանելու համար:

* * *

ԼՂՀ

ԱՐՑԱԽ - ՀԱՅԱՍՏԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆԻՍՏ

Ստեփանակերտի մէջ Ապրիլ 18ին գումարուած է Արցախ–Հայաստան միջխորհրդարանական նիստը: Օրակարգի վրայ գտնուած են ղարաբաղեան հարցին կարգաւորման հոլովոյթին ներկայի ուղղութիւնները, եւրոպական համարկումի ծրագիրները եւ երկքաղաքացիութեան օրէնսդրական սկզբունքները:

Դռնփակ նիստէն ետք հայաստանեան խորհրդարանական պատուիրակութեան նախագահ, Ազգային ժողովի նախագահ Տ. Թորոսեան պատասխանած է լրագրողներու հարցումներուն: Ան ըսած է թէ հակամարտութեան լուծումին նիւթով յայտարարութիւն մը հրապարակելու համար Հայաստանի Ազգային ժողովը պէտք ունէր Ղարաբաղի երեսփոխաններուն կարծիքը եւս ունենալու. եւ ամէնէն կարեւորն է այն որ նիւթին առընչութեամբ արժեւորումները միասնական են:

ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Ղուլեան տեղեկացուցած է թէ Հայաստան – Արցախ միջխորհրդարանական յանձնաժողովը առանձնացուցած է այն խնդիրները որոնք յետագայ գործակցութեան ուղղութիւն կուտան: Քննարկումներուն ղարաբաղեան կողմէն առաջարկներ եղած են որ ԼՂՀ–ն մասնակցի միջազգային նոր համաձայնութիւններու:

Նիստին նիւթ եղած է Քոսովոյի ու Ղարաբաղի հարցերուն համեմատութիւնը: Տ. Թորոսեան ըսած է որ ԼՂՀ–ն Քոսովոյի համեմատ բացայայտ առաւելութիւն ունի, անով որ Քոսովոյի պարագային խոցելի պահեր կային, իսկ Ղարաբաղի պարագային՝ ոչ մէկ:

ՅԻՊԷ-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵՒՍԵԲԻՈՍԻ ՀԵՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՅԻՊԷ – Չե՞ս կարծեր որ մեր պատմագրութեան մէջ հարկ եղածին չափ չէ ներկայացուած ժողովրդական ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐի շարժումը:

ԵՒՍ. – ԺԹ.-Ի. դարերու պայքարները ունեցան իրենց պատմիչները, ականատեսներ, օտար աղբիւրներու մէջբերումներով: Անցեալի մասին բաւական հանգամանօրէն գրած են սովետահայ պատմիչներ: Դժբախտաբար անոնք աւելի կեդրոնացած են ընկերային-տնտեսական պատմութիւններու վրայ, հաւատարիմ մնալու համար Մարքսիստ-լենինեան քարոզչութեան, «դասակարգերու պայքարին» վրայ շեշտ դնելով և եկած-անցած օտար բռնաւորներու մասին: Օտարներ որ այսօր դարձած են մեր շրջապատի դրացիները, որոնց հետ համայնավար Սովետ միութիւնը ունէր սերտ կապեր...: Օրինակ՝ ԿՈՇ գիւղի մուտքին, եօթը մթ.-նոց խաչքարը կանգնած է ի յիշատակ փառաւոր յաղթանակի մը ժողովրդական շարժումով ստացուած, ըսելով Թուրքերու դէմ, որու մասին շատ բան չենք գիտեր: Աւելի կանուխ, Ե. դարուն, Աղուտի գիւղի (Սիւնիքի մէջ) հոյակապ յուշարձանը, տակաւին կանգուն, դարձեալ կը խօսի այդ շրջանէն օտար բանակներու վտարումի մասին. դարձեալ մանրամասնութիւններու մասին տեղեկութիւն չունինք, եւ այսպէս Հայաստանի տարածքին ցրուած քանի՛ քանի՛ կոթողներ կը կարօտին բացայայտման:

ՅԻՊԷ – Ուրեմն համաձայն ես որ ատենը եկած է որ մեր ակադեմիան այս բացը լեցնէ:

ԵՒՍ. – Ո՞ր ակադեմիան: Իրաւ միամիտ ես: Ակադեմիան վերջին տարիներուն կարծես դադրած է ամէն գործունէութենէ. անոր ձայնը այլեւս չի յուշեր, աւելի ճիշդը մամուլի էջերէն բաւական ատմուկ բարձրացաւ, երբ թէ նախկին նախագահը դրամական զեղծարարութիւններ կատարած է եւ առիթ ըստեղծեցին հոն ալ նոր մը տեղաւորելու եւ այդ անկախ հիմնարկը դարձաւ տիրող իշխանութեան խաղալիք: Չեմ կարծեր որ քու առաջարկած նիւթդ գիրենք շատ հետաքրքրէ:

ՅԻՊԷ – Ի՞նչ եղան այն բոլոր միջազգային համբաւ վայելող գիտնականները, որ մեր պարծանքն էին:

ԵՒՍ. – Շատերը մեռան ծերութենէն եւ սրտի ցաւէն. ուրիշներ բոլորովին քաշուած են մէկդի, ի՞նչ կրնան ընել երբ իրենց հիմնարկները կը քանդուին, Լեզուին կը տրամադրուի Կաթողիկոսարանին, արդէն քանդուած է. Տիեզերքի ուսումնասիրութեան հիմնարկը՝ Գառնիի հովիտին մէջ, վերածուած է խոզանոցի, գիւղապետին սեփականաշըրնորհուած. Հանրագիտարանի հիմնարկը, Թումանեանի վրայ, դարձած է դրամատուն եւ այսպէս բազմաթիւ հիմնարկներ քանդուած, ջնջուած, վերածուած պետական բարձր հսկողութեամբ եւ շատերուն լուռ մեղսակցութեամբ... յուրջ ակադեմիկոսը ի՞նչ կրնայ ընել որ հացի աղքատիկ թոշակով համեստ կեանք մը քարշ կու տար, երբ ժողովուրդին բերնին մէջ զանազան նուաստացուցիչ տիտղոսներով ծամծմուած անձեր մէկ օրէն միւսը «ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄ» կը դառնան որոշ գումար մուծած ըլլալնուն համար...:

ՅԻՊԷ – Աւելի լաւ է մենք մեր պտոյտը շարունակենք. բամծեր սիրտս նեղացուցին:

ԵՒՍ. – Կարբիէն դէպի Աշտարակ ուղղուելով, հինգ վայրկեանէն կը մտնենք ՄՈՒՂՆԻ: Փոքր գիւղ մըն է 500ի մօտ բնակչութեամբ: Վերջին տարիներուն հոն շինարար, վերանորոգումի հսկայական աշխատանքներ կատարեց լուսահոգի Մեսրոպ արք. Աշճեանը որ կ'ուզէր նոյն կեդրոնին մէջ Վանականութեան հիմը դնել, որուն այնքան կարիքը կը զգացուի: Հրաժարեցաւ իր վրայ դրուած անընդունելի պայմաններուն համար եւ քաշուեցաւ: Հիմնեց նոյն անունով հրատարակչատուն մը եւ բազմաթիւ գիրքեր տպեց, դաւանական եւ պատմական բովանդակութեամբ, վերահրատարակելով մոռցուած եւ հազուագիւտ հատորներ:

Նախ եւ առաջ Մուղնի հնավայր մըն է: Եղած է պղնձի եւ երկաթի շրջանի Բ.-Ա. հազարամեակ Ք.ա. բնակավայր, ունի դամբարանադաշտի հետքեր, Ուրարտական շըրջանէն մնացած կանգուն դիտարան մը՝ աշտարականման, ջրամբար, միջնադարեան գերեզմանատուն եւ իր հռչակաւոր Ս. ԳԷՈՐԳ ՎԱՆՔԸ:

Ս. ԳԷՈՐԳ – ԺԴ. դարուն կառուցուած եւ հիմնովին վերանորոգուած 1664-69 տարիներուն, ճարտարապետ Սահակ Հիզանեցիի եւ իր աշակերտ Մուրատի ձեռքով:

Ալիշան հետաքրքրական մանրամասնութիւններ կը հաղորդէ որ արժէ յիշել: Մուղնին կ'ըսէ, մեծ գիւղ մըն էր ինչպէս յայտնի է իր աւերակ բնակարաններէն եւ ձորագլուխի վրայ գտնուող եկեղեցիէն (այժմ գոյութիւն չունի): Երկար ատեն այլազգիներ բնակած ըլլալով հոն, ամայացած է բայց նշանաւոր է իր Ս. Գէորգ եկեղեցիով, որպէս ուխտատեղի: Հոն պահուած են Ս. Գէորգի մասունքներ եւ քանի ուխտաւորները խուռն բազմութեամբ կուգային ոչ միայն «աղմուկ չփոթի լինէր այլ վտանգ քարավիժութեան մանկտւոյ». յիրաւի Քասախի ձորը այդ կէտին վրայ վտանգաւոր է մինչեւ այսօր: Այդ պատճառով Ս. Գէորգի ուխտի օրը մասունքները մօտակայ Կարբի կը տանէին. հոն ալ աղմուկի առիթ տալով: Ի վերջոյ մատուռ մը շինեցին Մուղնիի մէջ եւ մասունքները հոն պահեցին եւ ուխտաւորներէն եկած եկամուտները Յովհաննավանքի միջեւ կը բաժնուէին. այդ եղաւ վանքի շինութեան սկիզբը ձորագլուխին վրայ, այժմ ամայացեալ այլազգիներու բնակութեան հետեւանքով... (Այրարատ, էջ 182):

Առաքել Պատմիչ կը հաղորդէ որ Փիլիպպոս կաթողիկոսի օրով Մուղնիի վանքին առաջնորդն էր Մարտիրոս Մուղնեցի եպիսկոպոսը որ շատ փոքր գտնելով եկեղեցին, քանդեց բոլորը, պարսպապատեց չորս կողմը եւ պարիսպէն ներս՝ չափաւոր, վայելուչ եկեղեցի մը շինեց չորս սիւներու վրայ, նաեւ տուներ եւ խուցեր եւ ամէնը աւարտելով բարի յիշատակ թողուց իր ետին Աստուծոյ եւ մարդոց առջեւ. վախճանեցաւ եւ հոն ալ թաղուեցաւ (գլ. ԻԶ):

Անոր յաջորդը Զաքարիա, չհաւնելով Մարտիրոս եպիսկոպոսի շինել տուածը, «կոպիտ քարերով ըլլալուն համար», իր եղբօրորդի Յովհաննէս վարդապետը կը քանդէ եւ կոփածոյ քարերով կը կառուցէ «Եկեղեցի զարմանալի եւ զանգակատուն»: Այս հրաշակերտ եկեղեցին կանգուն է այսօր իր բովանդակ շքեղութեամբ, խնամուած պարտէզներով, քահանայատունով, թանգարանով եւ բազմաթիւ յուշարձաններու բեկորներով, կոկիկ կերպով շարուած պարիսպի երկայնքին:

Մաքուր պահուած եւ ընթեռնլի երկար արձանագրութիւն մը, 1669 թուականէն, կը խօսի Յովհաննէս եւ Դաւիթ վարդապետներու շինութեան մասին:

«Ամենակալին շնորհքով, ՌՃԺԳ թուականին, Փոքր Շահապաս պարսիկներու թագաւորին, եւ երկրի բռնակալ Ապաս-Խուլի ատեն եւ Ս. Էջմիածնի սրբազան կաթողիկոս Յակոբ Հայրապետի ատեն... ես Յովհաննէս վարդապետ Մուղնեցի, Յակոբի որդի, եղբօրորդի Մարտիրոս եպիսկոպոսի հիմէն քակելով Ս. Գէորգ եկեղեցին այս մէկը շինեցի գաւիթով, հրաշակերտ յօրինուածով, ներսէն եւ դուրսէն կոփածոյ քարերով ՌՃԺԸ թուականին, պարսիկներու Շահ Սուլէյմանի թագաւորութեան ատեն եւ Սէֆիկի խանի բռնակալութեան ատեն աւարտեցի: Ես ալ անոր հետ աւարտեցայ այս կեանքէն եւ ամէնուն Տիրոջ մօտ գացի: Մնացած է մի միայն եկեղեցիին եւ գաւիթին գըլուխի սալքը եւ «տօշամէն» որ կըտակով յանձնեցի իմ եղբօրորդի Դաւիթ վարդապետին զիս փոխարինելու եւ ամբողջացնելու եկեղեցիին եւ գաւիթին պակասները... Ալէքսան քարտուղար Հայոց յիշեցէք ի Քրիստոս» (Այրարատ, 184):

Ալիշան մէջբերած է նաեւ 1280թ. կրող արձանագրութիւն մը որ Մխիթարեան միաբան մը ընդօրինակած է ատենին.

«Խաչս յիշատակ է Սիպղաքոս սարկաւագին եւ ծնողաց իւրոց Պապային եւ... ետու զՊորխոռն վասն հանգուցելոյն. Թվ. ՆՃԻԹ աաքանագեան» (184):

ՅԻՊԷ – Ես կը սիրեմ մեր պատմական յուշարձաններուն վրայ գետեղուած արձանագրութիւնները, որովհետեւ բաւական տեղեկութիւններ կու տան ժամանակի իշխողներու, կաթողիկոսներու, բռնակալներու եւ վանահայրերու անուններուն, որոնք մեզի այսօր խորթ կը թուին:

ԵՒՍ. – Բացի Աստուածաշունչեան անուններէն որ մենք ալ կը գործածենք, իմ ալ տարօրինակը կու գայ միջին դարու մեր մէջ գործածական կարգ մը անձնանունները. ԱՊԼՂԱՐԻՊ–ՀԱՍԱՆ–ՔՈՒՐԴ–ՏԱՐՍԱՅԻՃ–ԱՊՈՒՂԱՄՐԵՆՔ– եւ այլ գոյնզգոյն անուններ որոնց կը հանդիպինք դամբանաքարերու վրայ. ՄԱՄԱԽԱԹՈՒՆ – ԴԱՍԴԱԿԻՒԼ – ԴՈՒՀԱՐՇԱՀ – ԹԱՔԱՆ ԽԱԹՈՒՆ – ԽՈՒԱՆԴ ԽԱԹՈՒՆ – ՀԱՄԶԻ – ՈՒԼՈՒ ԽԱԹՈՒՆ – ՀՈԼՈՒՄ – ԸՌՈՒԶ ԽԱԹՈՒՆ – ՌԱՇԱՏ – ԱԲՈՒՍԱՀԼ ... եւ տակաւին կարելի է շարքը երկարել, բաւ է մի քիչ թերթատել մեր վիմային արձանագրութիւններու նուիրուած հատորները:

(Շար. 18)

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ՋԱՀԸ ՊԷՏՔ ՉԷ ՄԱՐԻ

ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

Բազմահազար մարզիկներ կը մարզուին աշխարհի չորս ծագերուն եւ կը պատրաստուին մասնակցելու Ողիմպիական միջազգային խաղերուն, որոնք տեղի պիտի ունենան Չինաստանի մէջ, յառաջիկայ Հոկտեմբերին:

Ողիմպիական խաղերու ամենադեղեցիկ խորհրդանիշն է անոր ջահը, որ կը բոցավառի 1896էն ասդին, երբ սկսան ժամանակակից Ողիմպիական խաղերը Յունաստանի մէջ, 112 տարի առաջ:

Ըստ աւանդութեան, ողիմպիական ջահը, յատուկ արարողութեամբ արեւի ճառագայթներէն կը բոցավառի Յունաստանի մէջ եւ կը փոխադրուի այն վայրը, ուր տեղի կ'ունենան համաշխարհային այնքան սպասուած հանդիպումները, նաեւ արտակարգ հանդիսութիւններ ու կը ստեղծուի բացառիկ ոգեւորութիւն երիտասարդ մարզիկներու միջեւ:

Բոլորին ծանօթ է, որ այս տարի ողիմպիական ջահը մեծ դժուարութիւններու կը հանդիպի Չինաստանէն հասնելու համար: Պատճառը այն է որ վերոյիշեալ երկիրը ճնշումներու կ'ենթարկէ Թիպէթցիները որոնք կը պահանջեն իրենց անկախութիւնը: Իրենց մարդկային իրաւունքներուն ոտնակոխումը զայրոյթ կը պատճառէ Թիպէթցիներուն եւ անոնց համակիրներուն. անոնք արգելք հանդիսանալ կը ջանան ողիմպիական ջահին փոխադրութեան, արտայայտելու համար իրենց բուռն բողոքները:

Ողիմպիական խաղերու պատմութիւնը շատ հարուստ է բազմաթիւ դէմքերով ու դէպքերով: Անոնք ուրախութիւն, յուզում եւ տխրութիւն պատճառած են մարդկութեան եւ մարզական աշխարհին:

Ցաւօք սրտի, կարգ մը պետութիւններ իրենց շահերուն, կամ փոխվրէժ լուծելու սիրոյն, խանգարած եւ պոյքոթի ենթարկած են Ողիմպիական խաղերը յուսախաբութիւն եւ վրդովում պատճառելով:

Յիշենք մի քանի եղելութիւններ: Միւնիխի 1972ի հանդիպումներուն պաղեստինցի ջինեալներ յարձակեցան եւ սպաննեցին տասնըմէկ հրեայ մարզիկներ: 1976ին շարք մը ափրիկեան երկիրներ պոյքոթի ենթարկեցին Մոնրէալի ողիմպիականը, պահանջելով որ Նոր Զելանտան չմասնակցի այդ հանդիպումներուն:

ՕԹԱՆ-Ը ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԴՈՒՌԸ ՉԷ

Պուքրէշի մէջ գումարուած ՕԹԱՆ-ի վեհաժողովը թէ՛ ուսու հայրենասէրներուն հանդիստ քունը մը քաշել տուաւ, թէ՛ փաստեց թէ եւրոպացի պատասխանատուները անկախ են: Դիմադրելով ամերիկեան ճնշումին, անոնք քաղաքական արարք մը կատարեցին որ առաջին ակնարկով նշմարուածէն աւելի կարեւոր էր:

ՕԹԱՆ-ի ներքին յարաբերութիւնները հետզհետէ կը վերածուին ԱՄՆ – Եւրոպական միութիւն ճակատումի մը: Վերջին տարիներուն Ամերիկացիները երկու մարզի մէջ ծանր ճնշում բանեցուցին Եւրոպայի վրայ. առաջինը Թուրքիոյ մուտքի հարցն էր, երկրորդը՝ Քոսովոյի անկախութեան: Այս վերջինը ընդունելու հետ Եւրոպացիները եզրակացուցին որ որեւէ պատճառ չկար գիջումները շարունակելու: Համկըցան թէ ԱՄՆ-ը զօրավիգ էին ՕԹԱՆ-ի անդամ դառնալու Ուկրանիոյ եւ Վրաստանի փափաքին, բայց որեւէ կերպով չէին ուզեր որ «մուտքի տոմս»ը վերածուի Եւրոպական միութեան անդամ ըլլալու միջոցի մը: Անոնք կ'ուզեն իրենց վերապահել որոշելու իրաւունքը, թէ ո՛վ անդամ կ'ըլլայ միութեան, ո՛վ կը մնայ դրան տակ:

Վրաստանի «Վարդերու յեղափոխութեան», Նարնջագոյն յեղափոխութեան ընթացքին Թիֆլիսի եւ Կիեւի կարեւորագոյն պողոտաներուն վրայ եւրոպական դրօշներ ծածանեցան: Այսօր նոյն դրօշակները զետեղուած են երկու մայրաքաղաքներուն պաշտօնական շատ մը շէնքերուն վրայ: Այդ քաղաքներուն ընակիչներուն համար Եւրոպայի կողմնակից ըլլալ կը նշանակէ ընտրել բարօրութիւնը, օրէնքի պետութիւնը եւ յառկապէս շրջագայելու ազատութիւնը: Իսկ ՕԹԱՆ-ը աւելի վերացական է: Ատլանտեան ուխտը իր գործը Վրաստանի անկախապաշտներուն դէմ Սուխումի, կամ Ցխինվալի պիտի չըրկէ. Ուկրանիոյ դէմ ալ Ռուսաստանի սպառնալիք խնդրոյ առարկայ չէ: Այս պայմաններուն մէջ, ուրկէ՞ ծագած է գաղափարը թէ Եւրոպայի անդամակցութիւն մը կը հետեւի ՕԹԱՆ մուտքին: Ատիկա Ուաշինկթընի թելադրածն էր, բայց Պուքրէշ մասնանշուածը կասկած չէր վերցներ. ՕԹԱՆ չէր նշանակեր Եւրոպական միութիւն: Առաջինին անդամ ըլլալ անհրաժեշտ չէր պաշտօնապէս եւրոպացի դառնալու համար: 1973ին, Եւրոպական համաբակապետութեան առաջին ընդլայնումի օրերուն երբ Իռլանտա եւրոպացի կը դառնար, ՕԹԱՆ-ի անդամ չէր. 1995ին նոյնը եղաւ պարագան Շուէտին, Ֆինլանտայի եւ Աւստրիոյ. 2004էն ալ Կիպրոսին եւ Մալթային: Միւս կողմէ, Փորթուկալի եւ Յունաստանի ՕԹԱՆ-ի անդամակցութեան եւ անոնց եւրոպացի ըլլալուն միջեւ երեսուն տարուան միջոց մը կայ. Թուրքիա աւելի քան կէս դարէ ի վեր ՕԹԱՆ-ի անդամ է, բայց դուրս է Եւրոպական միութենէն: Պուքրէշի վեհաժողովին մասնանշուածը այն եղաւ որ Եւրոպան ՕԹԱՆ-ի օրակարգէն հեռանալու ընթացքի մէջ է: Ան ինք զինք կը տեսնէ որպէս զինուորական նոր պլոք մը որ ո՛չ ամերիկեան է, ոչ ալ յարձակողական: Պլոք մը զոր պէտք է նկատի առնել:

Ինչ կը վերաբերի Ուկրանիոյ, Ռուսաստան հարց չի տեսներ անոր Եւրոպական միութեան անդամակցութեան մէջ: Ընդհակառակը. այդ հեռանկարին մէջ կը տեսնէ Մեծն Բրիտանիոյ ԱՄՆ-ու համար ներկայացուցած կեցուածքին միւս տարբերակը: Ինչպէս որ մինչեւ 1973 այդ երկիրը հեռու մնաց եւրոպական համարկումէն, յետոյ անդամ ըլլալէ ետք ամերիկեան ազդեցութեան ազդակը եղաւ, Ուկրանիա ալ կրնայ նոյնը ընել Ռուսաստանի համար: Ցաւակալէս երբ Մոսկուա բարիդրացիական յարաբերութիւնները կարեւոր նկատէ եւ փոխադարձ զիջումներու գետիններ փնտռէ:

ՔԱՂՀԱՆ

Ա մ ն կ ի ւ ն կ ե ա ն ք Ը / ԱՄԷՆ ԱՆԿԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ՝ Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ԽՆԴԱՔ

Ամէն մարդ խնդալու ատեն բնորոշ ծամածռութիւններ եւ շարժումներ կ'ընէ առանց սակայն անդրադառնալու: Այս առումով ծիծաղը շատ բան կրնայ պատմել մարդոց հոգեկան կերտուածքի եւ բնաւորութեան առանձնայատկութիւններու մասին:

1

Եթէ խնդալու ժամանակ ձեռքով կը ծածկէք ձեր բերանը, կը նշանակէ թէ քիչ մը երկչոտ էք եւ այնքան ալ ինքնավստահ չէք: Շուտ իրար կ'անցնիք եւ անյարմար կը զգաք:

Կը թելադրուի մէկ կողմ ձգել ինքնաքննադատութիւնն ու ինքնավերլուծումը:

2

Եթէ խնդալու ժամանակ ձեր գլուխը դէպի ետ կը տանիք, կը նշանակէ որ դիւրահաւատ եւ վարանող անձ մըն էք, միեւնոյն ժամանակ շատ յլ հոգի ունիք: Թելադրելի է աւելի ողջմիտ ըլլալ:

3

Եթէ բերանը բաց եւ բարձրաձայն կը խնդաք, եռանդուն եւ կեանքը սիրող մարդ էք: Լաւատես, ինքնավստահ ու համարձակ էք:

Թելադրելի է, որ երբեմն ձեր շուրջիններուն լսէք:

4

Եթէ կը խնդաք գլուխը խոնարհած եւ կամացուկ... Բարեսիրտ եւ խղճով մարդ էք: Կը յարմարիք տարբեր իրավիճակներու եւ մարդոց: Տէրն էք ձեր յոյզերուն եւ աբարքներուն: Ոչ ոք կը նեղացնէք կամ կը վիրաւորէք:

«ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ»

Նմանօրինակ ամենացաւալի որոշումը տուին Ա.Մ.Նահանգները, 1980ին, իրենց հետ ունենալով վաթսուն երկիրներ, չներկայացան 1980ի Մոսկուայի հանդիպումներուն, որովհետեւ 1979ին Խորհրդային միութիւնը ներխուժած էր Աֆղանիստան: Միեւնոյն ոճով Խորհ. միութիւնը եւ իր արբանեակ երկիրները մերժեցին մասնակցիլ 1984ի Լոս Անճըլըսի Ողիմպիականին. վերջապէս, յիշենք 1988ին Հիւսիսային Գորէա արհամարհեց Սէուլի խաղերը: Ի՞նչ չահեցան այսպիսի քայլերու դիմող պետութիւնները...:

Ողիմպիական խաղերու ամէնէն դատապարտելի ցեղապաշտ արարքը գործեց Հիթլէրը: Ան 1936ի Պէրլինի Ողիմպիականին մերժեց շնորհաւորել խաղերու հերոս Ճէնս Օուէնսը որ շահած էր չորս ոսկի մետալներ, բայց սեւամորթ էր:

⁂

1952ին Խորհ. միութիւնը որոշեց մասնակցիլ Ողիմպիական խաղերուն: Ասիկա փառաւոր առիթ մը եղաւ, որ հայ մարզիկներ հանդէս գան միջազգային բեմի վրայ եւ ցոյց տան իրենց ուժը եւ մարզական յատկութիւնները, արժէքները:

1915ին Թուրք պետութեան կողմէ ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդի զաւակները վերյիշեալ Թուականին սկիզբ դրին պանծալի յաղթանակներու, շահելով ոսկի, արծաթ, պրոնզէ մետալներ: Հրանտ Շահինեան, Ռաֆայէլ Զմչկեան, Ալպերթ Ազարեան, Եուրի Վարդանեան, Վլատիմիր Ենգիպարեան, Նորայր Նուրիկեան, Լեւոն Ջուլֆալակեան, Եուրի Սարգսեան, Իսրայէլ Մելիտոնեան, Օգսէն Միրզոյեան եւ շատ ուրիշներ եղան Վարազդատ Թագաւորի արժանաւոր ժառանգորդները, փառք ու պատիւ բերելով հայ ժողովուրդին եւ հայրենիքին:

Սակայն անկեղծօրէն կ'ուզենք յայտնել, որ վերջին Ողիմպիական խաղերուն զգալիօրէն նուազած են մեր յաղթանակները ու մտահոգուած ենք անոր համար: Բայց, կը հաւատանք մեր մարզիկներուն, որոնք պիտի յաջողին շրջանցել այս կացութիւնը եւ նուաճեն նորանոր յաջողութիւններ եւ դափնեպսակներ:

Ա. Պ.

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊՈԼՍՈՅ Ս. Փրկիչ հիւանդանոցի «Պիլէք» հանդիսասրահին մէջ, ըստ աւանդութեան տեղի ունեցած է Զատկուան տօնը խանդավառ մթնոլորտ մը ստեղծելու համար մնայուն բնակիչներուն: Կազմակերպիչները եղած են հոգաբարձութիւնը եւ Կապոյտ հրեշտակներու ատենապետուհի տիկին Ագնիւ Թորոս: Բացման խօսքը արտասանած է տիկին Սիլվա Թրիքա որ շնորհաւորած է բոլոր բնակիչները Զատկուան առթիւ: Այնուհետեւ գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը երգերով եւ պարերով:

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

Մ Ա Ս Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒԿՐԱՆԻԱՅՈՒՄ

Պատանի հովիւն ու փոշոտ գամփռը արձանների նման անշարժացել էին հողաթմբի վրայ: Այդ հօտերը նրան միշտ յիշեցրել են Ղրիմի, հայրենի Թէոդոսիայի մօտ տարածուող տափաստանները, ուրտեղ նոյնպիսի ոչխարների հօտեր են արածում: Մի անգամ նա իր դաստակերտի՝ «Շէյխմամայի» մօտ տեսաւ, թէ ինչպէս ոչխարների այդպիսի մի հսկայական հօտ, վախենալով յանկարծ բարձրացած փոթորկից, նետուեց ուղղակի ծով: Սարսափելի տեսարան էր... Եւ նա այն ժամանակ նկարեց «Փոթորկից ծով քշուած ոչխարները» նկարը: Վախից դիւահար՝ անասունը դիք զառիթափով նետւում է ծով. հովիւն ու նրա հաւատարիմ շունը ամէն կերպ ջանում են փակել նրանց ճանապարհը, բայց ոչխարներն անզսպելի հոսքով սլանում են զառիթափով եւ ընկնում մոլեգնող ալիքների երախը: Նա սիրում է ուկրանիական եւ ղրիմեան տափաստանների այդ վախկոտ զինուորներին: Առանց նրանց, տափաստանային տեսարանը նրան թւում է անաւարտ: Քանի՛-քանի՛ անգամ նկարել է նրանց՝ մերթ միջօրէի տօթից ուժասպառ իրար վրայ կիտուած, մերթ իրիկնային մշուշի մէջ մայրամուտի շեղ ցոլքերի տակ վտակի պէս ճանապարհն ի վար հոսելիս... Ողջո՛յն ձեզ, տափաստանի առաջին աւետաբերներ...Ձեզ էլ ողջոյն, ուկրանիական յոգնաբեկ հողմաղացներ: Որքա՛ն շատ էք դուք հացառատ այս երկրում: Հեռուից ձեր թեւերի շարժումներին նայելով, ես մտաբերում եմ հեռաւոր նաւակի առագաստների դողդոջիւնը՝ ծովի վրայ կանգնած աղօտ մշուշում:

Ջահէլ տարիներին, յիշում է, յաճախ ընդհատում էր ճանապարհորդութիւնն ու երբեմ փոստային կիսակայարանում թողնելով վերցնում էր ալբոմը, էտիւդակալն ու ներկերի արկղը եւ ոտքով գնում իրեն գերող որեւէ խաղաղ անկիւն կամ խուտոր եւ մի քանի օր մնում այնտեղ:

Տակաւին մանկուց, այն ժամանակ, երբ ժամերով ունկնդրում էր կոյր փանդիռահարների երգը, նա սիրեց Ուկրանիան: Բարեկամութիւնը Վիլիա Շտերնպերգի հետ, որն ուղղակի սիրահարուած էր Ուկրանիային, մտերմութիւնը Գոգոլի հետ, որ այնպէս սքանչելի պատկերել էր այն, է՛լ աւելի խորացրին նրա մէջ սէրն այդ երկրի հանդէպ եւ դեռ պատանեկութեան օրերին նա խիզախեց պատկերել ուկրանիական տափաստանը, մերթ շոգ օրով, մերթ իրիկնային խաղաղ ժամին: Պատկերեց ուկրանիական արտերը՝ հասուն հասկերի ոսկով շաղ տուած: Բոլորն, ովքեր սիրում էին Ուկրանիան, մեծապէս սքանչացած էին նրա «Եղէգները Դնեպրի վրայ Ալյոշկայի մօտ» նկարով, որը նա ցուցադրեց 1858ի ցուցահանդէսում: Այժմ էլ նկարը վառ ուրուագծւում է նրա յիշողութեան մէջ... Երեկոյ է. մայրամուտը հրդեհել է երկինքը, իրիկնային աղջամուղջը ոսկի է շաղ տուել եղէգների ու նրանց միջեւ թեթեւօրէն տարուբերուող փոքրիկ առագաստանաւի վրայ:

Այդ օրուանից նա չի դադարում պատկերել Ուկրանիան: Ահա նրա առջեւով մէկը միւսի յետեւից անցնում են իր ուկրանական բնանկարները: Եղներն ալարկոտ քարշ են տալիս ծանր բեռնուած սայլերը: Արեւը պատրաստւում է մայր մտնել: Հողմաղացները լայն բացել են թեւերը: Սայլերից մէկի վրայ կանգնած է մի աղջիկ, որը դէմքը արեւից ծածկելով նայում է հեռուն, ուր հազիւ նկատելի փողփողում է ծովը... Իսկ «Ջրաղացը գետի ափին» նկարում պատկերուած էր թեք սարալանջին կանգնած մի հողմաղաց: Եզներով լծուած երկու սայլ դանդաղօրէն բարձրանում են սարը: Արեւը վառ անդրադարձել է գետի լայն հայելում, տօնական շռայլ լոյսով ողողելով նրա զոյգ ափերը: Հեռւում, ամբողջովին պարտէզների մէջ կորած, մի մեծ գիւղ է նշմարւում: Հանդիստ եւ խնդութիւն է բուրում ամառային օրը:

(Շար. 208)

(Շար. Ա. էջէն)

ղութիւն մը կը նկատուի 59% համեմատութեամբ:

ՓԱՐԱԿՈՒԷՅԻ նախագահ ընտրուած է նախկին եպիսկոպոս Ֆերնանտօ Լուկօ որ ծանօթ է որպէս «աղքատներու եպիսկոպոսը»: 2006ին ձգած էր եկեղեցական ասպարէզը գլուխն անցնելու համար «Փոփոխութեան Հայրենասիրական Զինակցութեան» եւ ընտրապայքարը տանելու: Փարակուէյ ալ կ'անցնի ձախի ձեռքը տասնեակ տարիներու աջի տիրապետութենէն ետք:

ԺԵՐՄԷՆՆ ԹԻՅՈՆ ֆրանսական դիմադրութեան մեծ դէմքերէն մէկը եւ ցեղաբանութեան մեծ ուսուցիչը, մեռած է 101 տարեկանին փարիզեան մէկ արւարձանին իր բնակարանին մէջ:

ԷՕՐՈՍԹԱՐԸ, որ մօտ 3 ժամէն Լոնտոնէն Փարիզ պէտք է հասնի, Ապրիլ 18էն 19ի գիշերը անբնական միջադէպերու պատճառաւ անընդունելի եւ անտանելի ճամբորդութիւն մը ըրաւ վրդովում ստեղծելով ճամբորդներուն մօտ: Առաջին խանգարում մը Փարիզէն 100 քիլոմեթր հեռու, ինչ որ պատճառ եղած էր 64 ճամբորդները տեղափոխելու այլ կառախումբի մը մէջ, բայց, քիչ ետք այդ կառախումբն ալ կը խանգարուէր եւ հարկ կ'ըլլար երրորդ մը ղրկել տեղւոյն վրայ, մինչ ճամբորդները կը մնային առանց ջերմութեան, առանց ելեկտրականութեան եւ խորապէս ընդվզած: Ի վերջոյ Ուրբաթ ժամը 21ին ճամբայ ելլելով, կառախումբը Կառ-տիւ-Նոռ կը հասնէր Շաբաթ առտու ժամը 9ին:

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : Khatchig YILMAZIAN

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK - MESROP

Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Mercredi 23 avril
18h: Ravivage de la flamme au Soldat inconnu par Shamiram Sevag, survivante du génocide et fille du poète-écrivain Roupen Sevag, accompagnée d'enfants, à l'Arc de Triomphe, place Charles de Gaulle - Etoile.
19h : Veillée des jeunes — Concert et lancement officiel de la pétition pour la reconnaissance par les Turcs du génocide, en présence d'Ali Ertem, Parvis de Notre-Dame de Paris.
Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: • Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915: **Interventions** de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert I[er] - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. Oeuvres de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

ALFORTVILLE

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

CHARENTON

Vendredi 25 avril
17h30 : Dépôt de gerbe devant le Khatchkar, rue Paul Eluard, angle rue des Bordeaux, en présence de M. Jean-Marie Bretillon, Maire de Charenton-le-Pont et Conseiller Général du Val-de-Marne, des Membres du Conseil Municipal de la Commune, des Membres du CA de l'ACAM, des Anciens Combattants arméniens, du donateur du monument et d'autres officiels civils et religieux. — Prise de paroles, recueillement, prières.

LIVRY-GARGAN

Samedi 26 avril
16h : Hommage aux victimes du génocide, au Parc Lefèvre, devant la stèle du souvenir, RN3 - avenue du Consul-Général-Nordling.

SEVRES

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

SECTION SOSSE MAYRIG
MARSEILLE VILLE
organise une conférence
avec **HRATCH VARJABEDIAN**
(Rédacteur - professeur)
« LA FEMME ARMENIENNE DANS L'HISTOIRE CONTEMPORAINE
Lundi 28 avril à 19h30
au Centre F.R.A. HRAIR MAROUKHIAN
185 chemin des sables jaunes
13012 Marseille
Chants par la F.R.A. Badanis Marseille, conférence, soliste Naïra ABRAHAMYAN

CITE INTERNATIONALE
UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens - Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն – Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

'Les mercredis de la MEA'

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences
à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

⁂

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches
au CNRS
— Mercredi 28 mai/21h

⁂

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՊԱՏԱՐԱԳ 1915-Ի ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԱՊՐԻԼ 24ԻՆ,
ՅԻՇԱՏԱԿ
ԲԻՒՐԱՒՈՐ ՆԱՀԱՏԱԿՆ ՄԵՐՈՑ՝
ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՅԸՆԹԱՑՍ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻ

Այս առթիւ ժամը 15ին, Փարիզի Ս. Յովհաննէս – Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագ եւ Հոգեհանգիստ կը մատուցուի մեր աւելի քան մէկ ու կէս միլիոն նահատակներուն յիշատակին:

ԾԱՆՕԹ.– Պետական տնօրինութեամբ, բոլոր Հայերը (դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր եւ ուրիշներ) այսօր կրնան բացակայիլ իրենց զբաղումներէն՝ յանուն կրօնական պարտաւորութիւններուն:

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérte de Sens-Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu , au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

CHAVILLE

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d'honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

LYON

Jeudi 24 avril
15h30 : Messe en l'Eglise Saint-Jacques;
16h30 : Rassemblement devant l'église;
18h : Allocutions des représentants de la communauté arménienne, du représentant du Tibet, de Michel Mercier, de Gerard Collomb.

MARSEILLE

Jeudi 24 avril
9h : Messe de requiem en l'Eglise apostolique arménienne Sourp Krikor Loussavoritch — Saint Grégoire l'Illuminateur, Impasse des Monts, 13012.
10h : Marche en direction du Mémorial.
11h : Dépôt de gerbes et prière au Mémorial du Génocide arménien, Esplanade L2, Beaumont.
17h : Rassemblement - manifestation de Marseille et de sa region, au Rond point Périer (métro Périer), 13008.
18h : Marche vers le Consulat de Turquie.
18h45 : Discours devant le Consulat de Turquie.
19h : Cérémonie de requiem en la Cathédrale apostolique arménienne de Marseille.
20h : Extinction de la flamme de la Mémoire. Fin des commémorations.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 23
MERCREDI
23 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·944 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 83e ANNEE — N° 21·944

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆ

Իտալիոյ մէջ Ապրիլ 20ին աւարտած է Եւրոպայի ծանրաբարձութեան ախոյեանութիւնը: Հայաստան որ անցեալ տարի ախոյեան հանդիսացած էր, այս տարի եւս պահած է տիտղոսը. հայ մարզիկներ շահած են 13 ոսկի, 3 արծաթ եւ մէկ պրոնզէ մետալ: Երկրորդն է Ռուսաստան, երրորդը՝ Ուկրանիա: Հայաստանցի եօթը մարզիկ ապահոված են Փեքինի Ողիմպիականներուն մասնակցութեան իրաւունք:

Այրերու բաժնին մէջ (85 քկ.) Տիգրան Մարտիրոսեան Եւրոպայի ախոյեան դարձած է. ան բարձրացուցած է 377 քկ. (172 եւ 205): Տիրացած է երեք ոսկի մետալի: Նոյնանուն ուրիշ մարզիկ մը (69 քկ.) եւս իր դասակարգին Եւրոպայի ախոյեանը հանդիսացած է, բարձրացնելով 346 քկ. (158 եւ 188). շահած է երկու ոսկի, 1 արծաթէ մետալ: Նոյն ատեն եւրոպական երկու նոր մրցանիշ հաստատած է:

Արա Խաչատրեան (77 քկ.) երկրորդ դիրքը գրաւած է, 361 քկ.ով (165 եւ 196). ունեցած է մէկ ոսկի, մէկ արծաթ եւ մէկ պրոնզէ մետալ: Միայն մէկ քկ. տարբերութեամբ ետ մնացած է ռուս ծանրաբարձէն:

94 քկ. խումբին մէջ Էտկար Գէորգեան 176 քկ.ով արծաթէ մետալի արժանացած է, ընդհանուր դասաւորումին մէջ հինգերորդ տեղը գրաւելով:

62 քկ. խումբին մէջ Սերգէյ Պետրոսեան (Ռուսաստան) ախոյեան հանդիսացած է, 302 (135 եւ 167) քկ. բարձրացընելով:

Նոյն մարզաձեւին մէջ կարեւոր յաջողութիւն ապահոված է իգական խումբն ալ. Մելինէ Դալուզեան (63 քկ.) խլած է երեք ոսկի մետալ, 235 քկ. բարձրացնելով (107 եւ 128):

Նազիկ Աւտալեան (69 քկ.) նոյն յաջողութիւնը ապահոված է 3 ոսկի մետալով. ան բարձրացուցած է 242 քկ. (106 եւ 136):

Իսկ Հռիփսիմէ Խուրշուդեան (75 քկ.) 141 քկ.ով ոսկի մետալ մը ապահոված է Հայաստանի, բայց չէ յաջողած Եւրոպայի ախոյեան հանդիսանալ:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Ապրիլ 21ի առաւօտուն Էջմիածին հասած է Արամ Ա. Կաթողիկոսը, միաբաններէ եւ աշխարհականներէ կազմուած պատուիրակութեան մը հետ: Զինք դիմաւորած է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մայր Տաճարին մէջ գոհաբանական աղօթք ընելէ ետք, երկու կաթողիկոսները շեշտած են միասնութեան, գործակցութեան անհրաժեշտութիւնը, ծառայելու համար հայ ժողովուրդին, եկեղեցիին եւ հայրենիքին:

Նոյն օրը երկու կաթողիկոսները միասին այցելած են նախագահ Ս. Սարգսեանին, յայտնելով Հայոց եկեղեցիին զօրակցութիւնը հայրենի պետութեան: Ապա գացած են Եղեռնի յուշահամալիրը, այցելած թանգարանը: Յուշարձանին ծաղկեպսակներ զետեղելէ ետք հոգեհանգստեան պաշտօն կատարած են 1915ի նահատակներու յիշատակին:

ԹՈՒՐՔԻԱ

ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ապրիլ 22ի մեր թիւով գրած էինք թէ Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Ալի Պապաճան նամակով մը շնորհաւորած էր Հայաստանի նոր նշանակուած իր պաշտօնակից Է. Նալպանտեանը. նոյն նամակով երկխօսութեան տրամադրութիւն ալ յայտնած: Եւ ինչ որ հաւանաբար Թուրք նախարարին համար ամէնէն կարեւորն է, այդ պատրաստակամութիւնը տեղեկացուցած էր անմիջապէս Աւստրիոյ արտաքին գործերու նախարարուհի Իւ. Փլասնիքի որ Անգարա կը գտնուէր: Երկու նախարարներուն հանդիպումը տեղի կ'ունենար Ապրիլ 21ին. այն օրը երբ Եւրոպական Խորհրդարանի արտաքին գործերու յանձնաժողովը կը քուէարկէր անդամակցութեան ուղղութեամբ Թուրքիոյ կատարած ջանքերը արժեւորող տեղեկագիրը:

Պապաճան աւստրիացի նախարարուհիին ըսելէ ետք թէ Հայաստանի նոր ղեկավարութեան առջեւ Թուրքիա բացած է երկխօսութեան դռները, առիկա ներկայացուցած է որպէս «շրջանին մէջ կառուցողական դեր կատարել»ու տրարք:

Նոյն զրոյցին նիւթ եղած էր Ղարաբաղի հակամարտութիւնն ալ: Նոյն Պապաճանը զայն նկատած էր շրջանի կայունութեան եւ խաղաղութեան համար ամէնէն ճգնաժամային արգելքը. ըսած էր թէ անհրաժեշտ է անյապաղ լուծում տալ հարցին, համաշխարհային հանրութեան կողմէ: Միեւնոյն ատեն շեշտած էր թէ անյաջողութեան բախելու դատապարտուած է լուծումի ամէն փորձ որ չի փարատեր իր տարածքային հարցով Ադրբեջանի օրինական մտահոգութիւնները:

Զեւականին ու խորքայինին միջեւ անդունդ մը զետեղած Թրքական այս երկմակարդակ քաղաքականութիւնը չատ հաւանաբար նոր նշանակուած նախարար Է. Նալպանտեանի դիւանագիտական կարողութեան ու ջանքին գլխաւոր բաժինը պիտի խլէ: Ակներեւ է որ դժուար է Թուրքիոյ կողմէ շրջափակուած երկրի մը ղեկավարներէն մէկը ըլլալ. եթէ ոչ աւելի, նոյնքան դժուար է նաեւ երկխօսութիւն ու բնականոն յարաբերութիւն վարել նման դրացիի հետ:

ՊՈԼԻՍ

1915-Ի ՆԻՒԹՈՎ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Պիլկի համալսարանին մէջ Ապրիլ 24ի օրը համագումար մը տեղի կ'ունենայ, «Ի՞նչ պատահեցաւ Ապրիլ 24ին» խորագրուած եւ նուիրուած 1915ի թեմային: Նախաձեռնարկը Մարդկային իրաւունքներու միութիւնն է: Կը մասնակցին ծանօթ հրատարակիչ Ռ. Զարաքօլու, նոյն միութեան նախկին փոխնախագահ փաստաբանուհի Էրէն Քէսքին, Լոնտոնի «Կոմիտաս» հիմնարկի վարիչ պատմաբան Արա Սարաֆեան:

«Հիւրրիյէթ» այս առիթով իրեն հետ հարցազրոյց մը հրատարակած էր (Ապրիլ 22): Հոն երիտասարդ պատմաբանը կ'ըսէր թէ արմատները եւ մշակոյթը այդ հողերէն ծագում առած են եւ ինքզինք Թուրքիոյ մէկ մասնիկը կը զգայ: Ջանքերը ուղղած է Ցեղասպանութեան խնդրին խաղաղ կարգաւորման եւ անխըտիր բոլոր Հայերուն այդ հողերուն հետ վերստին շաղախումին: Կը դատապարտէր երկու կողմի մոլեռանդները որոնք բաց վիճարկումէն կը խուսափին:

Ա. Սարաֆեան կ'ըսէր թէ կապեր ունի հարցին նկատմամբ քննադատական մօտեցումի տէր թուրք պատմաբաններու հետ եւ կը հաւատայ որ հարցը մօտ

(Շար.ը Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԹԷ ՆՈՐ ԶՈՀ ԵՐԱԶՈՂ ԿԱՅ ՄԵՆՔ ՈՒՐԻՇ ՀՐԱՆԴ ՉՈՒՆԻՆՔ

Զայնասփիւռի հայկական ժամու մը հաղորդավարուհիին անթէնի վրայ, ուղղակի սփռումի ընթացքին մահուան սպառնալիք կ'ըլլայ: Սպառնացողը ոչ խսկ նամակի, իմակի, հեռաձայնի ձեւին գիջած է: Ընտրուած կերպն ու ոճը բաւական բան կը յուշեն «անյայտ» հեղինակներուն մասին:

Սպառնալիքը ամենայն յստակութեամբ ձեւուած է. վերջ տալ Ցեղասպանութեան մասին խօսելու, եթէ ոչ խօսողին կը սպասէ Հրանդ Տինքին ճակատագիրը: Ո՛չ աւելի, ոչ պակաս: Ու ասիկա կ'ըլլայ Ֆրանսայի մէջ ուր Ցեղասպանութիւնը պետական ճանաչում գտած իրողութիւն է թէեւ, բայց կը յամենայ ու կը յամենայ ժխտողականութեան դատապարտումի օրէնքը: Ուր հայկական յուշակոթող կը պղծուի օր ցերեկով եւ յանցաւորը գտնել, պատժելու տեղ, կոթողի մը ապօրինութեան սնամէջ վարկած դատարան կը տարուի. նոյն կոթողին առջեւ թրքական ազգայնամոլներու դրօշներով հակահայ ցոյց կը կատարուի, Ապրիլ 24ին կէս ժամ մնացած...

Զարմանա՞լ, զայրանա՞լ, ընդվզի՞լ. ո՛ր մէկուն դէմ: Յայտնի ժխտողի՞ն, «անյայտ» սպառնացողի՞ն, թէ իրենց քաղաքացիներու, ընտրողներու սպառնացող վտանգին դէմ ամէնէն տարրական դերին մէջ թերացող պատասխանատուներու:

Թէեւ, այնքան ալ անսպասելի չէր պատահարը. երբ քաղաքական ծանօթ դէմք մը Ֆրանսայի օրէնքը ոտնակոխելու գնով հայ քաղաքական անձնաւորութեան ծագումը հրապարակաւ խնդրոյ առարկայ կ'ընէ, ան ալ Ցեղասպանութեան ու Թուրքիոյ առընչուած նիւթով, «անյայտ» հեղինակը ինչո՛ւ կապ դնէ լեզուին. ինչո՛ւ զնէ խօսքով չթափէ ժառանգական թոյնը:

Մոլեռանդները կրնան չափել հասողութիւնը չես գիտեր ո՛ր կիրքէն մղուած իրենց վերագրումին որ չորս օր առաջ Փ. Տէվէճեանի հասցէին պոռթկաց երեք բառով. «Որովհետեւ Հա՛յ է...»:

Պէտք է անպայման գտնել յարմարագոյն ձեւը պատասխանելու. «Թէ նոր զոհ երազող կայ, մենք ուրիշ Հրանդ չունինք»:

Թ. ԱՐՓԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ ԼՐԱՑԱԾ

Նախագահ Ս. Սարգսեանի Ապրիլ 21ի նշանակումներով լրացած է նոր կառավարութեան կազմէ: Ան քսան օրուան ընթացքին պէտք է Ազգային ժողովի հաւանութեան ներկայացնէ իր ծրագիրը:

Ապրիլ 21ին տարածքային կառավարման նախարար, նաեւ փոխվարչապետ նշանակուած է Արմէն Գէորգեան որ նախապէս կը վարէր նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտօնը:

Առեւտուրի եւ տնտեսական զարգացման նախարարութիւնը վերանուանուած է տնտեսութեան (բուն անունով՝ էկոնոմիկայի) նախարարութիւն, զայն կը շարունակէ վարել Ներսէս Երիցեան:

Փոփոխութեան ենթարկուած է ֆինանսներու եւ էկոնոմիկայի նախարարութիւնն ալ, վերածուելով ֆինանսներու նախարարութեան. նոր նշանակուած նախարարն է Տիգրան Դաւթեան:

Ստեղծուած է արտակարգ իրավիճակներու նախարարութիւն մը զոր կը գլխաւորէ Մհեր Շահգալդեան:

Հաղորդակցութեան (կապի) նախարար նշանակուած է Գուրգէն Սարգսեան:

Ինչ կը վերաբերի Սփիւռքի նախարարութեան որուն մասին բաւական լուրեր շրջեցան, արտաքին գործերու նախարարութեան մէջ ընդգրկուած է ան, որպէս Սփիւռքի հետ կապերու պետական կոմիտէ:

Նախագահի աշխատակազմի ղեկավարն է Ցովիկ Աբրահամեան, նախագահի խորհրդականներն են Սամուէլ Ֆարմանեան, Անդրանիկ Մանուկեան եւ Մանուկ Թոփուզեան: Նախագահի օգնական նշանակուած է Լեւոն Մարտիրոսեան:

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

Նոր նշանակուած նախարար Է. Նալպանտեան իր առաջին այցով Ապրիլ 18ին Ստեփանակերտ գացած ու ընդունուած է ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանի կողմէ: Նախարարը Ղարաբաղի հարցին Հայաստանի համար արտաքին քաղաքականութեան առանցքային տեղը շեշտելով բացատրած է այցը, աւելցնելով որ անհրաժեշտ է նման այցերու յաճախակի բնոյթը: Ապա երկու խօսակիցները քննարկած են Ղարաբաղի խնդրին կարգաւորման ներկայ կացութիւնը, հեռանկարները, ինչպէս եւ Հայաստանի ու ԼՂՀ միջեւ գործակցութիւնը սերտացնելու հարցերը:

Է. Նալպանտեան ԼՂՀ ղեկավար դէմքերուն հետ հանդիպումներուն տեղեկացուցած է թէ կարճ ատենէն իր գլխաւորած նախարարութեան մէջ պիտի կազմուի յատուկ խումբ մը որ պիտի զբաղի Ղարաբաղի հարցով:

Այս այցը ադրբեջանական առաջին հակազդեցութիւն մը արժած է Է. Նալպանտեանի: Ադրբեջանի արտաքին գործերու նախարարութեան մամուլի քարտուղարը ըսած է. «Հայաստանի նոր ղեկավարութիւնը եւ այդ կարգին արտաքին գործերու նախարար Է. Նալպանտեան չեն հրաժարած ստեղծուած կաղապարներէն եւ կը շարունակեն կրկնել նախկիններու սխալները: Անոնք պէտք է հասկնան որ Հարաւային Կովկասի մէջ երեք երկիր կայ եւ տեղ չկայ չորրորդ պետութեան մը համար»:

ՅԻՊԷ-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵՒՍԵԲԻՈՍԻ ՀԵՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՅԻՊԷ — Հայաստանի մէջ այսօր ալ բաւական տարօրինակ անձնանուններու կը հանդիպինք, որոնց մեկնաբանութիւնը միայն տեղացին կրնայ տալ:

ԵՒՍ. — Բայց հիմա ես ալ բաւականին մարզուած եմ այդ ուղղութեամբ: Մերինները երբ մէկը սիրեն, կամ աւելի ճիշդ ցուցադրեն որ կը սիրեն, ոչ մէկ բանի առջեւ կանգ կ'առնեն. սա մեր ազգային գլխաւոր «յատկութիւններէն» մին է. Վարդանանց օրերուն Վասակ մը կար, ունեցանք Մերուժան Արծրունին, Գէորգովներ եւայլն. անոնց կողքին երբ համայնավարութեան ամենադաժան տարիներուն երիտասարդութիւնը կը վերադառնար իր պատմական անուններուն՝ Մուշեղ, Աշոտ, Սմբատ, Արտաշէս, Նարեկ, Գագիկ, եւն., անձնանուններու նոր երեւոյթ մը կը յայտնուէր «մոլեռանդ կոմունիստներու» մօտ: Այդ տարիներուն ծնած դժբախտ երախաները մինչեւ այսօր ստիպուած են այդ ծանր բեռը տանիլ, եթէ նոյնիսկ ՀՅԴ-ի կամ ՀՀՇ-ի անդամ ըլլան: Ծագկավաճառ ընկերոջս մօտ ծառայող օրիորդը կը կոչուի ՄԷԼՍԻՏԱ — առաջին տպաւորութեամբ իտալական կամ լատինական կը կարծես. իրականին մէջ կը նշանակէ Մարքս Էնկէլս Լենին Ստալինի Իմաստուն Տաղանդաւոր Աշխկ...: ՎԻԼԻԿ — Վլատիմիր Իլյիչ Լենին.. ԼԵՆՄԷՐ — Լենինր Միրող... ԼԵՆԴՐՕՇ — Լենինեան ԴՐՕՇ եւ այլն...

Կրնաս երեւակայել թէ դար մը վերջ ասոնց դամբանաքարերը կարդացող բանասէրները որքա՜ն մելան պիտի հոսեցնեն բան մը հասկնալու համար:

ՅԻՊԷ — Սա դիմացի քաղաքը Աշտարակը չէ՞:

ԵՒՍ. — Մուղնին ներկայիս Աշտարակի մաս կը կազմէ, կը նկատուի անոր թաղերէն մէկը. բայց մենք անկէ առաջ պիտի մտնենք ծննդավայրը մեր մեծագոյն պատմիչներէն մէկուն որ կը կոչուի իր գիւղին անունով. Ղազար Փարպեցի:

ՓԱՐՊԻ: Եթէ Ե. դարու պատմիչը հոն ծնած է ուրեմն Փարպին շատ աւելի հին ըլլալու է: Թորամանեան զայն կ'անուանէ «ՄԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» եւ իրաւունք ունի: Ամէն այցելութեանս նորութիւն մը յայտնաբերած եմ, հետաքրքրական բնակչութիւն ալ ունի որոնց հետ խօսակցիլը շատ հաճելի է: Չէ՞ որ 16 դարեր առաջ իրենց գիւղին մէջ աշխարհ եկած է Հայոց ամենարնտիր պատմիչներէն մին, որուն շնորհիւ 100 տարուան ժամանակամիջոց մը լուսաբանուած է Գրերու գիւտէն մինչեւ Վարդանանք եւ Ղեւոնդեանք, մեզի տալով Ե. դարու ամէնէն յաջող պատմական գործը: Գիւղը Աշտարակէն 4քմ. հիւսիսարեւմուտք կը գտնուի եւ մօտաւորապէս 2500-3000 բնակիչ ունի, որոնց գլխաւոր զբաղումը այգեգործութիւն, դաշտավարութիւն, բանջարաբուծութիւն, ծխախոտագործութիւն եւ անշուշտ անասնապահութիւն է: Մայրուղիէն գիւղը հասնալի տպաւորութիւն կը գործէ. երբ փորձեցինք մօտենալ, քանի ինչպէս քիչ մը ամէն տեղ, ո՛չ մէկ ցուցատախտակ գոյութիւն ունէր հոն հասնելու, հարկ եղաւ մի քանի անգամ ետ դարձ կատարել մայրուղին կամուրջին տակ եւ ուշադրութիւնը գրաւել վերը կանգնած ոստիկանի մը որ մտածած պիտի ըլլայ թէ «հարբած մարդիկ են գնանք մի 5.000 պոկենք»: Որքան մեծ եղաւ խեղճ մարդուն յուսախաբութիւնը երբ զգաց որ լուրջ նպատակներով եկած ենք եւ «հարբածի» հետաւոր երեւոյթն իսկ չունէինք. ամէն պարագայի օգտակար եղաւ որ առանց շեղումներու մտնենք Փարպի:

Հազիւ կեդրոն հասած, ձախին Փարպիի գետակի եզերքը կը գտնուի Միջնադարեան գերեզմանատունը եւ կեդրոնը Ս. Գրիգոր եկեղեցին:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ եկեղեցին ԺԳ. դարու կառոյց է: Հողի մակարդակէն ցած է, եւ ընդհանուր վերականգնումի աշխատանքներու մէջ թաղուած: Մենք չգտանք Ալիշանի «կիսաւեր եկեղեցին ի սպառ խանգարեալ»ը. վստահ եմ Նորահարսի նման շուտով բացումը կը կատարուի արքազաններով եւ գիւղապետական իշխանութիւններով:

Բարեբախտաբար նորոգութեան համար գործածուած են բոլոր հին կտորները. Արեւմտեան դուռին վրայ յստակ կը կարդացուի 1264թ. արձանագրութիւնը.

«Ամենակալ Հօր անունով, Միածին Որդիին կամքով եւ Սուրբ Հոգիին միջնորդութեամբ. Ես Աղբուղայ որդի մեծ ՇԱՀԱՆՇԱՀԻ Իվանէ որդիին ես Աղբուղայ Փարպիի այգիներուն չորխատը թողուցի եւ ազգէ ազգ յիշատակ թողուցի. Արդ այն ամէն անձ մերիններէն կամ օտարներէն որ կարենայ խափանել կամ կը խափանէ անիծուած է ՅԺԸ հայրապետներէն եւ ամէնքէն նաալաթ ըլլայ. ՉԺԳ Թ.» (Այրարատ, 159):

Աւանդութեան համաձայն եկեղեցիին հիմնադիրը եղած է Ս. Գր. Լուսաւորիչ եւ զայն կոչած է Ս. Երրորդութեան անունով եւ յիշատակուած որպէս վանք կամ մենաստան: Գերեզմանատան տարածքին գտնուող զանազան աւերակներ, անթուական եւ հնաբոյր, կու գան հաստատելու աւանդութեան վարկածը: ԺԳ. դարու եկեղեցին ուղղանկիւն յատակագիծ ունի, թաղածածք է եւ սրբատաշ կարմրաւուն տուֆով կառուցուած: Շրջապատը հարուստ է հին խաչքարերով:

Զաքար թէ՛ բանուոր էր, թէ՛ ճարտարապետին տեղակալ. երիտասարդ նուիրուած անձնաւորութիւն մը որ մեզ առանձնորդեց իրենց գիւղի հնագոյն եկեղեցին, օձապըտոյտ ճամբաներով. մթնոլորտը միջնադարեան բոյր մը ունէր. հողէ գլխաւոր ճամբան նուիրուած է Ղազար Փարպեցիի. իւրաքանչիւր դուռի առջեւ քաղցր ժպիտով մամիկներ իրենց հարսերուն եւ պուպրիկի նմանող թոռնիկներուն հետ նստած կը հիւսէին, աչքերը դէպի մեզ սեւեռած: Փոքրիկները նոյնիսկ նկարուիլ ուզեցին եւ հարց տուին թէ ե՞րբ կը ստանան...:

ՏԻՐԱՆԱՒՈՐ եկեղեցին ոչ միայն գիւղի հնագոյնն է այլ «Զափազանց ուշագրաւ հնութիւն որը յետագայում վերածուած է ամրոցի» (Թորամանեան, Բ., 227):

Տիրանաւորը շատ լինքնատիպ կառոյց մըն է, տուներու մէջ խեղդըւած, արտաքնապէս աւելի ամրոցի տպաւորութիւն կը թողու քան պաշտպանողական (?) Թորամանեան առանց տարակոյսի զայն Ե. դար կը հասցնէ եւ որպէս եկեղեցի ծառայած է մինչեւ ԺԶ. դար:

Ան միջին դարուն ամրոցի վերածուած ըլլալով, արտաքսապէս կարելի չէ գաղափար կազմել Ե. դարու եկեղեցիի կառոյցին, բայց հազիւ ներս մտնենք միակտուր պազալտէ քարը հրելով որ կը ծառայէ որպէս դուռ, կը զգանք Ե. դարու պազիլիքի ամբողջական հմայքը, մաքուր պահուած դարերու ընթացքին: Թորամանեան գիտարուեստական քննութիւնը կատարելէ վերջ կ'եզրակացնէ որ նման ձեւերով կառուցուած եկեղեցի մը անկարելի է որ Ե. դարէն վերջ ըլլայ. կրնայ ըլլալ որ — կը շարունակէ — Է., Թ. եւ Ժ. դարերուն աննշան նորոգութիւններ տեղի ունեցած ըլլան՝ նկատի առած քանդակազարդ զանազան բեկորներու ներկայութիւնը: Իր կարծիքով ամրոցի վերածուած է շինութենէն հինգ դար յետոյ (Նոյն էջ 227):

Մեր եռանդուն ուղեկիցը՝ Զաքար, մեզ կ'առաջնորդէ բարձունքի վրայ պազալտէ մանր քարերով կառուցուած մատուռ մը Ս. Վարդանի նուիրուած, հաւանաբար ԺԳ.-ԺԴ. դարերէն մնացած, որուն շուրջը կը գտնուին դամբանաբլուրներ:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑԸ Փարպիի յուշարձաններէն «Հայոց Է. դարու շինարարական արուեստին մէջ, առանձին մի տեղ գրաւելու արժանի է» կ'ըսէ Թորամանեան,, թէեւ շատ քայքայուած... սակայն իր այդ վիճակին մէջ իսկ, իր ճարտարապետական համաչափութիւններով եւ ներդաշնակ դասաւորութիւններով չքնաղ մի երեւոյթ ունի (Թորամանեան, Բ., էջ 227):

ՅԻՊԷ — Քրիստոնեայ ճարտարապետութեան այս փոքր գանձերը որոնցմով այնքան հարուստ է մեր երկիրը, կարելի չէ՞ աւելի խնամել: Եթէ ձեռքէս բռնած հոս չբերէիր, մտքիս ծայրէն պիտի չկարենայի անցընել որ այս փոքրիկ գիւղը այնքան ճարտարապետական հարստութիւն կը պարունակէ:

ԵՒՍ. — Խնամել բառը լաւ ըսիր. աչքովդ կը տեսնես երկուքէն երեք հազար բնակչութիւն ունեցող գիւղին մէջ մարդ չի մտածեր նուազագոյն թուփերն ու խոտերը մաքրել յուշարձաններու վրայէն, որոնք ամէն տարի անվերադարձօրէն դարաւոր քարերը կը կրծեն եւ զարդաքանդակները կ'այլանդակեն: Թարգմանչաց եկեղեցին գլուխ-գործոց քանդակներ ունի որ միայն Զաքարի շնորհիւ կրցանք նկարել, ան իր բանուորի ձեռքերով սէգերը հեռացուց, խոտերը մաքրեց եւ մենք Թորամանեանի ըսած «բացօթեայ թանգարանը» յայտնաբերեցինք:

ՅԻՊԷ — Լուծում չկա՞յ այս կացութեան:

ԵՒՍ. — Առ այժմ ոչ մէկ: Պահ մը չորս կողմդ նայէ. անկախութենէն ի վեր Հայաստան աշխարհի քաղաքական ուժերը զիրար կը բզկտեն իշխանութիւն ձեռք ձգելու, որ կը նշանակէ հարստութիւն դիզել, երկրին հարստութիւնները կողոպտել: Մարդ իսկապէս գետինը կ'անցնի որ մեզի նման ազգ որ տաղանդաւոր եւ կիրթ անձեր շատ ունեցեր է եւ ունի ներկայիս ալ, 16 տարուան անկախութեան ընթացքին չէ կրցած արդար, առանց կեղծիքի ընտրութիւններ կատարել՝ բացի զեղծարարութիւններէն, չէ վարանած դիմելու նաեւ սպանութիւններու, անիրաւ բանտարկութիւններու, ստեղծելով զանգուածային արտագաղթեր, երկրին բնակչութիւնը կիսելով, առանց վայրկեան մը իսկ մտահոգուելու թէ ո՛ւր է այս ամէնուն վերջը: Դժբախտաբար Սփիւռքի մէջ ալ, ուր ենթակայ չեն ոչ մէկ ճնշումի, տակաւին կայ մամուլ մը որ երջանիկ, կը շարունակէ գոհունակութիւն յայտնել այս իրավիճակին: Յայտարարուած տարեկան աճերը ժողովուրդին երբեք չեն հասնիր:

(Շար. 19)

ՄՈՌԱՆԱ՞Լ ՆԱԽՆԻՔՆԵՐԻՆ

Կ. ՋՐԲԱՇԵԱՆ

«Մոռանալ նախնիքներին՝
նման է լինել մի առու առանց ակի,
մի ծառ առանց արմատների»
Չինական առած

Հետաքրքիր է հաստատել որ այս վերջին տարիներին որոշ պրպտումներ են կատարւում ազգաբանական արմատների վրայ. նոյնիսկ երբ անոնք շատ խորն են թաղուած:

Այսպէս, եղան Թուրքեր, Քրտեր. նաեւ Թրքացած Հայեր որոնք յանդգնութիւնը ունեցան յայտնել որ իրանց նախնիքներից մէկը Հայ է եղել: Ի՜նչ ցաւալի ուրախութիւն... Ժամանակները որքա՛ն փոխուել են: Երէկուայ անիծեալ «կեավուր» Հայը այժմ կարծես համարւում է պատուաբեր մի յատկանիշ:

Անկախաբար ազգաբանական այս պրպտումներից ու յայտնութիւններից, կայ մի պահանջ նաեւ վերադանելու, ճշդելու ազգային ինքնութիւնը: Այդ պահանջը մասամբ հասկանալի է ու արդար, քանի որ ընդհանրապէս քաղաքական այլեւայլ նկատումներով հաշուի են առնում անձի միայն քաղաքացիութիւնը, կամ էլ ծննդավայրը, անտեսելով նրա ազգային ինքնութիւնը:

Այս առթիւ յիշենք ԱՄՆ-ի սեւամորթները, արմատախիլ սարուկ

ների չառաւիղները որոնք հնարաւորութիւն ունեցան զարգանալու, ազատ քաղաքացիներ դառնալու եւ վայելելու բոլոր Ամերիկացիների իրաւունքները: Բայց մի օր էլ անդրադարձն ունեցան իրենց արմատների եւ կատարեցին մի համարձակ յայտարարութիւն. «Քանի որ մեր նախնիքները ափրիկեցի են եղել, մենք՝ սեւամորթներս մեզ նկատում ենք Ափրիկեւամերիկացիներ»:

Մարդու անցագիրը եւ անձնագիրը, պարզ ասած, չա՞տ կարեւոր թղթեր են որոնք երբեմն ոչ մի կապ չունեն անհատի ինքնութեան հետ: Այդ նկատմամբ կ'ուզեմ նորից յիշել պատուական Մոնթէ Մելքոնեանի դատավարութիւնը Փարիզում: Այդ օրերին Հայաստան դեռ հագուած էր խորհրդային փշոտ զրահը... ամերիկածնունդ Մոնթէն, անձնուէր իսկական այս հայրենասէրը, Ֆրանսա մտնելիս ձերբակալուեց: Սահմանի ոստիկանները հաստատեցին որ կեղծ է իր անցագիրը: Այդ պատճառով արժանացաւ Ֆրանսական բանտին եւ դատարանին:

Վեց ամսուայ բանտարկութեան վճիռը լսելուց յետոյ Մոնթէն խօսք է խնդրում նախագահից ու ֆրանսերէն լեզուով առարկում է. «պարո՛ն նախագահ, ինձ մեղադրում էք ու պատժում կեղծ անցագրիս համար: Թոյլ տուէք որ ըսեմ ձեզի թէ կեղծ են նաեւ աշխարհի եօթը միլիոն Հայերի անցագրերը...»:

Անմոռանալի՛ Մոնթէ:

«Կեղծ» անցագրերներից ու անձնագրերներից զատ, կան մեզանում հայրենակիցներ, որոնք թաքցնում են իրանց ինքնութիւնը կեղծ ազգանուններով: Դրանցից մէկն է ինձ վաղածանօթ, ֆրանսածնունդ Ֆրէտէրիք Աստուածատուրեան: Փառահեղ մի ազգանուն որ մարդու թօքերն է ուռեցնում, կորով է տալիս ուժասպառ Հային: Մինչդեռ ան, ինչ-ինչ նկատումներով, մի դիմում է տուել եւ կարճ ժամանակից իրաւունք է ստացել կոչուել՝ Donadieu: Մեծ մայրս որ իմանար ծագումով Հայի դաւանափոխ անունը, բաց պիտի թողնէր իր արմատական բարբառով. «Ումուտամեռ, քէ խորեմ, թիւ՛ երեսիդ»: Բարեբախտաբար քիչ են այս տիպի «չուռ տուած» Հայեր:

Ցաւօք սրտի, աւելի բազմաթիւ են Թուրքիացի Հայեր որոնք մնացած են թրքացուած եւ «օղլու» վերջադիրով մականուններով:

Արդար է որ այս առթիւ յիշենք նաեւ ռուսահայերին. Վարդանովներին, Արզումանովներին, Խատիսովներին:

Այլափոխուած ազգանունների այս ոգերթին մասնակից են նաեւ մկրտուած ազգանուններ. նշենք երկու պարագայ.

– Պրն. Յարութիւնեան, դուք ո՞րտեղացի էք:

– Ո՞նց թէ, Երեւան եմ ծնուել, հայաստանցի եմ էլի:

– Իսկ ձեր պապե՞րը:

– Էդ ուրիշ ա, բոլորն էլ, տատով, պապով Ալաշկերտից են, Վասպուրականի նահանգից:

– Իսկապէ՞ս, ուրախ եմ: Հիմա հասկացայ թէ ինչո՞ւ ազնուականի թեթեւ մի շող է զարդարում ձեր դէմքը:

– Վա՛յ, ես քո ցաւը տանեմ, ոչ ոք դեռ էդպիսի քոմփլիմենտ ասած չէր: Ճիշդն ասած յիշում եմ որ լուսահոգի տատս ասում էր որ մեր գերդաստանում մի քանի տէրտէրներ են եղել, նոյնիսկ մի աբեղայ էլ թաղուած է Ախթամարում, դրա համար էլ մեր իսկական մականունն եղել Տէր Յարութիւնեան: Բայց որ սովետ եկաւ նստաւ, հարկաւոր եղաւ «Տէր»ը թոցնել...

– Է՛հ, հիմա որ սովետն էլ թռաւ, ինչո՞ւ «ռէաբիլիթացիա»յի չէք ենթարկում ձեր իսկական ազգանունը:

Յարութիւնեան մի պահ ինձ լուռ դիտեց, մի խոր շունչ քաշեց ու առարկեց.

– Լսի՛ր հայրենակից, ես «նըստած»ներից եմ, օճախս քանդուեց երբ ինձ Սիպիր տարան: Տասներկու տարուց յետոյ վերադարձայ, կինս արդէն ուրիշ մարդու հետ էր ու մի կերպ տեղաւորուեցի Լենինականում: Երկրաշարժի զուլում որ եղաւ, մի անգամ էլ քարուքանդ եղայ: Նու, մօտ 20 տարի է որ երկրորդ կնկանս եւ 3 երեխաներով վերապրում ենք էս խուցի մէջ: Հիմի ինձ հասկացա՞ր, այնպէս որ էդ «ռէաբիլիթացիա» ասածդ «չքաֆ»ում (դարակ) սպասում է, էդ էլ կը լինի, երբ շնորհքով տուն-տեղ ունենամ, պատուհանով, ջրով: Ինձ հասկացիր, ես քո ցաւը տանեմ:

Չեմ կարող մոռանալ Մարսէյլի լիսէի ընկերս՝ Հայուանօղլու, ականջ ճանկող մի ազգանուն, որ աւարտեց զինուորական բարձրագոյն դպրոց, դառաւ ծովային հրամանատար. Փարիզ հաստատուելուց յետոյ «թլփատուեց» ու կոչուեց HAIWAN: Երկոտանի տաւար էր գոյութիւն ունի...

Կեղծ, «թլփատուած» ազգանունների շարքին արդար է հակադրել Լուի Զոփօղլուի պարագան: Վերջերս Ֆրանսա ապաստանած այս երիտասարդ սասունցին, արդէն մի քանի տարի է որ պոկուել է իր պապերի սարերից, թափառում էր Պոլիս, Պէյրութ, Սելանիկ, Ֆրանքֆուրթ, Սթրազպուրկ եւ վերջապէս կանգ է առնում Փարիզ: Բարեկամներիցս մէկը ինձ խնդրեց որ օգնեմ, ծպտուած ազգանունով այս թափառական Հային, մտնուած S.D.F. վիճակի... Հանդիպեցինք, ծանօթացանք, ցոյց տուեց մի քանի թղթեր, գրուած թրքերէն, արաբերէն, յունարէն, գերմաներէն եւ ֆրանսերէն, իր ժամանակաւոր բնակութեան արտօնագիրը:

– Ո՞ւր ես ծնուել, հարցրի:

– Պինկէօլ, Թուրքիա իշխէ, բայց ես սասունցի եմ պարոն:

– Շատ լաւ, իսկ այս Լուի անունդ ինչպէ՞ս քեզ կպաւ:

Համակրելի դիմագծով երիտասարդը կարծես գոհ եղաւ հարցումիցս ու զուսպ ժպիտով պատասխանեց.

— Եանի տէտէս ատանկ ուզեց: Եանի Ֆրանսացի զինուորներու հետ կռուած է եւ կռիւներու ժամանակ իր շատ սիրած Ֆրանսացի ընկերը Լուին, կը սպաննուի: Անոր յիշատակին համար տէտէս ուզեց որ անունս Լուի ըլլայ...

– Բարի, իսկ տէտէիդ ազգանո՞ւնն էլ Զոփօղլու է:

– Ո՛չ, ո՛չ, իսկական մականունը Ազնաւուրեան է համա...

– Հասկացայ, հիմա լսիր երիտասարդ, պիտի փորձեմ քեզ համար ձեռք բերել աշխատելու օրինաւոր արտօնագիր, մէկ պայմանով սակայն. եթէ դու համաձայնուես կոչուել պապիդ՝ տէտէիդ նման Ազնաւուրեան. Համաձա՞յն ես:

– Կ'ըլլայ մի, ես համաձայն եմ պարոն:

– Պիտի փորձեմ, ասի:

Շնորհիւ Ֆրանսացի ազնիւ ծանօթներիցս մէկին, ահա մի ամիս է որ սասունցի Զոփօղլու, թափ տուեց հոտած «չոփ»ը եւ վերածուեց Ազնաւուրեանի:

Վերջերս Ֆրանսայում լոյս տեսաւ 300 բարեփոխումների մի տեղեկագիր, ի նպաստ տնտեսական բարելաւումների: Այդ տեղեկագրի հեղինակն էր Ժագ Աթթալի. Հանրածանօթ մի քաղաքագէտ, երեւակայութեամբ հարուստ, որ ընդունակ է միշտ մնալ ջրի երես. աջի կամ ձախի պատկանող կառավարութեան կողքին...: Նրա առաջարկներից մէկն էր փոխել ինքնաշարժերի մետաղեայ համարանիշերը: Այսինքն, նորերի վրայ այլեւս պիտի չնկատուի նահանգի պատկանող յատուկ համարը: Այս ինքնատիպ առաջարկը խիստ բողոքեց Վանտէ նահանգի ազգասէր երեսփոխան Ֆ. տը Վիլիէն. «Այսպիսի առաջարկ անընդունելի է, համարում եմ որ դա մի հարուած է մեր ինքնութեան» առարկեց նա: Ի՛նչ նախանձախնդիր բողոք, այն էլ պահպանելու համար նահանգի՛ ինքնութիւնը:

Ֆ. տը Վիլիէի այս զայրոյթը թող խայթող մի կայծ դառայ, որ մենք էլ մեր հերթին (գետնից մի քիչ աւելի բարձր մօտեցումով...) տէր լինենք մեր ազգային ինքնութեան, պահպանելով մեր հարազատ ազգանունը:

Ու ոչ թէ միայն բաւարարուել «Հայ» արձանագրութեամբ մի պիտակ կպցնելով մեր կառքին յետոյքին...

Կ. Զ.

«ԵՐԿԻՐ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ»Ի ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆԸ

Ապրիլ 12ի երեկոյեան տեղի ունեցաւ Երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան փարիզեան երկամեայ սիրոյ սեղանը: Շուրջ 120 հոգի հաւաքուած էր այդ առթիւ, եւ ներկաներուն մէջ կարեւոր թիւ մը կը կազմէին երիտասարդները՝ անդամներ, կամ ուրիշներ, մղուած իրենց ծնողքին ցուցաբերած հետաքրքրութենէն, եւ որոնք թերեւս առաջին անգամն էր որ կը ծանօթանային Երկիր եւ Մշակոյթի տարած աշխատանքներուն:

Երեկոյթը սկսաւ լուսարձակումով մը, որ կը ներկայացնէր կազմակերպութեան վերջին երկու տարիներուն իրագործած, կամ տակաւին վրան աշխատած ծրագիրները: Միաժամանակ, անցեալի կարգ մը ծագիրներն ալ կը յիշուէին քանի մը պատկերով, եւ որոնք ցոյց կուտային Երկիր եւ Մշակոյթի ծրագրերուն իրարու հետ ունեցած յարակցութիւնը, գաղափարային կապը: Այդպէսով կը շեշտուէր նպատակը՝ «ապրեցնել ընկերութիւնը», ուր որ ալ ըլլայ ան, Հայաստանի, Մերձաւոր Արեւելքի, կամ Սփիւռքի մէջ: Լուսարձակումը կը ներկայացնէր Պարսկահայաստանի, հիւսիս-արեւմտեան Սուրիոյ (Քեսապ եւ շրջակայքը), Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի մէջ տարուած գործերը: Լուսարձակումէն վերջ, մասնաւորապէս շեշտուեցաւ Շուշիի հիւանդանոցին վերաշինութեան գործը. յետոյ ներկաներուն հաղորդուեցաւ Երկիր եւ Մշակոյթի Հայկական հարցին վերաբերեալ տարած աշխատանքն ու ծրագրերը: Ներկաները ստացան նաեւ Երկիր եւ Մշակոյթի «Հողին Ձայնը» թերթիկին նոր թիւը:

Ինչպէս ծանօթ է շատերուն, Երկիր եւ Մշակոյթը իր ծրագրերը կ'իրականացնէ շնորհիւ նուիրատուութիւններու, եւ որպէս հիմնական միջոց՝ կը կազմակերպէ ամառնային արշաւներ: Այդ արշաւներու մասնակիցները կուգան բազմաթիւ երկիրներէ եւ կ'աշխատին արհեստավարժ անձերու հսկողութեան ներքեւ: Կ'արժէ այստեղ համառօտել վերջին տարիներուն կատարուած գործերը: Արցախի մէջ, Շուշիի հիւանդանոցին ծրագիրը վերածուած է մասնագէտներու յանձնուած ամբողջական ծրագրի մը, իշխանութեանց հետ խորհրդակցաբար սահմանուած հասարակաց առողջապահութեան ընտրանքներու հիման վրայ: Կատարուած են ջեռուցման եւ տաք ջուրի կաթսաներուն շինութիւնը եւ վերաբուժական յարկի նորոգութեան հիմնական մասը: Հայաստանի մէջ, Սպիտակի մօտ Գոգարան գիւղի Երկիր եւ Մշակոյթի կողմէ վերակառուցուած եկեղեցիին կից, վերականգնուած է միջնադարեան հաղուագիւտ կոթող մը: Կապանի շրջանին մէջ, սկսած է Եղուարդ գիւղի եկեղեցւոյն նորոգութիւնը: Սուրիոյ մէջ աւարտած է Քեսապի թիւ 1 հին թաղամասի նորոգութիւնը, ուր հաստատուելու է տեղւոյն ապագայ հայ ազգագրական թանգարանը:

Երեսուն տարիներ անցած են արդէն Երկիր եւ Մշակոյթի հիմնուելէն ասդին: Կազմակերպութեան աշխատանքի կերպը մինչեւ այսօր կը մնայ նոյնը՝ մշակել ծրագրեր եւ կազմակերպել արշաւներ: Շօշափելի է արդիւնքը. աւանդական կառոյց մը կամ եկեղեցի մը փրկելով, հիւանդանոց մը նորոգելով, իր աշխատած վայրերուն հաւատարիմ մնալով, կազմակերպութիւնը տարբեր հայ հաւաքականութիւններու միջեւ կը ստեղծէ ամուր կապեր, հիմնուած՝ Երկրի գաղափարին վրայ:

Սիրոյ սեղանին ներկայ եղողներէն շատեր ծանօթ էին արդէն այս բոլորին: Անոնք սակայն տրուած բացատրութիւնները կը լսէին նոյն՝ առաջին անգամուան հետաքրքրութեամբ: Նոյնպէս ալ, անոնք ցոյց տուին իրենց վստահութիւնը կազմակերպութեան հանդէպ: Լուսարձակումին յաջորդող ընթրիքով վերջացաւ երեկոյթը: Գեղարուեստական բաժնին, ներկաները ունկնդրեցին ժողովրդական երգեր եւ Սիամանթոյէն բանաստեղծութիւն մը: Սիրոյ սեղանի փակման, Երկիր եւ Մշակոյթի վարչութիւնը արտայայտեց իր շնորհակալութիւնն ու գոհունակութիւնը, կոչ ուղղելով նաեւ բոլորին, որպէսզի արձանագրուին 2008ի ամառնային արշաւներուն, շարունակելու համար աշխատանքը ի նպաստ Երկրին եւ Ազգին:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

(Շար. Ա. էջէն)

առանձին լուծումի կը յանգի. առկա կ՚ըլլայ շնորհիւ Թուրքիոյ մասնաւորական այն հրջանակներուն ազդեցութեան որոնք այս մասին աւելի քաջատեղեակ ըլլալու ձգտում ցոյց կու տան եւ որոնց թիւը օրէ օր կ՚աւելնայ:

Որպէս լուծումի տանող ընթացք, կարեւոր կը նկատէր բաց եւ անկախ մխճարկումի մթնոլորտի մը ստեղծումը, առանց տեղի տալու անկէ հրաժարեցնել ուզողներու: Կը չեշտէր թէ այդ նպատակով կը մասնակցի Պոլսոյ Համաժողովին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՉԻՆԱՍՏԱՆԻ մէջ հակաֆրանսական ցոյցերը սկսած էին մեղմանալ եւ արդէն Սարքոզի բանագնացներ կը ղրկէ եւ Ֆրանսա կը հրաւիրէ այն հաշմանդամ չինացի երիտասարդուհին, որ Փարիզի ողջանցքին կը ջանար բոցը փրկել և Չինաստան վերադարձին ալ ընդունուած էր որպէս հերոսուհի: Ֆրանսական առաջին պատուիրակութիւն մը Չինաստան հասած էր Ապրիլ 21ին, գլխաւորութեամբ Ծերակոյտի նախագահ Ք. Փոնսըլէի: Այս վերջինը հազիւ հասած օդակայան, գրկած է չինացի երիտասարդկինը եւ Սարքոզիի նամակը կարդացած, ուր ան իր յուզումը կը յայտնէ Փարիզ պատահած միջադէպին առթիւ եւ զինք կը հրաւիրէ Փարիզ որպէս իր հիւրը: Ենթական յայտնած է թէ շատ ուրախ է եւ կ՚ուզէ զարկ տալ չին – ֆրանսական բարեկամութեան: Փոնսըլէի պատուիրակութենէն առաջ Փեքին կը փութայ նաեւ Սարքոզիի խորհրդականը՝ Լեվիթ: Միւս կողմէ, Պ. Տըլանօյէ, Ապրիլ 21ին թաղապետական խորհուրդի նիստին առաջարկած էր եւ ընդունիլ տուած որ Տալայ Լամային շնորհուի «Փարիզ քաղաքի պատուոյ քաղաքացի»ի տիտղոսը, թէեւ բոլորը համաձայն չէին եւ Չինաստան ալ զգուշացուցած էր: Ապրիլ 19ին, Փարիզի Չինացիներն ալ (4.000) ցոյց մը ըրին իրենց զօրակցութիւնը յայտնելու համար Փեքինի իշխանութեան:

ՈՒՏԵՍՏԵՂԷՆԻ գիները զգալի յաւելումներ կ՚արձանագրեն Ֆրանսայի մէջ եւ այդ յաւելումները կը կրեն, առաջին առթիւ, կաթնեղէնի վերաբերող ապրանքները: Ընդհանուր ձեւով այս մարզին յաւելումները հասած են 10%ի, բայց 26% է կաթին համար: Եւ այս վերջինը իր հետեւանքները ունի պանիրին եւ մածունին վրայ:

ՀԱՄԱՍԻ աքսորեալ ղեկավարը՝ Խալէտ Մէշաալ յայտարարած է որ կ՚ընդունի Պաղեստինեան պետութեան մը գոյութիւնը 1967ի սահմաններուն մէջ, այսինքն պետութիւն մը որ կը տարածուի Այսրյորդանանի վրայ (ներառեալ արեւելեան Երուսաղէմը) եւ Գազայի գօտին: Այս զիջումները բան չեն փոխեր ԱՄՆ-ու համար, հակառակ անոր որ ձեռք ձգուած են ԱՄՆ-ու նախկին նախագահ՝ Ճ. Գարթըրի կողմէ: Համասը, սակայն, կը կրկնէ որ պիտի չճանչնայ Իսրայէլը:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ընդլայնման պատասխանատու՝ Օ. Ռեհն յայտարարած է գերմանական «Տի Վելթ» օրաթերթին որ «եթէ Թուրքիա յարատեւութեամբ շարունակէ բարենորոգումներու իր ծրագիրը, կը խորհիմ որ կրնայ անդամակցիլ Եւրոպական Միութեան 10-15 տարիէն»:

Վ Ր Ի Պ Ա Կ

«Յառաջ»ի Ապրիլ 22ի մանր լուրերու մէջ, խօրոսքարի ճամբորդներու թիւը 640 է եւ ոչ՝ 64:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

Հրանոյշ եւ Արաքսի Գազազեան 100 եւրօ կը նուիրեն «Յառաջ»ին առ ի գնահատութիւն Թ. Արփիի «Որովհետեւ Հայ է» Օրը օրինին:

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérite de Sens-Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Տէսինի Արշակ Ջամալեան մասնաճիւղը՝ տիկ. Արաքսի Գալուստեանի մահուան առթիւ, շնորհակալութեամբ ստացած է 200 եւրօ, օրդ. Մարի եւ Նուարդ Գալուստեանէ եւ 50 եւրօ պրն. Սէպաստիէն Ջարդարեանէ:

□

SECTION SOSSE MAYRIG
MARSEILLE VILLE
organise une conférence
avec **HRATCH VARJABEDIAN**
(Rédacteur - professeur)

« LA FEMME ARMENIENNE DANS L'HISTOIRE CONTEMPORAINE
Lundi 28 avril à 19h30
au Centre F.R.A. HRAIR MAROUKHIAN
185 chemin des sables jaunes
13012 Marseille

Chants par la F.R.A. Badanis Marseille, conférence, soliste Naïra ABRAHAMYAN

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak—Mesrop de Marseille

Directeur : **Khatchig YILMAZIAN**

—CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

Commémoration du 93ème anniversaire du génocide

PARIS

Jeudi 24 avril
11h30 : Réception à la Mairie de Paris — Hommage aux victimes du génocide rendu par Bertrand Delanoë, dans les Salons de l'Hôtel de Ville de Paris (invitation obligatoire).
16h30 : Rassemblement et prises de paroles: ● Pour rendre hommage aux 1,5 millions d'Arméniens assassinés lors du génocide de 1915; **interventions** de Monsieur Jean-Michel Quillardet, Grand Maître du Grand Orient de France et de dirigeants politiques français, devant la statue de Komitas, Place du Canada - Cours Albert I[er] - 75008 Paris.
18h : Manifestation, de la statue de Komitas à l'Ambassade de Turquie, avenue des Champs-Elysées.
Dimanche 27 avril
10h-20h : Stèles du Collectif VAN : «Arméniens, Juifs, Tutsis, Darfuris», action de sensibilisation aux génocides et aux négationnismes. Oeuvres de l'APAF, Parvis de Notre-Dame de Paris.

A L F O R T V I L L E

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

A R N O U V I L L E - L E S - G O N E S S E

Dimanche 27 avril
10h30 : Départ du Square d'Estienne d'Orves (face au stade Léo Lagrange) en direction du Cimetière avec recueillement devant la stèle du groupe Manouchian;
11h : Cérémonie du souvenir au Monument aux Morts — Cimetière d'Arnouville (dépôt de gerbes, minute de silence et discours)
11h30 : Messe à l'Eglise Sainte-Croix de Varak, rue Saint-Just;
12h15 : Messe de requiem devant le Khatchkar situé dans le jardin de l'Eglise Sainte-Croix en présence des drapeaux;
12h30 : Marche en direction de la stèle commémorant le Génocide, située à l'angle des rues Jean-Jaurès et Saint-Just. Dépôt de gerbes, minute de silence, prière et discours.

L I V R Y - G A R G A N

Samedi 26 avril
16h : Hommage aux victimes du génocide, au Parc Lefèvre, devant la stèle du souvenir, RN3 - avenue du Consul-Général-Nordling.

S E V R E S

Samedi 26 avril
11h : Rassemblement devant le «Khatchkar» (face au Musée de la Céramique), dépôts de gerbes, prises de parole, à l'initiative de l'Association des Anciens Combattants et Résistants Arméniens et l'Association Cultuelle Paroissiale de l'Eglise Arménienne de Chaville.

C H A V I L L E

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.-ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ՚ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10-11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.-
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 24
JEUDI
24 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 80 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83րդ ՏԱՐԻ – Թիւ 21.945 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 83e ANNEE — N° 21.945

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԴՐԲԵՋԱՆԻ սահմանապահները Իրանի երկու քաղաքացի սպաննած են: Անոնք սահմանը ապօրինի կերպով անցնելով փորձած են ոգելից ըմպելի մտցնել իրենց երկիրը, ապա զինեալ դիմադրութիւն փորձած են սահմանապահներուն:

ՔՈՒէՅԹԻ մէջ, Ֆրանսայի արտաքին նախարարը եւ սուրիացի իր պաշտօնակիցը դէմ առ դէմ հանդիպում մը ունեցած են, Իրաքի օրակարգով միջազգային ժողովի մը ընթացքին: Ըստ հաղորդագրութեան մը Քուշնէր եւ Մուալէմ դէմ առ դէմ դրած են իրենց տեսակէտները: Ճշդուած է որ այդ հանդիպումը չի նշանակեր որ Ֆրանսա վերահաստատած է իր յարաբերութիւնները Սուրիոյ հետ, քանի ոչ մէկ յառաջդիմութիւն կայ Լիբանանի մէջ:

ՀԻԼԱՐԻ ՔԼԻՆԹԸՆ 10 կէտի առաւելութեամբ յաղթեց իր մրցակցին Փենսիլվանիոյ մէջ, Ապրիլ 22ին, ինչ որ շատ կարեւոր հանգրուան մըն էր իր ընտրապայքարին համար: Իր ընտրութեան պարագային տրամադիր է քարտէսէն ջնջել Իրանը: Արդարեւ, յայտարարած է որ «եթէ Պարսիկները կը նախատեսեն հիւլէական յարձակում մը գործել Իսրայէլի վրայ, պատրաստ եմ ոչնչացնելու Իրանը եւ իր գոյութեան վերջ տալու: Կ'ուզեմ որ Պարսիկները գիտնան»: Նոյն տեսակէտը պաշտպանած է նաեւ Պարաք Օպամա, ճշդելով սակայն թէ «քարտէսէն ջնջել Իրանը» արտայայտութիւնը չի կրնար լաւ արդիւնքներ տալ:

ԵՒՐՈՅԻ սակը օրէ օր կը բարձրանայ եւ Ապրիլ 22ին նոր մրցանիշ մը կոտրած էր: Մէկ եւրօն կ'արժէր 1,60 տոլար, ինչ որ կը նշանակէ թէ 2000էն ի վեր կրկնապատկած էր իր արժէքը:

ՄՈՍԿՈՒԱՅԻ «Մոսկովսկի Կորէսպոնդանտ» թերթը, որ յայտարարած էր թէ Փութին պիտի ամուսնալուծուի, ապա վերամուսնանայ, դադրեցուցած է իր հրատարակութիւնը, բաւական հարցականները դուռ բանալով: Խմբագրապետը պաշտօնազրկուած է եւ թերթը լոյս չէ տեսած ըսած է թերթին տնօրէնը ֆըրանսական գործակալութեան թղթակիցին:

ՖՐԱՆՍԱՅԻ առանց կեցութեան արտօնութեան բայց կանոնաւոր աշխատողները գործադուլի դիմած էին Ապրիլ 15էն ի վեր, պահանջելով որ իրենց կացութիւնը կանոնաւորուի եւ այդ ուղղութեամբ դաղթի նախարարը՝ Պրիս Հորթըֆէօ բարեացակամ քայլի մը դիմեց ի վերջոյ: Մինչ 100 հազարէ աւելի առանց կեցութեան արտօնութեան գաղթողներ կ'ուզեն որ ամբողջական ձեւով կարգադրութիւն մը ըլլայ, նախարարը յայտնեց թէ մէկ առ մէկ պիտի քննուի ամէն պարագայ: Այս աշխատաւորները առաւելաբար կը պատկանին պանդոկներու, ճաշարաններու եւ շինութեան ճիւղերու:

ԵՒՐՈՊԱ 1 ձայնասփիւռի կայանին ծանօթ տնօրէնը՝ Ժան-Փիէր Էլքապաշ որ միշտ կը պարծենայ իր ձեռնհասութեամբ, Երկուշաբթի օր, Ապրիլ 21ին, պնդած է իր գործակիցներուն որ չուշանային հաղորդելու Փասքալ Սեվրանի մահը, մինչ նախապէս (Ապրիլ 12) լա Գրուայի տուած իր մէկ հարցազրոյցին մէջ ըսած էր թէ իր ձայնասփիւռը այլեւս տէր է «բարոյականութեան կոմիտէ»ի մը որ պիտի կարենայ պայքարիլ համացանցի «սուտ», «չստուգուած» լուր-ըսաներուն դէմ, որոնք կը թունաւորեն լրագրութեան գեղեցիկ արհեստը...: Հազիւ քանի մը օր ետք, իր պնդումով Եւրոպա 1 կը հաղորդէր վերոնշեալ սուտ լուրը, որու համար Էլքապաշ յետագային ըսած է՝ «անձնապէս կը ստանձնեմ հաւաքական պատասխանատուութիւն մը»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՏ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓԱՐԻԶԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Ֆրանսայի նախկին դեսպան Է. Նալպանտեան որ արտաքին գործերու նախարար նշանակուած է, երկօրեայ կեցութեամբ Փարիզ կը գտնուէր շարք մը հանդիպումներու համար:

Ապրիլ 22ին ան տեսակցութիւն մը ունեցած էր ԻՒՆԷՍՔՕ-ի տնօրէն Գ. Մացուրայի, ֆրանսախօսութեան գլխաւոր քարտուղար Ապտու Տիուֆի հետ: Ծրագրուած էին հանդիպումներ նաեւ Մինսկի խումբին ֆրանսացի նախագահ Պ. Ֆասիէի, Իւ.էՄ.Փէ.ի ընդհանուր քարտուղար Փ. Տէվէճեանի, Փարիզի քաղաքապետին հետ:

Գ. Մացուրայի հետ տեսակցութեան ընթացքին Է. Նալպանտեան անգամ մը եւս անոր ուշադրութեան յանձնած է Հայաստանէն դուրս մնացած հայկական պատմական եւ մշակութային արժէքներու պահպանութեան գործին մէջ ԻՒՆԷՍՔՕ-ի աջակցութեան անհրաժեշտութիւնը: Մասնաւորաբար խոր մտահոգութիւն յայտնած է Նախիջեւանի մէջ Ազրպէջանի կողմէ հայկական խաչքարներու քանդումին մասին: Կոչ ըրած է որ այդ արարքը դատապարտուի որպէս մշակութային ահաբեկչութիւն:

* * *

Ի. ԹԷՐՆՈՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Նախագահ Ս. Սարգսեանի Ապրիլ 22ի հրամանագրով մրցանակներ շնորհուած են Ցեղասպանութեան ճանաչման գործին կարեւոր ներդրում ունեցած անձերու: Անոնց առաջինն է տքթ. Իվ Թէրնոն, երկրորդը՝ Ռուսաստանէն Եուրի Բարսեղով:

Այլ հրամանագրով մը Նախագահը Մովսէս Խորենացի մեդալով պարգեւատրած է ԱՄՆ-էն Ռ. Սմիթը, նոյնպէս Ցեղասպանութեան ճանաչման գործին մէջ ունեցած աւանդին համար:

* * *

ԵԱԳՈԲ ՔԻՒՆՑԼԷՐԻ ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՄԷՋ

Ապրիլ 22ին Երեւանի Ցեղասպանութեան Համալիրի Յուշերու պատին մէջ ամփոփուած է զուիցերացի միսիոնար եւ հայասէր Եագոպ Քիւնցլէրի գերեզմանէն բերուած հողը: Ան ծնած էր 1871ին. 1899ին մեկնած Ուրֆա: 1922ին մաս կազմած է Մերձաւոր Արեւելքի ամերիկեան Նպաստամատոյց կոմիտէին ու կազմակերպած ութ հազար հայ որբերու փոխադրութիւնը դէպի Սուրիա եւ Լիբանան: Նոյն թուականին որբանոց մը հիմնած է ուր ապաստան գտած են 1400 դեռատի Հայուհիներ: Պէյրութի մէջ հիւանդանոց մը բացած է հայ որբեւայրիներուն համար, Ազունիէի մէջ ալ թոքախտաւորներու առողջարան մը: Ե. Քիւնցլէրի ականատեսի վկայութիւնները՝ «Արեան եւ արցունքի երկրին մէջ» լոյս տեսած են 1921ին Փոցտամի մէջ:

Ցեղասպանութեան հիմնարկի ձեռնարկին ներկայ գտնուած են Քիւնցլէրի ընտանիքէն 14 հոգի, անոր թոռներն ու ծոռները, որոնք եղեւին մըն ալ տնկած են Յիշողութեան պուրակին մէջ: Նոյն առիթով ցուցադրուած է 1922ի վաւերագրական ֆիլմ մը ուր ներկայացուած է անոր ու կնոջը հոգածութեան առարկայ հայ որբերու կեանքէն հատուած մը: Ցեղասպանութեան թանգարանի տնօրէն Հ. Դեմոյեան ըսած է թէ ֆիլմը յայտնաբերուած է վերջերս, 23 վայրկեան կը տեւէ:

* * *

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՅՔԷՋԸ

Ցեղասպանութեան թանգարան – հիմնարկի կայքէջը սկսած է գործել, www.genocide-museum.am հասցէով: Տնօրէն Հայկ Դեմոյեան ըսած է թէ թանգարանը տարեկան շուրջ 150 հազար այցելու կ'ընդունի, ապահովաբար աւելի կ'ըլլայ կայքէջին միջոցով զօրութենական այց կատարողներու թիւը: Ներկայիս կայքէջը միայն անգլերէն է, մինչեւ Մայիսի սկիզբը կ'ունենայ հայերէն տարբերակ, յետոյ նաեւ ռուսերէն:

* * *

ԻՒՐԱՆԻՈՄԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐՈՒ ՀԱՅԵՒՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ապրիլ 22ին Հայաստանի բնապահպանութեան նախարարութեան եւ ռուսական ատոմային հետազօտութեան ընկերութեան միջեւ պայմանագիր մը ստորագրուած է. անով կը նախատեսուի Հայաստանի իւրանիոմի հանքավայրերը միասին ուսումնասիրել եւ շահագործել: Սեպտեմբերէն սկսեալ երեք ամսուան երկրաբանական հետազօտութիւններ պիտի կատարուին երկու երկիրներէն մասնագէտներու կողմէ, Սիւնիքի մարզին մէջ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԹՈՒՐՔԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐԷՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԴՈՒՐՍ ՁԳՈՒԱԾ Է

Ապրիլ 21ին Եւրոպայի խորհրդարանի Արտաքին յարաբերութիւններու յանձնախումբը քննութեան առած է Թուրքիոյ անդամակցութեան մասին Օ. Ռիւիժթէնի պատրաստած տեղեկագիրը: Ընդդծուած են ժողովրդավարութեան առումով բազմաթիւ թերիները, թէեւ Անգարայի ուղղակի չհակադրուելու յայտնի մօտեցումով մը: Ատոր արդիւնք եղած է տեղեկագրէն 1915ի նիւթին արտաքսումը. միայն թելադրուած է որ Թուրքիա վերջ տայ Հայաստանի դէմ կիրարկուած տընտեսական շրջափակումին, բանայ սահմանային անցքը, երկու կառավարութիւնները անցեալի պատահարներուն մասին անկեղծ վիճարկումի մը նախաձեռնեն, սկիզբ դնելով հաշտութեան հոլովոյթին որուն կ'օժանդակէ Եւրոպական յանձնախումբը:

Անկէ զատ, կը պահանջուի որ Անգարա յարգէ Մարդկային իրաւունքները, հիմնական ազատութիւնները, շարունակէ բարեփոխումները, ներառեալ պատժական օրէնքին 301րդ յօդուածը. կը պահանջուի տակաւին որ մնայուն լուծում բերուի քրտական հարցին, սկսելով օրինակի համար քրտերէնի դասաւանդութեան իրաւունքէն:

Իշխանութեան գլուխ գտնուող ԱԶ կուսակցութեան փակումի խնդրին առընչութեամբ եւրոպացի խորհրդարանականները պահանջած են որ Թուրքիոյ վճռաբեկ ատեանը յարգէ եւրոպական չափանիշերը: Տեղեկագրին մէջ նիւթ եղած է բանտերու մէջ չարչարանքը, կիներու տնտեսական եւ կրթական հաւասար իրաւունքներու տիրանալու հարկը:

Նշուած է որ «էրկէնէքօն» խմբաւորումին բացայայտումը պէտք է շարունակուի անաչառ ու անվերապահ ընթացքով, պէտք է իրենց բուն տէրերուն վերադարձուին վազըֆներէ գրաւուած կալուածները, բացուի Հէյպէլի կղզիի յունական դպրեվանքը, Կիպրոսէն ետ քաշուին թրքական զօրաբաժինները:

Տեղեկագիրը ընդունուած է 53 թեր, 2 դէմ քուէով. չորս երեսփոխան ձեռնպահ մնացած են:

«ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆ» ԻՐԱՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒՆ...

Միջին Արեւելքի քաղաքական վերիվայրումները զոհերու, վիրաւորներու, քանդումներու ամէնօրեայ լուրերուն մէջ յաճախ կը մոռնան, կամ կ'անտեսեն տուժող կարեւոր զանգուած մը. ան պատերազմի, ընդհարումներու, քաղաքական սուր վիճակներու վայր երկիրներուն քրիստոնեայ բնակչութիւնն է: Վերջերս պարբերաբար նիւթ եղաւ Իրաքի քրիստոնեաներուն տաժանելի առօրեան, Իրաքահայերու առընչուած դըրւագներով ալ. բայց որքա՞ն կը խօսուի Իսրայէլ եւ Պաղեստին հարցով Լիբանանի, Իրանի ուղղուած սպառնալիքներուն պատճառով այդ երկրի քրիստոնեաներուն, հետեւաբար հայ գաղութներուն անդոհանքին, անոր մղած արտագաղթին մասին:

Իրաքի պարագային բաւական մտածել տուող առաջարկ մը ըրած է Գերմանիոյ ներքին գործերու նախարարը Վոլֆկանկ Շաէօպլը. խօսք առնելով Եւրոպական Միութեան իր պաշտօնակիցներուն Ապրիլ 18ի Լիւքսէմպուրկի ժողովին, որպէս Գերմանիոյ թելադրանք, ան առաջարկած է յատուկ թուաքանակ յատկացնել ու եւրոպական երկիրներուն մէջ որպէս ապաստանեալ ընդունիլ Իրաքի քրիստոնեաները: Եւրոպացի նախարարները որոշած են Յունիսին լայն տեսակցութիւններու նիւթ ընել հարցը:

Իսկապէս, ինչպէս ներկայացուած է, մարդասիրական մղումո՞վ է միայն գերմանացի նախարարին առաջարկը: Այդ պարագային ինչո՞ւ չի մտածուիր օրինակ՝ Թուրքիոյ Քիւրտերը ընդունելու մասին: Թէ՞ կրօնական եղբայրասիրութեան մտահոգութիւնը ծանր կշռած է:

Հասկնալի է որ տրուելիք ապաստանը ժամանակաւոր չէ. ըսենք՝ մինչեւ պատերազմին աւարտը: Անգամ մը տուն, տեղ ըլլալէ, գործ բռնելէ, զաւակները դպրոց դնելէ ետք, ո՞ր Իրաքցի քրիստոնեան պիտի մտածէ վերադառնալ. եւ ո՞ւր:

Ու եղածը մարդասիրութի՞ւն, եղբայրասիրութիւն պիտակով պիտի չըլլա՞յ Միջին Արեւելքը իր քրիստոնեայ տարրէն մաս մը եւս պարպելու արարք:

ԻՐ ԽՕՍՔԸ

ՄԵՌԵԼՆԵՐԸ Կ'ԸՍԵՆ

Մեռելները կը խօսէին, փնտռելով «Մնացորդաց»ը.

— Դուք որ ողջ մնացիք անասելի Արհաւիրքէն, կրակէն ու գնդակէն, ջուրէն կամ կախաղանէն, աշխարհատարած սպանդէն, դուք արդէն սկսեր էք դատել մեզ: Կը յաւակնիք ըլլալ աւելի արթուն եւ իրատես, աւելի հասուն եւ խելացի:

Բարի՛: Ուրեմն բան մը արժած է մեր արիւնը, զոր մենք անխնայ ընծայեցինք լաւագոյն օրերու համար, հաւատալով աշխարհի արդարութեան:

Ուրի՜շ էր, այն ատեն, աշխարհի արդարութիւնը: Գոնէ այդպէս հաւատացինք մենք, սիրելով դարերու պատմութիւնը եւ ունկնդրելով մեր երգերուն: Ամէն պարագայի մէջ, մենք չմանրացանք, չստկարկեցինք, չխնայեցինք ինչ որ կրնար ծառայել ժողովուրդին եւ հայրենիքին փրկութեան:

Ունի՞ք դուք ալ այդ ոգին: Նոյնքան վճռականութիւն եւ նուիրում, դուրս հանելու համար այն ինչ որ ջախջախուեցաւ մեր ջարդ ու փշուր եւ ցիրուցան ոսկորներուն վրայ:

Ի՞նչ օգուտ ձեր գիտութենէն, առանց հաւատքի եւ խանդավառութեան, առանց վճռական կամեցողութեան:

**

Մեռելները կը խօսէին, լսելով խժալուր ձայները ողջերու ցիրուցան բազմութեանց.

— Կը յաւակնիք ըլլալ աւելի հասուն եւ խելացի: Բայց, ահաւասիկ լրացաւ 23 տարին, եւ դուք տակաւին ծուռ կը նայիք իրարու, նոյնիսկ մեր յիշատակը տօնած ատեն...

Մենք մեր բոլոր առելութիւնները մոռցանք անճիտումի ճամբուն վրայ: Թշնամին ինք միացուց մեզ, երբ կը լակէր մեր արիւնը չարախինդ ամբարտաւանութեամբ: Առանց դասակարգի, դաւանանքի, տարիքի կամ սեռի խտրութեան: Մեր մէջ ամէնէն համբակն ալ գոնէ գիտէր թէ ի՛նչ կ'ուզէ, եւ ինչո՞ւ կը մեռնի: Իսկ ձեր գիտունին գիտունը դեռ օրօր կ'երգէ: Ձեր մէջ կիրքն է որ կը յօրանջէ, եւ խուժանավարութիւնը ստգմտս կ'երգէ:

Եւ կը թուի թէ այսօր որոմը աւելի շատ է քան ցորենը: Դուք տակաւին չունիք հանդանակ մը որ լուութիւն եւ աշխատանք պարտադրէր բոլորին, յարգանք ներշնչելով նոյնիսկ օտարին:

**

Մեռելները կը տրտնջային, իրենց փոսացած աչքերը խրելով համատարած խաւարին մէջ.

— Մենք չտեսանք ո՛չ Եւրոպան, ո՛չ Ամերիկան: Հարեւան լեռն եղաւ մեր հորիզոնը, եւ կամ ծովափը: Մենք մեր մտքի պաշարնստացանք դաշտերէն եւ գիւղերէն, պակասը լրացնելով յետամնաց քաղաքներու մէջ:

Դուք, ահա տարիներէ ի վեր փռուած լուսացնցուղ ափերու վրայ, ազատ եւ անվտանգ, դուք ինչո՞վ կ'ապացուցանէք ձեր առաւելութիւնները: Ո՞ւր է չօշափելի արտայայտութիւնը ձեր կորովին ու մաքին, ձեր գերազանցութեան, ի խնդիր այն երկունքին որ լճացաւ մեր արեան ճապաղիքներուն մէջ:

Մեռելները դեռ ուրիշ բաներ ալ կը խօսէին, բայց...

24 Ապրիլ 1938

Շ.

ՍԵՒ ԱՐԵՒ

Անոնք հրաւիրուեցան մօտակայ պաշտօնատունը, վարչական ձեւակերպութեան մը համար, պարզ, ընթացիկ: Անոնք հրաւիրուեցան այնպիսի՛ քաղաքավարութեամբ մը, որ կը նմանէր ձեռնակապի: Եւ յանկարծ դիմակ փոխեց Ապրիլի գիշերը:

Գարունը կը ծաղկէր: Բարձրէն կ'անցնէին բուրումնաւէտ հոսանքներ դաշնօրօր, եւ առուները կը խլրտային մգլկթին շուրջ, պզտիկ ծափերով, մինչդեռ պատուտակը իր խաւարծիլներով կը մագլցէր գերանն ի վեր կախաղանին, աւե՛լի վեր, միշտ աւելի վեր, մինչեւ դէմքը անոր որ կը նայէր առանց տեսնելու՝ սեւ արեւ:

Տէ՛ր ամենակալ, մրմնջեցին դողդոջուն մամիկներ եւ հարսներ եւ թոռնիկներ, որ գացին ապաստանիլ մեր եկեղեցիներու գթութեան ծոցը, եւ մեր եկեղեցիները յանկարծ լեցուեցան Միջագետքի արեւախանձ աւազով:

Եւ գտնուեցաւ կարաւան մը, որ յառաջացաւ թարախոտ կայսրութեան անծայրածիր տափաստաններէն, գահավէժ անդունդներէն, բարձրաբերձ կատարներէն, բայց չգտնուեցաւ ո՛չ մէկ բարձունք որ ըլլար այնքան անճառելի եւ անհաս, որքան թշուառութիւնը քուրջէ վրաններուն, տեղատարափին տակ:

Եւ որքա՜ն անդունդներ հոգեկան խաւարի, որ իրենց ընդերքէն կ'արձակէին տափական տենչեր վաւաշոտ, բնազդներ անսանձական, եւ տակաւին բնազդներ, որ չունէին ոչ սկիզբ եւ ոչ իսկ ծայր: Ահա այդ աներեւոյթ ծայրով կարուեցան պատանքներ:

Պատմութիւնը արձանագրեց այս ժամը, երկրաշարժը, տարուէ – տարի աւելի կարճ պարբերութեամբ եւ տժգոյն արձակով: Հայուն թոպահար մարմինը դիակ մըն էր բարախուն եւ անփոխարինելի, բիւրաւոր դիակներ եղան հասարակ վրիճակագրութիւն: Այսպէս պատնեցաւ ներքին վարագոյրը:

Բայց ի՛նչպէս, սոսկը ինչպէս գիտցաւ իր կիսափուլ եւ նախնական զարբնոցէն դուրս հանել ամէնէն կատարեալը զէնքերուն, այն մէկը՝ որուն հարուածը կարելի չէր խուտորել, այն մէկը՝ որ չէր կրնար չզարնել՝ գինովի քրքիջով: Անագորոյն սոսկը զարկա՛ւ, առանց որ խանգարի իր մարսողութիւնը, կլկլակին դէմ յանդիման:

Փլուզումի այդ թուականէն ի վեր անցած են դարեր, եւ ահա՛ւասիկ այսօրուան օրը: Արեւը կը ծագի առաջին ժամերու կենսայորդ թարմութեամբ, շոճիներու սարսռուն ցանցէն ետեւէն, եւ կ'արձակէ ոսկեհուռ ճառագայթներ, մինչ բլուրը կը մայէ: Լոյս մը կար փլուզումի թուականէն առաջ, լոյս մը կայ վերջը: Ա՜հ, նոյնը չէ:

Այլեւս նոյնը չէ այն բանը, որ անգամ մը պղծուեցաւ աղի-լեղի ճանկերով: Ալան-թալանը քշեց տարաւ ամէն ինչ, եւ աւե՛լի արմատապէս՝ որքան պիտի չընէր հրաբխային լաւան որ կը ճենճերի: Փրկուեցան միայն չորս հատ դաշնակներ, որ գացին եւրոպական պողոտաներու վրայ հնչեցնել իրենց եղերերգը: Անցորդներ տապալեցան: Անոնք տապալեցան: Անո՛նք՝ քաոսին փոյթեռանդ հայթայթիչները:

Գարունը կը ծաղկէր: Բարձրէն կ'անցնէին բուրումնաւէտ հոսանքներ դաշնօրօր եւ առուները կը խլրտային մգլկթին շուրջ, պզտիկ ծափերով, մինչդեռ պատուտակը կը մագլցէր իր խաւարածիլներով գերանն ի վեր կախաղանին, աւե՛լի վեր, միշտ աւելի վեր, մինչեւ դէմքը անոր որ կը նայէր առանց տեսնելու սեւ արեւ:

Եւ տա՛ռապէս կմախատիպ, եւ տառապէս սովալլուկ, որբերը գիրար գտան լքումի ճամբաներուն վրայ, կիսամերկ, սովալլուկ, կմախատիպ: Անոնք բնազդաբար մէկզմէկու փարեցան փոխադարձ որդեգրութեամբ եւ զիրար կոչեցին քոյր, եղբայր, առանց գիտնալու որ մենք ունինք Մայր Հայաստան մը: Եւ որովհետեւ ունէինք մայր մը, մեր մարիկը լացաւ:

Եւ սակայն ո՛չ, չյանձնուեցաւ: Ան չյանձնուեցաւ երբ աղէտին սեւ թաթը կառչեցաւ իր պարանոցին, ինչպէս կը կառչի անիծեալ ձեռք մը, որ կը փորձէ քաղել լեռներուն ծաղիկը, իր բացառիկ գեղեցկութեամբ: Եւ այնպէս եղաւ, որ գալարուած կոթին հիւթով լղրճեցաւ անիծեալ թաթը, եւ տակաւին լղրճեց շատ բաներ, առանց քաղել կարենալու: Ծաղիկը կորսնցուց սակայն իր թերթերը, ցնցումին տակ, եւ թերթերը գացին ցրուել արմատախիլ եւ թառամած, բոլորն ալ ոտքի տակ եւ գարշապարի: Եւ գրեթէ անբարբառ:

Մտածելով ամէն անոնց որ անզօր էին եւ լռեցին, անոնց՝ որոնց լռութեան մէջ կար ուժ մը պայթուցիկ:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

«Յառաջ», Ապրիլ 1971

ԱՅՑ ՄԸ՝ ՄԱՆՈՒՇԱԿ ԼԵՌՆԱԳԻՒՂ

ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՎԲԵԱՆ

Մանուշակ անունով կը յիշուի Իզմիտ–Փահճէճիք-Իզնիք (անցեալի անուններով՝ Նիկոմիտիա-Պարտիզակ–Նիկիա) բնակավայրերու միջեւ, քարտէսին վրայ հիւսիսէն հարաւ գծուած առանցքին, Պարտիզակէն (դժուար անցանելի մօտ՝ 30քմ. ճանապարհով) դէպի հարաւ արեւելք, տաք եւ պաղ ջուր կոչուած երկու գետակներուն իրար միացած կէտէն վեր սլացող լանջին ամենաբարձր լեռնադաշտը, ուր դարեր առաջ Համշէնի կողմերէն եկեր հաստատուեր են հայախօս գաղթականներ, որոնք շուրջի հայ բնակչութեան կողմէ կոչուեր են «Լազ Հայեր»:

Մինչեւ 100 տարի առաջ հայաբնակ գիւղ մըն է եղեր Մանուշակը, որ այժմ կը կոչուի Մէնէքշէ Եայլասը եւ ամենամօտիկ գիւղը՝ «Քըրըրնթը»էն 5 քմ. հեռու է: Անցեալի հայախօս գիւղ — այժմու լեռնադաշտ (եայլա) Մանուշակի մէջ այսօր մնացեր են մի քանի քանդուած բնակարաններ, Փափազ Մահալլէսի (տէրտէրին թաղը) կոչուած հաւանաբար յունական փոքր թաղամաս մը եւ այս վայրերուն ներկայ բնակիչներն ալ իսլամացած վրացիներ են:

Մեր իջեւանած տանտէրերը մօտի հիմը քարաշէն, վերեւի մասը փայտաշէն դարաւոր բնակարանի փլատակը կնքեր են՝ «Կիրակոսին տունը», քիչ հեռուն, Հայոց գերեզմանատան ճամբուն վրայի փառաւոր ծառը՝ «Յակոբ», իսկ իրենց տան բարձունքի վերջին դաւիվերը՝ «Զարչարանք»:

Հինէն ի վեր ուշադրութիւնս գրաւած էր այս գիւղին անունը, որ լուսաբանուեցաւ իմ հիւրընկալներուս բացատրութեամբ: Ինծի ըսին, որ մէկ կամ երկու շաբաթ վերջ, գարնան առաջին շաբաթներուն այս ցուրտ բարձունքը ամբողջութեամբ պիտի ծածկուի հողէն պոռթկացող մանուշակագոյն ու դեղին մանիշակներով, ուրկէ բխած էր հին գիւղը իր անունը: Ալպիական այս բարձրաւանդակի հարուստ բուսականութեան մաս կը կազմեն այլեւայլ համեմներու կարգին ծոթրինը, իսկ միրգերու կարգին՝ ինքնաբոյս անուշաբոյր ելակը:

Մանուշակ գիւղը անցեալին ունեցած էր նաեւ կաղամախիներու շուքին տակ փայտաշէն անշուք եկեղեցի մը, որուն լուսանկարին հանդիպած էինք Թէոդիկի 1914 թուականի «Ամէնուն տարեցոյց»ի մէջ, էջ՝ 102:

Այսօր բացի արեւելեան ճակատի հիմերուն ու արեւմտեան պատի փորք մնացորդին հետքերէն, ոչինչ մնացեր է Մանուշակի եկեղեցիէն:

Մէկ ալ դարաւոր ծառերը, որոնց շնորհիւ կրցանք ստուգել եկեղեցիին տեղը, եւ որմերու մնացորդներուն վրայ դրուած բարձրախօսէն տարածուած կոմիտասեան պատարագով նկարուեցանք 1906 թուի Մանուշակ գիւղացի այրերու եւ կիներու նկարուած նոյն տեղը:

**

Սեւ ծովու լեռնային շրջաններուն Օսմանեան տիրապետումէն վերջ տեղի ունեցած կրօնափոխութեան բռնութիւններու պատճառաւ գաղթած Համշէնցիներէն ճիւղ մըն ալ եկեր հաստատուեր է 2000 մեթր բարձրութեամբ այս լեռնադաշտը, ուր մեր այցելած Մարտի վերջին օրերուն անձրեւի փոխան ձիւն կը տեղար, իսկ մշուշը պատած էր ամէն կողմը, եւ մենք հնարաւորութիւն չունեցանք ոչ արեւը տեսնելու, ոչ Իզմիթի ծովածոցը, ո՛չ Նիկիոյ լիճը եւ ոչ ալ Ուլուտաղը:

Աւելի տաք եղանակի եւ աւելի արեւոտ օրերու կրկին այցելելու յոյսով բաժնուեցանք Մանուշակէն, ուր տեղի հին բնակիչները մօտակայքի Հայերուն ծանօթ էին որպէս «Հայ Լազեր» կամ «Լազ Հայեր» իրենց լեռնականի յատկանշական խիստ բնաւորութեամբ ու ապրելակերպով:

«Ակօս»

ԱՊՐԻԼ 11 1915

Առաւօտը որ կը լուսնար Կարմիր կիրակի էր, ըստ հայկական օրացոյցի, և եղերականօրէն պիտի զուգորդուէր, ափսոս, Ազգին ճակատագրին: Կանուխէն ահ ու սարսափի մատնուած էր Պոլսոյ հայ բնակչութիւնն ամբողջ: Տխուր, սարսռազդին պատմութիւններ կը սկսէին ծայր տալ արուարձանէ արուարձան, եւ ծանր ձերբակալութեանց լուրեր կը հրջէին բերնէ բերան: Կէս գիշերուան մօտ, գրեթէ միեւնոյն ժամուն, իրենց տուներէն ժողվուած էին հայ մտաւորականներ, գրագէտ, երեսփոխան, բժիշկ, փաստաբան, հրապարակագիր, ուսուցիչ, ազգային գործիչ,— մեծ մասամբ անդամ՝ մեր չորս քաղաքական կուսակցութեանց,— նաեւ զանազան միութիւններու՝ կառավարութենէն վաւերացուած ներկայացուցիչներ, համախումբ 270 հոգի: Ամէնքնին մէկ՝ գիշեր մը միայն Սթամպուլի կեդրոնական բանտը մնալէ վերջ, յաջորդ օրն աքսորի ճամբան կը բռնէին Անատոլուի երկաթուղիով, մէկ մասերնին Չանղըրը, միւսն ալ՝ Այաշ տարուելով ամենախիստ հսկողութեան տակ: Քանի մը ամիս յետոյ, կը սկսէին հասնիլ արդէն ահաւոր լուրերը, մէջերնուն ոչ ոք մնացած էր ողջ, բացի անոնցմէ որոնք նուազ միմլի նկատուելով յաչս կառավարութեան՝ այլուր փոխադրուած էին, նաեւ անոնցմէ որոնք ազդու դիմումներու շնորհիւ արագ հայրենադարձութեան բախտաւորութիւնը կ'ունենային: — Ասիական բռնապետութիւնն իր է՛ն գարշելի կերպարանքովը կը ներկայանար մեզ: Մեր մտաւորականներուն այդ լուսաւոր փաղանգին ճղակոտոր եղած օրերուն գաւառի հայութիւնն ալ անգլուխ եւ անառաջնորդ մնացած կ'ենթարկուէր հին ու նոր ազգաց պատմութիւններէն դուրս ջուլումի մը որ վիթխարի գերեզմանոցներու կը վերածէր Փոքր Ասիան ծայրէ ի ծայր: Հարկ չենք տեսներ վերյիշելու բռնադաղթի եւ բռնամահի այդ տռամներն իրենց զարհուրելի դրուագներով, օտար գրիչներ մենէ շա՛տ աւելի խղճամիտ գտնուած են հատոր հատորի ետեւէ պատմագրելու համար զայն: Նահատակ. մեր եղբայրներուն յիշատակին նուիրուած գիրք մը անցեալ տարի հրապարակ ելած ըլլալով արդէն:

ՄԵՂՈՒԱԾԱՆ ՎԵՐԱԳՐՈՂ ՄԸ

Մասիս, Ծաղիկ եւ Ոստան պարբերականներուն երբեմնի խմբագրապետ Միքայէլ Շամտանճեան որ 1915 Ապրիլ 11ի մեծ Կարաւանին խառնուողներէն էր Չանղըրըէն Ուշագ իր տարագրութեան տաժանելի տարիներ բոլորելով՝ պոլսահայ սակաւաթիւ վերապրողներու շարքին է, Զինադադարէն յետոյ մայրաքաղաքս դարձին՝ փարեցաւ իր սիրական գրիչին եւ իրարու ետեւէ թարգմանաբար հրապարակ հանեց Հայ Դատին եւ Ցաւին նուիրուած հետեւեալ շահեկան հատորները՝ ազգային քաղաքական մատենաշար խորագրին տակ: 1. «Սարսափի երկրին մէջ» Հանրի Պարպիւս: 2. «Գաղտնի տեղեկագիր Հայաստանի ջարդերուն» Տքթ. Լեփսիուս: 3. Դեսպան Մորկընթաուի «Պատմածները»: 4. Դեսպան Ճերըրտի «Պատմածները»: 5. «Օսմանեան կայսրութեան ճակատագիրը» Ա. Մանտելշթամ: Ասոնցմէ զատ ինքնագիր լոյս ընծայեց աքսորականի իր սրտայոյզ յուշերը: Հայ Մտքին տուրքը Եղեռնին խորագրով:

ԹԷՈԴԻԿ

ՓԱՐԻԶԵԱՆ ՀԻՆԳՇԱԲԹԻՆԵՐԸ

ԳՈՀԱՐԸ

Իւրաքանչիւր հայու համար Գոհար Գասպարեանով մարմնաւորուած է Թումանեան-Տիգրանեանի «Անոյշ»ը: Բայց Ս. Մեսրոպ մշակութային կեդրոնի սրահին մէջ, Ապրիլ 17ի գրական-գեղարուեստական երեկոյի ներկաներուն համար, երգչուհին ներկայացաւ իր արուեստի ամբողջ երանգաւորումով: Շնորհիւ Արտաշէս Ոսկանեանի տրամադրած տեսերիզներուն, կարելի եղաւ ոչ միայն լսել, այլ նաեւ դիտել Գոհար Գասպարեանը տարբեր մեկնաբանութիւններով ու դերերով. Մէյերպէրի «Հիւգընոտներ»էն Մարգարիտի, Փուչինիի «Պոհեմ»-էն Միմիի մեներգները, նաեւ իր ամուսինին՝ Տիգրան Լեւոնեանի հետ, Վերտիի «Օթելլօ»յէն ծանօթ զուգերգը, կամ Ռախմանինովի «Վոկալիզը» ու անշուշտ «Անոյշ»ի խելագարութեան դրուագը:

Ապա, Կարէն Սիմոնեան պատմեց քանի մը յուշեր Գոհար Գասպարեանի եւ Տիգրան Լեւոնեանի հետ տասնամեակներու իր բարեկամական անցեալէն: Ան մասնաւորապէս ընդգծեց մշակութային այն կարեւոր դերը զոր Գոհարը ունեցաւ երաժշտական իր կեանքին մէջ եւ ատիկա՝ հակառակ զանազան պաշտօնական արգելքներու: Անոր շնորհիւ երաժշտասէր հասարակութիւնը յայտնագործեց ոչ միայն զինքը, ընդհանուր առմամբ, անյայտ կամ քիչ յայտնի համաշխարհային երաժշտութեան արժէքներ, այլեւ երգչուհին ջանքերով, անաստուածութեան քարոզչութեան տարիներուն, բեմերէն հնչեցին հայ հոգեւոր երգերը ու շարականները: «Հայ միջնադարեան երաժշտութիւն» անուան տակ քօղարկուած անոր այդ համերգներուն ընթացքին կը հնչէին «Տիրամայր»ը, «Ո՞ւր ես, մայր իմ»ը կամ «Սուրբ սուրբ»ը: Այդ հոգեւոր երգերով ալ աւարտեցաւ երաժշտական այդ հինգշաբթին:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՀԻՆ ԷՋ ՄԸ

ԱԶԳԻՆ ՎԻՃԱԿԸ

...Հոտն անհոտի՝ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներ յախուռն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միմիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չըկայ: Աւերած, սարսափի ու սանձարձակ կեղեքում՝ մէկ կողմէն, անտարբերութիւն, օտարամոլութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտօնն զգեցած է իբր հանդերձ յոր մերկութիւն մնաց ծածկի ի միմիտ աչաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կեանքը դիակնացած... Ո՞ւր է մեր խոհական Խորենացին, թող ելլէ՝ արիւնաքամ հողու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիքը իրենց պաշտօնին փարած էին անձնազոհութեամբ, իսկ մենք՝ կը յափշտակենք գործն՝ ընչաքաղցութեամբ:

Սիրտս փլած է:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

«Թէոդիկի տարեցոյց» – 1916-20

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒԿՐԱՆԻԱՅՈՒՄ

Մայրամուտի ցոլքերը խամրեցին, լուսինն արդէն նայում է վագոնի լուսամուտից ներս: Քսան տարի առաջ նա նկարեց այսպիսի լուսնեակ մի գիշեր Ուկրանիայում. պարտէզում հարթէ ծածկի տակ ծուարել է խրճիթը: Բարձր երկնքում տիրաբար լող է տալիս կախարդական լիալուսինը, որը հէնց նոր է դուրս եկել ամպերի շրջապատից: Զումակական սայլը քարշ է գալիս ճանապարհով: Ցողնած եզները մտել են եղէգներով աճած գետակը: Լուսնի մեղմ լոյսը ողողել է ե՛ւ բարդիները, ե՛ւ տափաստանը, ե՛ւ գիշերային խաւարի մէջ տարտամօրէն ուրուագծուող խուտորներն ու ջրաղացը...

Յաջորդ առաւօտեան, փոքրիկ կիսակայարանում, Այվազովսկին դուրս եկաւ վագոնից: Գնացքը կանգ էր առել դիմաւորելու ուշացած հանդիպակացը: Կողքից երգելով անցնում էր ժապաւէններով ու մանեակներով զարդարուած աղջիկների ուրախ մի խումբ: Գլխարկը թեք մի պատանի ջութակով ձայնակցում էր նրանց:

– Բարեւ ձեզ, երիտասարդներ: Ո՞ւր այդպէս,– սիրալիր դիմեց նրանց Այվազովսկին:

– Հարսանիք, պա՛ն, չէ՞ք գայ մեզ հետ,– գրգռիչ կերպով ձայն տուեց սեւաչ մի աղջիկ:

– Իսկ դա... հեռո՞ւ է:

– Ոչ, հեռու չէ. հրէն այն խոստորում,– ցոյց տուեց նա ագարակը դաշտի մէջտեղում:

Այդ դէպքում... գիտէք ինչ. օգնեցէք ինձ իրերս դուրս բերեմ գնացքից, եւ ես կը գամ ձեզ հետ...

– Ա՛յ, շատ լաւ է: Ա՛յ, պան եմ ասել,– երիտասարդը ձեռքի ջութակը տուեց սեւաչ աղջկան եւ Այվազովսկու յետեւից շտապեց վագոն:

Ուղեկցորդի եւ միւս ուղեւորների զարմացական հայեացքների տակ նա դուրս բերեց երկու ճամպրուկ: Այվազովսկին դրանք յանձնեց մօտ վազող բեռնակրին, իսկ ինքը վերցրեց միայն ալպոմն ու հետեւեց ոգեւորութիւնից իրեն կորցրած երիտասարդին:

– Օ՛հ, ինչ լաւ է, հիմա մենք այնպիսի՛ մի հիւր կը տանենք հարսանիք,– չէր կարողանում հիացմունքը զսպել երիտասարդը եւ տեղնուտեղը պար բռնելով աղջիկների հետ պտըտւում ի սրտէ ծիծաղող ծեր նկարչի շուրջ...

... Այվազովսկու յայտնուելը մեծ շփոթ առաջացրեց հարսի տանը: Բայց երբ Վասիլը, որը պարզուեց, որ հարսի եղբայրն է, յայտնեց նրանց, որ պարոն նկարիչը յատկապէս գնացքից իջել է գիւղական հարսանիքին ներկայ գտնուելու համար, բոլորը հանգստացան եւ դէմքերին ժպիտ երեւաց: Տան առաջ կանգնած էին տարբեր գոյնի ձիերով լծուած սայլեր. Նրանց բաշերը զարդարուած էին գոյնզգոյն ժապաւէններով ու թղթէ ծաղիկներով: Արդէն ամէն ինչ պատրաստ էր: Սպասում էին, որ Վասիլը գայ եւ գնան եկեղեցի: Նա էլ, ահա, եկել էր ու հետն այսպիսի պատուաբեր հիւր բերել...

Երբ Այվազովսկին կանգնեց հարսի առաջ եւ յարգալից խոնարհուեց, կապուտաչեայ գեղեցիկ աղջիկը ամաչեց եւ դէմքը ծածկեց շքեղօրէն ասեղնագործած թեւքով:

– Դէհ, Խրիստիա, երջանկութիւն եմ ցանկանում ամուսնական կեանքում... Սա էլ քեզ նուէր. բարով գործածես,– ասաց Այվազովսկին եւ աղջկան մեկնեց փոքրիկ թաւշեայ մի տուփ:

Հետաքրքրութիւնն աւելի զօրեղ դուրս եկաւ, քան ամաչկոտութիւնը. Խրիստիան երկչոտութեամբ բաց արեց տուփն ու հիացած բացագանչեց. կանաչ թաւշէ բարձիկի վրայ փայլփլում էին ոսկեայ շրջանակներում ամփոփուած մի զոյգ սքանչելի շափիւղայ... Այդպիսի շքեղ քարեր նա երազումն էլ չէր տեսել...

– Խրիստիա, դրանցով պսակուիր,– միաձայն գոչեցին ընկերուհիները չորս կողմից, եւ նրանցից մէկը տեղնուտեղը առաջ եկաւ ու հարսի ականջներից հանելով հասարակ օղերը, հագցրեց նկարչի նուէրները: Երկնագոյն քարերը նոր փայլ տուեցին աղջկայ կապոյտ, առանց այն էլ շողափայլ աչքերին:

«Ոչինչ,– մտածեց նկարիչը,– մեր գեղեցկուհի Վարենկան(*) մի քանի զոյգ այդպիսի օղ ունի: Թող այս շափիւղաներն էլ Խրիստիային զարդարեն»:

Զնգզնգացին հարսանեաց գնացքի զանգուլակները, որ հիմա ամբողջ ուժով սլանում էր դէպի մօտակայ այն գիւղը, որտեղ եկեղեցի կար: Տափաստանային փոշոտ ճանապարհը գալարւում էր դաշտերի միջով: Հեռւում երեւում էր զանգակատան սպիտակ գմբէթը, դէպի ուր շտապում էին նրանք: Այվազովսկին նստել էր այն կառքի մէջ, որով գնում էին փեսայի ծնողները, նրա հօրեղբայրն ու պապը: Նրան տեղաւորել էին ամենայարմար տեղում: Փեսայի հայրը չէր խնայել յարդը, իսկ նրա կինը՝ Գորպինան, նրա վրայ մի շքեղ, ծաղկաւոր փոսոց էր գցել...

– Սիրուն աղջիկ է իր համար ընտրել ձեր որդին,– դիմեց Իւան Կոնստանտինովիչը փեսացուի հօրը, յիսուն տարեկանին մօտ ամրակազմ մի գիւղացու՝ երկար, յարդագոյն պեխերով:– Ասենք, նա ինքն էլ գեղեցիկ երիտասարդ է:

– Ճիշդ էք ասում, իմ լաւ պարոն, բայց վատն այն է, որ այս աշխարհում միայն գեղեցկութեամբ ապրել չի լինի...

– Դէհ, ձայնդ կտրի՛ր, ծերուկ,– բարկացաւ նրա վրայ Գորպինան, գլխանոցի տակ ուղղելով թուխ մազերը: Չնայած նա յիսունին մօտ կին էր, բայց տեսնողը երիտասարդ կնոջ տեղ կը դնէր:

– Իսկ... բանն ի՞նչ է, գուցէ կ'ասէիք:

– Բանն այն է, իմ լաւ պարոն, որ մենք ինքներս թէպէտ հարուստ չենք, բայց երբեք աղքատ չենք ապրել: Իսկ որդիս, ահա, իր համար կին է առնում գիւղի ամէնաաղքատ ընտանիքից: Եւ որ ամենավատն է, չի ուզում ինձ ու եղբայրների հետ մի տան, մի օճախում ապրել: Թէ՝ մէկ էլ տեսար Խրիստայի երեսովը տուեցիք իր չքաւորութիւնը. վախենում է:

– Հապա ինչ, որդիս յիմար չէ. նա ինքն իր ականջով է լսել փոքր ժամանակ, թէ ինչպէս էր մայրդ անընդհատ երեսովս տալիս,– նորից մէջ մտաւ Գորպինան:

– Կը նշանակի դո՞ւք էլ սիրուց աղքատ աղջկայ հետ էք ամուսնացել, դէհ ուրեմն պէտք է հասկանաք ձեր որդուն եւ չմեղադրէք նրան,– ասաց Այվազովսկին իր վրայ զգալով փեսացուի մօր շնորհակալական հայեացքը:

– Ախր, ես առանց այդ էլ, լաւ պարոն, մտածում էի նրան բաժին հանել ինչից որ հնարաւոր է. մի երկու դեսեատին հող, մի կով, կ'օգնէի, որ տնակ էլ կառուցէր իր համար: Բայց հո՞ղն ինչով կը վարի: Եղած չեղածը մի ձի է, հօ չե՞ս կիսի: Իսկ որ միասին լինէինք, մի կերպ եօլա կը գնայինք:

Իւան Կոնստանտինովիչը լռեց, որովհետեւ հարսանեաց թափօրն արդէն կանգ էր առել եկեղեցու առաջ, որի մուտքի մօտ կանգնած էին նոյնպիսի ժապաւէններով ու թղթէ ծաղիկներով զարդարուած ձիեր:

– Է՛հ, ուշացանք, ուրիշները մեզնից շուտ են եկել,– դժգոհ նկատեց տարեց հարսանքաւորներից մէկը:

(Շար. 209)

(*) Վարենկա Մազիրովա – Այվազովսկու թոռորդու դուստրը:

Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱԼՖՈՐՎԻԼ :

Տիկին Նուարդ Գույումճեան եւ զաւակներն ու թոռները իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝ Յակոբ Գույումճեանի մահուան 29րդ տարելիցին առթիւ 200 եւրօ կը նուիրեն «Յառաջ»ի բարգաւաճման համար :

★ ☆ ★

Ի յիշատակ Գոհար Թէօլէօլեանին, Մինաս Թէօլէօլեանին, Ստեփան Գարամարտեանին եւ Գէորգ Տօնապետեանին, Մովսէս Պչաքճեան «Յառաջ»ին կը նուիրէ 100 եւրօ :

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

Հինգշաբթի, Մայիս 1

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այս առթիւ Լիոնի Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10ին Պատարագ կը մատուցուի :

կը պատարագէ

ԽՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérite de Sens-Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԱՐՍԷՅԼ

Հ Ր Ա Ւ Է Ր
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Ն Դ Ա Մ Ա Կ Ա Ն
Ժ Ո Ղ Ո Վ Ի

2006 / 2007 ԹԹ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Յարգելի Անդամ, Անդամուհի,
Սրբոց Թարգմանչաց մայր եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան վարչական խորհուրդը ներկայիս Ձեզ կը հրաւիրէ գալիք Ընդհանուր Անդամական ժողովին, որ տեղի պիտի ունենայ

Երկուշաբթի, Մայիս 5, ժամը 18ին
Սահակ-Մեսրոպ մշակութային կեդրոնի
Ա. Չրքաշեան սրահին մէջ
339 avenue du Prado - 13008 Marseille

Ընդհանուր ժողովի վերջաւորութեան ներկաները պիտի հիւրասիրուին ախորժաբերով մը :

Ձեր անհրաժեշտ ներկայութեան սպասումով, հաճեցէք ընդունիլ, յարգելի Անդամ, Անդամուհի, մեր լաւագոյն զգացումներու հաւաստիքը :

ի դիմաց վարչական խորհուրդի
ատենապետ ՌՈԲԷՐ ԱԶԻԼԱԶԵԱՆ

հոգեւոր հովիւ
ՁԱՏԻԿ ՎՐԴ. ԱԻԵՏԻՔԵԱՆ

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille.

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԱՆԻԷՌ.— Զապէլ Շեխիկեան 300 եւրօ առ ի գնահատութիւն թերթին Հայաստանի յեղընտրական շրջանի զարգացումներու նկատմամբ ունեցած ընթացքին :

DIOCESE DE FRANCE
de l'Eglise apostolique arménienne
15 rue Jean Goujon — 75008 Paris
Mgr. Norvan ZAKARIAN
Archevêque de France
a le plaisir de vous convier
au cycle de formations
« C O M P R E N D R E L ' H I S T O I R E A R M E N I E N N E »
Qu'il anime chaque mois
3ème séance :
dimanche 4 mai de 17h à 18h
Salle Nourhan Fringhian
15 rue Jean Goujon — 75008 Paris
Métros: Champs-Elysées Clemenceau, Franklin Roosevelt ou Alma-Marceau
— Entrée libre —
Renseignements : 06 29 38 96 14

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Պ Ո Ւ Լ Վ . Օ Տ Տ Ո Յ Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ
Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

Պուլվ. Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը վիճակահանութիւն մը կազմակերպած է Համբարձման առթիւ, Մայիս 1ին, ժամը 12:30ին :

MNA, 8 bld. Denis Papin
13015 Marseille

Կը հրաւիրուին բոլորը հաճելի օր մը անցընելու համար :

☐

Լ Ի Ո Ն - Վ Ի Լ Է Օ Ր Պ Ա Ն Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ

Կապոյտ Խաչի Լիոն-Վիլէօրպանի Արաքս մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ, միասին տօնելու Համբարձման տօնը, ինչպէս նաեւ Համբարձումներու անուանակոչութեան տօնը, ընտանեկան եւ բարեկամական ճաշի մը շուրջ (խորոված), Հինգշաբթի, Մայիս 1, ժամը 12:30էն սկսեալ Վիլէօրպանի Հայ մշակութային տան մէջ: Նաեւ վիճակահանութիւն: Ճաշագին՝ 12 եւրօ - երախաներու համար կէս գին :

Հեռաձայն : 04 78 26 28 71
04 78 45 17 55

☐

SECTION SOSSE MAYRIG
MARSEILLE VILLE
organise une conférence
avec **HRATCH VARJABEDIAN**
(Rédacteur - professeur)
« LA FEMME ARMENIENNE DANS L'HISTOIRE CONTEMPORAINE
Lundi 28 avril à 19h30
au Centre F.R.A. HRAIR MAROUKHIAN
185 chemin des sables jaunes
13012 Marseille
Chants par la F.R.A. Badanis Marseille, conférence, soliste Naïra ABRAHAMYAN

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

Commémoration du 93ème anniversaire du génocide

A L F O R T V I L L E

Dimanche 27 avril
SOUVENIR DES DEPORTES
10h30 : Messe en l'Eglise apostolique arménienne, rue Komitas;
12h : Requiem
12h30 : Rassemblement et défilé jusqu'au Monument Khatchkar, Place Achtarag;
12h45 : Dépôt de gerbes, Recueillement, Prises de parole.

A R N O U V I L L E - L E S - G O N E S S E

Dimanche 27 avril
10h30 : Départ du Square d'Estienne d'Orves (face au stade Léo Lagrange) en direction du Cimetière avec recueillement devant la stèle du groupe Manouchian;
11h : Cérémonie du souvenir au Monument aux Morts — Cimetière d'Arnouville (dépôt de gerbes, minute de silence et discours)
11h30 : Messe à l'Eglise Sainte-Croix de Varak, rue Saint-Just;
12h15 : Messe de requiem devant le Khatchkar situé dans le jardin de l'Eglise Sainte-Croix en présence des drapeaux;
12h30 : Marche en direction de la stèle commémorant le Génocide, située à l'angle des rues Jean-Jaurès et Saint-Just. Dépôt de gerbes, minute de silence, prière et discours.

C H A V I L L E

Dimanche 27 avril
12h : Messe de requiem en l'église Saint Grégoire l'Illuminateur.
12h30 : Marche à partir de l'église vers le Monument arménien de Chaville (face gare Chaville-RD);
12h40 : Cérémonie du souvenir avec dépôts de gerbes et prises de parole à la mémoire des 1.500.00 Arméniens (sur les 2.00.000 de l'Empire ottoman), victimes de ce génocide. A l'issue de cette commémoration, un vin d honneur sera offert dans la salle de l'église arménienne, 6 rue Père Komitas à Chaville.
Pour tout renseignement, téléphoner au : 01 47 09 23 18.

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակին :

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.-ի շրջանները ու զանազան մարզական միութիւններ :

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10-11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին :

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք - պարահանդէսը, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝
25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux
Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.-
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. - ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : Khatchig YILMAZIAN

—CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK-MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN
de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

ESPOIR POUR L'ARMÉNIE

VOYAGE EN ARMENIE ET AU KARABAGH
DU 6 AU 16 JUILLET
Logement en hôtel 3 étoiles en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh
— Lac Sevan, Khor Virab, Guéghard, Garni, etc... —
Prix 1550 euros
Serge Kurkdjian, tél. : 04 91 77 23 44
E-mail : serge@kurkdjian.org
www.espoirpourlarmenie.org

ՈՒՐԲԱԹ
ԱՊՐԻԼ 25
VENDREDI
25 AVRIL
2008

ՅԱՌԱՋ
ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար· 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·946
Fondateur SCHAVARCH MISSAKIAN
83e ANNEE — N° 21·946

ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՉԻ ՊԱՏԵՐԸ ՍԵՒԱԳՐՈՒԹԵԱՆ ՏԱԽՏԱԿԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ

Թրքական մամուլը կը տեղեկացնէ թէ Ախթամարի նորոգուած Ս. Խաչ եկեղեցիին ներքին պատերը սեւագրութեան տախտակի վերածուած են, պատմութեան յարգանքէն զուրկ մարդոց ամէն կարգի արձանագրութիւններով: Անոնք գամերով, քարերով, գրիչով, իրենց խելքին փչածը գրոշմած են հոն:

Վանի մշակոյթի եւ զբօսաշրջութեան տնօրէնը այցելուներու հակազդեցութեան վրայ հետաքննութեան ձեռնարկած է: Երկու մասնագէտ ղրկած է տեղւոյն վրայ, որպէսզի ճշդեն տրուած վնասը:

Եկեղեցիին նորոգութիւնը աւելի քան երեք միլիոն տոլար արժած էր. չէնքը հարազատ նկարագրին յարիր ձեւով մաքրուած, նորոգուած էր:

«Ախթամար յուշարձան – թանգարանը շատ կարեւոր արժէք է. պէտք է բոլորին պահպանութիւնը վայելէ: Պատմական կոթողներ մնալու պատիժը մեծ է: Եթէ գտնուին քանդողները, կը բանտարկուին: Սակէ նաեւ ա՛լ աւելի ուշադիր կ'ըլլանք» ըսած է զբօսաշրջութեան տնօրէնը:

ՀԱՑԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

Ս. ՍԱՐԳՍԵԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԻՆ ՀԵՏ

Նախագահը Ապրիլ 23ին կառավարութեան աղնթեր հարկային պետական ծառայութեան ղեկավար կազմին հետ խորհրդակցութեան ընթացքին ըսած է թէ նոր ղեկավարութիւնը իրաւունք չունի ժողովուրդէն պահանջելու որ գօտիները սեղմեն ու համբերեն չորս, հինգ տարի եւս, մինչեւ որ կատարուին երկրորդ փուլի բարեփոխումները: Ամէն բարեփոխումի հարկ է, ըսած է ան, ընկերանայ տնտեսական աճը եւ ժողովուրդին կենսամակարդակի բարելաւումը:

Հարկային ծառանութեան պետ Վ. Բարսեղեան եւ բաժիններու ղեկավարներ ներկայացուցած են ստուերային տնտեսութիւնը կրճատելու, կաշառակերութեան դէմ պայքարի, հարկային վարչարարութեան խստացման համար մշակուած ծրագիրները:

ԱՊՐԻԼ 24

ԹՈՒՋ ԷԻՆՔ ՈՒ ՀԱՅ

Ապրիլ 24ի 93րդ տարելիցին նշումները Փարիզի մէջ սկսան նախորդ երեկոյեան, Յաղթանակի կամարին անմար բոցին վերարծարծումի արարողութեամբ: Այլեւս աւանդական դարձած, ոչ իսկ ժամ մը տեւող այդ նախաքանը կրնար մանրանկար մը նկատուիլ 1915էն մեր հեռաւորութեամբ պարզուած ներկային:

Ուշագրաւ ըլլալու չափ սակաւաթիւ էր խումբը որ հաւաքուած էր Շան զ'Էլիզէի մայթին վրայ ու կը սպասէր կամարին տակ առաջնորդուելու:

Հայկական զոյգ պետութիւններու եւ ֆրանսական դրօշները, նախկին ռազմիկներու եռագոյնները եւ Ֆրանսայի պաշտօնական դէմքերու եռագոյն երիզները զբօսաշրջիկներու բազմութենէ մը կը տարբերէին այդ խումբը:

Նորէն ալ խորապէս յուզող, ցնցող էր տեսնել առաջին շարքին վրայ Ֆրանսահայ խորհուրդի նախագահ Ա. Կէօզեանի երկու ձեռքերէն բռնած դանդաղօրէն յառաջացող երկու վերապրած կիները: Անոնցմէ մէկը կորացած, սեւազգեստ, միւսը՝ տառացիօրէն ուղղակի կապ մը Ապրիլ 24ով յատկանշուածին հետ. Ռուբէն Սեւակի զաւակ՝ Շամիրամը: Գեղեցիկ, վայելուչ արտաքինին տակ ուր առաջին աչքի զարնողը կ'ըլլար հօրը դիմանկարով կրծքանշան մը լամբակին վրայ, ան յուզումի, տխրութեան, նոյն ատեն հպարտութեան խառնուրդ մըն էր. հակառակ առողջական հարցերու, եկեր էր Նիսէն, Անծանօթ զինուորին շիրիմին բոցը ինք արծարծելու:

Այդ երրորդութեան կը հետեւէին Ֆրանսայի առաջնորդ Նորվան արք. Զաքարեան, վեր. Ժ. Միքայէլեան, Ս. Սանթինիի գլխաւորութեամբ տասնեակ մը քաղաքական դէմքեր, իսկ կամարին տակ անոնց միացաւ Հայաստանի արտաքին գործերու նախարար Է. Նալպանտեան: Անդին, զինուորական փողերախումբը անվրդով կը նուագէր:

Ցետոյ ծաղկեպսակներ զետեղուեցան Ֆրանսայի կլիպրական ,սաորական համայնքներուն, Կրանտ Օրիանի, Փարիզի ու շրջակայ կարգ մը քաղաքներու, նախկին ռազմիկներու եւ դիմադրականներու, Ֆրանսահայ խորհուրդին, Ա. Սանթինիի ու Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան կողմէ: Ամէնէն շքեղն էր այս վերջինինը, կապոյտ – կարմիր – նարնջագոյն ծաղիկներով:

Բոցի արծարծումին Է. Նալպանտեանի քով Շամիրամ Սեւակի ու վերապրող մամիկին հետ մասնակցեցաւ մանուկ մըն ալ ու փողերախումբը հնչեցուց նախ հայկական, յետոյ ֆրանսական քայլերգները: Առաջինը ունկնդրուեցաւ յաւութեամբ, երկրորդին ձայնակցեցաւ կրակին շուրջ խմբուած բազմութիւնը: Մինչ կը տեւէին վերջին ձեւակերպութիւնները, փողերախումբը նուագեց նաեւ Երեւան – Էրեբունին: Անոր հնչիւնները աւելի երկար ատեն արձագանգեցին կամարին տակ, կարծես լեցնել ջանալով բացականերու ձգած պարապութիւնը:

Ցետոյ արարողութեան աւարտի յայտարարութեան հետ վերարծարծ բոցը, ծաղկեպսակները մնացին զբօսաշրջիկներու հետաքրքրութեան, լուսանկարչական փորձերու մեծ ախորժակին:

Հարիւր հոգի էինք. թերեւս քիչ մը աւելի: Վերապրող կորաքամակ մամիկը, Շամիրամ Սեւակը ու անոյշ մանուկ մը բոցը արծարծեցին: Յուզումի նշոյլ կար շատ աչքերու մէջ, մինչ Մեր հայրենիքը կը հնչէր. յետոյ գրեթէ հպարտութեամբ երգուեցաւ Մարսէյեզը:

Ա. ԹՈԹՈՅԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱ շատ նեղ կացութեան մատնուած է այն պահէն, երբ յայտնուած է որ պիտի կանոնաւորուին կեցութեան արտօնութիւն չունեցող աշխատաւորներու պարագաները: Անոնք գործադուլի դիմած էին եւ կանոնաւորման պահանջ ներկայացուցած, գլխաւորաբար Նէօյիի ծանօթ ճաշարանի մը առջեւ: Գաղթի նախարարը՝ Պրիս Հորթըֆէօ, հարցազրոյցով մը Ֆիկառոյի (Ապրիլ 24) կը ճշդէ որ զանգուածային կանոնաւորում չի կրնար ըլլալ: Ամէն մէկ պարագայ պիտի ուսումնասիրուի առանձին: Ձի խորհիր թէ 50 կամ 100 հազար աշխատաւոր կայ Ֆրանսայի մէջ, որոնք գաղտնաբար մտած են եւ յայտնուած կարգադրութենէն քաջալերուած են: Կը պնդէ որ որեւէ ձեւով շտապօրէն դիւրութիւններ ընողը չէ եւ գաղթի իր քաղաքականութիւնը չի փոխուիր:

Ժ.-Փ. ՌԱՖԱՐԷՆ, Ապրիլ 24ին, Չինաստանի նախագահին՝ Հու Ժինթաոյի կը յանձնէր ոչ միայն Սարքոզիէն նամակ մը, այլեւ նուէր մը: Այդ նուէրն էր տը Կօլի կենսագրութիւնը Իվ Կենայի հեղինակութեամբ եւ նպատակն էր հասկցնել Չինաստանի որ Ֆրանսայի քաղաքականութիւնը չէ փոխուած, քանի տը Կօլ արեւմտեան առաջին նախագահն էր որ Չինաստանը կը ճանչնար: Փարիզի քաոսային տողանցքէն ետք, Ֆրանսա ծունկի կու գայ Չինաստանի առջեւ, որ չվարանեցաւ «պոռնիկ» որակելու Ժաննտ'Արքը եւ նացիական կեռ խաչերով ներկայացնելու ֆրանսական դրօշակը, հակաֆրանսական իր զգացումները արտայայտելու համար:

ՎՐԱՑԻ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ՝ Իրակլի Օկրուաշվիլի, պաշտպանութեան նախկին նախարար, քաղաքական ապաստանի իրաւունք ստացաւ Ֆրանսայէն: Վրաստանի մէջ դատապարտուած էր կրաւորական կաշառակերութեան համար: Ենթական, կարեւոր դէմքերէն Վրաստանի արեւմտամէտ կառավարութեան, անցեալ Սեպտեմբերին ձերբակալուած էր Վրաստանի մէջ, որովհետեւ ամբաստանած էր նախագահը, որ կարգ մը անձերու սպանութիւնը հրահանգած էր: Ազատ ձգուած էր երաշխաւորագինի փոխարէն, բայց կը հետապնդուէր կաշառակերութեան համար: Կրցած էր Գերմանիա անցնիլ, բայց ձերբակալուած էր միջազգային հրամանագրի պատճառաւ եւ Ֆրանսայի յանձնըւած, քանի Ֆրանսան է որ իրեն վիզա մը շնորհած էր: Այժմ, ՕՖՓՐԱ-ն (Գաղթականներու ֆրանսական գրասենեակը) յայտնած է թէ ընթացք տուած է Օկրուաշվիլիի դրդապատճառներուն, որու ճակատագիրը կրնար վտանգուիլ Սահակաշվիլիի իր ընդդիմութեան պատճառաւ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ՎՐԱՍՏԱՆԻ յարաբերութիւնները կրկին վատթարացած են, որովհետեւ Թիֆլիս կ'ամբաստանէ Մոսկուան որ վար առած է տրոն մը (զինուորական հեռավար օդանաւ), ինչ որ Մոսկուա կը հերքէ: Ռուսաստանի համար բուն յանցաւորը Աբխազիան է:

ՖՐԱՆՍԱՑԻՆԵՐՈՒ 72%ը դժգոհ է Սարքոզիէն ըստ ԻՖՈՓ-ի (Մաչի համար) վերջին հարցախոյզին:

ԼԵՀԱՍՏԱՆ «ցաւոտ, բայց արդիւնաւոր», ինչպէս կը գրեն լրագրողները,

ՓԱՐԻԶԻ ՀԱՒԱՔՈՒՄԸ

Ապրիլ 23ի երեկոյեան Նոթր Տամի հրապարակին վրայ տեղի ունեցաւ երիտասարդական հաւաքումը: Ելոյթներ ունեցան Ռուանտայի, Տարֆուրի, Թութսիներու ներկայացուցիչներ ու հրեայ ուսանողներու միութեան ներկայացուցիչը: Ցեղասպանութեան հաւաքակաց անցեալի տէր ժողովուրդներու այս անդամներէն առաջինները ծանրացան յատկապէս աշխարհէն լսելի դառնալու համար ջանքերը միացնելու հրամայականին վրայ. նաեւ յանցաւորները պատժելու անհրաժեշտութեան: Իսկ հրեայ երիտասարդը շեշտեց Ֆրանսայի մէջ Ցեղասպանութեան եւս ժխտումը պատժող օրէնքը անյապաղ քուէարկելու հարկը:

Ինչպէս ուրիշ տարիներ, նշումներուն մասնակցութեան համար Փարիզ կը գտնուէր Գերմանիայէն Թուրք մտաւորական Ալի Էրթէմ: Ան հաւաքումին խօսք ալ առաւ, անգամ մը եւս կոչ ուղղելով Թուրք պատասխանատուներու որ աւելի չուշանան ճանաչումի իրենց պարտքը կատարելու:

Հրապարակին վրայ զետեղուած էին ցուցանակներ որոնք կը պատմէին Ի. դարու երեք ցեղասպանութիւններուն մասին: Երեկոյթը տեւեց արուեստագէտներու երգերով, նուագով:

աշխատանքի մը ձեռնարկած է վերապրեցնելու համար հրէական մշակոյթը, որ նախքան Բ. աշխարհամարտը, կարեւորագոյնն էր Եւրոպայի: Ձեռնարկը կը վերաբերի ամբողջ յիշողութեան մը վերապրումին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ցեղասպանութեան 93րդ տարելիցին առթիւ հայ ժողովուրդին ուղղած իր ուղերձին մէջ նախագահ Ս. Սարգսեան զոհերու յիշատակին ոգեկոչումին հետ, շեշտած է միջազգային ճանաչումի եւ դատապարտումի խնդիրը հետապնդելու վճռակամութիւնը: «Հայ ժողովրդի մի հսկայական հատուած բնաջնջուեց իր բնօրրանում եւ զրկուեց իր կենսատարածքից: Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման խնդիրը Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգի օրինաչափ եւ անխուսափելի մասն է» ըսած է ան: Աւելցուցած է թէ Հայաստան զոհերու յիշատակը պահելով հանդերձ, պատրաստ է վաղն իսկ բնականոն յարաբերութիւն հաստատելու Թուրքիոյ հետ, առանց որեւէ նախապայմանի:

* * *

ԵՐԵՒԱՆԻ ՋԱՀԵՐԹԸ

Ցատկապէս ուսանողներէ, երիտասարդներէ բաղկացած աւելի քան տասը հազար հոգի մասնակցած է ջահերթին որ սկիզբ առած է Ազատութեան հրապարակէն: Երիտասարդները կրած են ջահեր, մոմեր, պաստառներ, դիմելով Եղեռնի յուշարձանը: Հոն ծաղիկներ, ծաղկեպսակներ զետեղած են: Ջահերթին սկիզբը երիտասարդները այրած են թրքական դրօշակ մը:

Պաստառներուն հետ մասնակիցները կրած են դրօշակները այն 23 երկիրներուն որոնք ճանչցած են Ցեղասպանութեան իրողութիւնը:

ՍԹՐԱԶՊՈՒՐԿԷՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, ԱՆՑՆԵԼՈՎ ԵՐԵՒԱՆԷՆ

Եւրոպական խորհուրդին խորհրդարանական վեհաժողովին Ապրիլ 17ի նիստին Հայաստանի ուղղուած պատիժի սպառնալիքը «մեծ»երու եւ «փոքր»երու յարաբերութեան, Հայաստանի ներքաղաքական տուեալներուն, Ղարաբաղի հարցին առընչուած հեռանկարներու մասին բաւական բան կ'ըսէ: Սպառնալիքը կը կայանար Հայաստանը իր քուէի իրաւունքէն զրկելու վճիռի մը մէջ, եթէ մինչեւ յունիսեան նստաշրջանը Երեւան իրմէ ակնկալուածները կատարած չըլլար: Եւ ասիկա՝ ժողովրդավարութեան պիտակին տակ, որ քաղաքական ցանկալի վիճակ ըլլալէ առաջ, «մեծ»երէն «փոքր»երուն ուղղուած խրատականի, պահանջի, սպառնալիքի միջոց է շատ յաճախ:

Այդ կարգի առեւտուրներու մէջ օրակարգի չի գար օրինակ թէ ԱՄՆ-ու իրաքեան ներխուժումը, գրաւումը ու պատճառած ամէնօրեայ մահերը, քանդումները ի՛նչ աղերս ունին այն «ժողովրդավարութեան» հետ որուն սիրոյն Երեւան պէտք է սա ու նա ընէ, չպատժուելու համար: Պէտք է ազատ արձակէ տասը զոհ պատճառած խռովութեան յանցաւոր նկատուածները որոնք արդէն եւրոպական կանգունով «քաղաքական բանտարկեալ»ի վերածուած էն, պէտք է ցոյցերու օրէնքին վերջին փոփոխութիւնները ջնջէ, եւլն.:

Միակ համաձայնելին Մարտ 1ի դէպքերուն, անկախ, թափանցիկ, վստահելի քննութեան պահանջն է: Ճիշդ է որ նոյնինքն պետութեան հիմերը ցնցող այդ դէպքերը, հակառակ հարիւրեակ մը հսկողութեան տակ առնուածի, կամ ձերբակալուածի, իրենց ծանրակշիռ բնոյթին յարիր հետաքննութեան չենթարկուեցան տակաւին: Ստեղծուած է տպաւորութիւնը թէ իշխանութիւնները կը խուսափին սուր հակադրութենէ, կիրքեր լարելէ ու կը վարանին անհրաժեշտ վճռական քայլերու: Կը գոհանան երկրորդական, երրորդական տարրերու հետ զբաղելով, փոխանակ ձեռնարկելու բուն պատասխանատուներուն հետապնդումին, անոնց արդարութեան յանձնումին, եւլն.: Իսկ այս կացութիւնը, անկախ՝ եւրոպական խրատատուներու արժեւորումէն, զգուշաւորութեան խոհեմութենէ աւելի, նոր իշխանութեան տկարութեան առաջին ապացոյց կրնայ նկատուիլ:

Ասով հանդերձ, աւելի մտահոգիչ է եւրոպական ատեանին ազդարարութեան Ղարաբաղի հարցին երկարող բաժինը, թէեւ բացայայտ ոչ մէկ ակնարկութիւն կայ այդ մասին: Բայց ատիկա ակներեւ է, երբ այդ հարցին լուծումը մնացած է միջազգային ջանքերու, իսկ պատժուած աշակերտի դիրքին մատնուած Հայաստան մը մեծ հեղինակութիւն չի կրնար ունենալ մեծերու այդ կրկէսին մէջ: Արդէն յատկանշական էր տեղեկութիւնը թէ Ազրպէյճանի պատուիրակութիւնը ուշագրաւ աշխուժութիւն ցոյց տուած է Ապրիլ 17ի նիստին:

Դատապարտումի սեմին բերուած Երեւանը, զեղչուած իր հեղինակութեամբ, հասկնալի է որ պիտի դժուարանայ պահանջելու, առարկելու, մերժելու, երբ Ղարաբաղի կնճիռին կարգաւորման օրակարգով յաջորդ նիստը գումարուի Բաքուի ներկայացուցիչին, միջնորդ մեծաւորներու հետ ու անընդունելիներ սեղան բերուին: Արդէն ուշագրաւ էր Եւրոպական վեհաժողովին կողմէ Հայաստանի ուղղուած ազդարարութեան օրն իսկ Ազրպէյճանի արտաքին գործերու փոխնախարար Ա. Ազիմովի յայտարարութիւնը: Ան ըսած է թէ կ'ուզեն որ գոնէ ամիսը անգամ մը կազմակերպուին Մինսկի խումբի ընդլայնուած կազմով հանդիպումներ, հակամարտութեան կողմերուն հետ: «Ընդլայնուած կազմ»էն հարկ է հասկնալ նաեւ Թուրքիոյ, Գերմանիոյ, Շուէտի նման երկիրներու ընդգրկումը Ղարաբաղի հարցին լուծումի բանակցութիւններուն: Ըստ Բաքուի տեսակէտին, վերջին երեք երկիրները իրադրութեան նկատմամբ տարբեր մօտեցումներ ունին եւ ատիկա արգելք կ'ըլլայ որ Ֆրանսա, ԱՄՆ, Ռուսաստան մենաշնորհի վերածեն բանակցութեան ընթացքը:

Գաղտնիք չէ որ Ազրպէյճան առաջին օրէն ձգտած է միջնորդի դերով տեսնելու Թուրքիան. ու այդ պահանջը յարմարագոյն պահուն կը նորոգուի, երբ Երեւանի գլխուն կը ճօճի պատիժին սուրը:

Այս բոլորը մտածելու կը մղեն թէ նախագահական ընտրութեան ձախողութիւնը նոր իշխանութեան ոտքին տակ երերուն հող մը ձգելու վրէժին չէ՞ր ընդդիմութիւնը. այլապէս ի՞նչ իմաստ ունէր Սահմանադրական ատեանի վճիռը չընդունիլ, շարունակել անհնազանդութեան կոչերը, յաղթանակի պնդումները, մինչեւ որ կացութիւնը յանգեցաւ ուժ, ապա տասը անմեղ զոհի: Յստակ էր որ աւելի եւս Արեւմուտքը, Արեւելքը, Հիւսին ու Հարաւը տասը խրատ, քան սպառնալիք պիտի ուղղէին Երեւանի:

Այսօր, յատկապէս Փետր. 19էն Մարտ 1 երկարող հոլովոյթին յանգած կէտին վրայ մարդ կ'ուզէ պատասխան ունենալ հարցումին՝ թէ ի՛նչ կար ամէն գնով երկիրը անկայունացնող ընթացքին ետին. Ռ. Քոչարեանի ղեկավարութեան պատճառած դժգոհութիւնը ամոքելու անկեղծ ձգտո՞ւմ, թէ այդ դժգոհութեան շահարկումի նպատակը: Արտաքին որոշիչ ատեաններու բարեդէպ միջամտութեան ակնկալութի՞ւնը, թէ անոնց առջեւ խեղճացած Հայաստանով Ղարաբաղի հարցը ծուռ լուծումի մը յանգեցնելու ջանքը:

Անշրջանցելի հարցականներ, պատասխանի վախցնող տարբերակներով:

Ս. ԹՈԹՈՅԵԱՆ

Ն. ՍԱՐՔՈԶԻԻ ՈՒՂԵՐՁԸ ԿԸ ԲԱՒԷ՞Ր ՊԱՏԱՆԴ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ

«Գուրիէ էնթէրնասիոնալ»ը որ միջազգային մամուլէն ուշագրաւ էջերու ընտրանի մը կը ներկայացնէ ամէն շաբաթ, Ապրիլ 17ի թիւով 48 էջնոց թղթածրար մը տուած է, Ն. Սարքոզիի պաշտօնավարութեան առաջին տարին արժեւորող գրութիւններով: Անոնք առնուած են բազմաթիւ երկիրներու մամուլէն, ինչպէս թղթածրարին մէջ ընդգրկուած ծաղրանկարները: Աւելորդ է ըսել որ շատ սուր եւ յաճախ երգիծական երանգներով են գրութիւններն ալ: Ֆրանսայի նախագահը կը նմանցնեն Նափոլէոն Գ.ի, կամ Լուի ԺԴ.ին, կը համեմատեն իր նախորդներուն՝ Տը Կօլի, Միթերանի, Շիրաքի, նաեւ՝ Չինաստանի գահաճաններուն, ներկայի փոքրամարմին այլ ղեկավարներու՝ Պուտինի, Շաւէզի, Պէրլուսքոնիի հետ, եւլն.: Ամէնէն սուր քննադատութիւններուն թիրախ են անոր անկայուն ընթացքը, յարափոփոխ գաղափարները, ինքնացուցադրութեան մարմաջը, մակերեսային մօտեցումները, հարստութեան եւ հարուստներու, սուղնոց առարկաներու, հաճոյքներու ակներեւ հակումը, ամերիկամէտ քաղաքականութեան նախընտրութիւնը, եւլն.:

Այս թղթածրարին յօդուածներէն մէկը առնուած է գոլոմպական մամուլէն. Գոլոմպիայի «Սեմանա» (շաբաթ) շաբաթաթերթէն: Հասկնալի է որ նիւթը ՖԱՐՔ-ի պատանդ Ինկրիտ Պէթանքուրի ազատագրումի խնդրին մէջ Ն. Սարքոզիի ձախորդ եւ ապարդիւն, թերեւս ենթակային համար նոյնիսկ վնասակար նախաձեռնութիւններն են:

Լրագրողը կը յիշեցնէ ՖԱՐՔ-ի ղեկավար Մ. Մարուլանտայի ուղղուած Ն. Սարքոզիի կոչը որ սփռուեցաւ Ֆրանսական հեռատեսիլին միջոցաւ: Կ'աւելցնէ թէ այդ յեղափոխական կեռիլլաներուն գտնուած կոյս անտառները այդ սփռումը ընկալելու սարքով օժտուած չըլլալով, Մարուլանտա ոչ կրցաւ տեսնել, ոչ ալ լսել Ֆրանսայի նախագահը: Արդէն, կ'ըսէ յօդուածագիր Գապալլէրօ, այդ կոչը հեռատեսիլի արտադրութիւն չէր, կատարեալ սինէմա մըն էր եւ իրականութեան մէջ Ն. Սարքոզի խօսք կ'ուղղէր Ֆրանսացի դիտողներու, որոնք միայն կրնան գնահատել կոչին պարունակած զգացական արտայայտութիւններուն: Ապա հարց կուտայ թէ Ֆրանսայի նախագահը կը խորհի որ կեռիլլայապետը «Փարի Մաչ»ին բաժանո՞րդ է: Կը հեգնէ անոր «կ'երաշխեմ որ Ինկրիտ Ծնունդին իրեններուն հետ ըլլայ» խօսքը, զայն կապկումը նկատելով Մարթէն Լութէր Քինկի ծանօթ արտայայտութեան, աւելցնելով թէ այս վերջինը երբեք պիտի չկարենար երեւակայել, նոյնիսկ երազել թէ պատեհապաշտներու խումբ մը օր մը պիտի գողնար իր գեղեցիկ տարազումը: Յետոյ աւելի անտեղի կը նկատէ նոյն Մարուլանտային ուղղուած Սարքոզիի հետեւեալ դիմումը. «Պարոն Մարուլանտա, հանդիսաւորապէս կ'ըսեմ ձեզի որ ազատ արձակէք Ի. Պէթանքուրը եւ անոր մահուան պատճառ ըլլալու հեռանկարը բեռ չընէք ձեր խիղճին: Պարոն Մարուլանտա, հարկ է փրկել մահուան վտանգին ենթակայ կին մը»: Ու կը կրկնէ թէ սինէմայէ տարբեր բան չեն այդ պատգամները, կոչերը:

Այս նկատումին բացատրութիւնը հետեւեալն է. որքան ալ խոր ըլլայ Ն. Սարքոզիի մեծամտութիւնը, չի կրնար լրջօրէն խորհիլ թէ հեռատեսիլէ «հանդիսաւոր» իր ուղերձը, «անձնական յանձնառութիւնը», պիտի կարենան մեղմացնել անգութ կեռիլլայի մը անյողդողդ ղեկավարը որ զղջում, կամ մղձաւանջ բառած բաները չի ճանչնար:

Ֆրանսայի ղեկավարը լրջօրէն չի կրնար կարծել որ ՖԱՐՔ-ը մարդասիրական նկատումներով ազատ կ'արձակէ իր պատանդները. եթէ նման նկատումներ ունեցած ըլլային, արդէն պատանդներ առած պիտի չըլլային: Յետոյ, ո՞վ կրնայ մտածել որ առանց փոխարինութեան անոնք կրնան իրենց թանկագին բանտարկեալները ազատ արձակել: Չէ՞ որ միշտ ամենայն յստակութեամբ ներկայացուցած են իրենց պայմանները. պատանդներուն, կամ նոյնիսկ անոնց դիակներուն փոխարէն գումար կը պահանջեն, կ'ուզեն որ երկրին մէջ որոշ գօտի մը ապազինուի: Եւ իրականութեան մէջ անոնք են որ կը պարտադրեն պայմանները: Անկէ անդին, եթէ պատանդները իրենց ընտանիքներուն վերադարձնելու փափաքը անկեղծ է, կը մնայ զինուորական գործողութիւն մը, որ արիւն ու կրակ պիտի սփռէ, կամ գոլոմպական կառավարութեան եւ «ՖԱՐՔ»ին միջեւ երկխօսութիւն մը:

Նախագահ Սարքոզի ըսաւ նաեւ թէ իր հայրենակից Ինկրիտէն զատ, յանձնառու կ'ըլլայ ջանքերը կըրկ-

ՅԱՍՄԻԿ ՍԻՒՐՄԷԼԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԵՐԳԸ

Բարի աւանդութիւն է դարձել Յասմիկ Սիւրմէլեանի ստեղծագործական դասարանի ելոյթները ունկնդրել բոլոր նրանց համար, ովքեր նոր տաղանդներ ունկնդրելու հաճոյքն են ակնկալում: Դաշնակահար Յասմիկ Սիւրմէլեանը իր սաների ընտրութեան մէջ բծախնդիր է: Նրանց ոչ միայն արհեստավարժ ապագայ կարողականութիւնն է արժեւորում իր ստեղծագործական դասարանը ընդունելիս, այլեւ որպէս ստեղծագործ անհատ նրանց նուիրումին ու աշխատասիրութեանն է նախապատուութիւնը տալիս: Ստեղծագործական կարողականութիւն, նուիրում ու աշխատասիրութիւն: Ահա այդ երրորդութիւնն է դաւանանք դարձնում բոլոր նրանց համար, ովքեր աշխարհի տարբեր ծայրերից գալիս են նրա դասաւանդումով կատարելագործելու իրենց կատարողական արուեստը, իսկ սկսնակները խորացնելու կատարողական արուեստին տիրապետելու արհեստն ու վարժութիւնը:

Ստեղծագործական դասարանի աւարտական ելոյթը, որը գեղարուեստական ճաշակի բոլոր նրբութիւններն էր ընդգրկում, մի երեւելի համերգի տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրայ, որոնք մանուկ, պատանի ու երիտասարդ կատարողներին կրկին լսելու ցանկութիւն յայտնեցին:

Ելոյթը տեղի ունեցաւ Ապրիլ 15-ին Ֆրէզնոյի ազգային երաժշտանոցի լսարանում: Ելոյթին մասնակցեցին շուրջ երեսուն կատարողներ: Նրանց թւում էին Լիլիթ Ոսկանեանը, որը յուզական ներըշնչանքով նուագեց Շուպէրթի «Վալս»ը եւ Սովինյիի «Մարգիկները»:

Թաւջութակահար Վարդան Մարգարեանը Պէթհովէնի ստեղծագործութիւնն էր նախընտրել մասնակցելու համար ստեղծագործական անակնկալներով լեցուն այս համերգ-ելոյթին:

Ունկնդիրները սրահը չէին թողնում: Սերգէյ Ռախմանինովի տաղանդաւոր մեկնաբան Քօ Եու Ֆանկը երկրորդ անգամ բեմ հրաւիրուեց եւ ունկնդիրների ցանկութեանը ընդառաջելով կրկնեց օփ. 3 թիւ 2 Փրէլիւտը:

Յասմիկ Սիւրմէլեանի դէմքը գոհունակութիւն էր արտայայտում:

ԵՐԿՐՊԱԳՈՒ

ՓՈԽԱՆ ՏՈՄՍԻ

ԱԿԱՆՋԻ ՀԻՒՐ

Քանի տարիները կ'անցնին, այնքան աւելի կլոպրոթըր կը դառնայ Արմենակ, չես գիտեր ո՞ր կորսուած ժամանակը վերագտնելու համար, հակառակ Էլպիսի տրտունջներուն: Աղէն կ'երթայ, անդէն կ'երթայ, ականջի հիւր կ'ըլլայ, ինքզինք չարչարելու պատճառներ կը գտնէ:

Կրկին, ինք եւ Էլպիս, գացած էին հայկական երկրորդ մեծագոյն քաղաքը, որ կը կոչուի Լոս Անճըլըս: Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութեան յաջորդող ամիսը եւ պաշտօնական երդման հանդիսութեան օրը հոն գտնուած են: Եւ լսած են բանե՜ր, բանե՜ր... Այդպէս ըսաւ երբ հեռաձայնեց որ վերադարձած էին:

Շարունակուող ձմրան գարունն էր: Ժամադրուեցանք Ամերիկայի հերոս Ֆրանսացիի անունը կրող փողոցի ճաշարանը, որ համադամներով հազիւ թէ կարենայ մրցիլ Էլպիսի հետ: Իմամ պայըլտը, յունական աղցան, էփոլ տ'աճեէօ, մանթը եւ Շաթօ-նէօֆ–տիւ-փափ քաղցրահոտ եւ թաւշահամ գինի...

Էլպիս կ'ըսէր թէ լաւը այն էր որ արեւ կար եւ եւրոյով կարելի էր գնում ընել, կարեւորին հետ գնել անկարեւորը, քանի որ աժան էին: Ապա Էլպիս եւ Մակարուհի մասնագիտական նկատողութիւններ ըրին իմամ պայըլտըյին եւ մանթըյին մասին, եւ հերթը հասաւ կեդրոնականացի Արմենակին:

— Այնպէս բաներ լսեցի եւ տեսայ որս չէի կրնար երեւակայել անգամ: Գիտէի որ Լոս Անճըլըսի բանտերուն մէջ մեծ թիւով Հայեր կային, բայց երբ անոնց թիւը տուին, զարմացայ, տխրեցայ: Քսան հազարէ աւելի, եւ կիները կը կազմեն կարեւոր տոկոս: Սփիւռքի հարիւրամեայ կեանքի ընթացքին նման բան չէր լսուած, Թուրքիոյ մէջ, նոյնիսկ Օսմանցիներու օրով, նման բան չէր եղած: Ի՞նչ կը պատահի մեր ժողովուրդին:

— Ի՞նչ ըսեմ, սիրելիս, հոն նոր Սփիւռք մը կը կազմուի, կազմուած է, որ նախկինի շարունակութիւն չէ:

— Այս չէր բաւեր կարծես, Հայեր Լոս Անճըլըս նստած, իրենց հասկցած ձեւով պայքար կը մղեն Հայաստանի նախագահական ընտրութեան հարցով եւ կը պաշտպանեն Լեւոն Տէր Պետրոսեան մը, նախկին տխրադէմ նախագահը որ կ'ուզէր ոչ իսկ երեսուն արծաթի ծախել ազատագրուած Արցախը, որ ընտրուած էր խայտառակ պայմաններու մէջ, ոտնակոխելով ժողովրդական կամքը: Մարդիկ կան, Հայաստանէն մեկնածներ, որոնք մոռցած այս դառն իրականութիւնները կը պաշտպանեն բացասականութիւններու մէջ խրած անձը... Պայքար՝ երբ նորը արդէն ստանձնած է իր պաշտօնը:

— Գիտես, անոնցմէ ոմանք ծանօթ են ինծի: Հայաստանէն իրենց մեկնումը արդարացնելու համար կ'ըսէին որ ջուր չկար, հաց չկար, լոյս չկար եւ կը հայհոյէին այն նախագահին որուն պաշտպանները դարձած են: Անոնք չվերադարձան երբ ջուր կար, լոյս կար, հաց կար ... Ափսո՜ս:

Երբ կանգ առի, Արմենակ մենախօսելու պէս շարունակեց.

— Այդ քու ըսած անձերուդ վրայ գումարուած են նորեր, անհատական եւ անձնական բարեկամութիւններու տուրք տալով, փողոցը, նպարավաճառատան մէջ, կամ ճաշարանը, կրակ կը ժայթքեն, երկրին խաղաղութիւն եւ բարգաւաճում բերած նախագահը կը կոչեն փոքրիկ ռուկ, նորը՝ աւազակ: Բայց այդ չէ կարեւորը: Կարեւորը այն է որ անոնք մոռցած են երկիրը աղէտի մատնողները, հայրենիքը լքելու միտող ազգադաւ քաղաքականութիւն վարողները որոնք Թուրքին կ'ուզէին յանձնել երկիր հայրենին...

— Զե՞ս գիտեր որ հանրային կարծիքի յիշողութիւնը կարճ կ'ըլլայ:

— Կարճ կամ ոչ, այդ հանրութեան նկատմամբ իշխանութիւնները սխալ գործած են, տեսակ մը ազգասիրական ամօթխածութեամբ վերանկախացած Հայաստանի առաջին նախագահը դատարան չտանելով: Եւ ան ալ, անպատժելիութեան իրաւունքով, ամբոխային տրամադրութիւնները սրեց եւ վերաշինուող քաղաքին մէջ աւերներ գործեց: Իսկ ինչ որ իրեն պիտի չներէ պատմութիւնը, եւ կ'ենթադրեմ մեր ժողովուրդը, իր ամբարտաւան վերաբերումն է Հայոց բարոյական բարձրագոյն հեղինակութեան՝ Կաթողիկոսին նկատմամբ, որ գացած է մինչեւ իր դուռը եւ իր դուռը անոր դիմաց չէ բացուած:

Լռած էինք: Էլպիս, որ այս տեսակ հարցերով զբաղող չէ, պարզ իմաստութեամբ ըսաւ.

— Եթէ այն ատեն չդատեցին այդ մարդը, թող հիմա դատեն եւ գործուած աւերներուն համար զինք թող դատապարտեն հանրօգուտ աշխատանքի, թող աւլէ փողոցները, թող նորոգէ մայթերը, եւ հատուցում տայ կողոպտուած վաճառատուներու տէրերուն:

Մակարուհին, իր կարգին, ըսաւ.

— Էլպիս ճիշդ կ'ըսէ: Մարդիկ պէտք է գիտնան որ ոչ ոք օրէնքէն վեր է եւ երբեմն իշուն ւանակ պէտք է ըսել որպէսզի գիտնայ որ երկար ականջ ունի...

Սուրճ բերին, արեւելեան անուշեղէններով: Հազիւ սուրճը ըմպեցինք, անուշեղէնները մնացին: Սիրտ չէր մնացեր...

ՄԱԿԱՐ

ԲՐԻՆՁԻ ՇՈՒԿԱՆ ԿԸ ՎԱՆՑՆԷ

Ամէն օր քիչ մը աւելի սպառնական ոճով նիւթ կ'ըլլան սննդամթերքներու անբաւարար քանակն ու աւելցող գիները, յատկապէս թերաճ, յետամնաց երկիրներու մէջ: Սովի հեռանկարը խնդրոյ առարկայ է, երբ արդէն աշխարհի բնակչութեան կարեւոր տոկոս մը թերսնուցումէ կը տառապի: Այս կացութիւնը չեչտող ազդակ մը եղած է ներդրումի հիմնարկներուն կողմէ հողամշակման ապրանքներու շուկաներուն յայտնաբերումը: Կարելի՞ է չահագիտական նպատակներով բացատրել կացութիւնը:

Բրինձի օրինակը կրնայ երեւոյթը պարզաբանելու լաւագոյն միջոց ըլլալ: Այդ արտադրութեան միայն 7%ը միջազգային փոխանակութեան առարկայ կ'ըլլայ, մինչ ցորենին համար 20% է համեմատութիւնը, սոյային համար 30%:

Բրինձի արտադրութիւնը վերջին տասնամեակին տարեկան 0·5% աւելցած է, մինչ պահանջը՝ 1%: Այսուհանդերձ, գլխաւոր հարցը կարեւոր արտադրողներու — Հնդկաստանի, Վիէթնամի — արտածումին դադարէն ծագած է: Այս երկիրները կանխելու համար ներքին շուկայի վրայ բրինձի տագնապ մը, սահմանափակած են այդ սննդեղէնին միջազգային շուկաներ առաքումը, ամէն տարի քիչ մը աւելի կանուխէն: Վիէթնամ որ 2006ին մինչեւ Սեպտեմբեր արտօնած է բրինձի արտածումը, անցեալ տարի դադրեցուցած է Յուլիսին: Հնդկաստան նոյնը ըրած է, երեք ամսուան տարբերութեամբ: Առիկա ներածող երկիրները խուճապի մատնած է, մտածել տալով որ յետագային բրինձի հարկաւոր քանակը կրնան չունենալ: Վախի պատճառ է նաեւ պաշարներուն նուազումը: Հետեւանքը այն եղած է որ Փիլիպեանները, Էնտոնեզիա, կամ Նիժերիա, հակառակ բարձր գիներուն եւ եղանակին սկիզբին իսկ, կը սկսին նախազգուշութեամբ բրինձ գնել, շուկային հաւասարակշռութիւնը խախտելով:

Մասնագէտներ ճարը կը տեսնեն միջազգային միջամտութեան մը մէջ: Հարկ է, կ'ըսեն, միջազգային համաժողով մը հրաւիրել, մասնակցութեամբ արտադրող ու ներածող պետութիւններուն, ապա ճշդել տրամադրելի իրական քանակները եւ պահանջին չափերը: Առիկա առաջքը կ'առնէ տագնապին որ պիտի յայտնուի բրինձի չգոյութեամբ ու գիներու տարպայման յաւելումով:

Թ.Ա.Թ.

նապատկելու, որպէսզի լուծում մը գտնուի գոլոպմական այս հակամարտութեան: Լրագրողին համար առիկա ապացոյցն է որ ան ոչինչ հասկցած է այդ հակամարտութենէն: Ան ներքին բնոյթով է, քաղաքական, ընկերային ու տնտեսական բաւական խոր ու ամուր արմատներ ունի, որոնց շնորհիւ կը տեւէ կէս դարէ ի վեր: Հակամարտութիւն մըն է որ կեռիլլաներու պարագլուխը «Պարոն Մարուլանտա» կոչելով չի լուծուիր, այն համոզումով թէ ան առէ չլացած, առանց փոխարինութեան պիտի եօ տայ յիսուն տարի առաջ գրաւած զէնքերը:

ՔԱՂՀԱՆ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՊԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒԿՐԱՆԻԱՅՈՒՄ

Եկեղեցում, որտեղ պատարագից յետոյ պէտք է երեք զոյգի պսակադրութիւն կայանար, շատ ծխականներ էին մնացել: Բոլորը, յատկապէս կանայք, անյագ հետաքրքրութեամբ նայում էին Այվազովսկուն, որը տաճար մտաւ Գորպինայի թեւին յենուած: Իսկ սա սովորականից աւելի հպարտ էր քայլում: Վասիլը, որ փեսացուի հետ մի քիչ ուշ էր եկել, արդէն հասցրել էր բոլորին պատմել իրենց արտասովոր հիւրի եւ նրա տուած թանկարժէք նուէրի մասին: Եւ այժմ կանանց հետաքրքրութիւնից փայլող հայեացքներն ուղղւում էին մերթ ծեր պարոնին, մերթ երջանկութիւնից ցնծացող Խրիստիայի ականջօղերին: Տարէց քահանան, որ մի կողմ նստած հանգստանում էր պատարագից յետոյ, զարմացած լսում էր տիրացուի պատմածը նշանաւոր նկարչի մասին, որի անունը այնպէս յաճախ երեւում էր թերթերում: Եւ այդ անուանի մարդը եկել էր աղքատ Խրիստիայի պսակադրութեանը մասնակցելո՞ւ, խեղճ ու անօժիտ Խրիստիայի՞, որի հայրը ոչինչ չունէր բացի հին ու կիսախարխուլ խրճիթից եւ մի տուն քաղցած երեխաներից...

Քահանան զգուշութեամբ մի կողմ քաշեց խորանի վարագոյրը եւ հետաքրքրուած հայեացքը սկսեց պտտել տաճարով մէկ: Իւան Տարասովիչի եւ Գորպինայի կողքին, ձեռնափայտին յենուած կանգնած էր պատկառազդու մի ծերունի, մայրաքաղաքային ընտիր հագուստով, ալեզարդ փարթամ այտամօրուսներով եւ խիտ մազերով, ճակատը՝ բարձր, տակաւին սեւ, թանձր յօնքերի տակից նայող աշխոյժ, բարի հայեացքով: Այո, ճիշդ եւ ճիշդ այնպիսին, ինչպիսին լուսանկարուած էր թերթերում, երբ նշւում էր նրա գեղարուեստական գործունէութեան յիսունամեակը: Հայր Պիտրը բացագանչեց հիացած ու շտապեցրեց սարկաւագին.

— Շուտ արէք, ի՞նչ էք բերաններդ բացել կանգնել: Տուէ՛ք իմ տօնական շորերը: Այս մէկը չէ, զատկուայ շապիկս բերէք: Դուք էլ, բոլորդ զատկի շորեր հագէք: Այդպիսի մե՛ծ մարդու առաջ էք հանդէս գալու: Զէ՞ որ սա ոչ միայն նշանաւոր նկարիչ է, այլեւ գաղտնի խորհրդական, որը մուտք ունի թագաւորի պալատն անգամ: Բոլոր ջահերը վառեցէք, երգչախմբին էլ ասացէք, չցրուեն եւ այնպէս երգեն, ինչպէս ասենք, երբ ինքը՝ միտրոպոլիտն է շնորհ բերում մեր եկեղեցին: Դէհ, չո՛ւտ...

Տասը րոպէ էլ չէր անցել, որ Այվազովսկին ոտք էր դրել եկեղեցուց ներս, եւ ահա վառուեցին բոլոր ջահերն ու մոմերը սրբապատկերների առաջ, խնկի կապտաւուն ծխի փոքրիկ քուլաները ոլորուեցին կանթեղների վրայ, վերեւի դասում երգիչները մաքրելով կոկորդները հազացին, եւ խմբավարը՝ ծխական դպրոցի ուսուցիչը, կոչտ հայեացքով կարգի հրաւիրեց հազացողներին: Տօնական չքեղ հանդերձների մէջ խորանի յետեւից հանդիսաւոր յայտնուեց հայր Պիտրը, նոյնպէս չքեղ հանդերձաւորուած սարկաւագի ու տիրացուի ուղեկցութեամբ եւ բարի հովւի ձայնով արտասանեց.

— Պսակադրուող Աստծոյ ծառաներ Ֆիլիպ եւ Խրիստինիա, հաճեցէք մօտենալ գրակալին. Աստուած ձեզ պահապան...

— «Աստուա՛ծ պահապան»,— թնդաց երգչախումբը:

— Տե՛ս դու, Գորպինա, նոթաներով են երգում Խրիստիայի պատւին,— արմունկով կնոջը բոթեց Իւան Տարասովիչը:— Այնպէս երգում էին միայն այն ժամանակ, հինգ տարի առաջ էր դա, երբ պսակւում էր պան Գորենկիի որդին: Տե՛ս, տե՛ս, չապիկներն էլ են նոր, տօնական...

— Ինչպէս են զուգուել–զարդարուել, կարծես գեներալն է եկեղեցի եկել: Սարկաւագն ասաց, որ պարոնը գեներալ է, եւ որ ուզենայ թագաւորի մօտ էլ կը գնայ,— Իւան Տարասովիչի եւ Գորպինայի յետեւից շշնջաց նոյն այն սեւաչեայ աղջիկը, որն Այվազովսկուն հարսանիքի էր հրաւիրել:

Հարեւան խուտորների բոլոր բնակիչները հաւաքուեցին Իւան Տարասովիչի տան առաջ, սպասելով, որ ճահելները վերադառնան եկեղեցուց: Եւ, ահա, ճանապարհի վրայ փոշին քուլա–քուլա երկինք է բարձրանում, զնգզնգում են ձիերի բոժոժները, թնդում է երգը, խելահեղ թափով առաջ է սլանում հարսանեկան գնացքը, ձիերի բաշերին ուրախ ծածանւում են վառ ծաղիկներն ու գոյնզգոյն ժապաւէնները, իսկ կանայք շտապում են նրանց ընդառաջ, որպէսզի նորապսակների վրայ վարսակ եւ գայլուկասերմ շաղ տան...

Այվազովսկուն նստեցրին գեղեցիկ անկիւնում, սրբապատկերների տակ, ամենապատուաւոր հիւրերի միջեւ: Նկարիչը նստած տեղից հետաքրքրութեամբ հետեւում էր ուկրաինական պսակադրութեանը՝ իր բոլոր մանրամասներով: Ահա նորահարսը վեր է կենում սեղանի գլխից. Նրան մատուցարան են մեկնում:

(Շար. 210)

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérte de Sens-Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

Հինգշաբթի, Մայիս 1

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այս տարի Լիոնի Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10ին Պատարագ կը մատուցուի:

կը պատարագէ
ՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՑ. ՀԷՔԻՄԵԱՆ

DIOCESE DE FRANCE
de l'Eglise apostolique arménienne
15 rue Jean Goujon — 75008 Paris

Mgr. Norvan ZAKARIAN
Archevêque de France
a le plaisir de vous convier au cycle de formations
« COMPRENDRE L'HISTOIRE ARMENIENNE »
Qu'il anime chaque mois

3ème séance :
dimanche 4 mai de 17h à 18h
Salle Nourhan Fringhian
15 rue Jean Goujon — 75008 Paris
Métros: Champs-Elysées Clemenceau, Franklin Roosevelt ou Alma-Marceau

— Entrée libre —
Renseignements : 06 29 38 96 14

ԱԶԳ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին գրապահեստ մը ունի և կ'ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները յաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:

Հեռ. _ 01·53·79·80·69

Իմակ. _ mikael.nichanian@bnf.fr

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

CATHEDRALE APOSTOLIQUE ARMENIENNE SERPOTZ TARKMANTCHATZ

CONVOCATION A L'ASSEMBLEE GENERALE ORDINAIRE
(Exercices 2006-2007)

Cher(e,s) Membre(s),

Le Conseil de l'Association Cultuelle de la Cathédrale Serpotz Tarkmantchatz vous invite par la présente à la prochaine Assemblée Générale Ordinaire qui aura lieu le :

Lundi 5 mai 2008 à 18 heures

dans la salle «A. Tcherpachian»
du Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado
13008 Marseille

A l'issue de la réunion, un apéritif sera servi aux participants.

Comptant sur votre présence, veuillez agréer, cher(e,s) Membre(s), l'assurance de nos sentiments les meilleurs.

P/O le Conseil de la Cathédrale	Le Recteur de la Cathédrale
Le Président	**Révérend Père**
Robert Azilazian	**Zadik Avédikian**

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Շրջ. Վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Մարի-Ռոզ Սահակեանի, Պուլվար-Օտտոյի մասնաճիւղի ատենապետուհի, իր եղբօր՝ Սահակ Սահակեանի մահուան առթիւ:

□

Պ Ո Ւ Լ Վ . Օ Տ Տ Ո Յ Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ
Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

Պուլվ. Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը վիճակահանութիւն մը կազմակերպած է Համբարձման առթիւ, Մայիս 1ին, ժամը 12:30ին:

MNA, 8 bld. Denis Papin
13015 Marseille

Կը հրաւիրուին բոլորը հաճելի օր մը անցընելու համար:

□

Լ Ի Ո Ն - Վ Ի Լ Է Օ Ր Պ Ա Ն Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ

Կապոյտ Խաչի Լիոն-Վիլէօրպանի Արաքս մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ, միասին տօնելու Համբարձման տօնը, ինչպէս նաեւ Համբարձումներու անուանակոչութեան տօնը, ընտանեկան եւ բարեկամական ճաշի մը շուրջ (խորոված), Հինգշաբթի, Մայիս 1, ժամը 12:30էն սկսեալ Վիլէօրպանի Հայ մշակութային տան մէջ: Նաեւ վիճակահանութիւն: Մուտքի գին՝ 12 եւրօ – երախաներու համար կէս գին:

Հեռաձայն: 04 78 26 28 71
04 78 45 17 55

□

SECTION SOSSE MAYRIG
MARSEILLE VILLE
organise une conférence
avec **HRATCH VARJABEDIAN**
(Rédacteur - professeur)

« LA FEMME ARMENIENNE DANS L'HISTOIRE CONTEMPORAINE
Lundi 28 avril à 19h30
au Centre F.R.A. HRAIR MAROUKHIAN
185 chemin des sables jaunes
13012 Marseille

Chants par la F.R.A. Badanis Marseille, conférence, soliste Naïra ABRAHAMYAN

VOYAGE EN ARMENIE AVEC CHIRINIAN TRAVEL

Un voyage merveilleux et inoubliable soit pour des groupes, soit en individuel. Vol et service inclus à partir de 1.500 euros :
8 jours en hôtels 4 ou 5 étoiles (en chambre double) —
Repas dans les meilleurs restaurants — Guide français —
Toutes les excursions, toutes les entrées etc...

Nous sommes un Tour Oparator basé en Arménie.
En Italie et à Paris **Mlle DONARA** est notre représentante.

Visitez nos sites : www.chiriniantravel.com
www.urartutravel.eu

Adresse e-mail : info@chiriniantravel.com

Pour tous renseignements et programmes de voyages :
- **Bureau de Rome: Chirinian Travel** — ☎ + 39 06 64520118
- **Bureau d'Erevan: Chirinian Travel** — ☎ + 374 91481277
- **Représentante à Paris: Mlle Donara** — Port. : 06 29 15 56 63

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90-ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.-ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10-11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN *դաշտին վրայ* 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք *– պարահանդէս, Իսի-լէ-Մուլինոյի* PACI *սրահին մէջ, հասցէ՝*

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.-
06 80 88 12 21

Հ. Մ. Ը. Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Les Activités du Mois d'Avril du Centre Culturel Sahak–Mesrop de Marseille

Directeur : Khatchig YILMAZIAN

— CONCERT DU CHOEUR ARMENIEN DE MARSEILLE SAHAK - MESROP
Direction : Khatchig YILMAZIAN
Soliste : Suzanna BAGAMIAN-ARMAGAN de l'Opéra d'Erevan
Au piano : Juliette YILMAZIAN
Dimanche 27 avril à 16h30
en l'église de Saint-Loup

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ'ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով Նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ'ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր Հոգեւոր Հովիւներուն և հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01·43·59·67·03 *թիւէն:*

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ԱՊՐԻԼ 26-27
SAMEDI-DIMANCHE
26-27 AVRIL
2008

LE NUMERO: 1,20€

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21.947 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 83e ANNEE — N° 21.947

ԱՊՐԻԼ 24

ՓԱՐԻԶ

Գ. ՏԸԼԱՆՈՅԷ՝

«ԱՊՐԻԼ 24-Ը ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԸՍԵԼՈՒ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՕՐ Է»

Ապրիլեան ոգեկոչումի շրջանակին մէջ վերջին տասնամեակին այլեւս աւանդութեան կարգ անցած է Փարիզի քաղաքապետին ընդունելութիւնը: Այս տարի եւս քաղաքապետարանի չքեղ դահլիճը շուրջ երկու երրորդով լեցուած էր հրաւիրեալներով: Անոնց մէջ էին վերապրած երեք դէմքեր՝ Շամիրամ Սեւակ, Ովսաննա Գալուստեան եւ Միհրան Ինճէարապեան: Հոն էին հայկական երեք յարանուանութիւններու առաջնորդները՝ Նորվան Արք. Զաքարեան, Գրիգոր Եպիսկ. Կապրոյեան եւ վեր. Ժ. Միքայէլեան, քաղաքապետական մարմիններու եւ հայկական կազմակերպութիւններու, կուսակցութիւններու, Հրեայ համայնքի ու Գրանտ Օրիանի ներկայացուցիչները:

Ողջունելով ներկաները եւ բեմին վրայ իրեն կողքին կանգնած Հայաստանի արտաքին գործերու նախարար Է. Նալպանտեանն ու Ֆրանսահայ խորհուրդի նախագահ Ա. Կէօվճեանը, Պ. Տըլանոյէ Ապրիլ 24ը յատկանշեց որպէս ճշմարտութիւնը ըսելու եւ պատմութեան հաւատարմութեան օր: Հայոց ցաւը նըկատեց մարդկութեան պատկանող ցաւ, քանի որ պատահածը ցեղասպանութիւն մըն էր: Մաղթեց որ անոր պատասխանատու քաջութիւնը գտնէ իր անցեալը դիտելու, որպէսզի երկու ժողովուրդներուն միջեւ վերջապէս բարեկամութիւնը հիմնուի պատմական իրողութեան վրայ:

Ցետոյ անդրադարձաւ Փարիզի հարըստացումին մէջ հայկական ներդրումին. անոր արդի լաւագոյն տուեալը նկատեց այն որ «Հայաստան այսօր ունի արտաքին գործերու փարիզցի նախարար մը»...: Դրուատիքով անդրադարձաւ Է. Նալպանտեանի դեսպանութեան մօտ տասնամեայ շրջանին, վստահութիւն յայտնելով որ անոր նոր պաշտօնին վըրայ ալ անխաթար կը շարունակուի Ֆըրանսա – Հայաստան ամուր կապը:

Գ. Տըլանոյէ նաեւ յայտարարեց որ յառաջիկային Փարիզ կ'ունենայ «Երեւանեան պարտէզ» մը որ հաւանօրէն կ'ըլլայ Կոմիտասի արձանին եւեւի ծառուղին:

Իր խօսքը աւարտեց, ներկաներուն հետ ժամադրուելով 2009ի նոյն օրուան համար:

Օրուան երկրորդ ելոյթը ունեցաւ Ա. Կէօվճեան. ան օրը սահմանեց որպէս յիշողութեան, ամփոփումի, սուգի ժամադրութիւն մը, նոյն ատեն անդրադարձներու եւ հարցականներու: Պատահարէն 93 տարի ետք, այսօր, այլեւս անընդունելի նկատեց հազար անգամ գրուած, կրկին ու կրկին ըսուած իրողութեան մը խնդրականացումը, ժխտումը: Ցիշեց յատկապէս Թրքական ժխտողականութեան Ֆրանսայի մէջ գործօն ներկայութիւնը, ան ալ «Թուրք Հիթլէր»ին՝ Թալաթի անունը կրող խըմբակով մը: Պարտք նկատեց ազգային արժանաւորութիւնը, յարգանքը վերահաստատելու մինչ տակաւին մեզի հետ են այլեւս սակաւաթիւ վերապրողները: Անկէ անդրադարձաւ ժխտումը պատժող օրէնքին կէս ճամբան մնալուն, կոչ ուղղելով որ կառավարութիւնը գայն փոխանցէ Ծերակոյտին ու վաւերացուի անոր կողմէ ալ, որպէսզի այլեւս չխօսինք այդ մասին: Ատոր հետ անդրադարձաւ Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան համար Ֆրանսայի մէջ նախատեսուած հանրաքուէին. պնդեց որ այդ պայմանը անփոփոխ պահուի:

Իր ելոյթը աւարտեց, խօսքը ուղղելով վերապրածներու երրեակին. «Այս հանդիսութիւնը ձեզի ձօնուած է. դուք ուժի մեր աղբիւրն էք, մեզի հետ մնացէք դեռ երկար ատեն: Վստահ եղէք որ պիտի չհրաժարինք մեր հաւատարմութենէն. երբե՛ք»:

Վերջին ինը տարուան Հայաստանի Փարիզի դեսպան ու նոր կառավարութեան արտաքին գործերու նախարար նըշանակուած Է. Նալպանտեան շնորհակալութիւն յայտնեց Փարիզի քաղաքապետին որ Ապրիլ 24ի ընդունելութիւնը աւանդութեան վերածեց: Ողջունեց բոլոր այն դէմքերը որոնք իրենց կեցուածքով արժանաւորութիւն տուին, յարգանք ընծայեցին Ի. դարու առաջին եւ աւաղ ոչ վերջին ցեղասպանութեան զոհ մեր ժողովուրդին: Ցիշեց Միթերան – Քոհլ զոյգին արի քայլը որով Բ. աշխարհամարտի զոհ ֆրանսացի ու գերմանացի զինուորներուն միասնաբար յարգանք մատուցանեցին: Ցոյս յայտնեց որ պիտի գայ օրը երբ հայ եւ Թուրք պատասխանատուներ ալ պիտի խոնարհին Ցեղասպանութեան խորհրդանիշին առջեւ: Կրկնեց Թուրքիոյ հետ առանց նախապայմանի յարաբերութիւն մշակելու Երեւանի պատրաստակամութիւնը:

Ինք եւս շեշտելով Հայաստանի ու Ֆրանսայի բարեկամական սերտ կապը, Երեւան հրաւիրեց Պ. Տըլանոյէն:

Է. Նալպանտեան նոյն օրն իսկ վերադարձաւ Հայաստան, ձեռնարկելու իր նոր պաշտօնին որ ամէնէն բարդն ու փափուկն է, յատկապէս երկրին ներկայի պայմաններուն մէջ:

Քաղաքապետարանի ընդունելութիւնը շարունակուեցաւ պատուասիրութեամբ մը:

* * *

Փարիզի ոգեկոչումներուն յետմիջօրէի բաժինը սկսաւ Ս. Ցովհաննէս-Մկրտիչ Մայր եկեղեցիին մէջ Նորվան Արք. Զաքարեանի մատուցանած պատարագով: Ներկայ էին գերպ. Գրիգոր Կապրոյեան եւ վեր. Ժ. Միքայէլեան: Եկեղեցին լեցուն էր ամբողջութեամբ: Արարողութեան աւարտին ժողովուրդը ուղղըւեցաւ դէպի Կոմիտասի արձանը:

Հոն երեկոյեան հաւաքը սկսաւ Ֆրանսայի թեմին առաջնորդ Նորվան Արք. Զաքարեանի գլխաւորութեամբ եկեղեցականներու դասին աղօթքով որուն յաջորդեցին քաղաքական ելոյթները:

Ֆրանսահայ խորհուրդի նախագահ Ա. Կէօվճեան օրուան իմաստը ամփոփեց «Ոգեկոչել, բայց նաեւ պահանջել» տարազով: Իրմէ ետք խօսք առին քաղաքական կուսակցութիւններու եւ քոյր համայնքներու ներկայացուցիչները: Նաեւ երկու վերապրող կիներ՝ Հարիւրմէկ տարեկան Ովսաննա Գալուստեան (Մարսէյլէն) ու Շամիրամ Սեւակ (Նիսէն):

Ընկերվարական կուսակցութենէն Սարսէյլի քաղաքապետ Փիւփոնի յանուն ընդհ. քարտուղար Ֆր. Հոլանտի ծանուցաւ 1915ի իրականութեան Թուրքիոյ կողմէ ընդունուելու հարկին վրայ. խոստացաւ որ իրենց կարելին պիտի ընէին այդ երկրին Եւրոպայի անդամակցութեան մասին ֆրանսական հանրաքուէի նախապայմանը պահպանելու համար:

Ս. Փոնիաթովսքի կը ներկայացնէր Փ. Տէվէճեանն ու Ժ.-Փ. Ռաֆարէնը որոնք արտասահման կը գտնուէին ու ներողու-

(Շար.ը Դ. էջ)

ԵՐԵՒԱՆ

Ըստ աւանդական կարգին, Ապրիլ 24ի առաւօտուն Գարեգին Բ.ի կողմէ Ս. Էջմիածնի Մայր տաճարին մէջ մատուցուած հոգեհանգստեան պատարագէն ետք Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբաններուն հետ գացած է Եղեռնի յուշարձանը: Հոն նախագահ Ս. Սարգսեանի, Ազգային ժողովի նախագահ Տ. Թորոսեանի, վարչապետ Տ. Սարգսեանի, նախարարներու, երեսփոխաններու, զինեալ ուժերու ապայական կազմին, բարձրաստիճան պաշտօնատարներու, դեսպաններու ներկայութեան յուշարձանին անմար կրակին շուրջ հոգեհանգստեան արարողութիւն կատարած է, ապա նախ ինք ու նախագահ Ս. Սարգսեան ծաղկեպսակներ զետեղած են յուշարձանին. ծաղկեպսակներ զետեղուած են նաեւ նախարարութիւններու, գերատեսչութիւններու, քաղաքական ուժերու, ուսանողական, գիտական ու արուեստի միութիւններու, տարբեր կազմակերպութիւններու կողմէ:

Օրուան առընչութեամբ իր ելոյթին մէջ վարչապետ Տ. Սարգսեան ըսած է. «Չըկայ մի հայ ընտանիք, որն Ապրիլի 24ի ողբերգական իրադարձութիւնների կապակցութեամբ այսօր մեզ հետ չգայ, չկայ մի ընտանիք, որը չի առընչուել այդ ողբերգական իրադարձութիւններին: Մենք պէտք է պատմութիւնից դասեր քաղենք: Աստուած տայ մեզ իմաստութիւն այդ դասերը քաղելու համար, որպէսզի նման ողբերգութիւններ ապագայում չկրկնուեն: Կարծում եմ, որ մենք պէտք է այնքան խելօք լինենք, որ հասկանանք՝ ապագայում նման ողբերգական իրադարձութիւններից խուսափելու երաշխիքն այն է, որ պէտք է լինենք ուժեղ եւ համախմբուած: Աստուած տայ մեզ խելք, հասկանալու այս պարզ ճշմարտութիւնը»:

Ամբողջ օրը, մինչեւ գիշերուան ուշ ժամեր շարունակուած է ժողովրդական հոսքը դէպի Ծիծեռնակաբերդի բլուրը ուր հազարաւորներ ծաղիկներ զետեղած, ապա պահ մը խոնարհած են 1915ի մէկուկէս միլիոն զոհերու յիշատակին վառած անմար կրակին առջեւ:

* * *

ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՑՈՅՑԸ

Լ. Տէր Պետրոսեանի գլխաւորած Համաժողովրդական շարժումը նոյն օրը երթ մը կատարած է դէպի Ծիծեռնակաբերդի յուշարձանը: Ազատութեան հրապարակին փակ ըլլալուն պատճառով ան մեկնած է Սարեանի արձանի մօտէն, անցած՝ Բաղրամեան պողոտայէն, Օրբելի եւ Կիեւեան փողոցներէն: Մասնակիցներու թիւը հասած է 15–20 հազարի: Երթը աւելի քաղաքական հանրահաւաքի բնոյթ առած է, երբ մասնակիցները ճամբան վանկարկած են «Լեւո՛ն, Լեւո՛ն», «Սերժիկ հեռացի՛ր», կամ «Ցաղթե՛լ ենք»: Կիեւեան կամուրջէն բոլորը լուռ, բռունցքները բարձրացուցած բարձրացած են յուշարձանի բլուրը: Մարզահամերգային համալիրին մօտ իրենց միացած է Լ. Տէր Պետրոսեան եւ գլխաւորելով երթը, ծաղկեպսակ զետեղած, ապա յարգանքի տուրք մատուցանած է զոհերու յիշատակին:

ՍԱՐՔՈԶԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՄՈՒՏՔԻՆ ԴԷՄ Է...

Ն. Սարքոզի աւելի քան մէկուկէս ժամ արտայայտուեցաւ Ապրիլ 24ին, պատասխանելով հեռատեսիլի նախ երկու գլխաւոր լրագրողներու (Փուավր տ'Արվոր եւ Տաւիտ Փիժատաս), ապա երեք մասնագէտ լրագրողներու: Բոլոր մեկնաբանողները կը ծանրանան այն կէտին վրայ, որ նախագահը ընդունած է որ սըխալներ գործած է, թերացումներ ըրած, բայց եւ այնպէս չծածկեց թէ շատ գոհ է իր տարած քաղաքականութենէն: Մինչեւ իր գալը իշխանութեան գլուխ, Ֆըրանսան ետ մնացած էր, ժամանակին հետ չէր քալած ու ինք չէր կրնար ամէն բան կարգադրել եւ դարմանել հապճեպ կերպով, մէկ տարուան մէջ: Ամէն պարագայի մէջ, վճռած է շարունակել իր բարենորոգումները: Ինչ կը վերաբերի գնելու կարողութեան նուազումին, յանցաւորը ինք չէ, յանցաւորներն են ԱՄՆ, քարիւղի գինը, մեծ վաճառատուները (գիները աւելի մեծ յաւելումներ կրած են Ֆրանսայի մէջ քան այլուր): Նախագահը արտայայտուեցաւ նաեւ Չինաստանի եւ Թիպէթի մասին, Աֆղանիստանի ու Ի. Պէթանքուրի, Համասի, Իրանի եւ ինչպէս միշտ բոլոր հարցերուն մասին, ներքին թէ արտաքին:

Երբ հարցում եղաւ Սահմանադրութեան փոփոխութիւններու մասին, գլխաւորաբար հանրաքուէի պարագային, որ այլեւս պարտադիր չէ Եւրոպական Միութեան ընդլայնման համար (ինչ որ էր Շիրաքի օրով) եւ ուրեմն Թուրքիոյ անդամակցութեան, Սարքոզի կրկին երկդիմի պատասխան մը տուաւ: Ցստակ ըսաւ որ իրեն համար Թուրքիան Եւրոպա չի գտնուիր, Կապադովկիան Եւրոպա չէ, միայն Թուրքիոյ մէկ շատ փոքր մասը Եւրոպայի մաս կը կազմէ, ուրեմն ի պահանջեալ հարկին հանրաքուէն կրնայ տեղի ունենալ, բայց պարտադիր չէ: Օրինակ տուաւ Զուիցերիան, որ եթէ անդամակցիլ ուզէ, պէտք չէ որ հանրաքուէի հարց ըլլայ իրեն համար, քանի որ Եւրոպա կը գտնուի: Այս նոր յայտարարութիւնը կրնայ ուրախացնել Ֆրանսահայերը, եթէ այն համոզումը ունին որ վաղը Սարքոզի ճիշդ հակառակը պիտի չըսէ: Այս հարցին կապակցութեամբ, չըմոռնանք որ դեռ քանի մը օր առաջ, Ընկերվարական Մոսքովիչի շնորհաւորած էր Սարքոզին, որ այս նոր կարգադրութեամբ դուռը կը բանայ Թուրքիոյ, մինչ Տէվէճեան այդ դուռը կը գոցէ, որովհետեւ Հայ է:

Արտաքին քաղաքականութեան մասին, Սարքոզի յայտնեց թէ Համասի ոչ մէկ ղեկավարի ձեռքը կը սեղմէ քանի կ'ուզէ քարտէսէն ջնջել Իսրայէլը, նոյն դիրքն ունի Իրանի նկատմամբ: Ցատկանշականն այն է որ եթէ կ'ընդունի քանի մը թերացումներ ներքին ճակատի վրայ, արտաքին գետնի վրայ շատ գոհ կը մնայ: Զընդունիր անգամ որ այդքան աղմուկ հանել Ի. Պէթանքուրի համար վնասեց անոր ազատ արձակման, ինչպէս յայտնած է ենթական իսկ:

Հետաքրքրական է նկատել, որ լրագրողները կը շեշտեն միայն իր սխալները ընդունելու փոքր խոստովանութիւնը...:

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԼԵԶՈՒԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՇԵՐՏԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ»

ՀԵՂԻՆԱԿ ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

(Պէյրութ – 2006)

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

Լեզուաբանական կամ բառագիտական գիրքեր, իրենց մասնագիտական բնոյթին ու ձեռնհաս հեղինակներու սակաւութեան զոյգ պատճառներով՝ հազուադէպօրէն կը հրատարակուին մեր օրերու Սփիւռքին մէջ:

Սփիւռքը ձեռնթափ եղած է կարծէք իր ժառանգած գլխաւոր աւանդէն՝ լեզուէն. աւելի ճիշդ՝ արեւմտահայերէնէն, որուն հրապոյրն ու գեղեցկութիւնը հիմա այլեւս քիչեր գիտեն դժբախտաբար, անոր պահպանումին ու գոյատեւումին համար շատ քիչեր կը մտատանջուին, իսկ գայն մասնագիտօրէն ուսումնասիրողներուն թիւը կարելի է համրել ձեռքի մը մատներուն վրայ...:

Այս մարզին մէջ անակնկալ ու ողջունելի յայտնութիւն մը եղաւ լիբանանահայ երկարամեայ խմբագիր ու մտաւորական հանրածանօթ դէմք Պարոյր Աղպաշեան, իր նորատիպ գիրքով.- «Արեւմտահայ գրողներու լեզուամտածողութիւնն ու բառապաշարային շերտաւորումները»:

Պարոյր Աղպաշեան իր ծնունդով (1945թ.) ու վաստակով կը պատկանի Լիբանանին: Աւարտած է Պէյրութի Հայ Աւետարանական գոլէճը, յետոյ Երեւան մեկնելով՝ 1970ին վկայուած է Պետական համալսարանի Հայոց լեզուի ու գրականութեան բաժանմունքէն: Պէյրութ վերադարձին՝ այցելու դասախօս եղած է Հայկազեան համալսարանին (1985-1992), ՀԲԸՄ-ի Երուանդ Հիւսիսեան հայագիտական հիմնարկին (այժմ փակուած) եւ նոյն միութեան Դարուհի-Յովակիմեան երկրորդ. վարժարանին մէջ (1990էն ի վեր): Իր հօր՝ երբեմնի հանրայայտ խմբագիր Յովհաննէս Աղպաշեանի (1909-1987) հետեւողութեամբ, ինք ալ գործօն մասնակից մը եղած է լիբանանահայ մամուլի կեանքին, նախ՝ 1973–1989 խմբագրելով ՀԲԸՄ–ՀԵԸ-ի «Խօսնակ» ամսաթերթը, յարատեւօրէն մաս կազմելով Թէքէեան մշակ. միութեան «Շիրակ» ամսագրի (այժմ դադրած) խմբագրական մարմնին (1974–1997), բայց մանաւանդ՝ 1990էն սկսեալ, շուրջ 17 տարի, գլխաւորելով ՌԱԿ-ի Լիբանանի շրջանի պաշտօնաթերթ «Զարթօնք» օրաթերթը, իբրեւ պատասխանատու խմբագիր, մինչեւ թերթին անակնկալ (ու խորհրդաւոր) դադրեցումը՝ 10 Յունուար 2007ին:

Ներկայի հատորը, որ հեղինակին երկրորդ գիրքն է (առաջինը՝ նմանապէս 2006ին հրատարակուած քաղաքական խմբագրականներու բարակուկ ժողովածու մըն էր), կը բաղկանայ 160 էջէ: Լոյսին ընծայուած է «Կարպիս Լ. Նազարեանի հիմնադրամ»ին կողմէ, Երուանդ Քասունիի հոգածու խմբագրութեամբ: Գրքին մէջ ընդգրկուած բոլոր յօդուածներն ալ տարիներ առաջ լոյս տեսած են «Հայկազեան հայագիտական հանդէս»ի կամ «Շիրակ»ի էջերուն վրայ:

Յառաջաբանի մը մէջ, զոր ստորագրած է հայրենի ծանօթ գրականագէտ փրոֆ. Սամուէլ Մուրատեան, նկատել կը տրուի որ Պ. Աղպաշեան Երեւանի համալսարանական իր տարիներէն իսկ ուշադրութիւն գրաւեր էր լեզուաբանական հարցերու մասին իր չեչտուած հակումով: Ան կը գնահատէ հեղինակին այս հատորով կատարած լեզուագիտական դիտարկումները ու զանոնք կը համարէ «տրամաբանական, հաւաստի ու մատչելի»:

Ինչպէս խորագրէն ալ կը հասկցուի արդէն, Աղպաշեանի այս գիրքը արագ պտոյտ մըն է գլխաւորաբար արեւմտահայ գրողներու բառապաշարային աշխարհին մէջ:

«Գլխաւորաբար» ըսինք, որովհետեւ սեւեռումի ենթարկուած ընդամէնը 9 գրողներէն երկուքը արեւելահայ են (Միքայէլ Նալպանտեան եւ Մուրացան): Մնացեալ եօթը գրողները (Արփիար Արփիարեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Մելքոն Կիւրճեան, Թլկատինցի, Գրիգոր Զօհրապ, Տիգրան Կամսարական եւ Լեւոն Բաշալեան) մաս կը կազմեն արեւմտահայ ճակատին, ու առաջին ակնարկով իսկ նշմարելի է որ անոնց մեծամասնութիւնը առաջնորդները եղած է Իրապաշտ շարժումին: Ուստի, պարզ կը դառնայ, որ հեղինակին լուսարձակը բացուած է մասնաւորաբար Իրապաշտ շարժումի կարկառուն դէմքերուն վրայ, ցոյց տալու համար լեզուական այն նորարանութիւնները, որոնցմով կը յատկանշուէր անոնց գրական վաստակը:

Պէտք յիշել անշուշտ, որ արեւմտահայ գրականութեան Իրապաշտ շարժումը ծնունդ առաւ Պոլսոյ մէջ, ԺԹ. դարու 80ական թուականներուն ու աշխուժօրէն շարունակուեցաւ մինչեւ դարավերջ: Շարժումին առանջորդ գրողները խմբուած էին «Արեւելք», «Հայրենիք» եւ «Մասիս» թերթերուն շուրջ: Անոնք նպատակադրած էին կեանքը ներկայացնել «այնպէս ինչպէս որ է»: Ու ինչպէս Մինաս Թէօլէօլեան կը հաստատէ՝ անոնք «փորձեցին հաւատարապաշտ ճշտութեամբ մը զննել իրենց շրջապատը, իջնել մեր ժողովուրդի լայն զանգուածներուն, անոր կեանքը պատմել դրական բէ ժխտական բոլոր երեւոյթներով, ստուգել թէ ով ինչպէ՞ս կ՚ապրի, ինչո՞ւ այդպէս կ՚ապրի, ի՞նչ բարքերով կ՚ապրի, ի՞նչ պահանջներ ունի, ո՞ւր կը դիմէ. հոգեկան ի՞նչ դրութեան մէջ է, տնտեսական ի՞նչ կացութեան մէջ կը տագնապի, ի՞նչ ներքին պատկեր կը պարզէ» (տե՛ս «Դար մը գրականութիւն», Ա. հատոր, 1977, Պոսթըն):

Արդ, Պարոյր Աղպաշեան իրապաշտ գրողներու գործերուն վրայ հակած է սոսկ լեզուաբանական նկրտումներով: Ան համբերութեամբ ուսումնասիրած է տասնեակ մը գիրքեր՝ հոնկէ դուրս բերած է բազմաթիւ բառացանկեր, դասակարգած է զանոնք ըստ բնոյթի, մատնանշած է այդ բառերուն այսօրուան «կենդանի» կամ «մեռեալ» կարգավիճակը ու ի վերջոյ, հմտօրէն մեկնաբանած է տուեալ գրողներուն լեզուական կամ ոճաբանական առանձնայատկութիւնը:

Աղպաշեան իր բառագիտական ուսուցումները կը սկսի Արփիարեանով, այսինքն՝ իրապաշտներու երիցագոյն դէմքով: «Կարմիր ժամուց»ի համբաւաւոր այս հեղինակը լեզուական պայքարի շրջանին (1870ական թուականներ) հանդիսացած էր գրականութեան ժողովրդայնացման ու գրական աշխարհաբարի դրօշակակիրներէն մին: Ան բուռն կերպով պայքարած էր օտարամուտ ու գրաբարախառն բառերու չափազանց օգտագործումին դէմ, զարկ տուած էր նորակերտ ու դիւրահասկնալի բառերու օգտագործումին:

Ի ձեռին ունենալով Արփիարեանի գործերուն մէկ «Հատընտիր»ը (Պէյրութ, 1950), Աղպաշեան ուսումնասիրած է անոր լեզուին բառաշերտաւորումները, ու հոն գտած է հինցած բառեր, հազուադէպ գործածուող բառեր, գաւառաբարբառային բառեր, ժողովրդային բառեր, ինչպէս նաեւ որոշ գրաբարեան տարրեր (նոքա, նմա, կողմանէ, որք, ի վաղուց անտի եւ այլն): Սակայն ամէնէն ուշագրաւը նորակերտ բառերն են.- պերճաբարբառ, հեզնաժպիտ, կրկնամտութիւն, աշնանազարդ, հերոսերգակ, հաւատախաբ, նրբաժպիտ, յեղափոխաշունչ, վաստակաբեկ, մահախինդ, տրտմաթաւ, տխրանուն, դիւցազնապատում, նորափայլ, լայնկեկ, խոշորկեկ, մինակուկ, մարդուկ եւ այլն: Ըստ հեղինակին, «ասոնց մեծ մասը այսօր կարելի է ներառել գործածութեան մէջ»:

Ինքնատիպ բառակերտիչ մը եղած է նաեւ ծանօթ խմբատասէր ու բառարանագիր Եղիա Տէմիրճիպաշեան (1851–1908), որուն ծննդեան ու մահուան թուականները կը նոյնանան Արփիարեանի թուականներուն հետ: Իր շրջանի մտաւորականներուն նման Եղիան ալ իրեն սկզբունք դարձուցած էր պայքարիլ Հայոց լեզուի մաքրութեան ու բառագանձին հարստացումին ի նպաստ: Ան որդեգրած է «գրաբարը պաշտելու եւ աշխարհաբարը պաշտպանելու» սկզբունքը: Գր. Զօհրապ զինք որակած է «աշխարհաբարի Նարեկացին»:

Աղպաշեանի գնահատումով՝ «Տէմիրճիպաշեան խիստ նրբազգած բանաստեղծի զգայարանքով եւ գեղագէտի հոգիով օժտուած տաղանդ մըն էր, որ կը ջանար իւրաքանչիւր երեւոյթի, հոգեվիճակի, տեսիլի ու նրբերանգի համապատասխան բառը գտնել: Անկէ կու գայ բառաշինութեան իր անզուսպ ու յախուռն եռանդը: Մեծապէս նախանձախնդիր էր նաեւ որ հայերէնի մէջ ունենանք օտար բառերուն ու եզրերուն համարժէքը»: Ու այդ նպատակին իրագործման համար, ճիշդ Արփիարեանի նման, ան ալ կը դիմէր հայերէնի ներքին հարստութիւնը համայնող, ճկուն ու սահմաններ չունեցող բաղադրութիւններու օրէնքին (բառաբարդում եւ բառածանցում): Այդ ճամբով ան կերտած է 500է աւելի նորաբանութիւններ: Տրտմանոյշ, խռովատանջ, ոսկեհուրնգենորոգ, քրտնաջինջ, լուսանուաղ, սեւածիր, յաւերժայուշ, յուզումնայորդ բառերը կրնա՛ն գաղափար մը տալ իր ստեղծումներուն նրբանկատ ու դիպուկ կառուցուածքին մասին:

(Մնացեալը յաջորդիւ)

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅԵՐԷՆ – ՀԱՅԵՐԷՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Ապրիլ 16 Չորեքշաբթի երեկոյ Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր տաճարի Փրէնկեան սրահը լեցուցած հանրութեան ներկայացուեցաւ Ֆրանսերէն–հայերէն եւ հայերէն–ֆրանսերէն «Մաշտոց» համակարգչային բառգիրքը: Ան «Մաշտոց բառարանի կաճառ»ին (Զուիցերիա) եւ «Մաշտոց բառարաններու կաճառ»ին (Ֆրանսա) կողմէ մշակուած ելեկտրոնային ծրագրի մը արդիւնքն է: Առաջինին հիմնադիրները եղած են (1999) Վարուժան Աթթարեան, Լազար Բարիքեան եւ Ռուբէն Մոմճեան. իսկ ներկայի կազմը հետեւեալ պատկերը ունի. Թամարա Աթթարեան, Ալեք Աւետիսեան, Լազար Բարիքեան, Ստեփան Ստեփանեան: Վ. Աթթարեան մահացած է 2005ին: Ֆրանսայի կաճառը կը բաղկանայ հետեւեալ անուններէն. Հրայր Այվազեան, Ստեփան Ստեփանեան, Ֆիլիփ Փիլիպոսեան, Միհրան Քիւրքճեան, Էտկար Համալեան, Ռոյ Առաքելեան, Մանուկ Փամուքճեան:

Ապրիլ 16ի երեկոյթին Հ. Այվազեան բացատրեց իրենց աշխատանքին մղիչ ազդակները: գլխաւորն էր բազմալեզու Եւրոպայի մը մէջ կարելի բոլոր միջոցներով օժտել արեւմտահայերէնը եւ որոշած էին խնդրոյ առարկայ բառգիրքը գործածելի ընել համակարգիչով: Ան շեշտեց նաեւ արեւմտահայերէնին պետական հովանաւորութենէ եւ լեզուական ակադեմիայի մը յենարանէն զուրկ կարգավիճակը որ զարկ կուտար գայն ամէնօրեայ իրականութիւն նկատելու մօտեցումին:

Այս մօտեցումով կատարուած կամաւոր աշխատանքին հիմ առնուած էր Յարութիւն Քիւրքճեանի եւ Գրիգոր Շահինեանի բառարանը (2000): Համակարգչային բառգիրքը կը պարունակէր շուրջ 32 հազար հայերէն եւ 35 հազար ֆրանսերէն բառ: Կարեւոր օժանդակութիւն բերած էր նշուած բառարանին հրատարակիչը «Շիրակ» (Պէյրութ), սիրայօժար տրամադրելով նախանիւթը:

Երեկոյթը կը վայելէր փրոֆ. Ժ.-Փ. Մահէի նախագահութիւնը: Ան ուղղակի ու միայն հայերէն միակ արտայայտուողը եղաւ. աշխարհի հնագոյններէն նկատեց հայերէնը, շատ տեղին ձեռնարկ նկատելով, յատկապէս արեւմտահայերէնին, համակարգչային բառգիրքի պատրաստութիւնը: Թուեց անոր առաւելութիւնները. յատկապէս այն որ այս տարբերակը առաւելութիւնը ունէր օրէ օր զարգանալու, նոր բառեր ընդգրկելու:

Ստեփան Ստեփանեան որ Ալեք Աւետիսեանի հետ բառարանին բանակարգումի աշխատանքը կատարած էր, կարգ մը թէքնիք բացատրութիւններ տուաւ, հակիրճ պատմականը ընելէ ետք պատրաստութեան փուլերուն: Նոյն ատեն ներկաները հետեւեցան կատարուած ցուցադրութեան:

Բառգիրքը հոմանիշ տալէ զատ կը կատարէ սրբագրիչի պաշտօնն ալ, նոյնիսկ սխալ, կամ մօտաւոր ուղղագրութեամբ տրուած բառ մը կը սրբագրէ երկու լեզուներուն մէջ ալ. կուտայ նաեւ նոյնարմատ, կամ նման հատուածներով բառերու

ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Կ՚ԱՌԱՋԱԴՐՈՒԻ ՊԱՇՏՕՆԱՊԷՍ ՃԱՆՉՆԱԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերնագիրը կրնայ զարմանք պատճառել բոլորին, քանի որ քաջ գիտենք թէ Ուրուկուէյի խորհրդարանը հանդիսացաւ առաջինը որ 1965 Ապրիլ 24ին ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը երբ կ՚ոգեկոչէինք անոր 50ամեակը:

Մոնթէվիտէոյի Ուրուկուէյ—Հայաստան մշակութային ընկերակցութիւնը ստացած է հաղորդագրութիւն մը, որով կը տեղեկացուի թէ, կազմուած յատուկ յանձնախումբ մը, բաղկացած վեց հանրայայտ անձնաւորութիւններէ, կ՚առաջադրէ, որ Ուրուկուէյի պետութիւնը եւ խորհրդարանը պաշտօնապէս ճանչնան Հայկական ցեղասպանութիւնը:

Վերոյիշեալ յանձնախումբին մաս կը կազմեն Սէրխիօ Ապրէս, Լէոնարտօ Կուզման, Խիրարտօ Գայթանօ, Խաւիէր Միրանտա, Ալպէրթօ Փէրէզ եւ Թոմաս Տէմաթու, որոնք Ուրուկուէյի քաղաքական կեանքին մէջ ունին եւ ունեցած են կարեւոր դերակատարութիւն, որպէս արտաքին գործոց նախարար, օրէնսդէտ, համալսարանի դասախօս, մարդկային իրաւանց պաշտպան: Անոնք մաս կը կազմեն Ուրուկուէյի քաղաքական երեք կուսակցութիւններու եւ հանդէս կուգան յայտնելու, թէ 1965ին Ուրուկուէյի խորհրդարանը որոշում կայացուցած է ճանչնալու 1915 Ապրիլ 24ը, ի յարգանս հայ նահատակներու, բայց այդ բանաձեւին մէջ յստակօրէն չէ ներգրաւուած «ցեղասպանութիւն» բառը: Այնուհետեւ, տրուած են շարք մը հայանպաստ որոշումներ: Ուրուկուէյի հանրապետութեան նախագահներ՝ Խ. Սանկինէթթի, Լ. Լաքաժէ, Խ. Պաժէ եւ ներկայիս Թապարէ Վազքէս մասնակցած են Մեծ եղեռնի ոգեկոչման ձեռնարկներու, յարգանք մատուցանած են զոհերուն, խօսած են այդ մասին, բայց պաշտօնական չէ եղած Հայոց ցեղասպանութեան ճանաչումը:

Վերոյիշեալ յանձնախումբը կ՚առաջադրէ որ մէկ անգամ ընդմիշտ Ուրուկուէյի խորհրդարանը եւ պետութիւնը յստակացնէ եւ պաշտօնականացնէ իր դիրքորոշումը այս իրողութեան հանդէպ եւ առնէ պէտք եղած քայլերը:

Արդարեւ, Մեծ եղեռնի 93ամեակին առթիւ, նախաձեռնութեամբ ուրուկուէյցի կարկառուն դէմքերու, տեղի կ՚ունենար հաւաք մը մայրաքաղաքի «Հայոց ցեղասպանութեան» հրապարակին վրայ ուր անոնք կը ներկայացնէին իրենց թէզը եւ կոչ կ՚ուղղէին հանրութեան որ սկսի ստորագրութիւններ հաւաքելու արշաւին, որպէսզի վերոյիշեալ առաջարկը պատշաճ կերպով ներկայացուի պատկան իշխանութիւններու:

ԱԲՕ ՊԷԼԵԱՆ

չարքը: Գործածուած է արեւմտահայերէնի տառադարձութիւնը: Պատրաստուած է յատուկ ստեղնաշար մը:

Յաւելեալ տեղեկութեան, կամ ապսպրանքի համար կարելի է գործածել համակարգչային իմակի՝

cdmfrance@machtotz.com
և cdmsuisse@machtotz.com,

կամ կեդրոնատեղիներու՝

Collège Dictionnaires Machtotz France
34 Ave. des Champs-Elysées
75008 Paris
Collège du Dictionnaire Machtotz
Case postale 47
CH — 1218 Grand-Saconnex, Genève
Suisse

հասցէները: Իսկ կայքէջի հասցէն է.

www.machtotz.com

Ա. ԹՈՐՈՍԵԱՆ

ԱԳՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ

Անցնող Կիրակի, Ապրիլ 20 ժամը 10:30ին հանդիսաւոր ձայնաւոր Ս. Պատարագով սկիզբ առաւ Ապրիլեան նահատակներու յիշատակութեան պաշտօնական հանդիսութիւնը որ պիտի փակուէր նոյն օրը, կէսօրէ վերջ ժամը 3:30ին բանախօսութեամբ եւ Հայաստանի վանքերու նուիրուած բացառիկ ֆիլմով, պատրաստուած Հայաստանի հեռատեսիլի Բ. ալիքին համար:

Եկեղեցիին մէջ տեղ գրաւած էր կոկիկ բազմութիւն մը որ երգչախումբի հոգեպարար երգերով մեծ ամփոփութեամբ կը հետեւէր սրբազան արարողութեան:

Օրուան քարոզիչ՝ Հ. Յարութիւն վրդ. Պզտիկեան, յատուկէն հրաւիրուած այս առթիւ, կարգ մը հոգեւոր եւ մարդկային խորհրդածութիւններու կարգին, որ Մեծ եղեռնը պէտք է ներշնչէ ԻԱ. րդ դարու մարդկութեան եւ պետութիւններու՝ եթէ տակաւին մնացած են բարի կամքով անձեր, ներշնչուած Հրանդ Տինքի թողած բարոյական ժառանգութենէն, անդրադարձուց Թուրք նոր սերունդի ողբերգութիւնը, կուրցած իր պետութեան ժխտողական քարոզչութենէն, կը դառնայ մեղսակից եւ գործակից Սուլթան Համիտներու եւ Թալաթներու, պղունց մը ազօթք պէտք է բարձրանայ նաեւ այդ երկրի բարի կամքով բոլոր այն անձերուն որ այսօր սգակից են մեր Ողբերգութեան:

Կէսօրէ յետոյ, հակառակ աննըպաստ կլիմայական պայմաններուն եւ անձրեւին, ժողովրդապետութեան մեծ սրահը ժամանած էին բազմաթիւ ազգայիններ եւ օտարներ, եւ տեղական մամուլի ներկայացուցիչներ:

Առաջին գիծերուն վրայ նկատեցի Հայ Առաք. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Զատիկ վրդ. Աւետիքեանը, վերպ. Ժիլպէռ Լեւոնեան, Հայ մշակոյթի տունէն պրն. Ժիրայր Շալճեան, ՍԷ.ՍԷ.Ա.էՖ.-ի Ֆրանսայի հարաւային բաժնի նախագահ Մաքսիմ Սիզվալեան, Ֆրէտէրիք Զամանդեան եւ այլք:

Ժողովրդապետ Հ. Եղիա վրդ. Դերձակեան ներկայացուց օրուան բանախօս Հ. Յ. Պզտիկեանը որ իր հրաւէրով ժամանած էր Փարիզէն եւ խնդրեց որ ֆրանսերէնով ընթանայ բանախօսութիւնը, նկատի առնելով տեղացիներու ներկայութիւնը սրահէն ներս:

Յայտարարուած նիւթն էր «Մշակութային կորուստը 1895–1923 տարիներուն»: Հ. Պզտիկեան յարգեց վերնագիրը եւ կամաւոր կերպով խուսափեցաւ կէս դար տեւող հետեւողական եղեռնի պատմութենէն, կեդրոնանալով իմացական եւ մշակութային կորուստի վրայ, ամփոփելով այս նիւթին շուրջ իր մէկ աշխատասիրութեան բովանդակութիւնը:

Այս տարիներու ընթացքին, վիճակագրական ստոյգ տուեալներու վրայ հիմնուած, հայ ժողովուրդը եւ հայ եկեղեցին անդարմանելի կորուստներ կ՚արձանագրեն:

Կը հրկիզուին եւ մոխիր կը վերածուին 2500 եկեղեցիներ, վանքեր եւ մատուռներ,— Սիս, Մշոյ Ս. Կարապետ, Ախթամար, Վարագավանք, Նարեկավանք, Արմաշ, են.:

Կը նահատակուին 3000 քահանաներ, 50 եպիսկոպոս եւ վարդապետ:

Հայ կաթողիկէ համայնքը կը կորսնցնէ 127 վարդապետ, 9 եպիսկոպոս, 57 կոյսեր:

Աւետարանական համայնքը կ՚ողբայ 50 քարոզիչներ եւ հոգեւոր հովիւներ:

4000 միտքի մշակներ, գիրի եւ գրականութեան նուիրեալներ, 1.000էն աւելի վարժարաններ եւ դպրոցներ, 100.000էն աւելի երկսեռ աշակերտներով կը ոչնչացուին ամենակարճ ժամանակուան մէջ:

1.500.000 նահատակներու կողքին պէտք չէ մոռնալ բռնի իսլամացած մայրերու եւ մանուկներու բազմութիւնը, որոնք սարսափահար մինչեւ այսօր գիտակցօրէն եւ շատեր անգիտակցաբար կը ծածկեն իրենց ինքնութիւնը Եւրոպայի դռները բախող ԻԱ. դարու Թրքական հանրապետութեան տարածքին մէջ:

1915ի նախօրեակին գործող հայկական 3425 եկեղեցիներէն եւ 316 վանքերէն, 1000է աւելի վարժարաններէն եւ 100.000է աւելի երկսեռ աշակերտութենէն ի՞նչ կը մնայ այսօր...: Հռոմէական կայսրութեան պատմիչները, նման պարագաներու համար ստեղծած էին քանդակիչ նախադասութիւն մը.

« Contra factum non valet argumentum ».

(Իրողութեան դիմաց պատճառաբանելն աւելորդ է):

Երկրորդ բաժին մըն ալ տեղի ունեցաւ ներկայի Հայաստանի սահմաններուն մէջ գտնուող քանի մը կարեւոր վանական համալիրներու (Ամաղուի Նորավանք, Գլաձոր, Աստուածընկալ, Քարկոփի վանք, Արենի), բանախօս վարդապետին կողմէ խնամքով պատրաստուած, կէս ժամ տեւող ֆիլմի ցուցադրութեամբ, ներկաներուն ցոյց տալու համար թէ նման համամարդկային արժէք ներկայացնող գոհարներ, հարիւրներով մոխիրի վերածուեցան սահմանէն անդին, ուր կը գտնուին մեր պատմական հողերը, վերջին տասնամեակներուն ընթացքին:

Եղան նիւթին վերաբերող հարցումներ, ընդհանուր գոհունակութեամբ հաւաքոյթը փակուեցաւ հիւրասիրութեամբ: Դուրսը անձրեւը կը շարունակէր տեղալ:

ԹՂԹԱԿԻՑ

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէն թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԻՑԵՐՈՐԴ

ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒԿՐԱՆԻԱՅՈՒՄ

Նա պէտք է գինի հիւրասիրի ամենայարգարժան հիւրերին: Խորագոյն մի խոնարհումով Խրիստոֆոր մօտենում է նըկարչին, ու նրան մեկնում մատուցարանը՝ վրան կարմիր գինով մի բաժակ: Պսակի արարողութեան ժամանակ Վասիլը Թուել–գնացել էր պան Գորենկայի կալուածքն ու ծառայապետից մի շիշ տէրունական գինի խնդրել: Ծառայապետը այնքան էլ հաւատ չէր ընծայել նրա պատմածին, բայց գինի, այնուամենայնիւ, տուել էր...

Այվազովսկին վեր կացաւ, նոյնպիսի մի խոնարհումով վերցրեց գաւաթը, խմեց գինին ու նորից մատուցարանի վրայ դնելով, սերթուկի կողքի գրպանից դուրս բերեց դրամապանակը: Բոլորը, շունչները պահած, հետեւում էին նրա շարժումներին: Իւան Կոնստանտինովիչը դուրս բերեց մի տրցակ թղթադրամ եւ դրեց մատուցարանի վրայ:

Խրիստոֆ գունատուեց եւ քիչ էր մընում ձեռից գցէր ամէն ինչ, Ֆիլիպը կախեց գլուխն ու դէմքը ձեռքերով ծածկեց, նրան թուաց թէ կորցնում է գիտակցութիւնը: Հիւրերը, որ այնպէս խռնուել էին խրճիթում, այնքան լուռ էին, ասես շուրջը կենդանի շունչ չկար: Առաջինը ուշքի եկաւ խնամախօսը:

— Օհօ՛, այստեղ ոչ թէ մէկ, այլ տասը ձիու փող կայ: Հարուստ հարս ես դու տուն տանում, քաւոր Իւան:

Թնդացին հարսանեաց երգերը: Գետի նման հոսեց օղին: Գոպակի հնչիւններին տակ խենթ պար բռնեցին ճահելները: Բոլորը դուրս եկան փողոց՝ ազատ տարածութեան մէջ, եւ ուրախութիւնը տեւեց մինչեւ ուշ գիշեր:

Բոլոր նրանց, ովքեր անցնում էին խուտորի միջով, Իւան Տարասովիչն ու Գորպինան կանգնեցնում եւ հարսանիք էին հրաւիրում: Եկաւ նաեւ պան Գորենկայի ծառայապետն ու եւս մի շիշ տէրունական ընտիր գինի բերեց:

... Թէոդոսիա վերադառնալուց մի քանի օր յետոյ Այվազովսկին նկարեց «Հարսանիք Ուկրաինայում» նկարը: Կըտաւն ամբողջութեամբ շարժում էր: Սաղարթախիտ ծառերի ստուերների տակ ուրախ պար են բռնել հարսանքաւորները: Գիւղի երաժիշտները, տաւած, ջութակ եւ կոնտրաբաս են նուագում: Այստեղ են եւ երջանկութիւնից ցնծացող ճահել նորապսակները, ուրախութիւնից գրաւուած՝ տնակի մօտ կանգ են առել մի խումբ անցորդներ: Կոտաւոր կինը բունցքներով տնից դուրս է անում հարբած ամուսնուն: Միայն սայլին լծուած եզներն են անտարբեր հարսանեաց այս խրախճանքի հանդէպ եւ հանգիստ իրենց կերն են ծամում...

Այս ամբողջ ժանրային տեսարանը պատկերուած էր տափաստանային բնանկարի ֆոնի վրայ:

ՄԱԼԱԽՈՎ ԿՈՒՐԳԱՆ

Երկար տարիներ մտորեց Այվազովսկին «Մալախով Կուրգան» նկարի վրայ, մինչեւ վերջապէս եկաւ մտայղացումն իրագործելու ժամանակը:

Վրայ հասաւ 1892 թուականը: Նկարիչն արդէն եօթանասունն անց էր: Ձըմռան սկզբին նա Թէոդոսիայից մեկնեց Պետերբուրգ: Այս աղամ ընկերներից մէկը խորհուրդ տուեց մի փոքր, համեստ առանձնատուն վարձել Կոլոմնայի Նրբանցքներից մէկում: Սենեակներն ընդարձակ ու լուսաւոր էին, ճաշակով կահաւորուած, եւ շուրջն այնպիսի մի անդորր էր տիրում, որ ինչ–որ բանով յիշեցնում էր Թէոդոսիայի տունը:

Այվազովսկին, որը սովոր էր առաւօտեան շուտ վեր կենալ, երկար կանգնում էր պատուհանի առաջ եւ լուռ դիտում ձեան մաքուր ծածկոցը, մերկ ու անպաշտպան կեչիները: Սիրում էր վաղորդեան այս խորհրդածութիւնները: Մտքում վառ յառնում էին հարաւի մըտերմիկ տեսարանները, եւ այդ ժամանակ նա աշխատում էր ինքնամոռացութեան աստիճան, զլանալով անգամ նախաճաշի իջնել: Տանտիրուհին չէր համարձակւում խանգարել նրան: Միայն Պանտէլէյը՝ ծերունի սպասաւորը, երկչոտ տոփտոփելով դռան առաջ կեղծ հազում էր ու յիշեցնում, որ ժամանակն է մի բան դցելու սրտի վրայ...

(Շար. 211)

ARMENIE 2008

Demandez notre brochure ARMENIE 2008.
Vous y trouverez différentes formules de séjours à la carte, de circuits accompagnés et extension au Karabagh.

● **SABERATOURS**
Le spécialiste des voyages en Arménie
11 rue des Pyramides
75001 PARIS
☎ 01.42.61.51.13
e-mail : armenie@saberatours.fr

● **SEVAN VOYAGES**
48 Cour de la Liberté
69003 LYON
☎ 04.78.60.13.66
e-mail : sevan@selectour.com

● **WASTEELS VOYAGES**
67 La Canebière
13001 MARSEILLE
☎ 04.95.09.30.60
e-mail : marseille@wasteels.fr

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

QUELQUES PLACES ENCORE DISPONIBLES avec L'UCFAF pour 2 voyages en ARMENIE

voir site : www.ucfaf.com

1 voyage touristique du 26 juillet au 10 août

soit 16 jours / 15 nuits au prix de 1565 euros par personne, max. 30 personnes, base demi-pension et chambre double, incluant un circuit de 6 jours jusqu'au Karabagh (taxes d'aéroport et visa en sus)
renseignements : E. Yazidjian au 01 42 87 95 98 (heures de bureau)

1 voyage randonnée du 14 au 25 juillet

soit 12 jours / 11 nuits au prix de 1390 euros par personne, max. 12 personnes, incluant un circuit randonnée de 7 jours en pension complète et 3 jours à Erevan en demi-pension avec excursions et visites quotidiennes
renseignements : A. Samikyan au 01 48 03 18 78

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

Հինգշաբթի, Մայիս 1

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այս առթիւ Լիոնի Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10ին Պատարագ կը մատուցուի:

կը պատարագէ
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

MESSE A NOTRE DAME DE PARIS

Monseigneur Grégoire GHABROYAN
Evêque des Arméniens catholiques de France
célébrera la Divine Liturgie en rite arménien
pour la commémoration du 93ème anniversaire du Génocide d'un million et demi d'Arméniens tués en Turquie de 1915 à 1918,
le dimanche 27 avril à 15h00 en la Cathédrale Notre-Dame de Paris.

L'homélie sera prononcée par Mgr. Georges GILSON,
Archevêque émérite de Sens.Auxerre et Prélat émérite de la Mission de France

* * *

A l'issue de la Divine Liturgie, une réunion amicale aura lieu au Centre Saint-Mesrob, 10 bis rue Thouin — Paris 5ème

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

Պ Ո Ւ Լ Վ. Օ Տ Տ Ո Ց Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ
Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ

Պուլվ. Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը վիճակահանութիւն մը կազմակերպած է Համբարձման առթիւ, Մայիս 1ին, ժամը 12:30ին:

MNA, 8 bld. Denis Papin
13015 Marseille

Կը հրաւիրուին բոլորը հաճելի օր մը անցընելու համար:

□

Լ Ի Ո Ն - Վ Ի Լ Է Օ Ր Պ Ա Ն Ի
Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ւ Ղ

Կապոյտ Խաչի Լիոն–Վիլէօրպանի Արաքս մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ, միասին տօնելու Համբարձման տօնը, ինչպէս նաեւ Համբարձումներու անուանակոչութեան տօնը, ընտանեկան եւ բարեկամական ճաշի մը շուրջ (խորոված), Հինգշաբթի, Մայիս 1, ժամը 12:30էն սկսեալ Վիլէօրպանի Հայ մշակութային տան մէջ: Նաեւ վիճակահանութիւն: Ճաշագին՝ 12 եւրօ – երախաներու համար կէս գին:
Հեռաձայն: 04 78 26 28 71
04 78 45 17 55

□

SECTION SOSSE MAYRIG
MARSEILLE VILLE

organise une conférence avec **HRATCH VARJABEDIAN**
(Rédacteur - professeur)

« LA FEMME ARMENIENNE DANS L'HISTOIRE CONTEMPORAINE »

Lundi 28 avril à 19h30
au Centre F.R.A. HRAIR MAROUKHIAN
185 chemin des sables jaunes
13012 Marseille

Chants par la F.R.A. Badanis Marseille.
conférence, soliste Naira ABRAHAMYAN

(Շար. Ա. էջէն)

թիւն խնդրած էին բացակայութեան համար: Ան ալ ծանրացաւ Թուրքիոյ ճանաչումի հարկին վրայ: Ըսաւ թէ կարելի չէ այդ երկրին Եւրոպայի անդամակցութեան մասին մտածել, այնքան ատեն որ կը յամառի ժխտողի իր ընթացքին մէջ:

Համայնավար կուսակցութենէն Մ.-Ժ. Պիւֆէի ներկայացուցիչը Հ. Մալպէրկ չեշտեց թէ այնքան ատեն որ Հայկական Ցեղասպանութիւնը չի ստանար հրէականին կարգավիճակը, ակնարկելով ժխտողականութիւնը պատժող օրէնքին, հայութիւնը իրաւունք ունի պնդելու որ արդարութիւնը հաստուցուած չէ իրեն:

Ամէն Ապրիլ 24ի ունկնդրելէ ետք ֆրանսացի քաղաքական դէմքերու յայտնած զօրակցութիւնը, պահանջները, ժխտողականութեան դէմ տեղի չտալու վճռակամութիւնը, կարելի չէ հարց չտալ թէ ինչպէս տակաւին այս երկրին մէջ հայկական կոթող կը պղծուի անպատիժ, ժխտողական ցոյցեր տեղի կ'ունենան, կամ ժխտումը պատժող օրէնքը երկու տարիէ ի վեր չէ կրցած կտրել կառավարութիւն – Ծերակոյտ միջոցը...

Երեկոյեան ամէնէն յուզիչն էր երկու վերապրողներու շատ կարճ խօսքը: Շամիրամ Սեւակ ըսաւ թէ ինք հօրը քովն էր երբ եկան տանելու զայն, ուստի անտեղի է կատարուածին ուրացումը: Աւելցուց թէ կը սպասէ Թուրքիոյ ճանաչումին ու վճռած է չմեռնիլ մինչեւ որ տեսնէ այդ օրը:

Ովսաննա Գալուստեան, ան ալ ֆրանսերէնով նման Շամիրամ Սեւակի, քանի մը նախադասութեամբ ամփոփեց վերապրածի դարու մը կեանքը: «Ութ տարեկանիս ամէն բան կորսնցուցի. մեր վերադարձին ոչինչ գտանք: 101 տարեկան եմ, ապա Հոս եմ, ազատ այս երկրին մէջ որ դիս ընդունած է որպէս հարազատ զաւակը»:

Յետոյ խօսք առնելու հրաւիրուեցան Ասորիներու, Կիպրացիներու ներկայացուցիչները որոնք զօրակցութեան արտայայտութիւններ ունեցան: Խօսք առաւ նաեւ Հրեայ ուսանողներու միութենէն Ռ. Հատատ:

Քաղաքական դէմքերէն, քոյր համայնքներու ներկայացուցիչներէն աւելի կարեւորութեամբ ողջունուեցաւ Ֆրանսայի Ազատ Որմնադիրներու ներկայացուցիչ Ժ.-Մ. Գիարտէ, որ իր պատկանած կազմակերպութեան մարդասիրական արժէքներու դաւանանքին հիմով յայտարարեց. «Ես ալ Հայ մըն եմ». ապա յայտնեց թէ Թուրքիոյ իր եղբայրակիցներուն ըսած է որ պէտք է ուրիշներէ առաջ իրենք լծուին Հայկական Ցեղասպանութեան այդ երկրին կողմէ ճանաչումի պայքարին: Ան ալ անհրաժարելի նկատեց կէս ճամբան մնացած ժխտումը պատժող օրէնքին Ծերակոյտէն եւս վաւերացումը: Ակնարկեց նաեւ Ցեղասպանութիւնը սեղանի մը շուրջ միասնաբար ձեռք առնելու թրքական առաջարկներուն. անհեթեթ որակեց զանոնք, հարց տալով թէ կարելի՞ է երեւակայել որ հրէականին պարագային կայի սեռնեակներուն գոյութեան մասին սեղանի մը շուրջ վիճարկում ըլլար:

ՀՄԸՄ-ի արիներուն եւ արենոյշներուն փողերախումբին նուագած հայկական եւ ֆրանսական փառերգներէն ետք շուրջ երկու հազարի բազմութիւնը ճամբայ ելաւ դէպի Շան զ'Էլիզէի թրքական ներկայացուցչութիւնը: Թափօրին մէջ, ինչպէս միշտ, ուշագրաւ էր երիտասարդներու, պատանիներու կարեւոր համեմատութիւնը:

Հայաստանեան, ղարաբաղեան ու նախկին ռամիկներու եւ դիմադրականներու դրօշներով զարդարուն թափօրը կը գլխաւորէին հարիւրմէկամեայ վերապրող Ովսաննա Գալուստեանը եւ Շամիրամ Սեւակը:

Երթը վերջ գտաւ Շան զ'Էլիզէի թրքական ներկայացուցչութեան հանդիպակաց մայթին վրայ արտասանուած վերջին ճառերով ու հայրենասիրական երգերու սփռումով:

* * *

Թէ՛ ճառերու բաժինին, թէ՛ երթին ընթացքին ջղայնացնող էր բարձրախօսներու անսարքութիւնը որ երբեմն մինչեւ իսկ անհասկնալի կը դարձնէր ըսուածները: Անհարկի էին բերուած 1500 մեխակները գնելու յաճախակի կոչերը որոնք շուկայիկ երանգ մը կը խառնէին Ցեղասպանութեան ոգեկոչումի ձեռնարկին: Իսկ ինչել թէ զոյգ փառերգներու, –յատկապէս հայկականին–, ընթացքին կային շրջագայողներ, շաղակրատողներ, հնչող առձեռն հեռաձայններուն ամենայն հանգստութեամբ պատասխանողներ, վստահաբար ոչ ոքի համար նորութիւն է, կամ հակազդելի պարագայ:

Ա. ԹՈԹՈՑԵԱՆ

CATHEDRALE APOSTOLIQUE ARMENIENNE SERPOTZ TARKMANTCHATZ

CONVOCATION A L'ASSEMBLEE GENERALE ORDINAIRE
(Exercices 2006-2007)

Cher(e,s) Membre(s),

Le Conseil de l'Association Cultuelle de la Cathédrale Serpotz Tarkmantchatz vous invite par la présente à la prochaine Assemblée Générale Ordinaire qui aura lieu le :

Lundi 5 mai 2008 à 18 heures

dans la salle «A. Tcherpachian»
du Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado
13008 Marseille

A l'issue de la réunion, un apéritif sera servi aux participants.

Comptant sur votre présence, veuillez agréer, cher(e,s) Membre(s), l'assurance de nos sentiments les meilleurs.

P/O le Conseil de la Cathédrale	Le Recteur de la Cathédrale
Le Président	**Révérend Père**
Robert Azilazian	**Zadik Avédikian**

DIOCESE DE FRANCE
de l'Eglise apostolique arménienne
15 rue Jean Goujon — 75008 Paris

Mgr. Norvan ZAKARIAN
Archevêque de France
a le plaisir de vous convier
au cycle de formations
« COMPRENDRE L'HISTOIRE ARMENIENNE »
Qu'il anime chaque mois

3ème séance :
dimanche 4 mai de 17h à 18h
Salle Nourhan Fringhian
15 rue Jean Goujon — 75008 Paris
Métros: Champs-Elysées Clemenceau, Franklin Roosevelt ou Alma-Marceau

— Entrée libre —

Renseignements : 06 29 38 96 14

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90–ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէս, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ.– ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 29
MARDI
29 AVRIL
2008

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

LE NUMERO: 1,20€

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884–1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

Directrice : ARPIK MISSAKIAN

83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jbaratch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 230 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամերիկայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83րդ ՏԱՐԻ – Թիւ 21.948

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

83e ANNEE — N° 21.948

ԱՊՐԻԼ 24

ԱՐՑԱԽ

Ինչպէս Երեւանի, Ստեփանակերտի մէջ ալ երիտասարդները ջահերու երթով սկսած են Ցեղասպանութեան 93ամեակի նշումները:

Յաջորդ առաւօտ կանուխէն սկսած է համաժողովրդական հոսքը դէպի մայրաքաղաքին յուշահամալիրը: Եղեռնի զոհերուն յիշատակը յարգելով Ցեղասպանութիւնը դատապարտող պաստառներով ու կարգախօսներով հոն դիմած են ուսանողներ, ուսուցիչներ, դասախօսներ, պաշտպանութեան բանակի բարձրաստիճան սպաներ, հիմնարկներու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, պատերազմի վեթերաններ ու հոծ բազմութիւն մը:

Կէսօրին մօտ յուշահամալիր այցելած է ԼՂՀ նախագահ Բ. Սահակեանի գլխաւորութեամբ պետական աւագանին: Բոլորը յարգանք մատուցանած են զոհերու յիշատակին ու ծաղկեպսակներ զետեղած: Ցեղոյ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան հոգեհանգիստի արարողութիւն կատարած է:

Այցէ նետք նախագահ Բ. Սահակեան լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է. «Ես կ'ուզենայի ասել, որ Արցախեան գոյամարտում տուած մեր զոհերը 20րդ դարասկզբին տուած նահատակների շարունակութիւնն էին, որովհետեւ եթէ այն ժամանակ համապատասխան գնահատական տրուէր ոճրագործութեանը՝ կը խուսափէինք Արցախեան գոյապայքարում տուած մեր զոհերից: Նաեւ պէտք է նշել, որ այդ ոճրագործութիւնը կատարուել է, երբ մենք զրկուած էինք պետականութիւնից: Ու երեւի թէ եղեռնազարկ լինելու հիմնական պատճառներից մէկն էլ դա էր: Այսօր մենք ունենք երկու անկախ հայկական պետութիւններ, որոնց զարգացումն ու հզօրացումը գուցէ ինչ-որ չափ կը հանգստացնի թէ՛ անմեղ զոհերի հոգիները, եւ թէ՛ որոշակի թեթեւութիւն կը պատճառի մեզ, քանզի յիշելով այդ օրերը՝ պէտք է միայն զարգացնել ու զօրացնել մեր երկու պետութիւնները: Դա կը լինի պատասխանը՝ Թուրքիայի կողմից կատարուած ոճրագործութեան»:

* * *

ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Հայ Դատի Եւրոպայի յանձնախումբը Ապրիլ 24ին ձեռնարկած է հանրագրութեան մը: Հոն կը շեշտուի Թուրքիոյ այլատեաց, ցեղապաշտ ու ռազմամէտ պետութեան բնոյթը, 1915ի ոճիրին զոհերուն բաժին հանուած ժխտումի քաղաքականութիւնը, մարդկային իրաւունքներու ոտնակոխումը:

Ցեղասպանութեան 93րդ տարելիցին առթիւ զօրակցութիւն յայտնելով բոլոր ցեղասպանութիւններու, – հայկական, հրէական, Թութսիներու, Տարֆուրի զոհերուն, կ'ըսուի թէ Հայկական Ցեղասպանութեան ուրացումը կ'առաջնորդէ ներկայի զանգուածային ոճիրներուն եւս լռութեան մատնուելուն: Ուստի կոչ կ'ուղղուի ստորագրելու հանրագրութիւնը որ պիտի յանձնուի Եւրոպական Միութեան իշխանութիւններուն:

Յանձնաժողովին կայքէջին վրայ կարելի է ստորագրել զայն, դիմելով հետեւեալ հասցէին.

contact@EAFJD.org

ԹՐՔԱԿԱՆ «ԱՌԵՐԵՍՄԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ» ԱՊՐԻԼ 24-Ի ԿՈՉԸ

Ապրիլ 24ի աշխարհատարած ոգեկոչումին իւրովի մասնակցութիւն բերած է Թրքական «Առերեսման միութիւն»ն ալ: Անոր նախագահը Ճաֆէր Սոլկուն յայտարարած է.

«Այսօր Ապրիլ 24 է. տարելիցը Մեծ Եղեռնին զոր "Հայկական դէպքերը" կը կոչենք հարեւանցի մօտեցումով եւ զոր տակաւին չենք իսկ կրցած կոչել բուն անունով: Ըստ ոմանց "աքսոր" էան, ուրիշներու՝ "կոտորած", կամ "ցեղասպանութիւն": Բայց ամէն պարագայի Հայերու պատահած "Մեծ Եղեռն"ին տարելիցն է այսօր: Ու յստակ է մէկ բան. Միջագետքի հնագոյն ժողովուրդներէն Հայերը այս անիծեալ դէպքէն ետք ջնջուեցան մեր աշխարհագրութենէն, կորուստի մատնուեցան, մեզի ձգելով իրենց հետքերն ու ցաւը:

Ու այս դէպքին անվերապահ վիճարկումը, որպէս "պետական քաղաքականութիւն" կը շարունակէ մնալ "կարմիր գիծ" մը: ...Ակներեւ է որ իր անցեալին հետ առերեսումէ խուսափումի թրքական պետական քաղաքականութիւնը մեզմէ ոչ մէկուն, խելամիտ եւ խղճի տէր ոչ մէկ քաղաքացիի պատիւ կը բերէ, հպարտութիւն կը պատճառէ: Ընդհակառակը, ուրացումի առարկայ անցեալին արիւնալի ձեռքերը մեր օձիքին կառչած կը մնան, կը վիրաւորեն, կ'արիւնեն մեր արժանապատուութիւնը, հպարտութիւնը:

1915ի հայկական պատահարը ցեղասպանութի՞ւն էր, թէ այլ բան: Այս վիճարկումն իսկ վիրաւորական է: Այլեւս չկայ ժողովուրդ մը որ մեր բարեկամն էր, եղբայրը, դրացին: Անիծեալ պատերազմի մը ընթացքին ան բնաջնջուեցաւ: Մեր հայ եղբայրները "Մեծ Եղեռն" (*բնագրին մէջ հայերէն*) կ'անուանեն զայն, եւ շաբաթ մը կը սգան:

Այս հարցը չի վերաբերիր "հողի պահանջ"ի, "անարգանք"ի, եւլն.: Այլ, մարդկային յանցանքի եւ ողբերգութեան մը դէմ խղճահարութիւն եւ արժանապատուութիւն ցոյց տալու խնդիրն: Որպէս պետութիւն եւ հաւաքականութիւն, մեզի բարեկամ եւ եղբայր ժողովուրդի մը անկեղծօրէն ցաւակից ըլլալու եւ անկէ ո՛չ թէ ձեւական, այլ սրտանց ներողութիւն խնդրելու խնդիրն:

Մենք, որպէս Առերեսումի միութիւն, տէր ենք հայ ժողովուրդի ցաւին, անոր մեծ ներողութեան մը մեր պարտքին գիտակցութեան: Ու մարդկային մեր պարտքը կը նկատենք նզովել մեր ժողովուրդներուն ցաւերը քաղաքական ատաղձ ընելու արարքն ու ժխտողականութիւնը որ նոյն ցաւերը կը շարունակէ կենդանի պահել, արիւնել»:

* * *

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍՈՖԻԱ ՃԱՆՉՑԱԾ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Սոֆիայի քաղաքային խորհուրդը Ապրիլ 24ին ճանչցած է Ցեղասպանութիւնը: Պուրկազէն, Փլովտիւէն, Սթարա Զակորայէն եւ Ռուսէէն ետք մայրաքաղաքը երկրին հինգերորդ քաղաքը կ'ըլլայ նոյն ճանաչումը քուէարկող:

Անցեալ ամիս նիւթը օրակարգի բերուած էր թէեւ, բայց կառավարութեան ջանքով յետաձգուած էր քուէարկութիւնը: Ան զուգադիպած էր Թուրքիոյ վարչապետին Սոֆիա այցին ու կառավարութիւնը պատճառաբանած էր թէ ճանաչումը կը վնասէ թուրքեւպուլկարական յարաբերութիւններուն:

ԹՈՒՐՔԻԱ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԾ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԸ

Թուրքիոյ վարչապետ Թ. Էրտողան շնորհաւորական ուղերձ մը յղած է Հայաստանի նոր նշանակուած վարչապետ Տ. Սարգսեանին: Ուղերձով յոյս յայտնուած է որ Տ. Սարգսեանի պաշտօնավարութեան շրջանին երկկողմ յարաբերութիւնները կ'ունենան մակարդակ մը որ կը նպաստէ շրջանի խաղաղութեան, համագործակցութեան, կայունութեան եւ բարգաւաճումին: Որպէս դրացի երկիրներ, ներկայի խնդիրներուն լուծումը երկխօսութեամբ կարելի նկատելով Թուրք վարչապետը յայտնած է թէ իրենց համար առաջնային խնդիրներէն է բարի դրացիական յարաբերութիւններու մշակումը: Որպէս այդ, յիշեցուցած է թէ նախապէս Երեւանի ներկայացուցած իր առաջարկները ի զօրու են եւ իրենք համոզուած են թէ անոնք կը դիւրացնեն գործընթացը:

Շնորհակալութեան իր պատասխան ուղերձին մէջ վարչապետ Տ. Սարգսեան նշած է. «Համոզուած եմ, որ անձնական շփումների միջոցով միասին կարողանալու ենք նպաստել մեզ մտահոգող բոլոր հարցերի կարգաւորմանը: Ցանկանում եմ վերահաստատել կառուցողական երկխօսութեան եւ մեր երկու երկրների միջեւ առանց նախապայմանների բնականոն յարաբերութիւնների հաստատման Հայաստանի կառավարութեան պատրաստակամութիւնը»:

ՆՈԹՐԸ ՏԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԸ

Փարիզի Ապրիլեան ոգեկոչումներու շարքը փակուեցաւ Ապրիլ 27ին, Նոթրը-Տամի աւանդական պատարագով, զոր մատոյց Գրիգոր Եպիսկ. Կապրոյեան:

Հայ թէ օտար բազմութեան մը ներկայութեան, պատարագի ընթացքին հոգեւոր ճառը արտասանեց Սան-Օպէնի Արքեպիսկոպոսը՝ Գերպ. Ժորժ Ժիլսոն, ոգեկոչելով Ապրիլեան նահատակները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ – ՄԱՄԷԴԵԱՐՈՎ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մայիս 7ին, Եւրոպական խորհուրդի նախարարներու կոմիտէի նիստին շրջանակներուն մէջ, Սթրազպուրկ տեղի կ'ունենայ Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերու նախարարներուն հանդիպումը: Առաջարկը կատարուած է Մինսկի խումբին նախագահներուն կողմէ:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՈՒՐԻԱ ԵՒ ԻՍՐԱՅԷԼ Թուրքիոյ միջնորդութեամբ խաղաղութեան ձգտող շփումներ կ'ունենան: Եթէ ընթացքը չըխանգարուի, կը սպասուի որ երկու երկիրներու պատասխանատուներ յառաջիկայ շաբաթներուն Թուրքիոյ մէջ հանդիպում ունենան: Այդ հեռանկարին մէջ կարելի կը նկատուի Իսրայէլի վարչապետ Ե. Օլմերթի եւ Սուրիոյ նախագահ Պ. ալ-Ասատի միջեւ հանդիպում մը:

* * *

ՖՐԱՆՍԱՅԻ ԲՆԱՊԱՀՆԵՐՈՒՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ֆրանսայի բնապահները Ապրիլ 23ի հաղորդագրութեամբ մը յարգանք մատուցանած են Հայկական Ցեղասպանութեան զոհերուն յիշատակին, շեշտած յիշողութեան կարեւորութիւնը: Շեշտած են նաեւ անհրաժեշտութիւնը Թուրք պետութեան կողմէ Ցեղասպանութեան ճանաչումին, որպէսզի կարելի ըլլայ հայ եւ թուրք ժողովուրդներուն միջեւ հաշտութիւնը: Եւ ատիկա պիտի ըլլայ առաջին հատուցումը:

Բնապահները նոյն առթիւ իրենց ամբողջական զօրակցութիւնն ալ կը յայտնեն հայ համայնքին:

ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ նախագահը Ժ.-Մ. Լը Փէն կրկնած է Հրեաներու բնաջնջումին համար գործածուած կազի սենեակներուն մասին իր նախկին արտայայտութիւնը թէ անոնք մէկ մանրամասնութիւնը կը կազմեն Բ. աշխարհամարտին: Նոյն արտայայտութեան պատճառով Լը Փէն 1987ին 1,2 միլիոն փրանք տուգանքի դատապարտուած էր: Իր աղջիկը Մարին Լը Փէն յայտնած է թէ չի բաժներ հօրը այդ տեսակէտը:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ նախագահ Հ. Քարզայի դէմ մահափորձ մը կատարուած է Քապուլի մէջ, խորհրդային ուժերու դէմ տարուած յաղթանակի տարեդարձի հանդիսութեան ընթացքին: Ինք վիրաւորուած չէ, բայց արարքը երեք հոգիի մահուան պատճառ եղած է: Թալիպանները անմիջապէս ստանձնած են կատարուածը, որ մեկնաբանուած է որպէս ուժի ցուցադրութիւն մը այս վերջիններուն կողմէ եւ ազդարարութիւն թէ կրնան որեւէ տեղ եւ որեւէ ատեն հարուածել:

ՂԱԶԱՊԼԱՆԿԱՅԻ մէջ 55 հոգի մահացած են գործատան մը մէջ ծագած հրդեհին պատճառով: Ծանր ամբաստանութեան տակ է գործատէրը որ բոլոր ելքերը կղպած է, գողութեան արգելք ըլլալու նպատակով եւ գործաւորները չեն կրցած դուրս ելլել ու թունաւոր ծուխէն շնչահեղձ եղած են, կամ այրած:

ԻՐԱՆԻ պահպանողականները Ապրիլ 25ին նոր յաղթանակ մը արձանագրած են, խորհրդարանական ընտրութեան Բ. շրջանին: 287 աթոռի 69%ը իրենց կը պատկանի, 16,4%ը բարենորոգիչներուն, 14,2%ն ալ անկախներուն:

ԳԻՐՔԵՐՈՒ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԼԵԶՈՒԱՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՇԵՐՏԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ»

ՀԵՂԻՆԱԿ՝ ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

(Պէյրութ – 2006)

(Բ. եւ Վերջին մաս)

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

Սեւեռումի ենթարկուած յաջորդ գրողը Մելքոն Կիւրճեանն է (Հրանդ): Բալուի Հաւաւ գիւղի ծնունդ ու Մեծ Եղեռնի զոհ այս գրագէտին գրչին տակ անմահացան գաւառէն Պոլիս ինկած հայ պանդուխտները՝ իրենց ցաւերով, նիստուկացով, բարքերով ու հոգեբանութեամբ:

Ի ձեռին ունենալով Կիւրճեանի «Ամբողջական երկեր»ու հատորը (Փարիզ, 1931), Աղպաշեան այնտեղ կ'ընդնշմարէ հինցած բառեր (որոնցմէ ոմանք վերագտնելով իրենց աշխուժութիւնը, յետագային կրկին մտած են շրջանառութեան մէջ, ինչպէս՝ հեշտալուր, հաստակագեղ, այսահար, սրբանուէր), գրաբարեան տարրեր, նորակերտ բառեր եւ մանաւանդ գաւառաբարբառային բառեր: Նկատել կը տրուի, որ Կիւրճեան հաւատարիմ աշխարհաբարեան մը ըլլալով հանդերձ, իր լեզուն զերծ չէ «խորթ» տարրերէ:

Գաւառային բառերու առատ գործածութիւն կայ նաեւ ներկայացուած յաջորդ գրողին՝ Թլկատինցիին մօտ: Մ. Կիւրճեանի գրեթէ տարեկից ու ճակատագրակից այս կարկառուն գիւղագիրը արեւմտահայ գրական լեզուին տուած է յատուկ երանգ եւ պատկերազարդութիւն: Աղպաշեան անոր գործերէն դուրս բերած է բաւական երկար ցանկ մը ինքնակերտ (ու միաժամանակ դըժուարահասկնալի) բառերու, ի սկըզբանէ ընդունելով որ անոնցմէ շատեր դուրս են շրջանառութենէ կամ ալ ունին վիճելի իմաստ: Այնուամենայնիւ, ան Թլկատինցին կը նըկատէ «նորարար» մը, որ բառակերտումի իր ճիգին ընթացքին չէ ինկած «ձախաւերութեան ու ձախողութեան յորձանուտին մէջ»:

21 էջ տրամադրուած է Գրիգոր Զօհրապին: Ան որ իր գիրքերէն մին խորագրեց «Կեանքը ինչպէս որ է»: Ջերմ կողմնակից աշխարհաբարի դատին, իր խմբագրած «Մասիս»ին մէջ, 1893ին, Զօհրապ առաջադրած էր որ «գրողները տակաւ մօտենան ժողովուրդին եւ անոր համեստ ըմբռնումին, եթէ չեն ուզեր որ իրե՛նք ըլլան միայն իրենց գործերուն ընթերցողները»: Միաժամանակ ան հոգածու եղած էր լեզուին հարստացման, մշակման ու գեղեցկացման:

Մեկնակէտ ընդունելով Զօհրապի Երեւան տպագրուած «Երկերի ժողովածու»ները (1959/1962), Պարոյր Աղպաշեան երկարօրէն հակած է «Նորավէպի իշխան»ին բառապաշարային յատկանիշներուն վրայ: Բազմաթիւ նախադասութիւններ իբրեւ օրինակ ալ տալով, ան վերհանած է Զօհրապի օգտագործած բառամթերքին գունագեղութիւնը, ըմբռնելիութիւնն ու իմաստային նրբերանգները: Ահաւասիկ ցանկ մը Զօհրապի բառերու գանձանակէն·— պոկունք (շրթունք), քաջարուեստ (հմուտ, ճարտար), տորաշէկ (շիկացած), հանգրիենել (վեր քաշել), ստգտանելի (մեղադրելի), շուկատ (խաբերայ), կոկոզավիզ (գոռոզ), կեղակարծ (կասկածոտ), դիւրաշուրթն (շողոքորթ), նկնահասակ (կարճահասակ), ծոցուոր (յղի կին), եւ տակաւին՝ քաղցրամրմունջ, դիմածածուկ, դժնեհայեաց, մրրկայոյզ, հերազուրկ, մոխրապիտակ եւայլն, եւայլն:

Յաջորդ 15 էջերը տրամադրուած են Տիգրան Կամսարականին· իրապաշտ դպրոցի ամէնէն փաւերական դէմքերէն մէկը: Ան իր միակ վէպով («Վարժապետին աղջիկը», 1888) ուշադրաւ նպաստ բերած է նաե՛ւ լեզուաշինարարական շարժումին:

Նոյն է պարագան Լեւոն Բաշալեանին (1868–1943), իրապաշտներու խմբակին կրտսեր մէկ դէմքը, որ կամովին կանուխ հեռացաւ գրականութենէն, եւ որ սակայն արեւմտահայերէնի բիւրեղացման ու զարգացման մէջ ունեցաւ գնահատելի դեր: «Ան խորապէս ուսումնասիրած էր Հայոց լեզուն, տիրապետած եւ իւրացուցած անոր քերականական օրէնքները ու կանոնները, քաջ գիտակ էր հայերէնի դարձուածքներուն ու ոճերուն»:

Ինչպէս հեղ մը ակնարկեցինք արդէն, հատորին մէջ տեղ տրուած է նաեւ երկու արեւելահայ դէմքերու՝ Միքայէլ Նալպանտեանի եւ Մուրացանի:

Նալպանտեանի (1829-1866) յատկացուած 4 էջը հպանցիկ ակնարկ մըն է այս գաղափարապաշտ գրողին լեզուագիտական հայեացքներուն վրայ:

Իսկ Մուրացան, որ Շուշիի ծնունդ է եւ ժամանակակիցը իրապաշտ գրողներուն, ուսումնասիրութեան նիւթ դարձած է իր լեզուին մէջ առկայ հնաբանութիւններուն ու գրաբարեան դարձուածքներուն ճամբով: Ծանօթ է որ ան համբաւ չինած էր մասնաւորաբար Ժ. դարու անցքերը պատկերացնող իր հռչակաւոր պատմավէպով՝ «Գէորգ Մարզպետունի»ով: Աղպաշեան օրինակներ տալով Մուրացանի բառապաշարէն, շեշտած է որ վիպագիրը իր ոճն ու բառամթերքը նուրբ ճաշակով ու մեծ վարպետութեամբ պատշաճեցուցած է Ժ. դարու միջավայրին, որպէսզի կարենայ «հերոսները անհատականացնել եւ ժամանակի լեզուական երանգը պահել»:

Հատորին աւարտին, հեղինակը ի մի բերած է իր գրչին պատկանող 6 գրախօսականներ, բոլորն ալ Երեւան հրատարակուած լեզուագիտական հատորներու մասին: Այս գրախօսականները, որոնք առաւելաբար գրուած են 70ական թուականներուն (երբ Աղպաշեան դեռ նոր աւարտեր էր Երեւանի համալսարանը), կը մատնեն ձեռնհաս գրիչ մը որ շեշտուած հետաքրքրութիւններ ունի լեզուաբանական ու բառագիտական հարցերու նկատմամբ:

Այս գրքին ընթերցումը աւարտեցինք խանդավառ գոհունակութեամբ, հակառակ չօշափուած նիւթին «չոր» ու «խրթին» բնոյթին:

— Երբեմն սիրեցինք վերոնշեալ գրողներու գործերուն մէջ երեւցող գրաբարեան տարրերն ու դարձըւածքները ու անդրադարձանք որ մե՛նք ալ, 21րդ դարու սեմին, յաճախ անզգալաբար կ'օգտագործենք այդ տարրերը, գրաւոր թէ բանաւոր արտայայտութեանց մէջ: Կ'ըսենք ի պահանջեալ հարկին, ի տըղայ տիոց, ի սկզբանէ, ի միջի այլոց, աւուր պատշաճի, եկեղեցւոյ, ձեռամբ, եղբարք եւայլն: «Ոսկեղինիկ» Գրաբարի վերջին հետքերն են ասոնք մեր բերնին մէջ, ու կը թուին ըլլալ թովիչ ու գեղեցիկ:

— Պարոյր Աղպաշեանի այս աշխատասիրութիւնը, իբրեւ սփիւռքեան հրատարակութիւն, գրեթէ եզակի է իր տեսակին մէջ: Արփիարեանի, Զօհրապի եւ միւսներուն մասին մեր գրադարանները կը յորդին գրավերլուծական մեծաթիւ հատորներով, սակայն այդ նոյն գրողներուն լեզուապաշարը առանձին ուսումնասիրութեան առարկայ չէր եղած ցարդ: Եւ արդէն, սփիւռքահայ բանասէրներու տարաբնոյթ հրատարակութիւններուն մէջ գրական լեզուի նուիրուած ուսումնասիրութիւնները խիստ հազուադէպ են, ի տարբերութիւն Հայրենի բանասէրներուն, որոնք, մանաւանդ Խ. Հայաստանի շրջանին, լոյսին բերած են նմանօրինակ քանի-քանի գործեր: Յիշենք «Յովհաննէս Թումանեանի գեղարուեստական երկերի բառարան»ը (Լ. Պետրոսեան) կամ «Պայրոյր Սեւակի չափածոյի բառապաշարը»ն (Արտաշէս Պապոյեան):

— Սոյն հատորին մեծ բացական կը մնայ Իրապաշտ շարժումի կրտսերագոյն դէմքը՝ Երուխան (Երուանդ Սրմաքէշխանլեան): Իցիւ թէ Աղպաշեան զա՛յն եւս ներառէր իր հատորին մէջ, թէ՛ համալրած ըլլալու համար իրապաշտ գրողներու ոսկի շղթան, թէ ալ պատուհան մը բանալու այս տաղանդաւոր հեղինակին «Ամիրային աղջիկը» նշանաւոր վէպին բառապաշարային յատկանիշներուն վըրայ:

Այս գիրքը, խօսելով հանդերձ 100, 120 տարի առաջ ստեղծագործած արեւմտահայ գրողներու բառագանձին մասին, գրեթէ ամէն առիթով կը շեշտէ նաեւ այն մեծ ճիգն ու ներդրումը, զոր այդ գրողները ի գործ դրին տեւաբար, հայերէն լեզուն հարստացնելու, կատարելագործելու ու գեղաճաշակ դարձնելու համար:

Այս հաստատումը ինքնաբերաբար կը մղէ մեզ խորհրդածելու մեր լեզուին ու բառագանձին այսօրուան վիճակին մասին, մասնաւորաբար Սփիւռքի մէջ:

Տխուր է անդրադառնալ, որ այդ վիճակը անմխիթարելի է ու մտահոգիչ: Խոցելի, աղճատ, որձեւէգ (արեւմտահայերէնի ու արեւելահայերէնի խառնուրդ) եւ անհրապոյր արեւմտահայերէն մը տիրապետած է մեր մամուլին մեծամասնութեան: Խմբագիրները ճարահատ են ու չեն յաջողիր սրբագրել «անսրբագրելի»ն:

Նոյն թերութիւնը նշմարելի է նաեւ հրատարակուող բազմաթիւ գիրքերու, արձակ թէ չափածոյ ստեղծագործութիւններու, յուշամատեաններու եւ թարգմանական երկերու պարագային: Սրտցաւ գրիչներու կողմէ երբեմն հնչող ահազանգներն ալ, դժբախտաբար, կը մնան «ձայն բարբառոյ յանապատի»:

Ու միայն այդքան ալ չէ: Ահազանգ հնչեցնողները կրնան ենթարկուիլ նաեւ... դատափետումի ու ծանր մեղադրանքի, այնպէս ինչպէս Մեսրոպեան դասական ուղղագրութեան վերադարձի կողմնակիցները՝ Հայաստանի մէջ: Կարծէք, հայերէնի անաղարտութեամբ ու ճակատագրով զբաղիլը «յանցանք» ըլլար: Այս առընչութեամբ, թող թոյլ տրուի մեզի յիշել անձնական օրինակ մը:

Երբ լայնաշունչ գրախօսականով մը ձեռք առինք Թուրք իրաւաբանուհի Ֆէթհիյէ Չէթինի «Մեծ մայրիկս» յուշագրութեան հայերէն ձախաւեր ու վիժած թարգմանութիւնը (տես. «Յառաջ», 7/8 Նոյեմբեր 2006, նոյն նիւթին շուրջ մեր վրդովումը հրապարակաւ բաժնեցին նաեւ Ռ. Հատէճեան՝ «Մարմարա»յի, Պօղոս Սնապեան՝ «Ազդակ–Գրական»ի եւ Եր. Քասունի՝ «Զանասէր»ի մէջ), նշաւակ դարձանք «սպաննիչ» նիզակներու: Մին «գրականութեան ինքնակոչ ոստիկան» յորջորջած էր մեզ պոլսահայ շաբաթաթերթի մը մէջ, ուրիշ մըն ալ, Սուրիոյ Լաթաքիա քաղաքէն ոմն դպիր մը, երբեմնի հայատառ թրքերէնը յիշեցնող լեզուական խառնուրդով շարադրուած «Բաց նամակ» մը թխեր էր Հալէպի «Գանձասար» թերթին մէջ, «Թուրքէ մը աւելի Հայ Դատին դէմ աշխատող մը» որակելով մեզ...:

Արժէչափերը որքա՞ն փոխուեր են Իրապաշտ շարժումի օրերէն մինչեւ այսօր...

Հալէպ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

ՋՂԱՊՐԿՈՒՄԸ(1) ԴԱՐՈՒՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻ՞ՒՆԸ

Յառաջացեալ ջղապրկումի ծանրակշիռ հետեւանքները վերջին տարիներու ընթացքին,· մասնաւորաբար զարգացած երկիրներու մղձաւանջը դարձած են: Միայն Ֆրանսայի մէջ, վերջին ամիսներուն՝ Ռընօ ընկերութեան մէջ 3, Փէժօ–Սիթրոէնի մէջ 6, Շինոնի միջուկային կեդրոնի մէջ 4, նամակատար ընկերութեան մէջ 1, Փարիզի ազգային դրամատան մէջ 1 ինքնասպանութեան դէպք արձանագրուած են: Տաժանելի աշխատանքը, ջղապրկումը, արհեստավարժներու տատապանքը, ինքնանէւացման ճակատագրական ձեռնարկին գլխաւոր ազդակները կը հանդիսանան: Այս պատճառներուն կու գան աւելնալ գործի անապահովութիւնը, արտադրողականութեան անհատնում պահանջները, բարձր պաշտօնէութեան յաճախակի գործազրկումները, եւլն.:

Բացի 2300–3600 ինքնասպանութեան արարքէ կամ սրտերակային արկածներէ վիճակագրական ազգային տնօրէնութիւնը կը հաղորդէ նաեւ տարեկան 400·000 հիւանդութեան պարագայ, 3-3·5 միլիոն գործի օրերու ընդմիջում՝ արհեստավարժ ոլորտի աղէտ դարձած ջղապրկումի իբրեւ անմիջական հետեւանք, որոնց տնտեսական արժէքը տարեկան 1·2-2 միլիառ եւրո-

յի կը հասնի: Ջղապրկումի պատճառած ախտաբանական երեւոյթներու ցանկը ամբողջացնելու համար, աւելցնենք ոսկրա-մկանային խանգարումները, որոնք կ'արտայայտուին ողնատկի, արմուկի, ուսի եւ կոնակի ցաւերու ձեւով, առօրեայ միօրինակ շարժուձեւերու իբրեւ հետեւանք: Ինչպէս նաեւ մորթային հիւանդութիւններ, կեղ եւ անքնութիւն, նոյնիսկ ալքոլամոլութիւն որոնք արհեստավարժ միջավայրի առօրեային մաս կը կազմեն:

Վտանգը՝ մեր իւրաքանչիւրիս պատահած սովորական Ջղապրկումը չէ, զոր կ'ապրինք ամէն անգամ որ դժուարին գործ մը կը ներկայանայ մեր առջեւ: Ո՛չ, աշխատութեան մէջ իսկական տառապանքը կը յայտնուի այնատեն երբ պաշտօնեայ մը այլեւս անկարող կը դառնայ դիմագրաւել գործի կեանքին մեծ ու փոքր փորձութիւնները: Ան այլեւս կը կորսնցնէ իր ուրոյն միջոցները, խուճապի կը մատնուի, կը տկարանայ հոգեպէս թէ մարմնապէս, և վերջապէս տեղի կուտայ: Ուրեմն ամէն ինչ կախում ունի երեւոյթի ուժգնութենէն: Մեզմէ իւրաքանչիւրը ենթակայ է նման փորձութեան: Քանի որ ոչ մէկը տնտեսական ճնշումէն հեռու է գործի կեանքի ընթացքին: Գործէն զրկուելու վախը միշտ ներկայ ըլլալով, ոչ մէկը ընկերային եւ արտադրական պահանջներէն ձերբազատ է, աւելի շատ աշխատելով աւելի շատ շահելու համար: Առանց մոռնալու իւրաքանչիւրիս ընտանեկան եւ ընկերային պարտաւորութիւնները: Եթէ շատերուն համար նկատի ունենանք հետզհետէ վատթարացող աշխատութեան պայմանները, գերադաս դասակարգին կողմէ կիրարկուած շարունակական ճնշումները, պատկերը ամբողջական կը դառնայ: Այս պայմաններու տակ բատեղծուած Ջղապրկումը ենթակային համար կը վերածուի ներքին հրդեհի մը որուն աւերները կրնան երկարատեւ ըլլալ եւ վախճանը անսպասելի:

Որո՞նք են այս ներքին հրդեհին խթանիչ գործօնները: Ըստ հոգեբաններու՝ Ջղապրկումէ տառապող աշխատաւորներու 90 տոկոսը արտադրութեան հետզհետէ ծաւալող աճէն կը գանգատին: Առեւտրական հաստատութիւններու ջախջախիչ մեծամասնութիւնը կը պահանջեն արտադրողականութեան աճ, շահաբաժինի աճ եւ այս երկուքը նուազագոյն անձնակազմով: Ռընոյի աշխատաւորներէն մէկը կ'ըսէ. «Անցեալին, ինքնաշարժի մը յղացումը կը տեւէր 5 տարի, այսօր այս ժամանակահատուածը վերածուած է 36 ամիսի: Առաջ, պատասխանատու խմբավար մը ունէինք որու հետ կարելի էր զրուցել, վիճիլ, մինչդեռ այսօր խօսակից չունինք, վրադիրք մեր գործի ծաւալը եւ ծրագիրներու թիւը աւելցած է: Ունինք անխախտելի պայմանաժամեր: Խօսակիցներու տեղը գրուած են իմակները: Հրահանգները դարձած են գրեթէ յարձակողական: Այս պայմաններու տակ հոգեկան վիճակս Ջղասպառումի (2) վերածուեցաւ եւ երկու ամիս գործի դադար պահանջեցի ստիպողաբար: Կինս բան մը չէր հասկնար իմ հոգեվիճակէս: Նման կացութեան մատնուած գործընկերներէս երկուքը ինքնասպան եղան»:

Այս ողբերգական դէպքերէն ի վեր, տնօրէնութիւնը «Զօրակցութեան ծրագիր» մը առաջարկեց իր անձնակազմին: 350 նոր պաշտօնի կոչ, «ազատ գրոյց»ի օր մը՝ որու ընթացքին պաշտօնեաները իրենց առօրեայ հոգերը արտայայտելու կարելիութիւն կ'ունենան, աշխատանքը դադրեցնելով:

Այս ժողովներէն դուրս եկած եզրակացութիւններէն երկուքը հետեւեալներն են. ինքնավստահութեան կորուստ եւ գնահատանքի, նաեւ իրաւ արժեւորման թերացում: Երբ գերադասը միշտ աւելին կը պահանջէ իր ստորադասէն, այս վերջինը շուտով իր անձին հանդէպ ունեցած վստահութիւնը կը կորսնցնէ, իր կարողութենէն վեր աշխատութեան բեռան տակ ընկճուած:

Երբ արտադրողականութեան անվերջ պահանջներուն կը հետեւի գործէ հանելու ծրագիրը, աշխատաւորներու կրած ճնշումը իր գագաթնակէտին կը հասնի, ինչ որ տեղի կրնայ տալ ողբերգական անդարմանելի արարքներու:

Որո՞նք են ընկերային այս ախտաբանական երեւոյթը մեղմացնելու միջոցները: Նախ ըլլալ լուսամիտ եւ արթուն: Ջղապրկումի, Ջղասպառումի, նաեւ անոնց հետեւանքները ցուցաբերող առաջին նշաններէն իսկ ենթական պէտք է հակազդէ եւ առանց ժամանակ կորսնցնելու: Ապա յարգէ ֆիզիքական եւ հոգեկան առողջապահութեան կանոնները. կիրարկէ հաւասարակշռուած սննդառութիւն, ունենայ բաւարար քուն, ֆիզիքական բացօթեայ աշխուժութիւն, ինչպէս մարզանք, բացօթեայ պտոյտ, լողաւազան, եւլն.: Անհրաժեշտ է ընկերային կեանքին նախընտրութիւն ընծայել, այցեր տալով կամ ընդունելով, մերժելով առանձնացումը՝ կարելի չափով:

Երկրորդ հերթին՝ պէտք է գիտնալ յարաբերականացնել ներկայացող վտանգը: Ջղապիրկ անձը հակամէտ է ամէն ինչ սեւ ակնոցով դիտելու. իրեն համար ելք չկայ, լուծում գոյութիւն չունի: Միակ դրական քայլը պիտի ըլլայ՝ դէպքերը դիտել տարբեր ակնոցով: Նախ ինքնաթելադրել որ, «եթէ նոյնիսկ գործս կորսնցնեմ, պատահածը մահ չէ վերջապէս»: Երբ այսպէս սկսին մտածել, տառապող անձերը պիտի անդրադառնան որ կան արդէն կարելիութիւններ, որոնք դուցէ արգելք ըլլան իրենց գործէ հեռացուելուն: Երբ ենթական այս վերջին հանգրուանը հասնի, ի մտի ունենալով վերոյիշեալ կարելիութիւնները, ինքնաբերաբար հակազդելու կարողութիւնը կը վերաշահի: Կը վերագտնէ ուժը պայքարելու, իր իրաւունքները պաշտպանելու եւ յոռեգոյն հաւանականութեան պարագային ալ, պաղարիւն կեցուածքով մը նոր գործ փնտռելու անհրաժեշտ ջանքերը ի գործ դնելու:

Վերջապէս արդի գործի կեանքի մէջ ամուր կեցուածք ունենալու առաջին պայմանն է կեանքի դրական փիլիսոփայութեան տէր դառնալը:

Պատրաստեց՝ ՍՈՒՐԷՆ ՇԷՐԻՖ

———

(1) Stres.

(2) Dépression nerveuse.

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

ԱՆԹԻԼԻԱՍԻ «Կիլիկիա» Թանգարանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ, Ապրիլ 21ին, տեղի ունեցած է Հայոց ցեղասպանութեան նուիրուած նորատիպ երկու հատորներու ներկայացումը, նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին: Բացման խօսքով հանդէս եկած է Դպրեվանքի դասախօս Սարգիս Կիրակոսեան, որ արաբերէն լեզուով չեշտած է Ապրիլ 24ը կանխող օրերու նման հանդիսութեան մը թելադրանքը: Ան խօսած է երկու հատորներուն մասին: Առաջինը՝ «Ջայն տառապելոց» վերահրատարակութիւնն է 1922ին Լոնտոն լոյս տեսած այն գիրքին, որ կը պարունակէ Ցեղասպանութենէն վերապրած խլեակներու կողմէ գրուած նամակները իրենց հեռաւոր հարազատներուն: Երկրորդը լիբանանցի մտաւորական տոքթ. Սալեհ Զահրետտինի արաբերէն լեզուով հեղինակած «Հայոց եկեղեցին եւ անոր դերը 1915ի Հայկական ցեղասպանութեան ընթացքին» հատորն է: Երախտագիտական խօսքերով արտայայտուած է գիրքին հեղինակը՝ տոքթ. Ս. Զահրետտին, շնորհակալութիւն յայտնելով կաթողիկոսին, իր քաջալերանքին համար եւ բոլոր անոնց որոնք օժանդակած են հատորին լոյս ընծայման: Եզրափակիչ խօսքը արտասանած է Արամ Ա., անդրադառնալով երկու հատորներու բովանդակութեան, ապա շնորհակալութիւն յայտնած է հատորներու մեկենասներուն: Առաջինին մեկենասները եղած են տէր եւ տիկին Զաւէն Եկաւեան, դայն ձօնելով Եկաւեան եւ Զամքերթճեան գերդաստաններու բոլոր նահատակներուն, երկրորդին մեկենասն ալ եղած է «Ռիչըրտ եւ Թինա Գարօլան» հիմնադրամը:

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԿԵԱՆՔԸ

(ռուսերէնէ թարգմանեց Մարգարիտ Թէրզեան)

Լ. Ա. ՎԱԳՆԷՐ
Ն. Ս. ԳՐԻԳՈՐՈՎԻՉ

ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

ՄԱԼԱԽՈՎ ԿՈՒՐԳԱՆ

Սկզբի օրերին Այվազովսկին ձեւացնում էր, թէ ոչինչ չի լսում: Բայց Պանտէլէյին խաբելն այնքան էլ հեշտ չէր. աւելի ու աւելի յամառ էր դառնում հայը: Մի անգամ Այվազովսկին, վրձինը ձեռքին, կատաղած դուրս եկաւ աշխատասենեակից, որպէսզի մի լաւ գոռգոռայ ծառայի վրայ, բայց տեսնելով այս անգամ իսկապէս հայից խեղճուող ծերունուն, որի կարմրած դէմքի վրայ աչքերը քիչ էր մնում դուրս թռչէին, մտափոխուեց օգնելու: Այդ դէպքից յետոյ Իվան Կոնստանտինովիչն աշխատում էր նախաճաշից չուշանալ: Սկզբում տանտիրուհին ինքն էր ուտելիքը մատուցում, բայց նկատելով, որ նրան աւելի հաճելի է ծերուկի ընկերակցութիւնը, բոլոր հոգսերը դրեց Պանտէլէյի վրայ: Պարզուեց, որ նրանք ընդհանուր ծանօթներ էլ ունեն: Պանտէլէյը ծառայել էր Սեւաստոպոլում: Քաղաքի պաշտպանութեան ժամանակ նա զրկուել էր մի ոտքից: Կոռնիլովին անձամբ ճանաչում էր խիզախ նաւաստուն: Այվազովսկին սիրով ու համբերութեամբ էր ունկնդրում Պանտէլէյի պատմութիւնները Կոռնիլովի եւ Նախիմովի մասին: Ինքն էլ հաճոյքով վերյիշում էր իր հանդիպումները նրանց հետ: Իսկ Պանտէլէյը սիրում էր հարցնել.

– Իվան Կոնստանտինովիչ, դուք շատ նկարներ էք նկարել մեր փառապանծ Սեւծովեան նաւատորմի ծովամարտերի մասին: Ցատկապէս ձեր «Սեւաստոպոլի պաշարումը» ինձ անչափ դուր է գալիս: Ես այն այստեղ՝ Պիտերի ցուցահանդէսում տեսայ: Հէնց իմացայ, որ Սեւաստոպոլի մասին նկար կայ ցուցադրուած, փայտէ ոտքս առայ ու վազեցի: Երկար ժամանակ չէին ուզում ինձ դահլիճ թողնել: Լաւ է, ծանօթ ուսանողներից մէկը ներս տարաւ: Նայեցի, նայեցի նկարին եւ արցունքը գլորուեց աչքերիցս: Այն ժամանակ մտքովս չէր անցնում, որ մի օր բախտ կ'ունենամ տեսնելու նրա նկարչին եւ դեռ այսպէս խօսելու հետը: Միայն թէ... Իվան Կոնստանտինովիչ, ինչո՞ւ չէք ստեղծում այնպիսի մի նկար, որտեղ երեւայ ռուս նաւաստին, որպէսզի բոլորին տեսանելի լինի նրա հարուստ, խիզախ հոգին:

– Իսկ ինչպէ՞ս անեմ դա, Պանտէլէյ, սիրելիս, ասա, յուշիր ինձ:

– Այ, ասենք, այսպիսի մի դէպք: Սրա մասին ինձ պատմել է հայրենակիցներիցս մէկը, որի հետ ծառայում էինք Սեւաստոպոլում: Ահա այդ հայրենակիցս էլ անցեալ ամառ որոշում է լինել այնտեղ: Ամբողջ ամառ քայլելով գնում է: Ճանապարհին հանդիպում է իր նման մի ծերուկի, որը նոյնպէս Սեւաստոպոլ է ուղեւորուելիս լինում: Երկուսով տեղ են հասնում իրիկնադէմին, արեւը մայր մտնելու ժամանակ: Բարձրանում են Մալախով Կուրգան, հէնց այն տեղը, որտեղ մահացու վէրք ստացաւ ծովակալ Կոռնիլովը: Երկար կանգնում են այնտեղ, մինչեւ արեւը մայր է մտնում եւ մութը սկսում է իջնել: Տուն դարձաւ հայրենակիցս ու ասաց. «Հիմա արդէն կարելի է մեռնել, պարտքս կատարեցի»: Տեսնո՞ւմ էք, Իվան Կոնստանտինովիչ, ինչպիսի հոգի ունի ռուս զինուորը:

Այվազովսկին լուռ էր: Միայն խոնաւացած աչքերն էին մատնում, թէ ինչքան ազդել էր նրա վրայ ծերունի Պանտէլէյի պատմածը:

Նկարիչը Պետերբուրգում մնաց մինչեւ գարունը բացուելը:

Արդէն քանի օր էր, ինչ Այվազովսկին տնից դուրս էր գալիս գարնանային վերարկուով: Մուշտակը նա Պանտէլէյին կարգադրել էր դնել ճամպրուկը: Մեկնելու օրը տաք եղանակ էր, արեւի ջերմ շունչը զգալի էր սենեակում: Զարմանալի մի թեթեւութիւն էր տիրում մարդու հոգում, ասես այն եւս լուացուած լինէր գարնանային ջրերում: Կայարան գնալուց առաջ Այվազովսկին փակուեց իր սենեակում եւ դուրս չեկաւ այնտեղից այնքան ժամանակ, մինչեւ որ կառքը չժամանեց:

Հրաժեշտը Պանտէլէյի հետ շատ յուզիչ էր: Երկուսի աչքերն էլ լցուել էին: Երկար ժամանակ Պանտէլէն անշարժացած նայում էր կառքի յետեւից, յետոյ դանդաղ քայլերով ծերունին մտաւ տուն: Բայց անցնելով աշխատասենեակի եւ ննջարանի միջեւ գտնուող ընդարձակ, լուսաւոր միջանցքից, յանկարծ, անակընկալի եկած, բացագանչեց: Կախարանից կախուած էր Իվան Կոնստանտինովիչի մուշտակը: Պանտէլէյն այնպէս բարձր ճչաց, որ տանտիրուհին լսեց հիւրասենեակից ու վազեց եկաւ:

– Ի՞նչ պատահեց, Պանտէլէյ:

– Իվան Կոնստանտինովիչը մուշտակն է մոռացել... Ձեմ հասկանում, ախր ես ինքս այն դրեցի ճամպրուկը: Ա՛յ քեզ գործ... Պէտք է անմիջապէս կայարան հասցնել, գուցէ դեռ այնտեղ է...

– Ի հարկէ, ի հարկէ, – ասաց տանտիրուհին: – Միայն ուղեւս տեղ չի անում, ինչպէ՞ս կարողացար այդպիսի սխալ թոյլ տալ, դու՝ որ միշտ այնքա՛ն ուշադիր ես...

Պանտէլէյը մօտեցաւ կախարանին եւ մնաց տեղում քարացած.

– Էլի ի՞նչ պատահեց, – յուզուած գոչեց տանտիրուհին:

– Եկէք ինքներդ տեսէք, Լիդիա Իվանովնա, եկէք, մօտ եկէք...

Տանտիրուհին անհամարձակ մօտեցաւ կախարանին ու զարմանքով բացագանչեց. այն, ինչ ինքն ու Պանտէլէյը համարել էին Իվան Կոնստանտինովիչի մուշտակը, իրօք մուշտակ էր, միայն թէ պատին նկարած...

– Ա՛յ քեզ չարաճճի, – սթափուելով առաջինը ձայն հանեց տանտիրուհին:

– Սա մեծ յիշատակ ու պատիւ է այս տան համար, – լրջօրէն նկատեց Պանտէլէյը:

(Շար. 212)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տէր եւ Տիկին Ժիրայր Մուրատեան 1·500 եւրօ կը նուիրեն «Յառաջ»ին, իրենց սիրեցեալ զաւկին՝ Րաֆֆիի մահուան տարելիցին առթիւ:

CATHEDRALE APOSTOLIQUE ARMENIENNE SERPOTZ TARKMANTCHATZ

CONVOCATION A L'ASSEMBLEE GENERALE ORDINAIRE
(Exercices 2006-2007)

Cher(e,s) Membre(s),

Le Conseil de l'Association Cultuelle de la Cathédrale Serpotz Tarkmantchatz vous invite par la présente à la prochaine Assemblée Générale Ordinaire qui aura lieu le :

Lundi 5 mai 2008 à 18 heures

dans la salle «A. Tcherpachian»
du Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado
13008 Marseille

A l'issue de la réunion, un apéritif sera servi aux participants.

Comptant sur votre présence, veuillez agréer, cher(e,s) Membre(s), l'assurance de nos sentiments les meilleurs.

P/O le Conseil de la Cathédrale
Le Président
Robert Azilazian

Le Recteur de la Cathédrale
Révérend Père
Zadik Avédikian

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔ

– ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 24, ժամը 15ին
ԺԹ. – Ի. ԴԱՐԵՐՈՒ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):
դասախօս՝ Հ. Յ. ՊՋՏԻԿԵԱՆ

– ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՅԻՍ 5, ժամը 20·30ին
ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅ ԾԷՍԻՆ ՄԷՋ
Հ. ՎՐԹԱՆԷՍ ՎՐԴ. ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
(Վենետիկէն)
Կեդրոնական դահլիճին մէջ (Սեւր):

ԱԶԳ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԷՆ BNF

Ֆրանսայի Ազգային գրադարանը հայկական հին դրապահեստի մը տէր է եւ կ՚ուզէ ճոխացնել զայն: Եթէ կը փափաքիք մասնակցիլ այդ նպատակին, կապ հաստատեցէք Միքայէլ Նշանեանի հետ որ պատասխանատու պահպանողն է հայկական պահեստին: Կրնաք ապահով ըլլալ որ ձեր նուիրելիք գիրքերը, թերթերը, պարբերականներն ու լուսանկարները լաւագոյն պայմաններու մէջ պիտի պահուին եւ թուայնացուին:

Հեռ. – 01·53·79·80·69

Իմակ. – mikael.nichanian@bnf.fr

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ESPOIR POUR L'ARMÉNIE

VOYAGE EN ARMENIE ET AU KARABAGH
DU 6 AU 16 JUILLET

Logement en hôtel 3 étoiles en pension complète
Visite des sites historiques de l'Arménie et du Karabagh
— Lac Sevan, Khor Virab, Guéghard, Garni, etc... —

Prix 1550 euros

Serge Kurkdjian, tél. : 04 91 77 23 44
E-mail : serge@kurkdjian.org
www.espoirpourlarmenie.org

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ·Մ·Ը·Մ·–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ–շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեանի»ը, որ նուիրուած է նաեւ Հ·Մ·Ը·Մ·–ի հիմնադրութեան 90–ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ·Մ·Ը·Մ·–ի շրջանները ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ՚ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10–11ին, Իսի–լէ–Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00–ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի–լէ–Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝
25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–
06 80 88 12 21

Հ·Մ·Ը·Մ· – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

CITE INTERNATIONALE
UNIVERSITAIRE DE PARIS
Maison des Etudiants Arméniens - Fondation Marie Nubar
Հայ Ուսանողներու Տուն – Մարի Նուպար Հիմնարկութիւն
57 boulevard Jourdan — 75014 Paris

"Les mercredis de la MEA"

La magie de l'écrit
Claude MUTAFIAN
Historien, Maître de Conférences à l'Université ParisXIII-Nord
— Mercredi 14 mai/21h

La Troisième République d'Arménie
Claire MOURADIAN
Historienne, Directrice de recherches au CNRS
— Mercredi 28 mai/21h

**

Un état de la musicologie arménienne
Aram KEROVPYAN
Musicologue
— Mercredi 4 juin/21h

DIOCESE DE FRANCE
de l'Eglise apostolique arménienne
15 rue Jean Goujon — 75008 Paris
Mgr. Norvan ZAKARIAN
Archevêque de France
a le plaisir de vous convier
au cycle de formations
«COMPRENDRE L'HISTOIRE ARMENIENNE»
Qu'il anime chaque mois

3ème séance :
dimanche 4 mai de 17h à 18h
Salle Nourhan Fringhian
15 rue Jean Goujon — 75008 Paris
Métros: Champs-Elysées Clemenceau, Franklin Roosevelt ou Alma-Marceau
— Entrée libre —
Renseignements : 06 29 38 96 14

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille.

2008Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28–ԻՆ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի կ՚ունենայ

ՍՈՒՐԲ ՄԻՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

բարձր հովանաւորութեամբ
Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.
Ամենայն Հայոց Կաթողիկոսի,

իր հետ աղօթակից ունենալով Նուիրապետական Աթոռներու գահակալները, թեմական առաջնորդները եւ հաւատացեալ հայ ժողովուրդի աղօթասէր զաւակներու հոծ բազմութիւնը:

Նկատի ունենալով այդ օրուան կարեւորութիւնը հաւատացեալի կեանքին մէջ

Թեմիս Առաջնորդ
ՆՈՐՎԱՆ ԱՐՔ. ԶԱՔԱՐԵԱՆ
Կ Ո Չ կ՚ուղղէ
Ֆրանսահայ Թեմի բոլոր զաւակներուն
2008Թ. Սեպտեմբեր 26էն մինչեւ Հոկտեմբեր 3
մասնակցելու
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
մեր աղօթքը բերելու
Ս Ո Ւ Ր Բ Մ Ի Ւ Ռ Ո Ն Ի Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

Ուխտագնացութիւնը կը կազմակերպուի Ֆրանսահայոց Թեմի Առաջնորդարանին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեան համար դիմել տեղի ձեր հովիւներուն եւ հոգաբարձուներուն, կամ Ֆրանսահայ Թեմի Առաջնորդարան՝ 01·43·59·67·03 թիւէն:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 1

40րդ օր յինանց
ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Մանուկներու հաղորդութեան օր

Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8·30ին,
Պատարագ՝ 10ին:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԻՐԱՅՐ ՔՀՆՅ. ԳԸԼԸՃԵԱՆ

Կը հրաւիրուին քրիստոնէական դաստիարակութեան միջոցաւ հաղորդութեան պատրաստուած բոլոր մեր մանուկները ու դպրոցի աշակերտները մասնակցելու պատարագին եւ հաղորդուելու:

**

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 1

Համբարձումն Քրիստոսի
Պատարագ՝ ժամը 10ին:

Այսօր վերապահուած է մանուկներու հաղորդութեան:

**

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

Հինգշաբթի, Մայիս 1

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այս առթիւ Լիոնի Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10ին Պատարագ կը մատուցուի:

կը պատարագէ
ԻՍԱՀԱԿ Ա. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LIVRY-GARGAN

La Section «D. MISSAKIAN» de Sevran-Livry de la Croix Bleue, offrira un
HOKEDJACH
en présence du Père Haroutioun TACHDJIAN,
à la mémoire de ses membres et amis disparus.

Le jeudi 8 mai à 13 heures
à la Maison de la Croix Bleue
17 rue Charles Péguy,
93190 LIVRY-GARGAN

Sur inscription auprès de :
— Madeleine : 01 43 83 87 68;
— Nilva : 06 87 05 00 67.

□

ՊՈՒԼՎ. ՕՏՏՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Պուլվ. Օտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը վիճակահանութիւն մը կազմակերպած է Համբարձման առթիւ, Մայիս 1ին, ժամը 12:30ին:

MNA, 8 bld. Denis Papin
13015 Marseille

Կը հրաւիրուին բոլորը հաճելի օր մը անցընելու համար:

□

ԼԻՈՆ-ՎԻԼԷՕՐՊԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Կապոյտ Խաչի Լիոն–Վիլէօրպանի Արաքս մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ, միասին տօնելու Համբարձման տօնը, ինչպէս նաեւ Համբարձումներու անուանակոչութեան տօնը, ընտանեկան եւ բարեկամական ճաշի մը շուրջ (խորոված), Հինգշաբթի, Մայիս 1, ժամը 12:30էն սկսեալ Վիլէօրպանի Հայ մշակութային տան մէջ: Նաեւ վիճակահանութիւն: Ճաշագին՝ 12 եւրօ – երախաներու համար կէս գին:

Հեռաձայն: 04 78 26 28 71
04 78 45 17 55

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ԱՊՐԻԼ 30
MERCREDI
30 AVRIL
2008

LE NUMERO: 1,20 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
Directrice : ARPIK MISSAKIAN
83, rue d'Hauteville — 75010 Paris
Tél. : 01 47 70 86 60 — Fax : 01 48 00 06 70
Courriel (e-mail) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 250 եւրօ — Վեցամսեայ : 135 եւրօ
Արտասահման : Տար. 300 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
270 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1,20 եւրօ
C.C.P. Paris 15069-82 E

83ՐԴ ՏԱՐԻ – ԹԻՒ 21·949 Fondateur SCHAVARCH MISSAKIAN 83e ANNEE — N° 21·949

ԱՊՐԻԼ 24

ՄԱՐՍԷՅԼ

(«ՅԱՌԱՋ») — Ապրիլեան Եղեռնի ոգեկոչումները Մարսէյլի եւ շրջակայ քաղաքներուն մէջ ընթացան Ապրիլ 14էն 29:

Ապրիլ 14ին, բացումը կատարուեցաւ «Կաստոն Տըֆէռ» նահանգային գրադարանի եւ Արխիւներու նորակառոյց շէնքին ճակտին վրայ կախուած մեծածաւալ պաստառի մը, հետեւեալ արձանագրութեամբ՝

«Le Génocide Arménien, le Département des Bouches-du-Rhône se souvient».

Խօսք առին ծերակուտական – նախագահ՝ Ժան-Նոէլ Կէօրինի եւ Մ. Սիմոնեան (Սէ.Սէ.Ա.էՖ.):

Ապրիլ 18ին, Հայ Մշակոյթի Տունը եւ Հայկական Գեղարուեստական Միութիւնը, Վասպուրական սրահին մէջ ոգեկոչման հանդիսութիւն մը կազմակերպեցին նուիրուած՝ Աւետիս Ահարոնեանի մահուան 60րդ տարելիցին: Ամբողջովին հայատառ, հայախօս եւ հայադրոշմ ձեռնարկ մը, հաւանաբար միակը ընդհանուր յայտագրին մէջ, բացի եկեղեցական արարողութիւններէն, հետեւաբար յոյժ գնահատելի: Արտասանուեցան Ա. Ահարոնեանի գործերէն հատուածներ, մեկնաբանուեցան մեղեդիներ, երաժշտութիւն (դուդուկ եւ դաշնակ), ցուցադրուեցաւ Ա. Ահարոնեանի վերջին ճառին (1934) եւ յուղարկաւորութեան (1948) հին ժապաւէնը: Խօսք առին՝ Կարօ Յովսէփեան եւ Հրաչ Վարժապետեան (ՀՅԴ):

Ապրիլ 19ին, 12 եկեղեցիներու «Մարաթոն» կոչուած ձեռնարկը (Սէ.Սէ.Ա.էՖ.) տեղի ունեցաւ. Յիշողութեան ջահը վառուեցաւ եւ օրհնուեցաւ Գամփ. Ֆրէշի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ, որ գաղութին կառուցած առաջին եկեղեցին է: Ապա, ջահը շրջեցաւ Մարսէյլի զանազան թաղերը, կանգ առնելով Սէն Թ'Անթուանի Աւետարանական եկեղեցին, Սէն Թ'Անթուանի Առաքելական եկեղեցին, Պուլվ. Օտտոյի Առաքելական եկեղեցին, Սէն Ժերոմի Առաքելական եկեղեցին, Հայ Կաթողիկէ եկեղեցին, Պոմոնի Առաքելական եկեղեցին, Պոմոնի Աւետարանական եկեղեցին, Սէն Լուի Առաքելական եկեղեցին, Սէն Լուի Աւետարանական եկեղեցին, Սէնթ Մարկրիթի Առաքելական եկեղեցին և հուսկ ժամը 18·30ին ջահը հասաւ Սրբոց Թարգմանչաց եկեղեցին ուր կատարուեցաւ Նահատա-

(Շար.ը Դ. էջ)

ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ԱԶԱՏ ՈՐՄՆԱԴԻՐՆԵՐԸ ՏԱՐԱԿԱՐԾԻՔ ԵՆ

Թուրք մամուլը Ապրիլ 28ին տեղ տըւած է այն տարակարծութեան որ ծագած է Թուրքիոյ եւ Ֆրանսայի Ազատ որմնադիրներուն միջեւ, վերջիններուն ներկայացուցիչ Ժ.-Մ. Գիարտէի Ապրիլ 24ի Փարիզի ոգեկոչումին բանձներուն պատճառով: Ան քննադատած էր Թուրքիոյ ժխտումի քաղաքականութիւնը ու կոչ ըրած իր եղբայրներուն որ իրենք գլխաւորեն այդ երկրին կողմէ Ցեղասպանութեան ճանաչումի աշխատանքը:

Այս արտայայտութիւնը նեղ կացութեան մատնած է Թուրքիոյ մասոնները որոնց Մեծ Օթեակին Նախագահը Մ. Անսէն հաղորդագրութեամբ մը գանգատած, դժգոհած է Ժ.-Մ. Գիարտէի հայանպաստ կեցուածքէն: Ըսած է թէ իրենք Ապրիլ 17–19 Միջերկրականեան իրենց համագումարին շատ ջանացած են Գիարտէն հրաժարեցնել Ցեղասպանութեան պնդումէն, բացատրելով Թուրքիոյ մեծ զգայնութիւնը հարցին առընչութեամբ. բայց չեն յաջողած:

⋆ ⋆ ⋆

ՊՈԼԻՍ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝ « ՈՒՐԱՑՈՒՄԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ Է »

Թուրքիոյ Մարդկային իրաւունքներու Պոլսոյ մասնաճիւղը այս տարի եւս Ապրիլ 24ին հաղորդագրութիւն մը հրապարակած է: Հոն ըսուած է թէ այդ օրը ամբողջ աշխարհին կողմէ Ցեղասպանութիւնը նշող թուականն է, բացի Թուրքիայէ: «Թուրք պետութիւնը իր ամբողջ ուժը գործի կը լծէ հերքելու համար այդ թուականին բուն իմաստը: ...Դիւանագիտական շրջանակներու մէջ թուրք պաշտօնատարներ եւ անոնց համախոհները կը յաւակնին ճանչնալ «մեծ ողբերգութիւն" մը, մերժելով անոր "ցեղասպանութիւն" սահմանումը» ըսուած է հաղորդագրութեան մէջ. ապա շեշտուած. «Ուրացումը ինքնին ցեղասպանութեան մաս կը կազմէ ու զայն կը շարունակէ: Ցեղասպանութեան մերժումը արդէն մարդկային իրաւունքներու ոտնահարում է»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՉՈՐՍ ՔԱՂԱՔԱՑԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ

Գասաղէն եւ Նորադուզէն չորս քաղաքացիներ Խաչիկ գիւղէն վերադարձին մոլորելով անցած են Նախիջեւանի կողմը ու ձերբակալուած ադրբեջանցի ոստիկաններու կողմէ: Ադրբեջանի մամուլը հաղորդած է թէ «չէզոքացուած են Հայաստանի զինեալ ուժերու յատուկ զօրախումբի մը անդամները որոնք ադրբեջանական տարածքին վրայ սադրանք հրահրելու ծրագիր ունէին»:

Հայաստանի պաշտպանութեան Նախարարութենէն տեղեկացուցած են թէ չորս քաղաքացիները ադրբեջանական ապահովութեան մարմիններու մօտ են, իրենց առողջական վիճակը լաւ է: Դիմում եղած է Կարմիր խաչին, որպէսզի անոնց Հայաստան վերադարձը կազմակերպուի:

* * *

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՈՒՄԲ

Նախագահ Ս. Սարգսեան աշխատանքի խումբ մը կազմած է որ պիտի համակարգէ Եւրոպական խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձեւով Հայաստանի եղած առաջարկներուն իրականացումի գործը: Խումբին ղեկավարն է նախագահի աշխատակազմի ղեկավար Հովիկ Աբրահամեան: Ընդգրկուած են նոյն խորհրդաժողովին հայաստանեան պատուիրակութեան անդամները, նախագահի օգնականը, արտաքին գործերու եւ արդարութեան փոխնախարարները, գլխաւոր դատախազի տեղակալը, հանրային հեռատեսիլի խորհուրդին նախագահը, հեռատեսիլի եւ ձայնասփիւռի ազգային յանձնաժողովին նախագահը: Խումբը երկու շաբաթէն պէտք է յառաջիկայ քայլերու վերաբերեալ առաջարկներ ներկայացնէ:

* * *

ՌՈՒՍ ՍԱՀՄԱՆԱՊԱՀԵՐԸ ՀԱՅԵՐՈՎ ԿԸ ՓՈԽԱՐԻՆՈՒԻՆ

Մայիսին Հայաստանի սահմանի վերջին ռուս զինուորները հայերով կը փոխարինուին. լուրը տուած է Ռուսաստանի հայաստանեան սահմանային ծառայութեան վարչութեան մամուլի գրասենեակը: 1992ին ստորագրուած պայմանագրով նախատեսուած էր որ իրենց պարտականութեան շրջանը աւարտած ռուս սահմանապահները փոխարինուին հայ զինուորներով:

* * *

«ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ»Ը ԵՒՐՈՊԱՅԻ ԱՏԵԱՆԻՆ ԿԸ ԴԻՄԷ

Լ. Տէր Պետրոսեանի կողմնակիցներուն «Համաժողովրդական շարժում»ը, ըստ հրապարակուած հաղորդագրութեան, դիմումնագիր մը կը պատրաստէ, դիմելու համար Մարդկային իրաւունքներու եւրոպական ատեանին: Դիմումը բողոք մը պիտի ըլլայ Փետրուար 19ի նախագահական ընտրութեան արդիւնքներու կեղծումին նիւթով: Շարժումը տեղեկացուցած է թէ հայ եւ օտար իրաւաբաններէ բաղկացած փորձագէտներու խումբ մը կը զբաղի դիմումնագրին պատրաստութեամբ:

ԹՈՒՐՔԻԱ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ՈՒ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

Անգարա դատապարտած է Ապրիլ 23ին Երեւանի մէջ երիտասարդներու ջահերթին ակիզբը թրքական դրօշի մը հրկիզումը: Արտաքին գործերու Նախարարութիւնը յայտարարած է թէ թրքական դրօշակը խորհրդանիշն է թուրք ժողովուրդին հիմնական արժէքներուն, հաստատքներուն եւ անկախութեան. ուստի հոմանիշ կը նկատուի անոր գոյութեան: Նման խորհրդանիշի մը հրկիզումին լուրը մեծ յուզում, հակազդեցութիւն եւ զայրոյթ պատճառած է ամբողջ ժողովուրդին: Նախարարութիւնն ալ նման արարքներ խստօրէն կը դատապարտէ:

Հաթայի մէջ, որպէս փոխադարձութիւն, երեք թուրք երիտասարդներ հայկական եռագոյնին մօտաւոր գոյներով կերպասի կտոր մը հրկիզած են, վրան «Անկցի՛ Հայաստանը» գրելէ ետք:

☆ ★ ☆

Թուրքիոյ արտաքին գործերու Նախարարութիւնը որոշած է Արժանթինի մէջ Մայիս 28–29ին կայանալիք «Քաղաքակրթութիւններու միասնութիւնը» թեմայով ժողովին չղրկել պետական նախարար Մ. Այտընը: Այս որոշումն ալ փոխադարձութիւն է այդ երկրին մէջ Ապրիլ 24ին «Հայկական ցեղասպանութեան ի յիշատակ, ժողովուրդներու միջեւ լայնախոհութեան ու յարգանքի օր» հռչակումին: Նախարարութիւնը դիտել տըւած է որ նման որոշումներով Արժանթին կը վնասէ Քաղաքակրթութիւններու միասնութեան ծրագրին:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԷՏԷՐԻՔ ԼԸՖԷՎՐ, ԻՒ. ԷՄ. ՓԷ.ի երեսփոխան, կ'ուզէ վստահեցնել բոլոր անոնք որոնք դէմ են Թուրքիոյ անդամակցութեան Եւրոպական Միութեան, որ հանրաքուէն պարտադիր պիտի ըլլայ: Որոշած է սրբագրութիւն մը առաջարկել Սահմանադրութեան բարենորոգման, պարտադիր դարձնելու համար հանրաքուէն անդամակցութեան համար այն երկիրներուն, որոնք «աշխարհագրական գետնի վրայ Եւրոպա չեն գտնըւիր»:

ՊՐԻՒՍԷԼԻ Յանձնախումբը խիստ ազդարարութիւն մը ըրած է Ֆրանսայի որ ի վիճակի չէ առաջքն առնելու իր բայցերուն: Նախատեսուած բացերն են 2,9% 2008ի համար եւ 3% 2009ի: Պատժական միջոցները բացառուած չեն: Արդարեւ, Ֆրանսա «ամէնէն քէչ աշակերտն է եւրոյի գօտիին»: Կացութիւնը ալ աւելի մտահոգիչ է Սարքոզիի համար որ, Յուլիսին նախագահութիւնը կը ստանձնէ Եւրոպական Միութեան:

ՖՐԱՆՍԱՅԻ աշխատանքի նախարարին եւ սենտիքաներու հանդիպումը Ապրիլ 28ին ոչ մէկ դրական արդիւնք տուած է, քանի կողմերը անդրդուելի մնացած են իրենց դիրքերուն վրայ: Նիւթը կը վերաբերէր հանգստեան կոչուելու նոր դրութեան, այլ խօսքով 40ի տեղ հարկ պիտի ըլլայ 41 տարի սակերը վճարել 2012էն սկսեալ հանգստեան թոշակին իրաւունք ունենալու համար: Ոչ մէկ սենտիքա կ'ընդունի եւ գլխաւոր առարկութիւնն այն է որ նախարարը ոչ մէկ կարեւորութիւն տուած է նախապէս իրենց ներկայացուցած առաջարկներուն, այլ կերպ ապահովելու համար ֆինանսաւորումը:

ԳԸՐԳ ԳՐԻԳՈՐԵԱՆ, 91 տարեկան, որ արդէն կարեւոր բաժնետէրերէն է Գըրայսլէրի եւ Ճենըրըլ Մոթորսի, այժմ ալ գնած է Ֆորտի բաժնեթուղթերուն 5%ը: Համոզուած է որ ամերիկեան կառքերու թիւ 2ը կրնայ զարկ ստանալ: Լուրը բաւական աղմուկ հանած է Տիթրոյթ եւ բոլորը հարց կուտան Գրիգորեանի հետանկարներուն մասին:

ՍԱՐՔՈԶԻ եւ կինը երկօրեայ պետական մակարդակի այցելութիւն մը տուին Թունուզի նախագահին. իրենց կ'ընկերանային շուրջ 100 գործարարներ: Այցելութիւնը քննադատութիւններու ալ դուռ բացած է, որովհետեւ հակառակ Պուրկիպայի շրջանի յառաջդիմութիւններուն ժողովրդավարութեան գետնի վրայ, ներկայ նախագահը՝ Պէն Ալի մարդկային իրաւանց պաշտպանութեան օրինակ մը չէ: Ֆրանսա յաջողութիւն արձանագրած է առեւտրական գետնի վրայ. առաջին լուրերու համաձայն 16 էռպիւս ծախած է եւ երեք այլ օդանաւեր: Թունուզի նախագահին կինն ու ազգականներն ալ բաւական մաս ունեցած են մութ գործերու մէջ:

ՀՌՈՄԻ քաղաքապետ ընտրուած է նախկին փաշիստ մը յանձին՝ Ճիաննի Ալեմաննոյի, ինչ որ կը նշանակէ թէ յաւիտենական քաղաքը ձախէն աջի ձեռքը կ'անցնի երեք տասնամեակներէ ետք: Ձայներու 5 կէտերու առաւելութեամբ ձախի թեկնածուին դէմ, քանի Ռութելլի միայն ձայներու 46,4%ը ստացած էր: Կը թուի որ Պէրլուսքոնիի յաղթանակը բաւական օգտակար եղած է այս արդիւնքին համար:

ԳԱԶԱՅԻ մէջ մայր մը եւ իր չորս զաւակները սպաննուած են իսրայէլեան հրասայլի մը կրակոցներէն, որոնք ուղղուած էին իրենց տունին վրայ:

ՅԻՊԷ-Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՔՐՈՆԻԿԱԳԻՐ ԵԻՍԵԲԻՈՍԻ ՀԵՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ՅԻՊԷ – Քարքարուտ եւ աղքատ երկրի մը մէջ ի՞նչ հարստութիւն կայ կողոպտելիք: Կարդա՛ օտար մամուլը Հայաստանը ներկայացուած է միշտ «Առանց ծովի, փակ սահմաններով, աղքատ փոքր երկիր մը, հազիւ երեք միլիոն բնակչութեամբ, ուր ժողովուրդին մեծ մասը կ՚ապրի ծայրայեղ աղքատութեան մէջ···»:

ԵԻՍ. – Հայաստան այնքան ալ աղքատ չէ ինչպէս կը կարծուի: Հակառակ իր փոքր տարածքին, հանքային մեծ հարստութեան տէր է: Տեղացի մասնագէտներու հաշիւներով Քաջարանի մոլիպտէնի հանքերը, իրենց անսպառ պաշարով կրնան համեմատուիլ Բաքուի քարիւղին հետ: Քարիւղը երկար կեանք չունի, բնապահութեան համար այսօր նոր նիւթեր գտնուելու վրայ են զայն փոխարինելու· մինչ մոլիպտէնի գինը օրէ օր կը բարձրանայ: Ո՞ւր կը վերջանան միլիոնները··· մարդ չի գիտեր: Հապա պղինձի՞ հանքերը, ոսկիէ ոսկիի պաշարներ դուրս կուգան. ո՞վ կ՚օգտուի անոնցմէ: Կրաշաղա՞խը զոր Ռուսաստանն անգամ կը փափաքի ներածել, ոդիմպիական ծրագիրները գործադրելու: Հանքային ջուրերու անսպառ պաշարնե՞րը, որուն մաքրութիւնը այնքա՛ն կարիք ունի. Տրաւերտինոյի, պազալտի, մարմարի, օպսիտէնի եւ այլ հարստութիւններ պահուած մեր «քարքարուտ» լեռներուն մէջ, պիտի չկարենա՞ն երեք միլիոննոց բնակչութիւն մը երջանիկ դարձնել···: Չկայ մէկը որ այսօր տեղեակ չըլլայ այս գեղծարարութիւններուն:

Ահա սիրելի Յիպէ, այս է մեր երկրին ներկայ կացութիւնը. ո՛չ ղարաբաղցիի, ո՛չ ալ հայաստանցիի հարց է. Ղարաբաղի ժողովուրդն ալ թշուառ վիճակի մէջ կը գտնուի, Հայաստանինն ալ: Ամէն սրբութիւն կոխկռտուած է յանուն ՆԻՒԹԻ, մամոնայի. ամէն սրբութիւն կ՚օգտագործուի դարձեալ յանուն մամոնայի··· չտեսա՞ր ինչ բարեպաշտութեամբ կարգ մը թեկնածուներ եկեղեցականներով շրջապատուած անդադար մոմեր կը վառէին. այսքան լկտութի՞ւն···

Արագածի շուրջ ամբողջական պտոյտ մը ընելով վերջապէս հասած ենք ԱՇՏԱՐԱԿ: *Պատմական յուշարձաններու առատութեամբ, Արագածոտնի մարզը ամենահարուստն է անտարակոյս, որու մայրաքաղաքն է Աշտարակ պատմական քաղաքը:*

Ամբողջ մարզը, որուն մէկ կարեւոր մասը այցելեցինք, ունի 2·753 քառ. քմ. տարածութիւն, 140·000 բնակչութեամբ (1·1·06) կազմուած է 114 համայնքներէ, 3 քաղաք եւ 117 գիւղ, մարզի բարձրագոյն կէտը Արագածն է 4090 մեթր, եւ ամենացածը 980 մեթր է ծովի մակերեսէն:

Աշտարակը մաքուր մայրուղիով կապուած է Երեւանի (20 քմ.) շուրջ 20·000 կայուն բնակչութեամբ, որոնց կը միանան բազմաթիւ երեւանցիներ տաք եղանակին վայելելու իրենց «տաչա»ներու մէջ այգիներուն եւ պարտէզներուն անսպառ բարիքները: Շատ ափսոս որ սովետական վերջին տասնամեակներուն հոն կառուցուած են անշնորհք բարձրայարկ ժողովրդական տուներ եւ խանգարած քաղաքին բնական գեղեցկութիւնը, բլուրներու եւ խոր ձորերու երկայնքին շինուած:

Աշտարակ, նկատի առած իր հնութիւնները, ուրարտական ջրանցքը որ մինչեւ այսօր գործող է, շատ հին բնակավայր մըն է: Մեր մատենագրութեան մէջ առաջին անգամ կը յիշատակուի Թ. դարուն, որպէս ծննդավայր Գէորգ Ա. կաթողիկոսին, հակառակ անոր որ Ե. դարու պազիլիքը տակաւին կիսականգուն է քաղաքին մէջ:

Աշտարակի զաւակ են բացի վերոյիշեալ Գէորգ կաթողիկոսէն, Ներսէս Աշտարակեցի, Պերճ Պռօշեան, Սմբատ Շահազիզ, Գէորգ Դոդոխեան, Գէորգ Էմին, Երուանդ Շահազիզ, Գրիգոր Ղափանցեան, Նորայր Սիսակեան, Վարդգէս Պետրոսեան եւ շատ ուրիշներ:

Աշտարակի մեզի հասած գլխաւոր յուշարձաններն են եկեղեցիներ, կամուրջներ:

ԾԻՐԱՆԱՒՈՐԸ

Եռանաւ պազիլիքը մեզի հասած է առանց տանիքի, կիսաւեր եւ առանց հարաւային պատի: Թորամանեան բացառիկ երեւոյթ կը նկատէ արեւելեան պատին մօտ գտնուող ապսիտ եւ աւանդատուներու գոյութիւնը: Եկեղեցիի երկայնքը բաւական մեծ է (25·5 մ.) եւ լայնքը 12·5մ.: Բոլոր հետազօտողներն ալ համաձայն են Ե. դար տեղաւորելու Ծիրանաւոր եկեղեցիին շինութիւնը:

ԿԱՐՄՐԱՒՈՐ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Կը գտնուի քաղաքի հիւսիս-արեւելեան բարձր թաղին մէջ: Է. դարի փոքր, խաչաձեւ, գմբէթաւոր եկեղեցիի լաւագոյն օրինակ է: Անաղարտ մնացած է դարերու ընթացքին եւ կղմինտրէ տանիքով հայկական հնագոյն շինութիւնն է: Ունի գեղեցիկ երեւոյթ եւ ներդաշնակ համաչափութիւն: Ներսի կողմը Է. դարի որմնանկարներու հետքեր կը տեսնուին:

ՍՊԻՏԱԿԱՒՈՐ

Բերդաթաղ կոչուած թաղամասի քարաժայռին ծայրը կառուցուած, Ծիրանաւորէն 50մ. հեռու: ԺԳ.-ԺԴ. դարերու շինութիւն մըն է, քառանկիւն յատակագիծով, բոլորովին լքուած եւ սեւ ու սպիտակ կաւիճներով մրոտած պատերով, ուր նոր սերունդի ներկայացուցիչներ առանց դոյզն յարգանքի իրենց սիրային կիրքերն ու ցանկութիւնները արձանագրած են, ուղղագրական սահմռկեցուցիչ սխալներով:

Ս. ՄԱՐԻՆԷ

Եկեղեցին կառուցուած է 1281 թուին. կը պատկանի գմբէթաւոր սրահներու ընտանիքին. անցեալին ունեցած է քարէ բարձր պարիսպներ: Արձանագրութիւնը կ՚ըսէ.

«Յառաջնորդութեան Գրիգորի վարդապետին, ի շինութեան Սուրբ եկեղեցւոյս Ես Թագուհի դուստր Սահակ երիցո ետու զիմ հայրենի տունն եւ վքարհանացն այգին ի Սուրբ Մարինէս. եւ խոստացան ի տարին Գ պատարագ ինձ տանեն ի նոր Կիւրակէն անխափան. ի թվ. ՉԼ» (Այրարատ, էջ 186):

Այնչան զանազան արձանագրութիւններու ընթերցումէն կը հետեւցնէ որ եկեղեցին մօտ միաբաններու վանք մը գոյութիւն պէտք է ունեցած ըլլայ:

Հետաքրքրական, իւրայատուկ արձանագրութիւն մը եւս կայ Կարմրաւոր եկեղեցիին վրայ ուր աղօթք կը կատարուի աշխարհի խաղաղութեան եւ հայ ազգի հոգիներուն համար:

«Ես Դաւիթ մեղաւոր՝ գիւղաքաղաքէն, Աշտարակ Գրիգոր Երեցունեաց քահանայի եւ Մանսա եւ որդիներ շինել տուինք Ս. Աստուածածին եկեղեցին համայն աշխարհի խաղաղութեան համար, Աշտարակի շինութեան եւ պտղաբերութեան ··· եւ ՄԵՐ ԱԶԳԻՆ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ համար···» (Նոյն, էջ 187):

Աշտարակի կարգ մը տնային պարտէզներու մէջ հետաքրքրական հնութիւններ կը յայտնուին, որ ցոյց կուտան թէ ուրարտական շրջաններէն արդէն զանազան սերունդներ հոն բնակութիւն հաստատած են եւ միջին դարերուն դարձած է իշխանուորներու հաճելի ամարանոց:

Թորամանեան կը գրէ.

«Այս գիւղի մէջ եղած հին յուշարձանների մանրամասն ցանկագրումը անկատար կը լինի առանց առանձին հետազօտութեան եւ ուսումնասիրութեան, որովհետեւ շատ կան բեկորներ, բնակարաններու եւ այլ կարեւոր մնացորդներ» (Բ. հատոր, էջ 116):

1664ին Մահտեսի խոճա Գրիգոր Մոծակենց ԺԲ.–ԺԳ. դարերու կամուրջը հիմնովին կը նորոգէ, տաշուած ծիրանեգոյն տուֆով, 76 մ. երկարութեամբ եւ 6 մ. լայնքով, գործածական մինչեւ այսօր:

ՅԻՊԷ – Այն տպաւորութիւնը ունիմ որ Աշտարակը Արագածի զանգուածին ստորոտը գտնուող վերջին բարձունքներուն վրայ (1175 մ.) թառած՝ մեծ կեդրոնն է եւ Արարատեան դաշտավայրի ծայրամաս կարելի է նկատել:

ԵԻՍ. – Այո՛ եւ ո՛չ: Քիչ վերջ պիտի տեսնենք Օշական, Ոսկեվազ (1030 մ. բարձր) որոնց համար կրնանք ըսել թէ Արագածը Արարատին կապող օղակներն են:

ՕՇԱԿԱՆ

Խորհրդաւոր անուն մը եղած է միշտ ինծի համար, երբ ան որպէս աշխարհագրական իրականութիւն չէր յայտնուած տակաւին աչքերուս առջեւ: Դեռ պատանի, Ս. Ղազարի դպրեվանքի նստարաններուն վրայ, մեր հայերէն լեզուի ուսուցիչ՝ Հ. Ներսէս Տէր Ներսէսեանի բացատրութիւններուն ընկերակցութեամբ կ՚արտասանէինք երիտասարդ նահատակ-բանաստեղծ՝ Հ. Կարապետ Տէր Սահակեան, մշեցի վարդապետին արձակ բանաստեղծութիւնը՝ «Մարգարէին վերադարձը»··· Մարգարէն Օշականի սուրբն էր որ ԱՅԲԵՆԳԻՄԻ գիւտը կատարած հայրենիք կը վերադառնար, մենախօսելով իր անձին հետ.

«Մենաւո՛ր ճանապարհ··· ընկեր իմ երբեմնի խոկումներուն, ո՛վ ճանապարհ իմ Հայրենիքիս եւ Անցեալիս·· Գաղափար մը կը բերեմ ինծի հետ. եւ ան աստղի մը պէս ոսկեղէն կայծ մըն է աշխարհ պարունակող: ··· Կը յառաջեմ անոր աներեւոյթ լուսապսակին մէջ, եւ դափնիներէն աւելի՝ երջանկութիւնդ է որ հոգիս կ՚ալեկոծէ հաճոյքի յորձանքներով, ով իմ հայրենիքս, սրտիս լուռ մեհեանին մէջ պաշտուած: ··· Հիմա քարայրէ մը կուգամ: Խաւարը դեռ չէ թօթափեր հանդերձիս վրայէն·· անվրդով կը կանգնիմ ձեր առջեւ··· որովհետեւ գաղափար մը կը բերեմ ինձ հետ եւ ան իմ անթառամ երիտասարդութիւնս է: ··· Ոգեւորութեան սարսուռ մը կ՚անցնի ժողովուրդին մէջէն. սրտիս անբուժելի կրակն է որ կը վարակէ. ոչ մէկ հրդեհ աւելի վսեմ տեսարան մ՚ունի: Արքունի մականը առջեւս կը խոնարհի. հովուապետին գաւազանը "Նեցուկդ եմ" կը մրմնջէ. հրճուանքի արցունք մ՚արդէն սքօղած է աչքէս՝ հայրենիքս, ժողովուրդս, անոնց արքան: ··· Գաղափար մը կը բերեմ եւ այս գաղափարը՝ իմ միակ փառքս է»:

ՅԻՊԷ – Կը նկատեմ որ Օշականը Մաշտոցի օրերէն դիմագիծը շատ չէ փոխած:

ԵԻՍ. – Իսկապէս Օշական շատ հաճելի, հնաբոյր մթնոլորտը պահած է մինչեւ այսօր. Քասախ գետի աջ ափին տարածուած, պտղատու ծառերու եւ այգիներու մէջ թաղուած, 6·000ի մօտ բնակչութեամբ, Աշտարակէն հինգ քմ. դէպի հարաւ-արեւմուտք, դարձած է Հայաստանի ուսանողութեան ամէնէն սիրելի ուխտավայրը, ուր ամէն օր եւ ամէն ժամու կարելի է դպրոցական խումբերու հանդիպիլ, ուխտի եկած իրենց դաստիարակներուն հետ:

Ս. Մեսրոպ-Մաշտոցի եկեղեցին, գիւղին կեդրոնը, ուր կը գտնուի սուրբին դամբարանը, հիմնուած է 443 թուին եւ հիմնովին վերակառուցուած 1875-79 տարիներուն, Գէորգ Դ. կաթողիկոսի օրով:

(Շար. 20)

«ԹՈՒՐՔ» ԳՈՐԾԻՉԻ ՄԸ ՊԱՏԿԵՐԸ

Թուրքիոյ մէջ բաւական զգայացունց տպաւորութիւն գործեց «Էրկէնէքոն» մկրտուած գաղտնի խմբակի մը յայտնաբերումը: Անոր անդամները կարեւոր տոկոսով մը կը պատկանին ազգայնական ու բանակի շրջանակներուն: Կատարուած հետաքննութեան հրապարակուած մասէն տեղեկացանք որ խմբակը մութ գործերու միջամտութիւն ունեցած էր, նաեւ նոյն բնոյթի յետադայ գործունէութիւն ծրագրած: Մեզ ամէնէն հետաքրքրող բաժինը կը վերաբերէր Հ. Տինքի ոճիրին հետ առընչութեան հետքերուն:

«Էրկէնէքոն»ի մաս կազմողներէն էին բանակի նախկին դէմքեր, նաեւ Բանուորական կուսակցութեան յայտնի ժխտող նախագահը՝ Տ. Փէրինչէք:

Թրքական «Միլլիյէթ» օրաթերթը (Ապրիլ 23) «Ուրկէ՞ ուր» խորագրուած էջով մը կը ներկայացնէր նոյն խմբակի կեդրոնական դէմքերէն Թունճայ Կիւնէյը: Ան 2001ին ինքնաշարժի խաբերայութեան մը մասնակցութեան պատճառով հսկողութեան տակ առնուած ու հարցաքննութեան ընթացքին խօսած է «Էրկէնէքոն»ի կազմաւորումին, անոր ձեռնարկող անձերու մասին: Այդ խմբակին ներկայի հետաքննութիւնը կը տարուի անոր այդ թուականի յայտնութիւններուն հիման:

2001ի հարցաքննութեան ըսածներուն մաս կազմած է հետեւեալը. հանգստեան կոչուած զօր. Վ. Քիւչիւքի հետ, որ այսօրուան հետաքննութեամբ հսկողութեան տակ առնուածներէն մէկն է, քիւրտ ղեկավարներ Թալապանիի ու Պարզանիի, նաեւ ՓՔՔ-ի առաջնորդներէն Ճ. Պըյըքի զէնք տուած են: Յետոյ պատրաստած են «Էրկէնէքոն»ի կանոնադրութիւնը, նոյն Վ. Քիւչիւքի հրահանգով:

Նոյն թուականին ոստիկանութիւնը փորձած է ստուգել Թ. Կիւնէյի պնդումները, սակայն արդիւնք չառնելով գինք ազատ արձակած է: Այդ շրջանին ան մեկնած է Գանատա ու հոն հաստատուած:

«Էրկէնէքոն»ի ներկայի հարցա-

քննութեան ներկայացողներուն միշտ կը հարցուի այս անձին մասին. ոմանք մերժմ խոստովանող մը կը նկատեն զինք. ուրիշներ կ'ըսեն թէ ՍԷ.Ի.Ա.-ի գործակալ է: Ինք ինքզինք կը ներկայացնէ որպէս Մեսիայէն սպասող Հրեայ մը...

Անցեալ Մարտ 22ին Թ. Կիւնէյ հարցազրոյց մը տուած է յետադիմական հակումի տէր «Եէնի չաֆաք» թերթին. ըսած է թէ ծնունդով Հրեայ է, հայրը սապէթայական էր (այսպէս կը կոչուին այն Հրեաները որոնք իսլամացած են, բայց խորքին մէջ կը պահեն իրենց բուն ինքնութիւնը): Գանատա մեկնելէ առաջ հեռատեսիլի կայանի մը մէջ աշխատած է. հոն ընդունելու համար իրմէ իսլամ ըլլալուն մասին վաւերաթուղթ մը ուզած են: Կրօնական տեսչութեան 130 տոլար վճարելով ունեցած է զայն ու գործի առնուած: Իսկ ներկայիս Թորոնթոյի մէկ սինակոկին հոգեւոր հովիւն է: Նոյն ատեն պաշտօն ունի «Նիւ եորքեան հիմնարկ»ին մէջ որ ըստ Թուրքիոյ բանուորական կուսակցութեան մամուլին, ամերիկեան ՍԷ.Ի.Ա.-յին կապուած կազմակերպութիւն է: Կիւնէյ կը վարէ անոր կայքէջը:

Ապրիլ 22ին «Սապահ» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցին խօսած է «Էրկենէքոն»ի կառոյցին, դէմքերէն ոմանց մասին: Վ. Քիւչիւքի մասին ըսած է թէ ան ութերորդ աստիճանին վրայ կը գտնուի, իրմէ վեր եօթը ուրիշներ կան: Անոնց մաս կը կազմեն դէմքեր որոնք այսօր ալ պաշտօնի վրայ են: Կեանքին ապահովութեան մտահոգութեամբ Կիւնէյ չէ տուած անոնց անունները: Ըսածին ամէնէն կարեւոր կէտերէն է այն որ «Էրկենէքոն»ի հարցաքննութեան վերջին փուլերը հարկ եղած խորութիւնը չեն ունեցած: Նկատի առնուած են «փողոցի մարդիկ»ը:

Թ. Կիւնէյի պարագան այսքանով իսկ հետաքրքրական է տեսնելու համար թէ որքան տարաբնոյթ մարդիկ կրնան քով-քովի եկած ըլլալ, թրքական ազգայնական, հակահայ ու լուսամիտ տարրեր, մտաւորականներ թիրախի վերածող կազմակերպութիւն մը երեւան բերելու եւ գործելու համար:

Իր մասին «Էրկենէքոն»ի դէմքերէն լրագրող, հեռատեսիլի Ազգային կայանին պատասխանատու Ֆ. Իլճէվէր տակաւին ըսած է մամուլի ասուլիսի մը ընթացքին, թէ ան կրօնական վարժարան աւարտած է, իսլամական աղանդի մը մաս կազմած. եւ ո՞վ կրնայ պնդել թէ վերջացած է անոր կերպարանափոխութիւնը:

Ա. Թ.

ՀԱՅԵՐԷՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅԹ ԱՐՆՈՒՎԻԼԻ ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Երեկոյթը ամբողջութեամբ պէտք է գրաւոր վերարտադրել կարենալ ճշգրիտ ներկայացնելու համար օրուան նիւթն ու անկէ բխած խորհրդածութիւնները:

Հարկաւ պէտք է բաւարարուինք նուազագոյնով, արձագանգ հանդիսանալով Մարտ 28ի այս հաւաքին, զոր ուրիշներու կարգին իրենց ներկայութեամբ պատուեցին Հայաստանի դեսպան պրն. Նալպանտեանի խորհրդատու Վահագն Աթաբէկեան եւ Վարագայ Ս. Խաչ եկեղեցւոյ քահանայ Յարութիւն Թաշճեան: Յուսանք որ Արնուվիլի Հայ աւետ. եկեղեցիի Մշակութային յանձնախումբին հայերէնի նկատմամբ ցուցաբերած նախանձախնդրութիւնը ըլլայ գործնական ու շօշափելի արդիւնքներ տայ յետագային, գիտնալով որ նորաշէն եկեղեցիին մշակութային ծրագրին առաջին իրականացումն է այս: Մաղթենք, որ ան չարունակէ առիթներ ստեղծել միտքերու փոխանակման, երեկոյթներու թէ այլ շահեկան նիւթերու շուրջ ի մի հաւաքէ մայրենի լեզուին ներկայով ու ապագայով մտահոգ անձեր:

Համարձակի՞նք հաւատալ նաեւ, որ նման միջոցառումներ (որո՛ւ միջոցաւ որ կազմակերպուած ըլլան, ո՛ւր որ տեղի ունենան), կը սատարեն կատարելու իսկական բնութագրումը մայրենի լեզուին իբրեւ ինքնութեան արժեչափ:

Երեկոյթին նիւթն էր հայերէնի պաշտօնական դիրքը Ֆրանսայի մէջ: Զայն միասնաբար ներկայացուցին ԻՆԱԼՔՕ-ի հայկական բաժնի վարիչ լեզուաբան Անահիտ Տօնապետեան եւ Ֆրանսայի Շրջանային լեզուներու (Langues régionales) մասնագէտ լեզուաբան Ժան Սիպիլ, Ֆրանսերէնի եւ Ֆրանսայի լեզուներու ընդհանուր պատուիրակութեան աշխատակից (Délégation Générale à la langue française et aux langues de France) (1):

Պարոն Սիպիլ՝ Մարսէյլածին, բացատրեց, որ Հայերու եւ հայերէնի ծանօթ ըլլալով դեռ մանկութեան օրերէն, իրեն համար բնական է իբրեւ լեզուաբան իր յառաջ քաշած թեզին մէջ հայերէնին տեղ տալը: Ան ըսաւ թէ այսօր պիտի արտայայտուէր իր անձնական անունով եւ ոչ իբրեւ Պատուիրակութեան պաշտօնեայ:

Երեկոյթին առաջին բաժնի ընթացքին, մէջընդմէջ խօսք առնելով, դասախօսները ներկայացուցին Պատուիրակութիւնը: Ան՝ իբրեւ այսպիսին՝ այսինքն Ֆրանսերէնի ու Ֆրանսայի մէջ գոյութիւն ունեցող լեզուներով զբաղիլ սկսած է 2001 թուականէն ի վեր: Մինչ այդ, նախագահ Ժորժ Փոմփիտուի օրերուն հիմնուած լեզուաբանական մարմին մը կը զբաղէր Ֆրանսերէնի հարցերով (միւս լեզուները նկատի չէին առնուած): 1999ին, երբ Եւրոպական խորհուրդի անդամները կը պատրաստուէին ստորագրել Եւրոպական ուխտը, որուն նպատակն էր պաշտպանել Եւրոպայի լեզուական ժառանգութիւնը, Ֆրանսայի մշակոյթի նախարարութիւնը լեզուաբան Պերնար Սերքիլինիի յանձնած էր Ֆրանսայի շրջանային լեզուներու եւ փոքրամասնութիւններու լեզուներու ցանկը կազմելու պարտականութիւնը: Այս ընթացքին, Ժան Սիպիլի միջամտութեան և Անահիտ Տօնապետեանի ջանքերու շնորհիւ կարելի եղած էր Սերքիլինիի ցանկին մէջ զետեղել արեւմտահայերէնը, իբրեւ հողազուրկ ժողովրդահատուածի լեզու, որ զուրկ է նաեւ պետական պաշտպանութենէ:

Ֆրանսայի Սահմանադրական խորհուրդը դժբախտաբար չէ վաւերացուցած վերոյիշեալ Ուխտը այն պատճառաբանութեամբ, որ Ֆրանսայի պաշտօնական լեզուն Ֆրանսերէնն է եւ նման ուխտ խոտոր կը համեմատի երկրին սահմանադրական տրամաբանութեան: Ֆրանսայի կառավարութեան կողմէ վաւերացուած չըլլալով՝ Ֆրանսայի շրջանային լեզուներու ու փոքրամասնական լեզուներու (փոքրամասնական եւ ոչ փոքրամասնութեան լեզու՝ ինչպէս դիտել տուաւ յարգելի ներկաներէն մէկը սրբագրելով երեկոյթին յայտարարութեան մէջ ներկայացուածը) գոյավիճակը չստացաւ իրաւական արժէք, այսինքն որեւէ օրէնքով չէ հովանաւորուած, բայց Սերքիլինիի ցանկը գոյութիւն ունեցաւ իբրեւ վարչական փաստ: Ասով հանդերձ, 1992էն ի վեր Ֆրանսերէնի ընդհանուր պատուիրակութիւն (Délégation Générale à la langue française) կոչուող մարմինը, որ կը զբաղէր միայն Ֆրանսերէնի հարցերով, 2001ին իր առաքելութիւնը ընդլայնելով ներգրաւեց նաեւ Ֆրանսայի լեզուները, ունենալու իր այսօրուան անուանումը՝ Délégation Générale à la langue française et aux langues de France եւ առաքելութիւնը:

Ահաւասիկ լայն գիծերու մէջ՝ պատմականը Պատուիրակութեան: Այս բաժնին մէջ, օրուան դասախօսները ներկայացուցին հայերէնի զարգացումին ի նպաստ անոր ընձեռած կարելիութիւնները, որոնք հիմակուհիմա սահմանափակ են, բայց առկայ: Ապագան կրնայ աւելի յուսադրիչ ըլլալ:

Երեկոյթին երկրորդ բաժինը նուիրուած էր Ֆրանսահայ համայնքի մէջ հայերէնին գրաւած տեղին ու անկէ բխած խնդիրներուն: Այս երեկոյթը, ինչպէս նաեւ բազմաթիւ երեկոյթներ բաւարար չեն ամբողջական ծաւալով ներկայացնելու զանոնք: Այնքան ծալքեր, այնքան հարցականներ, հակասութիւններ, կիրքեր ու կարծրացած ըմբռնումներ: Իր նիւթի ներկայացման ամբողջութեան մէջ՝ անկասկած, բայց այստեղ յատուկ գնահատանքի արժանի իրաւունք ունի Անահիտ Տօնապետեան, որ գիտէ բառերը չծամծմել եւ գիտնականի ճշգրտութեամբ ըսել նոյնիսկ երբ հաճոյք չէ պատճառելիքը:

Կրկնելու գնով ըսենք դարձեալ, որ կարելի չէ բոլոր ըսուածներուն արձագանգել: Կարելի՞ է երկլեզու կոչել մեր այսօրուան դպրոցները. հայերէնը՝ մայրենի՞ լեզու, թէ օտար լեզու. որո՞նք են լեզուի մը կենսունակութեան չափանիշները. արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի գոյակցութեան հարցը. հայերէնի ուսուցիչներուն աշխատանքային պայմանները. ինչպիսի՞ լուծումներ:

Ուրախութեամբ իմացանք, որ շարք մը միջոցներու կողքին, ԻՆԱԼՔՕ-ն Ա. Տօնապետեանի միջոցով հայերէնի ուսուցիչներու վերարժեւորման (վերարժեւորում՝ ամբողջական մեկնաբանութեամբ) հարցը կը շօշափէ, հայկական դպրոցներու հայերէնի տեղին ու մակարդակին մասին յատուկ գաղափար ունի եւ վէրքը ամոքել կը ջանայ:

Բաւականին աշխոյժ ասուլիսի բաժնին անցնելէ առաջ, երաժշտական գողտրիկ ու բարձրորակ կատարումով ելոյթ ունեցաւ տասնինամեայ թաւջութակահարուհի Մելանի Պատալ: Նուագեց իր ուսուցիչ թաւջութակահար ծանօթ երգահան Տոմինիք Տը Վիլլենքուրի մէկ ստեղծագործութիւնը, որ կը կոչուի «Էջմիածին եւ լեռն Արարատ»: Տը Վիլլենքուր այս երաժշտութիւնը յօրինած է Հայաստան այցելութեան մը ընթացքին, ներշնչուելով հայկական եկեղեցական ու աշխարհիկ երաժշտութենէն: Օրդ. Պատալ այդ օր ներկայացուց առողջ դիմագիծը մեր շնորհալի երիտասարդութեան, որ յաջողութեամբ կ'ընթանայ իր տեղը գրաւելու ընկերութեան մէջ ու իր քաջութեամբ իմաստութեան կը հրաւիրէ երէց սերունդը, որ տակաւին կը վախնայ նկատելու ինքնաքննադատութեան անհամբեր փոխադրակառքը, առանց ժամավաճառութեան տեղադրուելու ճիշդ ուղիին վրայ:

Օրուան բանախօսները աւարտելէ առաջ իրենց խօսքը, ներկաներուն տրամադրութեան տակ դրին DGLFLF-ի լոյս ընծայած Langues et Cité թերթիկի փետրուարեան թիւը, նուիրուած հայերէնին:

Պէտք է խոստովանիլ, որ թարգմանութիւնը բաւական դժուարացուց բանախօսներուն գործը եւ ծանրացուց հրամցուածը: Կ'ափսոսանք անշուշտ: Հաւանաբար ճիշդ լուծումներ գտնուին:

Բարի գալուստի խօսքով սկսած էր, շնորհակալութեան խօսքով ալ երեկոյթը աւարտեց եկեղեցւոյն պատուելի Սարգիս Պարութճեան: Ակնյայտ էր լեզուի նիւթը կրկին արծարծելու ներկաներուն ցանկութիւնը: Պատուելին խոստացաւ գոհացում տալ ատոր եւ հրաւիրեց Տէր Յարութիւն Թաշճեանը երեկոյթը փակելու Տէրունական աղօթքով:

ՆՈՐԱ. ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

(1) www.dglf.culture.gouv.fr

– ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ –

Հ.Բ.Ը.Մ.-ի ՄՈՆՐԷԱԼԻ մասնաճիւղին Ալեք Մանուկեան կեդրոնին մէջ, յատուկ հանդիսութեամբ մը տօնուած է Բարեգործականի տեղւոյն մասնաճիւղի հիմնադրութեան 50ամեակը, Մարտ 9ին: Ձեռնարկը սկսած է ՀԲԸՄ-ի սկաուտական փողերախումբի տողանցքով եւ միութեան դրօշներու բեմին վրայ զետեղումով եւ փառերգներու ունկնդրութեամբ: Ապա, վարչութեան ատենապետ Արմէն Պչաքճեան բարի գալուստ մաղթած է ներկաներուն: Մասնաճիւղին 50ամեայ պատմութիւնը ներկայացուած է նախկին երեք ատենապետներու կողմէ (Մկրտիչ Մալխասեան, տոքթ. Ե. Եղիայեան եւ Պօղոս Քիչեան): Անցած 50 տարուան իրագործումներուն ընկերացած է սահիկներու ցուցադրութիւն մը: Միութեան երիտասարդներուն կողմէ խօսք առած է «Մանուէլ Քէօսէեան հայագիտական դասընթացքներ»ու պատասխանատու վարիչ՝ Շահէ Թանաշեան: Միութեան գործադիր մարմնի ատենապետ պրն. Արմէն Պչաքճեան, իր ելոյթին մէջ, նշած է անհրաժեշտութիւնը ոչ միայն միութենական կեանքի յաջողութեան, այլեւ միութեան յաջողութեան առնչակցութիւնը եկեղեցւոյ եւ միութեան կրթական կեանքի յաջողութեան: Հ.Բ.Ը.Մ.-ի փոխ նախագահ տոքթ. Արշաւիր Կէօնճեան Կեդրոնական վարչութեան անունով շնորհաւորած է մասնաճիւղին յիսնամեակը: Նոյն շնորհաւորութիւնը ըրած է թեմին առաջնորդը՝ Բագրատ եպիսկ. Գալստանեան, որ պահպանիչով փակած է հանդիսութիւնը:

(Շար. Ա. էջէն)

կայ յուշարձանին առջեւ բոցին արծարծումը: Այս «Մարաթոն»ին մասնակցեցան բազմաթիւ երիտասարդներ:

Ապրիլ 20ին, Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն մը Ցարութիւն Վրդ. Պզտիկեանի կողմէ (Մխիթարեան Միաբանութիւն): Դասախօսը պատմականը ըրաւ Ցեղասպանութեան, նկարագրեց կարգ մը դէպքեր եւ ապա լուսարձակեց ժապաւէն մը, նուիրուած՝ Հայաստանի ոչ շատ ծանօթ վանքերու: Նոյն օրը, Անի մշակութային կեդրոնը, Սէն Թ'Օկիւսթէն եկեղեցւոյ մէջ (Փոմոն) կազմակերպեց դասական համերգ մը Վահան Մարտիրոսեանի (դաշնակ) եւ Ժան Տէր Մերկերեանի (ջութակ) մասնակցութեամբ:

Ապրիլ 23ի երեկոյեան տեղի ունեցան հսկումի արարողութիւններ կազմակերպութեամբ երիտասարդներու:

* Փոմոնի Նահատակաց յուշարձանին շուրջ համախմբումի մը հրաւիրած էին Հ.Ց.Դ. Նոր Սերունդի երիտասարդները: Կոմիտաս Վրդ. Ցովնանեան արտասանեց Հոգւոցը: Խօսք առին Իշխան Սեմերճեան (ՀՅԴ Նոր Սերունդ), Սանտրա Պլանշար (Իւ.ԷՄ.Փէ. Երիտասարդաց միութիւն), Ֆրանսուա Գորոնա (Թիաքէթ), Անթոնի Կրէմիէ (Ընկերվարական երիտասարդաց շարժում), Մանուկ Պանոյեան (Նոր Սերունդ). Հուսկ հայերէն ելոյթ մը ունեցաւ Կարօ Ցովսէփեան՝ քաղաքապետ Մարսէյլի 13րդ եւ 14րդ թաղամասերու: ՀՅԴ պատանիները երգեցին յեղափոխական երգեր: Երաժշտութիւն, պար ամբողջացուցին յայտագիրը:

* Քաղաքին կեդրոնը գտնուող Սէն Ֆէռէոլ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ էքիւմէնիք համախմբում մը, նախաձեռնութեամբ Ֆրանսահայ խորհուրդի մաս կազմող միութիւններու երիտասարդութեան: Ներկայ եղան եւ խօսք առին Զաւէն Վրդ. Ալտուրեան, Վեր. Ժիլպէռ Լեւոնեան եւ Եղիա Վրդ. Դերձակեան: Կարգ մը երիտասարդներ եւս խօսք առին, արտասանեցին կամ ընթերցումներ ըրին, «Աղաւա բեմ»ի ձեւի տակ: Ապա ներկաները ջահերով տողանցեցին «Վիէօ Փոռ»ի ափերուն ուր ելոյթ ունեցաւ Մելինէ Հայրապետեան:

Ապրիլ 24ի օրը նշուեցաւ երկու ձեռնարկներով:

* Առաւօտուն ժամը 9.30ին Փոմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան կարգ: Ապա, կազմուեցաւ երկար թափօր մը, որ եկեղեցիէն ուղղուեցաւ դէպի Նահատակաց յուշարձան, կրելով «1915 Ապրիլ 24» պաստառ: Մասնակցեցան բազմահարիւր Հայեր եւ ոչ Հայեր: Հոն ներկաներուն միացաւ Մարսէյլի քաղաքապետը՝ Ժան-Գլօտ Կոտէն: Սահակ-Մեսրոպ երգչախումբը մեկնաբանեց «Քահանայք»ը եւ «Ի վերին Երուսաղէմ»ը: Հոգւոցը արտասանեց՝ Եղիա Վրդ. Դերձակեան: Հայ ակումբներու ու Համազգայինի աշակերտութիւնը մեխակներ զետեղեցին յուշարձանին շուրջ, ՀՅԴ պատանիները ցուցատախտակներու վրայ գրած ու բռնած էին Հայկական Ցեղասպանութիւնը ճանչցող պետութիւններու անունները: Խօսք առին՝ Ժագ Տօնապետեան (Ֆրանսահայ խորհուրդ), Էլիան Գազանճեան (ՀՅԴ), եւ հուսկ քաղաքապետը՝ Ժ. Գլօտ Կոտէն: Եղաւ բազմաթիւ ծաղկեպսակներու զետեղում, երգչախումբը երգեց «Մեր Հայրենիք»ը եւ հաւաքական «Հայր մեր»ով վերջ գտաւ հանդիսութիւնը: Մասնակցեցան երեսփոխաններ, քաղաքապետարանի խորհրդականներ եւ այլ քաղաքական դէմքեր:

* Երեկոյեան ժամը 17ին, Փրատօ եւ Փէրիէ պողոտաներուն անկիւնը ժողովուրդը համախմբուեցաւ եւ եղան ելոյթներ: Խօսք առին երեսփոխաններ՝ Սիլվի Անտրիէօ, Մարի-Առլէթ Գարլոթի, Տոմինիք Թիան, Հանրի Ժիպրայէլ, Տիւփոն-Էնեան, Վալերի Պուայէ, ծերակուտական՝ Ռոպէր Պրէթ, Մարսէյլի քաղաքապետին ներկայացուցիչը՝ Տիտիէ Փարաքեան, Փրովանս-Ալփ-Գոթ տ'Ազիւրի Շրջանային խորհուրդի նախագահին ներկայացուցիչը՝ Կարօ Ցովսէփեան: Ժողովուրդը հետզհետէ հասաւ եւ ժամը 18ին ցոյցը սկսաւ հանդարտ, առանց որեւէ միջադէպի: Շուրջ հազար հոգի քալեցին մինչեւ Թրքական հիւպատոսարանը ուր ոստիկանական ուժերը դիրք առած էին: Հոս եւս եղան ճառեր. Միշէլ Կէվիքեան (Ֆրանսահայ խորհուրդ), Իգիտոր Ասոկոնէս (ԳՐԻՖ), Ապտուրահման Կիւլ (Մահմետական կրօնքի ներկայացուցչական կոմիտէի նախագահ), Տիրան Կարապետեան (ՌԱԿ), Հրաչ Վարժապետեան (ՀՅԴ): Ապա, ժողովուրդը ուղղուեցաւ դէպի ոչ շատ հեռու գտնուող Սրբոց Թարգմանչաց եկեղեցին, վերջին արարողութեան մը համար, որու աւարտին կատարուեցաւ բոյին մարումը:

Լրիւ ըլլալու համար նշենք Սէն Թ'Անթուանի Ս. Թադէոս-Բարթողիմէոս եկեղեցւոյ նախաձեռնութիւնները: Ապրիլ 23ի երեկոյեան, տեղի ունեցաւ հսկումի արարողութիւն եւ մատաղօրհնութիւն, ձեռամբ՝ հոգեւոր հովիւ Գառնիկ Քհնյ. Կարապետեանի, ներկայութեամբ երեսփոխան Հանրի Ժիպրայէլի: Եղան ճառեր եկեղեցւոյ բակը զետեղուած յուշաքարին շուրջ: Վառուեցան 93 մոմեր, գործածուեցաւ յայտագիր մը: Արարողութիւնը վերջ գտաւ պատշաճ հիւրասիրութեամբ մը:

15րդ եւ 16րդ թաղամասերու քաղաքապետը՝ Սամիա Կալի ծաղկեպսակ մը զետեղեց «1915 Ապրիլ 24 պարտէզ»ի յուշաքարին վրայ, հոն ուր 1920ական թուականներուն Հայեր հաստատուեցան (Քամփ. Օտտօ):

9րդ եւ 10րդ թաղամասերու քաղաքապետը՝ Կի Թէսիէ կազմակերպեց նկարչական ցուցահանդէս մը Ապրիլ 21ին, եւ համերգ մը Ապրիլ 25ին, Սէն Լուի եկեղեցին, մասնակցութեամբ Սահակ-Մեսրոպ երգչախումբին:

13րդ եւ 14րդ թաղամասերու քաղաքապետը կազմակերպեց համերգ մը, Սէն Ժոզէֆ եկեղեցւոյ մէջ, Մարսէյլի Ֆիլհարմոնիք նուագախումբի մասնակցութեամբ:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ի ՅԻՇԱՏԱԿ

Զարեհ Վարդանեան-Կռանեանի մահուան առիթով Մուրատեան ընտանիքը 200 եւրօ կը նուիրէ «Յառաջ»ին, փոխան ծաղկեպսակի:

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

LIVRY-GARGAN

La Section «D. MISSAKIAN» de Sevran-Livry de la Croix Bleue, offrira un

HOKEDJACH

en présence du Père Haroutioun TACHDJIAN, à la mémoire de ses membres et amis disparus.

Le jeudi 8 mai à 13 heures

à la Maison de la Croix Bleue
17 rue Charles Péguy,
93190 LIVRY-GARGAN

Sur inscription auprès de
— Madeleine : 01 43 83 87 68;
— Nilva : 06 87 05 00 67.

□

ՊՈԼԻՎ. ՕՏՏՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Պոլվ. Օտտոյի Լէոլա Սասունի մասնաճիւղը վիճակահանութիւն մը կազմակերպած է Համբարձման առթիւ, Մայիս 1ին, ժամը 12:30ին:

MNA, 8 bld. Denis Papin
13015 Marseille

Կը հրաւիրուին բոլորը հաճելի օր մը անցընելու համար:

□

ԼԻՈՆ-ՎԻԼԷՕՐԲԱՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Կապոյտ Խաչի Լիոն-Վիլէօրպանի Արաքս մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ, միասին տօնելու Համբարձման տօնը, ինչպէս նաեւ Համբարձումներու անուանակոչութեան տօնը, ընտանեկան եւ բարեկամական ճաշի մը շուրջ (խորոված), Հինգշաբթի, Մայիս 1, ժամը 12:30էն սկսեալ Վիլէօրպանի Հայ մշակութային տան մէջ: Նաեւ վիճակահանութիւն: Ճաշագին՝ 12 եւրօ – երախաներու համար կէս գին:
Հեռաձայն: 04 78 26 28 71
04 78 45 17 55

CATHEDRALE APOSTOLIQUE ARMENIENNE SERPOTZ TARKMANTCHATZ

CONVOCATION A L'ASSEMBLEE GENERALE ORDINAIRE

(Exercices 2006-2007)

Cher(e,s) Membre(s),

Le Conseil de l'Association Cultuelle de la Cathédrale Serpotz Tarkmantchatz vous invite par la présente à la prochaine Assemblée Générale Ordinaire qui aura lieu le :

Lundi 5 mai 2008 à 18 heures

dans la salle «A. Tcherpachian» du Centre Culturel Sahak-Mesrop
339 avenue du Prado
13008 Marseille

A l'issue de la réunion, un apéritif sera servi aux participants.

Comptant sur votre présence, veuillez agréer, cher(e,s) Membre(s), l'assurance de nos sentiments les meilleurs.

P/O le Conseil de la Cathédrale	Le Recteur de la Cathédrale
Le Président	**Révérend Père**
Robert Azilazian	**Zadik Avédikian**

DIOCESE DE FRANCE
de l'Eglise apostolique arménienne
15 rue Jean Goujon — 75008 Paris

Mgr. Norvan ZAKARIAN
Archevêque de France
a le plaisir de vous convier au cycle de formations

« COMPRENDRE L'HISTOIRE ARMENIENNE»

Qu'il anime chaque mois
3ème séance :
dimanche 4 mai de 17h à 18h
Salle Nourhan Fringhian
15 rue Jean Goujon — 75008 Paris
Métros: Champs-Elysées Clemenceau, Franklin Roosevelt ou Alma-Marceau

— Entrée libre —

Renseignements : 06 29 38 96 14

Date à retenir

Le samedi 17 mai

Repas de la Maison Arménienne de la Jeunesse et de la Culture de Marseille.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

QUELQUES PLACES ENCORE DISPONIBLES avec L'UCFAF pour 2 voyages en ARMENIE

voir site : www.ucfaf.com

1 voyage touristique du 26 juillet au 10 août

soit 16 jours / 15 nuits au prix de 1565 euros par personne, max. 30 personnes, base demi-pension et chambre double, incluant un circuit de 6 jours jusqu'au Karabagh (taxes d'aéroport et visa en sus) renseignements : E. Yazidjian au 01 42 87 95 98 (heures de bureau)

1 voyage randonnée du 14 au 25 juillet

soit 12 jours / 11 nuits au prix de 1390 euros par personne, max. 12 personnes, incluant un circuit randonnée de 7 jours en pension complète et 3 jours à Erevan en demi-pension avec excursions et visites quotidiennes renseignements : A. Samikyan au 01 48 03 18 78

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 1

40րդ օր յինանց
ՏՕՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Մանուկներու հաղորդութեան օր

Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 8.30ին,
Պատարագ՝ 10ին:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՏԻՐԱՅՐ ՔՀՆՅ. ԳԸԼԸՃԵԱՆ

Կը հրաւիրուին քրիստոնէական դաստիարակութեան միջոցաւ հաղորդութեան պատրաստուած բոլոր մեր մանուկներն ու դպրոցի աշակերտները մասնակցելու պատարագին եւ հաղորդուելու:

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայիս 1

Համբարձումն Քրիստոսի
Պատարագ՝ ժամը 10ին:

Այսօր վերապահուած է մանուկներու հաղորդութեան:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - ԼԻՈՆ

Հինգշաբթի, Մայիս 1

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ

Այս առթիւ Լիոնի Սուրբ Յակոբ մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10ին Պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ
ԻՍԱՀԱԿ Ս. ՔՀՆՅ. ՀԷՔԻՄԵԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔ ԵՒ ԽՐԱԽՃԱՆՔ – ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Հ.Մ.Ը.Մ.–Ֆրանսի վարչութիւնը կը կազմակերպէ Եւրոպայի միջ-շրջանային ֆութպոլի եւ պասքէթի մրցաշարք, բաժակ՝ «Սուրէն Մուրատեան»ը, որ նուիրուած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.–ի հիմնադրութեան 90-ամեակին:

Մրցաշարքին հրաւիրուած են մասնակցելու Ֆրանսայի եւ Եւրոպայի Հ.Մ.Ը.Մ.–ի շրջաններն ու զանազան մարզական միութիւններ:

Մրցաշարքը տեղի կ'ունենայ Շաբաթ եւ Կիրակի 2008 Մայիս 10-11ին, Իսի-լէ-Մուլինոյի Alain MIMOUN դաշտին վրայ 1, rue Rabelais 92130:

Մրցաշարքի փակման արարողութիւնը պիտի կայանայ Կիրակի, Մայիս 11, ժամը 16:00-ին:

Նոյն երեկոյեան, ժամը 20:30էն սկսեալ, ի պատիւ մրցաշարքին մասնակցող խումբերուն տեղի պիտի ունենայ խրախճանք – պարահանդէսը, Իսի-լէ-Մուլինոյի PACI սրահին մէջ, հասցէ՝

25 avenue Victor Cresson — 92130 Issy-les-Moulineaux

Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ թիւին.–

06 80 88 12 21

Հ.Մ.Ը.Մ. – ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ